



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

2742

85  
4-87



40



*Op.*

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ



2011

ՄԱՐԶՕ

# ՎԻՍՔՕՆՔԻ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ  
ԹՕՄԱԶՕ ԿՐՕՍՄԵ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ  
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԼԹՈՒՆԵԱՆ



2003

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՄԻՋՄՈՒԱՅԸ ՀԱՎԱՏԻՍ ԼՐԱԳՐՈՑ  
Կ. ՊՈԼՍՈՒ, ԲԵՐԼԻՆ, ՇԵՆՆԻ ՓՈՒՆՑ, ԹԻՒ Ն

1881

85-  
4-87 9409  
ՄԱՐԵՕ

# ՎԻՍՔՕՆՔԻ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ  
ԹՕՄԱԶՕ ԿՐՕՍՍԻ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ  
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱԼԹՈՒՆԵԱՆ



1001  
4997 P

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՄԷՋԱՌԻԱՅԸ ՀԱՎԱՏԻՍ ԼՐԱԳՐՈՅ  
Կ.ՊՈՒՆ, ԲԵՐԱ, ՆԵՂԻ ՓՈՂՈՑ, ԹԻՒՆ ԷՅ

1881



02107

9

4450954

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿՈՄԻՏԵ

ՅՈՒՍԶՍԱՐԱՆ ԹԱՐԳՄԱՆՁԻՆ

Ամենեւին չ'եմ դարմանար, եթէ քաջ պատմագէտ եւ կամ ուսումնական անձ մը՝ ձանձրութիւն իմանայ վիպասանութիւն մը կարդալէ, եւ կամ թէ՛ վիպասանողին եւ թէ՛ վիպասանութիւն մը թարգմանողին ծանր աշխատանացը վրայ սրտանց ցաւի . — մինչդեռ կը տեսնայ անոնց ո՛ր եւ է ուսումնական եւ ազգօգուտ գրոց հեղինակութեան եւ կամ թարգմանութեանց գրադած չ'ըլլալին :

Ձգենք թէ իւրաքանչիւր անձ, ըստ իւր մտաց, համոզման ու հաճոյիցը, մէյմէկ բանի հակումն ունիորով այս՝ կամ այն ինչ տեսակ գրուածքէ ճաշակ կ'առնու : Մէկ կողմն առնելով նաեւ թէ մեր ազգին համար աւելի օգտակար են եւ կրնան միշտ մտաց զարգացում տալ ուսումնական գրեանք, (որուն նաեւ խիստ լաւ համոզուած եմ), այսու ամենայնիւ, յուսամ թէ՛ ընթերցողն ալ իմ կարծեացս քիչ շատ համաձայն պիտի գտնամ, երբ որ ըսեմ թէ՛ մարդուս երեւակայութեանը հետ, անոր բնածին բանաստեղծութիւնըն ալ զարթուցանելու եւ ղինքը նորանոր գաղափարաց տէր ընելու մասին, ոչ սակաւ օգուտ կրնայ բերել՝ պատմական ու բարուց օգտաւէտ վիպասանութիւն մը :

Պատմութենէ կ'իմանա՞ք եւ կը տեսնե՞ք թէ, ուսմունք ու արհեստք բանաստեղծութենէ վերջը ծնած են . — ուստի վերոյիշեալ յատկութիւններն ունեցող



վիպասանութիւն մ'ալ, բանաստեղծութեանց կարգը  
դասելով, փութացի աշխատիլ ու թարգմանելով 'ի  
լոյս ընծայել Նաալացի Թեմազ Կրօսի անուն հռչակա-  
ւոր հեղինակին իւր ժամանակակից պատմիչներէն ծաղ-  
կաքաղեալ երկատիրութիւնը, որ վեշտասաններորդ  
գարուն արեւմտեան եկեղեցական վիճակը ներկա-  
յացնելէ զատ, նաեւ նոյն դարուն հռչակաւոր Մարտ  
Վիպասի անուանեալ զօրապետին մեծամեծ գործոց  
պատմութիւնն կը բովանդակէ:

Վստահ եմ թէ, աղգին լուսաւորեալ մասը նախ  
Նաալացի հեղինակի մը գործը սիրով պիտի ողջադու-  
րէ, եւ ապա դատելով պիտի ճանչնայ գործիս ար-  
ժէքն ու ըրած զոհողութիւններս. եւ ըստ այնմ պի-  
տի փութաց պսակել այս ծանր աշխատանքս, 'ի խը-  
րախոյս յայլ եւ այլ լեզուաց ուրիշ օգտակար գրքեր  
ալ թարգմանելու:

ՅՈՂԱՆՆԵՍ ԱԼՓՈՒՆԵԱՆ

## ՄԱՐԻՑ ՎԻՍՓՕՆԹԻ

ՓԼՈՒԽ Ա.

Լիմոնդան գրեթէ շագանակի անտառներէ ծած-  
կուած երկիր մ'է, որ Պէլլաճիօյէն Լէքքօ նաւարկե-  
լու ժամանակ կէս մը կ'երեւայ Լիէոնայի դիմացը:  
Ութերորդ դարէն սկսելով մինչեւ վերջի ատեններս  
որ Լոմպարտիայէն աւատականութիւնը վերցուեցաւ,  
Լիմոնդան միշտ Միլանու Սուրբ Աթորոսիոսի մենաս-  
տանին հպատակ եղած էր՝ որուն արքան Լիմոնդայի  
կոմսի տիտղոսն ալ կը կրէր:

Պէլլաճիօյի երկրին եւ միանձանց մենաստանին մէկ  
ծայրը, 1329 ին հին դղեակ մը կար, որ նոյն դարուն  
վերջերը կործանելով հիմայ եւ ոչ իսկ հետքը մնա-  
ցած է:

Այս դղեակը մեր յիշած դարուն, Օլտրատօ տէլ  
Պալցօ անուն կոմսինն էր, որուն նախնիքը՝ կերեւայ  
թէ հին ատենէն 'ի վեր Պէլլաճիօյի տէր էին:

Օլտրատօ կոմսը թէպէտ եւ Լոմպարտիոյ այլ եւ



այլ կողմերը շատ երկիրներ ունէր, բայց տարւոյն մեծ մասը՝ իւր ամուսնոյն եւ մէկ հատիկ աղջկանը հետ հոն կ'անցունէր, լծին գեղեցկութեանը, եւ թէ մեղմ, գուարթ ու պայծառ կլիմային համար:

Օլտրատոյի ընտանիքը, հարուստ, անուանի եւ 'ի նախնեաց անտի հզօր ըլլալով, բնականապէս բոլոր իւր բնակութեան մօտ եղող գեղերուն միշտ պաշտպանն եղած էր, որոնց բնակիչքն ալ՝ յորդուոց յորդիս այս ընտանեաց անունը մեծ յարգանօք կը յիշէին:

Օլտրատո կոմսը, ասանկ մէկ գեղեցիկ ժառանգութեան մը տէր ըլլալովն անգամ, չէր կրցած իր նախկին պայծառութեանը մէջ պահել զայն, չէ թէ ինքը գէշ մարդ ըլլալուն համար՝ այլ քիչ մը դիւրամէտ ըլլալով եւ քիչ մ'ալ դժուար եւ ձախող պարագայից մէջ գտնուելով, իւր մեղկ եւ երկչոտ բնութեանը մէջ պէտք եղած զօրութիւնը չէր կրցած գտնալ՝ որ ուղած բարիքը կարենար ընել:

Նոյն ատենները Նուրդովիկոս Պաւարացին Նտալիս արշաւելով այն դարուն Յովհաննէս երկոտասաներորդ պապը, որ Ավինիոն կը նստէր, դահընկեց ըրաւ, ուսկէց նաեւ նզովուեցաւ. եւ անոր տեղը Քորվաւրացի Պետրոս անուամբ արեղայ մը Հռովմի մէջ պանդ անուանեց, որ վերջերը Նիկիոզայոս հինգերորդ ըսուեցաւ, որով բոլոր քրիստոնէութիւնը գայթակղութեան եւ հերձուածի մէջ ձգեց:

Միլանի բնակիչները որ Ալիքսանդրի հզօր եւ կատաղի ատելութեանը պատճառաւ շատ տարիներէ 'ի վեր նզովքէն շանթահար կը հեծէին, շուտ մը հակապապին կողմնակից ըլլալով, մայրաքաղաքին եւ բոլորախքն եղած բոլոր պղտի գեղերուն եւ երկիրներ

րուն եկեղեցիները բացին, եւ հոն գտնուող քանի մը քահանայից ձեռօք՝ առաջուան պէս եկեղեցական պաշտամունքը կատարել սկսան: Բայց մէկ քանի գեղերու մէջ, մասնաւորապէս Քոմօ լծին կողմերը, կողմնակցութիւններու պատճառաւ ժողովուրդը երկպառակած ըլլալով, պապին հաւատարիմ մնացած էին. որով ասոնք ոչ միայն եկեղեցիները չը բացին, այլ նաեւ բոլոր մայրաքաղաքէն զրկուող քահանայները նզովեալ կը համարէին: Եւ ինչպէս զիւրին է երեւակայելը, քաղաքաց, փոքր երկիրներու, նաեւ գեղերու եւ պղտի երկիրներու մէջ շատերը կային որ մայրաքաղաքին ընթացքին կը հետեւէին: Ասով ամէն տեղ երկպառակութիւն, պղծութիւն, վէճ եւ արխահեղութիւն պակաս չէր:

Միլանի Ալքարտօ արքեպիսկոպոսը, Սուրբ Սմբրոսիոսի մենաստանին արքան եւ վանականաց մեծ մասը, երկար ատենէ 'ի վեր փախտական, թէ ազատ եւ թէ վանական եկեղեցականաց մեծ մասը ցրուած ու մութացկան, Իտալից եւ Քաղղիոյ երկիրներու մէջ կը տատապէին: Արքեպիսկոպոսարանը եւ ուրիշ կղերի պաշտօնական տեղերը սրբապղծներու եւ կամ թագաւորի բարեկամ հերձուածողներու ձեռօք բռնի յարչտակուած էին:

Այսչափ խառնակութեանց եւ չիտթութեանց մէջ, Յովհաննէս Ալիքսանդրի, որ բուն իսկ Սուրբ Սմբրոսիոս եկեղեցւոյն Աստօլիօ արքային փոխանորդն ընտրուած ըլլալով, իրեն տեղ սրիկայ մը իրրեւ պաշտօնատար զրկած էր 'ի Նիմոնցա. որն որ նաեւ ժամանակաւ մեծամեծ յանցանաց համար դատապարտուած ու Միլանէն փախած էր: Ասիկա իսկոճ գեղացիները







դանի մը վրայ՝ արթուն եւ զուարթ ծառայ մը՝ աշխոյժ բարակի մը հետ կը խաղար՝ որն որ պոչը շարժելով, ականջները տնկելով ու ցատկելով, կարծես թէ իրեն փաղաքշանացը պատասխանել կուզէր՝ Տէլ Պալցօ կոմսը քառասուն տարուան մօտ մարդ մ'էր։ Գլուխը սեւ թաւիչէ գտակ մը դրած, որուն տակէն աւելի ճերմակ քան թէ դեղին մազերը կ'երեւնային, վատոյժ եւ երկայն երես մ'ունէր, որուն վրայ խօսած ասեւը զոյնդզոյն մօրուքի թեղեր վեր վար կ'ելլալայն կ'իջնային, աչքերը՝ սրահայեաց էին՝ որոնց մէջ կարծէս թէ քիչ մը եռանդ կ'երեւար, բայց այն չոր դէմքին վրայ՝ երկու կողմերը նեղ եւ մէջտեղը դեպ 'ի վեր ցցուած բերան մը կընշմարուէր որ քիչ մը ունայնամիտ ըլլալը կը ցուցնէին։ Ձեռքին վրայ բազէ մը բռնած էր որ երբեմն սուր ճիչով մը եւ երբեմն ալ թեւերը բանալով ու թռչտելով ձեռքը խածնել կը ջանար։ Երբոր բազէակիրը ներս մտաւ, եւ բախտագէտ թռչունը ճանչնալով իր վարժապետը, եւ թեւերն աւելի բանալով դէպ անոր կըթալ կ'ուզէր։

— Ուրեմն, ըսաւ կոմսը, ասոնք հիմա Պէլլանոյէն կուզան

— Այո, Միքէլէն եւ իր Արիկոյցօ որդին հիմա ելան նաւակէն։

Կոմսը՝ ձեռքի թռչունը նստող ծառային յանձնելով, հրամայեց որ դուրս ելլէ։ Եւ ինքը բազէակիրն հետ մնալով, երկու նաւախարաց գալուն կ'ըսուպատէին։ Շատ չ'անցաւ անոնք ալ ներս մտան հայրը՝ ծերունի, մը եւ որդին ալ որ քսան ու եօթն տարեկան գեղեցիկ երիտասարդ մըն էր։

— Ի՞նչ լուր կայ, հարցուց կոմսը ծերունի։

— Առողջութիւն, տէր։

— Պատմէ՛ տեսնամ, ինչպէս եղաւ այսօրուան դործը։

— Ձանդակը դարկաւ, եւ արքեպիսկոպոսարանին պատուհանէն երեք չորս գրագրի հետ նղովալի մը գլուխը տեսնուեցաւ, որ քանի մը խօսքեր վերմուպէն վերջը, մէկ երկու հին պատուած մագաղաթի կտորներ հանեց, որք աղած ձուկ պլլելու շատ աղէկ կընային ծառայել, եւ ձեռքոյն անոնց վրայ սկսաւ դարնել, իբր թէ այն մագաղաթները իրաւունք պիտի տային իր ստախօսութեանցը։ Աւերջապէս կերպը փոխելով ըսաւ. թէ մենք Աիմնագացիքս միշտ մենաստանին գերին եղած ենք։

— Գնւք։

— Այո, եւ ասոր ապացոյց՝ կըսէր թէ առաջ մեր գլուխներն ամիլած էին, եւ թէ քիչ ժամանակ է որ մազերնիս թող ենք տուեր, ասկէ մեծ գրպարտութիւն կընայ ըլլալ։

— Բայց վկայները ներկայ էին թէ ոչ, հարցուց կոմսը։

— Այլայ պակաս է, ներկայ էին անշուշտ. ամենայն ստախօսութեանց առաջուց երգում ըրած խումբ մը հերձուածողներ, որոնք կ'երևուայ թէ շատոնց հողինին ստատուային յանձնած պիտի ըլլան։

— Աւերջապէս։

— Աւերջապէս, այն թռչունականը խօսքը լմնցընելէն վերջը, մեր դատը պաշտպանող Լորէնցօն պարզապէս ըսաւ թէ մենք արքային գերի չենք, եւ թէ հարիւր տարի կայ որ ամեն մարդ իր հարկը կը վճարէ եւ տասանորդը կուտայ, թէ իր եկամուտէն



եւ թէ ուրիշ ո եւ է ապրանքէն , եւ մէկ կարգէ  
դուրս խօսք մ'ալ ըսաւ մեղի համար , կը յիշէս Ա-  
րիկօցցօ . . . :

— Կարծեմ թէ կը յիշեմ . . . պատասխանեց որ-  
դին , ըսաւ թէ . . . ըսաւ թէ . . . քննչ գիտնամ . .  
բառ մը՝ որ ամենեւին լսած չունիմ :

— Ըսած պիտի ըլլայ թէ՛ ըստ ինքեան իրաւամբ  
դուք գերի եղած չը պիտի ըլլաք , վրայ բերաւ կոմսը :

— Ճիշդ , ճիշդ այդպէս ըսաւ , պոռացին հայրն  
ու որդին միաբերան .

— Այսպիսի բառերուն գանձը իմ քովս է , ին-  
ծի հարցուցէք :

— Ուստի , մեր անկախութիւնը յայտնելու հա-  
մար , յառաջ բերաւ Միքէլէ , մեր փաստաբանը իր  
քաջ վկայները՝ այսինքն գեղին եւ մօտ գեղերուն ա-  
մենէն ծերերը ներկայացուց :

— Ետքը :

— Ասոր վրայ ամեն բան պարզապէս պէտք էր  
լիննար , այնպէս չէ . այլ ընդհակառակն այն անպի-  
տան Պիղատոսը ելաւ թէ՛ երկու կողմէն ալ երդման  
պատրաստ վկայ գտնուելով , հարկ կըլլայ որ դատը  
Աստուծոյ դատաստանին ձգուի :

— Աստուծոյ դատաստանին :

— Այո , եւ ամեն հրապարակը գտնուողները  
ծափ դարկին այս սքանչելի գիւտին համար :

— Մարդ , դու սուրբ շարաթէն ալ նրկայն ը-  
րիր պատմութիւնը , տեսնենք սըւոր վերջն ինչպէս  
լինցաւ , ըսաւ կոմսը :

— Պատմութեան վերջն արդէն հասած ենք , աբ-  
բային փաստաբանը առաջարկեց որ Աստուծոյ դա-

տաստանը մենամարտութեամբ որոշուի , եւ ժողովն  
ալ հաւանութիւն տուաւ :

— Մենամարտութեամբ , դաւադանաւ եւ վահա-  
նով արդեօք , հարցուց կոմսը , ծանր կերպով մը :

— Այո , դաւադանաւ եւ վահանով :

— Ո՞վ ուրեմն ձեր կողմէն պիտի մենամարտի :

— Մեր կողմէն մէկը գտնալը դժուար բան չէ ,  
բայց պէտք էիք հոն ըլլալ ու տեսնել թէ անոնց կող-  
մէն ինչ կտրիճ ու յաղթանդամ սատանային մէկը մե-  
նամարտիլ յանձն առաւ :

— Ըսել է , դուք մերժեցիք՝ այս առաջարկութիւնը :

— Շիտակն ըսելով Արիկօցցօն ամենայն սիրով  
կ'ուզէր յանձն առնուլ մենամարտիլը , բայց ես մեր-  
ժեցի . վասն զի ինքն է միայն իմ եւ իր մօրը մէկ հա-  
տիկ ծերութեան վերջի մխիթարանքնիս : Հոս դառ-  
նալով իր որդւոյն , որուն արդէն թեւէն բռնած էր ,  
աղէկ նայէ , աղէկ կ'ըսէր , չըլլայ որ միտքդ փոխես ,  
չ'եմ ուղէր . եւ եթէ դու ալ չ'ես ուղէր իմ եւ մօրդ  
ողջ ողջ գերեզման մտնալը , աղէկ գիտես որ . . . :

— Ինծի չէ չ'ըսիր , պատասխանեց Արիկօցցօ ,  
բայց եւ այնպէս դեռ չորս օր ժամանակ ունինք մը-  
տածելու :

— Այն չորս օրը զքեզ տունը փակելով պիտի  
հսկեմ որ դուրս չ'ելլաս . ինծի քաջութիւն ցուցնել  
պէտք չ'է :

— Աստուծո՛ւ օրհնած մարդ մ'ես , ըսաւ Արի-  
կօցցօ , հօրը ուսերը թօթուելով : Ասոր վրայ Ամար-  
ճիօ , այսինքն բաղէակիրը , որ մինչեւ այն ատեն լուռ  
կեցեր էր . չը կրնար ըլլալ ըսաւ , որ մէկն առատ  
ստակով Լիմոնդացւոց տեղը մենամարտի :



— Չէ, պատասխանեց կոմսը, մօրուքին թեկերը չոյելով, մինչեւ որ մարդ մը բուն անձնասիրութեամբ վառուած չ'ըլլայ, զայն վարձքով մենամարտեցնելը խելք չ'է:

— Ուրեմն, վրայ բերաւ միւսը, պէտք է կամ թողուլ որ բողբոլին գահավիժինք, եւ կամ մէկը գտնալ որ Լիմոնդացոց կողմէն մենամարտի:

— Բանն ալ աս է, ըսաւ կոմսը, կամ մէկը եւ կամ միւսը ընել պէտք է:

— Ա՛հ, մեր էր թէ իմ Լուբօս հոս ըլլար, հառաչեց բաղէակիրը, կամ տունն ըլլար, կամ այնպիսի տեղ մը՝ որ կարենայինք ժամ մ'առաջ հասցնել իրեն այս լուրը:

— Կեցիր նայիմ ըսաւ Միքէլէն, քու Լուբօզ, Օշօրինօ դերակոմսին ծառան չ'է:

— Այո, անոր ծառան էր ատենօք, բայց հիմայ իր վաճառակիրն է եւ շտտ ալ կը սիրէ զինքը, այնպէս որ առանց իրեն դուրս անդամ չ'ելլար:

Նաւաւարն այս լսածին պէս, կարծես թէ քուսէ մը արթնացաւ եւ ձեռքերը շփելով եւ սրահին չորս կողմը նայելով պոռաց. — ուրեմն շուտով Քօսօ դատնաք, անմիջապէս, եւ առանց ատեն կորսնցնելու:

— Ի՞նչ, գիտես արդեօք թէ իմ Լուբօս, Քօսօ կը գտնուի:

— Գիտեմ թէ Օպօրինօն հոն է, պատասխանեց Միքէլէն, եւ որդւոյն դառնալով, դ՛ու ալ չը տեսնոր զինքը երբ հինգշաբթի օրը հոն դացինք:

— Ո՞վ, այն երիտասարդը՝ որ զմեզ բարեւեց եւ ծովեղերքին վրայ քեզի հետ խօսեցաւ:

— Նոյն ինքն:

— Հարցնելք փուճ բան է. անիկայ չ'է որ մեր խեղճ Լիօնէլլօ կոմսին տղուն բարեկամն էր, եւ երբեմն ալ հոս երկար ատեններ անոր սիրուն համար դղեակը դալով հիւր կ'ըլլար:

— Ուրեմն, վրայ բերաւ ծեր նաւաւարն անհամբեր կերպով մը. շուտ մը տուն երթանք, երկու պատառ հաց ուտենք ու ելլանք ճամբայ, քանի որ լիճը հանդարտ է: Արէկօցցօ, կարծեմ նաւակն ալ պատրաստ է:

— Այո, առագաստ, թի եւ դէկ, ամեն բան մէջն է, որոնք շուտով վեր ելլալու համար մէջը ձըգեցի: Ուստի հայրը որդւոյն թեւէն բռնելով ու միանդամայն կոմսը բարեւելով սկսան դէպ 'ի դուռ երթալ բաղէակիրին ըսելով,

— Մնշուշա քու կողմանէդ պիտի ըսեմ իրեն այս բանս, այնպէս չ'է:

— Հապա, իմ կողմանէս, իմ կողմանէս, պատասխանեց միւսը: Նաւաւարը՝ « մնաս բարով, վաղը աղիդ հետ կը տեսնուինք », ըսելով դուրս ելաւ:

— Միքէլէ, Միքէլէ, կանչեց կոմսն ետեւէն. լաւ գիտնաս որ այս բանը բողբոլին քու կողմանէդ պիտի ընես, եւ չ'ըլլայ որ զիս ալ մէջ խառնես: Չ'եմ ուզեր որ ձեզի համար ուրիշի հետն աւրուիմ, հասկըցամ:

— Հասկցայ:



### Գ Լ ՈՒ Խ Բ.

Հետեւեալ կիրակի առաւօտուն, Լիմոնդայի Ս. Բերնարտոս եկեղեցւոյն դռները բաց, ու ներսն ալ Միլանէն զրկուած եղբայր մը պատարագ կ'ընէր, որուն Բէլէկրուայէն եւ անոր ընտանիքէն դատ մարդ մը ներկայ է'էր: Լիմոնդայիք եւ Պէլլաճիօյի մարդկանց մեծ մասը դուրսը հրապարակին մէջ խոնուած եւ կամ խուճը խուճը բաժնուած, ասդիս անդին առջի օրուան անցածին եւ Բէլէկրուայի չարութեանցը վրայ կը խօսէին:

Չորս կամ հինգ զինեալ սրիկայներ, կանուխ հըրապարակին մէջ ժուռ կուգային. եւ երբեմն քաղցրութեամբ եւ երբեմն ալ ծանր խօսքերով ժողովուրդը եկեղեցի մտնալ կ'ստիպէին: Բայց ժողովուրդը իր կարծեացը վրայ հաստատ, եւ վերջի կրած անիրաւութիւններէն դայրացած եւ միանգամայն շատուր ըլլալով, չորս հատ զինեալներէն վախ է'էր կրնալ ունենալ: Ասոնք տեսնալով որ բան մը չը կարենան պիտի ընել, գլուխնին կախեցին ու եկեղեցւոյ դրանց երկու կողմերը պահապան կեցած՝ գոնէ ամենէն մօտ կեցողներուն գլուխնին բանալ կ'ստիպէին: Սակայն անոնք՝ ամենքը միաբան ըլլալով, ոչ միայն գլուխնին է'էին բանար՝ այլ նաեւ գլուխը բաց եղողներուն ալ դոցել տալով, այն չորս պահապաններուն դիմացն անցած կը ծաղրէին, քթերնուն տակէն խնդալով եւ զանոնք հրելով, զարնելով եւ սուլելով: Բէլէկրուան

որ այս միջոցիս ներսը խորանին ձախ կողմը ծնրազիր կեցեր էր, գլուխը դուրսի բազմութեան դարձրնելով տեսաւ եւ հասկցաւ, որ ալ ասոնց երեսը յարգանք ու պատկառանք է'է մնացեր: Եւ որչափ ալ ինք իր ընտանեօքն ու պահապաններովը ներսը փակուած կը գտնուեր, սակայն եւ այնպէս դուրսը իրեն ներուն վախ չը տալու համար՝ պարտք համարեց ինքզինքը բռնել: Քահանան ալ պատարագի ատեն երբեմն քիթը սրբելու, երբեմն թքնելու եւ երբեմն ալ սպասաւորը կանչելու պատճառաւ, ետեւը դառնալով կը զիտէր յուզեալ ժողովրդեան խուռն բազմութիւնը. եւ անոնց նայուածքը չը հաւնելով կ'աճապարէր ժամ մ'առաջ պատարագին վերջը հասնելու: Այն օրուան Աւետարանին պէս ալ երկայն Աւետարան կեանքին մէջ իրեն է'էր պատահած: Կ'ուզէր շուտ մը օրհնեալ եղերութիւն հասնիլ, ասոր համար ամենայն ջանք կը բանեցնէր. սակայն ասով հանդերձ դուրսէն ալ պէտք է'էր բանը երեւան հանել:

Ի՞նչ պիտի ըլլար Բէլէկրուային ու պատարագող զատնային սարսափը, թէ որ ներսէն լսէին Լիմոնդայի երկուսարդի մը ձայնը՝ որ կը պոռար: «Մինչդեռ այսպիսի անիրաւութեան եւ չարութեան վերջի ծայրը հասեր ենք, դեռ հանդարտ կը կենանք:»

— Ի՞նչու Պէլլանօ, է'էս երթար մեր կողմէն մեհամարտելու, կը պատասխանէր ճերմակ մազերով եւ մօրեղ ծեր մը, որ գաւազանի մը կոթնած խուճի մը մէջտեղը կեցեր էր:

— Հապս, ինչ ալ աղէկ խօսեցաւ մեր հովիւրը, պատասխանեց առաջինը, երթամ այդպիսի կախարդի մը հետ մենամարտիմ, որ զգեստներուն տակը է'էմ



գիտեր թնչ տեսակ խոտ մը կարեր է , որով կաշին գոմէշի կաշի կը դառնայ եղեր :

— Ստէֆանուօն իրաւունք ունի . ամենուն յայտնի է անոր կախարդ ըլլալը , կ'ըսէր ուրիշ մը . անոնց ամենուն խօսքը մէկ ըլլալուն , այն անպիտանը ընտրեցին որ մէկը չը կարենայ գիմացը ելլալ :

— Զմեզ հոգևով եւ մարմնով կորսնցնելէն առաջ պէտք է փութանք գիւղիս մէջ ձեռքերնէս եկածն ընելու , կը գոչէր առաջինը :

— Աղէկ ըսաւ թէ հոգևով եւ մարմնով , աւելցուցուց բազմութեան մէջէն մէկը , տեսէք սա , ամենեւին պատարագի չ'գացող թշուառական Բէլէկրուան , հիմայ եկեղեցի կ'երթայ , որն որ մահացու մեղք է : Ասոնց բոլորն ալ զմեզ կորսնցնելու հնարքներ են :

— Պէտք է որ հերետիկոս մը միշտ ճամբան բռնէ . ո՞վ որ զինքը շատոնց ճանչցած է , կրնայ գիտնալ թէ 'ի սկզբանէ մեր եպիսկոպոսէն ալ արդիւնալ եւ զգեստին վրայ սեւ խաչեր կրելու գատապարտուած մէկն էր :

— Ես ալ հիմայ լաւ համողուեցայ՝ իրեն սուտ թղթեր շինելու արհեստն ունենալուն , ըսաւ ուրիշ մը , եւ հիմայ այնպիսի անպիտան մը մեզի խրկելու էին , որ զմեզ այս վիճակին հասցնէ :

— Վերջապէս ամենայն չարիք գիւղիս մէջ զըտնուող հերձուածող հերետիկոսներէն յառաջ կուգան :

— Պէտք է կրակի տալ ու այրել տուներնս եւ զիրենք ալ խեղդել ու լիճը նետել , սկսան գոչել բազմութեան մէջէն շատ մը ձայներ , որոնք երթալով շատնալու վրայ էին :

Նոյն միջոցին պատարագը ըմբռնալով , Բէլէկրու-

ան ալ իր պահապաններէն պարփակուած եկեղեցիէն դուրս կ'ելլար . եւ հազիւ թէ տուն մտնելու վրայ էր , մէկ մ'ալ բոլոր բազմութիւնը դէպ 'ի իրեն վաղելով սկսաւ պոռալ զարհուրելի եղանակաւ մը . զարկէք , խեղդեցէք , պատռեցէք , մեռցուցէք , բայց առանց մէկուն մազին դուչելու :

Բէլէկրուա տանը դռնէն ներս մտնելուն պէս , ալ գիշեր բարի . դուրս մնացողը դուրսը՝ ներս մնացողը ներսը մնալով՝ դռները գոցեցին : Այն ատեն բազմութեան աղաղակը թէպէտ եւս առաւել բարձրացաւ , բայց դարձեալ մէկու մը վնաս չը հասնելով կրնար փոթորիկը խաղաղել , թէ որ այն չորս կամ հինգ վերոյիշեալ պահապանները ներս մտնալէն վերջը , դըրան վրայ պատուհանի մը մէջ կեցած՝ ժողովուրդը պախարակելով անոնց մեծամեծ չարիքներ հասցնել սպառնային : Այնչափ որ անոնք ալ դուրսէն զանոնք ծաղրելով սկսան քարկոծել ու հայհոյել : Վերջապէս այն աւաղակներուն մէկուն թեւեւ խոշորիկէկ քար մը գալով , մէկէն նոյն քարն առնելն ու վերէն կատաղութեամբ վար բազմութեան վրայ նետելը մէկ է դաւ : Այս քարը տասներկու կամ տասներեք տարեկան տղու մը , (որ ամենուն պէս անոնց գէմ կը պոռար կը կանչէր) գլխուն գալով , գանկը բացուեցաւ , եւ մեղայ մ'ալ ըսելուն չը մնացած՝ մեռաւ :

Այս արիւնը վառօգի մը վրայ ընկած կայծի նըմանեցաւ : Խուռն բազմութիւնը կարգէ դուրս կատրելով , ամենը մէկէն վրէժինսգրութիւն սկսան պոռալ : Շուտ մը ասնը դռները կտորեցին եւ Ուփիանոսի ալեաց նման ժողովուրդը ներս թափելով մտաւ առաջին յարկը : Յանկարծական փոթորիկի մը շառաջ-



մանը պէս ժամանակ մը ասդիս անդին դռներու բացուելուն ու գոցուելուն սոսկալի ճոխնչը կը լսուէր : Արք եւ կանայք յուսահատական ճիչերով աւարառուաց ձեռքէն ներքին դռներէն կը փախչէին : Աերչապէս չորս կողմէն ճչելու , պոռալու , ծափահարու թեանց եւ կանչըռտելու ձայներ դէպ յերկինս կը բարձրանային :

Տէրութեան կողմանէ գտնուող քանի մը անձինք փախչելու ժամանակ չը գտնալով , դեռ վերի աշտարակին վրայ էին . ժողովուրդը հոն ալ հասաւ եւ կատաղութեամբ դանոնք բռնելով մէկիկ մէկիկ վերէն վար նետեց , որոնց վար հասնիլը ու վերջի շունչերնին փչելը մէկ կ'ըլլար : Քէլէկը՝ ուր խնդի պէս տունէ տուն վաղելով չ'էր դիտեր ուր փախչելը , իր հինգ պահապաններովը ձեռք անցաւ : Նոյն ժամայն ասոնց ձեռքերնին ետեւին կապելով , ոմանք կ'ուզէին միւսներուն պէս բերդէն վար նետել , ոմանք վզերնէն քարով մը լիճը ձգել , ոմանք ալ անդամնին յօշոտել : Աերջապէս , ողջ ողջ գլխովար թաղելու որոշմունք տուին եւ շատերն ալ բահ եւ բրիչ առնելով եկեղեցոյ դիմացը փոսեր փորելու վաղեցին :

— Ո՛վ հայրենատեաց շուն դու , պոռաց անոր երեսն 'ի վեր գլուխը տաքցած երիտասարդ մը , եւ խոշոր փայտ մը վերցնելով կ'ուզէր գլխուն իջեցնել ըսելով . ահա դըրկ խոստովանցնելու քահանայ մը , բայց ծեր մը քովէն ձեռքը բռնելով , — քեզի կը վայելէ Հրէայէ մ'ալ ցած ըլլալ , պէտք է ձդենք որ խոստովանի , քանի որ կ'ուզէ :

— Հիմայ մի պիտի խոստովանցնէ զինքը :

— Ո՞վ , մարդուն մէկը . թէ որ ուրիշ մը չ'կայ

Թո՛ղ այս առաւօտ պատարագ դրուցող եղբայրը քայ , որն որ՝ վախէն դեռ եկեղեցիէն դուրս չելաւ :

— Անիկայ հերձուածոց հերեօիկոս մ'է եւ չը կրնար խոստովանցնել :

— Ուրեմն աւրիշ մը . մեր եկեղեցւոյն մեծաւորը :

— Ո՞ւր պիտի գտնաւ հիմա զինքը . եւ ան ալ արգիլեալ ըլլալով չը կրնար խոստովանցնել :

— Մահուան վայրկեանը կրնայ , եւ ուրիշներն ալ խոստովանցուցած ունի :

— Շատ լաւ , բայց այս թշուառականները դեռ մահուան վայրկեանը չ'են հասած :

— Այո , մահուան դուռը հասած են :

— Չէ , չեն հասած : Ասանկով ոմանք մէկուն , ոմանք ալ միւսին կողմէն մէկ մէկու երեսն ի վեր շնչատապառ « կրնայ խոստովանցնել , չը կրնար » կը պոռային . Աերջապէս մէկը սա պատասխանը տալով ամենքը խաղաղեցուց :

— Թէ որ խոստովանածուն պէս զլրենք մեզնենք , իրենց խոստովանած ատենը վերջի վայրկեանին կը սեպուի , ինձի անանկ կ'երեւայ :

— Այո , այո , ճշմարիտն ալ այս է : զանուի ուրեմն մեր մեծաւորը :

— Ո՞ւր է :

— Այս գիշեր վարը նաւավարին տունն էր :

— Շուտ ուրեմն՝ նաւավարը գտնուու է . Միքէլէ , Միքէլէ , բայց նոյն օրը ամենեւին զինքը տեսնող չկայ :

— Միքէլէն տեսայ որ իր որդւոյն հետ այս առաւօտ կանուխ Քօսօ գնաց , ըսաւ մէկը բաղմութեան մէջէն :

1667  
1001





— Բայց հիմայ դարձած պիտի ըլլայ, վասն զի չատ չեղաւ նաւակին Պէլլաճիօյէն դէպ 'ի հոս դալը տեսնալոս, վրայ բերաւ ուրիշ մը :

— Նաւավարին տո՛ւնը, նաւավարին տո՛ւնը, շո՛ւտ, շո՛ւտ, թո՛ղ մէկը վազէ պոռացին քանի մը հոգի :

Մինչեւ հիմայ ամենաւն բերանը պտըտող նաւավարին տունը, Պէլլաճիօյի կողմը Լիմոնդայէն մղոնի մը չափ հեռու, վարը ըծին եղերքն էր : Նոյն ժամայն հովիւ մը դէպ այս տնակը մեծաւորը տեսնելու կը վազէր, զինքը զիմաւորեց ծերունին հայր եւ որդի երկու նաւավարաց եւ երրորդի մը հետ, որ բազէակ-բին որդին Լուբօն էր : որո՞նք տակաւին Քօմօէն նոր դառնալով դէպ ի քաղաքը կ'ելլային :

Այս եկեղեցականը բարի ծերուկ մ'էր, իր հետքը եկող երեք անձանցմէ առաջ լեռան նեղ ճամբէն աճապարելով վեր կը վազեր . երբոր զինքը բնտնելու ելող հովիւը մէկէն 'ի մէկ գիմացն ելաւ : Մեծաւորը կանդ առնելով, ձամաթէօ, կանչեց (որ հովիւին ա-նուհն էր), ինչ է այս Լիմոնդայի աղաղակը, կարծես թէ կը կործանի :

— Հայր, պատասխանեց միւսը, շունչը կտրած, վազէ, վազէ, քեզմէ դատ մէկը կարող չէ զայն փրկել : Աբբայական պալատը կոխեցին, եւ պաշտօնա-տարն իր մարդիկներովը բռնեցին եւ կ'ուղեն սպան-նել : Իեղճ ծերուկը ժամանակ չը կորսնցնելու համար սկսաւ ճամբայ առնել : Հաղիւ թէ հեռուէն անոր սեւ գտակը տեսան, սկսան հրապարակէն ամենքը միաբերան կանչել : Ահուափիկ մեծաւորը, մեծաւորը հոս է : Եւ դէպ իրեն վազելով առաջարկեցին որ շուտ մը Բէլէկրուան իր մարդիկներովը խոստովանցնէ, որպէս

զի վայրկեան մ'առաջ մեռցնեն զանոնք : Իսկ բարի ծերուկը, որ այնչափ տարիներէ 'ի վեր անխոնջ աշխատութեամբ ժողովրդեան սիրտը շահած էր, միանգամայն իր կղերական իշխանութեամբը կրցաւ քանի մը խօսքով անոնց տարօրինակ որոշումը հերքել :

Մէկ կողմանէ ալ ժողովուրդը լսելով Լուբօնի իրենց համար մեանմարտելու եկած ըլլալը, շուտ մը հրապարակին մէջ անոր գլուխը ժողովեցան : Այս միջոցին մեծաւորը ժամանակ գտնալով, պաշտօնատարին տունը մտաւ եւ քաղցրութեամբ ներս եղողներն ալ դուրս հանելէն վերջը, ինքը վերի երկրորդ յարկը ելաւ : Հոն ականջ գնելով՝ կարծես թէ վերէն տղու մը խղճուկ ձայնը կ'առնուր : Փայտէ սանդու-խէ մը վեր դրան մ'առջեւ ելաւ, ու պզտի ծակէ մը ներս նայելով տեսաւ ներսը անկեան մը մէջ, մազե-րը երեսին վրայ ձղած յուսահատ կին մը որ տղեկը ծնդացը վրայ առած, բերանը կը սեղմէր, որպէս զի ձայն չի հանէ : Հասկընալով որ այն Բէլէկրուայի կինն է, կամաց մը դուռը խառնելով ըսաւ : Մեծաւորն եմ, բաց, մի վախնար ամեն բան խաղաղած է : Այս յանկարծական ձայնէն կինը վեր նետուելով թողուց տղուն բերանը, որ բաւական ատենէ 'ի վեր դողած էր ձայնը չի հանելու համար : Իսկ ծերուկը դարձեալ դուրսէն, մի վախնար, ես եմ, ամեն բան լմնցած է կ'ըսէր . այն ատեն կինը տղեկը զիրկը ոտք ելաւ ու ներսէն դուռը դողդողով բացաւ եւ իր փրկա-րարը տեսնելուն պէս . Ո՞հ, Աստուած որ զրկեց ըզ-քեզ, ինքը հասուցանէ քէղ այս բարեացդ փոխա-րէնը, կանչեց խեղճ կինը : Եւ այս խօսքերը զրու-ցած ժամանակը քահանային զգեստն իր երախտադի-



տութեան արցունքներովը թրջելով կը համբուրէր : Մէկ մ'ալ յանկարծ իր ամուսինը միտքն իյնալով՝ հարցուց անոր ուր ըլլալը :

— Ողջ է, պատասխանեց մեծաւորը, սակայն այժմ աղէկ կ'ըլլար թէ որ դու ասկէ հեռանայիր . եւ կընոջ դուռ մը ցուցնելով, որ դէպ 'ի լերան կողմը կը բացուէր, ահաւասիկ սա՛ ճամբէն շիտակ բերդը գընա՛ եւ իմ անուամբս կոմսին ըսէ որ դոնէ այս գիշեր դըբեզ ներս առնեն :

— Ո՛հ , չի պիտի յանձն առնու . . . վասն զի . . .

— Շատ աղէկ , ուրեմն դու շիտակ էրմէջինտայի դնա՛ , եւ օգնութեան կարօտ ըլլալովդ՝ լաւ գիտեմ որ ինքն ամենայն սիրով զըբեզ ներս կ'առնու : Գնա՛ , Աստուած հետդ ըլլայ :

Քահանան նոյն գաղտնի դռնէն դուրս կինը՝ ճամբայ դնելէն վերջը , դարձաւ հրապարակը , բազմութիւնը բաղէակըին որդւոյն չորս բոլորը ժողուած գտնալով՝ մէջերին մտաւ ու մօտը գտնուողներուն կ'ըսէր . Որպէս զի ամեն բան ըստ կանոնի ըլլայ , պէտք է որ մօտակայ գեղերու մարդիքն ալ հոս կանչուին , եւ ամենուն հաւանութեամբն ընտրուի ձեր կողմէն մենամարտելու համար Աստուծոյ դրկած անձը :

Այս ըսելու ժամանակը , մէկ մ'ալ ժամակոչը , եկեղեցւոյն դաւիթը նայող պղտի պատահաններուն մէկէն գլուխը դուրս հանելով՝ սկսաւ քառանկիւնի ու հաստ պղնձէ տախտակի մը վրայ երկու ձեռքը մէյմէկ մուրճ առած այնպիսի եղանակ մը դարնել որ հոն ժողուելու նշան էր :

Ուստի , բոլոր մօտը գտնուած գեղերէն կամաց կամաց գեղացիք հոն ժողուելով՝ հաստատեցին թէ

քուէարկութեամբ՝ որոշուի Լուբոյի ընտրութիւնը , եւ ամենքը մերժողական քուէ չունենալով , Լիմոնդացւոց՝ կողմանէ ընդհանուր հաւանութեամբ Լուբօն իրենց մենամարտ սրշուեցաւ :

Ասով բաւական ժամանակ անցած ըլլալով , բազմութեան առաջին վրէժխնդրութեան եռանդը պաղեցաւ , եւ կարծես թէ քիչ մ'առաջ թափուած արեան վրայ զղջացածի պէս , մէկը չէր ուզեր գեղին մէջ կենալ : Ուստի , ամենքն ալ գլուխնին կախած , կամաց կամաց , լռիկ մնչիկ , ձեռք երկու սրունքներուն մէջն՝ առած՝ օտար շուներու պէս մէկն ասկէ , միւսն անկէ աներեւոյթ եղան , եւ քիչ ատենուան մէջ ամեն բան խաղաղեցաւ :

Իսկ Բէլէկրուա , ալ չը վստահանալով գեղին մէջ կենալու , շուտ մը ընին եզերքն իջաւ , եւ հոն նաւակ մը գտնալով իր մնացած ընտանեօքը եւ քանի մը մարդիկներովը մէջը մտաւ , առանց իսկ հոգ տանելու կնոջն ու որդւոյն , որոնց նաեւ կոմսին բերդը երթալը քաջ գիտեր , եւ այնպէս զատուեցաւ փոռնքէն : Եւ աչքերը դէպ 'ի Լիմոնդա դարձնելով կը հայնոյէր , կ'երգնուր ու կսպառնար նորէն զօրքով դառնալ ու բնաջինջ ընել Լիմոնդացիները :

Բայց աբբան մասնաւոր սուրհանդակէ մը եղածները լսածին պէս , Բէլէկրուային սաստիկ բարկանալով , արհամարհական թուղթ մը գրեց անոր ու ետեւէն Վարէնա զրկեց , ( ուր որ նա փախած էր ) : Որուն մէջ ոչ միայն վերստին զինքը նոյն պաշտօնին չը հասցնել , այլ նաեւ այնպիսի գեղացիներէն յաղթուելով վատութեամբ գեղէն դուրս ելլելուն վրայ իրեն զղջալ տալ կ'սպառնար :



Իսկ մեր խեղճ Լիմոնդացւոց դաւով, յայսնի բան էր թէ արբան ալ ասոնց ըրածին վրայ զայրացած, զիրենք բոլորովին ջնջելու միտքն ունէր: Սակայն մեծերն ալ ընդհանրապէս չեն կրնար իրենց ամեն կամեցերնին ուղղածներնուն պէս 'ի գործ դնել: Մանաւանդ այնպիսի ալէկոծ ու դժուարին ժամանակի մը մէջ, որ կղերը հազար ու մէկ բանի զբաղած ըլլալով, չէր կրնար շուտ մը ուղած տեղը իր զօրութիւնը հասցնելով կամքը առաջ տանիլ: Ուստի արբան բանէ մը տեղեկութիւն չունեցածի պէս, ձեռք որ ջուրը իր բնական ընթացքովը վազէ, սպասելով Պէլլաճիօյի դատաստանին՝ որուն դատապարտութեամբը վստահ էր թէ այն խեղճերուն օտքերն ու ձեռքերը կտրած իրեն պիտի յանձնէին, որպէս զի ինքն ալ ուղածին պէս անոնց մորթիքը գերծէ:

Լուբօ շուտ մը ճամբայ ելաւ գէպ 'ի Օլտրասո կոմսին գղեակը, ուր որ ծնած էր եւ մեծաւ անձկանօք ու կարօտով ոչ միայն իր ծնողքէն, այլ նաեւ ամեն հոն գանուողներէն կ'սպասուէր: Եւ որչափ ալ բաւական ատենէ 'ի վեր Լուբօյի գեղ գալն ու այնպիսի մեծ խռովութեան մը հանդարտելուն պատճառ ըլլալն իմացած էին, այսու ամենայնիւ մէկն ալ բերդէն դուրս զինքը զիմաւորելու չէր ելած: Վասն զի կոմսը Լիմոնդացւոց այն կատաղութիւնը տեսնելով, բոլոր դոճները գոցել եւ զղեկին կամուրջներն անգամ վեր առնել տուած էր. նաեւ ամեն բան խազաղելէն վերջն ալ մէկու մը հրաման չէր տար որ դուրս ելլայ:

Ճինգ տարի էր բաղէակրին որդին՝ այն տեղերը չէր տեսած եւ վերջապէս զղեկէն ներս մտնելով ին-

կաւ իր ծնողացը զիրկը անպատու ուրախութեամբ, եւ նոյն օրն ալ մեծ ցնծութիւն եղաւ բոլոր զղեկին մէջ:

Իսկ Երմէլինտոս, կոմսին կինը, վարը սրահի մը անկիւնը, (եկեղեցւոյ մէջ քահանայի բերնէն Աւետարանի մեկնութիւն մտիկ ընելն արդիւրեւ ըլլալուն), ըստ իր ամեն կիրակի աւուր սովորութեանը՝ գլուխը ժողուած իր մէկ հատիկ Երանուհիի աղջիկն ու անոր Լաուրէզա աղախինը եւ բաղէակրին աղջիկը, անոնց նոյն օրուան Աւետարանին մեկնութիւնը կուտար:

Երեքն ալ քրտէ մը զիմաց նստած էին: Երմէլինտա՝ քառասուն տարեկանի մօտ էր. բարձրահասակ, ամեն շարժումնքը վսեմ եւ բոլոր իր վարմունքին մէջ մեծութիւն կը փայլէր: Սակայն տժգոյն ու մարած դէմքին վրայ, աչքերն ալ իրենց վատվուուն վիճակը կորսնցուցած երեւելով, կիմացուէր թէ կենացը մեծ մասը հիւանդութեամբ անցուցած էր:

Աղջիկն ալ ճիշդ մօրն եկած ըլլալուն, գծագրութեանցն ու դէմքին վրայ նոյն շնորհքը, վեհանձնութիւնը եւ միանդամայն նոյն համեստութիւնն ունէր: Սակայն այս ամեն բարի կատարելութիւնները, մաքուր սրտի եւ ծաղիկ հասակի մը, զուարթ եւ դեռ կենաց ալէկոծութեանց մէջ չի մտնող անմեղ հողւոյ մը շնորհքն ունէին:

Երբոր մայրը մեկնութիւնը լինցնելով գոցեց աւետարանը, դարձաւ աղախնոյն, եւ գնահայէ, ըսաւ, արդեօք այն խեղճ կինը բանի մը պէտք ունի: Լաուրէզա դուրս ելաւ եւ քիչ ատենէն դարձաւ պատասխանելու թէ ամենեւին բանի մը պէտք չունի եւ թէ իրմէ ընդունած հիւրընկալութեանը մեծապէս



չնորհակալ ըլլալով, ուրիշ բան չի խնդրէր՝ բայց եթէ զինքը որդւոյն հետ միատեղ իր ամուսնոյն քով գարձնել :

— Ըսիր իրեն թէ գոնէ մինչեւ իրիկուն սիրտը հանդիստ բռնէ, եւ թէ ես կը մտածեմ ժամ մ'առաջ իր խնդիրքը կատարելու :

— Այո՛, եւ սիրտը հանդարտելով միշտ ձեզի եւ ձեր ընտանեացը համար Աստուծոյ աղօթող ըլլալ խօստացաւ :

— Աստուծոյ ողորմութիւնը հասնի, վրայ բերաւ Երմէլինտա, ինքը միշտ բարի եւ Աստուածափախ կին մ'եղած ըլլալով, այսպիսի կէտի մը հասնելու չէր. բայց . . . հոս հառաչելով մը վերստին կրկնեց. Աստուծոյ ողորմութիւնը հասնի :

Այս ըսելու ժամանակը, կամացուկ մը դուռը բացուեցաւ եւ կոմսը բաղէակիլին որդւոյն ձեռքէն բռնած ներս մտաւ, եւ զինքը կնոջն ու աղջկանը ներկայացընելով : — Ահաւասիկ մեր Լուրծոն, որ Լիմոնդացւոց իրաւունքը պաշտպանելու եկեր է :

Երմէլինտա եւ Երանուհի ամենայն սիրով ընդունեցան զինքը . իսկ Լաուրէդան, այնչափ տղոններէ 'ի վեր իրմէ հեռացած սիրելի եղբայրը տեսածին պէս մէկէն վիզը նետուեցաւ եւ ժամանակ մը առանց բռտ մ'արտաբերելու լուռ կենալէն վերջը, ինքնիրեն եկաւ, եւ այլայլած ձայնով եւ կարմրելով, այս ինչ խենդութիւն է ըրածս կրսէր . սակայն սիրոյս սաստկութենէն ալ չեմ կրնար . . . արցունքներս բռնել :

### ԳԼՈՒԽ Գ.

Աստուծոյ դատաստանին օրն հասաւ : Քրիվէլլօյի խուճրին զօրաց բազմութիւնը Պէլլանօյի Ս. Գէորգ եկեղեցւոյն հրապարակին մէջ՝ տեղ բանալու համար ժողովուրդը հանդարտ պահելու վրայ էին. ուսկից սղոցի, մուրճերու եւ կրկէսը պատրաստող գործաւորաց ձայները կը լսուէին :

Հրապարակին մէջ՝ դէպ 'ի լիճը նայելով, ձախ կողմը կիցնար գեղեցիկ ճարտարապետութեամբ զարդարուած՝ արքեպիսկոպոսին պալատը : Գէպ 'ի յաջ՝ ուրիշ քանի մը տուներ, ու ետեւի կողմն ալ Ս. Գէորգայ եկեղեցին, որուն ձակախն վրայ մեծ եւ կլոր պատուհան մը կար : Այս պատուհանին մէկ կողմը, ձիու վրայ տէգով վիշապը վիրաւորելու ձեւով Ս. Գէորգայ արձանը, միւս կողմն ալ Ս. Քրիստափորի փառաւոր արձանը կար, որ ուսերուն վրայ տղայ մը կը կրէր : Իսկ պատուհանին վրայ՝ Սրբոյն Անտոնի արձանը կը գտնուէր՝ ձեռքի գաւազանին ծայրէն կախուած պզտի զանգակովը : Երեքն ալ Յունաստանի հրեշտակներէն էին, որոնցմով այն ատենները Խտալիա բեցուած էր :

Կ եկեղեցւոյն դռները բաց՝ եւ ներսն այլ եւ այլ նշխարներով զինեալ մարդկան բազմութիւն մը ժուռ սլուգար, որոնք Քրիվէլլօ ժողոված եւ բոլոր իր իշխանութեանը տակն եղող երկիրներն ու դղեակները սջուցած էր : Լիմոնդացւոց ոտք ելլալը լսեպուն պէս՝



վախնալով ու միանգամայն Լիմոնդացւոց լուծն ալ արդէն սաստիկ ծանրացած ըլլալն ալ գիտնալով, որպէս զի չըլլայ թէ ամենքը միանալով նոր շփոթութիւն մը հանեն, անոնցմէ մեծ մաս մ'ալ նոյն օրը հոն ժողովր էր:

Այս զինակիր ամբոխը մեր ընթերցողաց ճանչցընելու համար, հոս մէջ կը բերենք Քաննիացի որսորդի մը, եւ Մանտէլլօցի հացագործի մը հետ եկեղեցոյ մէջ ըրած խօսակցութիւննին:

Որսորդը, կապարագոյն զգեստ մը հագած էր, որ մինչեւ ծնօքերը կիջնէր. բուրդէ գուլպաներուն վրայէն ալ ոտքերը սուր երկաթներով հաստ կօշիկներ ունէր, որոնցմով լեռներուն անարկու զառիվայրներէն անվախ վեր կ'ելլար. թեւին տակը տակառիկ ու փող մը, եւ ուսին վրայ աղեղ մը եւ քանի մ'ալ չուանով կապած նետեր կային: Իսկ հացագործը, չուխայէ եւ թեւերը սեղմած ու պզնձէ կոճակներով զարդարուած զգեստ մը, վրայէն ան արջու մորթէ մուշտակ մը եւ գլուխը քառանկիւնի գլխարկ մ'ունէր ու մէջքէն ալ ժանգոտած դաշոյն մը կախած էր:

Ասիկայ կռնակն օրհնած ջուրին ամանին տուած չորս կողմը եղողներուն շատախօսութեանցը ուշ զընելու ատեն երբ որ որսորդին անցնելու ատենը տեսաւ, մէկէն կամաց մը անոր ուսին դարնելով,

— Ո՛ր, Լօրէնցօ, դժու ալ Պէլլանօ ես եկեր:

— Անշուշտ ես ալ, ինչ ընեմ, այն անիծեալ Քրիվէլլօն զմեզ հանգիստ չի թողուր որ . . . որդնտտի, սատկի այն . . .

— Իացց ինչպէս կ'ըլլայ որ դու հոս ըլլաս, ոչ երկիր ունիս եւ ոչ ալ տուն. կարծեմ ուրիշի մը համար է քու ներկայութիւնդ:

— Այո, մեր մեծաւորին կողմանէ եկած եմ. ինքն այսօր մասնաւոր եկեղեցական գործոց զբաղած ըլլալով, ինծի առաջարկեց Պէլլանօ իջնալ: Ես աջ տեսնալով որ որս չի կայ, եւ տունն ալ գործ մը չունիմ, երթամ ըսի տեսնալու սա մենամարտութիւնը որուն անունն անգամ բաւական ժամանակէ 'ի վեր լսած չունիմ:

— Ես ալ, շիտակը գրեցելով, վրայ բերաւ հացարողը, հիմայ իմ շահուս համար կեցեր եմ, պըղտի տնակ մ'ունիմ, որուն համար տարուէ տարի բաւական ծանր հարկ վճարելուս համար, բոլոր Մանտէլլօյի ընակիչքը կը դանդատին, եւ կարծեմ թէ օր մ'ալ իրենք Լիմոնդացւոց պէս ոտք պիտի ելլան:

— Իրան է ուրեմն թէ՛ Լիմոնդացւոց չըրածը չէ մնացեր:

— Հապան . . . Բելէկրուան սպաններ ու արբահօր տունը կրակի տուեր են:

— Է՛հ, երանի անոնց, հառաչեց որսորդը:

— Իրաւունք ունիս, բայց հիմա տես որ սուրբ Ամբրոսիոսի արբան սաստիկ կատղելով՝ բոլոր սրբոց, նաեւ ամենայն սատանայից վրայ երգունցեր է՝ որ զիրենք պատժէ:

— Ըսելուն եւ 'ի գործ դնելուն մէջ մեծ տարբերութիւն կայ բարեկամ, այժմ այս դատը մենամարտութեամբ պիտի որոշուի. թէ որ Լիմոնդացւոց կողմէն եկողը յայլթանակէ, թող մէկն ելլայ տեսնամ իրենց դպչելու. յիշաւի կրնամ ըսել թէ այն ատեն բոլոր Քօլօ լիճն ալ ոտք կ'ելլայ:

— Բարեկամ, կը տեսնուի թէ տակաւին երիտասարդ ես, վրայ բերաւ հացագործը, չի կրցար իմա-



նալ մինչեւ հիմայ թէ՛ միշտ իրաւունքը կոմսերուն  
ու մեծերունն է , եւ մերինը հովը կ'առնէ կը տանի :

— Բայց երբոր ամենքնիս ալ միաբանինք , կ'ը-  
սէր որորդը :

— Միաբանինք , ծիծաղս կը շարժես : Նայէ հէզ  
մը սա հրապարակին մէջ ժուռ եկող քառասուն զին-  
եալներուն , ո՞վ կրնայ անոնց դպչիլ . ամենքն ալ եր-  
կաթապատ՝ կարծես թէ քարէ արձաններ են , եւ ա-  
մենքն ալ ստակի սիրուն համար մինչեւ անգամ սա-  
տանաներու դէմ պատերազմելու պատրաստ :

— Ուրեմն մենք մարդ չենք , ոչինչ ենք :

— Ոչինչն ալ խծաք է , մենք ուրիշ բան չենք  
բայց եթէ պարզապէս խրատելականեր : Եւ ինչպէս  
որ կը տեսնաս , զմեզ եկեղեցւոյ մէջ բռնել ուղիւ-  
նուն պատճառն ուրիշ բան չէ՛ բայց եթէ զմեզ ար-  
դիւնը՝ որպէս զի Պէլլանոցւոց հետ տեսութիւն չը-  
նենք : Ասով հանգերձ , թէ որ անոնց դէմ ելլալ պէտք  
ըլլայ , չես յուսար թէ մենք ալ մեր ձեռքէն եկածը  
կարող ըլլանք ՚ի գործ դնելու :

— Յայտնի է թէ ես այսպիսի գործի մը համար  
հիմակուց ձեռքերս կը լուսնամ , պատասխանէց որ-  
որդը :

— Շատ աղէկ , շատ աղէկ , կ'ըսէր հացափաճա-  
ռը ժպտելով մը , չըսի թէ դու տակաւին երիտասարդ  
ես . սակայն դարձեալ ես շիտակը կը դրուցեմ : Սրի-  
նակի համար , թէ որ այսօր Մանտէլլոցիք Պէլլանոց-  
ւոց դէմ ելլան , վաղը հետեւաբար Պէլլանոցիք ալ  
Մանտէլլոցւոց դէմ պիտի ելլեն . այսօր գաւազանը  
ես եմ , եւ դու էջ , վաղն ալ էջը ես՝ եւ գաւազանը  
դու : Բայց երեկուան գմեզ ձեռող իշպանը , այսօր

ալ պիտի ծէծէ , վաղն ալ , մէկալ օրն ու միւս օրն  
ալ միշտ՝ քանի որ այս աշխատանքը կեցած է :

Հոս Քրիվէլլոյի քառասուն զինուորաց մէկը վը-  
րայ գալով , խօսակցութիւննին ընդհատեցաւ :

Այս միջոցին բոլոր մեծամեծ անձինք , արքե-  
պիսկոպոսական պալատին մեծ սրահին մէջ ժողուե-  
լու վրայ էին : Աճին եղերքը գտնուող գղեակներէն  
նստեւ հեռաւոր քաղաքներէ , բազմութեամբ ծառա-  
յից եւ ամենքն ալ իրարմէ գեղեցիկ ու շքեղ զար-  
դ արանքներով՝ կ'ուգային ասպետք եւ ասպետուհիք ,  
կոմսք ու կոմսուհիք , տիկնայք եւ օրիորդք : Նոյն  
սրահին վրայ մեծ սենեակ մ'ալ լեցուած էր զինակ-  
րաց , աղախնեաց եւ կառավարաց բազմութեամբ :

Իսկ վարը , ձիերուն ոտից ձայնէն , շանց հաչե-  
լէն եւ տոցոց պոռչտալէն գաւիթը կը թնդար , Միւս  
հրապարակը նայող խուցերն ալ լեցուած էին երկ-  
րորդ կարգի մարդիկներով . այսինքն՝ կամ մեծամեծ  
ընտանեաց եւ կամ զինակիրաց բարեկամներով , եւ  
կամ պահապանաց պղտի վճարմամբ մը ներս մտնող  
ժողովրդով : Ներսը՝ ուրիշ մեծ սրահի մը մէջ այլ եւ  
այլ տիկնանց ու ասպետաց մէջ կը պտրտէին ուրիշ  
պաշտօնատէրներէ գատ , մէկը մէկ կողմէն , միւսն ալ  
միւս կողմէն , Ս. Ամբրոսիոսի մենաստանին եւ Ախմե-  
դացւոց փաստաբանները : Երկուքն ալ մանիշակագոյն  
մետաքսեայ կապաներ ու վրայէն ալ կարմրագոյն եւ  
մինչեւ գարշապարներն երկայն վեղար մը հագած էին :  
Միայն այն տարբերութեամբ՝ որ Ախմեդացւոց փաս-  
տաբանը , միւսին ձեռքը կրած արծաթէ գաւազանը  
չունէր : Անիկայ միայն մենաստանաց եւ կղերի դա-  
տը պաշտօնատղաց պատուոց նշանը կը սեպուեր :



Լուբօի տէրը այսինքն Օդօրինօ Վիսքօնթի ասպետը, նոյն օրուան համար Պէլլանօ դանուիլ խոստացած ըլլալով, Լիմոնդացւոց փաստաբանին հետը վեր վար կը պտորտէր: Այս անձը գեղեցիկ ու գրեթէ քսան եւ վեց տարեկան երիտասարդ մ'էր, եւ պատմութեանս մէջ մեծ մաս մ'ունեցող անձանց մէկն ըլլալով, յուսամ թէ ընթերցողը կը բաղձայ որ քանի մը խօսքով իրեն ո՛վ ըլլալն իմացնենք:

Օդօրինօ Վիսքօնթի, Մանիօ Մաթթէօյի Ուպէրթօ եղբօրը որդին էր: Մեր պատմութեան ժամանակէն տարի մը առաջ վախճանած Կալէայցոց առաջինին, Մարքօ, Լուբինօ եւ ձիօվաննի երեք որջ կղբարց տաղըր կ'իյնար, եւ երեքն ալ Մաթթէօյի որդիքն էին:

Օդօրինօ հազիւ թէ զինք բռնելու կարողութեան վիճակին հասաւ, ինքզինքը յանձնեց Մարքօյի դաստիարակութեանը, որն որ նոյն ատեններն Ետալիոց երեւելի զօրագլուխներէն մէկը կը սեպուէր, որով մինչեւ վերջն ալ անոր դրօշակին ներքեւը մնաց:

Մեր երիտասարդ ասպետը, ամբողջ մետաքսէ ու վրան արծաթ ժապաւէնով կարմիր թաւիչէ կարճ վերարկու մը առած էր կռնակը. ոսկիէ եւ հաստ օղակներով շղթայ մը երկու անգամ վիղը պլլած ու կուրծքին վրայ ձգած էր. իսկ վերարկուին դոյնովն ալ գեղապաճոյճ գլխարկի մը տակէն իր սեւ մազերուն խոպոպլքներն ուսերուն վրայ կը ծիպային: Մեծ եւ ճերմակ փետուր մը ճակատն վրայէն զէպ 'ի ձախ ուսն իջնալով կարծես թէ մազերուն գեղեցիկութիւնը կ'աւելցնէր: Աջերը եռանդուն, երեսը պատեարաղմի գաշտաց արեգակէն սևեղած, ինքը բարձրա-

հասակ եւ յաղթանդամ, վերջապէս ամենայն շարժմունքը սիրուն եւ ձեւերն ախորժելի էին:

Լիմոնդացւոց փաստաբանը, Լօրէնցօ Կարպանեաթէ, պատմելով իրեն Լիմոնդացւոց մեծ դօրծը, կը գովէր նաեւ իւր զինակիր Լուբօին բռնած պատուաւոր ձեռնարկութիւնը, որուն համար արդէն ասպետին սիրտը մեծ ուրախութեան մէջ էր:

Վերջապէս երկուքին ալ խօսակցութիւնն Օլտրատօ կոմսին եւ իւր ընտանեացը վրայ դալով, Ոթթօրինօ հարցուց Նրանուհոյն համար, զոր ժամանակաւ հօրը գրեակը տղայ ձգած էր: Փաստաբանն ալ գովելով Նրանուհոյն բնութիւնը եւ մարդավար կերպերը, ստուգեց անոր պարկեշտ ու գեղեցիկ օրիորդ մը ըլլալը:

— Ուրեմն իրաւ է թէ աղջիկը բոլորովին մօրը կը նմանի, վրայ բերաւ ասպետը:

— Բոլորովին, կը պատասխանէր Կարպանեաթէ, եւ կարծեմ թէ Նրանուհին այսօր հոս պիտի կարենաք տեսնալ. վասն զի լսեցի թէ մենամարտութիւնը տեսնելու համար՝ հայրը զինքն ալ միատեղ պիտի բերէ:

— Ե՞րբ կսկսի ուրեմն այս մենամարտութիւնը:

— Թէ որ արեւելք մը չըլլայ, արեւը ծագելէն եօթը ժամ վերջը:

— Ի՞նչ արգելք կրնայ ըլլալ, ամէն բան պատրաստ չէ:

— Ամէն բան պատրաստ է. բայց առայժմ ամէն բան խառնակողն այն Քրիվէլլօյի անիծեալ փոխանորդն է, որ եկեղեցւոյն մեծաւորը բանտարկիւր է՝ զէնքերը օրհնել չուզելուն համար: Ան ալ աւելի յանձն կառնու մեռնիլ քան նզովքի տակ իյնալ. ասանկով հիմայ բանը գէշնալու վրայ է:



— Ուրիշ քահանայ մը չը կրնար գտնուիլ :

— Ո՞վ կուզես որ գայ եւ այսպիսի ծանրութիւն մը վրան առնու : Քիչ մ'առաջ Լիմոնդացոց մեծաւորը հոս էր Լուբօին հետ միատեղ : բայց այս բանը լսածին պէս բազմութեան մէջէն անյայտ եղաւ :

— Սակայն այս ինչ աղմուկ է , ըսաւ ասպետը , տեսնալով որ բոլոր սրահին մէջ դանուռով բազմութիւնը վազելով մարդու մը չորս բոլորը տեղ բռնելու վրայ էր :

— Նոր խեղկատակ մ'եկած պիտի ըլլայ , պատասխանեց Կարպանեաթէն :

Եւ յիրաւի կարգէ դուրս հազուած եւ վարտիքին ու վրայի զգեստին վրայ երկու կարգ բոժոժներ կարած մարդ մը , այլանդակ գլխարկ մ'ալ գլուխը՝ որուն վրայ նոյնպէս բոժոժներ շարած էր , ձեռքը քնար մը՝ որն որ զարնելու ժամանակ թէ երգերովը եւ թէ այլ եւ այլ ձեւերովը զամենքը կը խնդացնէր :

— Թրէմաքօլտօն է , Թրէմաքօլտօն է , կըսէին բոլոր հոն գտնուող տիկնայք ու ասպետները , Այս մարդը շատ ձեռքի խազեր , վայելուչ կատակներ , գեղեցիկ ու նոր պատմութիւններ գիտնալով եւ հնարելով , ամեն ժողովքներու մէջ , մեծամեծաց պալատները , խաղի տեղերն ու զբօսանաց համար խրմբուած ընտանեաց ըով կը յաճախէր :

— Թրէմաքօլտօ , Թրէմաքօլտօ , մեզի ծիծեռնուկը երգէ , ըսին քանի մը հոգի . իսկ ուրիշները՝ չէ , թող աւազակաց ձեռքն ինկած ժամանակ հնարած երգն երգէ . . . .

— Վերջապէս երկուքէն որը կուզէք , հարցուց խեղկատակը :

— Վերջինը :

— Չէ , չէ , առաջինը . . .

— Ուրեմն ծիծեռնուկը :

— Այո՛ , ծիծեռնուկը երգէ , ըսին :

Այն ատեն Թրէմաքօլտօն քիչ մը քնարը յարդարելէն վերջը սկսաւ երգել . —

Ո՞վ իմ պանդուխտ ծիծեռնուկ :

Որ վանդակիս վրայ նստած :

Ամեն առտու կը նուագես

Զայդ քո նուագ տխրազգեսաց . . .

Բայց այս միջոցիս բազմութիւնը զինքը ձգելով նոր տեսարանի մը դարձաւ :

Տէլ Պայցօ կոմսին աղջիկը Երանուհին՝ հօրը ձեռքէն բռնած սրահին դռնէն ներս կը մտնար , եւ մինչդեռ Օդօրինօ իւր հին բարեկամին հետ աղջկան ամենայն ասպետավայել յարգանք մատուցանելու վրայ էր , Թրեմաքօլտօն իր երգին միջկատելուն վրայ նեղացած՝ նոյն ժամայն ասոնց առջեւը վազեց , միտքը դնելով կերպով մը իմացնելու թէ իրենց ներս մտնելովը՝ բազմութեան զինքը ձգելը , պարզապէս իրեն նախախնիք համարած է : Սակայն կարծես թէ զինքը ուստի բանը կատակի փոխելով ու բոլորովին առջի կերպն ու եղանակն առնելով . — Բուին արեղական ճառագայթներէն փախչիլը տեսած էի , բայց անդին խեղճ ճանդուկներուն ալ դէպ արեղակը վազելին ամենեւին տեսած չէի , ըսաւ : Աս խօսքիս վրայ բոլոր բազմութիւնը սկսաւ խնդալ :

Թարմ , անուշահոտ եւ դեռաբացիկ եւ տանելեօթք տարեկան վարդ մ'էր Եւսնրախի՝ օրիորդը : Գե-



զեցիկ երկնազոյն եւ մինչեւ ծնկուընները երկայն զգեստին վրայէն փառաւօր արծաթէ գօտի մ'ունէր, աւուռահոտ, փայլուն, ոսկեթել մաղերը մինչեւ զգեստին վարի ծայրն ուսերէն վար ձգած էր. այլ եւ այլ ու գոյնզգոյն ծաղիկներով հիւսած թագ մը, անմեղ ճակտին զարդարանքն էր: Բնական քաղցրութեանը հետ, կուսութեան պարզութիւնը կը փայլէր զէմքին վրայ. եւ բոլոր կերպարանքը՝ իր ազնուականութիւնը կը յայտնէին: Ուստի մէկ կողմէն հայրն ու միւս կողմէն Օթթօրինօն ունենալով, Երանուհին սկսաւ առաջ գալ, եւ ամենուն առջեւէն անցնելու ժամանակը կը դիտէր իւրաքանչիւրին նայուածքն ու կը լսէր նաեւ մասամբ բազմութեան իրեն համար մէկ մէկու փոփսածն ու առջեւը նայելով կը խօսէր: Բայց ինչ զգաց Երանուհի, երբոր տեսաւ այն խեղկատակին իր առջեւը ծուր գրած ու գլխարկն ալ ձեռքը ամենուն մէջը հանդիսաւոր կերպով զինքը թագուհի գեղեցկութեան եւ սիրոյ հրատարակելը: Օրիորդը խոտված շփոթած եւ ամչնալով իրեն այսպիսի հրապարակաւ տրուած պատուոյն վրայ, կ'ստիպէր կերպով մը զհայրը որ զինքն այդ տեղէն դուրս հանէ եւ կամ լռեցընէ այն մարդը: Բայց կոմսը՝ որ գրեթէ բոլորովին գինովցած էր աղջկանը տրուած դովաբանութեան վրայ անօր աղաչանացը հակառակ սրահին ճակատը նստեցուց զինքը. եւ ինքն աջ կողմն անցնելով, Օթթօրինօն ալ հրաւիրեց որ աղջկանը ձախ կողմը նստի: Եւ իրենց շուրջն եղող ամենայն ասպետաց եւ տիկնանց պէտքը եղած յարգանքը մատուցանելէն վերջը, կոմսը իրենց ներս մտնալովը քերթողին երգն արգիլուելուն համար թողութիւն խնդրելով, աղաչեց որ

դարձեալ չարունակէ այդ սկսած երգը:

— Այո, ուրիշ բան մը երգեմ, բաւ Թրէմաքօլատօն, ու ձեռքը ճակտին դրած եւ մտածելով քանի մը անգամ սրահին երկայնքը վեր վար պարտեղէն վերջը, մինչդեռ բազմութիւնը դարձեալ իր բոլորտիքը կը ժողովէր, սկսաւ Երանուհոյն վրայ գովասանութիւն մը: Լիբանանու մայրեացն ու Երթօրի վարդին նմանցնելէն վերջը, բոլոր Երթօրի ու Պարսկաստանի գեղեցիկ սուլթաններէն ու քերթողաց երգած երեւելի կանանցմէ ալ վեր դասելէն վերջը, հուսկ յետոյ նմանցուց զայն Լաուրայի՝ որուն վրայ Բէդբարաքայի գրուածքը յաւիտեան անմահ պիտի մնան:

Եւ յառաջաբանէն գեղեցիկ վերջաբանով մը ուզելով լինցնել իր գովասանութիւնը, դարձաւ երիտասարդ ասպետին՝ որ Երանուհոյն քով նստած էր, եւ իրեն հագուստը ու քաջութիւնները մինչեւ յերկինս բարձրացնելէն վերջը, ինչպէս գոհարը մատանուոյ մը՝ այնպէս ալ Երանուհոյն Օթթօրինօյի յարմարն յայտնապէս հրատարակեց:

Երգարանը շատ անգամ ստիպուեր էր բազմութեան ծափահարութեանցը վրայ լուր, այնչափ որ՝ չէ թէ միայն կեցած մեծ սրահը, այլ նաեւ բոլոր ներսի խուցերն ալ ետեւէ ետեւ լեցուելով, գրեթէ կործանելու վրայ էին, երբոր երգը լինցաւ: Այն ատեն Օթթօրինօ ստքի ելաւ, եւ վրէն ոսկի շլթայն հանելով գովաբանին ընծայեց, որն որ մեծապէս չնորհալաւ ըլլալէն վերջը, շղթայն գլխարկին վրայ պլնեց եւ ցատկոտելով սկսաւ քնարը զարնել: Այս միջոցիս Օլորատօ կոմսը սրահին միւս ծայրը Լիմոնդացուոյ փաստաբանը նշմարեց եւ աղջկանը հիմայ կուգամ ըսելով



վաղեց անոր քովը , որպէս զի մենամարտութեան երբ սկօխն իմանայ : Աղջիկը մինակ մնալով , եւ տեսնելով միանգամայն որ այնչափ բազմութեան աչքերը միայն իրեն կը նային , ամչնալով ու կարմրելով ելաւ , եւ զէպ 'ի հրապարակը նայող պատուհանի մը դատնալով կարծես թէ քիչ մը ինքզինքը գտաւ : Երանուհի , այնչափ անծանօթ անձանց մէջ՝ մինակ իր հօրը բարեկամ Օթթօրինօյի հետ գտնուիլն՝ իրեն մեծ նեցուկ կը համարէր : Այս տեսնելով , ժողովուրդն ալ կամաց կամաց սկսաւ նորէն թրէմաքօլտօի քովը ժողուիլ , որն որ արդէն նոր երգ մը սկսեր էր : Ուստի այս կերպով աղջիկը ըստ իր առջի զգացած անհանգստութիւններէն ու շփոթութիւններէն ինքզինքը զերծ գըտաւ :

Սակայն քանի որ մէկ կողմանէ Երանուհոյն առջի ցաւալի խռովութիւնները կը հանդարտէին , միւս կողմանէ ալ իր փափուկ սրտին մէջ աւելի նուրբ ու միանգամայն անմեկնելի երկիւղ մը կը ծագէր , այսպէս իրեն առաջին անգամ հօրմէն դատ ուրիշ մարդու մը հետ միանկ գտնուելուն համար : Ուստի երբեմն ետին դառնալով կը տեսնար կոմսը՝ որ սրահին մէջ ժուռ կուգար , նշան կընէր որ քովը դառնայ : Բայց անիկայ մեծ հակահաստութեան մը զբաղած ըլլալով , ձեռքով կը պատասխանէր թէ հիմա կուգայ , բայց եկող գացող չկար :

Իսկ Օթթօրինօ կը պատմէր Երանուհոյն սղայութեանը ժամանակ Վիմոնդայի դղեկին մէջ միտտեղ անցուցած օրերնին . կը յիշեցնէր նաեւ իրեն զուարճալի խնդումները , եւ պզտի բարկանայններն ու երբեմն թափած քաղցր արյունքները : վերջապէս կը

հաստատէր թէ այն թարմ հասակին մէջ ամեն բան ծիծաղ էր : Ահա այսպէս կամաց կամաց Երանուհի՝ ասպետին հետ ըրած ընկերութեանը վրայ վատանալով , իր ըստ ունեցած երկիւղը՝ մէկ քաղցր ու միգապատ յուսոյ մը փոխուեցաւ . եւ որչափ ալ շարունակ կը դիտէր , որ հայրն իր քովը դառնայ , սակայն ոչ այն առջի եռանդովն ու խռովութեամբը :

Իսկ ասպետին գալով , մէկ գաղտնի հպարտութիւն մը ծագած էր սրտին մէջ , եւ երջանիկ կը համարէր ինքզինքն այնպիսի աղջկան մը հետ գտնուելուն , որուն մէկ նայուածքին անգամ գոհ եղողներ կային հանդիսականաց մէջ :

Այս կերպով այնչափ ժամանակէ վերջը առաջին անգամ Օթթօրինօյի եւ Երանուհոյն իրարու պատահելովը , եւ աղջկան՝ ասպետին իրեն վրայ ցուցուցած հովանաւորութեամբը եւ փոխադարձաբար ասպետին ալ աղջկան իրեն համար ունեցած միտումը տեսնելով , գրեթէ նոյն վայրկեանէն հրաշալի կերպով մը սրտեղնուն մէջ սիրոյ կայծ մը բորբոքեցաւ :

Այս միջոցիս փողի մը հնչման ձայնը յայտնեց թէ մենամարտութիւնը պիտի սկսի : Քերթողը դադրեցաւ երգելէն , եւ ամենքը պատուհանները թափեցան անդ լռնելու համար : Տէլ Պայցօ կոմսն ալ դարձաւ իր տեղը , եւ աղջիկն իրեն եւ Օթթօրինօյի մէջ տեղն առնելով՝ սկսաւ վարը հրապարակը դիտել :



### Գ Լ ՈՒ Խ Գ

Արքեպիսկոպոսական պալատին դէպ 'ի լեռները նայող դրսի կողմը մէկ անկեանք մէջ կանգնուած ամպխոնի մը մէջէն, ուսկից միայն դատաստանաց պատգամը կը տրուէր, երեք հոգի ելան եւ բոլոր պալատին պատուհանները, յարկերուն վրայ ու հրապարակին մէջ խոնուած անձանց աչքերն անոնց դարձան :

— Ո՞վ են ասոնք, հարցուց Երանուհի՛ իր հօրը :

— Այն մէջտեղը նստողը, պատասխանեց կոմսը, դատաւորն է . իսկ միւս երկուքը՝ որ ոտքի վրայ կեցած են, անոնց աջ կողմինը, որուն ձեռքն արծաթէ գաւազան կայ, կղերին փաստաբանն է . իսկ ձախ կողմինը՝ որն որ կը ճանչնաս, Կարպանեաթէն է, Լիմոնդացոց փաստաբանը :

Ուրիշ փոզի ձայն մ'ալ լսուելով՝ լուսթիւնը պատեց, այն ատեն կղերին փաստաբանը դատաւորին դառնալով յստակ եւ մինչեւ հրապարակին միւս ծայրն ալ լսուելու չափ բարձր ձայնով մը սա հետեւեալ խօսքերն ըսաւ : « Կը խոստովանիս թէ դու վեհափառ Քրէստոնէ Քրիվէլլօյի կողմէն ոտերք Ամբրոսիոսի մենաստանին եւ Լիմոնդացոց դատը տեսնալու համար հոս նստած ես . — դատաւորը փեճաքար պատասխանեց . — այն կը խոստովանիմ . — ուստի ես քու առջից կ'ըսեմ թէ Լիմոնդացիք սուրբ Ամբրոսիոսի մե-

նաստանին գերի են . — որուն Կարպանեաթէ . — ես ալ հանդերձ վկայիւք կ'ըսեմ թէ բոլորովին հակառակն է : — Որոնց դատաւորը . — որովհետեւ երկու կողմէն ալ երդման պատրաստ վիպից ներկայութիւն կայ, եւ չուզելով որ երդմնազանցութիւն տեղի ունենայ, մենք՝ արքեպիսկոպոսական ատեանէն մեզի պարզեւուած հզօր իշխանութեամբն որոշեցինք՝ որ այս դատը Աստուծոյ դատաստանին ձգուի . այսինքն՝ մենամարտութեամբ, դաւազանաւ եւ վահանով որոշուի : Եւ կղերի փաստաբանին դառնալով, դարձեալ հարցուց . — Կը խոստովանիս թէ Բամբնկոն Սուրբ Ամբրոսիոսի մենաստանին կողմանէ մենամարտ ներկայացուցած ես . — որուն փաստաբանն ալ . — այն պատասխանելովը, — եւ դու Կարպանեաթէ, ըսաւ դատաւորը, կը խոստովանիս թէ Լուբօն Լիմոնդացոց կողմանէ մենամարտ ընտրած ես : — Որուն նա եւս այն պատասխանեց :

— Հիմա ուշադիր եղիր, ըսաւ Տէլ Պալցօ կոմսն ազնկանը :

Երկու փաստաբանները մէյմէկ հասա գաւազաններ ձեռքերինն առած դատաւորին առջեւը գալով, մէկմէկու ձեռքէ գաւազանները փոխեցին 'ի նշան մենամարտութեան հաստատմանը : Այն ատեն երեւցան նոյն ամպխոնէն երկու մենամարտները, եւ ընդհանուր ծափահարութեամբ ընդունուելէն վերջը, մէկմէկու ետեւէ երկուքն ալ երդում ըրին որ այս իրենց ձեռնարկութեանը մէջ ամենեւին սատանայական կամ կախարդական բան մը չի կայ, այլ միայն Աստուծոյ, Աստուածամնայ եւ ամենահզօր սուրբ Քերթ ասպետին օգնութեանը ապաւինած են : Այս հան-



դիտաւոր արարողութիւնը լմննալէն վերջը սկսան երկուքն ալ կրկէտին մէջն իջնալ :

Մինչդեռ մեր երկու մենամարտները պալատին ներքին սանդուխներէն վար իջնալու վրայ էին , անդին հրապարակին մէջ գտնուող բազմութեան տեղ բռնելու համար զիրար հրելու ճիչն ու խռովութիւնը տեսնալու բան էր :

— Թէ որ արգելքը չըլլար , ըսաւ կոմսն Օթօրինօի , հիմայ պէտք էր որ պատարագ զրցուէր եւ երկուքն ալ ծնրադիր պատարագ տեսնելէն վերջը գաւազաններն ու վահաններն օրհնուէին , բայց տեսնանք բանը ինչպէս պիտի վերջանայ :

— Լսեցի թէ՛ ըսաւ երիտասարդը , քաղքիս մեծաւորն ամենեւեկն զէնքերն օրհնել յանձն չէ առեր :

— Այո , հաղար ու մէկ իրաւունք ունի . նախ եւ առաջ հերձուած կայ մէջտեղը :

— Ի՞նչ կուզեն ընեն , տեսնենք գործն ի՞նչպէս պիտի վերջանայ :

Երկու մենամարտերը դատաւորին երկու զինակբաց եւ փողահարին հետ եւ միանգամայն եօթը կամ ութը զինուորաց առաջնորդութեամբը կրկէսն հասան : Գատաւորը զինակրին մէկուն ձեռքէն դաւազան ու վահան մ'առնելով՝ նախ Բամէնկօի բարձր ու վսեմ ձայնով մը «սա քեզ գաւազան եւ վահան մենամարտութեան , ըստ իրաւանց արդարութեան» արարողութեան խօսքերն ըսաւ . վերջը Լուբօի ներկայացնելով իր զէնքերը , ըսաւ . «առ զգաւազան եւ զվահան պաշտպանութեան , ըստ իրաւանց արդարութեան :

Երկու մենամարտները վերջապէս մասն կրկէսին

մէջ . դատաւորը բարձր տեղ մը գնաց իր աթոռը նստաւ : Զինակիրք եւ վկայք իրենց տեղն անցան եւ մենամարտութիւնն սկսելու վրայ էր՝ մէկ մ'ալ անդիէն քանի մը հոգի . — պէտք է զէնքերն օրհնել , զէնքերը պէտք է օրհնել , սկսան կանչել : Գատաւորը սուքի ելլալով պատասխանեց թէ ձեր մեծաւորը յանձն չառնէր այս խնդիրքնիդ կատարելու . — աղէկ կ'ընէ մեծաւորը , սկսան պօռալ գեղացիները . — իսկ մէկալ կողմէն հակապապք եւ զինուորք , պէտք է ստիպել մեծաւորը , ապա թէ ոչ կրակը նետել , սկսան կանչել , — այո , ո՛չ , այո , ո՛չ . — Բաբելոնի աշտարակը դարձաւ հրապարակը :

Գատաւորը տեսնալով որ մեծաւորին կողմէն եզոզները աւելի շատուր եւ զօրաւոր ըլլալով , խօսքերնին առաջ պիտի կարենան տանիլ , թէպէտ եւ նոյն ատենները մարդ մը այրելն ամենադիւրին բան մը ըլլալովն անգամ , խեղճ մարդը երբոր քիչ մը ժողովրդեան հանգարտիլը տեսաւ , սկսաւ կանչել . — թէ որ ձեզմէ մէկն ուզէ զէնքերն օրհնել , մեծ բարիք մը ըրած կ'ըլլայ :

Քիչ մը լուռութենէ վերջը , ձայն մը ելաւ . — Թրէմաքօլտօն մեր է :

Մէկէն ընդհանուր հաւանութեան եւ ծափահարութեան ձայներով ամենքն ալ սկսան . — Թող Թրէմաքօլտօն գայ , թող Թրէմաքօլտօն գայ , պօռալ :

Ընթերցողը արդէն գիտէ թէ Թրէմաքօլտօն քիչ մը առաջ Երանուհւոյն գովասանութիւնը երգող քերթողն էր . որ յիրաւի ալ արդէն քահանայ էր : Ի՞նչ գեղեցիկ ատեններ , որ քահանայք այսպիսի խեղկատակի արհեստն ալ ունէին :



Նւ մինչդեռ խուռն բազմութիւնը Քրէմաքօլտօն ուղեւու վրայ էր, նա՛ առջեւէն երկու զինուոր եւ ինքն ալ անոնց ետեւէն արքեպիսկոպոսական պալատէն ելլալով կրկէսը մտաւ :

Կոմսին բազէակիրը՝ որ մենամարտողաց մէկուն հայրն էր, հազիւ կրցեր էր մինչեւ կրկէսին երկաթէ վանդակներուն երթալ ու տեղ մը բռնել : Ուստի հեռուէն Լուբօյի ձայն տալով մօտը կանչեց, — մինչեւ որ զէնքերդ չ'օրհնեն, չըլլայ որ մենամարտիս ըսելով, ձեռքովն ալ Բամէնկօն կը ցուցնէր . որն որ ձեռքերը կուրծքին վրայ դրած կրկէսին միւս ծայրը երկաթնե-րուն կօթնած կեցած էր . — ամենքը զիտեն այն սա-տանային կախարդ ըլլալը : — Գու հող մի՛ ընէր, պա-տասխանեց որդին . — թո՛ղ տուր ինչ կուզեն ընեն, իմ զէնքերս արդէն այս առաւօտ մեր մեծաւորն օրհնեց : Այս լուրը կարծես թէ Ամպրօճիօյի նոր հողի մ'ալ սիրտը հանդարտեցաւ :

Այս միջոցիս խեղկատակը ժողովրդեան դառնա-լով, — մտիք ըրէ՛ք ըսաւ, միայն եօթը գաւաթ տըն-կելով առտուընէ մինչեւ այս ժամօ երգեր եմ . հիմայ որ կուղէի երթալ ուրիշ մ'ալ նետել՝ զիս բռնեցիք հոս քահանայագործութեան բերիք . գիտնաք որ եթէ աշխարհքս ալ կործանելու ըլլայ՝ մինչեւ որ բերանս չի թրջի բան մ'ալ ընելիք չունիմ, հասկցա՛ք :

Դատաւորը զինուորի մը աչք ընելով, շուտ մը զինուորը գնաց պալատէն խոչորկէկ սափորով մը գի-նի բերաւ : Քրէմաքօլտօն անկէ՛ մեծ գաւաթ մը լե-ցընելով շնչառպառ խմեց ըսելով . — Յ՛, յիբաւի ծա-րաւի եմ եղեր . բայց կարծեմ թէ՛ նոյն ինքն զինիին կենդանութեանը համար պէսք է մէկ մ'ալ տնկեմ,

որպէսզի հետը չ'աւրուինք, ու լեցնելով ուրիշ գա-ւաթ մ'ալ կամաց կամաց բազմութիւնը դիտելով մինչեւ յատակը քամեց :

— Եյ, հիմա որ այս գործը լմնցուցինք, ալ սկսինք միւսը նայել—տեսնենք ո՛ւր են կնքածայրները, օրհ-նած ջրին ամանը եւ զգեստները : Քանի մը զինուոր արդէն պահարանին դռները կտարելով ձեռքերնին եկած զգեստը ըերած եւ անոր առջեւը դիզած էին :

Ամենն փառաւոր շուրջառը առնելով հագաւ, ետքը դառնալով զինուորաց, ո՛ւր է սաղաւարտը, հարցուց . — Սաղաւարտ չ'գտանք :

— Ուրեմն թո՛ղ քահանային սաղաւարտը թողու-թիւն ընէ իմ խեղկատակի գլխարկիս ըսելով, դար-ձաւ իրեն առաջնորդող զօրաց մէկուն, եւ ձեռքովն անոր ուսին զարնելով.— Ե՞՞ ուշ գիր.— Ըսաւ հոս դար-ձի՛ր . դու ինձի սպասաւոր պիտի ըլլաս, աղէկ նայէ՛, սա շուր որսկելու գործին . հն, սանկ շիտակ կե-ցի՛ր եւ երկայն մի ընէր ծօ, դու ալ ինձի պէս քա-հանայ մ'ըլլալու արժանի մարդ մը կ'երեւաս : — Նւ սկսաւ քանի մը խնեղ ու խելառ օղին մէջ ձեւեր ը-նել եւ վերջն ալ գաւազաններուն ու վահանաց վրայ դժեր քաշելէն վերջը, օրհնած ջրին ամանը տուր ը-սաւ սպասաւորին :

— Պահարանին մէջ անանկ բան չի կրցանք գրա-նալ, պատասխանեց զինուորը :

— Օրհնած շուր չի կայ, արքեպիսկոպոսի մթե-րանոցի զինին քնչ ունի ըսելով, զինուորին սաղա-ւարտը գլխէն առաւ եւ մնացած գինին անոր մէջը լեցուց ու շուր սրսկելու գործին ալ մէջը խօթելով՝ սկսաւ զէնքերը թրջել . մէկ կողմէն ալ նշան տալով



սպասաւորին որ գլուխը խոնարհեցնէ եւ ամէն ըսէ : Ուստի այս տարօրինակ արարողութիւնը լընսցնելէն վերջը , խեղկատակը զինուորին ձեռքէն սաղաւարտն առաւ եւ մենամարտութեան մէջ յաղթողին կենացը գոչելով խմեց :

Ասկէ վերջը երկու մենամարտները երկաթէ վանդակներէն ներս մտնալով , Բամէնկօն աջ՝ եւ Լուբօն ալ կրկէսին ձախ ծայրերը կեցան : Երկուքն ալ կէս մէջքէն եղնի մորթէ մինչեւ սրունքնին սխմած վարտիքներ եւ անկէ վար կարմիր գուլպաներ հագած էին , մարմնոյն մնացած մասը մերկ էր :

Ձախ թեւերնուն վրայ քառակուսի բայց մէջտեղը քիչ մը գոգածեւ ու վրան կաշի պատած սոսիսաակ մը , իսկ աջ ձեռքերնին հաստ ու փայլուն կաշնիի գաւազաններ կային :

Բամէնկօն երեսէն երեսուն ու հին տարեկան հազիւ կը ցուցներ . ուժեղ , կուրծքն ու ուսերը լայն , վիզը կարճ ու հաստ , կորովաբազուկ , թուխ ու երկայն կարմիր մազերով :

Իսկ Լուբօն՝ աւելի չափաւոր անդամով , աւելի երկայն հասակաւ , գեղեցիկ ու թեթեւաքայլ էր , բայց իր կերպարանացը համեմատ ընկերոջը չափ ոյժ ու շէրքիւլէսական ձեւեր չէր ցուցնէր :

Բոլոր բազմութեան մէջ լռութիւնը պատած , եւ հրապարակին մէջ ումանք ստոններու , ումանք ալ աթոռներու վրայ ու բարձր տեղուանք շարուած էին : Իսկ չորս կողմն եզոզ բոլոր առններու երդերուն վրայ ու պատուհաններուն մէջ հանդիսականներ լեցուեր էին : Ամենուն աչքն երկու մենամարտից վրայ էր : Կարծես թէ շատերուն սիրաը դողի մէջ էր , բայց

մտքէն յաղթանակը Լուբօյն կը պարգեւէր , թէ ճշմարտութիւնը պաշտպանելուն եւ թէ աշխոյժ , եռանդուն ու գեղեցիկ կերպարանքովը նայողին սիրան իրեն գրաւելուն համար :

Լիմնոզացի երիտասարդը , որ կոնակը եկեղեցւոյն դարձուցած էր , գլուխը վեր առնելով՝ անոյշ նայուածքով մը ակամբ բարեւեց կոմսը , Օգօրիսօն ու Երանուհին , որոնք արքեպիսկոպոսական պալատին պատուհանէն իրեն կը նայէին : Եւ վերջն դառնալով իր հօրը նայեցաւ , որն որ ետեւը կեցեր էր , ըսել ուզելով . — հոգ մի ընէր , ինձի թող :

Փողի մ'ալ ձայնը վերջի նշանը տալով երկու մենամարտներն սկսան կամաց կամաց գլուխնին վահանով ծածկել եւ օդոյն մէջ գաւազանները վարպետութեամբ խաղցնելով իրարու մօտենալ : Երբ կրկէսին մէջտեղը հասան , Բամէնկօն իր ջղոտ սրունքները բացաւ , եւ կրցածին չափ ձախ ոտքին վրայ ինքզինքը հաստատելով անխախտ կեցաւ , սպասելով թշնամւոյն յարձակմանը :

Լուբօն սկսաւ այլ եւ այլ կերպերով անոր բուրրախրը գառնալ ու գինքը փորձել . բայց միւսն արհեստին մէջ հինցած ըլլալով եւ ուզելով որ առաջուց իր թշնամւոյն ոյժը տկարայնէ , ուրիշ բան չէր ընէր բայց եթէ անիւի մը պէս ինքն իր վրայ գառնալով երբեմն գաւազանաւ եւ երբեմն վահանովը գիմացինին հարուածներէն ինքզինքը կը պաշտպանէր : Ասկայն վայրկեան մը որ Լուբօ անուշադիր իր մէկ կողմը բաց էր ձգած , այնպիսի հարուած մը իջեցուց , որ եթէ երիտասարդը կատուի պէս քայլ մը ետեւ չը ցատկէր , կողերը ջախճախած պիտի ըլլային : Միայն



գաւազանը քիչ մը մորթը սկրթեց եւ օդին մէջ թըռչելով կարծես թէ խեղճ Ամպրօճիօյին սիրաբ ճմլեց, եւ բոլորովին գոյնը նետեց :

Բազմութիւնը որ առաջուց Լիմոնդացուց կողմնակից էր սրտիւ, հիմայ սկսաւ հակառակ գուշակութեանց տեղի տալ ու վախնալ : Սակայն Լուբօ եղածին վրայ բարկանալով, սկսաւ այնպիսի կատաղութեամբ յարձակմունքներ տալ, եւ այնչափ ուժով եւ ահաւոր հարուածներ տեղալ իր թշնամուոյն վրայ, որ Բամէնկօն ալ առջի պաղարիւնութիւնը ձգելով սկսաւ ընկրկիլ : Սակայն այսու ամենայնիւ, Լուբօյին մէկ պզտի սխալ շարժման ատենը, դարձեալ Բամէնկօ հարուածով մը անոր ձեռքի վահանը բոլորովին երկու ձեղքեց : Լուբօյի ձեռքը թմրեցաւ ու տեսնելով որ ալ ձեռքինը իրեն բանի մը չի պիտի կարենայ ծառայել՝ գետինը նետեց եւ յուսահատաբար երկու ձեռքով բռնելով իր գաւազանը եւ վեր առնելով բոլոր ուժովն ահաւոր հարուած մը իջեցուց թշնամուոյն գլուխուն : Որչափ ալ Բամէնկօ վահանով գլուխը պաշտպանած էր, սակայն գաւազանին այնպիսի ուժէն վահանը գանկին վրայ կտորտելով խելքը կործնուց : ականջներն սկսան խօսիլ, աչքերը մթննալ, ծնկուղները դողալ, տատանիլ եւ քիչ մը ժամանակ աստիս աստիս երկրալէն վերջը փաշտի պէս գետինը փոռեցաւ : Բայց գուցէ պատահմամբ ըլլայ, գուցէ մասնաւոր դիտմամբ, ձախ արմուկին վրայ իննալով գլուխը գետինը չէր ձկած :

Լուբօյին հայրը, Բամէնկօն աւազին վրայ գլորած տեսնելով, փառք տալու ձեռով աչքերն երկինք վերցուց եւ ուրախութենէն ինքզինքը կորուսած էր :

մինչ կը լսէր նոյն միջոցին՝ փոթորկանման աղմուկին մէջէն՝ իր որդւոյն համար ժողովորդեան տուած գովասանքն ու պատիւը :

— Կեցցէ Լուբօ, կեցցէ բաղէակրին որդին, կեցցեն Լիմոնդացիք կը պօռային ամեն կողմէ :

Բայց Կարպանեաթէ փաստաբանը, որ մենամարտութիւնը սկսելէն առաջ, դարձեալ մեծ սրահին մէջ մեծամեծաց քով դացած էր, կը հարցնէր Օդօրինօյի թէ արդեօք Բամէնկօն մեռած է թէ ողջ :

— Որչափ որ քեզն բերնէն եւ ականջներէն արիւն կուգայ, սակայն չեմ կարծեր որ մեռած ըլլայ, եւ ապահով եմ թէ քանի մը ժամէն կրնայ սթափիլ :

— Ուստի պէտք կըլլայ իմաց տալ Լուբօյին, որ ոտխին գլուխը բոլորովին գետին խոնարհեցնէ, որ պէս զի չըլլայ թէ ետքը յաղթութիւնը կատարեալ չեղաւ ըսուի : Ըստ իրաւանց ալ յաթող չը սեպուիր, քանի որ թշնամուոյն գլուխը գետին չէ խոնարհեցուցած եւ կամ բոլորովին զայն կրկեսէն դուրս չէ վըռնուած : Տէլ Պալցօ կոմսը Կարպանեաթէի այս ըրած առաջարկութիւնը լսելով, եւ միանգամայն ուղելով որ յաղթութիւնը լիովին Լիմոնդացուց կողմն ըլլայ, փաստաբանին ըսածը իբրեւ իւր կողմանէ եկած թելադրութիւն մը, կեցած տեղէն Լուբօյին հասկցուց :

Լուբօ՝ որչափ ալ առաջուց Կարպանեաթէ փաստաբանէն մանրամասնաբար խրատուած էր, բայց գեռ այսպիսի գործոց մէջ վարժ չըլլալով, եւ միանգամայն տեսնալով իր թշնամուոյն ոտքին տակը փռուած կենալը, ամենեւին կասկած մը չէր ընէր : Ի վերայ այս ամենայնի, կոմսին այս դիտաւորութիւնը լսելով թէ գլուխը գետին խոնարհեցնել պէտք էր,



կրտէր ինքնիրէն . — բայց չէ որ մեռածի պէս գետի-  
նը փոռած է . ասկէց աւելի քնչ կ'ուղեն : — Սա-  
կայն ամեն կասկածէ ազատ ըլլալու համար , միտքն  
ինկաւ որ թշնամին կրկէսէն դուրս հանէ : Ուստի ծը-  
ռեցաւ անշունչ գիակին վրայ եւ գօտիէն բռնելով  
բոլոր մարմնովը վեր վերցուց եւ կրկէսին շուրջը պը-  
տըտցնելէն վերջը՝ յետին ճիգով մը կրկէսէն դուրս  
թաւալգոր պահապան զինուորաց առջեւը նետեց :

Այս տեսնալով բազմութիւնը՝ ընդհանուր ծա-  
փահարութեամբ սկսաւ նորէն «Կեցցէ Լիմոնդա» .  
«Կեցցէ Լուբոն» գոչել . — յետոյ կամաց կամաց ըս-  
կըսաւ ամբողջ քակուելի եւ այլ եւ այլ ճամբաներէ  
ամեն մարդ իր տեղը բաժնուել .

Իսկ մեծամեծք նորէն Թրէմաքօյտօի բոլորախըն  
առնելով՝ Տէլ Պալցօ կոմսին գալստեամբը միջնատած  
երգին մնացած մասը մտիկ կ'ընէին . ապա երգը մը-  
մընցաւ եւ Տէլ Պալցօ կոմսը իւր Երանուհի աղջկանը  
նաեւ ուրիշ ասպետաց հետ միատեղ դուրս ելան :

ՔԼՈՒԽ Ե .

Անոնք որ Լէբօ լին ամեն կողմերէն Պէլլանօ վա-  
ղեր եկեր էին , դարձեալ իւրաքանչիւրն իրենց տե-  
ղը դառնալու համար ճամբորդութեան սկսան : Ասե-  
լու բան էր՝ ափանց վրայէն եկած այլանդակ ձայնե-  
րը , նաւակներու շղթայից շառաչմունքը , նաւավա-  
րաց ճիչն ու յաճախորդաց զիրար բարեւելը , Հոս՝ լե-

ցուն նաեւ կ'մը ափունքէն բաժնուելու վրայ , հոն  
ուրիշ մը՝ յարում նաւավարք թիւերը ջուրի մէջ՝ կ'ա-  
ճապարեն մէկն առնուլ որ ճամբայ ելլան : Մէկը կը  
հայհոյէ որ մարդ չի կրցաւ ժողովել նաւակին մէջ ,  
միւսը կը պոռայ թէ նաւակը ջախջախելու վրայ է :  
Վերջապէս վայրկեանի մը մէջ բոլոր լին երեսը այլ  
եւ այլ կողմերու ճանապարհորդ նաւակներով ծած-  
կուեցաւ : Ասոնցմէ ոմանք առագաստով , ոմանք ալ  
ոյժերնին թիւերնուն տալով՝ կը պատերազմէին բաւա-  
կան խոշոր ալեաց դէմ , զորոնք հողմը դէպ , իրենց  
կը մղէր :

Լիմոնդացիք քիչուր ըլլալով սպասեր էին որ Լու-  
բօ՝ կղերին հետ գործը լմնցընելով դառնայ , որպէս  
զի անոր հետ միատեղ ճամբայ ելլան :

Տէլ Պալցի կոմսը , մտերիմ բարեկամը մը պէտք  
եղած ամենայն յարգանքն ու մեծարանքը կը մատու-  
ցանէր Օդօրինօյի , հրաւիրելով զինքը՝ որ քանի մը  
օր ալ իր դղեակը բարեհաճի անցընել : Ասպետը զի-  
ջանելով կոմսին առաջարկութեանը՝ մտան մեծ ու-  
վրան դոց նաւակի մը մէջ . Երանուհին հօրը զիմա-  
ցը՝ եւ Լիմոնդացւոց ծերունի մեծաւորն ալ ամենայն  
յարգանօք երիտասարդ ասպետին զիմացը տեղաւո-  
րեցան :

Երկու հողի նաւակին դուրսը ու նոյնչափ ալ յեռ-  
նակողմը կը թիավարէին : Միքելէն ամենէն ծերն ըլ-  
լալով , ղեկը կը կառավարէր եւ իր առջին Արեկօցցօն  
կը կենար , իբրեւ ամենէն ուժեղը :

Իսկ Լուբօ ներսը իւր տերանց դգուանքն ու  
գովեստն ընդունելէն վերջը , դուրս ելաւ եւ նաւա-  
կին ծայրը՝ երկու սաքերը վար կախելով երբեմն նա-



ւակին ծոելովը ոտքերուն թրջելը եւ երբեմն ալ թի-  
 երուն հարուածներէն երեսը ցօղի պէս եկած ջրին  
 զովութիւնը կը վայելէր : Բայց միանգամայն ձեռքե-  
 րը կուրծքին վրայ դրած՝ կը դիտէր չորս կողմէ լեռ-  
 ները՝ որոնցմէ այնչափ տարիներ հեռացած էր , անբա-  
 ցատրելի ուրախութիւն մը կ'զգար սրտին մէջ երբոր  
 կը յիշէր այն դաշտերն ու հովիտները եւ բոլոր տղա-  
 յութեան հասակին մէջ տեսած տեղերը՝ որոնք իբրեւ  
 հին բարեկամի մը գծագրութիւն՝ աչքին առջեւը կը  
 ներկայանային :

Իսկ անոր հայրն Ամպրօծիօ ալ՝ մէկ կողմը քաշ-  
 ուած , մտածելով այնպիսի որդի մ'ունենալուն եր-  
 ջանկութեանը վրայ , կը յուսար թէ հիմայ մեծամեծք  
 եւ ակնուականք զինքը իրարու պիտի քաշեն : Եր-  
 բեմն երբեմն որդւոյն քովը մօտենալով քաղցր խօսք  
 մը կ'ըսէր , որուն լուբօ՝ կամ աչօք՝ եւ կամ պզտի  
 ժպիտով մը կը պատասխանէր :

Երբ որ Մօրքաթէի ծայրը հասան , Արիկօյցօ  
 փայլակի մը շողալը տեսնալով . — ձեզ տեսնեմ, կ'ը-  
 սէր , դեռ փոթորիկը ետեւնէս չի հասած Վարէննա  
 հասնինք . — ուստի նաւափարք սկսան աւելի շուտ  
 եւ ուժով թիափարել : Իսկ ներսը քիչ մ'ատեն նոյն  
 օրուան եղածին վրայ խօսակցելէն վերջը , Երանուհ-  
 ւոյն հայրը խօսակցութեան եղանակը փոխելու հա-  
 մար , (ինչպէս որ խիստ շատ անգամներ ուրիշի ալ  
 պատմած ունէր , եւ պատմին ալ զրեթէ իրեն սու-  
 վորութիւն եղած էր) , Մարքօ Վիսքօնթիի վրայ վը-  
 րայ խօսք բացաւ : — Մենք երկուքնիս մի եւ նոյն  
 դպրոցի մէջ դասակից եղած ենք , այն երեւելի զօ-  
 րավարը միշտ դասին առաջիններէն մէկն եղած է եւ

իրեն հանճարին ալ հասնող չի կար , բայց 'ի մէկէն .  
 — Հոս ուզելով հասկցնել այն անանուն մէկուն ով  
 ըլլալը , եւ միանգամայն կհասկածելով որ Օդօրինօն  
 արդէն գուշակած ըլլայ , — միշտ իրարու մէջ հակա-  
 սակութիւնք կը ծագէին , մանաւանդ աղէկ միաքս  
 կուգայ Տանդէի թունաւոր Ալիկիէի անուամբ զըր-  
 քին վրայ ունեցած վէճերնիս , զոր վերջը այրեցին .  
 օակայն ասով ալ բարեկամութիւննիս երբէք չենք  
 կորուսած :

— Աղէկ ըսիր , միաքս կուգայ թէ շատ անգամ  
 ձեր վրայ խօսած է ինձի , պատասխանեց Օդօրինօ :

— Իրաւ կ'ըսես , ինչ կ'ըսէր արդեօք ինձի հա-  
 մար : Գիտնալով որ խեղճ Լիօնթօյի հետ տեսնուե-  
 լուս պատճառաւ , շատ անգամ Լիօնդայ ձեր դըդ-  
 եակը կուգայի , ձեր վրայ ամենայն տեղեկութիւն  
 ուզելէն վերջը , Երմէլինտան կը հարցընէր , որուն  
 նաեւ գեղեցիկ հանգամանքները միշտ կը գովէր :

Օլդրատօ կոմսը , որպէս զի աղջիկը չի լսէ , աս-  
 պետին մօտեցաւ եւ ցած ձայնով ականջէն վար .  
 — գիտցած ըլլաս որ Մարքօն պիտի առնէր զԵրմէ-  
 լինտան . բայց վերջը շատ դժուարութիւններ ելլա-  
 լով . . . բաւական է . ուրիշ անգամ աւելի հանդար-  
 տութեամբ կը պատմեմ : — Միւս կողմանէ առանց  
 բառ մը փախցընելու Երանուհի այս խօսակցութիւնը  
 մտիկ կ'ընէր . . . :

Մէկ մ'ալ յանկարծակի որոտմունքի մը ճայթ-  
 մունքէն խօսակցութիւնն ընդմիջեցաւ , եւ քիչ մ'ալ  
 վերջը ղեկավարին այս խօսքերը լսուեցան որ կը պօ-  
 ռար . — ամենքնիդ ալ թիւրն առէք : Ուստի մէկէն  
 Լուբօ եւ Ամպրօծիօ այս հրամանին համեմատ ածա-



պարանօք փութալու ժամանակնին որչափ ալ նաւակը բաւական տակն ու վրայ եղաւ, սակայն քիչ տեսելով դարձեալ առջի լուծիւնը տեղը գտաւ. այնպէս որ՝ հետուէն ընդարձակ լճին ոռնալուն կատաղի ձայնը յտակ կը լսուէր ։ Այս միջոցիս մեծաւորը ներսէն պատուհան մը բանալով դուրս նայեցաւ ։ Հարաւային կողմէն սեւ սեւ ամպերուն մէջէն կայծակներու անձրեւ մը լճին վրայ տեղալով՝ կարծես թէ կամա լեռնակուտակ ու փոփրադէղ ալիքները նաւուն դէմ կը մղէին ։

Կոմսը դէպ 'ի ղեկավարին կողմը բացուած դուռն ելլալով, — Միքէլէ, երբ որ կիմանաս թէ օդը պիտի աւրուի, ինչմե դէպ ավոււնքը չես մօտենար, փոխանակ այս ժայռերուն դէմ պատերազմելու, որոնց ամենեւին մօտենալու հնարք չկայ, ըսաւ ։

— Երբոր փոթորիկը ղիւանման արագութեամբ յանկարծ ետեւէս կը հասնի, ես ինչ ընեմ, պատասխանեց նաւավարը, ետքը սկսաւ աղաղակել ։ — ձեզ անսնեմ, ու ժերնիդ կրկնապատկեցէք եւ աւելի աւելի արագութեամբ շարժեցէք ։

Աւտի ամենքը սիրտ առած մէկէն ուժեղ բազուկներով սկսան թիւալարել ըսածէն աւելի ջանքով, նաւակը կարծես թէ բամպակէ փոփուրներու վրայէն կը սահէր ։ Բայց յանկարծ սաստիկ հով մը փչելով, ալիքները կատաղութեամբ նաւակին կողերը սկսան ձեծել, այնպէս որ մէկ մը աջ ու մէկ մ'ալ ձախ կողմը ծռելով, վաստկած ճամբայներէն մեծ մաս մը կը կորսնցնէին ։ Ի վերայ այս ամենայնի իրենց անյուսահատ թիւալարելովը դարձեալ քիչ մը ճամբայ կը չափէին եւ կամաց կամաց դէպ 'ի Վարէննա մօտե-

նալու յոյս կար ։ Սակայն հազիւ թէ ամենքն ալ շքնչասպառ, ժայռի մը անկիւնը դառնալու վրայ էին, մէկ մ'ալ յանկարծ կատաղի քամի մը նաւակին ծայրէն կը որ շքնան մը ընել տալով ետ դարձուց ։ Այս միջոցիս գըրգում մը ըլլալով, կարծես թէ նաւակէն տախտակ մը լիճն ինկաւ, ու ետեւէն անմիջապէս այս սոսկալի ձայնը լսուեցաւ ։ — դէկը գնաց ։

— Վայ մեղի, կորսուեցանք ։ — Թշուառական, կապէ սա առագաստը ։ — Սուրբ Աստուածածին ։ — Նաւակին դէպ 'ի երկայնքը դուրս թի մը երկնցուր դէկի տեղ ։ աղէկ բունէ, ուժով անիծածներ ։ — Տէր ողորմես ։ — Վար դիր սա թին սատանի ձագ ։ — Տէր ողորմես, տէր ողորմես ։ — Բայց մէկ կողմէն պիտայ կատաղաբար մռնչելը եւ միւս կողմանէ ալ հողմերուն սուլին ու ժայռերուն եւ քարայրներուն դէմ կայծականց ահաւոր հարուածներն ու որոտմունքը, ասոնց ձայներն ու կռիւր կ'արգիլուին ։

Իսկ ներսը քահանան բազկատարած, ամենուն վերջի վայրկեանին արձակումը կուտար ու միանգամայն ծռուկի վրայ գալով, հոգիին Աստուծոյ կը յանձնէր ։ Մինչդեռ կոմսը բերանը բաց՝ ու աչքերը գուրս ցցուած՝ աղջկանը վրայ կը նայէր, Երանուհին ալ հօրը վիղը պլլուած կը կանչէր ։ Տէր, օգնես ինձ, Տէր, օգնես մեզ ։

Իսկ Օգօրինօ, գոնէ դուրսի խեղճերուն օգնութեան մը հասնելու մտքով խուցիկէն դուրս ցատկեց ։ տեսաւ որ նաւակը ջուրերէն մղուած՝ մէկ մը այս կողմը մէկ մ'ալ միւսը պտուկելով, նաւավարաց յետին ձգանց հակառակ դէպ 'ի Մօրքաթէի ժայռերուն դարնուելով փչրելու կը վազէր ։ Բայց այն վայրկեա-



նին որ ինքն խուցէն դուրս կելլար, Արիկոցցոն իր բոլոր ուժը ձեռքի թիին տալ ուզելով ու միանգամայն ալիքն ալ թիին տակէն փախչելով, գլխովայր լինն ինկաւ: Քիչ մը ատեն ալեաց դէմ պատերազմուէն վերջը: Արիկոցցո գլուխը նաւակին զարնելով, տակը գնաց ու կորուսեցաւ: Խեղճ ղէկավարը, իր աղէտալի կորուստէն անտեղեակ էր, վասն զի նաւակին խցիկը կ'արգելուր իրեն այս տխուր տեսարանը, վերջապէս ամենքնիդ ալ դէպ 'ի լեռ, գոչեց թիւփարաց, քանի մը հայոցմուշք ալ քթին տակէն մըրմըռաց, բայց քիչ ատենէն ամեն բան հանդարտեցաւ, եւ նոյն ժամայն ալիքները նաւակին ծայրը վեր առնելով անապին ժայռի մը նստեցուցին:

Այս միջոցիս երիտասարդ ասպետը ինքզինքը չը կորսնցուց, ձախ ձեռքովը նաւակին շղթան բռնած նետուեցաւ ժայռի մը վրայ: Այնպէս որ՝ եթէ բոլոր ուժովը վրան նետուած ժայռին չը պլլուեր, ետեւէն հասած անաւոր ալիքները, զինքն ալ յանդունդս պիտի գլորէին: Հասաւ ետեւէն ուրիշ կոհակ մ'ալ, ու այս անգամ Վուբոն, բաղէակիրն ու միւս նաւավարը որք նաւակին ծայրը պատրաստ կեցած էին՝ դուրս ցատկեցին եւ ամենքը մէկ եղած հազիւ կրցան ձեռքերնին գտնուած շղթան՝ դուրս ցցուած ժայռի մը պլլել: Իսկ նաւակն ալեաց անդադար յարձակմունքէն, գլխէն կախուած կատաղի գաղանի մը պէս մէկ մը այս կողմը մէկ մ'ալ միւսը կը գլորէր. սակայն այս անգամ ալ ալիքները չէին կրնար շղթան խորտակելով նոյն ժայռէն նաւակը զատել: Ուստի Օդորինս միւս նաւավարաց հետ, Տէլ Պալցո կոմսը իւր աղջկանը հետ նաւակէն ափուսը առնելէն վերջը, ա-

մենայն ուշադրութեամբ լծին փրփուրներուն վրայ խեղճ նաւաբեկելոյն մարմինը կը փնտռէին: Մինակ իւր հայրը՝ որ նաւակէն դուրս ամենէն վերջի ելլողն ըլլալով եւ միանգամայն այն խոռովութեան եւ խառնակութեան մէջ տակաւին որդւոյն կորուստէն լուր չ'ունենալով, վարը՝ թիի մը կոճղը ծնգացը մէջ առած անխռով բազմութեան մէջ իւր որդին կը փնտռէր: Իսկ կոմսը, իր առջի երկիւղէն սթափած եւ Արիկոցցոյ մահուանէն ալ բոլորովին անտեղեակ, ղէկավարն ու միանգամայն անոր որդին սկսած էր յանդիմանել: Միքէլէն իբրեւ մեծ յանցանաց տէր, գլուխը կախած մտիկ կ'ընէր: Բայց երբոր տեսաւ յանդիմանութեանց իրմէն աւելի որդւոյն վրայ տեղալը եւ մինչդեռ կը պատրաստուէր կոմսին պատասխանելու, գլուխը վեր առած ժամանակը լծին եզերքը կարգէ դուրս բայց անորոշ առարկայ մը նշմարեց, որ երբեմն ջրին երեսը կը ծփար եւ երբեմն ալ ժայռի մը տակ կը ծածկուէր: Ուշադրութիւնը կրկնելով տեսաւ սեւ զգեստի մը ծայրն ու ձեռք մը՝ որ ալեաց հետ միատեղ անդադար կը շարժէր:

Խեղճ հայրը կարծես թէ կայծակէ զարնուածի պէս ինքզինքը ժամանակ մը կորսնցնելէն վերջը, առջևի կեցած կոճղն առնելն ու ոտքի ելլալով անաւոր ձայնով մը, — Արիկոցցո, Արիկոցցո կանչելը մէկ եղաւ: Սակայն երբոր տեսաւ պատասխան մը չառնելու, ցատկեց ժայռին վրայ եւ անկէ մի առ մի զամէնքը զիտելէն վերջն ալ երբոր իր որդին չի գտաւ, եւ տեսնելով որ կոմսը գեւ զիմացը կեցած իր յանդիմանութիւնը կ'ուզէ շարունակել, — ան, դեռ հոս եւ անդամ, պտարով ձեռքի անազին կոճղը դէպ



ի կոմսին գլուխը նետեց, Երանուհին աղաղակեց, Օգոստինոս շուտ մը հարուածին դէմ դրաւ. նոյն վայրկեանին վազելով նաեւ Լուբոն, բաղէակիրն եւ ուրիշ նաւավարք բռնեցին մոլեգնեալը, որն որ երկու ձեռքով գլխուն զարնելով նետուեցաւ լճին մէջ:

Մրրկավար հովի մը պէս Միքէլէ ահաւոր ալեաց հետ կարծես թէ կը պատերազմէր. այնպէս որ վայրկեանի մը մէջ հասնելով տղուն անչնչացեալ մարմնոյն քով բռնեց անոր մաղերէն: Այլ հոս ալ հայրական գուժը որդւոյն մեծ նախատինք համարելով նաեւ այնպիսի վայրկեանի մէջ մաղերէն քաշելը եւ որպէս զի գոնէ գլուխը ջուրէն վեր առած ըլլայ, շուտ մը ձախ ձեռքը որդւոյն ծնօտին տակը դրաւ, ու աջո՞ն ալ սկսաւ ալիքներուն զարնել, դառնալով դէպ ՚ի թողած ափունքը: Նաւավարք մէկէն կիսալէկոծ նաւուն մէջ ցատկելով առադաստին չուաննեքը ձերուհւոյն նետեցին, զորս Միքէլէ բռնելով հազիւ կրցաւ անվնաս իր աղէտալի բեռովը ցամաք ելլել:

Առթնցուց որդւոյն մարմինը քարի մը, եւ ձեռքն անոր սրտին դնելով կուղէր իմանալ թէ արդեօք դեռ կը զարնէ. վերջը կուրծքը կուրծքին, ու երեսն երեսին դրած աչքերը կը համբուրէր ուզելով կինաց վերջի նշոյլ մը նշմարել: Նոյն միջոցին յանկարծական հով մը գիակին մէկ բազուկը շարժելով կարծես թէ խեղճ ձերուհւոյն երեսը գոյն եկաւ, յուսահատութիւնը փարատեցաւ եւ աչքերուն մէջ լոյս շողաց: Սակայն իմանալով իւր խարուիլը՝ երկու ձեռքը մաղերուն տարաւ. յետոյ ցաղուկները տարածելով դէպ ՚ի լիճը. — անիծանձ հողմ, կը կանչէր, ա-

նիծեալ ալիք եւ անիծեալ կմախք նաւակիս, անիծեալ ըլլայ այն վայրկեանը՝ յորում սկսայ շինել զայն, թո՛ղ կորսուի աչքիս առջեւէն ամեն բան:

Սմեռքը բոլորտիքն առած ու ապշած կեցեր էին, առանց համարձակելու բառ մը արտաբերել: Սակայն մեծաւորը՝ քիչ մը ժամանակ զայն իւր ցաւոցը մէջ թողելէն վերջը, քովը մօտեցաւ եւ զինքը միսիթարելէն առաջ, ձեռքը որդւոյն գլխուն դնելով՝ զոր հայրը ծնագոյր մէջն էր առած, ըսաւ սրտատուչ կերպով մը. — Խեղճ Արիկօցցօ, դու միշտ բարի զաւակ մ'էիր ու աստուածալախ, եւ ամենայն ազգականացդ սիրելի:

— Իրաւ, ճշմարիտ է ըսածդ, ըսաւ հայրը սրբտաթափ. այսպիսի գովասանաց արժանի որդւոյ մը հայր ըլլալն անգամ ինձի չէր վայելէ:

— Այսպիսի ժամանակի մը մէջ, յորում այնչափ հաւատոյ դէմ փորձանքներ կան, յառաջ կը բերէր բարի ձերուկը, սիրելիդ իմ Միքէլէ, միթէ Աստուծոյ մեծ բարիքը չէ՞ զինքն իրեն կոչելը՝ քանի որ արդէն ալ իրենն էր, թո՛ղ դո՛ս մը ըրած ըլլաս անոր՝ որ զայն քեզի ժամանակ մը պարգեւեց:

— Ո՛հ, բայց ես, ինչ պիտի ընեմ այսուհետեւ աշխարհքիս մէջ առանց իրեն, կը հառաչէր նաւավարը, ինչ պիտի պատասխանեմ խեղճ Մարթային, երբ որ հարցնէ թէ ինչ ըրիր մեր որդին:

— Աստուած զձեզ չը ձգէր, վրայ կը բերէր քաղցրութեամբ քահանան, ինչպէս որ իրեն թոյլտուութեամբը այս խեղճութիւնը ձեզի պատահեցաւ՝ ինքն անշուշտ ձեզի ուժ ալ պիտի տայ, որ կարենաք վըշտաց համբերել:





Միքէլէն աչքերը դէպ 'ի երկինք վերցուց, եւ քիչ ժամանակէն վերջը սկսաւ գոչել, ինչո՞ւ ես չը մեռայ, ինչո՞ւ զիս՝ անպիտան եւ զղուելի ծերս հոս թողում զինքը ծաղիկ հասակին մէջ կորզել . . . մեր միակ վերջին յայտը, մեր նեցուկը, մեր մխիթարութիւնը . . . բայց ալ չը կրցաւ առաջ տանիլ :

Այս միջոցիս, մնացած նաւաբեկիւորները գիշերը վրայ չի հասած այն չոր ապառաժներուն վրայէն ազատուելուն հնարքը կը խորհէին : Գէպ 'ի իրենց ետեւն ինկած անաւոր ժայռերէն վեր մագլցելին՝ առաջին անգամ իրենց անկարելի երեւնալով՝ սկսան բուրտիքն եղած բլուրներուն վրայ աչքերնին պըտըտցընել որ եթէ գիպուածով ոչխար եւ կամ այժ արածող հովիւ մը նշմարեն, հեռուանց անոր նշան տալով՝ իրենց թշուառ վիճակին օգնութեան կանչեն . վասն զի պոռալով լսել տալն անկարելի էր : Սակայն ոչ թէ մարդ՝ այլ թռչուն մ'անգամ չի կրցան տեսնել, որպէս զի եթէ կարելի ըլլայ, իրենց խեղճութիւնը պատմելու համար Վարէննա դրկեն :

Լուբօ քիչ մ'ատեն ինքնիրեն մտածելէն վերջը . — հոս քաջութիւն պէտք է, քանի որ դեռ լոյս է, տեսնամ կրնամ սա դէպ աչքերնիս տեսնող ժայռերէն վեր մագլցելով միւս կողմը Վարէննա իջնալ ու նաւակ մը գտնալով շուտ մը հոս դառնալ : — Այս առաջարկութիւնն ամենեւին բազէակիրը յանձն չառնելով, չըլլար կ'ըսէր, դու ալ ամենուս հետ ինքզինքդ բազդին յանձնէ :

Որչափ Օդօբինօն ալ այս ձեռնարկութեան վրտանդաւոր եւ վերջապէս խնդութիւն ըլլալը յայտնուելով, զինքը ետ կեցընելու ջանաց՝ սակայն ինքը, —

երիտասարդութեանս ժամանակ քաջ որսորդ ըլլալովը՝ կրնամ ըսել թէ չի կայ կօտանօթի մէջ հովիտ կամ դահալէժ մը որ չի գիտնամ . ուստի ձգեցէք զիս որ Աստուծոյ օգնութեամբը բարեկաջող ըլլայ ձեռնարկութիւնս, ըսելով, քաշեց ոտքէն գուլպաները ու կանակէն զգեստն ու թեթեւ հագուստով մը ճամբայ ելաւ :

Առանց մեծ դժուարութեան հասաւ լեռան ստորոտը, եւ աչքին առածին չափ անոր անաղին բարձրութեանը նայելով՝ յուսահատական կերպով մ'սկըսաւ դուխը շարժել, Սակայն ձախ ձեռքը մացառներուն երկնցընելով՝ եւ միւստիւ ալ երեսը խաչակընքելով, սկսաւ կամաց կամաց զգուշութեամբ վեր ելլալ, ցատկելով ժայռէ ժայռ, փոսէ փոս, եւ ճամբուն վրայ ո եւ է վայրի ծառ մը դանար՝ անոր պըլլուելով միւսին կը նետուէր եւ ամենապիտուարին դառ 'ի վերի մ'որ պատահէր՝ ամենայն ճիղը թափելով՝ սաքով ձեռքով ըզուրքներն անգամ դործածելով, երբեմն ծնգացը վրայ եւ երբեմն ալ երեսի վրայ սողալով, միշտ վեր կ'ելլար : Իսկ մէկախոնք, վարը ժայռին վրայ այն անաւոր անտառաց մէջ Լուբօին իւրաքանչիւր շարժումը կը դիտէին, ու անտառաց փայլակներուն լոյսէն կը տեսնէին զինքն այն անաւոր բարձրութեան կէտը ժայռի մը պլլուած՝ որուն վրայ երկինք կ'որոտար եւ որուն յատակը կը մռնչէին ալիք : Նր տեսնային միանգամայնեւ ստիպմանին կ'աւելնար, երբոր կը մտածէին թէ տակաւին ելած բարձրութեանը չափ առջեւը ճամբայ կար : Բարեբաղդաբար մեր ճանապարհորդը պզտիկ քարանձաւի մը պատահելով, կրցաւ քիչ մը շունչ առնուլ, եւ անկէ ուզելով իմա-



նալ թէ որչափ ճամբայ ըրեր է, աչքերը դէպ յանդունդս դարձնելն ու գլուխը դառնալով ետ առնելը մէկ եղաւ: Քիչ ատենէն Լուբօ՝ դարձեալ երեսը խաչակնքելով սկսաւ առջի անտանելի եւ տաժանելի ճամբորդութեանը: Քանի որ նա ժայտերուն վերջին ծայրը կը բարձրանար որդի պէս ինքզինքը եւս առաւել կը պզտիկնէր, այնպէս որ՝ հողմնատատան ոտի մը եւ եւ կամ բաղէի նման կ'երեւար, որ թեւերն իւր որսին վրայ դարնելով կը ծածկէ:

Այս միջոցիս հանդիսադիրները, քիչ մը ժամանակ շուրջն աչքէ կորսնցնելով, խորին լուսթեան մէջ մէկ մէկու երես կը նայէին, ուշ դնելով վերէն ժայռէ ժայռ ծանր բանի մը դղրելով դալուն: Սակայն մեծ քարի մ'իսկոյն հազար կտոր փշրելով լճին յատակն իջնալն երբոր տեսան, սրտերնին հանգստացաւ:

Նորէն քիչ մ'ատեն մշուշ կէտի մը պէս մեր քաջասիրտ ճանապարհորդը երեւնալէն վերջն, ալ բոլորովն աներեւութացաւ:

Այն ատեն Օղորինօ դառնալով նաւալարաց. — արգեօք հիմայ այսպիսի փոթորկալից լճի մը մէջ կըրնայ նաւակ մը ճամբայ ընել:

— Քաջ կը համարիմ զանի՞ որ հիմայ կարենայ երկու կանգուն ափունքէն հեռանալ, պատասխանեց մէկը, բայց մակընթացութեան ժամանակ ջուրերը վար հոսելու որ ըլլան, այն ատեն կրնայ պատերազմուիլ ալեաց դէմ եւ Լուբօ կրնայ Վարենայէն նաւակով հոս գալ:

Նրիտասարդ ասպետն առանց ուրիշ բառ մ'արտաբերելու, Նրանուհւոյն քով քարի մը վրայ նստաւ: Ամենուն աչքը դիմացի լեռանց վրայ յառած էր, ու

րոնց մէջ նաեւ արեգակն իջնելու վրայ էր: Հսկայածեւ հրակէզ ամպեր՝ հավերուն բռնութենէն մղուած, հազար ու մէկ երեւակայական ձեւեր առնելով՝ կը շրջէին երկնից տարածութեանը մէջ: Լոյսը՝ կը քաշէր իւր ոսկեթել ճառագայթներն երկրիս վրայէն, ծածկուելով լեռանց ծայրը: Ընդհանուր առարկայից երեսը՝ տեղոյն քող մը պատեց՝ որոնք հորիզոնէն ըսկըսեալ, աստիճանաբար առաջ գալով կը դեղնէին, կը մշուշնային, կը կորսնցնէին դժագրութիւննին, այլ այլ եւ այլ անորոշ ձեւեր կ'առնուին, եւ վերջապէս պլպլացող կանթեղի մը լոյսին նման բոլորովին կ'աներեւութանային: Ով որ արեգական մարը մասնելը զիտելու ըլլար, կը տեսնար երկնքն արեան կարմրութեան մէջ. բայց աչքերն ամենաբարձր լեռանց գագաթէն մինչեւ իրենց ստորոտը լիճը նայելու որ ըլլար, ալ չէր կրնար ծառերը տեսնել, ալ ամենայն առարկայ կորսուած էր: Միայն լեռանց ահագին կոյտը ստուեր մ'էր ձեւացած. սակայն ան ալ կամաց կամաց անտեսանելի եղաւ: Ահա այսպէս խաւարն աստիճանաբար յառաջելով՝ ծածկեց մեր խեղճ նաւաբեկեայները եւ մէկզմէկ չէին տեսնէր: Միայն մինչեւ սահմանեալ կէտ մը լճին լեռնակուտակ ալեաց մէկզմէկ մղելով գալն ու ափանց ժայտերուն դէմ փշրելը կը տեսնէին: Ամէն բան լուծ էր բնութեան մէջ, միայն հովերուն արձագանաց, եւ ալեաց մտնչման մէջէն վարը թշուառ Միքելէին խզողու ձայնը կը լսուէր՝ որ տղուն հողւոյն համար կ'աղօթէր: Նրանուհի որչափ ալ կը տեսնար ինքզինքն այսպիսի սոսկալի վայրկենի մը մէջ, իր հօրն ու ասպետի մը պաշտպանութեանը ներքեւը, այսու ամենայնիւ գլուխը հօրը



ճնդացը դրած՝ վախէն ու ցուրտէն ալ ահուաներն իւրար զարնելով կը դողար : Սակայն աղջիկը , իբ վախէն թմրած վիճակին մէջ , աւելի ապահով ապաւեն մը համարելով երիտասարդ ասպետը , իբ վախուկ ձեռքն անոր ձեռացն էր յանձնած , եւ վայրկեան մ'ալ հովերուն սաստիւթեանէն Երանուհուոյն մազերը քակուելով՝ Օղորինօին երեսները կը ծեծէին : Արով ասպետն ալ բիւրաւոր վտանդաց ենթակայ եւ թշուառ վիճակի մը մէջ դանուելովն անդամ , ինքզինքն իբ կենայն երջանկագոյն կէտը հասած կը սեպէր :

Գրեթէ ժամէ մը վերջը , որն որ Ասպետէն աւ Միքէլէէն դատ ամենուն ալ դար մ'էր երեւցած , Վաբէնայի կողմէն լոյս մը տեսնուելով՝ ամենքն ալ միատեղ սկսան ուրախութեան աղաղակ մ'արձակել . ուրուն դէմ նաեւ հողմերուն սաստիւթեանէն բեկբեկեալ ձայներ՝ լոյսին տեսնուած կողմէն պտտախամնեցին : Մերինները դարձեալ կրկնելով իրենց աղաղակը , նաւակը սկսաւ իբ ընթացքը դէպ 'ի ձայնը ուղղել : Եւ բաւական ժամանակէ վերջն , ալեաց ձերմակ փրիւրներուն մէջէն սեւ կէտի մը նման նաւակին դէպ 'ի ձայներն ափանց մօտենալը տեսնուեցաւ : Կամայն երկու նաւավարները նոյն ժամայն վազեցին օգնութեան , որ չըլլայ թէ ժայռերուն զարնուելով փշրի նաւակը , եւ անոնց ձեռնտուութեամբը , Լուսուսն որ եկող նաւակին մէջն էր , կրցաւ նախ եւ առաջ ինքզինքը ցամաք նետել , հեան առնելով երկայն ու լայն տախտակ մը , զոր իրբեւ կամուրջ աղէկ մը հաստատեց նաւակ մտնողներուն զիւրութեանը համար :

Ամենէն առաջ Սրբբատօ Տէլ Պալցօ կոմսը նաւակին մէջ մտաւ՝ եւ շուտ մը իբ աղջկանը ձեռքէն բըռ-

նելով քովն առաւ , միւսներն ալ մի առ մի ետեւէն ներս մտան : Միքէլէ՛ նաւակը մտնողներուն ամենէն վերջինն եղաւ . գրկելով իբ որդւոյն դիակը նաւակին ետեւի կողմը դետողեց եւ ինքն ալ կծկուուելով անոր քովը պառկեցաւ . իսկ Լուսուս տեսնալով զինքը որ բարակ ու թրջած զգեստով մը կը գողդոյայ , հանելով ուսէն իրեն աւելի եկած հագուստը , ձգեց զայն սրտաբեկ հօրը վրայ :

Նաւակն առաջ երթալով վերջապէս տեսնուեցաւ Վարէնայի նաւահանգիստը , լուսազարդ ու գեղեցիկ , ուսկից խուռն ամբոխի մ'աղաղակը սկսաւ լսուիլ : Նաւակը մօտեցածին պէս , տեղացիք անոր չորս կողմն առնելով որը նաւակը կը բռնէր , որը լոյս կը ցուցնէր եւ կամ կ'օգնէր որ մեր նաւաբեկեալները դուրս ելլան , վերջապէս ամէնքն ալ բարեգործութեան ետեւէ էին : Սակայն այս միջոցիս ոմանք , մեր Լիմոնդացի նաւավարներն այնպիսի փոթորիկի ժամանակ լճին վրայ դանուելով նաւաբեկելնուն համար ծեծկուուելու չ'մնացած՝ ձայն մ'ելլու թէ Միքէլէն իբ որդւոյն խղղուած դիակովը նոյն նաւակին մէջ է :

Շուտ մ'ամէն բան դադարեցաւ ու խաղաղութիւնը տիրելով , ամէնքը միատեղ վաղեցին այն խեղճին օգնելու եւ հանգուցելոյն մարտինն ալ նոյն գիշերուան համար իբ ուղածին պէս վայելուէ տեղ մը դընելու : Սակայն յայտ մասին ամենայն ձեռնտուութիւն մերժելով , Միքէլէ յանձն առաւ որ ինքը միայն նոյն գիշերը որդւոյն քովը հսկէ :

Արշալոյսը ծագածին պէս , Միքէլէն շուտով վարպետ հիւսնի մը խաչ մը շինել առաւ որդւոյն դեղնաւանդի գլուխն վերեւ տնկելու համար , հանեց ծո-



ցէն մնացած քիչ մը դրամները՝ եւ մէկ ձեռքէն միւսը  
 դուրեւորով կ'ըսէր . — ասոնք իր շահած ստակներն են ,  
 զորս դեռ անցած օր Լէքքօէն դառնալէն ետեւ ինծի  
 տուաւ . որմէ միտքեր կ'անցնէր թէ իրեն գերեզմանին  
 համար շինուելու խաչին պիտի ծախք ըլլային :

Հովն երբոր դադրեցաւ , Լիմոնդացւոց մնացած  
 բոլոր նաւակներն ալ Վարեննա դարձան , որոնց մէջն  
 էր նաեւ Միքելէինը՝ զոր առջի օրը իւր գեղացիներէն  
 մէկուն վարձած էր : Ուստի քանի մը բարեգործ ան-  
 ձինք նաւաբեկելոյն մարմինը հօրը նաւակին մէջն աղէկ  
 մը տեղաւորեցին : Երբոր խեղճ հայրը լճին եղբրքը  
 հասնելով տեսաւ իւր նաւակը՝ որուն մէջն էր նաեւ  
 որդւոյն անկենդան դիակը , աչքերը մթննալով արցուն-  
 քով լեցուեցան . սակայն ըստ կարելոյն ինքզինքն ընդ-  
 նեց եւ խաղաղ կերպով նաւակը մտաւ ու թիով մը զայն  
 փոխուեցնէ հեռացնելէն վերջը , երկրորդ թի մ'ալ առ-  
 նելով սկսաւ կամաց կամաց նաւակը դարձնել ու Վա-  
 րէննայէն հեռանալ : Լճին երեսը հանդարտ ու հայելի  
 պէս կը փայլէր . երբեմն ասդիս անդին մանր ձկներ ի-  
 րենց ընթացքին մէջ թեթեւ մը դուրս կը ցատկէին եւ  
 որուն մէջ արծաթի պէս փայլելով , վար ինկած ժամա-  
 նակներն հազար ու մէկ բոլորակներ կը կաղմէին ջրին  
 երեսը : Օդը մեղմ էր եւ երկինքն իրեն ամենագեղե-  
 ցիկ կապոյտ դոյնն էր առած . լեռանց գագաթէն մին-  
 չեւ ստորադը՝ ջուրին եղբրքը տեղ տեղ պայծառ կ'ե-  
 րեսային : Գեղացւոց առններն ու անակները , հեռու-  
 անց առանուող մատուռները , վերջապէս ցօղազարդ  
 ու դարմ դալարաց , սնկոց եւ ծառոց կանանչութիւ-  
 նը , նորածին արեգական ճառագայթներէն ընդառու-  
 դայներ կ'առնուէին :

Սակայն այս բնութեան խաղաղ ու քաղցր տե-  
 սարանը բոլորովին տարբեր կերպով ազդեցութիւն  
 կ'ընէր խեղճ նաւավարին կարեւոր ու ցաւած սրտին :

Միքելէն բաւական ժամանակ լուծեամբ իւր  
 նաւակը յառաջ վարեց , հեծելով միանգամայն սրբա-  
 մութեան ծանր բեռին տակ : Վերջապէս աւելի սրբ-  
 օին ցաւէն քան թէ կատաղութենէն , բոլոր ուժովը  
 ձախ ձեռքի թին ջրին զարնելով կանչեց . — կեղծա-  
 ւոր բնութիւն . — թին ջախջախեցաւ ձեռքին մէջ ,  
 քաչեց միւսն ալ նաւակին մէջն առաւ եւ ձեռքը մնա-  
 ցած կտորած մատովն այնպէս մը դարկաւ որ նաւակին  
 թիափակէր կտորեց :

Բայց այս միջոցիս եղած շարժմունքէն նաւակին  
 դէպ երկայնքը դուռած թի մը տեղէն ելլալով քիչ  
 մնաց որ Սրիկօցցօի դիակին վրայ իյնար : Միքելէն  
 փաշալկի պէս ցատկելով բռնեց զայն օդուն մէջ , եւ  
 բաւական ատեն վրան նայելէն վերջը . — այս իրեն  
 է . . . զոչեց , եւ յետոյ զգուշութեամբ դարձեալ  
 զայն տեղը դրաւ :

— Աստուած իմ . — հառաչեց . — օգնէ՛ ինձ , հո-  
 վանաւորէ՛ քու սուրբ ձեռքդ իմ դիւրուս վրայ , որ-  
 պէս զի չ'ըլլայ որ թշնամիէն յաղթուիմ եւ յուսահա-  
 սութեամբ ինքզինքս մոռանալով հոգիս կորսուի . եւ  
 սկսաւ թիափարել , շրթանց ծայրովը ջերմեռանդն ա-  
 դիթելով :

Վարդօթէր , եւ կամաց կամաց նաւակը յառաջ կը  
 մղէր , սակայն քանի որ բազուկները մէկ մը առաջ  
 մէկ մ'ալ հտեւ երթալով , իւր սովորական թիափա-  
 րելու շարժման մէջն էին , եւ պակուցները սրտա-  
 բէկ խօսքեր կ'արտաբերէին , միւս կողմէն միտքը



որդւոյն երթալով կը յիշէր անոր մանկութիւնը, այն առաջին անգամ «հայր» գոչած վայրկեանը՝ յորմէ իւր երջանկութիւնը սկզբնաւորած կը տեսնար . . . կը յիշէր անոր տղայութիւնը, երիտասարդութիւնը մինչեւ այրութեան հասակը : Կը յիշէր թէ իրեն եւ թէ կնոջը ծերութեան մէկ հատիկ յոյսն ըլլալը, եւ թէ ինչպէս երկուքն գուրգուրալով անոր վրան կը դողային, եւ եթէ դիպուածով ուշանար օրական աշխատութեանէն տնակը դառնալու, շագանակի անտառոց մէջէն հովուէն կատաղի մունչմանը ժամանակ ինչպէս երկուքն ալ մէկ պատուհանէն անոր ճամբան կ'ըսպասէին : Կը յիշէր ցաւագնեալ հայրը, եւ աչքին առջեւը կուգային Արիկօցցօին ունեցած համբաւն ու առած գովեստները . վասն զի լծին թիւփարաց առաջիններէն մէկն ըլլալով, չ'կար անոր պէս վարպետ գէկավար եւ առագաստ գործածող մը : Կարծես թէ տակաւին իւր ականջացը մէջ կը հնչէին անոր զօրաւոր թիբերուն կոփիւնքը եւ կը լսէր լծին հանդարտութեանը ժամանակ իւր սովորական մեղամաղձ եղանակին քաղցր ձայնով երգելը :

Ինչպէս որ ջուրը գետնէն բղխելով միշտ գառիվայր կը հոսի, նոյնպէս ալ մինչդեռ այս մտածմունքները մէկ մէկու ետեւէ խեղճ հօրը մտայր մէջ կը յաջորդէին, բերանը միշտ արօթելու հետ էր : Վերջապէս առանց խակ իմանալու, արօթքն ընդմիջելով, սկսաւ զօրաւոր ձայնով մը Արիկօցցօի սովորական եղանակն երգել : Սակայն ձայնը երբ որ ականջին դարկաւ, շուտով մը սթափած՝ գլուխը գէպ երկկնք վերցուց ու աչքերն արցունքոտեցան :

Արդէն նաւակն ալ Լիմոնդա հասած էր : Բայց,

նոյ Տէր . ինչպիսի կակիծ էր՝ որ այն հիգացեալ հայրը զգաց երբ ափանց մօտենալով տեսաւ բազմութիւն մը՝ որ իրեն կ'սպասէր, եւ խառնիճաղանճին մէջ յուսահատ կին մը՝ որ վրան գլուխը պատուած, մաղերը փետելով ու կուրծքը ծեծելով իւր ողբազին աղաղակացը արձագանքը՝ մինչեւ հեռաւոր անձաւաց մէջէն անդրադարձնել կ'ուտար :

Այսպիսի աղետալի տեսարանի մը վրայ երկար խօսելը սրտերնիս չը տանելով, ձգենք առայժմ խեղճ նաւավարն իւր կնոջը հետ իրենց ցաւոցը մէջ, ու դառնանք Վարէննա թողած անձանց քովը :

---

## ԳԼՈՒԽ Զ .

---

Մեր նաւարեկեալները նոյն գիշերը գեղին առաջնօրդին տունն անցուցին . որուն այնպիսի հիւրեր ունենալն ամենեւին մտքէն անգամ չ'ըր անցած : Դեռ հոն՝ այսինքն 'ի Վարէննա կը դատուէր Բէլէկրուան՝ ամենախեղճ վիճակի մը մէջ . գրեթէ փողոցները մնացած, վրան գլուխը պատուած, առանց դրամի եւ անպաշտպան, գրեթէ աննշան մարդ մը աշխարհիս մէջ : Այս սրիկան՝ իրեն ինչ խմոր ըլլալը հոն ալ ամենուն ճանցնելով եւ վերջի անգամուան համար նոյն դեղէն ալ փախչելու ստիպուած, ճիշտ տիրոջմէն դուրս ձգուած շան մը պէս, նոյն առաւօտը կանուխ, աւելի առ երեւոյթս խոնարհած՝ քան իրօք, եկաւ Ղիմոնդայի մեծաւորին քծնելով աղա-



չելու թէ՛ իրեն թողութիւն տայ հասուցած ու նաևե (եթէ միջոց ունենար) դեռ հասցնելու չարեացը, եւ կը խնդրէր որ այսպիսի յուսահատական խեղճութեանը մէջ իրեն օգնութիւն մը ընէ :

Բարի քահանան, աւելի անոր կնոջն ու անմեղ սղեկին խեղճ վիճակին վրայ դուժը շարժած, քան թէ իրեն, եւ ժամանակաւ իրմէ՛ ալ մեծ բարիք մը չ'սպասելոյն անգամ, խոստացաւ որ իրեն համար Տէլ Պայցօ կոմսին հետ խօսի : Եւ կարծես թէ անպիտանին բաղդէն, երբոր քահանան ներս մտաւ՝ կոմսը իւր աղջկանը եւ Օղօրինօյի հետ նստած էին : Օրիորդը բնականապէս փափկասիրտ եւ Բէլէկրուայի կինն ալ խոսովութեան ժամանակ օրդուոյն հետ բերդը փախրտական եղած օրէն ճանչնալով, եւ բարի ծերունուոյն խօսքերէն ալ գուժը շարժած, շատ թախանձեց հօրը՝ որ այն խեղճին կեբարով մը օգնութեան հասնի :

Ընթերցողը կրնայ երեւակայել թէ, այս երաշխաւորութեան յանձնառու ըլլայն անկարելի բան էր կոմսին համար . որովհետեւ թէ Ս. Ս. մերքոսիրտի արբային եւ թէ բոլոր Լիմոնդացոց ատելի պիտի ընէր ինքզինքը : Սակայն չը կարենալով ալ բոլորովին աղջկանը խօսքը կտարել, ոչինչ պատճառներ մէջ կը բերէր թէ կրնայ ըլլալ . — կարծես թէ փուշի վրայ նստած էր . — այնպէս որ վերջապէս Օղօրինօ՝ երջանկութիւն համարելով ինքնիրէն Երանուհուոյն այսպիսի փոքրիկ աղաչանացը յանձնառու ըլլալը, խոստացաւ որ ինքը գօթէլէկրուան գործի մը դնէ . — որուն փոխարէն աղջիկն ալ անոյ՛չ նայուածքով մը իւր շնորհակալու ըլլայն ասպեաին յայտնեց :

Լիմոնդայի մեծաւորն որչափ ալ իրեն պարտք

համարելով, ուղեց հասկցնել երիտասարդին թէ օգնել ուղած մարդն ինչպիսի մէկն է, սակայն նա՛ քիչ մը Երանուհուոյն տուած խոստմունքէն ետ չը կենալու համար, քիչ մ'ալ իւր բնական աշխուժէն դըրդեալ, ծերունուոյն խօսքերը բանի տեղ չը սեպեց. եւ ուրիշ յարմար միջոց մ'ալ չը գտնալով, ուղեց նամակաւ մը գօթէլէկրուան Մարքօ Վիսքօնթիի զրկել, որն որ իր սիրուն համար՝ անշուշտ պիտի բարեհաճէր այնչափ ունեցած բերդերէն մէկուն մէջ զինքը գործի մը դնելու :

Ուստի նամակը գրելու համար մարդ զրկեց, որ պէտք եղածը բերէ, բայց անհաւատալի բան . . . բոլոր գեղին մէջ կաղամար մը, մագաղաթի եւ կամ թղթի կտոր մը չը գտնուեցաւ : Եկեղեցոց մեծաւորը հոգ չէր տարած գրականութեան, իսկ գեղին մէջի քանի մը մեծամեծք ու դեղածախը չէին գիտեր թէ գրիչն ո՛ւր նետեն : Այսու ամենայնիւ այս տարօրինակ դէպքը միայն դեղածախին ու Վարէնայի մեծամեծաց սեփական բան մը չէր . որովհետեւ ընդհանրապէս քիչ շատ ամեն տեղ ալ նոյն բանն էր, մասնաւանդ թէ՛ ոչ միայն Քօմօ լճին կողմերը՝ այլ բոլոր Նոտալիոյ եւ Ընականապէս նաևե բոլոր Եւրոպայի մէջ : Վասն զի այնպիսի դար մը՝ յորում ամենքը դաշտաց կամ բերդերու մէջ պատերազմի դրաղած էին ինչպէս կրնար գիտութեանց եւ գրականութեանց նպաստաւոր ըլլալ : Աերջապէս բաղէակիրն միտքն ինչալով ժամանակաւ հոն մտըր, Բէրլատօ գեղին մէջ բնակող փաստաբան մը, շուտով անոր վաղեց եւ քիչ ատենէն ամեն պէտք եղածովը գարծաւ : Սակայն անոր ալ կաղամարը տարիէ մը աւելի կեցած ու չորցած ըլլալուն, մեծ դժուարութիւն կրեցին քանի բանալու :



Երիտասարդը՝ Բէլէկըուայի համար Մարքօին գը-  
րելու ժամանակը, հարկ եղաւ որ գրոյն մէջ յայտնէ  
թէ Բնչպէս եւ Բնչ կերպով հարկադրած էր այս յան-  
ձնարարութիւնը իրեն ընել: Ուստի պատմեց նախ եւ  
առաջ իր զինակիրն մենամարտութենէն մինչեւ այն  
վերջի ատենները պատահած դէպքերը: Տէլ Պալցօ  
կոմսին վրայ ալ խօսք բանալով պատմեց թէ որչափ  
ատեն անոր բերդին մէջ հիւր կեցած էր եւ թէ քա-  
նի մը օր ալ դեռ հոն պիտի անցընէր: Վերջապէս  
պատմութիւնը Երանուհւոյն հասաւ: Եւ Բնչպէս որ  
բնական է մարդուս լեզուին՝ միշտ ցաւած ակոյալին  
վրայ տանիլ, նոյնպէս Օդօրինօն, իւր սրտին յուզ-  
մունքը քիչ մը աւելի բացայայտ եւ երկար կերպով  
նկարագրեց (որն որ խիստ աւելորդ բան էր), քանի  
որ ինքն ալ, չէր ուզեր իւր միտքը Մարքօի յայտնել:  
Վերջապէս օրիորդը աւելի ճշդիւ եւ կրցածէն աւել-  
ի գովելու համար, անոր խօսուածքը, ձեւերն ու  
բնութիւնը բոլորովին մօրը նմանցուց: Այնպէս որ՝  
բնութիւնը բոլորովին մօրը նմանցուց: Այնպէս որ՝  
այս խօսքերս վերջէն բորբոքելու կրակին՝ առաջին  
կայծերն եղան . . . : Մեր ճանապարհորդները նա-  
ւակ մը վարձելով մտան մէջը, եւ իրիկուան գէմհա-  
սան Լիմոնդա: Գեղացւոց սիրտն արդէն դողի մէջ էր՝  
որ չըլլայ թէ Ս. Ամբրոսիոսի արբան դարձեալ իրենց  
վրէժխնդիր ըլլայ, մենամարտութեամբ իրենց դատը  
չահելուն համար: մէկ կողմանէ ալ խեղճ Արիկօց-  
ցօի մահուան ցաւն ու միւս կողմանէ անոր ծնողացը  
սուգն ու աղաղակը, կերպով մը մոռցնել տուին ՚ի  
դարձին Լուբօյի պէտք եղած պատիւն ու մեծարանքն  
ընելու:

Մեծաւորը Լիմոնդա մնաց, իսկ միւսները առան-

ձին պատրաստ ձիեր հեծած՝ լեռնէն շիտակ դղեակն  
իջան: Երմէլինտա՝ իւր բնական քաղաքավարութեամ-  
բը, մեծաւ հաճութեամբ ու սիրով ընդունեց զերի-  
տասարդ հիւրը: Սակայն խիստ քիչ ատենէն տեսաւ  
որ թէ երիտասարդին եւ թէ Երանուհւոյն իրարու  
հետ տեսութեանը մէջ, խորհրդաւոր գաղտնիք մը  
կայ: Դիտեց քանի մը օրուան մէջ որ աղջկան վրայ  
սիրութիւն մը եւ պայծառ աչացը վրայ քող մը պա-  
տած էր: Դիտեց թէ նա՝ քանի որ Օդօրինօյի վրայ  
խօսք կըլլար, մօրը երեսէն երկչոտ կերպով եւ կար-  
մըրնալով մը աչքերը վար կ'առնուր. որով մօրն ալ  
սիրտը մեծ վախ մտաւ:

Ո՛չ թէ ինքն անպատշաճ կը համարէր զերիտա-  
սարդը իւր ընտանեացը մէջն ընդունիլ, վասն զի յի-  
րաւի չէր գիտեր թէ Բնչ կերպով աւելի մեծարէ զին-  
քը: Սակայն քաջ տեղեակ էր որ Մարքօ Վիսքօնթիի  
առաջարկութեամբ բաւական ժամանակէ ՚ի վեր Օդօ-  
րինօն՝ Յրանքինօ Ռուբօնի անուամբ Քօմօի մեծա-  
մեծաց մէկուն աղջկանը խոստացուած էր:

Իսկ կոմսին գալով, իր տանը մէջ Մարքօի պէս  
տեղակալի մը աշակերտ եւ հոչակաւոր ասպետ մը  
ունենալուն վրայ ինքզինքը երջանկութեան ծայրը հա-  
մարելով, չէր գիտեր Բնչ կերպով հետը վարուի որ-  
պէս զի հաճելի ըլլայ: Եթէ մօտ գեղերէն հացկերոյ-  
թի, որսի եւ կամ խնձոյից հրաւէր գար՝ միշտ Երա-  
նուհի կոմսին հետն էր առանց քայլ մը լրմէ զատվելու:  
միշտ աղջկանը կը պատմէր Օդօրինօի քաջութիւննե-  
րը, կը յիշեցնէր իրենց նաւաբեկութեանը ատեն ա-  
հաւոր ժայռերուն վրայ անցուցած այն քաղցր վայր-  
կեանները, զորս գուցէ Երանուհի մոռնալիք չունէր:



— Գեղեցիկ են ասպետին վարմունքը, կըսէր կոմսը, հիմակուան անմօրուսներուն պէս չէ, որք հագիւ խելահասած՝ կարծեն իմաստնոց պատգամ տար Տեսար հարցուց անգամ մ'ալ Երանուհոյն, երբ որ երեկ գիշեր Լուբօյի եւ Բամէնկոյի մենամարտութեանը վրայ կը փաստարանէի, թէ անտեղի կրնար սեպուիլ, ինչպէս այնչափ ժամանակ առանց բառ մ'արտաբերելու երկու ժամ ուշադիր եղաւ :

Եւ կոմսին ըսածս իրաւ էր . վասն զի ասպետը նոյն միջոցին աղջկան քովը գտնուելով, կրնամ ըսել թէ բոլորովին մտօք յափշտակուած, վանկ մը անդամ զըուցածներէն մտիկ ըրած չէր :

Իսկ թէ որ Երմէլինտա երբեմն յարմար միջոցով մը ուղեւար քանի մը խօսքով իմացնել կոմսին՝ թէ բռնած ճամբան աղէկ չէ, եւ թէ միանգամայն ուշադիր ըլլայ ներկային՝ որպէս զի ապագան կարենայ գուշակուիլ, զինքը իրբեւ խելագարի եւ երազողի մը պէս յանդիմանելով կը լռեցնէր : Խեղճը չը կարենալով նաեւ անձամբ Օդօրինօյի հետը խօսիլ, որովհետեւ կոմսը խստիւ արգիլած էր իրեն, ուստի ապահովապու համար հարկադրեցաւ անմիջապէս գաղտնի նամակ մը գրել Քօմօ, ասպետին վրայօք աղէկ մը տեղեկութիւն առնելու համար, եւ նոյն միջոցին ջանալու փորձել զաղջիկը որով եւ երիտասարդին տեսութենէն հեռացնել զինքը :

Երանուհի որքան ալ քիչ շատ յամառութիւն ունէր, այնքան ալ փափկասիրտ եւ բարեմիտ էր : Որովհետեւ միշտ աւելի յարգանք կը սիրէր ու կը մեծարէր իւր մայրը, թէպէտ նա շատ անգամ իրեն հետ խստիւ կը վարուէր, քան թէ զհայրը՝ անոր բոլոր

թոյլտուութեամբ հանդերձ : Աւելի կը վերադասէր մօրը մէկ ժպիտը, քան թէ հօրը մեծամեծ խոստումները :

Բայց Օդօրինօյի զղեակը մտնալէն 'ի վեր՝ Երանուհոյն այս յատկութիւնները կամաց կամաց կորսուեցան : Երմէլինտա իւր հաստատ ընտարութեամբը երբեմն քաղցրութեամբ եւ երբեմն խստիւ, միշտ իւր պատիւը կը պահէր . հսկելով աղջկանը վրայ, թէպէտ եւ հակառակ անոր կամայցը : Ասպետին անունը որքան հօրը բերնէն լսելով Երանուհոյն սիրտը ուրախութեամբ կը լեցուէր, այնչափ ալ երկիւղ եւ սըրտազոզ կը պատճառէր իրեն, երբոր մօրը բերնէն արտաբերուէր նոյն անունը : Որով կարելի եղածին չափ մօրը հետ առանձին գտնուելէն խոյս կուտար, եւ ասով յայտնի էր թէ օրէ օր մօրը վրայ ունեցած բռնածին սէրը կը կորսնցնէր : Այնչափ որ՝ երբեմն ինքն իսկ քննելով իւր վարմունքը, եւ բաղդատելով զայն առաջնոյն հետ, կը սոսկար եւ հաղար ու մէկ բարի առաջադրութիւններ կընէր . սակայն այսու ամենայնիւ միշտ փորձութիւնը աւելի զօրաւսր ըլլալով կը բաղթուէր :

Մինչդեռ այս երկդիմութիւնները բաւական տեսնէ 'ի վեր Տէլ Պալցօ կոմսին զղեկին մէջ կը շարունակուէին, յանկարծ օր մը Մարքօ Վիքթօթիի կողմանէ սուրհանգակ մը գալով իմացուց Օդօրինօյի թէ երկու օրէն անպատճառ զինքը կ'սպասէ Միլան քաղաքը :

Այս բանս Երանուհոյն երազ կ'երեւար, չէր կըրնար հաւատալ թէ իրօք Օդօրինօ պիտի երթայ : Այնչափ քաղցր էր իրեն անոր հետ կենալը, որ եթէ իր-



մէ բաժնուելու ըլլար, կը յուսար թէ երկու երեք ժամուան մէջ գարձեալ զինքը պիտի կարենար տեսնել, եւ միայն այս մտածմամբ բոլոր այն միջոցը կը մխիթարէր ինքզինքը: Իսկ թէ որ Օգոբինս իրօք երթալու ըլլար, թնշպէս պիտի անցընէին այն երկայն գիշերները . . . . .

Ձատոնք մտածելով, կը յիշէր այս մահահրաւէր հիւրին հետ տեսնուելէն առաջ նոյն գղեկին մէջ անցուցած քաղցր ու անմեղ վայրկեանները: Աչացն առջեւը կը ներկայանային իւր մայրը, իւր աղախինը, քրնարը, գիրքերն ու ծառայից խումբը: Սակայն Երանուհոյն սիրտն ամենեւին չէր համապատասխանէր սոյն պատկերաց ժամանակաւ իր վրայ ունեցած զօրաւոր ազդեցութեանցը: Հիմայ կը նմանէր գեղեցիկ սակայն թէլէրը կոտորած դաշնակի մը՝ որ ամենեւին ձայն չի տար:

Երկրորդ առաւօտը՝ որ Օգոբինսի բաժնուելուն յառաջընթաց օրը պիտի ըլլար, կոմսն առաջարկեց որ բազէի որսի երթըցուի: Բնականապէս Երանուհին ալ այս հանդէսէն զուրկ չի պիտի մնար: — Կուզեմ որ իմ թռչնոցս խոյանալը տեսնաս, կ'ըսէր կոմսն Օգոբինսի, եւ այնպէս կարենաս ըսել թէ՛ արդեօք Մարքօ Վիսքօնթի ռենեցածները կրնան ասոնց հետ բազդատուիլ: Տեսնաս պիտի Երլանտիոյ, Նորվէկիոյ եւ Տանիմարքայի հաւալուաներս. իսկ շուներուս արագընթաց շարժմունքն ու արթնութիւնը տեսնալու արժանի բան մ'է: Վերջապէս պիտի տեսնաս նաեւ բուն իմ կրթած բազէս ալ՝ որ անգին դանձ մ'է:

Նոյն օրը Քօմօէն նամակ մ'եկաւ, որուն վրայ Երմէլինտա երկար ատեն կոմսին հետ փակուած խօ-

սակցեցան: Իսկ Երանուհի, իր խուցէն՝ ուր առանձնացած էր աղախնոյն հետ, մտիկ ընելով ծնողացը տագնապաւ ու բարձր ձայնով խօսակցեցին, խիստ լաւ կրցաւ դուշակել ու իմանալ իրենց վիճելունն նիւթն ու պատճառը: Ուստի բոլոր օրը մինչեւ սեղանի ժամանակ խուցէն չեկաւ: Սեղանին վրայ դիտեց որ մայրը լուռ եւ սրտում ու երբեմն ալ իր երեսը այնպէս կը նայէր, իբրեւ թէ իրեն գաղտնիք մ'ունենար յայտնելու. որով Երանուհի եւս առաւել վախնալով մօրը հետ տեսնուելու, եւ պատճառ բերելով թէ առաւօտը կանուխ պիտի ելլէ որպէս զի որսի երթայ, դարձեալ իր խուցը քաշուեցաւ: Խուցին դռնէն ներս մտածին պէս, կարծես թէ ինքզինքը ժողվելով հայեւլի մը դիմաց նստաւ, եւ Նաուրէդայի հրամայեց որ մազերը ժողվէ շուտով պառկելու համար: Հազիւ թէ աղախինը անոր մազերը հիւսած, զգեստները հանուեցնելու կ'սկսէր, յանկարծ դուռը դուրսէն դարնուելով Երմէլինտայի ձայնը եկաւ. — Բաց կ'ըսեմ. — Այն ատեն Երանուհի հրամայեց աղախնոյն որ դուրս ելլայ՝ որն որ իսկոյն քովի խուցերուն մէկը գնաց:

Աղջիկը մինակ գտնուելով մօրը հետ, իր այլայլութեանէն կ'ուզէր դեանին տակն անցնիլ, եւ առջեւը նայելով՝ կ'սպասէր թէ արդեօք թնշ պիտի լսէ:

— Երանուհի, կը տեսնեմ որ իմ ներկայութիւնս զքեզ կը նեղէ, շատ կը ցաւիմ, սակայն քեզի համար է միայն իմ ցաւելս:

Աղջիկն ուզեց պատասխանել, սակայն հազիւ թէ առանց իմաստի քանի մը բառ կրցաւ թոթովել, ու լուեց:

— Ամենեւին չէի յուսար թէ մօրդ ներկայութիւ-



նը քեզի այսչափ երկիւղ պատճառէ , յառաջ կը բերէր Էրմէլինտա , իրաւ է թէ ժամանակէ մը 'ի վեր ինծի հետ ունեցած վարմունքիդ վրայ մեծ փոփոխութիւն կը տեսնեմ . առաջուան իմ վրաս ունեցած սէրդ չունենալով հանդերձ՝ իմ աղէկութեանս անդամ չես փափաքիր : Սակայն ամենէն զարմանալին այն է թէ՛ իմ ներկայութիւնս զքեզ կը դողացընէ , որն որ զքեզ սիրողի մը համար խիստ մեծ ցաւ է :

— Ես չեմ դողար , եւ ինչո՞ւ համար պիտի դողամ , պատասխանեց երանուհի ցասմամբ մը , եւ դիմացն այլայլութիւնը բնականէն դուրս բարկութիւնը կը յայտնէր :

— Երանուհի . . . դու մօրդ մայքան անարգագանօք կը պատասխանես , ըսաւ մայրը հաստատ ձայնով մը : Բայց վերջին գալիք ու մեծագոյն չարեաց առաջքն առնելու համար լռեց , եւ աղջկանը մէկ ձեռքը բռնելով , — մտիկ ըրէ , սիրելիս , ըսաւ , մօրդ հետ այսպէս մի խօսիր . միթէ կրնամ յուսալ թէ ես աշխարհքին վրայ զքեզ երջանակացընելէն զատ ուրիշ մտածմունք մ'ունենամ : Ես քեզմէ ուրիշ գանձ մը չունիմ , դու ես միայն իմ միտքարանքս : Ա՛հ , եթէ կարենայիր իմ սրտիս ցաւն զգալ՝ զքեզ այս կերպով կշտամբելու հարկադրուելուս համար , սակայն երբոր իմ ծնողական պարտուցս պահանջմունքն է եւ միանգամայն քու բարեացդ համար , պէտք է որ քեզի հետ այսպէս վարուիմ : Կը յիշես արդեօք , սիրելիս , երբ որ աղայութեանդ ատենը հիւանդ էիր եւ օր մը կաթ ուզելով կ'ուրայիր , եւ ես ալ քեզի մահաբեր ըլլալուն համար չի տուի , մի գիտէ թէ այն ատեն մտքեդ ինչ անցուցիր : սակայն հիմայ դու ալ կըտեսնաս թէ . . .

— վերջապէս ինչ կ'ուզէք ըսել , հարցուց Երանուհի , կէս մը ցասմամբ եւ կէս մ'ալ սիրտը կակղանալով :

— Ըսել կ'ուզեմ թէ . . . սակայն այնպէս սպառնալից պիտի մի նայիր քու մօրդ , չէ , աղնիւ աղջիկս չէ . դու ոչ երբէք մօրդ բերնէն դառն խօսք մը պիտի լսես . քովս եկու եւ հեղութեամբ մտիկ ըրէ , տես թէ մայր մը ինչպէս սիրով կը խօսի իւր աղջկանը հետ . . . վաղը Ծղօրինօն կ'երթայ . . . :

Սրիորդն՝ Ծղօրինոյի անունը լսելուն պէս , կարծես թէ արիւնը երակներուն մէջ սառեցաւ : Սակայն ինքըղինքը կրցածին չափ երեսանց անտարբեր ցուցընելով՝ պատասխանեց . — այո գիտեմ , բայց անոր երթալն ինծի պէտքը բան մը չէ :

— Մանաւանդ թէ ամենապիտանի , նախ քու եւ ապա իմ հանգստութեանս համար , վրայ քերաւ Էրմէլինտա խտուրթեամբ մը , թող այդ կեղծաւորութիւնը եւ մի կարծեր թէ կարենաս ծածկել զաղտնիք մ'անկէ՛ որ սրտիդ խորը կարող է կարգալու :

— Երջապէս հօրս հնազանդելէն զատ ինչ ըրած ունիմ :

— Այո , դու այս օրերս առաջուրնէ աւելի հօրդ միայն հնազանդ էիր . ժամանակաւ երբեմն ալ իմ խորատենբուս կ'անտայիր առանց անոր կամքն ալ կոտրելու . այնպէս կը վարուէիր որ . . . բայց ինչ եւ իցէ , հիմայ իմ նպատակս զքեզ վշտացնել չէ , դու ալ չէիր կարծեր թէ իմ սիրտս այսչափ պիտի ցաւէր . . . կրցանք հաւատալ . . . յիրաւի կրնայ ըլլալ որ մասամբ յանցանքն իմն ալ ըլլայ , ժամանակաւ քեզի հետ պէտք եղածին պէս չի վարուելուս համար . . . ես ալ կը յուսայի . . . բայց հիմայ ստուգիւ գիտեմ թէ . . . :



— Գիտցածնիդ թնչ կրնայ ըլլալ, հարցոց աղ-  
ջիկը, աչքերը մօրն աչացը մէջ յառելով, կարծես թէ  
անոր չրթանցն արտաբերելու պատասխանին իմաստը  
կուղէր առաջուց դուշակել :

— Գիտե՞մ թէ Օդօրինօ . . . վերջապէս դու ալ  
պէտք չէ որ այսուհետեւ զինքը մտածես, վասն զի  
ինքն արդէն խօսք տուած է ու քիչ ատենէն ծրան-  
քինօ Բուքրօնի անուամբ ֆօմօյի մեծամեծաց մէկուն  
աղջիկը պիտի առնէ :

Երանուհունյն երեսը կարմիր եւ փայլուն կայծի  
գոյն մ'առնելն ու վերջն ալ դալկանալը մէկ եղաւ :  
Այսու ամենայնիւ դարձեալ շանաց ինքը ինքը ժող-  
վել . դեղեցիկ աստեղ գողգոջուն լուսին նման ժպիտ  
մը հոսցուց, ու վերջապէս կրիցը բռնութենէն յաղ-  
թուած՝ սկաւ արցունք թափել :

Երմէլինտա՛ այս արտասուեաց մէջ կրցաւ կար-  
գալ իւր աղջկանը ամօթխածութենէն ծածկեալ կրիցն  
ամբողջ խոտտովանութիւնը : Աստի Երանուհունյն գը-  
լուիւր գրկեց ու մայրական քաղցր համբոյրերով ա-  
նոր անմեղ ճակատը պսակելով կրսէր : — Այո՛, ար-  
տասուէ սիրելիք իմ, արտասուէ քու մօրդ հետ . . .  
մի կարծեր թէ ես քու վիճակդ գիտնալով՝ վրադ  
դուր չ'ունենամ . միթէ կրնամ յուսալ թէ ես քեզմ'  
աւելի քու բարեացդ չը փախաքիմ . չէ, իմ ազնիւ  
աղջիկս, չէ . մի տարակուսիր . . . : Մանաւանդ ե-  
թէ կարենայիր սրտիս խորը թափանցելով գիտել թէ  
քեզի պէս սիրուն եւ հնազանդ որչոյ մը արտասուքն  
ինչպիսի ազդեցութիւն կրնէ . . . : Երանուհի՛ այս  
սրտասուղիս ու զգացուն խօսքերէն ընկճուած, նեա-  
ուեցաւ մօրը գիրկն ու երեսն անոր սիրայիւր կուրծ-

քին դրած, դառն արտասուօք կը գրկէր զինքը :  
— Այժմ դու իսկ կը տեսնաս, կ'ըսէր Երմէլին-  
տա, աչքերը լեցուած, թէ այսուհետեւ քեզի պատիւ  
չէ անոր հետ մինակ տեսնուիլն առաջուան պէս : Իսկ  
թէ որ յայսմ մասին մինչեւ հիմայ հօրդ քեզի տուած  
թոյլտուութիւնը պատճառ բերես, սակայն դու ալ քու  
տկարութիւնդ ճանչնալով պէտք է ետ կենաս . վեր-  
ջապէս բաղդն այնպէս կը պահանջէ՝ որ դու այսուհե-  
տեւ Օդօրինօն հեռանաս : Ասողը՝ ինք բոլոր օրը  
դուրսը պիտի անցնէ, իսկ դու ինծի հետ տունը պի-  
տի կենաս, միւս օրն ալ կ'երթայ ու փորձութիւնդ  
կը վերնայ . . . եւ այս գաղտնիքն ալ երկուքներնուս  
մէջ մնացած կ'ըլլայ : — Ա՛ռգէր նաեւ Երմէլինտա խը-  
րատել զԵրանուհին թէ ինչ պէտք էր պատասխանել  
հօրը՝ եթէ առաւօտը կանուխ որսի երթալու համար  
արթնցնելու ըլլար . սակայն նոյն վայրկենէն դուր-  
սէն կոմսին ոտքի ձայնն առաւ, եւ չուղելով միան-  
գամայն որ ան ալ այս գաղտնեաց տեղեակ ըլլայ, Ե-  
րանուհունյն թեւերը քակելով վերջին համբոյր մ'ալ  
տուաւ ու, — հայրդ կուգայ, եւ առ այժմ պէտք է  
երթամ ըսելով, դռնէն դուրս ելաւ :

Երանուհի բաւական ժամանակ մօրը ձգած վի-  
ճակին մէջ մտանծմանց դառնելէն վերջը, կանչեց իւր  
աշխիսնը որ զինքը հանուեցնէ : Լաուրէզա իւր տե-  
րուհին յուղեալ վիճակի մը մէջ գտնալով բան մը չը  
խօսեցաւ . մինակ զինքը անկողինը դնելէն վերջը,  
ըստ իր սովորութեանը՝ հարցուց թէ մը գէրքը կ'ու-  
զէ կարդալու համար . դարձեալ կրսէր, սա սատա-  
նայից եւ գատապարտեալ հոգւոց գիրքը տամ, զոր  
չատ կը սիրես :



— Բան մը չեմ ուզէր , վարագոյրները քաշէ , ճը-  
րագը մարէ ու դուրս ել :

— Անշուշտ վաղն առաւօտ արշալոյսին պէտք է  
է զքեզ արթնցնեմ , որպէս զի ժամանակին որսի եր-  
թալու պատրաստ գտնուիս :

— Չէ , մինչեւ որ զքեզ չը կանչեմ , խուցս մի  
մտնար :

— Ուրեմն , ինչ զղւատ պատրաստեմ վաղուս  
համար . . . :

— Քեզի չէ՛ ըսի , դուրս ել ու զիս հանգիստ ձգէ :  
Աղախներ ինքնիրեն՝ այս գիշեր ծովն ալեկոծ է  
ըսելով հնադանդեցաւ տիրուհւոյն հրամանին :

Ուստի Երանուհի մինակ մնալով եւ բոլորովին  
իւր վշտաց բեռին տակն ընկնուած , բերանը բարձին  
երեսին դրաւ , որպէս զի արտասուելուն ձայնը չը  
լսուի : Պառկած անկողինը իրեն վշալից վերայ մը  
երեւնալէն զատ , որ եւ է կերպով ալ , ամենեւին հան-  
դըստութիւն չէր կրնար գտնել : Երբեմն կ'ելլար ու  
քիչ մը շունչ առնելու համար անկողնոյն մէջը կը նըւ-  
տէր . սակայն դարձեալ գլուխն անկողնոյն վարագոյր-  
ներէն ներս առնելով՝ կ'սկսէր անմխիթար ողբալ :

Աչացն առջեւը կուգային Օղորինս եւ Բուսքո-  
նիին աղջիկը . երկուքն ալ երկու փառաւոր երկվա-  
րաց վրայ հեծած եւ իրարու հետ խօսակցելով Քօմօ  
գետին եզերքը կը պտըտէին . . . : Որչափ ալ ամե-  
նայն ջանք կրնէր այն պատկերներն իւր երեւակա-  
յութենէն հեռացնելու , երբեմն միտքն ասղիս անդին  
ցրուելով՝ քիչ մը անցնալին եւ քիչ մ'ալ ապագային  
վրայ խորհելու , որոց մէջ դուցէ կարենար գտնալ  
կէտ մը եւ կամ լաւ եւս , բլրոյ գագաթ մը , ուսկից

կարող ըլլար յուսոյ մը շառաւիղը նշմարել : Սակայն  
իրեն համար անցեալն ու ապագայն միանգամայն դառն  
մեռած ու հաւասար էր : Երանուհի , իւր կենացն ու  
աշխարհիս մէջ վերջ մը կը տեսնար , եւ միտքն ալ  
այլ եւ այլ կերպով դըրողեցնելու համար ըրած ճիգն  
ու փոյթը՝ ամենեւին պարապ բան էր . վասն զի միշտ  
դարձեալ նոյն առջի անհանգիստ վիճակէն հեռանալն  
իրեն անկարելի էր : Որովհետեւ այն երկու անագո-  
րոյն ճիւղերը՝ եթէ վայրկեան մը առջեւէն անե-  
րեւոյթանային , անմիջապէս երկրորդ վայրկեանին , ա-  
նառիկ բերդի մը վրայ յարձակող զօրաց խուսիկ նը-  
ման՝ եւս առաւել անգուլթ կերպով կը վերադառնա-  
լին Երանուհւոյն աչացն առջեւ հանգիստանալու : Վեր-  
ջապէս այս անտանելի չարչարանքէն հոգնած , Երա-  
նուհի ինկաւ խորին ու բոլորովին երեւակայական ե-  
րազներով լեցուն ջուհի մը մէջ :

Բայց ինչ զարմանք , երբոր առաւօտն արշալու-  
սին մօտ քունէն արթնցաւ , առանց պատճառն ան-  
գամ իմանալու գտաւ սրտին մէջ հանգիստ մը , յոյս  
մը ու ապաւէն մը . գտաւ նաեւ մտացը մէկ անկիւ-  
նը , ուր կարծես թէ ժամանակէ մը 'ի վեր ծածկուած  
էր նորածին խորհուրդ մը՝ որուն կերեւայ թէ իւր  
կրից սաստկութեանը ժամանակ չէր կրցած սահման  
մը աալ : Սակայն այս խորհուրդը քունին մէջ սակաւ  
առ սակաւ հաստատուն ձեւ մը առնելով՝ Երանուհ-  
ւոյն սրտին մէջ բորբոքած նոր կրակը մարելու առիթ  
մը պիտի ըլլար :

Խորհուրդն այս էր թէ , առջի գիշեր մօրը Օղօ-  
րինսոյ վրայօք ամբողջ ըսածները սուտ կրնային ըլ-  
լալ , որով նաեւ պէտք չէր բոլորովին յուսահատիլ :



Նրանուհի այնչափ ճշմարտասէր ու բարեօրոտ ըլլալովն հանդերձ, միանգամայն ըրած երգմունքներէն ալ վերջը, դարձեալ կասկածելով մօրը վրայ կ'ըսէր ինքնիրէն, — կրնայ ըլլալ արդեօք . . . : Այսու ամենայնիւ առաջուան խորհուրդներն ալ միտքն անհանգիստ ընելով, կուզէր ինքզինքն ապահովցնել, բայց ինչ կերպով : Եթէ կարենար հօրը հետ առանձին տեսնուիլ, առանց իր տարակուսած կէտին վրայ անոր կասկած մը տալու, լաւ տեղեկութիւն պիտի կարենար առնուլ, միայն թէ հայրն՝ առաւօտը կանուխ որսի երթալու չըլլար :

Սակայն ինչպէս ալ մինչեւ իրիկուն այս խաչին վրայ պրկած պիտի կարենար կենալ . . . : Անկարելի էր նաեւ հօրը դառնալէն վերջը հետն առանձին տեսութիւն ընելը, քանի որ Օդօրինօ հետեւեալ առաւօտուն կանուխ ճամբայ պիտի ելլար : Ուրեմն միտքը դրաւ որ ելլայ պատրաստ զանուի հօրը զինքը կանչած ժամանակին . եւ մինչդեռ ուրիշները տակաւին ճամբայ ելլալու պատրաստութեան ետեւէ են, ինք կերպով մը փորձէ զհայրը իւր նպատակին հասնելու : Սակայն մօրն ալ բոլորովին անհնազանդ չը գտնուելու համար, հաստատապէս առաջադրեց որ ինքն ամենեւին որսի չերթայ հօրը հետ :

Ուստի կանչեց Լաուրէդան, որպէս զի զինքը հադուեցնէ : Աղախինն ալ իրիկուրնէ պատրաստած բոլոր որսի զգեստները հազցուց, որուն նրանուհի բոլորովին իւր մտածմունքներէն յափշտակուած՝ ամենեւին ուշադրութիւն չէր ըրած : Նրբոր հօրը ձայնը լսեց, շուտ մը դուրս սրահը վազելով զինքն մինակ գտաւ : Կոմսն ալ զաղջիկը դիմաւորելով. — ա-

մեն բան պատրաստէ, ուրեմն երթանք աղջիկս ըսաւ :

— Նրանուհի շփոթելով մը, ես միայն քեզի բարի լոյս մաղթելու, եւ ոչ թէ հետդ որսի գալու համար դուրս ելայ, պատասխանեց :

— Գարձեալ խնդութեան մի սկսիր :

— Չէ, պատասխանեց աղջիկը, զէմ գնելով հօրը ձեռքին, որ զինքը դուրս տանելու պէս կը քաշէր, թող զիս եւ քիչ մը նստէ, քեզի երկու խօսք ունիմ ըսելիք :

— Այսօր մինչեւ իրիկուն որսի ատեն հետս չես, ուստի չէ թէ երկու՝ հապա հազար խօսք կրնաս զրուցիլ . երթանք հիմայ քանի որ ամեն բան պատրաստ է :

— Ես արդէն ըսի թէ ձեր հետը չը պիտի գամ, տունը պիտի կենամ :

— Ես ալ քեզի կըսեմ թէ մեր հետը պիտի գաս ու տղայութիւնը մէկզի ձգես :

Մինչդեռ կոմսն ու Նրանուհին այս հակաճառութեան վրայ էին, Օդօրինօ սրահէն ներս մտաւ, ու յետ սովորական փոխադարձ առաւօտեան բարեմաղթութեանց, ասպետը հօրը հրամանաւն աղջկան հետ միատեղ իջան վայրագաւիթը, ուր բազէակիր մը իրենց կ'սպասէր : Նրանուհի, որչափ ալ առաջին անգամ կարծես թէ դիւթական զօրութենէ մը յափըշտակուած ընդդիմութիւն չը ցուցուց, սակայն նոյն վայրկեանին յիշեց մօրն իրեն տուած պատուէրը : Այսու ամենայնիւ ինչպէս պէտք էր կամ կարելի էր ետ կենալ, քանի որ որսի զգեստներով ու կանուխ ամենուն հետ պատրաստ զանուած էր, ինչ ըսեք . . . : Թէ իրիկուրնէ 'ի վեր որսի երթալու միտքը փոխած



էր . . . բայց ինչպէս եւ ինչ պատճառաւ . . . միշտ հարկ կըլար պատճառ մը ցուցնել : Այնպէս որ նոյն վայրկեանին միտքը բոլորովին վարանելով բառ մ'անգամ չը կրցաւ արտաբերել :

Իսկ Օդօրինօ, մօտենալով Երանուհւոյն համար պատրաստուած երիվարին, առաւ ծառային ձեռքէն սանձերն ու Երանուհւոյն տուաւ : Յետոյ մէկ ծուկէ կը գետինը դնելով միւսն ալ աղջկան գեղեցիկ ոտիցը պատուանդան կազմեց . որն որ հազիւ հազ ոտքին ծայրովն դպչելով, թեթեւութեամբ մը ցատկեց ելաւ ձիուն վրայ :

Կոմսն ալ ընտանեբար ասպետին թեւը մտնալով, ճամբայ ելան ծառայից ու բաղէտկրաց խումբին հետ որոնց յանձնուած էին նաեւ որսի շուները եւ թըռչունները :

Տէլ Պայցօ կոմսը, ճամբուն վրայ սկսաւ իւր որսի շուներուն ու բաղէտիցը դովեսան ընել Օդօրինօյի, որն որ ընթերցողը կրնայ գուշակել թէ ինչ սրտով կրնար մտիկ ընել, մինչդեռ կը տեսնար Երանուհւոյն տխուր դիմօք, եւ առանց իրեն երեսը նայելու կամ հետը խօսելու քովէն գալը :

Ասպետը քանի մը անգամ աղջկան տկարութիւն մը եւ կամ բանի մը պէտք ունենալը հարցնելէն վերջը, երբոր տեսաւ թէ գոհացուցիչ պատասխան մը չը պիտի կարենայ առնուլ, խօսակցութեան կերպը քիտիելով սկսաւ եղանակին մեղմութեանը եւ օգուտ գեղեցկութեանը վրայ կարճաբօտ կերպով խօսիլ ու հարցումներ ընել :

Սակայն երբոր տեսաւ թէ իր ամենայն յարգանք ու քաղաքավարական վարմանցը փոխարէն դար-

ձեալ Երանուհի, իւր միջատեալ պատասխաներովը չուզէր յայտնել իւր տխրութեանը պատճառը, ինք ալ հարկադրեցաւ լռել :

Գրեթէ երկու ժամ ճամբորդութենէ վերջը, հասան չազանակի անտառի մը բերանը, ուր ծառայք շուտ մը շուներն արձակեցին, որոնք սկսան քթերնին գետին, աղատ ու ասդիս անդին հոտոտելով ցատկըրտել, մինչդեռ Ամպրօծիօ եւ ուրիշ ծառայք բարձրաւանդակի մը վրայ կ'ելլէին՝ ուսկից խիստ լաւ կ'երեւար անտառին չորս կողմը :

Հազիւ թէ բլրին դազաթն էին հասած, կոմսը Երանուհւոյն դառնալով. — Նայէ Տիանային, ինչպէս կը հոտոտէ, ու մատովը կը ցուցնէր շուներէն մէկը որ պոչը տնկած ու քիթն ալ գետինը դէպ իրենց կ'ուզար . . . նայէ ինչպէս կեցած կը դիտէ . . . ահաւասիկ լորամարզի մը . . . շուտ արձակէ բազէ մը . . . չուտ ըրէ, ինչո՞ւ այս առաւօտ դանդաղեր ես . . . թող որ թռչի, ալ նա տեսաւ իւր որսը . հա՛, սանկ, Նայէ ինչպէս կը յարձակի, ալ ասպանով եմ թէ չի պիտի փախցունէ . տես ինչ կերպով կ'իջնայ որսին վրայ . . . ահա, ահա, վերջապէս բռնեց :

Եւ յիրաւի թռչունը որսին հետ միատեղ կայծակի պէս որսորդաց խումբին վրայ իջաւ : Կոմսը մէկէն վաղեց բազէին ճիրաններէն բերած որսն աղատելու համար. իսկ Օդօրինօ նոյն միջոցին ժամանակ զըտնալով, դարձեալ մօտեցաւ Երանուհւոյն քով եւ յուզուած կերպով մը. — Ատուճոյ սիրուն համար ըլլայ, ըսէ ինչ ունիս . . . եթէ զքեզ արտմեղընելու պատճառ մը տուած եմ, զրուցէ, զիս մի՛ չարչարեր : Երանուհի, կ'աղաչեմ քեզի, գիտես թէ վաղը հարկա-



դըրեալ եմ դքեզ թողլու . . . : — Գիտեմ, ընդմիջեց օրիորդը, դառն ժպիտով մը, գիտեմ թէ վաղը պիտի երթաս, մանաւանդ թէ մայրս ինձի ըսաւ թէ չիտակ ֆոմօյի ճամբով պիտի երթաս, զոր ցայժմ ինձմէ կը պահես եղեր . . . :

Ապա ետք կարմրելով . — մտիկ ըրէ, ըսաւ, արդարեւ չեմ կրնար ժխտել . . . սակայն ան ատեն տակաւին դքեզ տեսած չէի . . . բայց քեզի . . . իմ պատուոյս վրայ կ'երդնում, Երանուհի, կ'երդնում որ գու ես միայն . . . — հոս խօսակցութիւննին ընդմիջեցաւ կոմսին վրայ հասնելովը, որ կը կանչէր բողբոջակրին . — Լաւ բռնէ, դարձեալ տեղը գիր :

Երանուհի ասպետին խօսուածքէն, եւս առաւել իր յուզմունքէն, համոզուեցաւ թէ մօրը ըսածները ճշմարիտ են եղեր . . . : Այս գծրադդ ստուգութեան վրայ, Երանուհի յանկարծ խելքը կտրուածի պէս եղաւ . սակայն շուտ մ'իջնիրեն գալով ու միանգամայն վատութիւնը իրեն մեծ ամօթ համարելով, կարծես թէ նոյնժամայն իւր առաջին փառքն ու պատիւը միտքն ինկան : Ուստի նոյն վայրկեանէն սկսաւ ուշ դընել շունեքուն ու բաղէից շարժմանցը, իբրեւ թէ վերաւի որսորդութեան ամենայն կերպերն ու արհեստը գիտցած ըլլար : Մինչեւ իրիկուն հօրը քովէն չը գատուեցաւ եւ ոչ ալ Օգօրինօի հետ տեսնուեցաւ : Այնպէս որ նոյն աւուր ասպետին վայելելու բոլոր զուարճութիւնը դառնացուց :

Երկրորդ առաւօտը, Օգօրինօ Լուբօի հետ միատեղ ճամբայ ելան դէպ 'ի Միլան : Նոյն օրը մինչեւ իրիկուն Երմէլինտայի ծանր ու խիստ կերպերը եւս առաւել աղջկան բարկութիւնը շարժեցին առանց իր

յանցանքը ճանչցընելու : Ուստի ինքն ալ ամենուն հետ դժկամակելով երեկոյեան կերակրէն անմիջապէս վերջը պառկելու գնաց : Իսկ աղախինը՝ վախնալով որ չլայ թէ փոթորիկն իր գլխուն պայթի, առանց ճրագն անգամ մարելու խուցէն դուրս փախաւ :

Երանուհի իւր անկողնին մօտ ստոլի մը վրայէն մագաղաթի վրայ գրուած ու կաշեկազմ, Տանդէի դժոխքի նկարագրութեան մէկ հատորը առաւ, զոր առջի գիշեր Լաուրէզան սատանայից եւ դատապարտեալ հողոց գիրք ըսելով կուղէր իրէն տալ կարգալու համար :

Այս ընթերցմունքը Երանուհի մօրմէն դադարուկ կ'ընէր . նոյնպէս ալ կոմսն երկար ժամանակ այս բանիս դէմ կէցած էր : Սակայն ոչ երբէք համարելով թէ Տանդէի այս գեղեցիկ գործն աղջկանը բարքին կըրնար վնասել այլ միմիայն ատենօք իրեն Տանդէի հետ ունեցած մէկ դժտութեանը համար :

Աերջապէս կոմսը, Օգօրինօի իւր դղեակը դաշէն հաղիւ քանի մը օր առաջ հաւանած էր այս հատորն Երանուհոյն տալու, որն որ գործոյն մինակ առաջին երգն էր : Երանուհի իւր խուցը առանձնացած ժամանակը կարդալով անմահ հեղինակին երեւակայեալ ու լի դգացմամբ նկարագրութիւնները, չէր կրնար իւր դգացմունքը յագեցնել, ինչպէս որ բնական է Աղամայ որդոց համար՝ միշտ արգելեալ պըտղէն ուտելու հաճօքը :

Ուստի ինչպէս որ ըսինք, աղջիկը գիրքը ձեռքն առաւ, սակայն բանալուն պէս՝ մէջէն բան մը սահելով գետին ինկաւ . . . Ընչ կրնար ըլլալ, թուղթ մը . . . նամակ մը իրեն համար . . . բայց ո՛ւսկից . . . ասիկայ դժուարագիւտ հանելուկ մ' էր իրեն . . . :



### ՔԼՈՒԽ Է.

Ընթերցողը անշուշտ կը յիշէ կոմսին Պէլլանօյէն գառնալու ատենը, նաեակին մէջ Մարքօ Վիսքօնթէին ժամանակաւ Էրմէլլինտան ուղեւուն ու վերջն ալ այլ եւ այլ պատճառներով ետ ձգուելուն, եւ հետեւաբար իրենց մէջ պատահած թշնամանացը վրայ Սգօրինօի ըրած կարճառօտ նկարագրութիւնը, Երանուհի որչափ ալ այս պատմութեան ունկնդիր եղած էր, սակայն մանրամասնաբար դործին տեղեակ չըլլալով, հետաքրքրութիւնը շարժած էր կէտ առ կէտ այս պատմութիւնն իմանալու: Եւ դուրսէն մէկու մ'ալ հարցնեն իրեն անպատշաճ սեպելով, շատ անգամ առաջարկած էր բազէակերին աղջկանը Լաուրէզային, որ իւր մօրը պատմել տայ այս պատմութիւնը: Որովհետեւ այն կինը իւր սղայութենէն 'ի վեր մօրը ծառայութեան մէջն ըլլալով, 'ի հարկէ ամենայն ճշգրտութեամբ այս գաղտնեաց պէտք էր տեղեակ ըլլալ:

Լաուրէզա, որ միշտ իւր տիրուհոյն սիրուն համար ամեն բան կը զոհեր, միայն սնոր կամքը կատարելու վախազով, եւս առաւել հիմայ՝ որ մինչեւ անգամ իւր կեանքը կը գներ, որպէս զի զՆրանուհին կերպով մը մխիթարելով անոր տխուր մելամաղձօտութիւնը վարատէ, մօրը ետեւէն ինկաւ պաղատելով որ տիրուհոյն այս խնդիրքը կատարէ: Ան ալ քանի մ'անգամ այս օրուան վաղուան ձգելէն վերջը, գիշեր մը՝ որ մինակ մնացեր էին, յետ երկայն յառա-

ջաբանի մը՝ թէ իրենց պէտքի բան չէ, եւ թէ չըլլայ որ ուրիշի պատմեն, վերջապէս սկսաւ պատմութիւնը ընել հետեւեալ կերպով:

Էրմէլլինտայի հայրը Միմէօն Քրիվէլլօ, Մարքօյի հօրը հետ մտերիմ բարեկամ ըլլալով, մէկ մէկու տունէն պակաս չէին՝ նոյնպէս ալ իրենց որդիքը. եւ ինչպէս որ զիրար սիրելը մարդուս բնական է, Մարքօ խօսք տուած էր տիրուհոյն որ զինքն իրեն կին առնէ: Երիտասարդութիւնը միշտ առանց բանի մը վերջը խորհելու կ'աճապարէ. . . պէտք էր նաեւ իմանալ թէ՛ արդեօք ծնողքն ալ կը հաւանին այս խնամութեան: Եթէ բանը միայն Քրիվէլլօյի մնար, շատոնց եւ ամենայն սիրով յանձնատու կ'ըլլար: Սակայն Մարքօյի հօրը Մաթէոս Վիսքօնթէի գալով, որ հօօր եւ այն ատենուան Կաթիլոյ մեծամեծներէն մէկն էր, անկարելի էր որ այս առաջարկութեանս հաւանի, վասն զի նա իւր որդիքը՝ միայն թագունհեաց արժանի սեպած էր: Ուստի այս դործը՝ առանց դոհացուցիչ վերջ մ'ունենալու, գրեթէ տարի մը երկարեցաւ: Տեսէք որ՝ եթէ Էրմէլլինտա առաջուց մօրը հարցուցած ըլլար, խեղճ կինը բնականապէս Մարքօյին հօրը բնաւորութիւնը լաւ գիտնալով, անշուշտ իրեն պիտի ըսէր թէ առաջարկածն անկարելի բան մ'էր. սակայն ինչպէս որ ըսի, երիտասարդութիւնը միշտ իր գործունէութիւնը ինք կը գովէ. . . :

— Վերջապէս ինչ եղաւ, հարցուց Լաուրէզա անհամբեր կերպով մը:

— Ան եղաւ որ, օր մը կէս գիշերուան մօտ Թօրէացիք գալով, բոլոր Վիսքօնթիները Միլանէն վերջն տեղեցին. եւ վերջն ալ յայտնուեցաւ թէ տիրուհ-



ւոյս հայրը՝ որ մեծ բարեկամութիւն ունէր Մատթէ-  
ոս Վիսքօնթիին հետ, խռովարարաց գլխաւորներէն  
մէկն է եղեր:

— Տէր Աստուած, ուրեմն ըսել է որ միմիայն  
վրէժխնդրութեան համար ձեռնարկած է եղեր գոր-  
ծին, այնպէս չէ:

— Այդ յայտնի է: Վերջն ալ վախնալով որ չը-  
լայ թէ Երմէլինտա ո եւ է կերպով Մարքօի հետն ա-  
մուսնանայ, սկսաւ զաղջիկը ստիպել որ կոման առնէ,  
քանզի նա արդէն ուրիշ ատեն ալ ուզած էր զինքը:  
Կրնաս երեւակայել Երմէլինտայի ցաւալի վիճակը...  
տանը մէջ գժտութիւն եւ խռովութիւն պակաս չէր,  
այնպէս որ տիրուհիս գիշեր ցորեկ արտասուելէն չէր  
զադրեր:

Գրեթէ այսպէս քսան օր մը անցաւ. մէկ մ'ալ  
յանկարծ, հոս աղէկ մտիկ ըրէ, գիշեր մը անկողնոյս  
մէջ պառկած ժամանակս, դրանս բուռն կերպով մը  
զարնուելէն արթննալով կանչեցի, — սիվ է. — հայրդ  
Երուսաղէմէն դարձած զքեզ տեսնել կուղէ, պա-  
տասխանեց դուրսէն տանը ծառայից մէկը: Երաւ էր  
թէ հայրս բաւական ատենէ 'ի վեր Ս. Գերեզմանին  
ուխտի գացեր էր եւ նոյն օրերն ալ կարօտով կ'ըս-  
պասուէր իւր դարձը: Ուստի կրցածիս չափ շուտ մը  
կանակա զգեստ մը անցուցի, ու վազելով բացի դու-  
ռը:

Պանդուխտի զգեստով մէկը՝ գլուխը մինչեւ աչ-  
քերը սեւ վեղարով ծածկած եւ ձեռքն ալ գրեթէ  
մարած լապտեր մը բռնած ներս մտաւ: Ես մէկէն  
փութացի զինքը գրկելու... Իսկ պանդուխտ կար-  
ծածս՝ ձեռքի լապտերը վար դնելով երեսը բացաւ...

աղջիկս, կրնամ ըսել թէ կենացս մէջ այնքան դիւա-  
հարածի պէս վախցած չունիմ, երեւակայէ թէ սիվ  
կրնար ըլլալ:

— Ո՞վ... Մարքօն արդեօք:

— Այո՛, ինքն իսկ Մարքօ Վիսքօնթիին, հոգևով  
եւ մարմնով, որ սուր աչքերը բանալով հարցուց թէ  
սուր է Երմէլինտան:

Իսկ ես «Աստուծոյ սիրուն համար ըլլայ, դու հոս  
ինչ բան ունիս» կ'ըսէի իրեն: Հարուած մը իջաւ  
թեւիս, որ տակաւին կեցած է տեղը, ու կրկնեց. —  
ըսէ, Երմէլինտա սուր է: Վերջապէս գէշ մտքով մը  
եկած չես, այնպէս չէ, վրայ կը բերէի ես, ու գը-  
թած այն խեղճին վրայ ալ՝ որ արդէն կէս մը մեռած  
է, կ'ըսէի:

Իսկ Մարքօ դարձեալ, գուցէ հոն ըսելով, կը  
ցուցնէր ինձի բուն Երմէլինտայի պառկած խուցը:  
Ես որ այն վայրկենին ինչ ընելս չէի գիտեր, այս՝  
ըսի: Մարքօ երկու երեք քայլ առաւ դէպ 'ի ցոյց  
տուած դուռը, յետոյ զղջացածի պէս ետ քաշուելով  
— դու գնա՛ ներս, ըսաւ, եւ ըսէ որ դուրսը ես ի-  
րեն կ'պատեմ, եւ երկու խօսք ունիմ իրեն զրուցե-  
լու: Իսկ ես ինչպէս կրնայի ներս երթալ. սակայն  
ուրիշ ճամբայ չկար. փախչիլ, չ'էի կրնար, պոռալ  
ամենեւին. վասն զի դիս անմիջապէս խեղդելու կա-  
րող էր: Ուստի հարկադրեցայ տիրուհւոյս խուցէն ներս  
մտնալ՝ ուր Երմէլինտա կէս մը արթնցած ու իմ ներս  
մտնալս ալ տեսնելով խղզուկ ձայնով մը ըսաւ. —  
ինչ կը նշանակէ այն լոյսը, սիվ կայ դուրսը... ու  
իմ լուելս տեսնելով սկսաւ պոռալ, դուռը գոցէ, գո-  
ցէ դուռը: Սակայն նոյն ժամայն անաւոր ձայն մը ե-



կաւ . — Երմէլինտա , մի վախեր , ես եմ , ես , քու Մարքոզ եմ :

Երմէլինտա այս ձայնն առածին պէս , կեցած տեղն արձանի նման մնալով , ձերմակ մեղրամոմի գոյնն առաւ . այնպէս որ մինչեւ անգամ զինքը մեռած կարծելով եւ ձեռքերս գլխուս զարնելով սկսայ արտասուել :

Մարքօ , որ իւր բնական բարի սկզբանցն համեմատ մինչեւ այն ատեն ներս մտնալու չէր համարձակած , վերջապէս բերած լապտերը ձեռքն առնելով երկուքնիս միատեղ տիրուհւոյս խուցէն ներս մտանք : Յիրաւի լաւ չեմ յիշեր ինչ ոգելից ու հոտաւէտ ջուր մը քթին բռնեցինք , ու միանգամայն երակներն ալ շիւկելով հաղիւ կրցանք քիչ մը խելքը գլուխը բերել : Նոյն վայրկեանին պէտք էր տեսնալ Մարքօին՝ Երմէլինտայի հետ վարուելու կերպը . . . : Սակայն կ'ըսեն թէ վերջերը Սաղայելի նման մէկը զարձած էր , այս խօսքը կրնայ իրաւ ըլլալ : Բայց այն ստեղծ բարի եւ աստուածավախ երիտասարդ մ'էր , եւ ես այս բանին ականատես վկայ կրնամ սեպուիլ . . . մտտովն անգամ չը համարձակելով դպչիլ Երմէլինտայի , միայն անոր շուրջ բոլորն այնպիսի վախով եւ յարգանք կը պտղաւեր , որպէս թէ Աստուածամօր զիմացը գրտնուած ըլլար : Բոլորովին այլայլած , կարծես թէ այն երեւելի , քաջ ու կատաղի զօրավարը չէր : Երբ որ տեսաւ թէ տիրուհիս քիչ մը ինքզինքը գտաւ . — եկած եմ , ըսաւ , իմ խոստումնքս պահած ըլլայս հաստատելու համար :

— Ո՛հ . Աստուած իմ , հառաչեց աղջկիւր , ուրիշ բառ չը կրնալով արտաբերել : Իսկ Մարքօ , (դեռ եւ

րեկուան պէս քաջ կը յիշեմ , այնչափ տպաւորութիւն մ'ըրած է ինծի այս դէպքը) , դառն ծիծաղով մը , — կարծեմ թէ ատելի է քեզ համար ինքզինքդ բազդին յանձնելով այնպիսի մարդու մը հետ տունէդ դուրս ելլալ , որ կրնամ ըսել թէ գլուխը հանդիստ դնելու տեղ մը չունի :

— Մի բեր այդ խօսքը , կը պատասխանէր տիրուհիս , մի բեր այդ խօսքն ու իմ սիրտս եւս առաւել մի դառնացնէր : Փախիլ , հեռացիլ 'ի սէր ամենասիրելոյ քո . . . եթէ մէկը կասկածի երթայ , վայ քեզի , եղո՛ւկ ինձ . . . :

Փախչիմ , կը պատասխանէր Մարքօ , ուրեմն 'ի դուր պիտի ըլլայ իմ ըրած ձամբորդութիւն , այնչափ ու անպիսի թշնամեացս մէջէն ծպտեալ անցնելներս , որոնց գլխուս ծանրութեանը չափ ոսկի խոստացուած է : Եւ դու հիմայ տղու եւ կամ խենդի պէս գլխու դառնանք կ'ստիպես :

— Բայց թէ որ հայրս , զքեզ հոս տեսնալու ըլլայ , կ'ըսէր տիրուհիս , վայ քեզի . . .

— Վայ ինծի : Կարծես թէ երբոր հայրդ գալու ըլլայ՝ այս ձեռքերն անտեղ պիտի կենան : Երմէլինտա կը դողար : Երթանք ուրեմն կ'ըսէր Մարքօ : Դեռ ուրիշ բարեկամներ՝ եւ քեզի համար մասնաւոր երիվար մ'ալ վարը կ'սպասէ , ապահով տեղ մը գտնել հասցրնելու համար : Պէրկամօ հասածնուս պէս , մատանին պիտի տամ : Առայժմ սեպէ թէ կըքորդ հետ ես :

Իսկ ես , տիրուհւոյս քովը զգեստէն բռնած՝ ականջէն կ'աղաչէի որ չըլլայ թէ անոր խօսքին հաւանի : Սակայն հոս պէտք է խոստովանիլ թէ Մարքօյի սուր աչքերէն չը փախչելով իմ ըրածս , ձեռքը ու



սիս դրած ըսաւ , կորիք Մարեանս , մի պղտորեր զին-  
քը , խօսքերն ասոնք էին , բայց այնպիսի ձայնով եւ  
այնպիսի դժնդակ դիմօք ու նայուածքով մը ըսաւ  
որ կարծես թէ արիւնս երակներուս մէջ պողեցաւ :  
Ուստի ձեռքերս կախած ու վերացեալ կերպով մը  
երկուքին երեսը սկսայ նայիլ :

Այն ատեն Երմէլինտայ սկսաւ աղաչելով ըսել.—  
կուզես որ ես այս կերպով գէշ կնկան մը պէս զի-  
շերանց տունէս փախչիմ ու մայրս ցաւօք սրտի դե-  
րեղմանը դնեմ . ո՞նչ է , թո՞ղ զիս , կամ լաւ եւս ըս-  
պաննէ զիս , սպաննէ քու ձեռքովդ , որ աւելի հա-  
ձելի է ինձ :

Մարքօ , քիչ մը ժամանակ մտածելէն վերջը ,  
սպառնալիօք հասկցուց Երմէլինտայի , որ եթէ իր հե-  
տը դալու չըլլայ , չը կարծէ որ ըրած ճամբորդութիւ-  
նը պարապը պիտի հանէ , այլ հուսկ յետոյ պիտի ըս-  
տիպուի հօրը հետ տեսնուելու . . . : Այս խօսքերը՝  
գուցէ նա իւր նպատակին հասնելու մտքով վախցը-  
նելու համար ըսած ըլլար . սակայն տիրուհիս բանը  
կատակի չառնելով , սկսաւ դողալ ու արտասուելից  
աչօք Մարքօյի ոտքն ինչարով սկսաւ աղաչել որ այն-  
պէս չը խօսի , այլ հեռացնէ մտքէն այդ անտեղի խոր-  
հուրդներն ու դադրի զինքը չարչարելէ : Բայց Մար-  
քօ լուռ , անագորոյն եւ միշտ Երմէլինտայի ձեռքէն  
աղատելու ջանացած ատենը , երբ որ հազիւ թէ քայլ  
մը դէպ 'ի դուռը առած էր , տիրուհիս կայծակի պէս  
ետեւէն հասնելով բռնեց Մարքօյի թեւէն ու սկսաւ  
կանչել . — չէ , նախ զիս արիւնաշաղափ գերիխ չը  
փռած՝ ասկէ դուրս չը պիտի ելլաս , ես պիտի պաշտ-  
պանեմ իմ հայրս , ես միայն :

Երմէլինտայլ այս խօսքերը կարծես թէ կրակի վը-  
րայ սափոր մը ջուր շեցնելու պէս եղան , եւ Վիս-  
քօնթի նոյն ժամայն առանց ընդդիմութեան ետ դառ-  
նալով դառն ժպիտով մը , ( որ մարդուս արիւնը կը  
սառեցնէր ) ըսաւ : Հանդարտէ , ահաւասիկ հոս ան-  
խախտ կեցած եմ ու պիտի կենամ աներկիւղ . պրոս  
կանչէ , թո՞ղ արթնանս բոլոր տանը մէջ եղողները ,  
եւ հոս կեցած եմ :

Անկարելի է քեզի նկարագրել տիրուհուոյս այն վայր-  
կեանին մէջ ունեցած գթաշարժ դերքը . . . թեւե-  
րը ձգած՝ քիչ մը ատեն ականջ դնելէն վերջը , երբ  
որ ստուգուեցաւ տանը մէջ դեռ մէկու մը չ'արթըն-  
նալը , ձեռքերը կուրծքին դնելով , — Ա՛հ , Մարքօ ,  
թողութիւն տուր ինձի , կ'ըսէր , վերջապէս հայրս է :  
Սակայն դու ինձի այնպիսի խօսքեր ըսես , եթէ կա-  
րենայիր անգամ մը իմանալ ինձի պատճառած սրտա-  
ցաւդ . . . : Աստուած դիտէ թէ մեծ հաճութեամբ  
կը նուիրէի իմ կեանքս՝ միայն քուկդ աղատելու հա-  
մար , փախի՛ր 'ի սէր Արարչիդ , փախի՛ր , գուցէ մին-  
չեւ հիմայ մէկը կասկած մը ունեցած ըլլայ . ո՞վ գի-  
տէ , փախի՛ր կ'ըսեմ , թէ որ իմ բարիքս կ'ուզես ,  
փախի՛ր :

Իսկ Մարքօ , պաղ արեամբ ձեռքը երկնցնելով  
կ'ըսէր . — երթանք ուրեմն : Բայց երբ տեսաւ թէ  
Երմէլինտա դարձեալ ետ կը կենայ , — չէ , չես ու-  
զեր դալ , շատ աղէկ , գիտցիր ուրեմն թէ առանց  
քեզի այս խուցէն չը պիտի ելլամ , եւ նայէ թէ ի՞նչ  
կ'ընեմ : Այս ըսելով աթոռ մը առաւ եւ ոտքը ոտքին  
վրայ ու թեւերն ալ կուրծքին դրած անխախտ նըս-  
տաւ . — Մինչեւ վաղը պիտի սպասեմ , կ'ըսէր , ան-



չուշա մէկը ներս պիտի մտնայ, երանի թէ առաջինը հայրդ ըլլար: Սակայն թէ որ կ'ուզես զինքը ամեն փռանդէ ազատել, գիտես թէ ինչ պէտք է ընես: Գնա սա պատուհանին առջեւ ու անկէ դուրս պրտա՛ թէ Մարքօ ձեր տանը մէջն է, թո՛ղ վագեն գան, ահաւասիկ հոս անշարժ կեցած եմ:

Երեւակայէ անգամ մը մեր սրտադողն ու յուսահատութիւնը: Մեկ կողմանէ ես՝ եւ մէկայ կողմանէ Երմէլինտա, խաչելութեան առջին պաղտելու պէս սրտասուշից աչօք Մարքօին կ'աղաչէինք. սակայն մեր բոլոր ձիգն ու ողբը փայտի մը վրայ աւելի աղղեցութիւն կրնար ընել՝ քան թէ իրեն:

Երբոր տեսաւ տիրուհին թէ ալ ձեռքէն չազատելու ճարը չի կար, ըսաւ. — Հասկցայ թէ դու իմարեանս ծարաւած ես. — Լաւ ուրեմն, պիտի դամհեարդ: — Ուստի անկողնին գլխուն վերեւ կախած Աստուածածնայ պատկերին առջեւ քիչ մ'ատեն ծնրադիր աղօթելէն վերջը, ելաւ ու ըսաւ ինձի. — զրուցէ իմ հօրս. . . — սակայն արցունքները ձայնը մարելով չի կրցաւ ուրիշ բառ մ'ալ արտադրել: Այն սաւեն Մարքօ տիրուհւոյս թեւէն բռնեց ու հաղիւ թէ զբան սեմին վրայ ոտքերնին դրած էին, մէկ մ'ալ խուռն բազմութեան մը սանդուխներէն վեր վազելուն ձայնը լսուեցաւ: Մարքօ վայրկեան մը լուռ կենալէն վերջը, շուտ մը ետ քաշուեցաւ, եւ ձեռքը ձակաին զարնելով հառաչեց. — ալ ժամանակը չէ: Այնթարթի մը մէջ խուցին դուռը փակեց ու ետեւէն կղպելէն վերջը, մէկ ձեռքովը զգեստին տակէն դաշոյն մը եւ միւսովը ալ ծոցէն հաստ ոսկիէ շղթայ մը հանեց, ու մէջ տեղէն երկու ընելով կէսը դարձեալ ծոցը նե-

տեց ու միւս կէտն ալ Երմէլինտայի տալով ըսաւ. — Այս ըլլայ մեր հաւատարմութեան նշանը, յուսամ թէ քիչ ժամանակէն աւելի յաջող կերպով հոս կը դառնամ: Սակայն տեսնամ որ այն ատեն երգմնազանց չը դանուխս, մինչեւ որ քովս եղած կէս շղթան ալ քեզի որ եւ է կերպով չի դարձնեմ, գիտցած ըլլա՛մ որ միշտ սիրտս քուկդ է եւ թէ գրեզ ինձ ամուսին առնելէն զատ նպատակ չունիմ: — Դեռ այս խօսքերը բերանն էր՝ խուցին դուռը դուրսէն սաստիկ մը դարնուեցաւ, Մարքօ պարտէզը նայող պատուհան մը բացաւ ու անկէ վար նետուեցաւ:

Վազեցի շուտ մը խուցին դուռը բացի, որն որ խորտակուելու վրայ էր. . . վեց եօթը զինամերկ զօրքեր ներս տեղացին, ու լաւ մը չորս կողմը պըրպըրելով երբոր չը կրցան ուզածնին դանալ եւ երբ պարտեղին մէջն ալ արդէն ամբոխի մը ձայներ սկսան լսուել, շուտ մը ամենքն ալ միատեղ վար վազեցին:

Իսկ մենք նոյն գիշերը չի կրցանք ուրիշ բան մը վամնալ, թէպէտեւ վարը պոռալու ու վազելու ձայներ լսուեցան, սակայն մէկէն լուռութիւնը պատեց:

Երկրորդ օրը՝ բոլոր Միլանի մէջ լուր տարածուած էր թէ Քրիստօֆի պարտեղին մէջ՝ անոր մարդերէն երկուքն սպաննուած դանուէր են. ըսին նաեւ թէ՛ Մարքօ նախ անգամ մը պատէն անցնելով ազատելէն վերջը, երբոր տեսելէ թէ գլուխը գլխարկ չի կայ, դարձեալ ետ գարձած եւ դայն առնողը հարուածով մը գետնաթաւալ ձգած՝ ու նորէն ձի հեծնալով ժամանակին ինքզինքն ազատած է եղեր:

Հոս՝ Մարիանա պատմութիւնը ընդմիջելով, — ալ մնացածն ուրիշ անգամ կը պատմեմ քեզի, ըսաւ,







Տարին զիս առաջին անգամ Լիմոնդա, ուր Տիրուհին աւելի գերեզմանէ ելած կմախքի, քան թէ նոր հարսի մը գոհ ու զուարթ վիճակին մէջ գտայ :

Այնչափ նիհար ու տգեղցած էր, որ տեսնողը կարող չէր զինքը ճանչնալու : Չիս ողջ գտնելուն վերայ մեծ ուրախութիւն ցուցնելէն վերջը, Մարքոյի վրայ խօսք բանալով, ըսաւ թէ այն շղթային կէտը Մարքօ իրեն ետ զրկած էր, եւ զայն ինծի ցուցնելով տեսայ որ իր քովը մնացած միւս կէսին ճիշդ կտօրն էր :

Վերջը հետեւեալ կերպով սկսաւ ինծի պատմել թէ ինչ ճամբով այն շղթան իր ձեռքը հասեր էր :

Բերդին մէջ բանտարկուած ժամանակը, ամեն օր քառորդի մը չափ զինքը իւր խուցին պատուհանին առջեւ կը հաննէ եզեր, որպէս զի քիչ մը օդ առնէ : Բերդը մինակ գաւթի մը վրայ նայելով բանտապահէն ու իր ընտանիքէն զատ ուրիշ մարդու ներս մտնալն անկարելի է եղեր : Միայն առաւօտ մը, այսօրինքն իր բանտարկուած օրէն գրեթէ չորս ամիս վերջը, խեղկատակ մը ներս կ'առնուի . այս մարդը շատ մը խաղեր ընելէն վերջը, կ'սկսի մէկ ձեռով քնար զարնելու, միւսովը ալ հինգ վեց նարինջ իրարու ետեւէ վեր նետել ու դարձեալ բռնել : Իսկ Էրմէլինտա վերէն այս զարմանալիքն երկաթազատ պատուհանէն դիտած ժամանակը, նարինջներէն մէկը ներս իյնալով, կը տեսնայ որ կճէպին վրայ «Մարքօ եւ Էրմէլինտա» գրուած է . ուստի զայն առնելով կը բանայ եւ մէջը նամակ մը, եւ այն շղթային կէտը կը գտնայ :

— Նայէ՛ մէյ մը սա խորքախոր, կանչեց Լատու-

րէդա, այնչափ սրտազոզէ ու երգումներէ վերջը, դարձեալ ինք չէ ուղեր զաղջիկը :

— Մտիկ բրէ, պէտք չէ աճապարել, հիմայ կը հասնաս : Էրմէլինտա կարգաց ինծի նոյն նամակը, որ դեռ այն ժամանակէն (որչափ ալ պղտիկ էր) դարձեալ քահանայի մը չափ կարգալ դիտեր : Նոյն նամակին մէջ կըսէր թէ, իմանալով իր պատճառաւը հօրը կողմանէ կրած այնչափ հակառակութիւններն ու չարչարանքը, չէ ուզած վերջապէս իւր մահուանն ալ պատճառ ըլլալ . թէ յիրաւի ինքն ալ իւր ընտանեացը կողմանէ շատ նեղը զրուած ըլլալով, ստիպուած էր Վէրօնայի մեծամեծաց մէկուն աղջիկն առնուլ : Եւ այս տեսակ շատ մը երկար խօսքերէ վերջը, զինքը սուած խոստմունքէն ազատ կը սեպէր՝ շղթային կէտն իրեն զրկելով . մանաւանդ թէ գոնէ Վիւքօնթիւներուն թշնամի չէ ըսելով, կ'աղաչէր Էրմէլինտայի որ Տէլ Պալցօ կոմսին հետ ամուսնանայ :

— Ուրեմն ստուգուեցաւ ըսածս, կ'ըսէր Լատուրէդա :

— Պիտի թողնու որ պատմութեան վերջը բերեմ :

— Այո, այո, առաջ գնան, լուռ կը կիներս, չունչ անգամ չեմ առնէր :

— Տարի մը ետքը, լաւ ուշ գիւր, գեղեցիկ օրով օր մը, Էրմէլինտա Քօլիքօ ըսուած դաշտը որսի գացած ըլլալով, երբոր իւր մարդիկներէն քիչ մը հեռացած առաջ կ'երթար, կը տեսնայ յանկարծ զբանտարար ու երեսը գոց հեծեալ մը, որ դէպ իրեն մօտեանալով . — Կուգամ կըսէր, Տէլ Պալցօ կոմսուհիէն՝ Մարքոյին Էրմէլինտայի ձգած նշանը ուղեւոր համար : Տիրուհիս շուտ մը ճանչնալով այդ ձայնը, որչափ ալ



ձիէն վար խնալու չափ ինքզինքը կորսնցուցեր էր , սակայն ծոցէն անոր ինդրած նամակն ու շղթան կը հանէ ( զոր միշտ վրան կը պահէ եղեր ) ու դարձեալ ըստ կարելոյն փութալով , շուտ մը կը յանձնէ այն ծագեալ ձիաւորին :

— Այդ հեծեալը Մարքոն չէ :

— Ինքն իսկ հողւով ու մարմնով : Կ'ստնու ուրեմն Մարքո այդ նամակը , կը կարդայ եւ շղթան ալ աղէկ մը դիտելէն վերջը , վայրի գազանի նման ակուայները կըճըտելով կը հատաչէ — Կեղծ է այս նամակը եւ շղթան ալ ինձմէ յափշտակուած , երկուքս ալ խաբուած ենք : Մնաս բարեաւ , Էրմէլինտա , կարելի է մէկ մ'ալ դիրար չը տեսնանք , սակայն թէ որ այս մուզնութեամբս դեռ ժամանակ մը սպրիմ , պիտի լսես իմ անունս , ըսելով՝ երիվարը մղելէն ու կայծակի պէս անտառի մը մէջ մտնալով անցայտ ըլլալը մէկ կ'ըլլայ :

— Խեղճ երիտասարդ , կանչեց Լաուրէդա սիրտը ելած , արդարեւ խեղճ . . . :

— Վերջը իմացուեցաւ թէ , Մարքո մահուան դուռը հիւանդացած ժամանակը , շղթան վղէն գողցուելով Քրիվէլլօյի զրկուեր է եղեր . . . : Արդեօք կրնան երեւակայել թէ ո՞վ ըրած ըլլայ այս վատութիւնը : Բուն իսկ այն զօրականը՝ որ շատ մը ստակ ուտելով Քրիվէլլօյէն այն անարկու գիշերն իմ խուցիս դուռը ձեռք էր առած : Այս մարդը նոյն գիշերը Մարքօի հետ փախչելով , անոր քովը կը գտնուի եղեր իբրեւ ծառայ : Սակայն ինքն ալ այս մեղքն ապաշխարելու ժամանակ չունեցաւ . վասն զի Մարքօ իմանալով մինչեւ Գաղղիայէն անդին ետեւէն հասաւ ու իր ձեռքովը սպաննեց զինքը :

— Արժանաւոր մահ . ըսաւ Լաուրէդա , այնպիսի թշուառականի մը :

— Այս դաւաճանութիւնը Էրմէլինտայի հօրն ալ չը մնայ . վասն զի Մարքօ քանի մը տարի վերջը Ատտան զարնելու գացած ժամանակը , անոր ալ մէկ հարուածով սիրտը կռնրկէն հանեց :

— Հիմայ հասկցայ , ըսաւ աղջիկը , թէ ինչու համար տիրուհիս Մարքօյի անունը լսելուն պէս կայլայի եւ արիւնը գլուխը կելլայ . — բայց այն նաւինջները վեր նետող խեղկատակը ո՞ւսկից այս գործոց մէջ մաս կրցեր է ունենալ :

— Դեռ չը կրցար հասկնալ , այն խեղճը Քրիվէլլօյի կողմանէ միմիայն Էրմէլինտան խաբելու համար զրկուած է եղեր :

— Ո՛հ , որչափ կնճիռներ ու մէջէ մէջ խառնակութիւններ , ողորմելի արարած մը սպաննելու համար , հառաչեց դարձեալ Լաուրէդա , եւ շնորհակալ ըլլալով մօրն իր աղաչանացը զիջանելուն համար վաղեց բոլոր լսածներն նրանուհւոյն պատմելու :

Հասնելով այժմ այն կէտին՝ յորում քանի մ'անգամ Մարքօյի անունը յիշեցինք : եւ տեսնելով միանգամայն որ մեր վիպասանութեանը մէջ հանդիսացող անձանց հետ մեծ վերաբերութիւն պիտի ունենայ , հարկ կը համարիմ անոր կենացն ու զիմաց պատկերը՝ ընթերցողաց նկարագրել :

Մանէօ Մաթթէօյի կրտսեր որդին՝ Մարքօ Վիսթօնթի , թէ ձախորդութեան եւ թէ յաջողութեան մէջ սիրով եւ հնազանդութեամբ հօրն օրինակին հետեւած ըլլալովը , անոր միշտ սիրելի եղած էր : Մարքօ Վիսթօնթի վեհանձն , արթուն մտօք , ճարպիկ ,



ամեն բանի մէջ միշտ առաջին , պահելով միանգամայն իւր պատիւը , եւ ժամանակին համեմատ՝ տղայութենէն 'ի վեր բուն իր թշնամեացը սիրտը իւր հաղուազիւտ կերպով իրեն որսալու ամենայարմար անձ մ'էր : Յայց վնայ էր այն մարդուն որ իրեն դէմ կը կենար եւ կամ ուղենար անոր անզուսպ ու կատաղի բարկութեանը , նաեւ սիրոյն ճամբան արգիլել : Միայն այրը , քանի որ ողջ էր , կրնար սանձել անոր մուկնութիւնը :

Յաջող եւ քաջ ղորավար , քիչ ժամանակի մէջ նոյն դարուն երեւելի ղորազլուխներուն կարգն անցաւ : Իր գերանուշակ յաղթութիւններէն զլիաւորն որ միմիայն իւր կարգադրութեան պտուղն էր , ձէնովայի զարմանալի պաշարուն է : Այս արիւնհանգ կրոււոյն մէջ Մարքօ յայտնապէս կը տեսնար ու կը պատերազմէր ընդդէմ զինուոց Եկեղեցոյ , Խալիոյ եւ Միկիլիոյ Բուպերթօ թագաւորին :

Այս միջոցիս էր (կ'ըսեն երեւելի պատմիչք) որ նոյն Միկիլիոյ թագաւորը Մարքօյի սուրհանդակ զըրկելով սպառնացեր է անոր , եթէ չի վերցընէ պաշարուն ու չի հեռանայ ձէնովայի հողերէն , սպասել զինքը Միլանու պարիսպներուն տակ : Որուն Մարքօ պատասխաներ է թէ՛ այնչափ երկայն ճամբորդութեամբ չի հողներով՝ կրնայ նոյն պատերը Միլանի պարիսպները սեպել . . . եւ թէ՛ թող դայ , վասն զի ինքնին անձամբ հետը մենամարտելու համար իրեն կ'ըստատէ :

Կալլէացցօ , Մարքօյի մեծ եղբայրը , որ Մաթթէօյի մահուանէն վերջը հօրը յաջորդէց , նախանձեւով իր եղբօրն օր քան օր ստացած համբաւոյն , շատ

անգամ դանդատած էր հօրը թէ՛ ինչո՞ւ միայն Մարքօյի կառավարութեանը յանձնած է հպատակաց ընտրեալ մասը , եւ թէ՛ ինչո՞ւ ամենադժուարին գործոց՝ միայն զինքը գործակալ կը կարգէ : Այս բանիս համար երկուքին մէջ գաղտնի ռիսկալութիւն մը ծագած էր :

Այսու ամենայնիւ Մաթթէօ երբ որ Պապէն նըղովեալ , ժողովողենէն ատելի ու չորս կողմէն թըշնամիներէ պաշարուած մեռաւ , որդիքը 'ի հարկէ իրարու հետ միացան : Մարքօ ալ հաշտուելով մեծ եղբօրը հետ , շատ տարիներ պատերազմեցաւ , մասնաւորապէս Եկեղեցոյ զինուոց դէմ :

Այսպէսով երբոր Կալլէացցօ տեսաւ , թէ բոլոր հայրական ժառանգութեանը վերստին տէր եղաւ , ըսկըսաւ իր խտտութեամբն ու ծանր հարկապահանջութեամբը ինքզինքը Միլանցոց ատելի ընել : Այնպէս որ անոնք ալ պարտաւորեցան իրենց առջի քաղաքական ազատ կենաց ժամանակը փնտռել : Մարքօ ալ դժուարելով եղբօրը բռնած ինքնակալ կերպին , զոր բուն իսկ իր արեամբն էր գնած , ինքն ալ գանգատողաց կարգն անցաւ : Եւ երբոր Խալիոյ ամեն կողմէն հակապապներու գլխաւորները Պաւարօյի Լուչուփիկոս թագաւորն հրաւիրելու գացին , որպէս զի Ղիրենք բռնաւորին դէմ պաշտպանէ , (քանի մը ժամանակակից պատմչաց նայելով) անոնց հետ Մարքօ թրէնթօ երթալով թագաւորին ամբաստանեց զեղբայրը թէ , պապին հետ դադտնի յարաբերութեամբ կ'ուղէ եկեղեցոյ հետ միանալով հակապապերու դէմ կռուիլ : Այս զրպարտութեան վրայ (կը շարունակեն գարձեալ նոյն պատմիչք) , Լուչուփիկոս Միլան հա-



սածին պէս , կը բռնէ զԿալէացցո եւ անոր Ացցօնէ որդին , Լուքինօ եւ ձիփաննի եղբարքը հեա՝ Մօնցախ բանտարկուն մէջ փակել կուտայ , յանձնելով անոր իշխանութիւնը Կուլիէլիօ անուն իշխանազուռնի մը :

Ուրիշ ժամանակակից պատմիչք կ'ըսեն թէ , նոյն թագաւորը Մարքօն ալ եղբարքը հեա բանտարկած ըլլայ : Ոմանք ալ թէ՛ Մարքօ յաջողելով փախած , ոմանք ալ կը կարծեն թէ՛ Լուգուփիկոս զինքը արծրկած ըլլայ :

Սակայն ստոյգն այն է թէ , երբոր Լոմպարտոյ թագաւորը Թոսքանայ՝ եւ անկէ ալ Հոովմ անոյնելով Յովսաննէս ԻՒ. պապը իշխանութենէն ձգեց եւ իր ուզածներէն ուրիշ մը անոր տեղը պապ անուանեց , Մարքօ ալ իր ընտրեալ պալատականաց մէջն էր : Վերջապէս ութը տալիս ապաշխարելէն վերջը , Վիսքօնթիւները՝ Մօնցախէ քառերը անուանեալ հռչակաւոր բանտարկէն ելան : Ասոնք ահաւոր ժողով մը երեսը վորուած այրի պէս ծակեր էին մէկ մէկու վրայ , որոնց միայն բերնէն ներս կը մտցուեր , վիրապի պէս մութ յատակին խորտ ու բորտ , այնչափ ցած ու նեղ՝ որ մարդ ոչ կրնար մէջը ոտքի վրայ կենալ , եւ ոչ ալ հանդիստ ոտքն երկնցնելով պառկել . այլ միայն կըրնար կծկուած նստիլ : Կալէացցո շինել տուած էր զասոնք , տէրութեան դէմ յանցանք ընողները բանտարկելու մարտով . սակայն առաջին փորձառուն ինքն եղաւ :

Ուստի այնչափ ատեն նոյն տաժանելի կենաց մէջ հիւանդացած ըլլալով քիչ ատենէն Կալէացցո վախճանեցաւ , եւ Միլանի մէջն ալ արդէն Կուլիէլիօի կառավարութիւնը վերջի աստիճան անտանելի վիճա-

կի մը հասած ըլլալուն , ամենքն ալ սկսան յայտնապէս Մարքօյի իշխանութեանը փափաքիլ :

Որչափ ալ Պաւարօյի Լուգուփիկոս թագաւորը չէր ուզեր ասոնց յաջորդութեան կարգը եղծանել , սակայն մէկ կողմանէ այն հռչակաւոր զօրավարին անունը , եւ միանգամայն Միլանցւոց ալ անոր վրայ ցուցուցած սէրը իրեն կասկած տալով , եւ միւս կողմանէ ալ տեսնելով որ Մարքօի եղբարքը , Լուքինօ եւ ձիփաննի գոնէ իրենց Ացցօնէ եղբօր յաջորդութեան անդամ փափաք չը ցուցնելուն համար , եւ տէրութիւնն ալ ստակի մեծ կարօտութեան մէջ ինկած ըլլալով , ու մեծ ստակի դուժար մը հատուցանելու խոստումն առնելով՝ թագաւորին հրամանաւը Կալէացցօի որդին Ացցօ Վիսքօնթիւն Միլանի ազատ իշխան անուանեցաւ :

Միլանցւոց սիրտն այս բանիս խիստ ցաւեցաւ , Մարքօ ալ բարկանալով թագաւորին , եղբարցն ու եղբօրորդւոյն եւ հակապապայ մեծամեծներուն , սկսաւ ձիբէնցա քաղաքը պապին կողմանէ Լօմպարտիա շրջուած Պէրթրանտօ գարտինալին հեա գաղտնի թըլթակցիլ , եւ անկէ թէ զօրք եւ թէ ամենայն օգնութիւն եւ առատ ստակ անդամ ունենալու խոստումն առնելով , միտքը դրաւ ո եւ է միջոցաւ իր հայրենական ժառանգութեանը տէր ըլլալ :

Ուստի մեր պատմութեան սկիզբն ալ գրեթէ այս կէտէն կ'սկսի :



### ԳԼՈՒԽ Ը.

Օղորինօ , Մարքոյի զինքը կանչելուն վրայ արտօրնօք Միլան հասաւ , եւ մտնելով տիրոջը պալատը՝ ձգեց Լուբօն վարը սրահի մը մէջ քանի մը զօրաց քով ու մտաւ գաղտնի դռնէ մը ներս , ուր Մարքօ նամակի մը նիւթը ձեր գրագրի մը մեկնելու վրայ էր :

Մարքօ հասակաւ բարձր ու գրեթէ քառասուն հինգ տարեկան մարդ մ'էր , եւ որչափ ալ չարաչար աշխատանք ու վիշաք՝ իւր զիմացն առաջին թարմութիւնը , աշխոյժն ու երջանիկ երիտասարդական զուարթութիւնը խանգարած էին , այսու ամենայնիւ ակտորժելի ծանրութիւն մը , չափաւորուած խստութիւն մը , բարեխառն ու մելամաղձ կերպ մը՝ որն որ իւր սրտին միշտ սոճոճ վիճակը կը յայտնէր՝ դժագրքուած էր ճակտին վրայ :

Վատոյժ եւ գրեթէ 'ի բնէ դալկացեալ դէմքը , սեւ ու խիտ մօրուքով մը ծածկուած էր , եւ թանձր յօնիցը ներքեւը՝ երկու կրակոտ աչքեր կը փայլէին : Երբեմն իւր ներքին յուզմունքէն այտերը կարմրելով իւր նախկին երիտասարդական գեղեցկութիւնը կը յայտնէին : Սակայն ո՞վ որ գիտէր անոր բարկութեան ժամանակ վայրկեանի մը մէջ երեսին դալկութիւնը ճերմակ մարմարիոնի դոյնն առնելը , ու միանգամայն սեւ աչացն ալ կրակի պէս փայլիլը , անմիջապէս հանդարտ ու խաղաղ լճի մը՝ յանկարծ սաստիկ հովերէ յուզուելուն պիտի նմանցնէր :

Քաջ զօրավարը վրայէն հագած էր սեւ թաւիչէ երեսով լայն մուշտակ մը՝ ու տակէն ալ մեաաքսէ ու մէջքը նեղ հագուստ մը . իսկ գօտիէն վար ահաւոր դաշոյն մ'էր կախած , գլուխն բաց էր , ու մազերն ալ լայն ճտկտին վրայէն հաւասարապէս մինչեւ ալանջներուն ծայրը կ'իջնային :

Երբոր Օղորինօյի ներս մտնալը տեսաւ , Մարքօ մատոյն անոր նշան ընելով որ նստի , ըսաւ . — վայրկենէ մը քեզի հետ եմ : Ուստի մօտենալով գրագրին՝ որն որ գրիչը ձեռքը տիրոջն երեսը նայելով կ'ուզէր ուրիշ խուց մը քաշուիլ , — չէ , չէ , գոչեց , առաջ տար . . . կ'ուզեմ որ Օղորինօ հոս ամեն բան տեղն 'ի տեղը իմանայ , ըսելով , Պօլոնիայի պապական ժողովոյն զրկուելու նամակին վերջի խօսքերն սկսաւ յառաջ տանիլ : Այս նամակը նոյն ատենի լատին բարբառոյն էր , որուն նաեւ իմաստը , ինչպէս որ թարգմանութիւնը ձեռքերնիս հասած է , եւ Օղորինօյի ըսածը՝ այս կերպով կը վերջանար :

«Քաստէլ Սերրիօ ու Մախիթզանայ տակաւին չեն մտոցած իմ անունս . ազատութեան փափագողներն «ու իմ գլխաւոր բարեկամներս դեռ չեն անչնչացած . «առիւծը կը քնանայ՝ սակայն երբոր ես արթնցնենմ «զլինքը , իւր ահաւոր մռնչմունքը մինչեւ Վաթիքան «կը հնչեցնէ , եւ Պաւարայի Լուգովիկոսին անգամ «մատ խածնել կուտայ : Կեցցէ՛ Եկեղեցին , մեռնի՛ն «հայրենատեացք . ահա այս է իմ հին պատերազմա-«կան հառաչանքս : »

Այս վերջին խօսքերուն ուժն իմանալու համար պէտք է գիտնալ որ Մարքօ՝ ութը տարի առաջ երբոր Պապին բանակը յաղթահարած՝ փոքրիկ Միլանցի



խոսարարաց վրայ կը վազէր, առաջին անգամ իւր զօրքերը այս խօսքերով խրախուսած էր, որով կ'իմացուէր թէ Մարքոյի Պապին դէմ բռնած ճամբան առ երեսս էր :

Նամակը լմննալուն պէս, գրագիրը դուրս ելաւ, ու Մարքօ ժպիտով մը Օդօրինոյի մօտենալով, ըսաւ . — վերջապէս դարձար, կ'սպասէիր արդեօք թէ քեզի սուրհանդակ զրկեմ :

— Ես չէի կարծեր թէ . . . սկսաւ կարմրնալով վրայ բերել երիտասարդը :

— Բաւական է, բաւական, հիմա հոս ես՝ ու ամեն բան քեզի ներած եմ. եւ քիչ մը խօսակցութենէ վերջը, ձեռքը ընտանեբար Օդօրինոյի ուսին վրայ գնելով՝ պատմեց իւր առաջիկայ ձեռնարկութեանց պատճառները, եւ թէ ինչպէս հաշտուէր էր Ավինեօնի հետ, որով բոլոր իւր գաղանեացը տեղեակ ըրաւ ղինքը :

— Ուստի կեցցէ Յովնաննէս Պապը, գոչեց Օդօրինօ . — բայց Նիկողայոս հինգերորդը, որուն համար այնչափ տակն ու վրայ եղանք, ան ինչ պիտի ըլլայ :

— Պիտի մնայ ինչպէս որ է, հերեւիկոս ու կեղծաւոր, եւ մենք միւսէն դարձեալ պիտի օրհնուինք, ըսաւ Մարքօ :

— Աղէկ, բայց միւսն ալ անդիէն գրեզ պիտի նզովէ, վրայ բերաւ Օդօրինօ :

— Այն ատեն հռչակաւոր դօրապետը ծանր ու խիստ կերպով մ'սկսաւ . — վերջապէս՝ դու ալ կը վեկայես թէ բուն Պապը Ավինեօնինն է: Արքան ալ հօրս, բոլոր ընտանեացս ու բարեկամացս մեծամեծ շարիք

հասուցած է, այսու ամենայնիւ դարձեալ ճշմարիտ եկեղեցական ըլլալու իրաւունքէն չէ զրկուած : Ար հաւատանս թէ այնչափ տարի, որ իրեն դէմ կը թշնամանայի, խիղճս հանարա կեցած ըլլայ :

Երիտասարդը՝ որ մինչեւ այն վայրկեանը չէր յուսար որ իւր հօրեղբայրը այսպիսի գաղափար մ'ունենայ, ապշած երեսը կը նայէր : Իսկ Մարքօ կարծես թէ ինքիւրմէ դուրս ելած առաջ կը տանէր : — Իմ հօրս մահուն նկարը բոլոր յաղթանակացս վրայ սեւ քող մ'է ծածկած . . . այն յարգելի դուրսը, որ այնչափ տարիներ եկեղեցականին բոլոր յարձակմանցը գիմանայէ վերջը, լաւ գիտես թէ նաեւ իւր ժամանակին խաղաղ գտնուող ամենայն իշխանաց փառքն ալ մարած էր : Աւերջապէս այն մարդը՝ որ միշտ թշնամեացը յաղթանակած եւ ոչ երբէք յաղթուած էր անոնցմէ. երբոր տարիքն առած՝ տեսաւ իւր կենաց թելին վերջին ծայրը, եւ աշխարհքիս իւր աչացն առջեւէն մուխի պէս սահլիլը, սարսափեցաւ անկէ, զոր բոլոր կենացը մէջ իբրեւ խաղալիք մ'էր համարած . . . Ա՛հ, չի պիտի մոռնամ ամենեւին այն գիշերը, յորում իւր խղճին յուզմունքէն ժողվել տուաւ բոլոր իւր ընտանիքը, Մօնցայի եկեղեցականաց հետ սուրբ Յովնաննու եկեղեցւոյն մէջ, ու խորանին առջին ծնրագիր՝ վերջին սնդամ հասարակելը զրուցելով կը պարտաէր ջերմ արտասուօք որ սուրբ եկեղեցւոյ գրկացը մէջ հոգին աւանդէ :

Օդօրինօ չէր գիտեր ինչ ընելիքը, վերջապէս, — Ես, ըսաւ, միշտ հաւատացած էի, ինչպէս որ ամենուն բերանն ալ էր, թէ Յովնաննէս Պապն է հերեւիկոսն ու իրաւացին՝ Նիկողայոսը : Այսպէս լսած



էի բոլոր մեր գիտնականներէն , եւ դու ալ՝ որչափ որ զօրապետ մ'ես , եւ կրնաս այն գիտնականներէն վերադասիլ , նոյնպէս կ'ըսէիր : Տղայութենէս 'ի վեր խեղճ Պապին հակառակած եմ , զոր անիրաւ կ'անուանէին եւ որուն համար դու իրաւացի է կ'ըսես . բաւական է , ես ալ չեմ գիտեր ինչ ըսելիքս :

Մարքօ ժպիտով մը .— գիտցած ըլլաս որ ինքն իսկ առաջ իւր գիրկն ինծի բացաւ իւր ազատ կամօքը . ու խոստացաւ հայրական ժառանգութիւնս ստանալու համար՝ պէտք եղած ամենայն օգնութիւնը ինծի ընել : Մի կարծեր թէ՛ ես կոյր զկուրայն ինքզինքս յանձնած ըլլամ այնպիսի մէկու մը՝ որ միշտ ինձ թըշնամի եղած է . սակայն խելամուռ եղած եմ թէ այս մարդը ներկայ պարագայներէ ստիպուած՝ իւր ազատութեանը համար զիս իրեն օգնութեան կը կանչէ : Պավարօյի իշխանութիւնը օրէ օր նուազելու վրայ է . պալատականաց շատերը՝ ոմանք գլխատուած , ոմանք աքսորուած եւ ոմանք ալ իրենց պատուոյ նշաններէն զուրկ ձգուած են : Միայն Միլան մնացած է անոր հպատակ , զոր միայն ես կրնամ ազատել : Արդէն Միլանցիք ալ սկսան ճանչնալ ճշմարտութեան սր կողմն ըլլալը , եւ նզովքէն ալ ձանձրացած են :

— Ասով հանդերձ , կ'ըսէր Օդօրինօ , քաղաքը լեցուած է քահանայներով . որոնք ճամբաներու ու հրապարակաց մէջ Յովհաննէս ԺԲ. ին դէմ կը քարոզեն : Քիչ մը առաջ ես անոնցմէ մէկուն պատահեցայ՝ որ զանի մարդասպան եւ աւազակ կ'անուանէր , ու բերանը եկածը դուրս կուտար :

— Ուրեմն քիչ ատենէն ուրիշ լուր մ'ալ պիտի առնես :

— Ի՞նչ լուր :

— Թէ Նիկողայոսի դէմ կը քարոզուի , գովելով զՅովհաննէս :

— Կուզէի մէջ մը սա տեսարանին ներկայ զըտուելի , ուրեմն ասով մեղի աղէկ պիտի ըլլայ :

— Նայէ՛ , ըսաւ Մարքօ ցած ձայնով մը , պապը ծածուկ քանի մը քահանայ զրկեր է որ իմ ձեռնարկութեանս ձեռնտու ըլլան , առանց իսկ իմ ինչ ընելիքս զիտնալու կամ կասկածելու , եւ այս օրերս գաղտնի ամեն տեղ պիտի տարածուին հակառակորդները համողելու համար :

— Բայց թէ որ Ացցօնէ՛ ասոնցմէ առաջինները բռնէ ու մնացածներն վախնան ետ քաշուին , հարցուց Օդօրինօ :

— Բան մ'ալ չը կրնար ընել , վասն զի ժողովըրդէն կը վախէ , սակայն զիցօք թէ ընէ՛ այն ատեն ինքն իրէն գէշ ըրած կըլլայ , անոնց արիւնէն վրէժխոնդիրներ պիտի ելլան :

Ի՞նչ , միթէ այն մարդիկը կը վախեն մահուընէ . եւ վերջապէս մահն ինչ է : Միթէ մենք շատ անգամ պզտի երկրի մը , պարապ բանի մը եւ կամ տըշայական գաղափարի մը համար չե՞նք արհամարհած զմահ , մեր անունը անմահացնելու մտքով :

Մարքօ հոս քիչ մը կեցաւ , ու գլուխը կախելով ժամանակ մը լուռ կենալէն վերջը , դարձեալ առջի եղանակն առաւ ու պաղ արեամբ մը Օդօրինօյի մօտենալով . — Վերջապէս Ավինեօնն ալ շատ զոհեր ըրաւ որպէս զի զիս կորսնցնէ . իսկ այժմ՝ նոյնչափ մ'ալ կրնայ ընել՝ զիս վերականգնելու համար : Ի՞նչպէս արդեօք , դու ալ այս ձեռնարկութեանս օգնող եւ ինծի համամիտ պիտի գտնուիս :



— Մտածէ՛ , վերջապէս . . . վերջապէս . . . դու ալ գիտես՝ թէ՛ ես քու ձեռքիդ սուրն եմ :

— Եւ ես ալ վստահութեամբ դքեղ այնպէս պիտի գործածեմ , վասն զի ժամանակաւ ճանչցած եմ այդ սուրին արժէքը : Ետքը կը պատմեմ քեզի նաեւ մեր Լօտրիզեօյի հետ ի՞նչ կերպով եւ ի՞նչ պայմաններով դաշնակցած ըլլալնիս : Առայժմ ինք պիտի զինէ՛ իւր մարդիկը , իբրեւ թէ՛ 'ի պէտս ձեռնաու ըլլալու համար Ս. Ամբրոսիոսի եկեղեցւոյն արքանայր գտնուող եղբօրը . որուն լսեցի նաեւ թէ՛ զօրաց խումբ մը կը զրկէ եղեր Լիմոնդայի վրայ , այն խռովարար զեղացիքը պատժելու նպատակաւ : Իրաւ , դու հիմայ շիտակ անկէ կուգաս , անշուշտ պիտի գիտնաս անոնց պատմութիւնը :

— Ամբողջապէս . եւ շիտակը գրուցելու համար՝ շատ կը ցաւիմ այն խեղճերուն վիճակին , եւ թէ՛ որ կարելի է . . .

— Ի՞նչ կրնամ ընել , քարտինալին որոշմունքն է այդ , որ չը կրնար զեղջուիլ :

— Յիրաւի շատ կը ցաւիմ , կրկնեց երիտասարդը , Տէլ Պալցօ կոմսին՝ որ հոն մօտը դանուեր է , Աստուած տար որ իրեն վտանգ մը չը պատահէր :

— Աղէկ ըսիր , Տէլ Պալցօ կոմսը տակաւին այն շատախօսն է , ինչպէս որ էր ժամանակաւ :

— Իեղճ մարդը , պատասխանեց միայն Օդօրինօ , առանց այժմ կամ ո՛չ ըսելու :

— Իսկ անոր Էրմէլինտա կինն , անշուշտ տեսած պիտի ըլլաս :

— Տեսնալն ալ խօսք է , գրէթէ տասն եւ հինգ օր տունը հիւր կեցայ . արդարեւ հրեշտակ եւ օրինակ մ'է՛ ամեն առաքլնութեանց :

Մարքօ ոտք ելաւ ու խուցին մէջ քանի մը անգամ վեր վար ժուռ գալէն վերջը , — Կարծեմ թէ՛ Երանուհին ալ մօրը մանրանկարն եղած պիտի ըլլայ , ըսաւ :

— Բոլորովին իւր մայրն է , առանց մաղի մը չափ տարբերութեան :

— Գիտեմ , կարդացի Վարէնայէն անոր վրայով ինծի գրած մեծամեծ դովասանքներդ . . . իսկ սա . . . քու մարդդ . . . ի՞նչ էր անունը , Բէլէկրուան՝ որ ինծի զրկած էիր , ես զան իմ Բօզաթէյի բերդիս պահպան դրի . ինծի աչալուրջ մարդ մ'երեւաց ու կըրնայ ժամանակաւ գործիս ծառայել : . . . Սակայն Երանուհւոյն համար տուած դովեստներդ ինծի լաւ բան մը չեն երեւնար , ատկէ քիչ մ'ալ Յրանքինօ Բուսքօնիին աղջկան պատիւը կոտորել կ'ելլայ , որն որ ըսածիս համեմատ , բռնած ճամբադ լսելով շատ սըրտմած է եղեր : Ինչ եւ իցէ , կ'ուզեմ որ այս ինսամութիւնը շուտ ըլլայ լմնայ , եւ ասանկով Քօմօին ալ մերն ըլլալը աւելի կը հաստատուի : — Օդօրինօ բան մը չի պատասխանեց :

— Ուրիշ բան մ'ալ ինկաւ միտքս . սա քու Տէլ Պալցօ կոմսը՝ արդեօք տակաւին իր երիտասարդութեան ժամանակին պէս երկչոտ եւ յուսահատ մնացած է :

— Մեծ տարբերութիւն կրած է , սակայն . . .

— Ուրեմն Միլան բերել տուր զինքը , ըսաւ Մարքօ , այսպիսի նեղ ատեն իրեն պէս հարուստ ու ազնուական ընտանեաց տէր մարդ մը , որ ամեն նիւթի վրայ ճիշդ կամ սխալ՝ պնդելով կը վիճէր , կարծեմ թէ՛ զինքն ընտանեօքը Միլան բերել տալը լաւ կրնայ ըլլալ :



— Բանը կը մնայ որ ինք այս առաջարկութեանս հաւանի : Ժամն զի կոմսը իւր գեղացւոցը ամենասիրելի անձ մ'ըլլալով՝ զինքը միշտ կը յարգեն , որով եւ խիստ հանգիստ ու խաղաղ կեանք մը կը վարէ հոն :

— Կը գուշակեմ տուած պատասխանէդ թէ՛ ինք պիտի վախէ առաջին անգամ ընտանեօք Միլանի պէս քաղաք մը գաղթելու . — Շատ լաւ . վախ վախի վերայ , գու ալ աւելի մեծ վախ մը տուր իրեն որ ուզէ չուզէ ճամբայ ելլայ : Ըսէ որ կատարի զօրաց խուճբ մը Լիմոնդա արշաւելու վրայ են , գեղը կողոպտելու համար , եւ թէ սուրբ Ամբրոսիոսի արբան համոզուած է թէ՛ Լիմոնդացւոց խռովութեան պատճառն ու գլուխը ինքն եղած է : Աերջապէս այնպէս հնարք մը գտիր , որ ճամբան գէպ 'ի այս կողմը դարձնէ :

— Յիրաւի չեմ ուզեր , կը պատասխանէր Օգօրինօ , որ իմ պատճառաւս վերջը իրեն չարիք մը հասնի :

— Կը տեսնամ թէ սիրտդ շատ կակղացեր է , ըսաւ Մարքօ , աչքերը բանալով , ինչպիսի խոհեմութեամբ վարուիլդ չես դիտեր այս քու բարեկամիդ հետ , որ չըլլայ թէ իրեն ձախորդութիւն մը պատահի . — Բաւական է որ դայ՝ այն ատեն իրեն համար աղէկ կ'ըլլայ . ապա թէ ոչ՝ ուրիշ բան չեմ ըսեր . . . գիացած ըլլայ որ Աբբան զինքը մեղքէն աւելի կ'ատէ , եւ Լիմոնդա խրուեղու զօրաց խուճբը տեղեկացած է թէ բերդին մէջ տտակ եւ շատ հարուստ աւար կայ : Ուստի թող մնացածը ինք մտածէ :

Հոս Մարքօ լսեց , հետեւաբար Օգօրինօ ալ յարգանք մը խուցէն դուրս ելաւ :

Սրահէն անցնելու ժամանակը , ուր որ քիչ մ'ա-

ռաջ իր ղինակիրը ձգտծ էր , աղմուկի մը նոյնժամայն դադրիլը լսեց : Աղախնեայք սւ զինուորք բարեւեցին զինքը , եւ Լուբօն ալ շուտ մը ետեւէն հասաւ :

— Այդ ինչ աղմուկ էր , հարցուց Օգօրինօ Լուբօյին , երբոր սանդուխին գլուխը հասան :

— Բան մը չէր , պատասխանեց Լուբօ . քու Լօտրիզիօ հօրեղբօրդ զօրքերէն Պէլլէպուօնէն էր , որ իմ Լիմոնդացի ըլլալս չի գիտնալով , ըստ սովորութեան հետը խօսակցելու ատեն . իմ գեղիս նախատինք չի մնաց որ չընէ :

— Ի՞նչ կ'ըսէր արդեօք այդ ագեղ արջը :

— Ա՛րջէր թէ բոլորն ալ հերետիկոս ու սրիկայ են , վերջապէս ուրիշ շատ մը արհամարհական խօսքերէ վերջը , կ'աւելցընէր թէ իրեն յանձնուած է եղեր որ իւր վաթսուն նիղակցացը մէջ մէկ Լիմոնդացի պարզեւէ ցիցը հանելու համար , ու տանին մէկն ալ իրեն պիտի պահէ , որպէս զի ինք շարատանջ սպաննէ զանոնք :

— Չարալեղուն անպիտանը , ըսաւ Օգօրինօ , իսկ դու այս խօսքերը կ'լլեցիր :

— Ես ալ ըսի որ , խեղդատակութեան արհեստը միայն իրեն սեպհական է , ինչպէս որ գէմքն ու զգեստներն ալ կը ցուցնեն : Բայց թէ իմ գեղացւոցս մէկուն ձեռք դպցնելը՝ դեռ իրեն չէ մնացած : Ասոր վրայ , խօսք մը ան , խօսք մ'ալ ես , բանը մեծցաւ , եւ ես այնպիսի ապտակ մը իջայ երեսին , որ աչքին վերեւն ուռեցաւ : Աերջն ալ սկսաւ կոփու պէս պոռչալ , իբրեւ թէ բոլորովին կուրցած ըլլար :

— Գու ալ ամենեւին չես կրնար բարկութիւնդ չափաւորել :



— Իրաւ է : ես ալ գիտեմ թէ գէշ ըրի , սակայն  
նվ կրնար համբերել այնպիսի արհամարհանաց : Ար-  
դարեւ կ'երդնում կենացս վրայ , եթէ չուզենայի քու  
եւ այս տանս պատիւը պահել , նոյն վայրկենին ա-  
նոր երկու աչքերը հակթի պէս դուրս կը թափէի :

— Գիտեմ թէ ալ աւելին կրնայիր ընել :

— Ազէկ , ազէկ ըսաւ Լուբօ , կարելի է , որ երկ-  
րորդ անգամ մ'ալ Լիմոնդա իրարու պատահինք , այն  
ատեն իրեն մնացած պարտքս կը վճարեմ :

Ինչպէս որ շատ չանցաւ գիրար գտնալով՝ Լու-  
բօ իւր խօստմունքը կատարեց . բայց թէ ինչպէս ,  
անիկայ ժամանակին պիտի պատահինք , հիմայ պէտք  
է երթանք Տէլ Պալցօ կոմսը գտնալու :

Նոյն օրերը Տէլ Պալցօ կոմսը՝ Միլանէն սուրհան-  
դակ մը ընդունելով՝ երկար ատեն իրարու հետ դադա-  
նի տեսնուելէն վերջը , պարզապէս յայտնեց կնոջը որ  
անմիջապէս երկրորդ օրը պէտք է ճամբայ ելլան դէպ  
'ի քաղաք երթալու . որով բոլոր տանը մէջ եղողնե-  
րը սկսան մեծ պատրաստութիւն տեսնալ ճամբորդու-  
թեան : Էրմէլինտա , այսպիսի յանկարծական ու ծանր  
որոշման մը վրայ դարմացած՝ որչափ ալ փորձեց պատ-  
ճառն իմանալու , սակայն բան մը չը կրցաւ հասկնալ :

Իսկ երթալու ճամբուն որոշմանը գալով , Էրմէ-  
լինտա առաջարկեց որ , մինչեւ Լէքքօ նաւակով եր-  
թան ու անկէ անդին , որ մինակ մէկ ճամբայ մը կար ,  
չիտակ Միլան անցին : Սակայն այս ճամբայ ըսած-  
նիս , յայտնի է թէ նոյն դարուն գտնուած ճամբայնե-  
րէն անպիսանազոյնին մէկն էր . խորտուբորտ , տրդ-  
մոտ ու տեղ տեղ այնպիսի փոսեր կը գտնուէին , ուր  
ձի մը մինչեւ կուրծքը կրնար մէջն իյնալ : Ի վերայ

այսր ամենայնի , դարձեալ ընտրելագոյն ճամբան ալ  
այս էր : Իսկ կոմսը , այն Մօրքաթօի անաւոր փայտե-  
րուն քով պատահած նաւակոծութեան օրէն 'ի վեր ,  
լիճն ու նաւարկութիւնը յետին աստիճանի աչքէն  
ելած ըլլալուն , ասոնց անունն անգամ բոլոր տանը  
մէջ յիշելն արգիլած էր : Ուստի որոշուեցաւ լեռնա-  
յին ճամբով , այսինքն Վալապինայի , Քանցօի եւ Ին-  
վէրիկօի վրայէն Միլան իջնալ :

Այս ճամբան ալ նոյնպէս իր գէշ յատկութիւն-  
ներն ունէր . այսինքն հեծելոց ասդիս անդին պատա-  
հելու շատ մը դժուարութիւններէն ու դժուարակոխ  
տեղերէ դատ , ճամբուն վրայ գտնուած գեղջուկ պա-  
րոններէն ալ երբեմն պէտք կըլլար կողպատուիլ : Ո-  
րովհետեւ այն ատենները ո եւ է մէկը՝ երբ չորս մարդ  
իրեն հպատակ ունենար՝ պատերազմիլ կուզէր . եւ  
ուրիշ կերպով ալ չը կարենալով իրեն այս փափաքը  
յագեցնել , առանձին ու գաղտնի ճամբաներու վրայ  
եւ կամ նեղ անցքերու բերանը ճամբորդ կ'սպասէր :  
Թշուառ ժամանակներ . . . տակաւին չէին հասկցած  
թէ շատ անգամ քիչ բանը՝ խիստ շատ եւ այլ եւ այլ  
չարեաց առիթ կրնայ ըլլալ : Օրինակի համար , երբոր  
պզտի ծակէ մը օզը ներս փչէ , առջեւը գտնուո-  
ղին կամ հարբուխ եւ կամ իջուածք պատճառելով՝  
մինչեւ մահուան դուռը կրնայ տանիլ զինքը . իսկ  
ընդհակառակն , երբոր նոյն անձը բաց տեղ մը դար  
ձեալ նոյն օզը ծծէ , կը դարթնու ու նոր կեանք  
կ'առնու :

Ուստի , կոմսը ընտանեօքն ու բոլոր ծառայիցը  
հետ քսան հողի չափ մարդ , առաւօտանց կանուխ  
ճամբայ ելան : Ասդիս անգին լեռանց խորտ ու բորտ



ճամբաներէն, երբեմն բլուրներէ վար իջնալով, երբեմն բաւական մեծ ջրովէժներու լայն՝ սակայն ցամքած անցքերուն մաքուր քարանց վրայէն անցնելով, եւ երբեմն ալ խիտ ու կանաչ ձիթեհեւոյ եւ կամ կաղնիի անտառներու մէջ կ'անհետանային: Շատ անգամ լճին ընդհանուր անաքը՝ որ դիմացն էր, որչափ ալ ահաւոր ժայռերէն, կամ լեռան մը դարձուածքէն եւ կամ ուրիշ արգելքէ մը, աչքերնէն կը կորսուէր. սակայն յանկարծ անտառի մը անցքէն եւ կամ բլուրի մը վրայ հասածնուն պէս, անոր գագաթէն դարձեալ նոյն լիճն իր աննկարագրելի բնական դեղեցկութեամբն մեր ճանապարհորդաց աչացը կը ներկայանար:

Երանուհի, առաջին անգամ իր այնչափ սիրելի առարկաներէն զրկուելուն վրայ, բնականապէս սրբտաքեկ, անհաստատ յուսով մեր ապագայ վիճակը կը մտածէր, եւ երբեմն ալ աչքերը ետին դարձնելով կը նայէր հօրը հին բերդերուն վերջին բարեւ մը տալու համար, գուշակելով կերպով մը թէ՛ մէկ մ'ալ չը պիտի կարենար տեսնալ զանոնք:

Մեր ճանապարհորդները Մալբէնսաթօ ըսուած կամուրջին վրայ հաննելով, երկու ձկնորսի պատահեցան, որոնք բոլոր շարթուան մէջ որսացած ձուկերնին Մօնցա ծախելով ստակնին առած իրենց գեղը դառնալու ժամանակնին, հոն մօտերը աւազակներէ կողոպտուեր էին: Ասոնցմէ մէկն իրենց գլխուն պատահածը պատմելէն վերջը, ըսաւ կոմսին թէ՛ իրեն համար ալ նամակ մը ունէր իւր կողոպտուած քսակին մէջ:

— Աւակից էր, հարցուց կոմսը:

— Աւակից ըլլալը չեմ գիտեր, պատասխանեց

ձկնորսը, միայն թէ Մօնցայի շուկային մէջ քու բազէակրիդ որդին ինծի յանձնած էր այդ նամակը:

— Աւակին Լուբօն հիմայ Մօնցա է:

— Այո, սա ասպետին հետ . . . սա գեղեցիկ երիտասարդին հետ որ բաւական ատեն քու բերդիդ մէջ կեցաւ:

Երանուհի կարծես թէ քունէ մ'սթափեցաւ, սակայն սրտին ալէկոծիլը չի յայտնելու համար, երբոր իրենց խուճը սկսաւ ճամբան շարունակել, այդ երկու ձկնորսները ցուցնելով՝ ըսաւ մօրը. — Խեղճ մարդիկ, կարելի է թէ հիմայ ասոնց տղայքն ուտելու հաց չունին, արդեօք թիչ մը բան տամ:

— Տուր, Աստուծոյ սիրուն ըլլայ. այո այս խեղճերն յիրաւի արժանի են ողորմութեան, ըսաւ Երմէլինտա: Աղջիկը իւր հօրը հետ խօսող ձկնորսին ոսկի մը տալով, կէսուակէս առէք ու մեղի համար ալ աղօթք ըրէք, ըսաւ:

Մենք վերջին անգամ Երմէլինտան՝ Երանուհւոյն սրանեղած ձգեցինք, այսինքն մայրն առանց իր հրամանին աղջկանը որսի երթալուն վրայ նեղանալով՝ որչափ ալ մինչեւ հիմայ չէր խօսած Երանուհւոյն հետ, այսու ամենայնիւ կարծես թէ սիրտը միշտ փուշի վրայ էր իսկ աղջիկն իր կողմանէ չի կարենալով մօրը խտասարտութեանը համբերել, Օղորինօի երթալուն երկրորդ օրը, եկաւ լալով պատմեց մօրը թէ՛ ինչպէս եւ ինչ կերպով ընդդէմ իր կամացն ու դիտմանը, իրեն անհնազանդ դանուած էր: Յայտնելով միանգամայն սրտին զգացմունքները, եւ տալով իր սիրելի մօրը՝ Տանթէի հատորին մէջէն դուրս նամակը:

Երմէլինտա կարդաց նոյն նամակը, որուն մէջ



Օգորինս պարզապէս կը խոստովանէր թէ ինք՝ որչափ ընդդէմ իր հաւանութեանը, խօսուած էր Ֆրանքինո Րուսթօնիին աղջկանը, սակայն հիմայ հաստատ միտքը դրած էր որ Երանուհիէն ուրիշ մ'իրեն կին չառնու, եւ հետեւաբար Երանուհիէն թողութիւն կը խընդրէր առանց նախ եւ առաջ ծնողացը հետ խօսելու, այս առաջին անգամ գրով իր միտքն իրեն յայտնած ըլլալուն վրայ:

Ուստի Երմէլինտա նամակը գոցեց, եւ մայրական քաղցրադոյն սիրով մը խօստացաւ աղջկանը որ այս բանս ստուգելու համար ամենայն հնարք բանեցընէ. միանգամայն խրատելով զինքը որ բոլորովին չի յուսայ: Արովհետեւ այս բանիս մէջ նախ Մարքոյի անյաղթելի կամքը կար, երկրորդաբար՝ ի վաղուց կուսին ալ ռիսակարած ըլլալուն, այժմ Օգորինօի ալ անոր հաւանութեանը գէմ գործէն անհնարին եւ անտեղի գործ մ'եղած ըլլալը Երմէլինտա քաջ գիտեր: Այսու ամենայնիւ դարձեալ գործն իր վրայ առնելով, նոյն վայրկենէն իր աղջկանը բերնէն կատարեալ հնազանդութեան խոստումն առաւ:

Ասանկով՝ երկուքն ալ իրենց փոխադարձ սիրոյ կապերովն հաստատուած, ճամբորդութեան մէջ առաջուան պէս իրարու հետ ընտանեբար կը խօսակցէին:

Իսկ կումնն առանձին կը մտածէր թէ այն երկու ձկնորսաց իրեն համար ունեցած նամակնին իրեն ինչ լուր կրնար տալ. միթէ Միլանի մէջ նոր խռովութիւն մը ծագած էր, եւ կամ Օգորինօ զինքը կը համոզէր որ առ այժմ քաղաքը չի մտնայ. մի գիտէ, մի գիտէ... վերջապէս որչեց որ ճամբէն խոտորի, ու Մօնցա երթալով Օգորինօի հետ անձամբ տեսնուի:

### Գ Լ Ո Ւ Խ Թ.

Գրեթէ արեգական մարը մտնելուն մօտ՝ մեր ճամբորդները Մօնցոյի սուրբ Յովհաննու եկեղեցոյն հըրապարակը հասնելով, տեսն խուռն բազմութիւն մը՝ որ քահանայի մը դուրը ժողուած, բարձր ստուէի մը վրայէն անոր ճարտար քարոզութիւնը մտիկ կ'ընէ: Նոյն բազմութիւնը մեր ձիաւորաց խումբը տեսածին պէս, ձգեց այն քարոզիչն ու հետաքրքրութեամբ վազեց եկողներուն քով մօտեցաւ, խնայալու համար թէ ով են, ուրիշ կ'ուզան եւ ուր կ'երթան: Ուստի ակնթարթի մը մէջ մերինները հետաքրքիր ու ձանձրացուցիչ բազմութենէ մը պաշարուեցան:

Երմէլինտա եկեղեցոյն դռները բաց տեսնելով եւ կերպով մ'ալ այն ազմուկէն ազատելու համար, դարձաւ կումնն. — Մենք կամայքս հոն ներսը կ'ըսպասենք, քանի որ դու՝ Օգորինօս գտնելու կ'երթաս: Շուտ ըրէ, որպէս զի կարենանք ճամբայ կլլալ ու գիշերը վրայ չի հասած Միլան մտնել:

— Այսպիսի արգելքի մը ժամանակ եկեղեցի մըսնալ կ'ուզէք, ըսաւ կումնը ցած ձայնով, վասն զի չէր գիտեր բոլորաիքն եղողներուն ինչ կարծեսոյ տէր ըլլալը:

Սակայն Երմէլինտա բանի տեղ չի գնելով կումնին այս դդուշութիւնը, աղջկան թիւը մտնալով՝ Լատրէզայի ու անոր մօրը Մարիանայի ու բազակիրին աչք ըրաւ որ հեար գան, եւ բազմութիւնը ճեղքե-



լով անցաւ ու ամենքը միատեղ եկեղեցիէն ներս մը-տան :

Աւագ խորանը չքեղ դարդարուած էր . մոմերն ու կերոնները վառած՝ սովորական ժամանակուան պէս քահանայք բարձրաձայն կը սաղմոսերգէին :

Էրմէլինտա բաւական ատեն տարակուսած մնաց թէ դուրս ելլայ թէ չէ , վախնալով որ չըլլայ թէ հերձուածող քահանայից ժամասացութեան ժամանակ ներկայ գտնուելովը գլխընտու բան մը պատահի : Սա-կայն վերջապէս այս մտածմամբ կրցաւ սիրտը հան-դարտեցնել թէ՛ ես հոս իբրեւ ապաստանարան մտած եմ , ինչպէս որ այսպիսի պարագայի մէջ տան մը կամ ո եւ իցէ երդի մը տակ կրնայի մանալ : Աւստի ա-ռանց երկրպագութեան եւ ոչ ալ երեսը խոսչալնքե-լու նստաւ ստուի մը վրայ , ու աղջիկն ալ քովը նըս-տեցուց :

Իսկ Լաուրէդայի մայրը , որ արդէն իւր Պէր-նարտո որդւոյն սուրբ Ամբրոսիոսի եկեղեցւոյն հերձ-ուածող քահանայից մէջէն սովրած քանի մը իմաս-տակ քարոզութիւններէն յափշտակուած էր , երբոր տեսաւ թէ իւր աղջիկն ալ իրենց տիրուհւոյն պէս նստելու կը պատրաստուի , քաշեց անոր զգեստէն ու քովը ծնկան վրայ բերաւ , յետոյ տեսնալով որ ա-մուսինն ալ դեռ ոտքի վրայ կեցած ու ձեռքերն ետին դրած եկեղեցւոյ պատերուն վրայ առաքելոց պատ-կերները կը դիտէ , սկսաւ քթին տակէն մտմուռ :

— Եկեղեցւոյ մէջ ասանկ կենալ , կարծես թէ ախտի մը մէջ ենք , ամօթ չէ :

— Լռէ , չըլլայ որ տիրուհիներս լսեն , կ'ըսէր Լաուրէդա մօրն սկանջէն վար :

— Չի պիտի լռեմ , դու նայէ որ երեսգ խաչ մը հանես ու քանի մը հայր մեր ըսես . նայէ սա հայրդ ինչպէս ապշած պատերէն վեր մնացեր է :

— Լռէ ըսի , նախ սկսէ աղօթել , կ'ըսէր աղ-ջիկը , որ մեզի ալ օրինակ ըլլաս , բայց լաւագոյն է միշտ լռելու :

— Չի պիտի լռեմ , վասն զի մահացու մեղք է քրիստոնէից այս կերպով եկեղեցւոյ մէջ վարուիլ : Թէ որ լսէիր մէկ մ'երէկ գիշեր եղբորդ քարոզու-թիւնը , մէկ մը լսէիր . . . բայց մտիկ ընողն ո՞վ է :

Տեսնալով աղջիկը որ մօրը պատասխանելով լը-ռելէք չունի , ու ձայնն ալ եւս առաւել պիտի բարձ-րանայ , թողուց որ ինքնիրեն դրուցելով սիրան իջնայ :

Եւ յիբաւի , պառաւը տեսնալով որ ալ իրեն պա-տասխանող չի կայ , քթին տակէն կամայ կամայ մըռ-մըռալով բոլորովին լռեց :

Իսկ Երանուհւոյն սիրտը խիստ անհանդիստ վի-ճակի մը մէջ էր . չի գիտցուիր թէ անոր այս ան-հանգստութիւնը թիչ ատենէն Օդօրիօսի ներկայանա-լու վախէն եւ կամ բազմաքէն էր թէ ոչ . ամեն ան-զամ եկեղեցւոյ դրան բացուելուն ու գոցուելուն՝ ինքն իրեն կ'ըսէր : Ա՛ն է . ու կարծես թէ երեսը կար-միր քողով մը կը ծածկուէր , եւ սարսուռ մը բոլոր անդամօքը վրայ կը տեղար : Ականջ կուտար յառա-ջացող քայլերուն , կարծելով թէ իր հօրը քայլերուն ձայնին հետ կ'առնուր նաեւ Օդօրիօսի ոտից ձայնն ալ . չունչը կը բռնուէր՝ ու սիրտը այնպէս սաստիկ կը բաղխէր որ կարծես թէ կուրծքէն գուրս պիտի ժայթքէր : Սակայն ներս մտնողները կը յառաջանա-յին ու կ'ստուգուէր թէ անոնք չեն . այն ատեն Ե-



րանուհի շունչ կ'առնէր , աչքերը կը բանար . սովայն դարձեալ իւրաքանչիւր դրան բացուելուն ու գոցուելուն նոյն սրտադողին մէջ կ'իջնար :

Իսկ աւագ խորանին ետեւը կեցող քահանայից ներդաշնակ սաղմոսերգութիւնը յանկարծ դուրսը հըրապարակին մէջ պատահած կռուի մ'աղմուկէն խափանուեցաւ . եկեղեցւոյ մէջ գանուողներէն շատերը մէկէն դուրս վազեցին - վայրկեան մը լուռ կենալէն վերջը՝ Կանոնիկոսք ներսէն խորանին առջեւը վանդակին մօտենալով , երբոր տեսան թէ մարդ չի կայ , դառնալով իրենց տեղը՝ դարձեալ սաղմոսերգութիւնը շարունակեցին : Մէկ մ'ալ յանկարծ եկեղեցւոյ ներքին դռները բռնի բացուելով , թուրքերը պատռած աճարկու հեղեղի նման , ժողովուրդը դաւազանօք եւ քարերով զինեալ Ս. Յովնանու եկեղեցիէն ներս սկսան վազել :

Զօրագլուխնին քիչ մը առաջ դուրսը քարոզող քահանան էր : Ութսունը անցած ծեր մը՝ խառնափնջիթօր ճերմակ մազերը ճակտին վրայ ցրուած , ձախ ձեռքը խաչ մը ու աջ ձեռքն թուր մը առած՝ խոթոս ու քարձր ձայնով մը սկսաւ կանչել . — դուրս ելլեն ասիէ հերեմիկոսները , դուրս սա Բէլիարի որդիքը . որուն խառնիճազանճն արձագանգ տալով կը կանչէր . — դուրս հերեմիկոսները , դուրս հերձուածողները , թող դուրս ելլեն : Եւ սռաջ գալով սկսան աչքերնուսն պատահած բաներն , այսինքն ստու , ապակի , խաչերութիւն , պատկեր , կերոն ու աշատնակ կտորել ու ջախջախել :

Սակայն այս կատաղածներուն աւագ խորանին մօտենալը բոլորովին տեսարանը փոխեց : Անզգամները՝

անցնելով խորանին ետին , սկսան նախ կանոնիկոսները իրենց անդէն վար ստնելով քաշքշել , որ մէկը սանդուխներէն վար ու որ մէկն ալ դանաճար ու մազերէն բռնած գեանաքարչ գուրս վռնտել : Ժամագիրքերն , սաղաւարաններն , աւետարանները եւ սաղմոսները օդուն մէջ կ'ելուեցէին :

Այս փոթորիկը հանողն երբոր ինքզինքը իւր նըպատակին հասած տեսաւ , ստուխ մը վրայ ելլալով՝ սկսաւ նորէն քարոզել , դովելով ժողովրդեան քաջութիւնը եւ յորդորելով որ ալ դադրին աւարելին :

Բայց այս անգամ անոր քարոզութեանը ականջ տուող անգամ չ'կար : Ասկէն մարդ իրբեւ թէ աւարեալ երկրի մը մէջ ըլլար , սկսաւ ձեռքն անցածը կողոպտել : Իսկ զլիաւորներէն տմանք , արդէն պահարանին դուռները կացիններով ջախջախելով ներս մըտան ու սկսան փականքները կտորել ու եկեղեցական զգեստներն ու սրբազան ամանները յափշտակելով մեծաւ աղմկաւ աւարի պէս իրարու մէջ բաժնել :

Իսկ մեր գլուխ չարեաց Սաղայէլը՝ շուտ մը հոն վազելով . — եղբարք , սկսաւ կանչել , յիտաւի մեծ բարեգործութիւն մ'էր ըրածսիդ , սակայն ինչո՞ւ հիմայ զայն սրբապղծութեամբ կ'ուղէք ջնջել , փոր զընէք ոս ամանները :

— Ասոնք ալ նողմեալ են , կանչից անդիէն մէկը , պէտք է զանոնք ալ եկեղեցիէն դուրս հանել : Խառնիճազանճը մեծաւ ծափահարութեամբ ասոր հաճեցաւ :

Իսկ քարոզիչը՝ տեսնալով երիտասարդ մը վերարկուին տակը սկիհ մը ծածկած կը փախչէր , մէկէն առջեւն անցաւ պոռալով . — յանուն երկու իշ-



խանութեանցս, յանուն Քրիստոսի եւ այս սուրիս կը հրամայեմ քեզի, ո՞վ անպիտանագոյն մարդ, որ շուտ ետ դառնաս : Սակայն անիկայ կից մը արձակելով գքարողիչը գնտակի պէս գետին գլորելէն վերջը, պատասխանեց . — Ես ալ հիմակուան ստացած իշխանութեամբս, կը հրամայեմ քեզի՝ ձգել զիս որ գործիս երթամ :

— Առի՛ր մի հիմայ երկու իշխանութիւնդ ալ միատեղ, կանչեց անդիէն միւս մ'ալ : Այս հարուածին վրայ մեր Սաղայէլը ինքզինքը իւր աշակերտներէն յաղթուած տեսնալով, քթին տակէն քիչ մը հայոյեւէն վերջը, մէկդի քաշուելով սկսաւ բերնին եկած անէծքը տալ այն չարագործաց, որոնք քիչ մը ատեն զինքը մտիկ ընելէն եւ վերջապէս աղէկ մը ծաղրելէն, ծեծելէն ու կիցահարելէն վերջը, վրան գլուխը պատռած, արիւնաշաղախ ձգեցին փախան :

Այս միջոցիս, դուրսը ուրիշ այլանդակ դէպք մ'ալ պատահելու վրայ էր . այսինքն՝ բաղէակիբին որդին Պէրնարած՝ որ Լիմոնդայի գնդին հետ եկած էր, Մօնցայի դռնէն ներս մտած վայրկեանէն իր մէկ բարեկամին հետ քաւական երկար խօսքի բռնուելով, վերջապէս հասաւ Ս. Յովնանու եկեղեցւոյն հրապարակը, ճիշդ այն ատեն՝ յորում մեր վերը պատմած կռիւը՝ ամենայն կատաղութեամբ 'ի գործ դրուելու վրայ էր : Ասիկայ տեսնալով քանի մը քահանայից վրանին գլուխնին պատռտած ու արիւնոտ : ասդիս անդին փախչելը, հարցուց ու իմացաւ թէ՛ անոնք Մայր եկեղեցւոյն կանոնիկոսներն են, որոնք նզովքի դէմ յամառելուն համար, այնպիսի խեղճ վիճակի մէջ եկեղեցիէն դուրս վռնտուած էին : Ի՞նչ ըսել է,

ըսաւ ինքնիրեն, քաղաք մը որ միշտ հինգերորդ Նիկողայոսի կողմնակից էր . հիմայ բոլորովին անոր ներհակ ըլլայ . . . յուսամ թէ այս խռովութիւնը անցողական է : Բայց այս ըսելու ժամանակը բարկութեանէն յափշտակուած, եւ այն եղեւնագործներն ալ զըզջուով բերելու մտքով, ուղեց այնպիսի գործ մը գործել՝ որ Լիմոնդայի մէջ անգամ ըրած չունէր . ուր որ (ըստ իր կարծեացը) հերձուածողութիւնը ամենուն սրտին մէջ արմատացեալ կը կարծէր : Ուստի այս խորհրդածութեանց մէջ (ինչպէս որ ըսինք) հրապարակին մէջտեղը զրահաւոր, գլուխը փեղոյր, տփգոյն ու հանելի երեսն ալ դիմակաւորած, եւ ձեռքն ալ նիզակ մը, ճիշդ խրատուլակի պէս կեցած տեղէն յանկարծ ստողի մը վրայ ցատկելով, սկսաւ քարոզել :

Նոյն միջոցին ալ, այն զարհուրելի փոթորիկն հանող քահանային խղճալի վիճակի մը մէջ եկեղեցիէն դուրս ելլալը տեսնալով, եւ կարծելով միանգամայն թէ ան ալ ճշմարտութեան համար հալածող կանոնիկոսներէն մէկն է, որուն ետեւէն տակաւին ժողովուրդը կը հայոյէր, շուտ մը կեցած տեղէն վար իջաւ ու այն չարագործին մօտենալով՝ սկսաւ անոր զգեստներն համբուրել :

Բայց ամբոխին մէջէն մէկը՝ հասկնալով իրեն սրխալունքը, կանչեց թէ ատիկայ Մօնցայի կանոնիկոսներէն չ'է, հապա այն խեղճերուն դէմ ամենայն չարիք դարանողաց գլուխն է : Պէրնարած արհաւիրած ետ քաշուելով հռասչեց . — ուրեմն ես փոխանակ անմեղ աղաւնիի մը թունաւոր ծծ մը համբուրեցի :

— Դու ես ի՞նչ ու վիշապը, սկսաւ կանչել միւսը, դու ինքնին հերձուածողաց գլուխ :



Հոս, երկուքն ալ իրարու բռնուելով սկսան մէկ մէկէ բարձր պոռչալ ու կուռիլ: Իսկ բազմութիւնը, չորս կողմերնին պատած զասոնք ծաղրելով կը սուլէր: Աերջապէս սրիկային մէկը բազէակերին որդւոյն մէջքին կից մը դնելով սրունքները վեր՝ կռնկին վրայ դեախնը գլորեց ու ամեն կողմէն մեծ աղաղակաւ անողորմ հարուածներ սկսան տեղալ խեղճին վրայ որ արդէն մահուան դուռը պիտի հասնէր՝ թէ որ անդիէն Օգօրինօն ու Տէլ Պայցօ կոմսը երեսունի չափ դիւնուորի հետ վրայ հասնելով՝ «օ է ճամբայ բացէք, դադրեցէք» ի ձայներ ամբօխին մէջէն չը լսուէին:

Հեծեալ զօրաց վրայ հասնելուն պէս՝ ամբօխը ցրուելով մէկն ասկէ՝ միւսն անկէ այլ եւ այլ փողոցներ սկսան քաշուել: Իսկ Լուբօն՝ որ իւր տէրօջը քովէն կ'երթար, ճանչնալով եղբայրը՝ որն որ գիտացը շտկելու եւ վրան գլուխը թօթփելու կը նայէր, քովը մօտենալով. — շատ աղէկ եղաւ, չես կրնար քիչ մը լեզուդ հանդարտ բռնել, ըստ:

— Թէ որ վայրկեան մը առաջ հասնէիր, թերեւս կարենայիր ինձի քիչ մը օգնել, պատասխանեց Պերնարօ:

— Աւելի խելքի քան թէ բաղկին կարօտութիւնը կը տեսնամ քու վրադ, կրկնեց Լուբօ:

Իսկ Օգօրինօ, բոլոր իւր ձիաւորներով եկեղեցիէն ներս մտնալով դասին ու սրահարանին մէջ, խորաններու ետին եւ այլ եւ այլ դադանի տեղեր պահուրտած աւաղակները թուրի ու նիզակի հարուածներով դուրս վնստեց:

Դալով մեր կանանց՝ որ եկեղեցւոյն մէջ ձգեցիկք, ասոնք ամբօխին առաջին անգամ ըրած յարձակմանը

վայրկեանէն ՚ի վեր, պզտի մատրան մը մէջ փակուեր էին. եւ աւելի ապահովալու համար աչալուրջ բազէակիրը շուտ մը նոյն մատրան երկաթէ վանդակները գոցած էր, մինչդեռ դուրսը ամեն բան սրբապղծութեամբ կը կողոպտուեր: Թէպէտեւ քանի մը սրիկաներ հոն ալ ստնակոխ ընել եւ քանդել ուզելով, մատրան վանդակները կոտորելու համարձակեցան, սակայն Ամարօճիօն անուշութեամբ չը գացողին՝ ներսէն իւր անաւոր թուրը ոմանց ձեռքին եւ ոմանց ալ գլխուն իջեցնելով կը ճամբէր: Միւս կողմանէ ալ իւր աղջկանը՝ խորանին վրայի ի աչը, աշտանակները, կանթեղներն ու գրքակալը վար առնել կը հրամայէր, որոնք միմիայն աւարողաց ազահութեանը առիթ կուտային:

Այսպէս բաւական ժամանակ ներսը փակուած կենալէն վերջը, կոմսին քանի մը հետեւակ զօրքերը որ վազեր եկեր էին եղբրանաց տեղը, մտնելով եկեղեցիէն ներս՝ պատահաբար տեսան զասոնք եւ զէնքերնին բաց՝ երկաթէ վանդակներուն առջին շարուելով՝ արգիլեցին բոլորովին այն կատաղիներուն յարձակմունքը:

Նը ցաւիմ որ մեր ընթերցողները, այսպիսի անհեթեթ եւ աղէտալի սրբապղծութեանց նկարագրութեամբը, երկար առնն ձանձրացուցինք. սակայն պէտք է զիսնալ որ մեր նպատակն է ըստ կարելւոյն ճշմարտութենէ չը հեռանալ, եւ մեր պատմութիւնը լաւ շարունակելով, իւրաքանչիւր դէպք տեղն ՚ի տեղը ՚ի լոյս անել:

Կոմսին ընտանիքը՝ հետեւակ խումբօյն հանդերձ Ղարձեալ սկսաւ շարունակել իւր ճանապարհորդու-



Թիւնը դէպ 'ի Միլան : Իսկ Օդօրինօ՝ ալ ուրիշ դործ մը չունենալով Մօնցայի մէջ , եւ անոնց հետ ընկերանալու արդէն յանձնառու ըլլալով , ճամբայ ելաւ :

— Կրնաք ապահով ըլլալ թէ՛ ձեզի իմ ծառայիս ձեռօքը՝ Լիմոնզա զրկած նամակէս ուրիշ նամակ չեմ գրած , կրսէր երիտասարդ ասպետը Երանուհւոյն հօրը քովէն երթալով . — Մակայն , պատասխանեց կոմսը , այն Վէսսանօյի ձկնորսները բուն իսկ Մօնցայի հրապարակին մէջ , Լուբօի ձեռօքն իրենց յանձնուած նամակ մ'ալ ունենալնին քաջ կը հաստատէին :

Շուտ մը Լուբօն կանչուելով իմացուեցաւ թէ այն նամակը Մօնցայի մէջ բարեկամ քահանայի մը գրել տալով , նոյն ձկնորսաց էր տուած , որպէս զի ժամ մը առաջ բանին եղելութեանը տեղեակ ըլլալով արթուն եւ զգոյշ կենան Լիմոնզացիք :

— Անյուսալի դէպք , վրայ բերաւ Օդօրինօ, Մօնցայէն ելլելնէս քիչ մը առաջ ալ իմացայ թէ , այս դիշեր եօթանասուն նիզակաւոր զօրք , Լէքքօ լճին վրայէն պիտի նաւարկեն եւ Լիմոնզա անցնելով , բոլոր գեղացիքը պիտի կոտորեն :

— Տէր Ատտուած . բայց ինծմէ ինչ կ'ուզէ , քանի որ մինակ գեղացիքն իրեն դէմ ապստամբած կը սէպէ :

— Ինչ ըսեմ , ես այս բանիս մէջ մեծուարին ձեզի դէմ դադառ ռիսակալութիւն մ'ունենալը յայտնի կը տեսնեմ :

— Ո՛հ թշուառութեանս . բայց դարձեալ կը կըրկենեմ , արդեօք ինչ իրաւամբ մեծաւորը զիս ալ քարկոծել կ'ուզէ . եթէ ըսէ թէ ես գեղացիները կը պաշտպանեմ , այնպէս չըլլալը դու ալ լաւ գիտես , եւ տա-

կաւին զրկազ նամակիդ եւ թէ սուրհանդակին ինծի բերնուց զրուցածներն անդամ գեղացւոց մէկուն չեմ հաղորդած :

— Ինչպէս , ըսել է որ դեռ Լիմոնզացիք բանէ մը տեղեկութիւն չունին :

— Ամենեւին :

— Ուստի պէտք է փութանակի մէկն ուղարկել որ իրենց իմացընէ դալու փոթորիկը , ըսաւ ասպետը :

— Ատտուծոյ սիրուն համար , չըլլայ որ այս բանս ընես :

Սակայն Օդօրինօ առանց մէկու մը միտ դնելու , դարձաւ իւր զինակրին :

— Պէտք է որ դու անյապաղ վազես Լիմոնզա եւ իմաց տաս այն խեղճերուն գլխուն գալիք վտանգը . քեզ տեսնեմ , ետ դարձիր ու Մօնցայէն ուրիշ երիվար մ'առնելով գնա :

— Ձէ , չէ կը կանչէր կոմսը , դու անտարակոյս իմ կորստեանս կ'սպասես , վաներէցն արդէն քաջ դիտէ թէ Լուբօն իմ ծառաներէս մէկուն որդին է , եւ . . .

— Լուբօն իմ զինակիրս է , ուստի տարակոյս մի ունենար թէ միայն ինծմէ կրնայ յուսացուիլ այսպիսի գործ մը :

— Ինծի նայէ , կ'ըսէր կոմսը , մինչեւ հիմայ անոնք արդէն ամեն բան իմացած պիտի ըլլան :

— Քիչ մ'առաջ դու չէիր ըսողը , թէ բանէ մը լուր ու կասկած անգամ չունին խեղճերը :

— Այսինքն . . . ես ճշդիւ չեմ գիտեր . . . սակայն կարծեմ թէ ցայժմ Լէքքօէն անշուշտ լուր մ'առած պիտի ըլլան , եւ տարակոյս չի կայ թէ իմաց ունին եւ իմաց ունենալնին ալ պնդելով ինչ որ ալ ուզես քեզի գրաւ կընամ դնել :



— Ի վերայ այս ամենայնի , իմաց ունենան կամ չունենան , պէտք է գործն ապահովի դնել , կ'ըսէր երիտասարդ ասպետը :

— Այս խաւարային գիշերուանս մէջ , խեղճ Լուսոն , այն դահավէժներէն վար . . . ինչպէս . . .

— Ասոնք եւ ասոր նման դէպքերը , չըլլայ որ ձեր զիտաւորութեանը արդելք ըլլան , ըսաւ բազէակըրին սրդին . գիշերը վիայ հասնելուն պէս , առաջին պատահած գեղը կ'իջնամ եւ երիվարս հոն թողլով մատաղածիու պէս սուրարով երկոտասան մղոնը՝ ժամուան մը մէջ կառնեմ եւ կը հասնիմ , առաջ Աստուած . յուսամ թէ այնչափ խեղճ անմեղաց կոտորուած մը գոնէ մասամբ կ'արդելու՛մ , ըսաւ , ու երիվարը դարձնելն ու անյայտ ըլլալը մէկ եղաւ :

Այն ատեն Օղօրինօ Երմէլինտայի քով մօտենալ լով , բոլոր վերոյիշեալ խօսակցութեանց իմաստը կէտ առ կէտ անոր բացատրեց , իմացընելով նաեւ Լուսօյի յեղակարծ սուրհանդակութիւնը դէպ 'ի Լիմոնօ դա : Ասպետը կը մտածէր նաեւ թէ ինչ կերպով Սրանուհւոյն ալ նոյն նիւթին վրայ խօսք բանայ , որ զինքն ալ խորհուրդին մասնակից ընէ : Սակայն աղջիկը ոչ միայն բերանը չէր բանար , այլ նաեւ աչքերն անգամ անոր վրայ դարձնել չուզելով , միշտ գլուխը վար կախած՝ առջին կը նայէր : Մայրն ալ՝ որքան Լիմոնդայի վրայօք եղածները ուշադրութեամբ մօրիկ ըրաւ , սակայն կարծես թէ խօսակցութիւնը կարճապօտելու համար՝ միշտ ցուրտ ու չոր պատասխաններ կ'ուտար ասպետին , սակայն առանց իւր սիղնուակա նութեանը ու մարդավարութեանը անպատուութիւն մը բերելու :

Ասպետն Երմէլինտայի այս ընդունելութեանը վերայ շարմացած , բիւրաւոր երկբայութեանց ու կասկածանաց լարբւրնութիւնի մը մէջ ընկղմեցաւ . Արդեօք Երանուհին իւր գրած նամակը չէր ընդունած , կամ թէ իր վրայ ունեցած առաջին սիրոյն կրակը մարած էր : Միթէ այս ինամութիւնը մօրը պատուաւոր չէր երեւար , եւ կամ վերջապէս մինչեւ հիմայ արդեօք ուրիշի մը խոստացած էին աղջիկը :

Այս սրտմաշուքէն շուտով մ'աղաատելու համար , կոմսը մէկ կողմն առնելով , սկսաւ ճարպիկութեամբ մ'աղջկանը վրայ խօսք բանալ . եւ վերջապէս չերկընցնելով , պարզապէս զաղջիկն իրեն ամուսին առնելու առաջարկութիւնն ըրաւ հօրը :

Կոմսը՝ որչափ ալ 'ի սկզբան մեծաւ բարեհաճութեամբ զասպետն ու անոր ընտանեաց պատիւն ու արժանապատուութիւնը դովաբանեց , սակայն վերջը խօսքն այնպէս բերաւ թէ ինք՝ ո եւ է կերպով չի կրնար ամենեւին Մարքօյի կամաց դէմ գործելով հնար թշնամանալ :

— Այս ինամութեան Մարքօյի անդամ հաճութիւն ցուցնելուն վրայ կրնամ զքեզ ապահովցնել , ըսաւ Օղօրինօ . որչափ ալ ես զինքը կը յարգեմ ու իրմէ ակնածութիւն ունիմ , սակայն վերջապէս կարծեմ թէ ոչ իւր ծառան եւ ոչ ալ իւր որդին ըլլալովս , աղատ եմ ինձ հաճոյ երեւցած աղջկան մը հետ ամուսնանալ :

Այս պատասխանիս վրայ , կոմսն գլխովն այնպիսի նշան մ'ըրաւ , որ կ'ուզէր ըսել , — սիրելի բարեկամ , դու ճու մտքովդ փեսայ եղիւր , հոգ չէ՛ . բայց ես առողջ գլուխս Աւետարանի տակ չեմ ուղեր դը-



նել . իսկ բերնով մինակ կարճաճօտ պատասխան մը տուաւ թէ՛ բաւական է , ուրիշ անգամ աւելի երկար կը խօսինք այս նիւթիս վրայ :

Իսկ Օդօրինօ , անոր վերջի խօսքերէն լաւ խմանալով մտացը մէջ տպաւորուած անտեղի կասկածը , որչափ ալ ուղեց կերպով մը զինքը համոզել , սակայն կոմսն անոր խօսքը կտրելով , — Ինծի նայէ , ըսաւ , յիբաւի Մարքօյի ինծի ըրած պատիւը՝ իմ արժանաւորութենէս վեր է . . . եւ ինչպէս որ արդէն քեզի երկարօրէն պատմած ալ եմ , իրեն հետ մենք տղաշութենէ՛ ՚ի վեր բարեկամ գտնուած ենք : Ուստի այսչափս բաւական է . . . Իսկ Երանուհւոյն համար խօսածնեբրնուն վրայ դալով , դարձեալ կը կրկնեմ թէ՛ որ ժամանակ այս մասին Մարքօյի կողմանէ ամեն ընդդիմութիւն դադրած տեսնամ , այն վայրկեանէն քեզի կը խոստանամ աղջիկս , եւ ինքզինքս ալ երջանիկ կը համարիմ թէ՛ քեզի պէս սրտիս ուղածին համեմատ երիտասարդի մը . . . Երմէլինտան ալ մեծ շնորհակալութիւն պիտի ցուցնէ յայսմ մասին :

Խօսակցութեան գրեթէ վերջանալուն մօտ , մեր կարաւանը Միլան հասած էր : Կոմսն իրեններովը զատուեցաւ իւր Պրերայի պալատը իջնելու համար . իսկ Օդօրինօ՝ վաղեց Մարքօ Վիսքօնթիի պալատը :



### ԳԼՈՒԽ Ժ .

Մարքօ առանձին խուցի մը մէջ քանի մը պիտանի գործոց թուղթերն անջքէ անցնելու դրադած ատեն . Օդօրինօյի ներս մտնելը տեսնելով , ոտք ելաւ ու ամենայն քաղաքավարութեամբ քանի մը քայլ առաջ գալով . — Այսպէս շուտով դարձար , տեսնելը ինչ լուրեր ունիս Մօնցայէն , ըսաւ :

— Բոլորն ալ տեղո՞ր ու անհանդիստ վիճակի մէջ են , պատասխանեց երիտասարդը , Թէք դուքսէն վախնալով մէկն ալ չի կրնար համարձակիլ գլուխ վերցնելու :

— Որո՞նց հետ կրցար տեսնուիլ :

— Ինծի գրածնեբրնուդ համեմատ , միայն Հոովմայ Պասլին կողմնակից Կուցցինօ Քապացցա , Մօնէկինօ Հէվա եւ Պէրուզիօ Բապպիայի հետ : այս վերջինը խոտտացաւ անպատճառ Միլան գալ արդի գործոց վրայ ձեզի հետ խորհրդակցելու համար :

— Իսկ ժողովրդեան վիճակին վրայ ինչ դատմունք կրցար ունենալ :

— Խիտ գէշ , գիտցած ըլլաք , որ ձեր զրկած Մարթինօ երէցը , մեծ հրաշիւք հաղիւ կրցաւ ազատիլ այն կատաղիներուն ձեռքէն :

— Ուրեմն խիտ հակառակորդ են հակապայ Նիկողայոսին :

— Ա՛չ հակառակ Նիկողայոսի եւ մէջ ալ կողմնակից Յովհաննու , այլ անոնց ամենքն ալ անպարիշտ



անձինք ըլլալով, միմիայն այսպիսի պատճառի մը կ'սպասեն: Եւ հոս Օդօրինօ մի առ մի պատմեց Մօնցայի եկեղեցւոյն մէջ պատահած դէպքերը:

— Անպիտաններ, զոչեց Մարքօ ժպտելով մը, անպիտաններ, սակայն միշտ այսպէս պիտի ըլլայ եւ ամեն տեղէ ալ նոյն բանն է լսածնիս: Սակայն հիմայ իմ դիտաւորութիւնս այդ ժողովը լաւ մը խառնակել չփոթել է, ետքն ալ միացընելը դիւրին է 'ի պէտս: Ա.Երջպպէս խեղճ Մարթինօն . . . .:

— Կրնամ խօսք տալ թէ մէկ մ'ալ չի քարոզել ուխտած է նա, եւ բոլոր կենացը մէջ անջնջելի հետք մը ձգած պիտի ըլլան անոր մտացը մէջ այդ թըշուառներուն ձեռքէն կրածները:

— Կարծեմ թէ, ըսաւ Մարքօ, ճշմարիտն ըսելով . . . ժամանակ մը ինք ալ նզովքի տակ էր, ասով ալ հանդերձ՝ մարդս պէտք չէ ալեւոր ըլլալ, որպէս զի գիտնայ թէ տղէտ ժողովրդեան մը ոտք ելլալը, անողորմ ու յափշտակիչ գազանաց վարմունքէն վար չը մնար: Որովհետեւ երբ ժողովուրդը կը տեսնայ թէ իւր վաստակոցն արդիւնքը, այսինքն արծաթն ու ոսկին, անզգալի կերպով մը իրմէ կորզուելով եկեղեցեաց մէջ լապտերի, կանթեղի, խաչելութեանց ձեւեր են առած, այսպիսի խառնաշփոթ դարու մէջ, պզտիկայծ մը բաւական է մեծ հրդեհ մը բորբոքելու: Եւ ես ալ անոնց հետ կրնամ ըսել թէ եկեղեցեաց կանթեղներն ու լապտերները յախճապակէ եւ կամ հողէ ըլլալովն անգամ, մարդիկ կրնան բարի բերիտտնեայններ ըլլալ: Ա.Երջպպէս սա կուգեմ ըսել թէ ժողովրդեան սիրտը հերձուածողութեամբ դրաւուած չ'է:

— Խորհրդածութիւննիդ ճիշդ է, պապին կամ հակապապին անգամ ի'նչ ըլլալը չեն գիտեր. եւ յայտնի ալ է, վասն զի խեղճ Մարթինօն, որ Յովհաննու կողմնակից էր եւ Նիկողայոսի դէմ կը քարոզէր, այնչափ հալածանք կրելէն վերջը, նոյն բանը Տէլ Պալցօ կոմսին հետ եկող երկրորդի մ'ալ ըրին՝ որ Նիկողայոսի կողմնակից էր եւ Յովհաննու դէմ կը քարոզէր:

— Եկմւ ուրեմն Տէլ Պալցօ կոմսը:

— Քիչ մը առաջ միատեղ հասանք:

— Տեսա՞ր հիմայ քեզի դրկած նամակիս աղդեցութիւնը: Ուրեմն քանի որ ինք հոս է, պէտք է անկէ օգուտ մը քաղել: Պէտք է որ սկսիմ . . . բայց կեցիր . . . կոմսը ամբողջ ընտանեօք եկած պիտի ըլլայ:

— Այո՛, բոլոր ընտանիքովը եկած է:

— Աաղը, եթէ բարեկամաց պղտի խնջոյք մը ընեմ, կրնան արդեօք զանի ալ միատեղ առնել բերել . . . Երմէլինտան . . . յայտնի է, չեմ յուսար որ կարենամ տեսնալ. սակայն . . . Նրանուհին՝ որուն այդչափ հրաշալիքը պատմած ես, եթէ կարենաս հօրը հետ միատեղ հրաւիրել . . .

Օդօրինօ, որուն ուղած բանն էր այս առաջարկութիւնը, վստահանալով որ եթէ իւր տէրը այսչափ հաճոյքով կը թախանձէ զՆրանուհին տեսնալ, Բուսքօնիին ազգական համար եղած առաջարկութիւնը ատով ետ կրնայ թողուիլ, շուտ մը խօսք տուաւ ամենայն հնարք բանեցնել տիրոջն հրամանը կատարելու: Երկրորդ օրն առաւօտուն կանուխ, Օդօրինօ՝ կոմսին երթալով աւետեց որ Մարքօ զինքը Նրանուհւոյն հետ նոյն օրը խնջոյքի կ'ըսպասէ. համոզելով թէ այս հրաւերքիս ընդունելութիւնը իրեն մեծ պատիւ



պիտի բերէ, ինչպէս Մարքոյի նոյնպէս ալ բոլոր Միւ-  
լանու մեծամեծաց առջև, եւ թէ այս բանիս ընդ-  
դիմութիւն ընելն արկանելի է :

Ամեն Երմէլինտայի ալ այս հրաւէրքին վրայ խօսք  
բանալով, անկէ ընդդիմութիւն մը չը տեսաւ : Վա-  
սըն զի Երմէլինտա կը մտածէր թէ նախ եւ առաջ աղ-  
ջիկը բնականապէս Օդօրինոյի կողմանէ հրաւիրուած  
պիտի սեպուեր, եւ երկրորդ թէ քանի որ Օդօրինօ  
բացէ 'ի բաց զԵրանուհին իրեն ամուսին առնելու ա-  
ռաջարկութիւնն ըրած է, դուցէ Մարքօի կողմանէ  
ասպետին համար առաջուց խօսուած խնամութիւնը  
ետ ձգուի, որով եւ պէտք կը համարէր զԵրանուհին  
մէկ մը Մարքօյի ներկայացնել : Սակայն որչափ ալ  
խեղճ կ'իկը՝ իւր աղջկանն այն ահաւոր մարդուն ներ-  
կայանալը աչացն առջին բերելով կը դողար, այսու  
ամենայնիւ հրաման տուաւ Երանուհւոյն որ այս հրա-  
ւէրքէն կտ չը մնայ :

Մարքօ Վիսքօնթի իւր պայտափն սրահից մէկուն  
մէջտեղը՝ Միլանու ընտիր ու աղնուական ընտանեաց  
երիտասարդներէն շուրջպատեալ սեղանի կ'սպասէր :

Հրաւիրելոց խումբին ամենէն նշանաւոր անձե-  
րէն մէկն էր Ս. Ամբրոսիոսի եկեղեցւոյն արքանօր եղ-  
բայրը Լօորիդիօ Վիսքօնթին . Մարքօի ամենէն ըն-  
տիր խորհրդատուն եւ բոլոր իւր դաղտնի դործոց մե-  
քենայորդ : Տեսքով գեղեցիկ, քառասուն տարուան  
մօտ, յաղթանդամ, բայց բնութեամբ անհանդարտ  
ու խառնակիչ մէկն ըլլալով, շատերուն առջին մեծ  
համարում է' ունէր : Այս մարդը Օդօրինօի հակառա-  
կորդն ըլլալով կուզէր զանի միշտ ընկճել, եւ այլ եւ  
սլլ պատճառներով քանի մը անգամ մէկ մէկու հետ

կռուելնուն համար, Մարքօ որչափ ալ զիրենք հաշ-  
տեցուցած էր, սակայն Լօորիդիօ միշտ պղտի առթի  
մը կսպասէր որ զՕդօրինօն կորսնցնէ :

Մտաւայ մը՝ Տէլ Պալցօ կոմսին գան իմաց տու-  
աւ, մէկէն բոլոր սրահը գտնուող անձանց աչքերը  
դէպ 'ի դուռը դարձան : Տէլ Պալցօ կոմսին Երանուհ-  
ւոյն ձեռքն բռնած սրահէն ներս մտնալը տեսնուե-  
լուն պէս, Մարքօ շիտթած նոյն ժամայն ընդ առաջ  
վազեց : Իսկ Երանուհւոյն առջին նայելով եւ պար-  
կեշտափայլ կարմրութեամբ մը յառաջ գալը, կար-  
ծեա թէ Մարքօի արիւնը երակներուն մէջ խառնա-  
կեց . վասն զի աղջիկը՝ վարմուհքով, դէմքով եւ  
չնորհիւ, բոլորովին Երմէլինտայի կը նմանէր :

Այսու ամենայնիւ Մարքօ, իւր այլայլելը ծած-  
կելով, ամենայն յարգանքօք ու սիրով ընդունելութիւն  
ըրաւ կոմսին ու միանգամայն աղջկանը . երկուքին  
հետ ալ իրենց աստիճանին համեմատ ամենայն քա-  
ղաքավարութեամբ խօսակցութեան սկստ, մինչեւ  
որ ծագայ մը սեղանին պատրաստ ըլլալն իմացուց :  
Ուստի խնջոյից հրաւիրեալներուն ամենքն ալ միա-  
տեղ անցան անկէ ուրիշ սրահ մը, ուր Մարքօ աջ  
կողմը զԵրանուհին, եւ Տէլ Պալցօ կոմսն ալ ձախ կողմն  
առնելով, բոլորը մէկէն սեղան բազմեցան :

Սեղանին տեսքին ու փառաւորութեանը, եւ ծա-  
ծայից կառավարութեանը վրայ երկարօրէն ձառելը  
որքան ալ պարաս կը համարիմ, սակայն այս խըն-  
ջոյն Երուպիոյ ամենէն հարուստ իշխանաց եւ պա-  
լատականաց սրահից մէջ տրուած խնջոյից կարգը կ'ըր-  
նար սեպուիլ : Սեղանին վրայ ձգուած գեղեցիկ ու  
ծուպերով ասեղնագործ ծածկոյթը, պատտառակալները,



արծաթէ եւ ոսկեզօծ պնակները , սեղանին մէջտեղը դրուած յախճապակէ եւ բիւրեղէ , բիւրաւոր ձեւերով՝ ծաղկի ու անուշահոտ ջուրերու գեղեցիկ ամաններուն փայլիլելը եւ կերակուրներուն մէջ ալ , մեծ արհեստով երուած եւ իրենց դուռաւոր փետուրներովը զարդարուած հազուագիւտ որսի թռչնոց տեսքը , հիանալու եւ ապշելու տեսարան մ'էր : Երբեմն երբեմն լուացուելու համար՝ անուշահոտ ջրերն ալ անպակաս էին . . . վերջապէս՝ քաղցր ըմպելեաց յեալին բաժակահարութիւնը աւարտելուն պէս , յանկարծ տասներկու դիցուելիք՝ քան թէ օրիորդք՝ սրահէն ներս մտան :

Իւրաքանչիւրն ալ հարուստ , չքեղ եւ զանազան գոյներով զգեստաւորուած էին . բոլորն ալ երկայն մաղերնին մարգարտափայլ ուսերնէն վար ետեւնին ձգած , եւ հանդիսականաց համար պատրաստուած այլ եւ այլ ընծայներէն զատ՝ ամենքն ալ մէյմէկ փառաւոր նուիրական պարգեւներ ձեռքերնին բռնած էին : Ասոնց ետեւէն ընծայաբեր ծառայներու խումբ մ'ալ ներս մտնելէն վերջը , Մարքօ տեսնալով որ Երանուհւոյն արժանի նուէր մը չը պիտի կարենայ ընարել անոնց մէջէն . չուտ մը իւր նիզակակցաց մէկուն աչք ըրաւ , որն որ հինգ վայրկեանի չափ սրահէն անյայտ ըլլալէն յետոյ , ոսկիէ ափսէի մը մէջ մարգարտէ թագ մը դրած ներս մտաւ :

Այն ատեն Մարքօ ոտք ելլելով երկու ձեռքովն առաւ այն թագն ու նախ Երանուհւոյ առջեւ , մէկ ծունկը գետին դրաւ եւ ապա կանգնելով , անոր գլուխը դնելով ըսաւ . — Խնջոյից թագուհւոյս երկար կեանք կը մաղթեմ յԱստուծոյ : — Հետեւաբար բոլոր

հանդիսականք նոյն խօսքը ծափահարութեամբ կըրկնեցին :

Ասկէ վերջը Մարքօ աղաչնց Երանուհւոյն՝ որ իրենց ներկայութեանը պատիւ ընող պաշտօնէից եւ ասպետաց պարգեւաբաշխութիւնը իւր ձեռքը կատարէ : Ուստի Երանուհի ոտք ելածին պէս բոլորն ալ ոտք ելան : Մարքօ անձամբ , իրրեւ թիկնապահ՝ պարգեւները մի առ մի ծառայից ձեռքէն առնելով սկսաւ Երանուհւոյն յանձնել , ան ալ կարգաւ իւրաքանչիւրին ամենայն նազելի յարգանօք կը նուիրէր , որոնք ընդունած ժամանակնին մէկ ծունկի վրայ դալով Երանուհւոյն զգեստին ծայրը կը համբուրէին : Օգորիտի փառաւոր պողպատէ սաղաւարտ մը տուած ժամանակը՝ մեզի ծանօթ մէկը նշմարեց , որ Երանուհւոյն ձեռքը բնականէն դուրս կը դողդողար . բայց այս պարագան զէնքին ծանրութեանը տուաւ :

Ամենէն վերջն էր մնացած Տէլ Պալցօ կոմսը , որուն համար Մարքօ փառաւոր բազէ մ'էր պատրաստած : Ուստի ան ալ ուրիշներուն պէս ծնրադիր եւ աղջրկանը զգեստին ծայրը համբուրելով զայն ընդունելէն վերջը , չը կարենալով սրտին խնդութեան զգացումը զսպել , արտասուօք Երանուհւոյն վիզը պլուեցաւ ու հայրական քաղցր համրուրիւ մը գոչեց . — Կրթեակ , Աստուծոյ օրհնութիւնը միշտ վրադ ըլլայ : Այս խօսքին ամենքն ալ ծափահարեցին :

Երբոր կոչնականները նորէն տեղերնին բազմեցան , Մարքօ դառնալով Երանուհւոյն ըսաւ . — Տղ գեղեցկագոյն թագուհի հանդիսիս , բոլոր այս հանդիսականաց մէջ միայն էս պիտի մնամ արդեօք առանց փոքր ինչ պարգեւ մը ընդունելու ձեր ձեռքէն : Ե-



թէ այս հարցմունքս իրաւացի կը դատէք, յուսամ թէ դոնէ պզտի ժապաւէնի կամ դերձանի մը կտորով եւ կամ ո՛ր եւ իցէ յանպատրաստից տրուած պարզեւով մը այժմեան ձեզի ըրած ծանայութեանս կը փոխարինէք :

Երանուհւոյն չնորհալի դէմքը կարծես թէ կարմրագոյն քօղ մը զգեկնով այլայլեցաւ . սակայն հայրը քովէն : — շուտ ըրէ, կ'ըսէր, վրայէդ հանէ բան մը տուր . . . Ինչ որ ալ ըլլայ, շուտ ըրէ, թո՛ղ սա ապարանջաններէդ մէկն ըլլայ : Աղջիկը հնազանդեւով հօրը խօսքին, ձախ թեւին աղամանդեայ ապարանջանն հանեց եւ Մարքօ շուտ մը խոնարհ յարգանք ընդունեց Երանուհւոյն վերջի ընծան :

Սեղանը վերցուելով, հանդիսականք խումբ խումբ ասգիս անդին ժողովուած սկսան օրուան եղելութեանց վրայ խօսակցիլ : Պապի ու հակապապի վրայ խօսք բացուելով, Տէլ Պալցօ կոմսը սկսաւ այս նիւթիս ծուծը հանել եւ յայտ մասին, ունեցած բոլոր գիտութիւնը շտալաբար վատնել . եւ երբեմն ալ լատիներէն օրինակներ մէջ բերելով կ'ուզէր բոլորը միատեղ համոզել : Սակայն այն երիտասարդ ասպետներն իրենց զէնքերնէն ու ձիերնէն զատ գիտութիւն չ'ունենալով՝ կը ձանձրային անոր քարոզութենէն : Աերջապէս ունկնդրաց միաբն իյնալով որ Աստուած իրենց ալ լեզու տուած է, սկսան մէկը մէկդիլէն միւսն ուրիշ կողմէ բաժնուիլ, մինչեւ որ չորս հինգ հոգի մնացին կոմսին քով, անոնք ալ մեր քարոզչին պզտի շնչատութեան մը ժամանակը անկէ հեռանալով մէկալնոնց քովը դացին :

Ասոնց խօսքն ալ Ացժօ Ախքօնթի անուն թագաւորական տեղակալին 'ի պատիւ' տեղի ունենալու

նիղակամարտին վրայ կը դառնար : Շատ մը հարց ու փորձէ վերջը, Լօտրիդիօ ծոցէն մագաղաթի մը կըտոր հանելով . — ահաւասիկ, ըսաւ, ինչ որ ըստ առ բառ մուսնտիկին բերնէն լսուած է :

Բոլոր հանդիսականք շուտ մը Լօտրիդիօ բոլորը ժողուելով՝ սկսան ուշադիր ըլլալ :

«Արքունականք, պարոնայք եւ մեծամեծք, ձեղի կ'իմացնեմ որ ասկէ ամիսէ մը վերջը Լոմպարտիօ Միլանու մէջ՝ նիղակամարտութեան փառաւոր հանդէս մը պիտի կատարուի :

Ստորագրեալքս, Միլանցի եւ օտարական ասպետք, պարաք կը համարիւք նախ արանց եւ ապա գեղանի եւ աղնուատոհմ ասպետներեաց եւ կանանց պատիւը պաշտպանելու : Նոյնպէս ալ գերբարգոց Ացժօնէ Ախքօնթիին տեղակալութեան չնորհիւր բոլոր քաղաքացւոց զգացած ուրախութիւնը յայտնելու . ուստի արեգակը ծագելուն պէս, յետագայ պայմաններով նիղակամարտութեան ժողովը որոշեցինք :

Ա. Կրկէսին մէջ, չորս նիղակի հարուած՝ ձիու վրայ, զատ հարուած մ'ալ 'ի պատիւ տիկնոնց :

Բ. Չիու վրայ, սուսերամարտ, նախ առանձին, վերջը երկերկու եւ ապա ամենքը միատեղ, ըստ հասոյից պաշտօնակալաց կրկէսին :

Գ. Պաշտօնակալք մի եւ նոյն երկայնութեամբ ու հաստութեամբ նիղակներ պիտի ընտրեն, իսկ սուսերաց ընտրութիւնը մարտնչողաց պիտի ձգուի :

Դ. Ո՛վ որ ձիուն հարուած տայ, կրկէսէն դուրս պիտի հանուի :

Ե. Ո՛վ որ աւելի նիղակ կտորէ ու քաջութիւն ցուցնէ, զրան մը պիտի ընդունի 'ի պարգև : :



2. Մարտնչողք՝ պարտաւորեալ են նախ կրկէսին ճակատը կախուած վահանաց մէկուն եւ կամ քանի մը հատին եւ եթէ կամենան, ամենուն ալ դպչիլ յետոյ հազարապետի մը հրամանին տակ, ամենքն ալ պիտի զինուին :

է. Վերը ըսուածին համեմատ, պարտաւորեալ են մարտնչողք նաեւ անձամբ բերել կամ պատուաւոր անձանց ձեռօք բերել տալ իրենց վահանն ու զէնքերը եւ յանձնել պաշտօնակալաց՝ որպէս զի նիզակամարտութիւնը սկսելէն յառաջ այն զէնքերը պատշաճ տեղը կախուին :

Եւ եթէ որոշեալ ժամուն զէնքերնին կախուած չի տեսնուի, չի պիտի ընդունուին առանց մասնաւոր հրամանի պաշտօնակալաց եւ գերջարդոյ տեղակալիս :

Վերոյիշեալ պայմանները վաւերացընելու համար կ'ստորագրեմք .

Ունկնդիրներէն քանի մը հոգի, — տեսնենք ստորագրութիւններն ալ, տեսնենք, կանչեցին :

Ուստի, ահա ձեզի ստորագրութիւններն ալ ըսելով առաջ տարաւ այսպէս .

« Սաքրամօրօ Լիբրանտօ .

« Օդօրինօ Վիսթօնթի .

« Պրօնցին Քայիմօ .

« Բինալու .

« Բիէթրօ Մարավիլիա .

« Թանցօ .

« Պիրակի եղբարք .

« Պօսսի եղբարք ,

« Պէրթօնէ Քաքաթօսիլի .

« Լօրէնցուօլօ տա Լանարիանօ :

Միլան, յամին 1329 այս ինչ ամսոյն . . . այս ինչ օրը . . . դեռ ուղեւոր բան մ'ունիք :

Տէլ Պալցօ կոմսը, եւս առաւել Մարքօյի իրեն եւ թէ Նրանուհոյն ցըցուցած հիւրընկալութենէն եւ պատուէն յաիշտակուելով քան թէ իւր ըրած քարոզութենէն հողնած՝ քիչ մ'ատեն թմրած ու այլ եւ այլ խորհրդածութեանց մէջ ընկղմած էր . սակայն վերոյիշեալ ընթերցողութեան ձայնը դադրածին պէս՝ սը չի կարենալով համբերել, ելաւ եւ յանկարծ այդ ունկնդիր երիտասարդաց ժողովոյն մէջ մտնալով, ըսաւ .

— Ըսել է որ հոս նիզակամարտութեան ու սուսերամարտութեան վրայ կը խօսուի . դիտե՛ք արդեօք ինչ ըսել է նիզակամարտութիւնը, ես ձեզի մեկնեմ անոր իմաստը : Նիզակամարտութիւնը Լատիներէն եւս բառէն ծագած է, որ մօտ կը նշանակէ, վստարն զի ասիկայ մօտէն պատերազմ մ'է :

Ժողովականաց մէջէն այս տեսակ հմտութեանց ամենեւին պէտք չունեցող մը, վերոյիշեալ ընթերցողին դառնալով հարցուց . — արդեօք որո՞նք պիտի դատուին կրկէսին մէջ իբրեւ դատաւոր :

Սակայն կոմսը առանց ժամանակ ձգելու որ անոր հարցմանը պատասխանուի, դարձեալ սկսաւ շարունակել իւր քարոզութիւնը . — զիտցած ըլլաք որ նիզակամարտութեան սովորութիւնը շատ հին է : Տրովագայի պատերազմէն մնացած ըլլալովը, մենք դանի կը կոչենք Թրօյէս Եւրօպայ, որ է ըսել Տրոյական խաղ եւ կամ պատերազմ Տրոյիոյ : Որովհետեւ Հոովմայեցիք պատերազմին ալ Եւրօպայ կ'ըսեն . իբր թէ պատերազմն իրենց համար խաղ մ'եղած ըլլայ : Սա-



կայն մէկէ մ'ալ պատասխան չ'առնելով, մեր քարոզիչը կամաց կամաց հասկցաւ ունկնդրաց դէմքերէն ու կերպերէն, որ այս ստուգարանութիւններէն համ մ'առնող չի կայ. ուստի պէտք եղաւ որ լռէ: Այսու ամենայնիւ խօսակցութիւնը ղինուորական արհեստին վրայ դարձնելով, բոլոր իւր հմտութիւնը մխտելէն վերջը, սկսաւ երկայն բարակ նոյն նիւթին վրայ գրող երեւելի հեղինակաց գրուածքները մէջ բերել: Իսկ իրեն բոլորը շարուած անձինքը որոնք ամենքն ալ արդէն ղինուորական էին, բնականապէս աչքերնուն ծայրոյն իրարու երես նայելով՝ քթերնուն տակէն կը ծիծաղէին:

Մարքօ, Երանուհւոյն քովէն ամենեւին չի գտուելով՝ բոլոր այս միջոցիս քաղցր մարդավարութեամբ հետը կը խօսակցէր: Երբոր Տէլ Պալցօ կոմսը քովերնին գնաց՝ Մարքօյէն հրաման առնելու որ իւրարմէ բաժնուելով Երանուհւոյն հետ սուն դառնան, Մարքօ շուտ մ'առանց ընդդիմութեան մինչեւ սրահին վերջի ծայրը՝ աղջկան ձեռքէն բռնած երթալէն վերջը, յանձնեց զինքը մեծամեծ գովաբանութիւններով իւր հօրն՝ ու ըսաւ. — Յուսամ թէ ուրիշ անգամներ ալ զիս ձեր ներկայութեամբը կը պատուէք:

Կոմսին ոտքերը գինովի պէս գեանէն կտրած էին. տուն հասածին պէս Մարքօյին՝ իրեն ու աղջկանը ըրած ընդունելութիւնը եւ պատիւն Երմէլինտայի պատմեց: Ան ալ ուրախութեամբ մխիթարուեցաւ, վստահանալով որ անշուշտ Օդօրինօ՝ Երանուհւոյն հետ ամուսնանալուն խօսքն իւր տիրոջը բացած է: Եւ ասկէ իր մաքէն կը հետեւողներ թէ Մարքօյին ալ կոմսին եւ Երանուհւոյն ցրցուցած մեծարանքն ու պա-

տիւը, իւր հաւանութեանը նշանակ եղած ըլլայ:

Քիչ մը վերջը Օդօրինօ ալ ուրախ զուարթ վրայ հասնելով, երբոր խօսք բացուեցաւ նոյն աւուր հանգիսին ու զուարճութեանց վրայ, ասպետը շուտ մը հասկըցաւ կոմսին ու Երմէլինտայի մտաց համոզումը թէ՛ Մարքօ Երանուհւոյն հետ իրեն ամուսնանալուն հաւանութեանը նշանակ ըրած ըլլայ նոյն աւուր խքնջոքը: Ուստի Օդօրինօ ամենեւին իրենց համոզմանը վրայ դատողութիւն մը չընելով, նոյն վայրկեանէն միտքը դրաւ առաջին յարմար միջոցաւ այս բանս տիրոջը յայտնել: Եւ արդէն այս խնամութեան վրայօք Մարքօյի հաւանութեանը վստահացած ըլլալուն համար: Օդօրինօ այս մասին պէտք եղած խօսակցութիւնը Երանուհւոյն ծնողաց հետ ընելով, անոնցմէ վերջին եւ հաստատուն խօսքն առաւ:

Այն ատեն կոմսն Երմէլինտայի աչք ընելով՝ դարձաւ Երանուհւոյն, որն որ կարմրած՝ դուրսը վեր առնելու կ'ամչնար. — Ինձի նայէ աղջիկս, ըսաւ երգիծական ծիծաղով մը, « ինձի նայէ, մենք հիմեց մեր հաշիւն ըրինք առանց պանդոկապետին հարցնելու, այսինքն գրեզ խօստացանք առանց ջու հաւանութեանդ, զուցէ դու մեր ձեռնարկութեան հակակրօթիւն մ'ունենաս:

Կարծես թէ Երանուհւոյն շնորհափայլ երեսը կարմիր քօղ մը զգեցաւ եւ հօրն ալ պատասխան մը տալ չի կարենալով, այլայլութենէն միայն մօրը ձեռքը կըրցաւ բռնել:

Երմէլինտա շուտ մ'աչք ըրաւ կոմսին որ ծաղրածութիւնը դադրեցնէ, եւ յետոյ Օդօրինօյի դատնալով, — որքան ալ այդ պատասխանը միայն իրմէ



կ'սպասուելի, սակայն առ այժմ անոր կողմանէ միայն մօրն այն ըսելովը գո՛՛ն եղէք, ըսաւ :

Ասոր վրայ, երբոր Օգորինօ երթալու եղաւ, աղջիկը զլուխը վեր առնելով ու միանգամայն առանց դեռ մօրը ձեռքը թողուլու, ըսաւ . — Վաղը անշուշտ պիտի դաս, այնպէս չէ :

— Հն՛, հն՛, հն՛, նայէ ինչպէս սա սուրբ Լուչիայի լեզուն վերջապէս բացուեցաւ, սկսաւ դռչել կոմսը ծիծաղելով, հն՛, հն՛, հն՛ . . . թշուառական քեղի :

Ասպետը դուրս ելաւ, ու տունը մնացողներն ալ զուարթ ու գո՛ն սրտիւ սենեակներնին քաշուեցան :

Գ Լ ՈՒ Խ Ժ Ա .

Երեք լուցկիով արծաթէ կանթեղ մը Մարքօ Վիսթօնթէի գաղտնի սենեակը կը լուսաւորէր : Լօտրիզիօ ակտի մը վրայ նստած եւ արմուկն ալ առջեւի գլորակաղանխն ու ձեռքը ծնօտին դրած՝ տանը տիրոջը հետ կը խօսակցէր :

— Աւտրիապահով կրնանք ըլլալ, կ'ըսէր մեր վարպետ խորհրդատուն, որ այսօր Մօնթէքօրթէի դուքսը՝ ստացաւ քսանը հինգ հազար ոսկի Ֆիօրինի գումարը՝ զոր Լուդուվիկոս Պաւարօն եղբորորդուդ Այցօնէի անուանը զրկած պիտի ըլլար, եւ վազն ալ իւր Ալմանեայի գունդերովը Թիրօլի ճամբան պիտի բռն-

նէր՝ մէկ մ'ալ ետ չը դառնալու մտօք : Իսկ կայսրը՝ որ պատրաստ ստակով Թոքսնայի մէջ կապասէ զինքը, երբոր այս լուրն առնու, կրնաս երեւակայել թէ ինչ պիտի զգայ . այսու ամենայնիւ զիտցած ըլլաս որ այս դէպքը մեր բանին խիստ աղէկ կուգայ :

— Անշուշտ, պատասխանեց Մարքօ :

— Ի վերայ այս ամենայնի, առաջ կը վարէր միւսը, այս առաւօտ ըսածներդ ալ իրաւացի էին . վասն զի այս ձեռնարկութիւնը տակաւին խմորած չէ, ուստի պէտք է թողուլ որ ուղարկուած քահանայք եւ եղբարք, քիչ շատ իրենց յանձնուած գործն առաջ տանին : Պէտք է նաեւ սպասել որ Պաւարօն օր քան զօր թէ դրամով եւ թէ զօրքով սկարանայ : Ո՛հ, հիմայ միաքս ինկաւ . . . գիտես թէ ութը հարիւր Ալմանեայի հեծելազօրաց համար կ'ըսեն թէ իրենց գրօշակնին ուրանալով Վալտի Նիէվօլէ հոգիտն մէջ Ձէրուլիօյի բերդը քաշուեր են . կարծեմ թէ այս լուրը տեղակալին պալատը տակաւին հասած չ'է :

Մարքօ, այս միջոցիս գլուխը կախած՝ բոլորովին ուրիշ խորհրդածութեանց դբաղած ըլլալուն, հաղիւ թէ երբեմն երբեմն Լօտրիզիօյի խօսքերէն մէկ քանին ականջին շիտկէ շիտակ հասած էր : Այսու ամենայնիւ Ձէրուլիօ բառին հնչմունքը, կարծես թէ զինքը բառին թմբութենէն արթնցուց, եւ իբր թէ բարեկամին ամբողջ խօսակցութեանցն ունկնդիր :

— Ձէրուլիօյի գունդերուն համար կ'ըսես, այնպէս չ'է :

— Այո՛, արդեօք եղբայրդ եւ կամ տեղակալը՝ ասոնց վրայ տեղեկութիւն մը ունին :

— Բուն իսկ Պաւարօն տեղեկացած են, ըսաւ .



Մարքօ, մանաւանդ թէ կայսրը վերջին ձիգը կը թափէ որ եղբորորդւոյս ձեռօքը եկեղեցական վարչութեանն ստակ առնէ, յուսալով թէ այդ ասպտամբ խուճերը ստակով կարենայ շահիլ:

— Ի՞նչ կ'ըսես:

— Գաղտնիքն իմ քովս է, կ'ըսէր Մարքօ, գիտես թէ Ացցօնէ ինչ մտքի վրայ է գիտցիր տեսնեմ . . . կ'ըսէ թէ ստակի տեղ զիս Ձերուլիօ զրկէ:

— Ի՞նչպէս:

— Կ'ուզէ որ ես Ձերուլիօ երթալով, այդ ասպտամբաց խուճը ժամանակ մը հանդարտ բռնեմ, մինչեւ որ ինքն՝ ասղին պէտք եղած ստակը կարենայ ժողվել:

— Խեղճը, բան մը չը գիտեր, ըսաւ Լօտրիզիօ, ծիծաղելով մը:

— Սակայն դիտնաս որ գործն այս տեղուանքն է, կ'ըսէր Մարքօ, եւ ճիշտ այս առաւօտ զիս տեսնալով՝ շատ մը խօսքերէ վերջը, կ'ըսէր թէ ինձմէ ուրիշը չը կրնար այս ձեռնարկութիւնը վրան առնուլ. որովհետեւ այն Ալմանեացիները զիս ճանչնալով՝ ինձի միայն կրնան հաւատալ: Յետոյ իմ հազար ու մէկ կերպով անոնց հետ ինկած ելածներս մէջ բերելով . . .

— Ի՞նչ ըսել է, ինչ ըսել է, կ'երեւայ թէ սըղայ չէ եղեր. քու ձեռնարկած գործերդ՝ կոյրերն անգամ տեսած են:

Մարքօ ժպիտով մը խօսքն առնելով. — Գիտես թէ ինչ նոր գիւտ մը եկաւ միաքս:

— Ի՞նչ:

— Իրենց լարած գարանին մէջ զիրենք որսալ:

այսինքն երթալ Ալա տի Նիէվօլէ հովիտը, ինչպէս որ ինքը կ'ուզէ, եւ շահիլ այդ ութը հարիւր հեծելագօրքը՝ որոնք ամենքն ալ ինձի համար պատրաստ են կրակի մէջ անգամ վաղելու, եւ իմ հաշուիս բռնել զիրենք ստակով. դու դարձեալ քու դիտաւորութենէդ ես մի կենար, եւ երբոր Պապարօն գայ իրեննելը ոտք հանելու, ես անդիէն Թօսքանայի օգնութեամբը Ձերուլիօյի ութը հարիւր հեծելագօրովը ետեւէն կը հասնիմ:

Լօտրիզիօ ցատկելով կանչեց. — Եղբորորդի, գիտցիր որ այս գիւտը աշխարհք կ'արժէ:

— Բաւական է, ուրիշ անգամ աւելի երկար կը խօսինք ասոր վրայ, ըսաւ Մարքօ, ես ալ կարծեմ թէ ասկէ մեզի մեծ շահ մը կրնանք հանել. այս գիշեր ժամանակ չ'ունիմ, վաղը կը տեսնուինք:

— Այս մէկ հրաշաւոր գիւտ մ'է, կ'ըսէր Լօտրիզիօ, դէպ 'ի սենեկին դուռը երթալով, մէկ մը որ Ալա տի Նիվօլէ հովիտն իջնաս, Յիրէնցա գացող եկողներուն ալ մեծ ասպնովութիւն պիտի ըլլայ:

— Ազէկ ըսիր, ըսաւ Մարքօ, խօսակցութիւնը վերջացնելու համար. պէտք է այս գիշեր Յիրէնցա գրելու նամակներս պատրաստեմ: Գիշեր բարի Լօտրիզիօ, Աստուած հանգստութիւն տայ:

— Մնաս բարեաւ, պատասխանելով, ան ալ խուցէն դուրս ելաւ:

Մարքօ մինակ մնալով, քիչ մը ժամանակ գլուխը կախած սենեկին լայնքն ու երկայնքը երազաքայլ ափեց: Երբեմն գլուխը կը շարժէր՝ երբեմն ալ ձեռքերը, կարծես թէ մտացը մէջ ծանր խորհուրդ մը զինքը կը նեղէր: Վերջապէս հաստատուն կամօք մը



երկու ստիցը վրայ կանգնած ու ինքն իրեն հրամայելու եղանակաւ մը դռնէն . — վերջապէս պէտք է որ Ֆիրէնցա նամակ գրեմ : Ուստի աւելի հանգիստ նըստելու համար քովէն կախած սուրը հանելու ժամանակն անոր բռնելու տեղը կապած Երանուհւոյն պարգեւն աչքին զարկաւ : Քիչ մ'ատեն ուշադիր անոր վրայ նայելէն վերջը , վերցընելով զայն աչաց ներկայութենէն նստաւ գրասեղանին դիմացը , քաշեց մազաղաթի մեծ թերթ մը , առաւ գրիչը , թաթխեց կաղամարին մէջ եւ տեսնելով որ հաստ կը գրէ , սկըսաւ կտրելով գրիչը բարակցընել : Սակայն ո եւ է կերպով անկարելի եղաւ գրիչը շտկել , վերջապէս ձեռքը մնացած գրչին կտորը նետելով ամբողջ մ'առաւ ու լաւ մ'ուզածին պէս կտրելով , սկսաւ . — Ընդհանուր մեծամեծաց , իշխանաց եւ բարեկամաց որք 'ի Ֆիրէնցա , ողջոյն , Ասիկայ գրելով կոնակն անթողին տուաւ , եւ աչքերն ալ պատուհանին յառած սկսաւ գրելու նամակին վրայ հորհրդածել : Սակայն ոչ կոնակն անթողէն եւ ոչ ալ աչքերը պատուհանէն կը զատուէին , որով նամակն ալ բնականապէս առաջ չէր երթար : Վերջապէս աչքին առջին կեցած հաստ մազաղաթէ գրուածք մը բարկութեամբ անդին նետելով , ոտքի ելաւ եւ ձեռքը ձակտին դրած սկսաւ պարտելով ինքնիրեն ըսել . — բայց չէի կարծեր որ այսչափ Երմէլինտայի նամանի . միթէ Օդորինո ինծի չէր գրած , եւ բերնով ալ ինծի այնչափ անգամ չէր պատմած . . . Ինչ պարզ գեղեցկութիւն դիմաց . . . ձայնը , ժպիտը , բոլոր շարժումներն ու աչաց դարձուածքը բոլորովին մայրը կը ներկայացնեն . . . Խեղճ աղաւնի . . . Իւր շնորհալի դիմաց տեսիլը , իւր խօ-

սակցութեանց ներդաշնակ ու քաղցր ձայնը ականջիս հնչելուն պէս , ինքդինքս մատաղ հասակիս երջանիկ եւ յուսալից տարիներուն մէջ կարծեցի . . . Ա՛հ , ո՛ւր գացին արգեօք այն տարիները՝ յորում աակաւին աւնիրաւութեան մահաբեր շունչը՝ մատաղ սիրտս չէր պղծած . . . Երմէլինտայի ջուրը , ամեն առարկայ ինծի կը ժպտէր , ամեն բան քաղցր էր . . . բայց վերջը , ինչպիսի վիշտեր եւ դաղրութիւններ . . . Այո , ես ալ գլորեցայ այսպիսի տիղմերու մէջ , ես ալ իմ բարկութիւնս արեամբ յաղեցուցի , գիտնալով անգամ թէ ես այդ աղջկան համար չէի ծնած . . . Երանուհի . . . գեղեցիկ անուն մ'է . . . :

Հոս իբր թէ իրմէ վար աստիճանի մարդու մ'ամօթալի յանցանացը վրայ դիտողութիւն մ'ընելու պէս , դառն ծիծաղով մը սկսաւ . — Արդեօք գու՛ ես , դու այն Մարքոն ես , յորմէ Խտալիոյ այդչափ երկիրներուն բաղբը կախեալ է . միթէ գու՛ ես բիւրաւոր եւ զժուարին դէպքերով կրթուած Մարքոն . . . ապագային ընդարձակ ու միանգամայն խաւարային սեմին վրայէն քաջութեամբ եւ անկրկիւղ սլացած ատենդ՝ աղջկան մը համար դանդաշէլ . . . Ինչ պիտի ըսէ Լօարիգիօ . . . Ո՛հ , թող աներեւութանն այդ սաղակալի ամպերը , եւ թող իմ աստղս դարձեալ փայլի իւր բոլոր փառացը մէջ . . . այո , այնպէս պիտի ըլլայ :

Ուստի քիչ մը առաջ սկսած նամակը դարձեալ առնելով , առանց գրիչն ու աչքերը վեր առնելու , ամբողջ չորս երես նամակ մը գրելէն վերջը , իրեն կողմնակցացը , պապին , կայսեր եւ զինուորական այլ եւ այլ արհեստից վրայ երեւակայութիւնը պտտացը-



նելով, քաշուեցաւ իւր մասնաւոր պառկելու խուցը :  
 Քանի մը օրէն Օդօրինօ՝ Քապիաէն դառնալով,  
 ուր գնացած էր քանի մը ապստամբելոց հետ դաշ-  
 դակցելու համար, տիրոջը ներկայանալէն առաջ միա-  
 քը դբաւ որ Երանուհւոյն հետ ամուսնանալու դի-  
 տաւորութիւն ունենալը յայտնէ, եւ աղաչելով անոր  
 հաւանութիւնն ալ ստանայ : Սակայն այնչափ խստա-  
 սիրտ, այնչափ տխուր եւ բարկացած դտաւ զինքը,  
 որ ստիպուեցաւ ընելու առաջարկութենէն ետ կե-  
 նալ : Ուստի իր գործին վրայով պէտք եղած տեղե-  
 կութիւնները տալէն վերջը, կերպով մը Տէլ Պալցօ  
 կոմսին վրայ խօսք բացաւ, մէջ բերելով նաեւ կոմ-  
 սին քահանայի մը հետ Յովհաննէս պապին ապօրինու-  
 թեանը վրայ տաք տաք վիճելն ու վերջապէս քահա-  
 նային ալ կոմսին կարծեացը համոզուելը :

Մարքօ, այսպիսի գործի մը եղելութեանը վրայ  
 մտքէն կը ծիծաղէր, վասն զի ինքն իսկ երկար ատե-  
 նէ ՚ի վեր ամենաբարակ կանխատեսութեամբ մեքե-  
 նայած էր այս գործը : Եւ հոս պէտք է իմացնել մեր  
 ընթերցողաց թէ կոմսին Միլան հասած օրէն, Մար-  
 քօ ուղելով որ զինքն առաջուց ուղածին պէս բռնէ,  
 այնպէս մը ըրած էր՝ որ կոմսին տունը միշտ գիտնա-  
 կան անձանց եւ երեւելի առպետաց յաճախելովը զա-  
 նի կղբաղեցնէր . որպէս զի գլխաւոր եւ մասնաւոր  
 եղելութեանց վրայ խօսուելով՝ վիճաբանութիւն պա-  
 կաս չ'ըլլայ : Գիտնալով նաեւ կոմսին դատման ու  
 ճոռումաբանութեան ուժը, քանի մ'ալ իրեն համե-  
 մատ անձինք գտած էր, որոնցմէ մեր ընթերցողաց  
 ամենէն ծանօթն է՝ Լիմոնդացւոց փաստաբանը :

Ի՞նչ ուրախութիւն կոմսին, ի՞նչ մեծ խնդու՞մ-

ալ բոլոր օրը պատուաւոր, եւ իւր ճարտասանու-  
 թեանցն ուշադիր անձանց հետ՝ լատինախառն վիճա-  
 բանութեամբ քարոզութիւն ընելով, մէկը մէկալը  
 համոզելէն չ'էր ձանձրանար :

Իսկ Օդօրինօի գալով, որ կոմսին քահանայի մը  
 հետ վերոյիշեալ վէճը պատմելով, իրեն Երանուհւոյն  
 հետն ամուսնանալու խօսքին ճամբայ մը բանալ կ'ու-  
 ղէր, երբոր նշմարեց Մարքօյի երեսին վրայ խնդու-  
 թեան անցողական նշոյլ մը, ուրախացաւ : Սակայն  
 Վիլքքօնթի նոյն ժամայն դարձեալ առջի խիտ կերպն  
 առնելով՝ ծաղրելու եղանակաւ մը դարձաւ երիտա-  
 սարդին .

— Փոխանակ ըու հասակակցացդ հետ նիզակա-  
 մարտութեան եւ պատերազմական արհեստից մէջ յա-  
 ոռաջադիմութեամբ զբաղելու, կլինանք քեզի որ կղե-  
 րի, պապի եւ այն դործոց վրայ դատմունք ընես :

— Գիտցած ըլլաք, ըսաւ երիտասարդը շիտթե-  
 լով, սակայն միանգամայն իւր գիտաւորութիւնը յա-  
 ոռաջ վարելու մտքով, գիացած ըլլաք որ թէպէտ քիչ  
 ժամանակ է կոմսին Միլան գալը, այսու ամենայնիւ  
 մեծապէս շնորհակալ եմ իրմէ . . . եւ . . . շխտակն ը-  
 սելով . . . նոյնպէս ալ ընտանեացմէն . . . : Սակայն ալ  
 աւելի առաջ չը գնաց, որովհետեւ լաւ նշմարեց Մար-  
 քօյի գիմաց վրայ յետին առտիճանի խստիւ դատողու-  
 թեան մը սկիզբը :

Վայ ինձի, կ'ըսէր Օդօրինօ ինքնիրեն, դարձեալ  
 չը կրցայ յարմար միջոցն ընտրել : Ուստի դարձուց  
 խօսակցութիւնը, բայց առանց իւր շիտթութիւնը բո-  
 լորովին կարենալու ծածկել :

Մարքօ լուռ կենալով, կը գիտէր անոր յուզեալ



վիճակը , խօսակցութեանց նիւթին փոփոխին ու դարձուածքները , եւ սուր աչքերովն այնպիսի ցուրտ նայուածքի մը տակ ընկճած էր զինքը , որ մարդու անհընար էր անոր զիմացը կենալ : Ուստի կարծես թէ մեր երիտասարդը այս չարչարանքէն ազատելու համար՝ նոյն միջոցին ծառայ մը խուցին դուռը բանալով՝ խնացուց թէ Ս. Ամբրոսիոսի արքան դուրսը տանուտիրոջը կ'սպասէ :

— Թող ներս հրամայէ , ըսաւ Մարքօ : Նոյն միջոցին Օդօրինօ դուրս ելաւ . քիչ մը սիրտը կտորած սակայն իւր տիրոջը ցնորեալ բնութեանը ընծայելով պատահածը , դարձեալ միտքը դրաւ յարմար առթի մը սպասել , եւ Մարքօյի լաւ ժամանակը գտնելուն պէս՝ խօսքը բանալ :

Մեր երիտասարդ ասպետը , իւր ժամանակին մեծագոյն մասը Երանուհւոյն քով կ'անցընէր : Պատմելով աղջկան իւր առաջին տեսութեան վայրկեանէն սրտին մէջ իրեն համար զգացած սէրը , յիշեցնելով անոր քաղցր խօսակցութեամբ Աիմոնդայի մէջ անցուցած օրերնին , նաւարելութեան մէջ մաս առ մաս պատահածները , որսի երթալնին եւ հուսկ յետոյ ասդիէն անդիէն ճամբայ բանալով յիշեցուց նաեւ Երանուհւոյն թէ՛ վերջերը իրեն դէմ ցուցուցած անարգական կերպերովը մեծապէս սիրտը խոցած էր :

Մինչդեռ Էրմէլինտայի ներկայութեանը ներքեւ այս ամեն անցեալ դէպքերը կը յիշատակէր , աչքը աղջկանը երեսն էր եւ անոր անթիւսած ժպիտը , եւ կամ կարճ պատասխանով մը իրեն իրաւունք տալը , վերջապէս յիշատակութեանց վրայ ըրած անդրադարձութիւնները , ասոնք ամենն ալ միատեղ մեր սիրա-

հարեալ երիտասարդին միտքն համոզեցին թէ՛ ինքն ալ զիմացինին սրտին մէջ տեղ մը բռնած է :

Նոյն օրերը Օդօրինօ , իւր տիրոջը հետ միատեղ քաղքին մէջ ձիով շրջադայութեան հրաւէր մը ընդունեցաւ : Որչափ ալ Մարքօյի պէս եղական անձի մը քովէն ձիով երթալը՝ բոլոր ուրիշ ասպետաց նախանձելի էր , այսու ամենայնիւ դարձեալ Օդօրինօն ընտրուեցաւ տիրոջը քովէն երթալու համար :

Թէ ճամբուն վրայ եւ թէ պատուհաններէն դուրս իրենց համար բազմութեան խոնկելը երբ կը տեսնէր Մարքօ , առ հասարակ մեծաւ յարգանօք երբեմն զըլիով եւ երբեմն ալ ձեռքի շարժմամբ , ըստ պիտոյից կը բարեւէր զամենքն ալ :

Մարքօյի այսպէս յետին աստիճանի քաղցր մարդասիրութեամբ վարուելը , կարծես թէ Օդօրինօյի հետ վերջի անգամ ունեցած կարգէ դուրս ընդունելութեանը եւ խոտաբարոյութեանը ներուճն ինդրելու նշանակ մ'էր :

— Քիչ մ'ացնելէն վերջը , ինձի նայէ , ըսաւ Մարքօ , ես վաղը կամ միւս օր Թօքսքանա պիտի անցնիմ , պէտք է որ դու ալ իմ հետս ընկերանաս :

— Երիտասարդն այս յեղակարծ հրաւէրքին վերայ չիտրթած , սկսաւ թոթովելով պատասխանել . — Արդարեւ մեծ պատիւ կ'ըլլար ինձի : Սակայն . . . այս օրերս . . . :

— Ի՞նչ , միթէ իմ գործէս աւելի պիտանագոյն գործի մը ձեռնարկած ես :

— Ոչ , սակայն մտածեցէք մէկ մը թէ . . . :

— Ի՞նչ պէտք է մտածել :

— Քաջ գիտէք թէ՛ ես ալ նիղականարտութեան



Օդորինօ , տեսաւ որ ամեն կողմէն ներդուելով ալ հնարք չի կայ , եւ ժամանակ կորսնցնելն ալ աւելորդ համարելով , ստիպուեցաւ զգաղանածածուկն յայտնարար խոստովանիլ : Ուստի դառնալով Վարջօյի . — Գիտեմ , ըսաւ , որ քու հաճութեանդ բոլորովին դէմ է , սակայն մինչեւ ցայսօր քեզի միշտ հաւատարմութեամբ ծառայելուս համար կ'աղաչեմ . . . :

— Այս յառաջարանք տեսնեմ ինչ վերջաբանով պիտի դոցես , ըսաւ Վարջօ բարկութեամբ անոր խօսքը կարելով , միթէ զզջացիր տուած խօսքիդ վրայ . . .

— Յիրաւի , պատասխանեց երիտասարդը , ես ամենեւին Ֆրանքինօի աղջկան հաւատք ընծայած չեմ . . . եւ բոլոր զրուցածնին ալ անտեղի են եւ ցընորք , եւ վերջապէս կարծեմ թէ ես ալ իմ անձին կրնամ տէրը սեպուիլ :

Այս միջոցիս մեր հեծելոց իմբեսակը հանդիպօ պիտի ներկայ գտնուիմ , եւ յայտարարութեան տակը իմ ստորագրութիւնս ալ կայ :

— Եթէ առաջարկութեանս դժուարելուդ պատճառք միայն այդ է , դիւրին կրնայ դարման գտնուիլ : Միթէ բոլոր իմ ապարանացս մէջ դտնուող ուրիշ այսչափ ասպետաց մէկը կարող չի կրնամ ըլլալ որ քու տեղը փոխարինէ : Սակայն քու միտքդ ես գիտեմ , ըսաւ ըննադատեալ ժպիտով մը , եւ կրնամ մակարեւրել թէ ինչո՞ւ այսչափ շուտով ասկէ դատուելուդ համար կը վշտանաս : Արովհետեւ քանի մ'օրէն , Ֆրանքինօ՝ Բուսթօնին աղջկանը հետ միատեղ Միլան դալու վրայ է . բայց հող մ'ընէր , այս անգամ սէրը քան զպարտաւորութիւնը գերազանցելով , երթալէդ առաջ աղջկանը պէտք է նշան տաս :

Պրէրա հասնելով , Տէլ Պալցօ կոմսին պալատին առջեւէն կ'ացնէր :

Վարջօ եւ Օդորինօ միանգամայն դուռնին վեր առնելով՝ անմիջապէս կոմսն ու Երանուհին պատուհանի մը մէջ տեսան : Ընթերցողք թող երեւակայն թէ Երանուհոյն աչքերը երկու ասպետաց որոնս վերայ աւելի կրցաւ յառիլ , մինչդեռ իւր հայրը միւս կողմանէ ձեռքով եւ գլխով Վարջօյի բարեկամական եւ յարգանաց ձեւեր կ'ընէր :

Երրոր նոյն տեղէն հեռացան , Օդորինօ ուղեց ընչ մ'առաջ ընդմիջեալ խօսակցութիւնը շարունակել , սակայն Վարջօ խստիւ հրամայեց որ ետ քաշուի եւ իրեն ետեւէն եկող ձիաւոր ասպետաց հետը դայ : Ինքն ալ հեծած երկվարին սանձը մղելով , զարկաւ խթանը եւ ձիուն կողերը սրունքներովը սեղմելով սլաքի պէս հասաւ իւր պալատը : Վար իջաւ եւ առանց մէկու մը հետ խօսելու , սանդուխներէն վեր ելաւ , եւ նոյն օրը մէկու մը չ'երեւաց :

Հիմայ մեր ընթերցողք չի գժուարին՝ եթէ հոս պարտաւորեցանք քայլ մը ետ դառնալով մինչեւ Լիմոնդա գնալու , ուր բաւական առաջ մեր բարեկամաց մէկ քանին թողուցեր էինք , եւ որոնց ետեւէն մօտ էր նաեւ ջրհեղեղի մը տեղալը , այսինքն Պէլլէպուեօնօի վաթսուս աւարառու զօրքերով նոյն գեղին բոլոր բնակչացը կոտորած տալու համար ճամբայ ելալը :

Քանի որ մէկ կողմանէ վերոյիշեալ զօրականք գիչերանց Լէքքօ լճին մէջէն աւերելու եւ կոտորելու հաստատուն մտօք , նաւելով դէպ ՚ի Լիմոնդա անցնելու վրայ էին , միւս կողմանէ ալ Լուքօ ամենա-



դժուարին ճամբաներէ , նեղ անցքերէ , լեռներէ ու ձորերէ անցնելով կը վազէր , յուսալով թէ ժամանակին հասնի ու կարենայ կամ այն անմեղները փախցընել եւ կամ ճամբայ ելլող աւազակաց զէմ գնելու պատրաստել զանոնք : Իսկ Լիմնոզացիք՝ Գլխընուն գալու մեծ փորձանքին բոլորովին անտեղեակ , ըստ սովորականին իրենց անակներնուն մէջ քաշուած գիշերային գործոց կ'ըբաղէին :

Նաւավարին խրճիթը , ինչպէս որ ըսինք , գեղէն դուրս դէպ 'ի հիւսիս կը նայէր : Լճին վրայէն հազիւ թէ անոր յարգէ տանիքին մէկ կտորը կ'երեւար , որուն գագաթն ալ փայտէ խաչ մը տնկած էր : Իսկ խրճիթին մնացած մասը ծածկուած էր կրկու մեծ շագանակի ծառերով , որոնք կարծես թէ իրարու խոնարհելով տնակը գրկած էին : Մէջը մեծկակ խուց մը կար՝ աղիւսի պատերով եւ ներսի կողմն ալ ծըլանելոյձին մուխէն սեւցած երեսոս դարձած էր :

Նոյն խուցին դէպ 'ի մէկ անկիւնը մաքուր ծածկոյթով թշուառ նաւակոծեալին անկողինը կեցած էր , որուն վրայ առ այժմ Արիկոցցոյի հաւատարիմ շունը կը պառկէր :

Անկողինէն երկու քայլ հեռու , մէջը հողով լեցուն մեծ սնտուկ մը կար , որուն մէջ՝ ըստ վաղեմի սովորութեան բոլոր Եւրոպիոյ՝ կրակ կը վառէր , եւ երկաթէ երեքոտանիի մ'ալ վրայ կաթսայով ջուր կ'եռար :

Քիչ մ'անդին ու ճիշտ խուցին մէջտեղը սեղան մը , չորս հատ յարդէ աթոռ , վեց հատ մակոյկի թի , պատին դամուած աստիճանաւոր դարանի մը վրայ քանի մը խառնափնթոր պնակներ , երեք հատ հողէ

կուշ եւ երեք փայլուն մետաղէ դղալ դրած էին , պատէն կախուած մստուկ մը եւ վերջապէս ուռկանով երեքժամի մը՝ տանը բոլոր կարասին կը կաղաճին :

Սեղանին քովը երգիքէն վար կախուած երկաթէ կանգեղի մը տակ նաւարեկեւոյն մայրը Մարթան նստած բուրդ կը մանէր : Աւելի չոր քան թէ վատոյժ դէմքը , բոլոր մարմնոյն շարժումներն ու կերպերը կը ցուցնէին՝ թէ տակաւին աշխատանք եւ վիշաք բոլորովին չէին կրցած զինքը ընկճել : Սակայն այն բարձր ճակատը՝ որուն վրայ միմիայն անմեղութիւն տրպագրած էր , հաղիւ թէ վշտաց կարծր գրիչը , իւր հետքերովն անոր պարզութիւնը խանդարած էր : Ո՛վ որ առաջին անգամ տեսնար զՄարթա , դեւրած կըրնար հասկնալ թէ՛ անոր այտերուն դաշկուժիւնը բընականէն դուրս էր , եւ արտասուելէն աչքին ուռած ու կտրած վիճակը՝ սրտին ցաւոցն ապացոյցն էր :

Իւր գտնուած դառն վիճակին մէջն անդամ՝ Աստուծոյ գոհութիւն կը մատուցանէր , եւ այն գիշերային խորին լուսութեան մէջ՝ միայն անոր շրթանց շարժումներն արտաբերուած բառերուն շշուռջը կը լրսուէր :

Երբեմն երբեմն ախուր ու արտասուելից աչօք կը դառնար դէպ անկողինը , վերջն ալ խանդադատանօք աչքերն երկիրք կը վերցնէր , յայտնելով իւր սրտին փափաքը եւ խնդրելով Աստուծմէ որ զինքն ալ իրեն կոչելով Արիկոցցոյի քոյն աւնէ :

Միքէլէն կոնակը սեղանին դարձուցած կրակին քովը կը նստէր , ու մեծկակ դղալ մը ձեռքը կաթեղէն կերակուր մը եփելով կ'ըբաղէր : Նաւախարը կամաւ առած էր այս գիրքը , որպէս զի չըլլայ թէ մայ-



րական վշտաց վրայ իւր ցաւերն ալ աւելցնելով, երկուքն ալ փոխադարձաբար չ'այլայլին :

Այսպէս կէս ժամ մը անցնելէն վերջը, կկնր ոտքի ելլալով՝ դնաց կրակին քովը, վար առաւ կերակուրին ամանը . յետոյ բոլորովին մտածութեամբ յափը տակուած, կախուած դարանին առջին երթալով, առանց ուշադրութեան՝ հողէ երեք պնակն ալ ըստ սովորականին երեք փայլուն մետաղէ դգալներով սեղանին վրայ շարեց, ու պնակները կերակրով լեցընելէն վերջը կանչեց . — Միքէլէ, եկուր կերակուրի : Սակայն նաւալարին իւր կնոջը հնազանդելով սեղանին մօտենալու ժամանակը, Մարթա շուտ մը պնակին մէկը վերցնելով գետին դրաւ, իբրև թէ շանը համար լեցուցած ըլլար : Ի վերայ այսր ամենայնի, Մարթայի այս յուզեալ վիճակն էրկանը աչքէն չը փախչելով՝ նշմարեց նաև սեղանին վրայ դրուած երրորդ դգալն ալ եւ կնկանը մոռացկոտութեանը տալով, անդին դարձուց երեսը՝ սրտին այլայլելը աւնոր չը յայտնելու համար, եւ առնելով իր պնակն ու դգալը, դարձեալ դնաց նստաւ առջի տեղը :

Մարթա՝ ինքզինքը գտնելու համար ժամանակ մը լուռ, գլուխն առջին կախած կենալէն վերջը, շանը անունը տալով կանչեց, որն որ գլուխը վեր առնելով առանց տեղէն ելլալու սկսաւ պոչը շարժել : Ուստի ինք ելաւ դնաց անոր քովն ու դգուելով վար առաւ եւ բերաւ կերակուրին մօտը : Մարթա ամենեւին այս շունը չ'էր սիրած, եւ կրնայ ըրուիլ թէ զանի ունենալէն 'ի վեր կը խորշէր անկէ, եւ անոր պատճառաւն ալ շատ անգամ կշտամբած էր իր որդին : Բայց Արիկոցցօի մահուընէն վերջը եթէ անոր

ամենօրեայ տարած հոգերէն մէկը պակսեր, կթէ մէկը սխալմամբ անոր զարներ, գէշ զրուցէր եւ կամ վնասեր, մեծ յանցանաց տէր կըլլար եւ վերջապէս սրբապղծութիւն ըրած կը սեպուէր :

Շունը քծնելով ու բարակ ձայնով մ'ալ ճուշտով շնորհակալ կըլլար՝ տիրուհոյն այս կարգէ դուրս վարձուքէն . վերջապէս քիթը պնակին տանելով լաւ մը կերակուրը լզելէն վերջը, դարձեալ ելաւ անկողնոյն վրայ ու կկոր մը զետեղուելով հանդէցաւ : — Թեզճ անասունն ալ կ'ուզէ այդ անկողնոյն վրայ մեռնիլ, ըսաւ ինքնիրէն Մարթա, շանը վրայ նայելով : Աերջը նստաւ ու երեսը խաչակնքելով սկսաւ ուտել : Սակայն քանի որ լեցուն դգալը բերանը կ'առնէր, կարծես թէ կերակուրը բերնին մէջն ածելով՝ չ'էր կրնար կուլ տալ . մինչև որ Միքէլէն իւր պնակը սեղանին վրայ դնելու համար քովը մօտենալու ժամանակն, ախորժով ուտել ձեւացնելու մտօք ետեւէ ետեւ քանի մը դգալ կուլ տուաւ :

Յետոյ տեսնալով որ էրկանը սեղանին վրայ դրած պնակը գրեթէ լեցուն կեցած էր, առաւ զայն ու Միքէլէի քովը դնաց՝ որ դեռ կրակին մօտ կը նըստէր, եւ մէկ ձեռքն ալ անոր ուսին դնելով ըսաւ . — Միքէլէ, Աստուծոյ սիրուն համար ըլլայ՝ կեր սա կերակուրը, գրեթէ բոլոր օրը ծով էիր : Նաւալարը անհոգաբար ուսերը վեր թօթվեց առանց պատասխանելու, մինչդեռ կինը խեղդուկ ձայնով առաջ կը տանէր . — գոնէ քիչ մը ըլլայ կեր, որպէս զի անօթութեանէ չը տկարանաս : Պարտաւորեալ ես մարմնոյդ ալ խղճի մտօք հող տանիլ՝ ինչպէս որ հողուոյդ կը պարտիս . կեր, իմ սիրոյս համար ըլլայ, եթէ դու ալ այս



ձամբով . . . : Սակայն հոս հեկեկանքը խեղճ կնոջ ձայնը կտրեցին :

— Է՛հ , կանչեց այն ատեն նաւավարը , բնաւ չի պիտի դադարեցնես այդ քու արտասուելը . այս ամեն օր է , ամեն օր այնոյն բանը շարունակ կը կրկնես : Եւ ինքն ալ ձեռօքն աչքերը սրբելով . միթէ այսպէսով զինքը գերեզմանէն յարուցանել կը կարծես . ահա վերջին անգամ քեզի կ'ըսեմ , թէ այս քու վիճակդ քաշուելու բան չ'է :

Մեծաւ դժուարութեամբ թշուառ պառաւը կըտրեց իւր արտասուելը , եւ արցունքներն ալ զգեստին ծայրովը չորցնելով դարձեալ սկսաւ մանկ :

Ժամանակ մը երկուքն լուռ կեցան . կինը ամենեւին իւր աշխատութիւնը չ'էր դադարեցնել , միայն երբեմն երբեմն գլուխը վեր կ'առնուր եւ աչքին ծայրովն էրկանը կը նայէր , որ ցած աթոռի մը վրայ երկու արմուկները ծնագացը դրած եւ գլուխնալ ձեռացը մէջ կ'արտասուէր :

Միքէլէ վերջապէս ոտքի ելլալով՝ եկաւ կնոջը ըով , ու բոլորովքը պտրտկելով կարծես թէ բան մը կ'ուզէր ըսել եւ կամ ո եւ իցէ կերպով քիչ մը առաջ իրեն պատճառած սրտին ցաւոցը դարման մը գտնալ . սակայն ուրիշ բան չի կրցաւ ըսել՝ բայց եթէ — շատ բարի Մարթա , քու կամեղ կը կատարեմ . դքեղ հաճեցնելու համար տես ինչպէս պիտի ուտեմ : Եւ յիշատակ սկսաւ կերակուրն ուտել : Քիչ մը անցնելէն վերջը , — մտիկ ըրէ , ըսաւ նաւավարը Մարթային , վաղը զեղին հողաբարձուն նաւակով Տէրվիօ պիտի աանիմ , ուստի առած ստակովս մեր Արիկօցցօյի հողուն պատարագ մը գրուցել տանք :

— Պատարագն ես արդէն գրուցել տուած եմ , պատասխանեց կինը , մատովն աղեկաար ցուցնելով , կը տեսնան այս բուրդը , ըսաւ , ահա այս Լուկանօյի կղերիկոսինն է , ասոր մանելը պիտի փոխարինէ պատարագին ստակը :



### Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .



Ժամանակն ուշ էր , ուրիշ բան չ'էր լսուեր՝ բայց եթէ վարը լճին խորին մոնչխնը եւ նաւավարին տրնակը զրկող երկու շագանակի ծառոց ոտտերուն մէջէն անցնող զովարեր հողմոց շշուէջը . մէկ մ'ալ յանկարծ շուներ՝ որ հանդարտ ոլորուած անկողնոյն վրայ կը քնանար , գլուխը վեր առաւ , ականջները տնկեց ու սկսաւ մրմռալ . վերջապէս ցատկեց ու գէպ 'ի դուռը վաղելով սկսաւ անընդհատ հաչել : Միքէլէ ու Մարթա ականջ տուին , սակայն դուրսը սովորականէն ուրիշ բան չ'էր լսուեր : Նաւավարը շուտ մը դըրան ետեւի գերանը վար առնելով՝ բացաւ դուռը , դուրս ելաւ եւ քիչ մը բացուելով լսեց ձեռուէն աջ կողմը՝ դէպ 'ի Լիմոնդա , ուրիշ շան մ'ալ կատաղաբար պոռչալուն ձայնը : Եր խրճիթին ետեւը բարձր քարի մը վրայ ելաւ եւ նայելով դէպ 'ի քաղաքը , տեսաւ բոլոր երկինքը կրակ դարձած եւ բոլորովքը պատող բլուրներուն դագաթներն ալ լուսաւորուած կը ցօլային :

Լիմոնդա կրակ կայ կանչեց , ու շուտ մը վա-



դէց՝ այնպիսի ժամանակ ո՛ր եւ է անձի պէտք եղած օգնութեան հասնելու :

— Ինքզինքդ լաւ նայէ , եւ շուտ տուն դարձիր , գոչեց ետեւէն Մարթա , ու ծնկան վրայ դաւրով՝ սկսաւ աղօթել :

Միքէլէ որչափ առաջ կ'երթար , այնչափ ալ քաղքէն եկող աղմուկը աւելի կ'որոշէր . իսկ չորս կողմէն ասկէ անկէ ուրիշ խառն ձայներ ալ պակաս չ'էին : Սակայն որչափ ալ առաջին անգամ լերան վրայէն , վարի ափունքէն առնուած ձայներուն ո՛ր տունէն եւ կամ ո՛ր հիւղէն գալը յստակ կը լսուէին , այսու ամենայնիւ կամաց կամաց նոյն ձայները իրարու միանալով , խառնակելով կը շփոթուէին , եւ ամենը միատեղ ընդհանուր աղմուկ մը կը կազմէին :

Նաւավարը բարձր բլուրի մը վրայ հասնելով , անոր գագաթէն լաւ կրցաւ տեսնել քաղքին երկու ծայրը առանձին մէջ մէկ տան այրիլը : Այս դէպքին տակը դաղտնիք մ'ըլլալը որչափ ալ Միքէլէին միտքէն անցաւ , եւ աչքերը դէպ 'ի Լիմոնդա յառած՝ առած ձայներն ալ եւս առաւել որոշ լսելու համար , մէկ ձեռքն ալ ականջին ետեւը դրած , այն աղետալի աղմուկին մէջէն քանի մը սպառնալեաց ու հայհոյութեանց ձայներ կրցաւ լսել : Ուշադրութեամբ աչքերը դէպ 'ի քաղքին եկեղեցւոյն վրայ դարձնելով՝ անոր առջևի հրապարակը խոնուած ամբոխին մէջ սուսերաց ու նիզակաց շողալը կրցաւ տեսնալ : Այն ատեն իմացաւ դործին ինչ ըլլալը , եւ սկսաւ շտապաւ յառաջ երթալ :

Մէկ կողմանէ հրդեհը կը սաստկանար , վայրկեանի մը մէջ կարծես թէ բոլոր երկիրը կրակ էր դար-

ձած : Լիճը՝ հոսանուտ կրակ մը կ'երեւար , քանի մը նաւակաց ափունքէն զատուելու միջոցին՝ մէջինները նախ կարմիր , յետոյ կամաց կամաց բացուելով՝ օդին մէջ լողացող կայծի մը պէս երբեմն փախիլելով եւ երբեմն ալ մարելով գիշերուան խորին ու անընդհատ խուարին մէջ կ'աներեւութանային :

Նաւավարը իւր գիշերային ճանապարհորդութեանը մէջ թռչունի պէս կ'ուզէր այդ խեղճերուն ձեռնտուութեան հասնիլ , սակայն քանի որ Մարթայի խրճիթին մէջ մինակ մնալը միտքը կ'իջնար , կարծես թէ ջղերը կը թուլնային :

Այսպէս տարտամեալ կեցած ժամանակը , յանկարծ դրդման ձայնի մը հետ , կարծես թէ նոյն կողմերը պահուրտած քանի մը հողույ իրեն դէմ գալուստ ձայնը լսեց : Շուտ մը մեծ ձիթատուղի մ'արմատին տակ քաշուեցաւ եւ հրդեհին մինչեւ հոն արձակած լուսովը մթութեան մէջ նշմարեց կիւն մը՝ որ տղեկը կռնակը կապած՝ ուրիշ մ'ալ անոր դէնջակին ծայրէն բռնած ու ետեւէն ալ կոտորներէն կապած կով մը քաշելով յառաջ կուղային : Խեղճ անասունը դէպ 'ի քաղաքը նայելով՝ կարծես թէ իր մտուրը կը յիշէր ու անընդհատ կը պոռար : Քիչ մը վերջը այլ եւ այլ կողմէրէ ուրիշ թշուառաց ձայներ ալ լսուեցան , որոնցմէ ոմանք իրենց ընտանիքը , ոմանք ալ ձեռքերնին ինկած սրաշարնին կը փախսընէին :

Միքէլէ շուտ մը ճանշնալով կիւնը , ընդատալ դրնաց եւ դինքը անուամբը կանչելով հարցուց . — Այս ինչ աղետալի մի՞ձակ է , կ'ուղես արդեօք որ քեզի օգնեմ :

— Մենաստանին դօրականները քաղքին կրակ



տունն , կը պատասխանէր խեղճը , ու ձեռքերնին ինկողը անխնայ կը կոտորեն . գացինք ամենքնիս ալ , ամենքնիս ալ ցրուած կորսուեցանք : Ո՛հ , տէր Աստուած , այս ի՞նչ վիճակի հասած կը տեսնամ ինքզինքս , այս գիշեր Լիմոնդայի վերջի գիշերն է : Աստուծոյ արդար բարկութիւնը՝ վերջապէս մեր մեղօքը մենք մեզէն վերջի ձայրը հասուցինք : Յետոյ աղաչելով , Միքէլէ , ըսաւ կինը , քանի որ Նախախնամութիւնը զքեզ հոս զրկեց , գոնէ սա կոյն առաջ վարելու օգնէ ինձի , որն որ խեղճ որդեկացս միմիայն եւ յետին մնացած մեռնողը , պաշարն ու ապրուստն է :

Նաւաւաւարը մէկ ձեռքով կովուն կոտորներէն կապուած շուանը , ու ձախ թեւին վրայ ալ տղեկաց մէկն առնելով , որն որ մօրը աճապարեալ քայլերուն չի կարենալով հասնիլ , ջովէն լալով կը վազէր , ամենքն ալ միատեղ սկօսան դէպ ի Պէլլաճիօ երթալ :

— Աստուծոյ օգնութիւնը վրայէդ անպակաս ըլլայ , եւ ննջեցելոցդ հոգւոյն ալ ողորմի , կ'ըսէր խեղճ կինը : Ինձի պէս թշուառ այրի կ'ունջ մ'ըրած բարեացդ փոխարէնը յերկինս պիտի դսնաս : Ո՛հ , Միքէլէ , մինչեւ ցայսօր բոլոր քաղաքը քու ողորմելի վիճակիդ վրայ կը խոջճար . սակայն վաղը քանիններ իրենց որդիքը պիտի ողբան եւ քանիններ ալ միայն Արիկօցցօն կորսնցնելուդ վրայ պիտի նախանձին :

Նաւաւաւարը , աչքերը լեցուած առջեւէն կ'երթար . երբեմն ետեւը դառնալով այրող քաղաքին , եւ երբեմն ալ իւր հիւզը կը նկատէր : Վերջապէս զասոնք տմենքն ալ ապահով տեղ մը զետեղելով վազեց դէպ ի իւրճիթ :

Ոտքը դռնէն ներս դնելու միջոցին , զրահաւոր

մէկը դիմաւորեց զինքը , զոր Միքէլէ Լիմոնդա աւերողներէն մէկը կարծելով , առժամօք դրան ետեւի գերանը յափշտակեց եւ աներկիւղ վրան վաղեց : Սակայն զօրականը շուտ մը ,

— Միքէլէ , զիս չի ճանչցար , ըսելուն պէս ,

— Օ՛ , Լուբօ դո՛ւ ես , գո՛ւ ալ այդ շուներուն հետ եկեր ես :

— Աստուած չընէ , ես այս խեղճութենէն զքեզ աղատելու համար եկած եմ , սակայն ախտս որ չի կրցայ ժամանակին հասնիլ : Արդէն զօրքերը ցամաքելեր ու բոլոր քաղաքը կրակի տուեր են : Իսկ մերինները կամ սպաննուեցան եւ կամ փախած պիտի ըլլան : Հիմայ , քանի որ ներկայ գործոց վիճակին ուժով կարող չենք դարման տանիլ , պէտք է որ դոնէ այդ անպիտաններուն ձեռքը ողջ ինկած անձինքը կերպով մ'աղաճենք : Որովհետեւ Ստէֆանօ ձկնորսին հիմայ ինձի պատմածին նայելով , զանոնք վաղը ցրցի վրայ պիտի սպաննեն եղեր հրապարակին մէջ տեղը :

— Տէր Աստուած , ի՞նչ կը լսեմ , ես պատրաստ եմ դալու քեզի հետ , սակայն . . . վերջապէս երկուքս այդչափ աւազակաց դէմ ի՞նչ կարող ենք ընել :

— Մի կարծեր որ մենք երկուքս միմակ ենք , տակաւին քանի մը հողի ալ հոն մեզի կ'սպասեն . հիմայ հոս դալու ժամանակս միտքս հարք մ'ալ ինկաւ . սակայն քու օգնութեանդ կարօտ եմ , եւ միմիայն սնոր համար հոս եկայ զքեզ փնտռելու , որովհետեւ զիտեմ թէ արխասիրտ ու քաջ մարդ մ'ես :

— Տէր Աստուած , ըսաւ Միքէլէ , նայէ մէկ մը սա եղած բանը . . . Սակայն Մարթիա շուտ մը հասկը-



նալով իրեն համար սրտանց տարած խնամքը եւ այս պատճառաւ ալ այս ձեռնարկութեան տարտամիլը — Զիս մի մտածեր, ըսաւ, պահապան հրեշտակը կը պաշտպանէ այս խրճիթը, եւ եթէ . . . եւ կամ թէ . . . վերջապէս այս գործը բարերարութիւն մ'է առ ընկերս, որու եւ պարտաւորեալ իսկ ենք, գնահ, գնահ :

Միքէլէ ուրիշ պատասխան չ'տուաւ, բայց եթէ « Աստուած հետդ ըլլայ ըսաւ » ու աճապարանօք Լուբօյի հետ ճամբայ ինկաւ : Ճամբուն վրայ Լուբօ իր գաղտնիքը նաւավարին յայտնեց . ուստի ասոնք իրարու քանի մը բարեկամական եւ իրենց գաղտնեացը համապատասխանող նշաններ տալէն վերջը, իւրաքանչիւրը իրեն ընելու գործին պատրաստուեցաւ : Լիմոնդայի մօտ Լուբօ, գաղտնի ճամբէ մը զատուելով, գնաց երեք կամ չորս ուրիշ զինեալ ու գինւոյ շտեմարանի մը մէջ պահուըտած Լիմոնդացւոց հետ միանալու : Իսկ Միքէլէ՝ անգէն եւ ոչ ալ գաւազան մը ձեռքը, շիտակ գէպ 'ի քաղթին եկեղեցւոյն հրապարակն իջաւ, ուր մենաստանի զօրականք ժողուեր էին : Զատիկայ տեսածնուն պէս, մէջերնէն մէկը շուտ մը սուսերամերկ վրան վազեց զանի մեռցնելու գիտմամբ . սակայն նաւավարը ձեռքերը վեր առնելով՝ մինչդեռ միւսն գաղանի պէս անոր արեամբը յազեանալու կը վազէր, սկսաւ կոչել . — ձեր դիտաւորը կը փնտռեմ, Պէլէպուուսն օր է :

— Դու Պէլէպուուսնօյի հետ թ'նչ գործ կրնաս ունենալ :

— Իրեն գաղտնիք մը ունիմ յայտնելու, զցո՛ւր ինձի անոր ուր ըլլալը . ձեզի ալ, անոր ալ շահաւոր է :

— Շատ աղէկ, կ'ըսէր զօրականը մտքէն, ահաւասիկ ինքնիրեն ծուղակը բռնուող լորամարդի մ'ալ : վաղուան հանգէսին կերոն մ'ալ աւելցաւ : Ուրեմն, կանչեց զօրականը բարձրաձայն, գեղջուկ, եկու իմ հետ տեսնեմ . եւ այս ըսելով տարաւ զինքը եկեղեցւոյն մէջ, ուր ժողոված էին ամբողջ աւարներուն հետ նաեւ ողջ բռնուող եօթը խեղճ գիւղացիք եւ մայր եւ կեղեցւոյն ալ կղերիկոսը, որոնց ամենուն ձեռքերն եւ սեւնին կապուած, երկրորդ օրուան կոտորածին զոհուելու համար կը պահուէին :

— Ահա Պէլէպուուսն, ըսաւ Միքէլէին առաջնորդը, մատով ցուցնելով ահաւոր մարդ մը՝ որ ճիշտ մեր նաւավարին ներս մտած միջոցը, կղերիկոսին զըլխուն հարուածներ կ'իջնար : Միքէլէ անվեհէր անոր առջեւ գնալուն, Պէլէպուուսն վրան նայելով կարծես թէ զանի ողջ ողջ ուտել կ'ուղէր, սակայն նաւավարին անոր ականջէն քանի մը խօսք փախալէն վերջը, շուտ մը կակղացաւ : Ուստի քիչ մը ժամանակ ցած ձայնով իրարու հետ խօսակցելէն յետոյ, եօթանասուն նիզակամարայից զլուխը, իր զօրքերէն չորս հոգի ընտրելով, նաւավարին առաջնորդութեամբը ճամբայ ելան Բօնքաթէ հովանի մօտ, քաղքէն քիչ մը հեռու, տուն մը :

— Երեք հարիւր ֆիօրինէն աւելի չըսիր, կը հարցընէր Պէլէպուուսն իւր առաջնորդին, քանի որ ութը քայլ մ'իրենց հետեւող չորս զօրականներէն հեռացած էին :

— Անշուշտ պատասխանեց միւսը, արծաթեղէններէն զատ, գրեթէ քսան տարուան մօտ եկեղեցւոյն եկամուտան ալ հոն է :



— Սակայն կղերիկոսին տունը դանդակատան մօտինը չէ՞ :

— Հիմայ մեր դացած տունը , իր եղբորորդւոյնն է , եւ գանձն ալ հոն պահուած է :

— Շատ զարմանալի բան է՝ որ իմիններս չ'կըրցան գտնել այդ դանձը , այս գիշեր բոլոր քաղաքը տակն ու վրայ ըրին :

— Սակայն անկարելի էր որ մէկը կարենար իմ ըսած անդս գտնել : Աերջապէս զառիվայրի մը գրուխը տան մը առջեւ հասնելով , Միքէլէ ան է ըսաւ .

— Դու , Քիպալտօ , դու ալ Ախնչիկուէրրա երկուքդ միատեղ , ըսաւ Պէլլէպուօնօն , հոս դուքը դուռը պահեցէք եւ առանց ինծի մէկը դուրս չ'պիտի թողուք : Եւ եթէ պէտք ըլլայ , այն ատեն միայն ձայն տուէք ուրիշ օգնական մ'ալ կանչելու : Իսկ , դուք ալ երկուքնիդ եկէք ըսաւ իմ հետս :

— Մտիկ ըրէ , ըսաւ Միքէլէ բարձրաձայն դօրաց հրամանատարին . այնպիսի եղանակաւ մը՝ որ այն չորս կողմնք ալ լաւ մը կրցան ըսել : — Ուրեմն , հաստատուն խօսք տուիր արձակելու բոլոր բանտարկածներդ , այնպէս չ'է :

— Այո՛ , զամենքն ալ քեզի տալ խոստացած եմ , բայց 'ի ձեր կծծալեղու կղերիկոսէն . տեսնամ թէ վաղը գլխիվար գետինը ցցած ժամանակս ալ նոյնպէս լեղուն պիտի կարենայ երկնոյնել :

— Ձէ , չ'է , կ'ըսէր Միքէլէ , զամենքն ալ խոստացար :

— Թող քու ըսածիդ պէս ըլլայ , կղերիկոսն ալ քեզի կուտամ . չ'ըլլայ որ քու ինծի ըրածդ պակաս փոխարինած սեպուիմ :

Ուստի անոնք որ առաջին հրամանը առին , դուրսը մնացին . իսկ Միքէլէ , Պէլլէպուօնօն եւ միւս երկու զօրքերը՝ սանդուխէ մը վեր ելլալով պզտի սրահի մը ծայրը հասան , որու դիմացն ուրիշ սանդուխ մ'ալ կ'երեւար :

— Եթէ կ'ուզես , ըսաւ Միքէլէ զօրապետին , ես ալ հետդ վեր գամ , ըսած տեղս ցուցնելու համար :

— Թշուառական , պատասխանեց միւսը , կրնաս քու դիտցած ծակերէդ մէկուն մէջ քաշուելով՝ զիս անել լարիւրինդոսի մը մէջ խարխափել տալ : Ձէ , չէ , դու հոս երկու բարեկամաց հետ կեցիր : Զօրականք , եթէ երթալ իսկ կամենայ , մինչեւ որ ես չի դառնամ թող չի պիտի տաք զինքը :

Միքէլէ առանց ընդդիմութեան որչափ որ երկու զօրաց մէջն անցնելով կեցաւ , սակայն բարձրաձայն Պէլլէպուօնօյի հետ խօսելով , որն որ նոյն միջոցին լապտեր մը վառած , դէպ 'ի դուռը սկսեր էր երթալ , կ'ըսէր . — անշուշտ չի պիտի սխալիս , երկրորդ խուցէն վերջը պտուտակաւոր սանդուխ մը կայ , անոր տակը տակաւի մը ներքեւ չորեքիլուսի քար մը . . .

— Հա՛ , հա՛ , ամենքն ալ կը յիշեմ , միտքս է :

— Եթէ կամենաս , վրայ բերաւ Միքէլէ , ես ալ հետդ գամ :

— Ես առանձին կարող եմ , ըսաւ , եւ երկրորդ խուցը մտնալով , այլ եւս Պէլլէպուօնօյի խօսքերը չի լսուեցան : Սանդուխէ մը վեր ելլալուն ձայնը լըսուեցաւ , եւ լապտերին լոյսն ալ սակաւ առ սակաւ անհետանալով խաւարը տիրեց : Քիչ մը ժամանակ անցնելէն վերջը , կարծես թէ վերէն վար ծանր առարկայի մը խորին աղմուկս ինչալուռն ձայնը լսուեցաւ :



Նաւաւարը կը դողար , սիրտը կը նետէր , աղէկ որ կեցած տեղերնին մուտք ըլլալով , աչքերուն նուազիւն ու գիմացն եւ չրթանց գոյնը նետելովը , քովը հսկող երկու աւազակները կարող չէին տեսնալու :

— Ի՞նչ կրնայ ըլլալ այս գլորգիւնը , կը հարցընէին իրարու զօրականք , միշտ Միքէլէն մէջտեղերնին բռնած , արդեօք Պէլլէպուօնօ վտանգի մը հանդիպեցաւ . . . արդեօք ծանր բան մը գլորեց . . . կամ թէ սրահուրտած մարդ կար վերը . . . : Երթանք տեսնելու ինչ ըլլալը . . .

— Երթանք . բայց չ'է , մեղի հրամայեց որ զինքը հոս սպասենք . . .

Մինչդեռ նաւաւարը սրահող զօրականք այս խօսակցութեանց զբաղած էին , քանի մը մերձակայ տուներէ տակաւին վառուած ճրագի լոյսերուն ներս զարկած տկար ճառագայթներովն՝ կրցան նշմարել որ Պէլլէպուօնօն վեր ելած դրան սեմին գալով՝ նաւաւարին իրեն մօտենալու նշան կ'ընէր : Միքէլէ շուտ մը առաջ գնաց եւ հոն քիչ մը խօսակցելէն վերջը , նաւաւարը բարձրաձայն զինքը պահող զօրականաց դառնալով ըսաւ : — Որովհետեւ ես իմ խոստմունքս պահեցի , հիմայ ձեզի կ'իջնայ ձեր խոստմունքը պահելը : Այսպէսով ամենքը միատեղ վար իջան ու գուռը պահող երկու զօրականներն ալ հետերնին առնելով եկեղեցոյն ճամբան բռնեցին : Երբոր նեղ անցքի մը բերանը հասան , նաւաւարը քանի մը քայլ ետ մնալով՝ այն մարդուն՝ որուն ցայժմ մեր չորս զօրականք իբրեւ բուն իրենց գլխաւորին կը հնազանդէին , երկաթէ ձեռնոցին վրայի արեան աղտեղութիւնը կը մաքրէր :

— Ի՞նչ զէն ունի , կ'ըսէր ցած ձայնով այս ծառայութիւնը ընողը , ասանկ գիշեր քանի մը արեան կաթիլ վրադ գտնուիրը՝ կարծեմ թէ անարգանք մը չը սեպուիր . եւ մէկ մէկու հետ ուրիշ քանի մը խօսքեր ալ փոխալէն վերջը , նաւաւարը երկու սրունքները հաստատելով առջեւէն գացող չորս զօրականաց գոչեց : — Մտիկ ըրէք , հիմայ ձեր գլխաւորը քիչ ժամանակուան համար ձեզմէ բաժնուելով՝ վարը լծին ակունքը պիտի իջնայ , նաւակին մէջ զետեղելու չ'եմ զիտեր ինչ բան որ թեւին տակը բռնած է : Գուք ալ իմ հետս պիտի դաք բանտարկեալները ինծի յանձնելու :

Այն ատեն մինչեւ հիմայ Միքէլէի հետ փոխալէն զատ բառ մը չ'արտարեորդը . — սո Ռիպայտօ ըսաւ , հաստը ձայնով մը , սո դու ալ Աինչիկուէրրա դուք երկուքդ ալ առէք , եւ լուրաքանչիւրին մէյմէկ ափ ստակ տալով , այս ձեղի պատանդ է առ այժմ . շուտ գացէք բանտարկեալները արձակեցէք , ըսելով առաջ անցնին ու աներեւութանալը մէկ եղաւ :

Նաւաւարը եւ մեր չորս զօրքերը ճամբանին շարունակելով՝ անոնց մէկը կ'ըսէր ընկերոջը . — Լսեցիր , Պէլլէպուօնօյի ձայնը ինչպէս փոխուած էր , կարծես թէ ինքը չ'էր :

— Երեսաց պահպանակին գոցուելէն է , կը պատասխանէր հարցուողը :

— Կարծեմ թէ աւելի թեւին տակն ունեցածին ուրախութենէն էր , ըսաւ ուրիշ մը :

— Մենք վատաբաղդ զօրականքս՝ տակաւին բան չ'ենք տեսած , ըսաւ երրորդ մը , եւ անոր համար ալ Քիչ բանով գոհ կ'ըլլանք :

— Բոլոր առածէն մեղի ալ մաս պիտի հանէ ,



այնպէս չ'ըսան, հարցուց առաջինը՝ Միքէլէի :

— Կ'ուզէ՞ք ձեզի յայանեմ Պէլլէպուօնօի միտքը .  
ըստ իրաւանց՝ առածին կէտը իրեն պիտի պահէ , իսկ  
միւս կէսն ալ՝ մինակ չորսերնուդ պիտի բաժնէ :

— Կեցցեն գեղացի գու , կանչեց առջի խօսողը ,  
ըսել է որ գու ալ չոր բերնով չը պիտի կենաս : Կը  
տեսնամ որ բարի ու քաջ զօրականաց բարեկամ մարդ  
մ'ես :

— Ես ուրիշ բան չ'եմ ուզեր՝ քայց եթէ ձեր զըլ-  
խաւորին տուած խոստման կատարուին : Անկէ ալ ու-  
րիշ եթէ բարիք մը ուղենաք ինծի ընել , այդ ձեր ա-  
ռանձին չնորհքն է :

— Ա՛ռ գեղջուկ , մո , մո , ըսելով իւրաքանչիւրն  
ալ մէյ մէկ քիչ առած ստակներնէն Միքէլէին ափը  
լցին , իրենց զօրապետէն անոր տասնապատիկն առ-  
նելու յուսով :

Այս միջոցին՝ եկեղեցւոյն դիմացը հասան . մեր  
չորս զօրքերը ներս մտնալով Պէլլէպուօնօյի անուամբ՝  
բանտարկեալները պահողաց հրամայեցին որ արձա-  
կեն զանոնք , եւ իրենք ալ անոնց կապանքները կըտ-  
րելու ու քակելու օգնելով , երբոր ամենքն ալ ար-  
ձակուած ոտք ելան , Ախչիկուէրբան զառնալով նա-  
ւափարին՝ ահաւափիկ բարի գեղջուկ , առ զանոնք , գը-  
նա ու գո՛հ եղիր , ըսաւ :

Բայց քանի որ Միքէլէ այդ արձակելոց հետ դէպ  
ի լնոր կը գալէր , քիչ շատ անոնց հաղար ու մէկ հարց-  
մանցը պատասխանելով , այս կարգէ գուրս լուրը հրա-  
տարակուածին պէս , մէկէն խուսմը մը զօրք վազեցին  
արդիւիւու բանտարկելոց երթալը :

— Ամեն կողմէն՝ սուտ է կը կանչէին , չը կրնար

ըլլալ , որ Պէլլէպուօնօ այսպիսի հրաման մը տուած  
ըլլայ :

— Այո՛ , այո՛ , իրաւ է , ինծի ըսաւ , մեզի հրա-  
մայեց կը պատասխանէին մեր չորս զօրքերը :

— Զէ , չէ , ամենքնիդ ալ ցնորած էք , կը պո-  
չար մէկը բոլոր ուժովը , ինչպէս կրնայ ըլլալ որ քիչ  
մը առաջ ձեզի հետ ասկէ զատուելու միջոցը , Պէլ-  
լէպուօնօն քիչ մը ետ մնալով ինծի ականջէս ըսաւ որ  
վաղուան հանդէսին ներկայացնելու համար այս գեղա-  
ցիին ալ չուանայ աարաստեմ :

— Բայց մեզի հրամայեց , կը պնդէին զարձեալ  
չորքը միատեղ , որ այս բարի մարդուն կամացը հա-  
մեմատ բոլոր բանտարկեալները արձակուին :

— Զէ , չէ , սուտ է , ասոր տակը մատնութիւն  
կայ , կը պոչար այդ անպիտանը , եւ արդէն արձա-  
կելոց մէկ քանին գարձեալ բռնելու ձեռնարկած ժա-  
մանակին , բազմութեան մէջէն շատերուն յետագայ  
ձայնը լսուեցաւ . — Պէլլէպուօնօն , Պէլլէպուօնօն ,  
հո՛ս է , հո՛ս Պէլլէպուօնօն :

Եւ ահա զբահաւոր եւ սաղաւարաին դիմակն ալ  
վար առած եւ ահարկու գեղարգն ալ ձեռքը Պէլլէ-  
պուօնօյի առաջ գալը տեսնուեցաւ . ժողովուրդեան  
մէջ հասածին պէս , առաջին գործն եղաւ ձեռքի նի-  
զակաւը առանց նայելու յաջ կամ արեակի , անխոս  
դիմացը եկող զօրքերը ձեծել , պոռալով կամ լաւ եւս  
ակոսանքը կրճտելով թշուառականներ , անպիտաններ :

Եւ յետոյները չիթեմ՝ շատ պէս քծնելով ու  
եւ քաշուելով սկսան ըսել . — չ'էինք կարծեր որ այս-  
պիսի հրաման մը տուած ըլլաս : Թող չ'ստուիրք , վա-  
սըն զի քիչ մը առաջ ըսեր էիր թէ . . . ըսելով սկսան





Թողութիւն խնդրել : Սակայն ինք դարձեալ եղանակը չ'աւրելով, եւս առաւել անխնայ կերպով հարուածներ կը տեղար :

Երբոր ամենքն ալ ցիր ու ցան եղան, ինք անձամբ կղերիկոսին թեւէն բռնած՝ միւս բանտարկելոց ալ նշան ընելով որ իրեն ետեւէն գան, ամենքն ալ միատեղ նեղ անցքէ մը լերան ճամբան բռնեցին ու անհետացան, թողով զօրքերը Լիմոնդայի եկեղեցւոյն հրապարակին մէջ, որոնք ուսերնին թոթուելով կողուութեան վրայ կը դարմանային, եւ զիրար պարսաւելով իրարու հետ կը վիճէին :

Երբոր բաւական յառաջացան, կղերիկոսը՝ որուն բարերարը տակաւին թեւէն մտած զառիվրէն ելլալու կ'օջնէր, պէտք եղած շնորհակալութիւնը մատուցանելէն վերջը՝ ըսաւ թէ ալ իրենք ամենայն վըտանդէ պահով ու ազատ ըլլալնուն, ինք կրնայ ետ դառնալ : Միւս արձակեալներն ալ Պէլլէպուօնօ կարծուածին չորս կողմը ժողուելով, իրենց կենսատուն կ'անուանէին զինքը : Այն ատեն Պէլլէպուօնօ կարծուած անձը սաղաւարտը գլխէն վար առնելով՝ ծանոց իրեն ով ըլլալը . . . : Կարծեմ թէ ընթերցողաց ալ պարագ բան է ըսել թէ՛ Լուբօն էր :

Մեր աւագակաց խումբը փուճ տեղը նոյն գիշերը, երկրորդ օրն ու մինչեւ միւս առաւօտը կ'ըսպասէր որ Պէլլէպուօնօն լեռնէն վար իջնայ : Իսկ մեր չորս զօրակմանք՝ որ Պէլլէպուօնօյի յետին արշաւանքին ընկերացած էին, դարձեալ երթալով այդ տունը, իջան այն սանդուխէն վար՝ ուսկից բանի մը ինչալուձայնը լսած էին, եւ մտան գետնայատակ խուց մը, անկէ ալ վար գլխուոյ պահարանի մը մէջ իջնալով :

վերջապէս նեղ ճամբու մը բերանը դտան գլխէլէպուօնօն անշունչ գետնը փռուած :

Այն ատեն իմացան գեղացւոյն խորամանկ նենգաւորութիւնը, եւ հասկցան հետեւաբար թէ այդ գլխուոյ մտանին մէջ մարդ պահուըտած էր : Որովհետեւ Պէլլէպուօնօյի երկաթէ պետտները հագնելու համար, ուրիշ երկաթէ օղակաւոր շապիկով մեծ վերարկու մ'ալ այդ խորվիրապին մէջ ձգուած գտան :

Այդ գազաններուն բարկութեան ու կատաղութեանը որ աստիճանի հասնիլը՝ գիւրին է երեւակայել : — Ա՛հ, նենգաւոր գեղացի, կը պոռային փրփրած բերնով, ո՛ր էր թէ մէկ մ'ալ ձեռքերնին իյնայիր . . . : Այո՛, բայց նենգաւորը հիմայ հոն գետնը պառկողն էր . իսկ նաւաժարը, ուրիշ բոլոր ասգին անդին ցիրուցան ըլլալով ապահովուած Լիմոնդացւոց պէս, ինքն ալ իւր կնոջը հետ միատեղ անշուշտ յապահովի էր :

Մեր եօթանասուն նիզակաւոր զօրակմանք դեռ ութը տասը օրուան չափ իրենց բարկութիւնը Լիմոնդայի խեղճ տուններուն ու առժամա անտէր դաշտերուն վրայ թափելով՝ կենալէն վերջը, պարտաւորեցան վերջապէս Լէքօ նաւարկելու . հոն արտերը պարտացնելու համար թողով ութը հողի ալ իրենցմէ :

Այս լուրը Մարքօ Վիսքօնթիին ականջը հասաւ ճիշտ այն օրը, յորում Օլգորինօի հետ քիչ մը առաջ վերը պատմուած հեծելութեան հանդէսը կատարած էր . . . այն տխուր օրը՝ որուն պէս թիրեւս բոլոր կենացը մէջ նմանը չէր տեսած :

Ս. Ամբրոսիոսի մենաստանին արքան հոգնած ու շնչատապառ Մարքօյի պալատը հասնելով, ամբողջ Լի-



մոնղայի բոլոր վերոյիշեալ զէպքերն անոր պատմեց :

Ս. Ամբրոսիոսի արբանայրը , ինչպէս որ ըսինք , Էօարիզիօ Վիոքօնթիին եղբայրն էր . որով եւ Մարքօյի սիրելի ըլլալով , անոր համբաւովն իրեն պատիւը կ'աւելցնէր : Այս բարձրաստիճան կղերիկոսը՝ առաջարկած էր Մարքօյի՝ ամենայն կերպով իրեն օգնութեան հասնելու , որպէս զի կարենայ շիւրաւ իւր նպատակին հասնիլ : Յուսանք թէ մեր ընթերցողք , Մարքօյի հասնելու նպատակին ինչ ըլլալը կրնան յիշել . . . թէպէտ եւ ցայժմ արբան ամենեւին անկէ տեղեկութիւն մ'ալ չ'էր ունեցած : Մարքօ եւ Լօտրիզիօ իրենց շիտաւորութիւնը արբայէն գաղտնի պահելուն պատճառն միմիայն այս էր թէ , որովհետեւ ինք հակապապութենէ եւ Պաւարօյի կողմնակցութեանէ զաղբած չէր , եւ ընտանապէս անոնց շնորհուն ալ պարզ կղերութենէ՝ մինչեւ այս արբայական բարձր աստիճանին հասած էր :

Տեղն ՚ի տեղը եւ զայրացմամբ Լիմոնղայի պատմութիւնը պատմելէն վերջը , արբանայրն ըսաւ . — Սակայն զարմանալին այն է որ այս գործը մեզի տոնմնակից եւ քու ձեռնասուններէդ մէկուն ձեռօքն է եղած : Այո՛ , այդ խորամանկ զեղացիները լաւ կըրցիր են ընտրել քու անուամբդ զիրենք պաշտպանող մը :

Մարքօ , որ մինչեւ ցայժմ լուռ կեցած էր , որպէս զի զիմացինը բարկութեամբ իւր սրտին թողնը թափէ , անոր վերջի խօսքերուն ալ չը կարենալով սանձել իւր զայրացումը , խէթ նայուածքով մը պատասխանեց . — Թողութիւն կ'ընես , արբանայր . — այս ինչ կծու խօսքեր է ինձի . — աղէկ գիտնաս , թէ ինչպէս չեմ ուզէր որ մէկն իմ հրամանս ետ ձգէ

եւ կամ անկէ գուրս բան մը ընէ , նոյնպէս ալ եթէ իմ մարդերէս մէկն անիրաւ տեղը զրպարտուի , չ'եմ կրնար համբերել :

Արբան քունէ մը արթնցածի պէս՝ իմանալով թէ բարկութեան ժամանակը իւր խօսքերը սահմանէն դուրս ելած պիտի ըլլան , շուտ մը թողութիւն ըրէք ըսաւ . քու ձեռնասուններէդ մէկն ըսելոյս՝ քեզի հաւատարիմ ծառայող մը չ'էի ուզեր հասկնալ . որովհետեւ իմ ըսածս անոնցմէ մէկուն ծառան է : Սակայն ես զանիկայ այդ աշակերտիդ ծառան ըլլալու անգամ անարժան կը գտնամ . վասն զի անպիտանէ մը ծնած ըլլալով՝ ձիշտ ալ իւր ծնողքը կը ներկայացնէ :

— Վերջապէս ո՞վ կրնայ ըլլալ , հարցուց Մարքօ :

— Լուբօն , Օգօրինօյի զինակիրը , Տէլ Պալցօ կոմսին բարդեակրին որդին , այդ թշուառականն է եւ զեր Պէլլէպուօնօն սպաննողը : Կարծեմ թէ սպանուողին զիակին քովն ալ երկաթէ օղակաւոր շապիկով վերարկու մ'ալ գանուեր է :

— Այո՛ այդ ըսիր քիչ մ'առաջ :

— Ուստի ասոնցմով ալ Լուբօն ըլլալը յայտնուեր է , եւ զիս ալ ապահովցուցին թէ շուտով Միլան պիտի դառնայ եղիր , Օգօրինօի տունը . իբրեւ թէ բանէ մը լուր ունեցած չըլլայ : Ի վերայ այս ամենայնի , դարձեալ կը կրկնեմ թէ՝ Օգօրինօ այս գաւաճառութեան մէջը չէ : Մէկդի թողլով ընտանեացս հետ ունեակու ինստութիւնը , ինք քաջ զիտէ թէ ես որչափ ձեզմէ մեծարուած եմ , եւ հետեւաբար չուզէր ինձի անհաճոյ դործ մ'ալ ընել : Վերջապէս յայտնի կ'երեւայ թէ այդ թշուառականը իր դիւխէն ըրած ըլլայ այս գործը , որովհետեւ Լիմոնղայի ըլլալով , ի-



բնններուն կողմն է բռնած . . . Ես միայն ասոր հա-  
մար եկեր էի ձեզմէ հրաման ուղղելու . . . ձեզի ա-  
զաչելու , որպէս զի բարեհաճիք . . . :

— Ի՞նչ բանի :

— Քէ սուրբ Ամբրոսիոսի արքահայրը , իրեւ-  
Լիմոնդայի կոմս , ազատ իշխանութեամբ կտորոզ ըլ-  
լայ վերոյիշեալ մասնիչը պատժելու :

Մարքո կարծես թէ պատասխանել անգամ չէր  
ուզեր , սակայն միւսը եւս քան զեւս վրայ տալով .  
— եթէ իմ անձիս դէմ դաւաճանութիւն մ'ըրած ըլ-  
լար , կ'ըսէր , սիրով թողութիւն տուած էի , սակայն  
յայտնի կը տեսնանք որ մենաստանին թէ պատուոյն եւ  
թէ շահուն կը դպչի այս բանը :

— Այո՛ , այո՛ , միշտ ջու նոյն սովորական կեր-  
պերդ են ասոնք , ըսաւ Մարքո խօսքը կտրելով , դու  
քու գիտցածիդ պէս կրնաս ընել , զիս ինչո՞ւ կ'ուզես  
այսպիսի խռովութեան մը մէջ ձգել :

— Իրաւ է , սակայն ինձի ըրած այնչափ բար-  
եացի փոխարէն , ձեզի իմ երախտապարտութիւնս եւ  
առ ձեզ ունեցած յարգանքս յայտնելու համար , կ'ը-  
սէր արքան , եկայ գործին վրայ ձեզի խորհուրդ հար-  
ցնելու : չը կարծէք նաեւ թէ այս վերջի անգամ-  
ուան առած բարձր աստիճանիս ալ ձեր պարգեւն ըլ-  
լալը մոռցած ըլլամ :

Վերջի արքայական իշխանութեան՝ Մարքոյի ձե-  
ռօք Պալարօէն առնուած ըլլալն իրաւ էր . իսկ ան-  
կէ առջի գարտինալութեան աստիճանին ամենեւին  
արժանաւորութիւն մը չ'ունէր : Վասն զի Բիլթօօ ֆոր-  
վարայ անուամբ եկեղեցական առաջնորդի մը մեծ  
բարեկամն էր . այս անձն ալ հակապապեան ըլլալուն ,

մինչդեռ մէկ կողմանէ օր քան զօր շաւերուն երեսէն  
կ'իյնար ու պատիւը կը կորսնցնէր , միւս կողմանէ ալ  
զինքը բռնող բարեկամներ աւելցնելու մտքով , ստա-  
կէ զատ ո եւ է եկեղեցական իշխանութիւն , պաշ-  
տօն , աստիճան , առատ առատ ներողութիւն կը բաժ-  
նէր իրեն կաւակցացը . որոնցմէ մէկն ալ էր Ս. Ամբ-  
րոսիոսի մենաստանին ներկայ արքահայրը :

Աւստի Մարքօ , իր պաշտպանին մատուցած ամ-  
բողջ վերոյիշեալ մեծարանքը՝ առանց խտրութեան ու  
աներկբայ ընդունելէն վերջը , մեր արքահայրն ալ իր  
անձէն սկսեալ մենաստանին բոլոր ծառայութեանցը  
մէջ գտնուողներուն , աքեղաներսն , բոլոր աւատա-  
կան իշխանութեան եւ բարեկամացն օգնութիւնը Մար-  
քօյի խոստանալով , բաժնուեցաւ զնաց :

Այս նոր դիպուածը եւս առաւել Մարքօյի ցա-  
սոււմը Օդօրինօի դէմ գրգռեց . որովհետեւ ինք որչափ  
ալ արքահօր իւր մարդկանցը վրայ յայսպիսի կարծիք  
մը անգամ ունենալը մեծ ամօթ համարեց , սակայն  
քաջ գիտեր թէ Օդօրինօ այս բանիս մէջ բոլորովին  
անմեղ չ'էր գտնուած : Վասն զի անկարելի էր որ Լու-  
քօ այս ձեռնարկութիւնը իւր տիրոջմէն բոլորովին  
պահած ըլլար :

Աւստի մտածեց թէ Օդօրինօի Տէլ Պալցօ կոմսին  
հետ ունեցած ընտանութիւնը՝ կրնայ ըլլալ որ այս  
պատահարիս մէջ Լիմոնդացոց կողմնակցութիւն մը  
պատճառէ . եւ այս խորհրդածութեան ժամանակը Ե-  
րանուհին միտքն իյնալով , եւս քան զեւս բարկութիւ-  
նը ու նախանձը բորբոքեցաւ :



### Գ Լ ՈՒ Խ Ժ Գ.

Այս նախանձը : Այն օրէն՝ յորում Մարքո առաջին անգամ Տէլ Պալցօ կոմսին աղջիկը տեսաւ , անոր գեղեցիկ ու համեստ պատկերը , կարծես թէ ամենեւին աչացն առջեւէն չէր դացած :

Արդարեւ դարմանալի էր Մարքօյի երատասարգական ցնորքներէն , այնչափ տարուան զինուորական անսանձ կենաց դժուարութիւններէն եւ վերջապէս բաղդին հարուածներէն եւ մարդկանց անիրաւութենէն փորձուած ըլլալովն անգամ՝ ինքզինքը դարձեալ սիրոյ ճիրաններուն յանձնելը : Այս , եւ անփորձ երիտասարդի մը յանդգնութեամբն ու զէնքի տակ ապրող եւ միայն արեամբ յագեցող մարդու մը գէշ ու չար դիտաւորութեամբք սիրահարեալ էր :

Մարքօ ըստ ինքեան իրմէլինտապէն ուրիշ կին չէր սիրած : Սակայն ժամանակ անցնելով ու սիրոյ առաջին բոցն ալ սակաւ առ սակաւ չիջանելով՝ այդ սէրը այլ եւ այլ մոլութեանց տեղի տուած էր . այսինքն փրապետելու , վրէժխնդրութեան , երբեմն մեծանձն եւ երբեմն ո եւ է վատ փափաքանաց . վերջապէս , աշխարհքիս վրայ գործող ամեն տեսակ պատուաւոր կամ անօրէն գործերը Մարքօի համար՝ պատմութեան մէջ կրցեր ենք քաղել : Ի վերայ այսր ամենայնի , իրմէլինտապի սէրն ամենեւեւ իր սրտէն չէր կորզուած : Անոր սէրն էր միայն իւր բարուցը չափ զընողը , եւ շատ անգամ բարկութեան ժամանակ թըշ-

նամեացը ներելովն ու աղքատի մը ողորմելովը՝ կը կարծէր թէ իւր առ ժամանակեայ պաշտած հրեշտակին բարեկամութիւնը գործեալ ստացած եւ կամ վերջսին հաստատած կ'ըլլար :

Վերջապէս ինք շատ լաւ դիտէր թէ՛ իրմէլինտապի որդեկաց մայր ըլլալովը , բնականապէս իւր առաջին գեղեցկութիւնը չը պիտի ունենար . ասով հանգերձ , քանի որ կը յիշէր զիրմէլինտան՝ միշտ իրեն կրիասասարդութեան մատղաշ հասակին մէջ տեսածին պէս կ'երեւակայէր զանի : այսինքն՝ միշտ քաղցրաբարոյ , վարդագոյն ու գեղեցիկ դիմօք , եւ հուսկ յետոյ անբացատրելի անոյշ աչքերով մը , որոնց ո եւ է արարած նայած ժամանակն , անկարելի էր կիրք չ'զգալը : Սակայն եւ այնպէս երբոր Մարքօ առաջին անգամ զիրանուհին Միլանու մէջ տեսաւ , այնչափ իրմէլինտապի նման զտաւ զինքը՝ որ անընկճելի զօրութենէ մը յափշտակուած , մեղիեալ ու անչափ տարուան մարած սիրտը , նոյն ժամայն իւր նախկին սիրոյ բոցովն արծարծեցաւ , նախկին տրոփիւնը զգացվերջապէս այն սիրտը՝ սիրոյ քաղցր լուծին հնազանդելով , զիրանուհին միմիայն իրեն արժանի դատա :

Մարքօ , առջի օրերը կարծելով որ առժամանակեայ եռանդ մ'է այս զգացումը , ինքնիրեն բարկացաւ եւ հաստատապէս առաջադրեց ինքզինքն ընկճել : Սակայն 'ի դժուր . վասն զի ինկած որոպայթին մէջ ժամանակ մը ծփալէն վերջը , տեսաւ որ եւս առաւել այն կէտին վրայ հաստատուելովը՝ անել խոր վիրապի մը մէջ կը խարխափէր : Վերջապէս այս երկար ու մտտոտանջ սրտմաշուքէն հողմած , կամաց կամաց եւ գրեթէ առանց իսկ իմանալու , ձգեց ինքը-



զինքը՝ ոչ թէ յուսահատութեան մէջ, այլ պատուա-  
ւոր վերջ մը տալու նպատակաւ այն սիրոյն՝ որուն  
յաղթելն իրեն սնննարին կ'երեւար:

Մէկ կողմանէ այս խորհրդածութիւններով ինքը  
զինքը խաբած ժամանակը, միւս կողմանէ ալ անդ-  
գալի կերպով սիրոյ թոյնը շարունակ արեանը մէջ  
տեղադրով լիարդերը կը թափանցէր եւ ամբողջ մար-  
մինը կը գրաւէր:

Այնպիսի ժամանակներ ունեցաւ Մարքօ, յորում  
կարծես թէ իւր թմբութենէն սթափելու վրայ էր .  
սակայն յանկարծ Երանուհւոյն եւ Օդօրինօի մէջ ծա-  
գած սիրոյն կասկածելի վիճակը միտքն իյնալով, դար-  
ձեալ նախանձը բորբոքեցաւ եւ ունեցած կասկածին  
վրայ, փորձով մը սիրաբը հանդարտեցնել ուզելով,  
չուտ մը միտքը վերոյիշեալ հեծելութեան հանդէսին  
տարաւ եւ զգացած կրիցը շատ յարմար գտաւ:

Լօտրիզիօի Ացցօնէ եղբորորդւոյն Միլանու իշ-  
խանութիւնը տալու համար, նոյն օրերը ժողովուրդով  
խորհուրդ ընելէն վերջը, Մարքօ հաստատապէս միտ-  
քը դրած էր քիչ ժամանակուան մէջ Չէրուլիօ գնալ  
եւ գերմանացի ապստամբ խումբերն իրեն դարձնե-  
լով իւր հաշուին վարձել զանոնք: Սակայն Երանուհ-  
ւոյն եւ Օդօրինօի զիրար սիրած ըլլալուն խելահա-  
սած վայրկենէն, ամեն բան տակն ու վրայ եղաւ:  
Երթայ, բայց ինչ կերպով իւր սիրաբը տանջող մո-  
լեգնութիւնը հանդարտեցնէ . . . : Արդեօք Օդօրինօն  
ալ հետը տանի, սակայն երկուստարդը ակամայ պիտի  
գայ, եւ եթէ կամովին ալ հետը գալու ըլլայ, ինք  
չի կրնար զանկիայ աչացն առջին ունենալ, Դրկէր  
արդեօք զՕդօրինօն հեռու տեղ մեծ գործով մը՝ այն-

չափ ժամանակուան համար, մինչեւ որ ինք Չէրու-  
լիօէն դառնար. սակայն իւր արիւնը ապականող թոյ-  
նը չէր թողուր: Հոս թողուր զինքը Երանուհւոյն քով  
մինչեւ որ ինք յաղթանակաւ Չէրուլիօէն ետ դառ-  
նար, սակայն կը վախէր թէ գուցէ 'ի դարձին գա-  
նօնք արդէն ամուսնացած գտնայ: Այս վերջի կէտը՝  
ամենէն աւելի իւր սրտմտութիւնը կը շարժէր եւ հա-  
զար ու մէկ նախանձաշարժ խորհրդածութեանց տեղի  
կուտար. ու վնայ անոր՝ եթէ նոյն ժամանակը հա-  
մարձակէր . . . : Ա, երջապէս երկար ժամանակ այս  
խորհուրդներուն մէջ ծիպէն վերջը, կարճ եւ ապա-  
հով կերպով մը ուղեց վերջ տալ այս սրտնեղութեանց:  
Այսինքն թէ՛ ինք ինչ որ ալ ըլլար, պէտք էր այս  
ճամբորդութիւնը ընել. ուստի միտքը դրաւ երթա-  
լէն առաջ կանչել Տէլ Պալցօ կոմսը եւ վախցնել զին-  
քը, ըսելով որ եթէ Օդօրինօն Երանուհւոյն պատճա-  
ռաւը Բուսքօնիի սուսած խոստմունքէն ետ կենալու  
ըլլայ, անտարակոյտ գործը գէշի կը դառնայ:

Ուստի սկսաւ մտածել թէ՛ Երանուհւոյն Օդօրի-  
նօյի ունեցած սէրը ինչ բանով ինք կարող էր հետեւ-  
ցնել: Միթէ այն հեծելահանդէսին օրը, պատուհա-  
նէն զՕդօրինօն բարեւած ժամանակը, աղկկան դի-  
մաց՝ բնական կարմրութենէն գուրս այլայլութիւնը,  
ասոր ապացոյց կրնար սեպուրի. սակայն ասիկայ ո՞ր-  
չափ ալ բաւական պատճառ մը կրնար երեւիլ, սյն-  
չափ ալ խաբուիր զիւրին ըլլալուն համար, ուղեց  
ինք անձամբ զԵրանուհւոյն տեսնալով անկէ ճշմարիտը  
տեղեկանալ:

Ուստի իր ճամբայ կ'ըլլալուն առջի օրուան հա-  
մար խնջոյք մը պատրաստել հրամայելով, Տէլ Պալ-



ցօ կոմսը անձամբ տեսաւ եւ անպատճառ զինքը Երանուհեոյն հետ նոյն խնջոյից հրաւիրեց :

Հոս Մարքոյի ձեռնարկած նոր դէպքը՝ վերջը պատմելու պայմանաւ , դռնանք կարճատօտիւ մը մեր Օդօրինօյին :

Իւր տիրոջը վերջին անգամ իրեն հետ այնպէս խտաիւ վարուելուն վրայ զայրացած եւ սրդողած , վաղեց Մարքոյի պալատն երթալ եւ ինքզինքը արդարացնել , միանգամայն եւ Թօսքանայ ընելու ճամբորդութեանը վրայ վստահելուն համար անկէ ներումն ինդրել եւ իմացնել թէ պատրաստ է իւր ամենայն հրամանին :

Սակայն քանի մը անգամ փորձ փորձելէն վերջը անհնարին եղաւ Օդօրինօյի տիրոջը հետ տեսնուիլ , որովհետեւ իրեն իմացուցին թէ ալ չը պիտի կարենայ Մարքոյի պալատէն ներս ոտք կոխել :

Հոս փռճ բան է ըսել թէ այս լուրը որչափ երիտասարդ ասպետին սիրտը կոտրեց . եւ բոլորովին անտեղեակ այս պատահարին ճշմարիտ ու գլխաւոր պատճառն ինչ ըլլալուն , ինք , պարզապէս Բուսքօնիին ազդկան մերժումը միմիայն իրեն յանցանք կըրցաւ դռնալ : Եւ յիրաւի մեծ յանցանք մը կրնար սեպուիլ եւ Մարքոյի պէս մարդու մը երեսէն իջնալու արժանի :

Ուստի ոկտու պաղ արեամբ խորհրդածել թէ ինչ ընէ : Երանուհիէն հրաժարիլը մտքէն անգամ անցընելը պարապ բան կ'երևար իրեն . սակայն ինչ կերպով պէտք էր հաշտուիլ տիրոջը հետ :

Կարծեմ ընթերցողք կը յիշեն թէ Մօնցայէն դարձին , պարզապէս կոմսին պարծենցած ալ էր թէ ինք

իր անձին տէրն ըլլալով , Մարքոյի կամայն անգամ հակառակ , կրնար ուղակի անհաւանանալ . սակայն իրաւն ըսելով ալ ալ քիչ մը մեծամտութենէ յառաջ եկած էր : Վրան զի հիշայ հանդարտ մտածելով չէր ուզեր այն մարդուն հետ աւրուիլ : Մանաւանդ Մարքօ մէքսօնթիի պէս մարդու մը հետ՝ զոր մենք թէպէտ տակաւին խիստ քիչ կը ճանչնանք , սակայն Օդօրինօ զանի մեղմէ շատ աւելի ազէկ կը ճանչնար :

Այնպիսի մարդու մը թշնամութեան ենթակայ դատուելուն երկիւղն ալ մէկ կողմ ձգելով , Օդօրինօ՝ ո՛ր եւ է կերպով չէր կրնար հանդուրժել անոր բարկութեանը առիթ ալ , որ միշտ զինքը իրբեւ որդի սիրած էր , որուն հովանաւորութեան տակ զինուորական արհեստից առաջին քայլերն էր ըրած , որուն ձեռքէն իսկ ասպետութեան աստիճանն ընդունած էր , եւ վերջապէս չէր ուզէր այն մարդուն առջին յանցաւոր դատուիլ , զոր միշտ իրբեւ օրինակ , իրբեւ առաջնորդ եւ իրբեւ լուսատու իւր շաւղացը՝ յարգած էր :

Ուրիշ մտածելու բան մ'ալ կար որ , թէ եւ Օդօրինօ՝ միայն այս դժուարութեանց ակամջ չի դնելով՝ ուզեմար նաեւ Երանուհեոյն հետն ամուսնանալ , բայց եւ այնպէս ազդկան հայրը չի պիտի բարեհաճէր , պարզապէս պատասխանելով թէ՛ ինք ամենեւին Մարքոյի հետ աւրուելու միտք չունի :

Օդօրինօ այդչափ մտառանջութիւններէ հողնած , սկսաւ օրէ օր առանց իսկ զգալու , տխուր եւ խըստաբարոյ ըլլալ , այնպէս որ էրմէլինտա եւ Երանուհի , որանց հետ օրուան մեծ մասը անցընելով՝ ինքզինքը



գուարձացընելու կը ջանար . վերջապէս հասկընալով թէ ասոր նոր վարմուճքին մէջ դադարիք մը պիտի ըլլայ , սկսան ղինքը այլ եւ այլ կերպով փորձել : Սակայն Օդօրինօ երբեմն ծածկելով , երբեմն չի պատասխանելով եւ երբեմն ալ վրայ խօսք բերելով , չէր համարձակէր սրտին վերքերն ասոնց բանալ :

Իսկ աղջկան հօրը . . . այն Տէլ Պայօց կոմս անուանեալ խեղճին գալով , մէկ կողմանէ իւր փաստաբանական յաղթանակներովը եւ միւս կողմանէ ալ Մարքօյի հետ ունեցած մտերմութեամբը մեծամեծներէն ընդունած պարգեւներէն եւ յարգանքներէն գինովցած , գրեթէ ոչ ամուսին եւ ոչ ալ աղջիկ մ'ունենալը կը յիշէր : Եւ եթէ Երմէլինտա , երբեմն համարձակէր ղինքը այդ մտացածին բարձր աստիճանէն վար իջեցնելով քիչ մ'ալ ընտանեկան գործոց զբաղելու յորդորել եւ կամ Երանուհուոյն վրայ խօսք բանալով Օդօրինօյի հետ ամուսնանալը մէջ բերել , կոմսը իսկոյն բարկութեան վերջի աստիճանին հասնելով կը պատասխանէր . ինչո՞ւ կ'աճապարես , թո՞ղ որ գործը իր ոտքովը գայ , միթէ ամեն բան կարգի դրուած չէ , ուշանալուն մէջ ի՞նչ դժուարութիւններ կրնան ծագիլ : Երբ որ ուզէ թո՞ղ այն ատեն տայ մատանին . կարծեմ թէ իրրեւ ծանր բեռ մը կ'ուզես ժամ մը առաջ զԵրանուհին ուսէ՞ր թո՞ղ վել եւ այն :

Քանի մը օր անցնելէն վերջը , սկսաւ Օդօրինօ տեղի ունենալու խնամութեան շուտով եւ գաղտնի կերպով ըմննալուն փափաքը կամաց կամաց յոյսնել : Որչափ ալ Երմէլինտա մաքին մէջէն կրցաւ որոշակի իմաստ մը ընծայել այս գաղտնի բառին , սակայն չը կարենալով ինքզինքը ո եւ է կերպով ապահովընել :

սկսաւ թախանձելով նեղել զասպետը , այնչափ որ վերջապէս Օդօրինօ կէտ առ կէտ ստիպուեցաւ ինչ որ իրեն պատահած էր Երմէլինտայի պատմելու :

Անկէ վերջը , քանի որ խանդաղակաթ մայրը՝ աղջըկանը հետ մինակ կը գտնուէր եւ ղինքն անխօս ու տխուր տեսնալով որչափ ալ անոր այդ լուութեանը մէջ , փափուկ սիրաբը մաշեցնող որդը կը գուշակէր , սակայն աղջկանը չէր կրնար բան մը ըսել : Միթէ ըսեր որ ալ հարսանեացը վրայ չը մտածէ , կամ թէ ասկէ վերջը Օդօրինօս մոռնայ ու չը յիշէ : Երմէլինտա տակաւին չէր կարծեր որ գործը մինչև ապր տեղուանքն ըլլայ : Ասով հանդերձ , լաւ գիտէր թէ այս ճամբան բռնելուն ժամանակն անցած էր , եւ բարի հետեւանք մ'ալ չէր կրնար ունենալ :

Վերջապէս Երմէլինտայի աւելի բարի թուեցաւ Երանուհուոյն ամեն բան իմացնելը : Այն օրէն վերջը Օդօրինօ քանի մը մեծամեծ տիկնանց խորհրդակցութեամբը , յուսալից եղանակաւ մը կ'ուզէր զԵրանուհին համոզել : Մարքօն կ'ըսէր , սուղ ժամանակուան մէջ պէտք է որ Թոսքանայ երթայ . ուր բնականապէս բաւական ատեն պիտի ուշանայ : Ուստի մէկ կողմանէ ասկէ հետո գտնուելը եւ միւս կողմանէ ալ նոր հողերը այդ մարդուն դժկամակութիւնը անշուշտ կը փարատեն : Ժամանակաւոր անձնահաճութիւն մը ըլլալն ալ յայտնի է . որովհետեւ Մարքօյի բնութիւնը միշտ մտացածին կարծեաց հակումն ունի : Սակայն անգամ մը որ Երանուհին իմ ըլլայ , ամեն բան պիտի խաղաղի , պիտի տեսնաք ժամանակն ամեն բան իւր ծոցին մէջ թաղելով կը մոռցնէ : Բայց ո՞վ գիտէ , կրնայ ըլլալ որ Մարքօ այս ճամբորդութենէն շուտ



ևտ դառնայ, կրնայ ըլլալ նաեւ որ Բուսքօնիի հետն  
աւրուիլը Մարքօյի դժուարութիւն մը չի պատճառէ,  
եւ փոխադարձաբար Մարքօյի ալ բարեկամ մնալն ու  
չը մնալը Բուսքօնին չը թշնամացնէ: Վասն զի դար-  
եալ կը կրկնեմ, ոչ թէ միայն ես անձամբ անոր աղ-  
ջըկանը խօսք չ'եմ տուած, հապա Մարքօ ինքնին այդ  
բանին մասնաւոր հոգ մը տարած չէ . . . :

Ասոնք՝ եւ ասոնց նման մէջ բերած քանի մը հա-  
ւանական իրաւունքները որչափ ալ նրանուհւոյն սիր-  
տը քիչ մը հանգարտեցուցին, սակայն Էրմէլինտայի  
միտքը չը կրցան ամենեւին համոզել:

Ուրիշ գլխաւոր մտածելու բան մ'ալ ան էր, որ  
եթէ Տէլ Պալցօ կոմսն իմանար Մարքօյի այս բանիս  
համար ունեցած ընդդիմութիւնը, ամէն բան տակն  
ու վրայ պիտի ըլլար: Ուստի, ըստ կարելւոյն բանը  
գաղտնի պահելով, տեղի ունենալու ինսամութիւնը՝  
Մարքօյի Թոսքանա երթալուն պէս անյապաղ կատա-  
րելու որոշումը այս օրուան վաղուան ձգձգած ժա-  
մանակնին, յանկարծ օր մը Մարքօ Վիսքօնիի զի-  
նակրաց մէկը գալով՝ Տէլ Պալցօ կոմսը աղջկանը հետ  
միատեղ վերոյիշեալ հանդիսին հրաւիրեց: Այս հան-  
դիսին ինք ալ ներկայ չը գտնուելուն վրայ Օգօրինօ  
չատ ցաւեցաւ: Էրմէլինտա ալ նրանուհւոյն հաւա-  
նութեամբը իր կողմանէ ամենայն հնարք բանեցուց-  
որպէս զի աղջիկն այս հանդիսին չը գտնուի, սակայն  
դարձեալ կոմսին խօսքն ըլլալով, նրանուհւոյն ալ ՚ի  
միասին երթալը հաստատուեցաւ:

Հանդիսին սահմանեալ օրը, առջի գիշերուընէ  
կոմսը իւր պալատին մեծագոյն ու շքեղ սրահներէն  
մէկուն մէջ ծաղկեայ թաւիչէ զգեստ մը եւ ոտքերն

այ՝ ծայրերը դէպ ՚ի վեր ցցած եւ մինչեւ սրունքնե-  
րը խրացնելով փառաւոր կոշիկ մը հագած, ուրախ  
զուարթ վեր վար կը քայլէր: Նրանուհւոյն հօրաքոյրը  
որ Էրմէլինտայի տեղը հանդիսին պիտի երթար, ա-  
թոռի մը վրայ նստած էր եւ աղջկան զգեստին այս  
կամ այն պակասութիւնը պատճառ բերելով ժամա-  
նակ անցնելուն համար սիրտ կը հասցնէր:

Որովհետեւ քանի որ Մարքօյի ներկայանալու  
վայրկեանները կը մօտենային, եւ Օգօրինօյի ալ անոր  
աչքէն իյնալը միտքը կուգար, կտրճեա թէ նրանուհ-  
ւոյն փափուկ սրտին մէջ գաղտնի երկիւղ մը կը տի-  
րէր: Նոյնպէս ալ երբ որ իւր երեւակայութեանը առ-  
ջեւ կը ներկայացնէր՝ թէ այն մարդուն սուր եւ ա-  
հաւոր աչաց դտոտողութեանը ներքեւ պիտի գտնուի,  
բոլոր անդամները կը դողային: Միայն այս բանիս  
իւր սիրելի Օգօրինօյին ալ հանդիսին ներկայ գտնուե-  
լուն կը փափաքէր աղջիկը, որպէս զի գոնէ երբեմն  
անոր հետ խօսակցելով սիրտ առնէ եւ քաջալերուի:  
սակայն ամբողջ նոյն օրը Օգօրինօ չ'էր երեւցած:

Նրբոր աղախինը գլխուն համար ուզած մտաքը-  
սէ ժապաւէնը պատրաստած ներս բերաւ, նրանուհի  
զանի շուտ մը իբրեւ յետին զարդ գլուխը դնելով,  
հօրը եւ հօրաքոյրը հետ միատեղ ելան ու հաղիւ թէ  
սրահին ծայրը հասած էին, մէկ մ'ալ Օգօրինօ վաղե-  
րով եւ այլայլած կերպարանքով դիրնք դիմաւորեց  
ու կանչեց:

— Գիտէք, այս գիշեր Լուբօն քնացած աստնը,  
մասնութեամբ Ս. Ամբրոսիոսի արբահօր ձեռօքը բռն-  
նուելով, գլխատուելու դատապարտուեր է. եւ վա-  
ղը իւր կենայր վերջին օրը պիտի ըլլայ:



Լաուրէզա այս գոյժն առածին պէս, յանկարծ շուարելով թէ ինչ կերպով զպն պիտի ծնողացն իմացնէ, կիսամեռ ինկաւ գետինը եւ բոլորտիքն եղողներն ալ ապշած մնացին:

— Աղաչանք, խոստմունք, սպառնալիք ամենքն ալ պարապը ելան, կ'ըսէր Օդօրինօ, պէտք է որ այս բանս Մարքոյի հաւանութեամբն եղած ըլլայ. վասն զի առանց անոր, ինք չ'էր կրնար համարձակիլ իմ նիզակահրիս ձեռք զարնելու:

— Մտիկ ըրէ, ըսաւ կոմսը թոթովելով, դու ուզեցիր քու գլխէդ գործ տեսնել եւ ահաւասիկ անոր . . .

Սակայն Էրմէլինտա եւ Երանուհի միանգամայն կամսին խօսքը կորելով. — Տիմայ պէտք չ'է, ըսին, անտրի հակաճառութեամբ ժամանակ կորսնցնել:

— Ինչո՞ւ համար Մարքոյին չի գացիր, ըսաւ կոմսն Օդօրինօյի, նախատինքը քեզի է, եւ խեղճին մահուան պատճառն ալ դու ես:

— Գացի անոր պալատն ալ, սակայն զիս չուզեց ընդունիլ:

— Ի՞նչպէս, ի՞նչպէս, ի՞նչ ըսիր տեսնեմ . . . Մարքօ զըզկ չուզեց տեսնել:

Հոս ասպեալը իւր սաստիկ բարկութենէն ամենայն ակնածութիւն մոռնալով, ամբողջ պատմութիւնը կէտ առ կէտ պատմելով իմացուց կոմսին թէ ժամանակէ մ'ի վեր Մարքօ զինքը իւր տեսութենէն իսկ զրկած էր:

— Ուրեմն ըսել է որ Վիսքօնթիին երեսէն ինկած ես, հառաչեց Երանուհոյն հայրը: Ո՛հ, Տիմայ կ'իմանամ քիչ մ'առաջ Էրմէլինտայի առանձին ինծի զրուցածները թէ՛ Մարքոյի առջեւ բան մը չի գիտ-

նալ ձեռացընեմ, թէ սահմանեալ հարսանեաց խօսքն ամենեւին չի բանա՞մ: Ահաւասիկ այժմ ամենայն զաղտնիք երեւան ելան: Կնծմէ ասանկ բաները կը պահէ՞ք, հա՛, շատ բարի, ես ալ ձեռքերս լուանալով Պիղատոսին հետ կը գոչեմ . . . անպար է՞ յարե՞նէ որո՞ւ:

— Ըսել է որ քու եւ բոլոր քաղաքակցաց կեանքն ազատելու համար իւր կեանգը վտանգի դնող ծառայիդ համար երկու խօսք ընելու վարանելով՝ պիտի թողնու որ խեղճը սպաննեն, ըսաւ Էրմէլինտա:

— Տէր Աստուած, գիտէ՞ք թէ արբան արդէն ինչպէս ինծմէ կը կասկածի . . . երկրորդ՝ թէ ինչ աստիճանի ապահովութիւն կրնամ ունենալ, որ այս պիտի բան մը բարեխօսելուս ատենը Մարքօ ինծի ունկնդիր ըլլայ:

Սակայն հոս կոմսին քոյրն ալ աղաչողաց իարգն անցնելով, — ինչ ըսել է, ըսաւ, միթէ՞ դու Մարքոյի ամենէն ներքին եւ խորհրդակից բարեկամն ըլլալդ քանի քանի անգամ մեզի չ'ես յայտնած. ուրեմն ինչ պէտք է վիստելով ետ քաշուիլ կեանք մը փրկելու բարեխօսութենէն, մանաւանդ քու ծառաներէդ մէկուն կեանքը:

— Սակայն տէր Աստուած, կ'ի՞նչ կարենայի . . .

— Կարող ես, եւ պէտք է որ՝ կարող ըլլաս, ըսաւ քոյրը:

— Մտիկ ըրէք, ըսաւ Օդօրինօ, Մարքօ իւր բարեկամներէն բաժնուելու գիշերը, եւ ուրախութեամբ հանդիսի մը մէջ չի կրնար ըլլալ որ առաջին անգամ իրեն եղած մէկ աղաչանքը մերժէ, անոր սիրտն ալ մարդկային է . . . ըսէ թէ քաջ մըն է, որ իւր քաղաքն ու քաղաքացիները ապերառան ամբոխի մը Տի-



բաններէն փրկելուն համար գլխատուելու դատապարտուեր է . ըսէ Մարքոյի . թէ զինուոր մըն է որ գալարափողի հրամանին տակ մարտնչելով արիւնը թափած է . ըսէ Մարքոյի , որ չը թողու քաջ մը՝ աւագակի մահուամբ սպաննուիլ , եւ վերջապէս յիշեցուր անոր՝ որ Լուբօն հայր եւ մայր մ'ունի :

Հոս կոմսը դէպ 'ի սրահին դուռը դարձաւ , ուսկից հեծութեան եւ լալու ձայներ կը լսուէին : Քիչ մը վերջը դռները բացուեցան եւ բազէակիրը , Մարթա Լաուրէզա միատեղ արտասուելով , գունատ եւ սրտանրնուն ցաւէն լքեալ սրահէն ներս մտան : Ամպրօճիօ առժամայն տիրոջը ոտքն իյնալով ծնկունքներուն պլլուեցաւ եւ աղէտալի աչքերը կոմսին դարձնելով կ'ուզէր խօսիլ . սակայն անընդհատ հեծութեան ձայնէն զատ՝ անոր տեղոյն չրթունքներն ուրիշ բան չէին կրնար արտաբերել :

Ամենուն , նաեւ մեր կնոջը եւ Լաուրէզայի աչքերն անգամ անոր վրայ յառած կ'սպասէին թէ ինչ պիտի ըսէ :

— Վերջապէս քիչ մ'ինքզինքը ժողվելով , իմ որդիս , իմ որդիս , գոչեց , ս'հ , փրկէ իմ դաւակա :

Կոմսը խոնարհելով ուզեց զանի գետնէն վեր առնուլ , սակայն Ամպրօճիօ գլուխը կախած եւ մէկ ձեռքն ալ վեր վերցուցած , չէ , կը պօռար , ձգէ զիս հոս գետինը , ձգէ զիս որ հոս մեռնիմ , ես սակէ չի պիտի ելլեմ մինչեւ որ ձեզմէ իմ որդիս փրկելու խոստմունքը չառնում :

— Բաւական է , ել Ամպրօճիօ ել , ես ձեռքէս եկածէն չի պիտի փախչիմ , կը խոստանամ որ պիտի աղաչեմ , պիտի պաղատիմ , ել , ալ բաւական է :

— Այն ատեն Մարեանա , հասկըցամ , ըսաւ , անաւասիկ մեր տէրը խոստացաւ զԼուբօն փրկել , ալ հանգիստ եղիր :

— Ինծի խոստացամ , խոստացամ ուրեմն որ զաւակս պիտի փրկես . ս'հ , ըսէ այն մարդուն , որուն ձեռքն է Լուբօն կեանքը , այն մարդուն՝ որուն մէկ խօսքը բաւական է Լուբօս ողջ ինծի դարձնել , ըսէ անոր որ ինքն ալ յիշէ իւր հայրը՝ որուն ամենասիրելի որդին էր . . . Եւ թէ որ արքան անպատճառ հատուցում մը պահանջէ , անաւասիկ ես հոս եմ , արիւն մը որ նոյնն է եւ նոյնպէս ալ մարմին մը . . . ես էի որ այդ բանին զինքը յորդորեցի , յանցանքն ալ իմն է , ինք հօր մը հրամանին հնազանդեցաւ : — Այս միջոցիս Օդօրինօս միտքն իյնալով , որն որ առաջին այլալուծեանը մէջ աչքէն փախած էր , աւելի յանդուրդնօրէն քան թէ յարգանօք մը ընդ առաջ դնալով , — քեզի կիցնայ , ըսաւ Օդօրինօյի , փրկել իմ որդիս , քեզի կիցնայ միայն՝ վասն զի դու խել անոր այս վիճակին համակուրն պատճառն ես :

— Հաւնեցամ ըսածիդ , կանչեց շուտ մը իւր կիւնը . միթէ ասոնք են այնպիսի բարեսիրտ ասպետի մը զրուցուելու հնորհակալութեան խօսքերը , որ բուն խել մեր բարեացը համար հոս կոմսին մեղմէ առաջ աղաչելու եկեր էր :

— Ո՛հ , Աստուծոյ օրհնութիւնը վրադ ըլլայ , ըսաւ Ամպրօճիօ ասպետին , թողութիւն ըրէ , գթան խեղճ հօր մը՝ որ ինքնիրմէ դուրս ելած չի գիտէր ինչ ըսելն ու ինչ ընելը : Ուրեմն ժամանակ մի կորսնցնէք Գնացէք , գնացէք եւ իմ զաւակս ինծի դարձուցէք : Կոմսը աչքերը սրբելով , — Ապահով եղիր ըսաւ :



Ամպրօծիոյի, ինչ որ ձեռքէս գայ պիտի ընեմ համարելով թէ իմ որդւոյս համար ըրած ըլլամ: Եւ այս ըսելով Երանուհւոյն եւ իւր քրոջը հետ ճամբայ ելան:

Իսկ Լաուրէդա որ մինչեւ ցայժմ արտասուելէն զատ բան մը չէր ըրած, վազեց Երանուհւոյն առջեւ ու սրահէն դուրս ելած միջոցին՝ ձեռքէն բռնեց եւ արտասուօք թրջեց զայն: Խեղճը սրտին յուզմունքէն բան մը չը կրցաւ ըսել, սակայն Երանուհւոյն զգայուն սրտին չուտ աղոթելին անոր ըսելու աղաչանայ խօսքերը:

Գ Լ ՈՒ Խ Ժ Գ

Ինչոյից հանդիսին շքեղ սրահներուն, ոսկեզօծ առաստաղներուն, նայել ոսկիէ եւ արծաթէ ամաններուն եւ ոսկեզօծ կարասեաց եւ հայելեաց մէջէն՝ անհամար ճրագներու ցողքին եւ նուադարանաց քաղցր եղանակացն ու խուճի մը ընտիր կաքաւչաց մէջտեղը Մարքօ՝ կարծես թէ գաղտնի խորհրդով մը զրադած, եւ բարորոպին տժգո՞ լիճակի մը մէջ, կ'անխժանէր մտքէն՝ այդ սնտախ եւ իւր գտնուած վիճակին բոլորովին հակառակ խրախուժեան հանդէսը, որուն աւանայ իսկ պէտք էր մասնակից դանուի: Երբեմն երբեմն սրահներուն մօտ խուց մը մտնալով պատուհաններէն վար դաւիթը կը նայէր, թէ արդեօք ժամ մը առաջ Տէլ Պայցօ կոմսը կրնար տեսնալ: Ախանջ կուտար հեռուէն ձիերու ոտից ձայն մը լսելու հա-

մար, սակայն հանդիսին շշուէջէն ուրիշ բան մը ախանջին չէր հնչեր:

Կը դառնար վերստին առաջին ձգած տեղը՝ պարահանդէսը տեսնելու, հետեւեալ աւուր ղինամարտութեան վրայ խօսելու եւ իւր Թոսքանայի ճակտորդութեան վրայով բարեկամներէն բարեմաղթութիւններ ընդունելու համար, սակայն Մարքօյի սիրտը ուրիշ տեղ էր:

Այդչափ երկար ժամանակ սպասելէն ձանձրացած եւ հոգնած, Մարքօ հրաւիրելոց աչաց առջևէն աներեւութացաւ եւ իւր գաղտնի խուցերէն մէկուն մէջ փակուելով՝ կրցածէն աւելի երկար ժամանակ հոն կենալ որոշեց, յուսալով որ ՚ի գարձին իւր սպասած անձը եկած կը գտնայ հրաւիրելոց մէջ:

Այս մտատանջութիւններով գրեթէ երկու ժամէն աւելի այեկոճած էր, եւ ահա կոմսը իւր աղջրկանը եւ քրոջը հետ միատեղ սրահէն ներս մտան: Մարքօ այս միջոցին սրահին միւս ծայրը գտնուելով, զԵրանուհւոյն այնչափ գունատ եւ տխուր տեսածին պէս, գուժը, սէրն ու արհամարհանքը միանգամայն շարժեցան... այն սուղ ժամանակուան մէջ՝ յորում Մարքօ կեցած տեղէն մինչեւ սրահին միւս ծայրը վազեց, որպէս զի նորեկ հիւրերը դիմաւորէ. երբեմն հրեշտակի եւ երբեմն ալ թշնամուց մը գէմ ելլալու պէս կ'ուզար իրեն: Մէկ կողմանէ Երանուհւոյն ոտքն ինչալ, միւս կողմանէ ալ գառն յանդիմանութեամբ զանի սպանանել կ'անցնէր միտքէն: Այսու ամենայնիւ դուրսէն ամենեւին իր ներքին զգացմունքները չի յայտնելով՝ ամենայն քաղաքալարութեամբ ընդունեց վերինք: Ցեւ այսր ընդունելութեան, կոմսին



քորը Երանուհւոյն ձեռքէն բռնելով, խուճբ մը աղ-  
նուական տիկնանց եւ աղջկանց մէջ տարաւ . որոնք  
Երանուհւոյն պարզ գեղեցկութեանը եւ քաղաքավար  
չարժմանցը խիստ հաւնեցան :

Տէլ Պացօ կուճը միայն Մարքօյի քովը առանձ-  
նացած մնաց : Որչափ երկուքին բաղձանքն ալ զի-  
րար գտնայ էր , այսու ամենայնիւ երկուքն ալ խօսք  
բանալու չի համարձակելով՝ մէկ մէկու կ'սպասէին :

Այս միջոցիս Մարքօ վեր վար կը քալէր . կոմսն  
ալ ետեւէն կամաց անոր կը հետեւէր , ինչ ճամբայ  
բռնելուն վրայ շփոթած . հազար ու մէկ յառաջարան  
կը շարադրէր մտքին մէջէն եւ իւրաքանչիւր քայլին  
բերանը բանալու կը պատրաստուէր , սակայն դար-  
ձեալ չ'էր կրնար դիտաւորութեանը վերջ մը տալ :

Վերջապէս սիրտ ընելով , որչափ ալ ներկայ հուն-  
դիսին վերաբերեալ քանի մը խօսք կրցաւ արտաբե-  
րել , այսու ամենայնիւ Մարքօ առժամայն կարճ պա-  
տասխանաւ մը իւր խօսքը կտրելուն պէս՝ Երանուհ-  
ւոյն հայրը հասկցաւ , որ ալ ուրիշ հնարք չ'էր մնա-  
ցած բայց եթէ երկուքն ալ այսչափ երկար ժամա-  
նակ իրենց մտքէն որոճացածնին 'ի լոյս հանեն . ուս-  
տի վեհանձնութեամբ մը . . .

— Մտիկ ըրէ՛ Մարքօ , ըսաւ , զուցէ ըսելիքս  
չափազանցութեան ապացոյց մը երեւայ քեզի , սա-  
կայն կը յուսամ թէ քու աղնուութիւնդ կը ներէ . . .  
կ'ուզէի քեզմէ շնորհք մը խնդրել . . .

— Ինձմէ՛ շնորհք մը , պատասխանեց Մարքօ դէպ  
'ի մօտը դանուող պատուհանի մը առջեւը դնալով՝  
կոմսն ալ բնականապէս անոր ետեւէն կ'երթար : Սա-  
կայն Մարքօ այս հարցմունքն այնպիսի պաղ եւ զար-

մայական եղանակաւ մը ըրաւ , որ կոմսին դեռ ե-  
տեւէն գրուցելու պատրաստած խօսքը բերանը մնաց :

Մարքօ այն ամբարտաւան «Ինձմէ՛» ըսելով ըրած  
ցուրտ հարցմանը պատասխանին բաւական ժամանակ  
սպասելէն վերջը , — չէ՛ր կրնար այդ շնորհքը Բուս-  
քօնիէն խնդրել , հարցուց կոմսին դառն ու թունալից  
եղանակաւ մը . . . Բուսքօնիէն՝ որ քեզի այդչափ ե-  
րախտապարտ պէտք է ըլլայ , թերեւս նա այդ շնորհ-  
քը կարենայ ընդունել :

Երանուհւոյն հօրը արիւնը կարծես թէ երակացը  
մէջ սառեցաւ , ու ապշած եւ թոթովելով . . .

— Ի՞նչպէս , ինչ ըսել կ'ուզէք , ըսաւ , ես չ'եմ  
կարծեր , որ մէկու մը ֆուս հասուցած ըլլամ : Իսկ  
Բուսքօնիին դալով , դուք ալ լաւ գիտէք որ հազիւ  
թէ անուամբ կը ճանչնամ զինքը :

— Ո՛հ , անոր տարակոյս մի՛ ունենար , կը կրկ-  
նէր Մարքօ , թէ Բուսքօնին ինքզինքը ճանչցնել կու-  
տայ . Բուսքօնին , ամենեւին պարտքի տակ մնացող  
մարդ չ'է . եւ այս ըսելով տեղէն հեռանալու կը պատ-  
րաստուէր :

— Սակայն միւսը զանի ճամբէն արդիւրելով . —  
կ'աղաչեմ , կ'ըսէր , ինձի պարզապէս ըսէք , ըսէք ,  
ինչ կայ . . . յիշաւի ես բանէ մ'ալ լուր չ'ունիմ . . .  
արդեօք այդ երիտասարդին պատճառաւն է որ . . .  
Օղօրինօյի . . .

Մարքօ , ուզելով որ կոմսն իրեն լաւ մը լաց-  
ուի , պատասխան չի տուաւ եւ դարձեալ անկէ դատ-  
ուելով երթալու կը պատրաստուէր :

— Զիս մտիկ ըրէք , մտիկ ըրէք , ըսելով կոմսը  
եւս ստաւել թախանձանօք կ'աղաչէր , ես ամենեւին



բանէ մը լուր չ'ունիմ, եւ գիտնաք որ եղածին համար ալ ես ամենեւին յանցանք չ'ունիմ . . . իրաւն ըսելով երիտասարդը . . . այս, չ'եմ կրնար ժխտել, իմ աղջկանս հետ ամուսնանալը ամենայն հաճութեամբ առաջարկած էր . այսու ամենայնիւ իրեն պարզապէս իմացուցեր եմ որ, ձեր կամացը դէմ բան մ'ընելով, զձեզ տնաձեցնել չ'եմ կրնար . . . . եւ թէ այս գործը կատարելէն առաջ ՚ի հարկէ մէկ մը ձեզի . . .

Մարքո, սրտին նեղութենէն ալ չը կարենալով համբերել եւ շուտ մը ընդմիջելով կոմսին խօսքերը .

— Սակայն, Երանուհին ալ իր կողմանէ այս խնամութեան տեղի ունենալը պատշաճ դատած է արդեօք, ըսելով այնպիսի այլակերպեալ գիտօք մը կոմսէն պատասխանի կ'սպասէր, որ խեղճին համար, մահուան դռները հասածի պէս էր այդ վիճակին մէջ Մարքոյի գիմացը կենալը .

— Երանուհին, հարցուց կոմսը թոթովելով մը, ինձի Երանուհին կը հարցնէք . . . Երանուհւոյն համար ծնողացը պատշաճ դատածն ու հաւնած ամուսինը՝ իրեն ալ պատշաճ դատածն ու հաւնածն . . . այնչափ պարզ եւ անմեղ սիրտ մ'ունի խեղճը, որ ազաւնի մ'է կրնամ ըսել, եւ սիրտն ալ ցայտմ մօրմէն եւ ինձմէ ուրիշին ընծայած չ'է :

— Ուրեմն, դարձեալ կը հարցնէր Վիսթօնթին, ըսել է որ եթէ այս խնամութիւնը տեղի չ'ունենալու ըլլայ, Երանուհին ամենեւին չի պիտի ցաւի :

— Զի պիտի ցաւին ալ խօսք է . այն տեսակ անխելք աղջիկներէն մի կարծէք զինքը . ես կը ճանչնամ իմ ապրանքիս տեսակն ու արժէքը :

Այս պարզ եւ միանդամայն օրհնեալ խօսքերուն

վրայ, Մարքոյի սիրան ուրախութեամբ լեցուելով, կ'ուզէր նոյն միջոցին այդ միտքարիչ խօսքերն արտաբերողին վիզը պլուելով համբուրել զինքը . սակայն ինքզինքը բռնեց, մտածելով որ եթէ հիմակուրնէ երիտասարդը Տէլ Պալցօ կոմսին տունը չերթալուն հնարքը չի մտածէ, գուցէ մինչեւ հիմայ չեղածը իւր Թօքսանայ գտնուած ժամանակը կատարուի : Ուստի մտածեց աղջկան հօրը սիրտը մեծ վախ մը ձգել, եւ առաջին յուզեալ կերպէն բողբոջին տարբեր՝ պարզ եւ հանդարտ եղանակաւ մը, պատասխանեց .

— Եթէ ըսածիդ պէս է, թէ Երանուհւոյն եւ թէ Քեզի մեծ հանդատութիւն եւ երջանկութիւն է . խիստ դժուարս պիտի դար եթէ Գուսթօնի պէս իշխանութեան եւ բնութեան աէր մարդու մը հետն դքեղ աւրուած տեսնայի :

Յիրաւի կը խոստովանիմ քէզի թէ՛ ես ալ պիտի ցաւէի դքեղ խմիններուս կարգը սեպելուս . . . այսինքն անոնց՝ դորս լաւ աչքով չեմ տեսնար, դքեղ՝ որ վերջապէս մեր տղայ հասակէն իրարու բարեկամ կը սեպուինք :

Հոս աւելի ընտանեկան ու մտերմական կերպ մը առնելով, ձեռքը կոմսին ուսին վրայ դրած ըսաւ . — Գուցէ ցայտմ չէիր դիտեր թէ Օդօրօնոյի եւ Քօօօի սիրոջ աղջկան մէջ տեղի ունենալու խնամութեան առաջարկութիւնը ես անձամբ պատրաստած ըլլամ . հիմայ կ'երեւայ թէ երիտասարդը կը տատանի եւ իմ ուղածէս ետ կենալ կ'ուզէ : Սակայն այս կէտիս ես իմ պատիւս պաշտպանելու պարտական եմ : Այսչափս բաւական է . թէ որ դու քու խօսքիդ վրայ հաստատ կենաս, գործը շատ ազէկ պիտի երթայ, եւ Օդօրինօ



ալ չի պիտի ուղէ իրեն բարկացած ըլլալս : վասն զի լաւ գիտէ ինքը թէ , ինծի հետ կռուելու կարող չէ :

— Ա՛հ , ապահով եղիր , ըսաւ կոմսը , թէ իմ պատճառաւ քեզի մնաս մը չի հասնիր , եւ թէ որ առաջուց գործին եղելու թեան խելահաս ըլլայի , աշխարհքիս ոսկին անդամ ինծի պարգեւած ըլլային , դարձեալ չէի թողուր այդ երիտասարդին իմ տունս յաճախել , վասն զի ձեր պատիւը եւ իմ հանգստութիւնս աշխարհիս ոսկիէն վեր կը դասեմ :

— Շատ աղէկ , անցեալը ոտնհարութեամբ մտնանք եւ մէկ մ'ալ չի յիշենք , սակայն ասկէ վերջը . . .

— Ասկէ վերջը , ձեզի կը խոստանամ որ տանս գրան սեմէն անդամ ներս չի պիտի մտնայ , եթէ աշխարհքիս ալ վերջը գայ : Այդ բանին հոգ մի ընէք :

Այս միջոցիս Վարքո Երանուհւոյն համար ունեցած դիտաւորութեանը վրայով՝ որչափ ալ Տէլ Պալցօ կոմսին ուղեց խօսք բանալ , սակայն նախ աղջկան միտքն առանց իմանալու՝ այդ բանին չի համարձակելով , լռեց :

Ի վերայ այսր ամենայնի , հիմայ որ Վարքօ կոմսն իր ուղած կէտին բերած հասուցած էր , — կոմս , ըսաւ , այսչափս բաւական է , ուրախ եմ որ ՚ի վաղուց ունեցած բարեկամութիւննիս աւելի հաստատելով իրարմէ կը դատուինք . եւ ձեռքը սեղմելով , գնաց սրբա՛նին մէջ տեղը ամենէն վերջը եկած գեղեցիկ օրիորդին վրայ գմայլող խուռ մ'ատպետաց մէջը մտաւ :

Բայց կոմսը կեցած պատուհանէն չի դատուելով , սկսաւ ինքնիրեն բարկութեամբ ամուսնոյն , աղջկանը եւ Օդօրինօյի դէմ գոռալ , որոնք զինքը այս ծուղակին մէջ ձգելու պատճառ եղած էին :

Ինչպէս որ պղտոր ջուր մը ամանին մէջ հանդարտելով դիրտը տակը կ'իջնայ , եւ մինչեւ յատակը պարզ ու յստակ կը տեսնուի , նոյնպէս ալ կոմսը երբ որ բարկութիւնը անցնելով քիչ մը հանդարտեցաւ , եւ միանգամայն սրտին վախն ալ երթալով տեսաւ վերջապէս թէ՛ պատուածը կրցաւ կարկտուել , Լուբօյի համար Վարքօյն խնդրելու չնորհքը միտքն ինկաւ : Յիշեց Լուբօն , յիշեց անոր ծնողքը եւ քոյրը . աչքին առջեւը եկան անոնց խանդաղակաթ եւ արտասուււից աչքերն ու գթաշարժ խօտքերը , յիշեց վերջապէս իրենց տուած խոստումնքը , եւ մեծապէս ցաւեցաւ իւր սրտէն :

Այնքան քաղաքավարութեամբ իրարու հետ հաշտուելով բաժնուելէն վերջը , Օդօրինօյի զինակրին վերայ Վարքօյի խօսք բանալ , ծաղրելի բան , կ'ըսէր կոմսն ինքնիրեն . — Զէ չէ՛ , ես չեմ խառնուիր , թող կորսուի Լուբօն ալ , իրեն կողմնակիցներն ալ . ես անոնց համար մէջ տեղը չեմ ուղեր . . . :

Գիտեմ թէ ասոր համար տանս մէջ խօսք պիտի ըլլայ , Երմէլինտա եւ Երանուհի պիտի պոռան . . . իրաւամբ , սակայն ես անոնցմէ աւելի պիտի պոռչտեմ : Այս մտածմունքներով կոմսին երեւակայութիւնը տաքցած , եւ միանգամայն ուղերով քիչ մ'ալ օդ առնել , տխուր եւ բարկացոտ երեսով մը այնչափ ժամանակ փակուած ծակէն ելլալով՝ Վարքօյի մտած դռնէն ինքն ալ սրահը մտաւ :

Իսկ Երանուհին՝ որ իր նստած տեղէն կը դիտէր Վարքօյի իր հօրը հետ երկար ժամանակ ըրած տեսութիւնը , եւ կարծելով միանգամայն թէ Լուբօի համար կը խօսին , մեծաւ անհամբերութեամբ խօսակցու-



Թեանցը վերջանալուն կ'սպասէր : Երբ որ Վ.խաբօնթիւն հօրմէն բաժնուելով բազմութեան մէջը դարձաւ , անոր դէմքին վրայ Լուբօի համար կարած վճիռը կարգալու մտքով՝ Երանուհւոյն անոյշ աչքերը շտապաւ մը որչափ ալ Մարքօյի դարձեր էին , սակայն անկէ բան մը չի հասկնալով՝ կ'սպասէր որ հայրը գայ : Բաւական երկար ժամանակէ վերջը հայրն ալ երեւան ելաւ վերոյիշեալ վիճակին մէջ :

— Ուրեմն , տեսնա՞ք ի՞նչ պատասխան տուաւ , հարցուց Երանուհի , հայրը քովը եկածին պէս :

— Ի՞նչ բանի պատասխան :

— Ի՞նչ ըսել է , ինչ բանի պատասխան , Լուբօյի համար խնդրելու շնորհքին վրայ չէ՛ք խօսեր :

— Ի՞նչ շնորհք կամ անշնորհք , ես ամենեւին մէկու մը համար շնորհք չեմ խնդրեր :

— Տէ՛ր Աստուած , ուրեմն քու խնդիրքդ չընդունեց :

— Իմ խնդիրքս ոչ ընդունեց , եւ ոչ ալ չընդունեց . այս գործը իմ ընկերու բանս չի պիտի կարենայ ըլլալ եւ ոչ ալ քուկդ , իմացմբ , Նայէ որ լեզուդ բռնես , չըլլայ որ քու շաղիաղիութեամբդ դամնեքնիս ալ նորէն անել լարիւրինթոսի մը մէջ ձգես :

— Սակայն ինչո՞ւ ստաջուան պէս չես խօսիր :

— Այո՛ , ես ասկէ վերջն ստաջուան պէս չեմ կրնար խօսել , վասն զի այնպիսի բաներ իմացայ՝ որ ամենեւին չէի գիտեր :

— Ուրեմն , դարման մը չի կարենալով գտնալ , խնդճն անպատճառ պիտի մնանի :

— Լռէ՛ եւ մի խելագարիր :

— Մտիկ ըրէ՛ , ըսել է որ ես անձամբ պէտք է

վրեն հետը խօսիմ : Այո՛ , ճնրադիր պիտի աղաչեմ անոր , պիտի այնչափ . . . :

— Ատնք քու սովորական ցնորքներդ են , դու իմ հրամանիս դէմ բան մը չի պիտի ընես :

— Բայց ի՞նչպէս , բայց ինչո՞ւ , սակայն ըսէ . . .

— Այսչափս բաւական է , դո՛ւրջ կեցիր եւ քու գործէդ ուրիշ բանի մի ձեռնարկեր , ըսելով , կոմսը բազմութեան մէջ աներեւոյթ եղաւ . Երանուհի ալ երազողի մը պէս հոն աղշած մնաց :

Մարքօ՛ որ այս միջոցիս ամենեւին զատոնք աչքէն չէր կորսնցուցած . աղջկան հօրը բողբոլիւն քովէն հեռանալը տեսնելուն պէս , Երանուհւոյն նստած պթոսին մօտենալով՝ հրաման խնդրեց հօրաքրոջմէն որ քիչ մը ժամանակուան համար , եթէ կարելի է , զԵրանուհին առնելով հանդիսին սրահներսն մէջ միատեղ պարտի ու երկրորդ օրը տեղի ունենալու նիւզակամարտութեան պատրաստ՝ գտնուող ասպետաց զինքը ներկայացնէ : Երանուհի՛ որ արդէն ուրիշ բանի չէր սպասէր՝ եթէ ոչ Մարքօյի հետ տեսնուիլ , որպէս զի անխտիր Լուբօյի մահուան վճոխն ներումն ընդունի , հօրաքրոջը հաճութեամբը ելաւ ու Մարքօյի հետ հանդիսականաց մէջ մտաւ :

— Նիղակամարտք , ինչպէս որ գիտէք , տասն երկու հոգի պիտի ըլլան , կ'ըսէր Վ.խաբօնթիւն , Երանուհւոյն հետ սրահներէն անցնելու ժամանակ , ասոնցմէ մինակ հոս գտնուող տասն եւ մէկը , ձեզի պիտի ներկայացնեմ . իսկ երկոտասներորդին գալով անոր համար թերեւս պէտք ալ չ'ունիք որ ես զինքը ձեզի ճանչցնեմ , վասն զի բաւական ժամանակ կայ որ զինքը կը ճանչնաք , այնպէս չէ :



Երանուհի կարմրելով պատասխան չը տուաւ :

— Այս վերջի օրերս հեծելահանդէսի մը մէջ , ձեր տանը դիմացէն անցած ժամանակնիս , տեսայ որ մեծաւ յարգանօք ու մարդավարութեամբ բարեւեցիք զինքը . երաւ է թէ արդէն շատ ատեն ալ Լիմոնդա կեցաւ եւ հիմայ ալ . . .

— Այո , կը ճանչնամ , ըսաւ աղջիկը , երկչոտութեամբ գետինը նայելով , մանաւանդ թէ ինք զինակիր մ'ունի՛ որուն համար . . . :

— Հիմայ չի խօսինք անոր զինակրին վրայ , եթէ կարելի է , ըսաւ Մարքօ , հասպա քիչ մը իր վրայ խօսինք :

Այս միջոցիս աղջիկը՝ Մարքօյի հետ հանդիսին սրահներէն հեռանալով՝ երկայն բարակ խուցի մը սեմին վրայ ոտք կոխելուն մօտ , ետեւը դառնալով՝ տեսաւ որ հայրը հեռուէն մատերը խաչածեւ շրթանօք դնելով , լռել եւ զգոյշ կենալ կը պատուիրէր :

Երանուհի նախ օյնպիսի մարդու մը հետ առանձին կը գտնուէր , որուն վրայով շատ բաներ պատմելին լսած էր , եւ հիմայ ալ անոր ամեն խօսքերն ու հարց ու փորձը իր գանդաշուն սրտին գաղտնեացը տեղեակ ըլլալու մտքով ըլլալ՝ եւ երկրորդաբար հօրն ալ այն գաղտնի պատուէրը եւս առաւել խեղճ աղջկան միտքը պղտորելով՝ բոլորովին վախի ու տարակուսանաց մէջ ձգեցին զինքը : Սակայն այսու ամենայնիւ սթափելով իր թմբրութենէն եւ կուսական քաջասրտութեամբ մը զինեալ , սկսաւ զողոզուն եւ աղերսադին ձայնիւ . — Տէր , ըսաւ , կրնամ յուսալ արդեօք թէ իմ մէկ խոնարհ աղաչանքս ձեզի ընդունելի ըլլայ :

— Միթէ դուք զիս ձեզի հաւատարիմ ասպետ չընարեցիք , պատասխանեց Մարքօ , ուստի ձեզ կ'իյնայ որ ինծի աղաչէք . կարծեմ թէ այժմ ձեզի ուրիշ բան չի վայելէր բաց եթէ հրամայել :

Քիչ մը ժամանակ լռութեամբ երեք չորս մանր սրահներէ անցնելով , հասան վերջապէս հանդիսին ներկայ գտնուող անձանց տեսութենէն դուրս խուցի մը դուռը : Աղջիկը , մէկ կողմանէ Վիսքօնթիէն Լուբօյի համար խնդրելու շնորհքին ընդունուելուն վըստահութենէն բռնաբարեալ , միւս կողմանէ ալ սիրոյ ճիրաններէն պրկեալ , լոյս անգամ աչացը չէր երեւնար : Որով երկուքն ալ բոլորովին անկարող վիճակի մը մէջ էին՝ ուշ դնելու իրենց այնպիսի կարգէ դուրս կերպով մը հանդիսականաց աչքէն հեռանալուն :

Երբ որ Երանուհի այս առանձին խուցը մտաւ , որչափ ալ տռաջին անգամ իրեն վախ մ'եկաւ , սակայն վերջը ծունր դնելով իրեն հօն առաջնորդողին առջեւը , հեծեծանօք ըսաւ . — Տէր , Ձեր մէկ խօսքը կարող է զինքը փրկել , գթ՛ա անհարին տառապանաց մէջ գտնուող ընտանեաց մը վիճակին . . . : Ո՛հ , եթէ կարենայի արտասուել , ինչպէս քիչ մը առաջ կ'արտասուէր խեղճին հայրը , եթէ Աստուած իմ բերանս դնէր անոր զրուցած դժբաշարժ խօսքերը , ապահով եմ որ խնդրանացս կատարուիմ ամենեւին չէ՛ք զլսմար :

Երանուհի այն համոզմամբ եւ վստահութեամբ կը խօսէր , որ հայրը իրբեւ թէ ամեն բան տեղն 'ի տեղը արդէն Մարքօյի պատմած ըլլար . սակայն միւսը բոլորովին անտեղեակ , եւ միանգամայն տեսնալով որ յետին աստիճանի թախանձանօք կ'աղաչէ աղջիկը եւ .



չը կարենալով մէկէն հասկնալ բանին էութիւնը , նախ եւ առաջ ապշած մնաց : Սակայն վերջը՝ ապշութիւնը առժամայն դժուրեան փոխուեցաւ : Այնպիսի ծընրադիր ու խոնարհ դիրքի մէջ իւր խորհրդոցը թագուհին տեսնալուն պէս Մարքօ շփոթած՝ խոնարհեցաւ որ զինքը վերցնէ եւ բոլորովին յուզեալ :

— Ի՞նչ կ'ընես . . . կ'ըսէր . չէ , հաստատապէս չէ , զո՛ւ ելիր , դու մարդկային հողեղէն արարածի մը խոնարհին , դո՛ւ : Իսկ Երանուհի դարձեալ դիրքը չը փոխելով , փոսկրի պէս ճերմակ ձեռքերը փափուկ կուրծքերուն վրայ դրած եւ արտասուալից աչքերն ալ Մարքօյի երեսը դարձնելով յանաջ կը վարէր իւր ազաչանքը , այնպիսի սրտառուչ կերպերով՝ որ նոյն վայրկեանին կարծես թէ Մարքօյի աչացը՝ բուն իսկ Երանուհոյն մայրը Երմէլինտան իւր դիմացը կեցածի պէս կ'երեւար : Երմէլինտան՝ որ շատ տարիներ առաջ այսպէս իրեն ոտքն իյնալով աղաչած պաղատած էր , այն դիչերը , յորում Մարքօ զինքը հօրը տունէն փախցընելու եկած էր : Մարքօ ինքիբնէ՛ դուրս ելած էր , ուստի մեծաւ դժուարութեամբ վերցնելով զԵրանուհին աթոռի մը վրայ նստեցուց : Քանի որ աղջիկը ա՛մօթէն ու սրտին ցաւէն հեծեծանօք կ'արտասուէր եւ երկու ձեռքով ալ երեսը ծածկած՝ արտասուեաց կաթիլները ձերմակ մատերուն մէջէն ոլոնն ոլոնն մարդըրտի պէս կը սահէին , Մարքօ չի համարձակելով Երանուհոյն քովն անգամ մօտենալու , — ո՛հ , կ'ըսէր , ո՛հ , ըսէ՛ ինձի քու փափաքածդ , եւ ես կ'երդնում այն յուսացած յաւիտենականութեանս վրայ , որ ամենայն կերպով պատրաստ եմ քու բաղձանքդ կատարելու : ամեն բան դրած եմ , իշխանութիւնս , կեանքս

ու պատիւս անգամ՝ միայն քու խնդրանացդ կատարմանը համար ըսէ՛ ուրեմն , փրկէ՛ զիս այս երկար տանջանքէս , դրուցէ , մի՛ է այն որ կարող եմ փրկել :

— Լուբօն , պատասխանեց հեկեկելով աղջիկը :  
— Ո՛վ , միթէ՛ այն Ս. Ամբրոսիոսի մենաստանին հպատակ անձը , որ գլխատուելու է դատապարտուած :  
— Այո՛ , անիկայ իմ հօրս բազէակրին որդին է , եւ իմ ամենասիրելի աղախնոյս եղբայրը . . . Ո՛հ , երանի թէ՛ կարող ըլլայի այդ խեղճերուն վիճակը ձեզի ներկայացնել . . .

— Հող մի՛ ըներ , մի՛ դադրին այդ արցունքներդ . Լուբօն այս վայրկեանէս ազատ է , քեզի կ'ուտամ զանիկա . . . ուր էր թէ՛ ես ալ կարենայի իմ արեամբս ծախու առնել այդ արտասուեացդ մէկ կաթիլը : Ո՛ւր ես Երմէլինտա՛ , Երմէլինտա՛ . . . յիրաւի դու զիս պիտի խենդեցնես , Երանուհի՛ , ալ մի՛ լար , Լուբօն չը պիտի մեռնի :

— Ի՞նչ , չը պիտի մեռնի ուրեմն Լուբօն :  
— Այո՛ , իմ անձիս վրայ կ'երդնում՝ որ Լուբօն չը պիտի մեռնի :

Մարքօյի այս վերջին հաստատ խոստմունքին վերայ ապահովցած , աղջիկն առժամայն ելաւ ու դէպ իւր բարերարին մօտենալով՝ որչափ ալ ուղեց երկրորդ անգամ մ'ալ ոտքն իյնալ եւ շնորհակալ ըլլալ , սակայն չը կրցաւ փափազին հասնիլ :

Որովհետեւ Մարքօ չուտ մը դրկելով զինքը՝ ետ կեցուց այս դիտաւորութենէն : Իսկ Երանուհի՛ շփոթաց , յուզուած եւ այնչափ քաղցր միտթարութեան ետանդէն դրէթէ լքեալ , ձգեց վերջապէս ինքզինքը ցնարածի պէս Մարքօյի բաղկացը մէջ :



Ինչպէս երկչոտ աղանի մը եւ կամ թիթեռնիկ մը որոնք բռնուելուն պէս իրենց վիճակին ապահովութեանը վրայ կասկածելով բոլոր անդամներովն կը դողդղան, նոյնպէս ալ Երանուհւոյն բոլոր մարմինը կը թռթռար, եւ կիսաբաց աչքերէն միտարարական արտասուածաց տաք տաք կաթիլները Փարքօյի ձեռքերուն վրայէն սահելով գետինը կ'ոռոգէին :

Այսպիսի թեթեւ միանդամայն եւ ամենածանր բեռ մը իւր բաղկացող մէջ առած եւ յուզեալ կուրծքին վրայ բռնած ժամանակը, Փարքօ կ'զգար այդ անմեղութեան պատկերին փափուկ սրտին մեղմիկ բարախումը, եւ վայրկեան մը ինքիւրմէ դուրս յափշտակուած խոնարհելով համբուրեց Երանուհւոյն գեղեցիկ ճակատը :

Երանուհի որչափ ալ զգաց այդ համբոյրը, սակայն հայրական համբուրէ մը չի տարբերելով՝ ամենեւին չի խորշեցաւ անկէջ : Ինչպէս որ փոթորկալից անձրեւէ մը վերջը, դարձեալ արեգակը իւր գեղանշոյլ ճառագայթները թուխ ամպերուն ծոցէն եւս առաւել պայծառ, աշնանային մառախլապատ դաշտերուն վրայ կը սփռէ, նոյնպէս ալ Երանուհի խաղաղ կերպով մը սթափելով իւր թմբբութենէն, ելաւ՝ եւ տակաւին կարմրած ու արտասուալից աչքերուն եւ այլալլած գէմքին վրայ, միտիթարեալ դուարթութեան մը քաղցր ժպիտը կը ցոլար :

Կիւցազնը այժմ աղջկան մը ձեռքն էր : Փարքօ շուտ մը գրասեղանի մ'առջեւ երթալով, սաքի վրայ խառնակ ոճով՝ երկտող նամակաւ մը սուրբ Ամբրոսիոսի արբահօր, Լուբօյի ազատ արձակման հրամանը գրելէն վերջը, նամակը փակեց ու խաչաձև

մետաքէ ղերձանի մէջ առաւ եւ ղերձանին երկու ծայրերուն վրայ իւր դմուռը դրոշմելով, — Ահաւասիկ, ըսաւ, այս նամակը արբահօր ձեռքը հասցուր, ու նոյժամայն Լուբօն ազատ քեզի կը յանձնուի :

— Աստուած փոխարինէ, այս խնայած անմեղ արեանդ եւ այնչափ աչքերէ սրբած արտասուացող գինը, բոլոր Լուբօյի ընտանիքը այսուհետեւ միշտ ձեզի համար աղօթելէն չի պիտի դադրին, ըսելով, Երանուհի կ'ուզէր խուցէն դուրս ելլել ու երթալ :

— Երանուհի, ըսաւ Փարքօ : ձեռքը նշան տալով որ չերթայ, դեռ վայրկեան մ'ալ քեզի հետ տեսնուելու պէտք ունիմ. այդ նամակը ասկաւին մինչեւ վաղը ժամանակ ունիս զրկելու : . . . Զիս մտիկ ըրէ, այս գիշերուընէ երկար ճամբորդութեան մը պատրաստուած եմ . . . սակայն այս միատեղ անցուցած վայրկեաններնուս յիշատակը . . . սակայն քու յիշատակդ . . . Երանուհի . . . հաւատած ինձի որ դքեզ յաւիտեան չի պիտի մոռնամ . . . :

— Ո՛հ, ես ալ նոյնպէս յաւիտեան ինձի ըրած անտիտարինելի շնորհքդ չի մոռնալով առանձին ձեզի աղօթողներէն մէկը պիտի ըլլամ . . . ես որ ձեր առջեւ երեւալու կը սարսափեի . . . այսու ամենայնիւ մայրս ինձի շատ անգամ կը գովէր ձեր մեծանձն ու ազնիւ սիրտը :

— Ուրեմն ըսել է որ : քու մայրդ տակաւին զիս չ'ատէր, իմ ապերախտութեանցս ներած է . . . իսկ դու. Երանուհի, դու ալ արդեօք ինձի կը ներես . . . կրնաս զիս վստահացնել որ սրտեղ զիս չի պիտի ատես :

— Ե՛ս, ո՛չ երբէք . . . իմ առ ձեզ ունեցած երախտագիտութեանս . . . յարգանացս . . .



— Վխրօնթին Երանուհւոյն ձեռքը իւր դողդոջուն ձեռացը մէջ առնելով ըսաւ, այսչափօ ինծի բաւական չի կրնար ըլլալ, եւ քեզմէ բուն սպասած պատասխանս այս չէ: Եւ ալ ինչ պէտք կայ երկարօրէն կեդծելու. դիտցած ըլլաս Երանուհի, որ զքեզ առաջին տեսած վայրկենէս՝ իմ ճակատագիրս անփոփոխ որոշուած է. . . կը մնայ որ հիմայ ես ալ միայնքու բերնէդ սպասեմ երբեուն արտիւ կենաց եւ կամ մահուան վճիռ մը:

Աղջիկը տերեւի մը պէս կը դողար, եւ ամենայն հնարք բանեցնելու կը ջանար՝ որ Մարքօյի ձեռքէն ազատի:

Նոյն միջոցին, կարծես թէ յանկարծ մտքին մէջ նոր խորհուրդ մը ծագածի պէս, Մարքօ թուլցնելով ձեռքերը՝ Երանուհին ալ կրցաւ իւր ձեռքերն աղատել: Իսկ Մարքօ առջինին բոլորովին հակառակ խոստացնելով իւր դէմքը, խստիւ մը սկսաւ հարցունել աղջկան:

— Ըսէ տեսնեմ, այս Առբօն քիչ մը առաջ անուանածիդ նիզակակիրը չէ:

— Այո՛, անոր նիզակակիրն է:

— Անոր, որո՞ւ:

— Անոր . . . ձեր եղբորորդւոյն . . . այն ասպետին . . . կը պատասխանէր աղջիկը, առանց համարձակելու արտաբերել անոր անունը:

— Ըսէ, կանչեց Մարքօ կատաղութեամբ, որո՞ւ:

— Օղորինօյի, ըսաւ Երանուհի կրակի պէս կարմրելով:

— Այժմ, պատասխանէ ինծի, ինչպէս որ մահուան դուռը հասած ժամանակդ խոստովանահօրդ պի-

տի պատասխանէիր, կըսէր Մարքօ խստիւ եւ անաւոր ձայնիւ: Միթէ միմիայն Օղորինօյի հաւանութեամբը համարձակեցար ինձմէ Առբօի կենաց չնորհքը խնդրելու գալ:

— Յիրաւի, նախ իմ հայրս յանձն առած էր այս չնորհքը ձեզմէ խնդրելու:

— Իմ հարցումս այս չէ: Աստուծոյ սիրուն համար ըլլայ, շիտակը զրուցէ, միթէ ինք յորդորած է զքեզ այս ձեռնարկութեանդ:

— Այո՛, ինք ալ իմ հօրս աղաչողներէն մէկն էր վասն զի ձեր աչքէն ինկած ըլլալով՝ չէր կրնար համարձակիլ . . .

— Ուրեմն դու անոր ամենայն գաղտնեացը տեղեակ պիտի ըլլաս . . . Երբ տեսար զինքը:

— Ձեր պալատը մտնալէն քիչ մը առաջ:

— Ըսել է որ ամեն օր զինքը կը տեսնաս, այն պէս չէ . . . իսկ անոր տուած խոստումներդ . . . շիտակը զրուցէ . . . ուղղակի եւ բոլորովին սրտիւ էր . . . զրուցէ, կը սիրեմ զինքը, Աստուծոյ սիրուն համար ըլլայ խօսէ,

Երանուհի ահու դողի մէջ լուռ կը կենար:

— Ուրեմն զինքը սիրելիդ եւ յամենայն սրտէ իրեն խօսք տալդ չես ժխտեր:

— Այո՛, չեմ ժխտեր, պատասխանեց Երանուհի, ինքը իմ ամուսինս պէտի ըլլայ:

— Մահ եւ դատապարտութիւն, կանչեց Մարքօ սարսափելի ձայնիւ մը, եւ յախշտակելով Երանուհւոյն ձեռքէն նամակը, պատուել ուղիւ ձեռով կատաղաբար աղջկան երեսը նետեց:

Խեղճին ծունկուղները կարեցան եւ աչքերը մը-



Թըննալով ինքզինքը կորսնցուցած՝ ինկաւ դեմնի վրայ, Վիսքօնթին, վայրկեանի մը չափ արիւնշաղախի եւ կատաղի աչքերով անոր վրայ նայեցաւ. ձեռքն՝ առանց ուղելու թուրին դնաց, սակայն շուտ մը ետ առաւ անկէ. նամակը՝ կիսամուռ Երանուհունց գօտի-ին վրայ զետեղելէն վերջը, աճապարանօք դուրս ելաւ եւ գաղտնի սանդուխէ մը վար իջնալով մտաւ ներքին պղտի դուրիթ մը: Հոն բաց օդին մէջ քիչ մը շունչ առնելէն եւ քրտինքը սրբելով ինքզինքը գտնալէն վերջը, ցաակեց ձիու մը վրայ, որն որ նոյն գիշերուան ճանապարհորդութեանը համար պատրաստուած էր, եւ առջեւ ելած ճամբուն վրայէն մղեց երիվարը: Երեսն հեա երթալու պատրաստուող նիղա-կակիրներէն հազիւ թէ մէկը կրցաւ ետեւէն երթալ, եւ ան ալ չը կարենալով հասնիլ, սկսաւ մութունն հեռուէն տիրոջը հետեւիլ:

Մարքօ այսպէս անհաստատ եւ միանդամայն խրտարարոյ ընութեան մը տէր ըլլալուն, շատ անգամ եւ գրեթէ միշտ, բարկացածին պէս՝ ներկան, անցեալին յիշատակն ու ապագային յոյսը կը մոռցնէր իրեն:

Գնաց . . . սակայն կարծես թէ ինքզինքը հալածող թշնամուց մը ձեռքէն փախչելու պէս անհետացաւ: Եւ յիրաւի ալ թշնամին բուն իսկ այժմ հեծած երիվարին դաւակը նստած, զինքը անհանգիստ կը նեղէր:

Գիշերուան մթութեան մէջ, այն կատաղի ընթացքն ընելու ժամանակը, երբ հիւսիսային ցուրտ հողմերն երեսն 'ի վեր կը փչէին, կարծես թէ քիչ մը կ'սթափեր: Սակայն այսու ամենայնիւ խելագարի պէս

կատաղաբար կ'արշաւեցնէր խեղճ երիվարը, ուրիշ բան չի լսելով՝ բայց միայն ձիուն ոտից թոփուքը ու առաջ դացած ժամանակը՝ պատռած օդին ականջացը մէջ սուշելուն ձայնը:

Ամեն վայրկեան, կամ գլուխը ծառի մը կոճղին զարնելու եւ կամ ջրանցքի մը պատառուածքին մէջ դահալիժելու վտանգին մէջ դնելով ինքզինքը, քաջ նժոյգը, սանձերը վզին ձգուած ու կողերն արիւնաշաղախ չնչասպառ կը վազէր, առանց իսկ տեսնալու ասդիս անդին արշաւելով մղոններ կ'սպառէր, մացառներէ եւ հունձքերու կոյտերուն վրայէն ցատկելով, ամայի դաշտերէ եւ անտառներէ թռչունի պէս կ'անցնէր կ'երթար:

Երեսն հետեւող նիզակակիրը չէր կրցած ետեւէն հասնիլ. Մարքօ կ'արշաւէր սւ կ'արշաւէր, մինչեւ որ իր մինակ ըլլալն զգալով զգաստացաւ: Խեղճ երիվարը հողմութենէն լքեալ, չնչասպառ կը հեար. արշալուսին նուազ լուսով Մարքօ տեսաւ կենդանուոյն ամբողջ մարմինը ճերմակ վրիժուրի մէջ թաթախուած արիւնշաղախ միսալը. տեսաւ երիվարին բացուած ոնդուհներէն վրնջելով ելած արագ չնչառութիւնը, եւ առժամայն սանձերը ժողվելով ամայի արտի մը մէջ կանգ առաւ: Վերցուց աչքերը դէպ 'ի նորածին արեգական բեկբեկ նշոյլներուն, եւ տիրութիւնը պատեց զինքը. . . ցաւեցաւ՝ որ այդ լոյսը զինքը նորէն մարդկային ազգին տեսանելի պիտի ընէր, կարծես թէ քիչ մը առաջ պատող գիշերային խաւարը, իւր վշտացը վրայ մխիթարական քօզ մը կը տարածէր:

Սակայն արեգակը ծագելուն պէս Մարքօ՝ վայրկեանի մը մէջ՝ ամբողջ գիշերուան եղելութեանց վը-



րայ մտքէն քաղուածք մը ընելով, խելքը դուստը եկաւ, եւ ուրիշ բանով մ'ալ չը կարենայով մխիթարել ինքզինքը, հաստատուն վրէժխնդրութեան մը դիտաւորութիւնը կազմեց :

Ուստի ձայն տարով երիվարին սկսաւ նորէն կամաց կամաց առաջ գնալ . քանը որ կը յառաջէր, կարծես թէ չորս կողմը պատող առարկաներն իրեն ծանօթ կերեւային : Երկու կողմէն կարգաւ ուռննազարդ ճամբու վրայ դեղանի աղջկան մը պատահեցաւ, որ ձեռքը բուրդ մանելով կանուխ կովերն արածելու կը տանէր : Մարքօ հարցուց աղջկանը թէ հեռուանց նըշմարած դեղին անուէր Բօզաթէ էր . բայց խեղճ աղջիկը վախցաւ ու ծիչ մը արձակելով սկսաւ լալ ու դէպ 'ի դաշտը վազելով փախչիլ : Մարքօ, գլուխը լանջքին վրայ կալած առջեւը նայելով, իր ճամբան շարունակեց մինչեւ որ ուռնիներն անցնելով, յայտնապէս տեսաւ Բօզաթէի բերդին աշտարակները : Տեսաւ դրօշակակիր ասպետաց չորեքկուսի դրօշակը, տեսաւ դիմակաւոր սաղաւարտը ամենաբարձր աշտարակին գագաթը սնկած . հասաւ պարսպին պատերուն բոլորը բացուած խրամին բերանը, եւ երեք անգամ ձիուն թամբին, իւր ահաւոր թուրին դլխի գունատովը զարկաւ . . . ի՛նչա՛ն նոյն ժամայն բերդին անհաստատ կամուրջը եւ անցնելով մտաւ ներս :

Երկրորդ գաւթէն անցած ատենը պատահեցաւ բերդապահին . որն որ շուտ մը վազեց տիրոջն ասպատանը բռնելու : Բերդապահն էր Բէլէկրուան, Ս. Ամբրոսիոսի մենաստանին հոգաբարձուն՝ որ Արմինի դայէն վաճառուելուն վրայ Մարքօ զինքը հոս էր զըրկած եւ վերջն ալ իրեն բերդապահ ընտրած Ինչէր :

եւ իցէ, Բէլէկրուան դեռ չի հասած՝ Մարքօ երիվարէն վար ցատկելով, սանձերն անոր ձեռքը յանձնեց հրամայելով գաղտնի պահել իրեն բերդին մէջ ըլլալը :

Ք Լ Ո Ւ Խ Ժ Ե

Երանուհի կամաց կամաց զգաստանալով . ինքզինքը բոլորովին իրեն անձանօթ խուցի մը մէջ անկողնի մը վրայ կոթնած գտաւ : Քովը գտնուող աղախնոց մը հօրն սէր ըլլալը հարցնելով, տեսաւ որ հայրը դիմացի անկիւնը կեցած իրեն կը նայէր : Ելաւ ու քիչ մը նստաւ : վերջն ալ ոտքի վրայ կանգնելով հօրը թեւը մտաւ . — Ելլանք ասկէ, կըսէր, երթանք երթանք, շուտ երթանք :

Երբոր Մարքօյի պալատէն դուրս փողոցը ելան, կոմսը Երանուհոյն գտնուած վիճակին վրայ սկսաւ ասդիէն անդիէն հարցմունքներն ընել . սակայն աղջիկը պատասխան չը տարով կամապարէր որ ժամ մ'առաջ իրենց տունը հասնին : Բաւական առաջ գացած էին երբ յանկարծ Երանուհոյն մտքն ինկաւ Մարքօյի դրած նամակը, եւ շուտ մը վրան փնտռելով՝ դօտիին մէջը դառաւ գայն, նոյն ժամայն քաշելով հանց եւ հօրը զուցնելով, — ահաւաստիկ, հոս է, հոս է կըսէր :  
— Ի՞նչ է հոս եղածը, տեսնեմ :

— Լուբօի կենացը համար Մարքօյէն ընդունած չնորհագիրս է . այս նամակը արբահօր պիտի երթայ :  
— Ըսել է որ . . . ես անկէ բան մը չեմ հասկը-



նար . . . թէ որ քու աղայանքդ ընդունեց . . . կարծեմ խելագարութիւն մ'ալ ըրած պիտի ըլլաս , արդեօք բերնէդ փախուցիր անոր անունը . . . Օգորինօյի անունը :

- Նախ եւ առաջ ինք հարցուց ինձի :
- Դու ինչ պատասխան տուիր իրեն . ինչ կերպով վարուեցար իրեն հետ . . . զրուցէ տեսնեմ . . . խօսէ , քակուին այդ լեզուիդ կապերը , չո՛ւտ :
- Ո՛հ , զիս հանգիստ ձգէ , հանգիստ . . . պիտի խօսիմ , պիտի զրուցեմ , ամեն բան մօրս պիտի պատմեմ . . .

— Ահաւասիկ քու շատախօսութեանցդ հետեւանքը . ինչ եւ իցէ , բաւական է . սակայն լաւ ուշ գիր այժմ քեզի ըսածիս : Օգորինօն մէկ մ'ալ չը պիտի տեսնաս , իմացմբ , ամենեւին :

Երանուհի՛ որուն սաստիկ շտապաւ քալելէն շունչը կտրած էր , եւ տակաւին սիրտն ալ բոլորովին չի հանգչած ըլլալուն , չի կրցաւ հօրը այս վերոյիշեալ ամենադառն պատուիրանացը ծանրութիւնն ու ցաւը իմանալ :

Կոմսը ճամբուն վրայ , մինչեւ որ տուն հասան , աղջկան երբեմն ցած եւ երբեմն բարձր ձայնով բարկանալէն զատ ուրիշ բան չըրաւ : Երբոր դրան առջեւ հասան . — տո՛ւր ինձի սա նամակը , ըտաւ Երանուհւոյն . աղջիկն ալ հնազանդելով նամակը տուաւ եւ երեքն ալ միատեղ դրնեն ներս մտան :

Այժողջ Լուբօյի ընտանիքը , Երմէլինտա , Օգորինօ եւ ուրիշ բարեկամք , անձկանօք իրեն կ'սպասէին : Ձատնք տեսածնուն պէս , ամենքը միատեղ ճրագներով ընդ առաջ վաղեցին . սակայն Երանուհւ-

ւոյն ու կոմսին անտարբեր կերպարանքէն՝ Լուբօյի համար բան մը չի յաջողած կարծելով , յուսահատական ձայներով ընդհանուր արտասուելու եղանակ մ'է բրդաւ :

Կոմսը ձգելով զԵրանուհին , որ մէկէն գնաց մօրը գիրկն ինկաւ , նշան ըրաւ Օգորինօյի որ իր ետեւէն գայ : Երբ որ երկուքն ալ միատեղ վարի յարկին սրահը մտան , կոմսը Մարքօյի գրած նամակը Օգորինօյի ձեռքն յանձնելով .

— Ասիկայ քու զինակիրիդ կենացը շնորհագիրն է . գնա՛ , Աստուած երկուքնուդ ալ հետն ըլլայ . սակայն զիտցած ըլլաք որ երկուքնիդ ալ այսուհետեւ տանս մէջ ոտք չի՛ն պիտի կոխէք , ըսաւ ու հոն ոտքի վրայ ձգելով զՕգորինօն , ինք քաշուեցաւ գնաց իր խոցը :

Նայեցաւ Օգորինօ նամակին վրայ , ճանչցաւ Մարքօյի գիրն ու կնիքը , եւ իւր հաւատարիմ զինակիրն կենաց փրկութեան վրայ ուրախութենէն գրեթէ նոյն վայրկեանին կոմսին այդ դառն եւ կարգէ դուրս յայտարարութիւնը բանի մը տեղ չի դրաւ :

Ուստի վաղեց անկէ մօտ սրահի մը մէջ , ուր մէկանք ժողոված կեցեր էին , եւ Վիւքօնթիւն զըրած նամակը վեր առնելով . — Թողութիւն , թողութիւն , կը գոչէր , ահա հոս է Մարքօյին Լուբօյին կենացը համար գրած շնորհագիրը :

Նոյն ժամայն ամենքն ալ բոլորը ժողուելելով , կուզէին տեսնալ ու դպչիլ այն օրհնեալ թուղթին . սրը ուրախութենէն կը պռուար , սրը կարտասուէր եւ շատերն ալ զիրար գրկելով միթիթարական համբոյրներ կուտային իրարու : Երբ նամակը Լուբօյի հօրը ձեռքն



անցաւ, սկսաւ նա զայն պաղնել եւ արցունքովը ուսողել ու բոլորաբար գոնուողներուն, կնկանը, Լաուրէդային եւ միւս որդւոյն կը յուցնէր :

— Շուտ ձի պատրաստեցէք, կանչեց Օդօրինօ . վասն զի ժամանակը կարճ է :

Երկու քաջ երիվար քաջեցին, մէկն իրեն միւսն ալ բաղէակրին համար, եւ երկուքն ալ հեծնալով սկըսան արշաւել դէպ 'ի Քիարավալլէ :

— Տուր ինձի նամակը, ըսաւ ասպետն Ամարօ-ձիօյի, տուր ինձի, վերջը ես քեզի կուտամ զայն :

— Ա՛հ, ձգէ ինձի այդ նամակը, կը պատասխանէր միւսն աղաչանօք . նայէ հոս սրտիս վրայ եմ պահած, եթէ վայրկեան մը ձեռքիս տակը չ'ըգամ զանիկայ, կարծեմ թէ դարձեալ զաւակս կորուսած պիտի ըլլամ :

Ճամբուն վրայ բնականապէս խօսակցութեան նիւթը Լուբօյի գէպքին վրայ էր :

Հոս՝ մինչդեռ ամբողջ ընտանիք մը մահուան դատապարտեալ անձի մը փրկուելուն ամենայն ջանք կը բանեցնէին, միւս կողմէն Լուբօ՝ Քիավարալլէի բերդերէն մէկուն մէջ դեռնափոր խուց մը բանտարկուած էր : Մեծկակ կանթեղ մը կը պլպլար ծառի մը կոճղի վրայ, պատէն կախուած խաչելութեան մը եւ անոր առջին ճորագրելու համար տախտակէ սքնդաւղիկ մը, բոլոր այդ խուցին կարասին կը կազմէին : Չորս զինուոր դուռը կը պահպանէին եւ հինգերորդ մ'ալ ներսը բանտարկելոյն հետ խօսակցելու ղրաղած էր :

Այս հինգերորդը Ախնչիկուէրրան էր, զոր Պէլլէպուօնօն Լիմոնդայի բնակչաց վրայ վերջին անգամ յարձակելու ատեն հետն էր առած, որուն նաեւ քիչ

մ'առաջ պատմուած մանրամասն գէպքերը՝ ընթերցողը լաւ կարող են յիշել :

Գատապարտեալը հանդարտ եւ առանց այլայլելու Ախնչիկուէրրայի հետ Լիմոնդայի արշաւանքին վրայ-կը խօսակցէր, որուն պատճառաւն ալ ինկած էր հիմակուան ծուղակին մէջ :

— Ա՛հ, եթէ կարելի ըլլար այդ անիծեալ դեղացին ձեռք անցնելը, կըսէր Ախնչիկուէրրան :

— Օ՛, այդչափ լեզուդ թո՛ղ չերկարի Լիմոնդացոց վրայ . . .

— Խ՞նչ ըսել կուզես . . .

— Ըսել կուզեմ որ, եթէ կամենաս բարեկամ մընալ ինձի հետ, մէկ մ'ալ չի պիտի լսեմ բերնէդ Լիմոնդացոց դէմ գէշ խօսք մը ելլալը :

— Խ՛հ, դուք ամենքնիդ ալ այսպէս էք, մէկը մէկ պաշտպանելու համար ձեռքերնէդ եկածը ետ չէք ձգեր . արդէն ձեր լեռնաբնակ ըլլալը բաւական է :

— Այո՛, եւ մեր լեռնաբնակ ըլլալն ալ մեզի մեծ պատիւ կը համարինք :

— Իրաւունք ունիս, իրաւունք . . . դու Լիմոնդացի, ես ալ Քիարավալլէցի . սակայն վերջապէս երկուքնիս ալ մի եւ նոյն արհեստին ու նպատակին կը ծառայենք, երկուքնիս ալ մենաստանի հպատակ չե՛նք, ուրեմն ինչ պէտք է այսչափ գոռոզնալ :

— Այո՛, չեմ գիտեր որ մեղքիս համար մենաստանի հպատակ եմ գտնուեր . սակայն այսու ամենայնիւ ամեւելին անոր ծառայած չեմ : Յիրաւի կըրնամ գուշակել թէ որչափ խնդարու արժանի պիտի ըլլայ, մէկ ձեռքը օրհնած ջուրի ցնցուղ բռնած եւ գլուխն ալ վեղարով ծածկած պատերազմական հրա-



մանատարութեան ծաղրելի եղանակն ու կերպերը :

— Ի՞նչ կը կարծես , պատասխանեց Ախնշիլուէրրա . իմ անոնց ծառայելս ալ միտիայն ստակին շատութեանը համար է . կը յիշես արդեօք Մարքօ Ախնքժնիթի հրանին տակ միատեղ պատերազմած ժամանակնիս :

— Կեցցէ Մարքօ , կանչեց Լուբօ , աչքերը լեցունելով (վասն զի անհնարին էր Լոմպարտացի զինուորի մը առանց կարգէ դուրս զգացման Մարքօյի անունը յիշել) :

— Այն մարդն է , այն մարդն է միայն՝ որուն համբաւը միշտ առջեւէն կերթայ . քաղցրաբարոյ , առատաձեռն , բարեկամ զինուորաց . աւար ինկած ժամանակը՝ քիչ շատ ամենուն բաժնող եւ վշտակից ամենուն վշտացը : Ա՛չ թէ այդ քուկիններուդ պէս . որ թէպէտ կուշա եւ մինչեւ կոկորդին յադեցած , սակայն դարձեալ զօրաց յառանջ յառանջ կը պոռան դասին մէջ : Եւ ի՞նչ սքանչելի գործ էր՝ սա Լիմոն-դայի վերջի արշաւանքը . միթէ քաջ զօրավարի մը կը վայելէ հարիւրաւոր զինեալ զօրաց խուճը մը յանկարծ գիշերանց անպատրաստ ու խեղճ գիւղացւոց վրայ կոտորելու խրկել :

— Իրաւունք ունիս :

— Ինչ եւ իցէ , եթէ ես ժամանակին այդ խեղճերուն օգնութեան հասնէի , գործը բոլորովին ուրիշ կերպի կը դառնար . . . ա՛յ բաւական է , վասն զի դեռ սիրտս կայրի :

— Խեղճ Լուբօ , միշտ բարեկամ եղած ենք քեւ զի հետ եւ ընկեր շատ պատեաղմաց մէջ . հիմայ պէտք էր որ ես քեզի այս վայրկեանիս պահապան ըլլայի :

— Ի՞նչ քու պարտքը կը կատարես :

— Այո , սակայն դարձեալ կը կրկնեմ որ , այս վայրկեանիս հոս ներսը քեզի պահապան ըլլալս , եւ քիչ ատենէն զքեզ ո՛ր տանելիքս գիտնայս , սրտիս մեծ ցաւ է եւ անտոռնալի ցաւոց յիշատակ մը պիտի ճըզէ մտայս մէջ :

— Թո՛ղ , հիմայ այդ խորհրդածութիւնները , ու սա դաւաթ մը զինիով վար սուր որ երթան կորսուին , եւ այս ըսելով դատապարտեալը երկու դաւաթ զինի լեցուց , մէկն ինքն առաւ եւ միւսն ալ ընկերին տալով ըսաւ , Մարքօյի կենացը :

— Այո , պատասխանեց պահապանը , Մարքօ մենաստանին հաւատարիմ բարեկամն ու միանգամայն արբանձօր եղբորորդին է . ուրեմն կրնամ զքեզ յայսմ մասին գո՛հ ընել . ուստի Մարքօյի եւ քու կենացդ ըսելով , երկուքն ալ միատեղ դաւաթները անկեցին :

— Լիմոնդացին դաւաթը վար դնելով , կարծեմ թէ իմ կենացս համար զինին ըմպելիք՝ այս կենացս համար ըսել չի պիտի ուղիտ . այլ հոգւոյս կենացը համար : Վասն զի արդի վիճակիս մէջ՝ մարմնոյս կենաց բարեմաղթութիւնը ծաղրելի բան մ'է , ըսաւ : Եւ դառնալով դէպ'ի պատեւհանը , նայէ ըսաւ , արշալոյսը ծագելու մօտ է , քիչ ատենէն կարծեմ թէ արեղական ծագելուն ժամ մը չիկայ :

— Խեղճ Լուբօ , այո , արեղական ծագելուն ճիշտ ժամ մը կայ :

— Մտիկ ըրէ , կը շարունակէր Լուբօ , միթէ զինուոր չենք եղած զիրար սպաննելու համար՝ եթէ հարկը պահանջէ . ուրեմն՝ կամ կացինի հարուած մը սեխի պէս զլխուդ դանկը բանալով մտեր ես , կամ



նիզակի մը հարուածը թողդ կռնակէդ դուս հանելով մահուան քունն ես ինկեր, եւ կամ վերջապէս՝ բուն իսկ քու զինուորական պարտքդ կատարելով մեներ ես, ամենքն ալ նոյն բանն է : Ես հիմայ կը մեռնիմ՝ իմ պարտքս կատարելուս համար . . . բայց ստուգիւ այս դէպքիս մէջ բոլորովին նոյն բանն է չեմ կրնար ըսել, վասն զի որչափ ալ ջանամ այս գաւաթին դառնութիւնը մեղմել, սակայն դարձեալ երբ աչացս առջին կը բերեմ հետաքրքիր ամբոխէ չրջապատուած եւ աւաղակի մը պէս երկճիւղ կոծղի մը կապուած չաբաչար մեռնիլը, այնքան երթալով ըմպելիքը կը դառնանայ : Վասն զի այս մահը, պատերազմի մը մէջ, թմբկաց եւ նուագարանաց քաղցր հնչումն ականջիդ մէջ, սիրտդ յաղթանակաց փառքովը լեցած քաջ եւրիվարիդ վրայ յաջ եւ անեակ նիզակդ ճօճելով՝ լեզէններու մէջ արխաբար մեռնելու չի նմանիր :

— Ես ալ նոյն բանը պիտի ըսէի, պատասխանեց պահապանը : սակայն վերջապէս՝ եթէ մահ սահմանուած է մարդուս, այսօր է մեներ կամ վաղը, ըստ իմ կարծեացս, նոյն բանն է :

Այս ըսելով լեցուց դարձեալ երկու զինիին դաւաթները, եւ իրենը ըմպելով ստիպեց զկուքօ որ ան ալ միւսը խմէ :

— Չէ, չէ պատասխանեց դատապարտալը, Աստուծոյ տուած դատողութիւնը, կուզեմ որ այս վերջի վայրկեաններուս մէջ հանդարտ պահեմ, որպէսզի քրիստոնէի մը պէտք եղած ամենայն միջոցները ՚ի գործ զնելու կարող ըլլամ :

— Ինձի նայէ՛, որչափ ալ ես խրկեցի չայր Աթանասը, եթէ կուզես դարձեալ բերել տամ :

— Չէ, չէ, ես արդէն յայտ մասին պէտք եղածն իրեն հետ լմնցուցած եմ : Եւ իրան ըսելով՝ կ'ուզէի զինքը տակաւին հոս քովս ունենալ, սակայն երբ որ տեսայ թէ սկսաւ իր իշխանութենէն դուրս հազար ու մէկ հարցմունքներ մէջ բերել . . . վերջապէս ստիպուեցայ խստիւ առջեւէս վառտել զինքը :

— Ո՛հ, կարծեմ թէ հողուոյդ փրկութեանը համար առ Աստուած պէտք եղած պարտքերդ յիշեցնելու, քանի մը զօրաւոր աղօթքներ ընելու դքեդ յորդորած պիտի ըլլայ, որոնք մահուան պատրաստուողի մը համար ամենապիտանի բաներ են, եւ պէտք է որ ետ չի կենայիր :

— Ընդհակառակն . . . քանի որ բարի քրիստոնէի մը պէտք եղած պարտքերը յիշեցնելով զիս կը խրատէր, զինքը մտիկ ըրի, սակայն վերջը Պէլլեպուօսօի դալով՝ երբ որ սկսաւ պնդել թէ անոր եղածը մարդասպանութիւն է, ալ համբերութիւնս հասաւ եւ . . . :

— Այո՛ բարեկամ, կարծեմ թէ յայտ մասին քահանան իրաւունք ունէր :

— Դու ալ անոր պէս դուրմ գլուխ մի ըլլար կեցիք քեզի օրինակ մը բերեմ :

— Ձրուցէ՛ տեսնեմ :

— Թէ որ ես, կըսէր կուքօ, ժամ մը առաջ Ամոնդա հասնէի, եւ Պէլլեպուօսօի սխալ ճամբայ մը ցուցնելով եւ զինքը իրեններովը միատեղ լերան մը նեղ անցքին մէջ փակելով, իմ քաջ գեղացիներովս՝ ծուղակի մէջ բռնուած մկանց պէս զամենքնիդ ալ ջարդելու որ ըլլայի, միթէ մահացու մեղք գործած կըլլայի, եւ խոստովանելու ալ պարտաւորութիւն մը կ'ունենայի :



— Ամենեւին, վաճառքի այն ատեն այդ գործը ղինուորական հնարք մը կը սեպուէր :

— Ուրեմն, միթէ իմ ըրածս ղինուորական հնարք մը չէր . միայն այս տարբերութեամբ որ փոխանակ դամեալքնիդ ալ չարաչար կոտորելու, սոսկ մէկ հատը ամենուն տեղ զոհեցի :

— Բարեկամ, եղածն եղած է, պարսպ տեղ կը վիճինք :

— Այո, պարսպ բան ըլլալն ես ալ գիտեմ . սակայն մարդս պէտք է որ իւր իրաւունքը պաշտպանէ : Ար հարցընեմ քեզի, միթէ իրաւամբ չեմ գործած կղերին այդ եղեոն ու մահացու մեղք համարած գործը, քանի որ հազարաւոր խեղճ գիւղացիներս՝ մանաւանդ մեր եկեղեցոյ բարի առաջնորդը փրկելու համար, զոր Պէլլէպուսոն միմիայն իր հաճոյիցն համար չարաչար սպաննելու մեծ պատրաստութիւն տեսած էր . . . :

— Սիրելիդ իմ, հիմայ իրաւունքն ո՛ր, մենք ո՛ւր . . . եւ վերջապէս դու ալ ղինուոր չես :

— Գիտեմ, սակայն որչափ ալ խօսակցութիւնը կ'երկնցընեմ, դարձեալ կ'ըսեմ թէ այդ արշաւանքը, ըստ իրաւանց կանոնաւոր ղինուորական պատերազմ մը չէր սեպուէր, հապա գիշերահաս մարդասպանից եւ աւազակաց խումբ մը . . .

— Օ՛, ճ, շատ մ'աճապարեր մէկուն մէկայլին մարդասպանի եւ աւազակի անուններ տալու, կանչեց Ալինչիկուէրբան, սպառնալից նայուածքով մը, կրնամ ըսել թէ ես միշտ ղինուորութիւն եւ ոչ թէ մարդասպանութիւն եւ աւազակութիւն ըրած ունիմ, եւ թէ որ հիմայ . . .

Սակայն Լուրս շուտ մը ծիծաղելով, — Տէ՛հ . կատակ մի՛ ըներ, ըսաւ, հիմայ լաւ դատար կէս ժամէն միւս աշխարհքն երթալու ու մահուան դուռը հասած հոգեւարքի մը հետ կ'սիւ ընելու ատենը :

— Ի՞նչ պէտք է հիմայ այդ խօսքերը մէջ բերել, պատասխանեց պահապանը սիրտն ելած, գիտեմ թէ քեզի հետ . . . վերջապէս միշտ բարեկամ ենք դատուած, սակայն . . . դու ալ լաւ գիտես որ այդ ածականները . . . դիւրաւ չեն կ'ըլլուիր . . .

— Ուրեմն դու չի հասկըցմիր որ իմ ըսածներուս ամենքն ալ օրինակի աղադաւ եւ քեզի դիւրաւ հասկըցնելու համար էր :

— Թէ որ օրինակի համար ըսիր, ուրեմն բան մը չէ :

— Լուրս ձեռքը երկնցընելով, կուզեմ որ այս վերջի անգամուս ալ իրարմէ բարեկամաբար բաժնուինք, ըսաւ :

— Անշուշտ, եւ իբրեւ մտերիմ բարեկամ, պատասխանեց միւսը, ձեռքը գորովանօք սեղմելով, ու ըսաւ . սիրով կը սխմեմ քաջ ղինուորի մը եւ արիասիրտ ընկերի մը ձեռքը : Աւրջը իբրեւ թէ սրտին թունգը եւ աչացն արտասուքը ծածկելու մտքով, երեսն անդին դարձուց, եւ դաւաթ մ'ալ գինի լեցընելով խմեց . յետոյ մէկ ձեռքը բերանը տանելով, իբր թէ գինիէն մնացած քանի մը կաթիլները չորցընելու համար, եւ պէխերն ալ ետեւ առաջ ոլորելով լաւ մը շտկեց, եւ երկու ձայրերը դէպ յառաջ ցրցեց :

Այս միջոցիս հեռուէն զանգակի մը ծանր ու թազձաղկն ձայնը մեր երկու խօսակցորդաց լսութիւնը ընդմիջեց : Լուրս կարծես թէ ժամանակ մ'իջք՝



ղինքը կորսնցուց . սակայն վերջը խելքը գլուխը ժող-  
վելով, — կը տեսնամ, ըսաւ, որ ալ պէտք չէ ժա-  
մանակ կորսնցընել : Մտիկ ըրէ Վինչիկուէրրա, քե-  
ղի բան մը պիտի ըսեմ : Յիրաւի խոստովանահօրը պի-  
տի աղաչէի, սակայն այնչափ բարկութիւնս գրգռեց  
որ . . . եւ վերջապէս այս ծանրութիւնը լաւագոյն է  
բարեկամի մը տալ՝ որ շատոնց զիս կը ճանչնայ եւ  
գիտէ թէ վերջապէս ամենքնիս ալ մարդ ենք . . . .  
լու ըլլայ զինուորի մը . . . կրնայ կարծել որ մահուան  
երկիւղէն . . . մտիկ ըրէ . Ուրեմն, կարճ կերպով քե-  
ղի կտակս պիտի ընեմ : Առաջին անգամ որ Միլան  
երթալու ըլլաս, գնաս Տէլ Պալցօ կոմսին պալատը, հոն  
կը գտնաս իմ ընտանիքս, հայրս, ու մայրս :

Սակայն ծնողաց սուրբ անուններն արտաբերե-  
լու ժամանակը, սիրտը պայթելով ոտք ելաւ եւ մէկ  
երկու մը խուցին մէջ երթեւեկելէն վերջը, դառնա-  
լով Վինչիկուէրրայի քովը, — խնդիրքս պիտի կա-  
տարեմ, հարցուց :

— Աստուծոյ առջեւ կ'երդնում, թէ յաստիս եւ  
թէ 'ի հանդերձեալն' կատարել ամենայն սիրով քու-  
բողոր խնդիրքներդ, պատասխանեց պահապանը :

Այն ատեն, Լուբօ վզէն արծաթ շղթայ մը հա-  
նեց եւ զայն Վինչիկուէրրայի տալով, — Ըսէ՛ ծնո-  
ղացս որ իմ յիշատակիս համար զայս դործածեն . ըսէ՛  
նաեւ իմ քրոջս ալ, որ բազմներուն եղած խուցը,  
ստուգկիս մէկ անկիւնը պիտի դռնայ պղտի տուփի  
մը մէջ, Թոսքանայի աւարէն մնացած ոսկի մատանի  
մը՝ դոր իր հարսանեացն ընծայ տալու համար պա-  
հած էի, թող առնէ . . . եւ իմ սիրոյս նշանակ զայն  
պահէ :

— Ինծի նայէ՛, ըսաւ Վինչիկուէրրա, ես որչափ  
ալ հարուստ մարդ մը չեմ, սակայն փնօք Աստուծոյ  
քովս քիչ մը ստակ կը գտնուի : Այս ըսելով՝ ծոցէն  
քսակ մը լեցուն արծաթ ստակ հանեց ու — ասոնք ես  
ինչ պիտի ընեմ, կուզեմ այս գումարը բարեգործու-  
թեան մը ծառայեցնել . ուստի տանիմ դասոնք ալ հօրդ  
տամ, անշուշտ գիտեմ թէ հիմայ անոր աւելի պիտա-  
նի պիտի ըլլայ այս ստակը քան թէ ինծի :

— Չէ, չէ, մեծապէս շնորհակալ եմ :

— Վաղաչեմ, շնորհք ըրէ, հաւանէ այս առա-  
ջարկութեանս՝ որ ես ալ կերպով մը մխիթարուիմ :  
Սա ալ ժամանակաւ այս վիճակիդ մէջ գտնուած եմ,  
եւ գիտեմ թէ ինչպէս կը քաղցրանայ այս միջոցն,  
ընտանեաց՝ մանաւանդ հօր ու մօր սէրը . եւ ինչպէս  
մարդուս սիրտը կը ցաւի մանկութենէն՝ ի վեր ծնողաց  
տուած վիշտերուն վրայ, եւ կը յիշեմ տակաւին ծնո-  
ղացս իբրեւ փոքր յիշատակ մը ղրկելու համար վրաս  
բան մը չը գտնուիլը եւ այս բանին ալ ինծի մահուը-  
նէ աւելի դառն եկած ըլլալը : Լուբօ մէկ ձեռքը պա-  
հապանին ուսը գնելով ըսաւ, քաջ գիտեմ թէ 'ի բո-  
լոր սրտէ կը խօսիս, եւ արդէն մեր զինուորականաց  
մէջ ամեն բան պարզ սրտիւ կը լիննայ Սակայն փնօք  
Աստուծոյ, իմ ծնողքս առ այժմ բանի մը կարօտու-  
թիւնս չունիմ . . . : Եւ անաւասիկ, եթէ ուզենայի ըս-  
տակ ղրկել անոնց, իմ վրաս ալ բաւական կը գրտ-  
նուի ըսելով, բաճկոնին ծոցը դուրս քաշելով, մեծ  
քսակ մը ստակ սեղանին վրայ ձգեց : Յետոյ կարծեմ  
ըսաւ, դուք եօթանասուն ընկեր էք, այնպէս չէ :

— Եօթանասուն ընկեր էիրք, սակայն քսան եւ  
մէկը ձեր Լիմոնզայի դաշտերուն մէջ ձգեցինք վեր-



ջի արչաւանքին ատենը , որով կարծեմ թէ հիմայ քա-  
ռատուն ինը մնացած պիտի ըլլանք :

Լուբօի դիմաց վրայ դուարթութիւն մը եկաւ ,  
իւր քաջ գեղացիներուն ըրած յաղթանակը յիշելուն  
պէս : Աերջը , ուրեմն ըսաւ , անոնք որ մնացեր են ,  
յուսամ թէ մահապարտի մը կենացը դաւաթ մը գի-  
նի խմելու խտրութիւն չեն ընել :

— Ոչ թէ դաւաթ մը , հապա երկու եւ երեք ,  
պատասխանեց Ախնչիկուէրրա , սակայն ես այդ գի-  
նիէն չի պիտի խմեմ ՚մ բաժնիս՝ հոգւոյդ համար պա-  
տարազ մը պրսւցել պիտի տամ :

— Սակայն չըլլայ որ , Ս. Ամբրոսիոսի մենակեաց-  
ներուն իմ հոգւոյս փրկութեանը համար պատարազ  
կամ աղօթք ընել տաս , վրայ բերաւ Լուբօ , աղէկ  
նայէ , չեմ ուզեր որ այդ սրիկայ հերձուածողները զիս  
անդին ալ հաղածեն : Ո՛հ , լաւ միտքս ինկաւ , ուրիշ  
եղբայր մ՛ալ սենիմ , որուն հետ շատոնց աւրուած  
ենք : սակայն մահուան ժամանակը պէտք չէ որ զա-  
նիկայ ալ մոռնամ , գոնէ մօրս սիրուն համար՝ որ ա-  
նոր ալ ամենայն բարիքը կը փափաղի : Պղտի բան  
մ՛ալ պէտք է անոր զրկեմ . հոս վրաս այս պզտիկ  
արծաթէ խաչելութիւնը կայ . ստիկայ կուզէի իմ յի-  
շատակիս համար քեզի տալ , բայց չեմ գիտեր թէնչ . . .

— Եղբայր մ՛ալ ունիս , ըսաւ Ախնչիկուէրրա ,  
շատ բարի . ուրեմն հիմայ ամեն բան կարգի մտաւ ,  
քու խաչելութիւնդ ես կառնեմ եւ եղբորդ զրկելու  
համար ալ քեզի կուտամ այս մատուցքը , նայէ բտե-  
լով , մատուցքին ամանը բացաւ ու , ստիկայ Սիւնժօն  
Սիւնակեցին սեան մէկ կտորն է , զոր ես իմ Հոռօ-  
մայ մէջ պանդուխտի մը ձեռքէ առած եմ :

— Կեցցեա ըսաւ Լուբօ , կընդունիմ այս փոփոխու-  
թիւնը , տար ուրեմն , ինչպէս որ ըսի , իմ անուարս  
եղբորս տուր այդ մատուցքը : Ա՛ն այս խաչելութիւ-  
նը ըսելով : հանեց կուրծքէն ու անոր վիզը ձգելով՝  
երկուքն ալ իրարու գրկուեցան , եւ վերջին անգամ  
բաժանման համայրները իրարու տաւին :

— Հիմայ որ հոս ամեն բան կարգի գրի , սը հո-  
գիէս դատ բան չի մնաց մտածելու , ըսաւ Լիմենդա-  
ցին , ու դէպ ՚ի պատէն վար կախուած խաչելութեան  
առջին երթալով՝ ծնրադիր աղօթքի կեցաւ :

Իսկ Ախնչիկուէրրա Լուբօի միտքը չի շիտթելու  
համար , շուտ մը դուրս ելլալով՝ գուռը պահող չորս  
զինուորաց մահապարտին զրուցածները իր պատմէր  
եւ իրենց ամբողջ ընկերութեանը բաժնելու համար  
առած ստակն ալ ցուցնելով կ'ըսէր . — Ինչպէս որ ի-  
րեն ալ արդէն գրուցած եմ , այս գումարէն ինձի ին-  
կած մասը՝ միայն իւր հոգւոյն փրկութեանը համար  
աղօթքի պիտի յատկացնեմ : — Ե՛մ մասս ալ , իմ մասս  
ալ , իմ մասս ալ , աւելցուր ըսին ամենքն ալ միաբե-  
րուն : Յետոյ սկսան լուռ սպասել ներսն աղօթող թըշ-  
ուառին՝ մահապարտութեան անզը տարուելու հրա-  
մանին : Ասան զի ամենուն սիրտն ալ միանդամայն կը  
ցաւէր , տեսնելով Լուբօի պէս երիտասարդ ու քաջ  
զօրականի մ՛այս կերպով մեանիլ :

Մենաստանին հրապարակը , պալատին չորս ըռ-  
լորն եղող կամարակապ գաւիթը եւ մինչեւ Լուբօի  
կեցած խուցին գուռը պահող զինուորաց քովը հե-  
տաքրքրներով լեցուած էր : Պարագսրդ մարդիկ ինչ-  
պէս որ ամեն ասուն եւ ամեն անկ կը գտնուին , կը  
վազեն տեսնալու մարդու մը մահը , իբր թէ ինչոյքի



մը եւ կամ պարահանդէսի մը զուարճանալու գայած ըլլային :

Արդէն դատապարտելոյն մահուան տեղը տարուելու ժամանակը բաւական անցած էր , եւ անմիտ ժողովորդեան շատերն ալ սկսեք էին արանջալ : Վինչիկուէրրան ամբողին այս խելագար անհամբերութեանը վրայ սրտմտելով , եւ միանգամայն պոհած դրան առջեւէն զանոնք հեռացնելու մտքով սկսաւ ձեռքի նիզակին կոթովը ամենէն մօտ գտնուողներուն դիտուն եւ ուսերուն դարնել :

Վերջապէս հեռուէն աղմուկ մ'է բողբաւ եւ ամենքի միաբերան սկսան կանչել , — Եկան , եկան , բացուեցէք : Ամբողը ծովու ալեաց պէս կիխնար կ'ելլար , մէկզմէկ հրելով , կիցահարելով , կանչուըտելով ժամ մ'առաջ գաւթէն դուրս գէպ 'ի փողոցն ելլել կ'ուզէր : Վինչիկուէրրա՛ իրեն արուելիք հրամանը կատարելու պատրաստ գտնուելու համար շուտ մը ներս մտաւ : Երբոր Լուբօ իրեն մօտ ոտքի ձայն առաւ , նոյնժամայն վախնալով ոտքի վրայ ելաւ եւ երեսը խաչակնքելով անալանդակ դիմօք հարցուց . — Միթէ հասաւ ժամանակը :

Այս միջոցիս՝ խուզին դուռը բացուելով , պահապաններէն երկուքն առջեւէն , եւ անոնց ետեւէն ալ ձեռքը թուղթ մը բռնած արեղայ մը ներս մտան : Լուբօ , վայրկեան մը ներս մտնող քահանային երեսը նայած միջոցը , անոր ետեւը մարդ մ'ալ նշմարեց՝ որ անպարելով ներս կը մտնար անոնց հետ : Երկմտելու չը մնաց՝ թէ արդեօք ո՞վ կրնար ըլլալ այն մարդը , մէկ մ'ալ տեսաւ որ այն իրեն անծանօթ երեւցած անձը՝ յանկարծ զինքը գորովանօք գրկելով կը համ-

բուրէր առանց իսկ կարենալու խօսիլ եւ կամ արտասուել : Մեր ընթերցողք կարծեմ իմացան թէ այդ մարդը Լուբօյի հայրն էր :

— Երբոր բաղէակրին որդին , խռովութիւնը քիչ մը հանգչելով չրթունքները կարողացան քանի մը խօսք արտաբերել , այս վերջի վայրկեանս զիս տեսնելու դալը գէշ ըրիր , ըսաւ Լուբօ իր հօրը , ես ալ ուրիշ բան չէի մտածեր՝ բայց եթէ Աստուծոյ փառքն ու իմ յաւիտենական կեանքս , գէշ ըրիր հայր , գէշ ըրիր . թէ ինձի եւ թէ քեզի :

Ամարօճիօ տակաւին չը կարենալով սրտին յուզմունքէն խօսիլ , գլխով ու ձեռքերովը , չէ կըսէր : Վերջապէս ինքնիրեն մեծ ջանք ընելով ու հեկեկելով կրցաւ այս խօսքերն արտաբերել , չէ , չի պիտի մեռնիս :

— Ո՛հ , թիչ կըլլար՝ թէ եւ մեռնելու իսկ ըլլացի պատասխանեց որդին , իմ սիրտս միայն ձեզի համար կը ցաւի . մնաց որ՝ ես ամեն դործս կարգի դրած էի :

Եւ քանի որ բաղէակիրը եւս առաւել գորովանօք գրկելով գորդին , անդադար գլխովը « չէ , չէ , չէ » կըսէր , արեղան մօտը դալով ըսաւ Լուբօյի . — Քու հօրը ըսածը ճշմարիտ է , արբահայրը քու մահուանդ դատակնիքը ետ առնելով քեզի ներած է :

— Թողութիւն , թողութիւն , կանչեցին պղտի պահին մէջ կայնող պահապանները : Թողութիւն է սրուեր , կրկնեցին դուրսը կեցող զինուորները , եւ այս ձայնը շուտ մը բերնէ բերան մինչեւ կամարակապին տակը , անկէ վարը դաւիթը եւ անկէց ալ փողոցն ու հրատարակին մէջ զիրար ուտող խառնիճահանձին ականջը հասաւ :



— Աբբահօր ներողամտութեանը շնորհապարտ պէտք ըլլաւ, կըսէր եկող քահանան՝ դատապարտելոյն :

— Մենք Օգօրինօյի հետ միատեղ եկանք, ըսաւ թագեակիրը, եւ արբայէն քեդի ներումն խնդրելու համար բուն Մարքօ Վիսքօնթիէն նամակ մը բերինք :

— 1<sup>օ</sup>նչ, Մարքօ Վիսքօնթիէն նամակ մը, կեցցէ Մարքօ, կանչեց Ղուբօ : Եւ այս ըսած ժամանակը կարծես այնպիսի քաջ ու անուանի սպարապետի մը ձեռքէն ընդունած նոր կեանքն՝ իրեն առջի կեանքէն աւելի անուշ կուգար, եւ ինքզինքը չը կարնալով բռնել՝ դարձեալ, կեցցէ Մարքօ, կանչելով ստիպեց նաեւ կերպով մը ղինքը պահող զինուորներն ալ իրեն հետեւելու, որով կեցցէ Մարքօ, կեցցէ Մարքօ կանչելուն ձայները կրկին անգամներ ներսն ու դուրսը հնչեցին :

Այս միջոցիս ամբոխին մէջ հազար ու մէկ կասկած կը պարտէր : Մէկը կը հարցնէր թէ ինչ կայ, միւսը թէ ինչպէս պիտի ըլլայ : Ոմանք թէ՛ Մարքօ դատապարտելոյն ազգականն ըլլալով, անձամբ եկած ըլլայ ղինքը փրկելու : Ոմանք ալ թէ՛ նամակը բերող ասպետը Մարքօյի ազգականն է : Մէկը թէ՛ այնպէս չէ՛, հայտ Մարքօ անձամբ եկած է եւ հետն ալ խուժը մը գործ քաղքէն գուրս կեցուցած ըլլալով, արբան հարկադրուած ըլլայ այն շնորհքն ընելու : Միւսն ալ թէ՛ ես քաջ գիտեմ, Մարքօ մասնաւոր նամակաւ մը հրամայած է արբահօր՝ որ գօրծին այս կերպով վերջ մը տայ : Ոմանք թէ՛ սուտ է . ոմանք ալ թէ՛ այո՛, հիմայ մեզի հայր Պոստոպէնդուրան այսպէս ըսաւ : Սակայն կրնայ ըլլալ . բայց չի կրնար ըլլալ եւլն . . . :

Ասոնք եւ ասոնց նման խօսքեր՝ ամբոխին մէջ դարձած ժամանակը, նորակենդան Ղուբօն, զրէթէ սրախն ուրախութենէն ցնորած եւ հօրը ձեռքէն բռնած, սրահէն դուրս ելան :

Այն անձինքը, որ քիչ մը առաջ դատապարտութեան ժամն անցնելով, խեղճ մահապարտին չերեւնալուն վրայօք կը գանդատէին, այո՛, այո՛ ամենէն գաղանարարոյ անձինքը, նոյն վայրկենին զարմանալի կերպով մը սրտերնին խնդութեամբ լեցուած Ղուբօի նոր կենաց բարեմաղթութիւններ կընէին :

Ի՞նչ առ ի՞նչ խռնեալ ամբոխին եւ երկու կարգ զօրաց մէջէն անցնելով, Ղուբօ եւ իր հայրը հասան վերջապէս Քիարէվալլէի հրապարակը : Հոն եկեղեցւոյն առջև գտան զՕգօրինօն որու քով քանի մը գեղացի երեք հատ նծոյգ պաարաստ բռնած կեցեր էին : Երիտասարդ ասպետը զասոնք տեսածին պէս, ընդ առաջ դալով երկու թեւերը իւր հաւատարիմ Ղուբօն վիզը ձգեց եւ քանի մը վայրկեան նոյն զիրքին մէջ կենալով, ղիրենք չուրջ պատող ամբոխը նոր կենաց բարեմաղթութիւններով եւ ծախահարութեամբ կեցցէ կանչեցին : Վերջը չուտ մը երեքն ալ միատեղ հեծան :

— Աբբահօր շնորհակալ ըլլալու չես գար, ըսաւ Ղուբօյի հետ մինչեւ հոն եկող քահանան : Ղուբօ յայտը մասին ինչպէս վարուելու պէտքն իմանալու համար՝ դարձաւ ավրոջն երեսը նայեցաւ . եւ երբոր անկէ ալ անտարբեր կերպ մը տեսաւ, ինք ալ ուսերը վեր առնելով դարձաւ ու պատասխանեց քահանային, — առայժմ խիստ ստիպողական է գործս :

Իսկ Վէնչիկուէրան՝ որ մինչեւ հոն Ղուբօյի ե-



տեւէն եկած էր, իրեն սոււած արծաթէ շղթան ա-  
նոր վիղը ձգելէն վերջը, մինչդեռ իւր ընկերներուն  
բաժնետէր համար առած ստակն ալ ետ տալու կը  
պատրաստուէր. — Այդ ստակները թող քու քովդ  
մնան ըսաւ Լիմոնդացին, եւ քու ընկերացոյ հետ այս  
դիշեր իմ կենացս խմեցէք: — Ամենայն սիրով, ըսաւ  
պահապանը: — Սակայն այս արծաթէ խաչելութիւնը  
քիչ մնաց որ քովս պիտի մոռնայի: — Այդ խաչելու-  
թիւնը դու քովդ պահէ իմ յիշատակիս համար, ըսաւ  
Լուբօ եւ ձիուն վրայէն ձեռքը թոթուելով, իր հօրը  
եւ Օդօրինօյի հետ միատեղ, ապուշ ապուշ երեսօին  
նայելով, իրենց անցնելու ճամբայ բացող ժողովը-  
ղեան մէջէն անցան դայցին:

Երբոր հրապարակին ծայրը հասնելով փողոցի մը  
բերանը հասան, ուսկից անդին կ'սկսէր բուն իրենց  
բռնելու ճամբան, Լուբօ իրեն համար պատրաստը-  
ուած կախաղանը տեսնելով, ձիուն վրայէն խոնար-  
հեցաւ ու բարեւեց եւ բարձր ձայնով ալ մնաս բար-  
եաւ սիրելիս, կանչելուն պէս ամենքն ալ սկսան ծի-  
ծաղիլ:

Ինզճ Ամպրօծիօին կարծես թէ որդւոյն ողջ ա-  
ռողջ քովն ըլլալը տակաւին սուտ կուզար, անոր հա-  
մար ալ վայրկեամ մը աչքերն անոր վրայէն չէր վեր-  
ցըներ եւ որդւոյն մէկ ձեռքն ալ ուժով բռնած կա-  
մաց կամաց ցած ձայնով եւ արտասուելից աչօք կ'ըսէր:

— Անտանկ, գիտես թէ դիս ինչ աճ ու դողի մէջ  
դրիր. թող սա զինուորական արհեստոյ, դարձիր այ-  
սուհետեւ տունդ, եւ Աստուծոյ սոււած բարիքնե-  
րովը ամենքնիս ալ հանդիստ ապրինք, որով մօրդ ալ  
խնդիրքը կատարուի: Մի կարծեր որ մայրդ զքեզ

միւս եղբայրներէդ պակաս կը սիրէ եւ կամ քեզի ե-  
ղած բարիքն անոնց դարձնելու կը փափագի. մանա-  
ւանդ թէ այս անգամուն քեզի համար զգացած ցաւն  
ու քաշած տարօրինակ աշխատութիւնները . . .

— Ո՛հ, գիտեմ, ես ամենեւին ժօրս սիրուն վրայ  
երկրայութիւն մը չեմ ունեցած:

— Սակայն այնչափ քու բարեացդ կը փափագի,  
այնչափ որչափ ես կարող չեմ մտօք ըմբռնել: Իսկ  
Լաուրէդա . . . եւ քու եղբայրդ, որ այնչափ քեզի  
հակառակած կերեւնար . . .

— Այո՛, այո՛, ամենէն ալ հաւատարապէս չնոր-  
հակալ եմ:

— Ուստի առաջարկութիւնս ընդունելով, պիտի  
պատճառես իմ այս վերջին այէդարդ վիճակիս եւ օ-  
րերուս մէջ ամենէն մեծ ու յետին մխիթարութիւն մը

— Ասոր վրայ վերջը երկար կը խօսինք, դու ալ  
գիտես թէ առանց տիրոջս ալ անգամ մը հարցընելու  
այսպիսի խնդիր մը չեմ կրնար լուծել:

— Այո՛, անշուշտ իրաւունք ունիս, մասնաւոր  
թէ անոր շնորհապարտ ալ ես: Տեսնայիր մէկ մը ըզ-  
քեզ փրկելու համար ըրած աշխատանքն ու մտածած  
հնարքները, եւ ինչ սիրով . . . հէ՛լ պէս կ'ունն ալ եւ  
կ'ունուհւոյն աղջիկն ալ, վերջապէս ամենքն ալ այս  
անհասարկ աշխատութեան մասնակցեցան: Իմ յետին  
թշուառութեանս մէջ ամենուն ալ զքեզ փրկելու հա-  
մար ցըցուցած ջանքերնին տեսնալու մխիթարութիւնն  
ունեցայ:

Օդօրինօ, հայրական եւ որդիական խանդաղա-  
տելի սիրոյ առաջին վայրկեաններուն արգելք մ'ըլ-  
լալը պատշաճ չի սեպելով, երկվարը միշտ չորս հինգ



քայլ անոնցմէ առաջ կը քնէր, ինքզինքը բոլորովին ուրիշ խորհուրդի մը զբաղած ձեւացնելով: Սակայն երբոր անոնք բաւական իրարմէ կարօտնին առնելով խօսակցութիւննին կտրեցին, Օշօրինօ կեցուց վայրկեան մը երկվարը, մինչեւ որ երկուքն ալ իրեն հասան, եւ երկուքին ալ միաբերան շնորհակալութեամբ հանդերձ սկսած բարեմաղթութիւննին ընդմիջելով, ըսաւ Լուբօյին: Պէտք է փութանք, որպէս զի նիգակամարտութեան ալ ժամանակին համնինք. գիտես որ այս հանդէսին առաջին օրն է, եւ դու ինծի զինակիր պիտի ըլլաս:

— Ամենայն սիրով. կը հաւտտան թէ Քիարավալէի բանտին մէջ ինքնիրենս կը մտածէի որ եթէ սա կախաղանին կատակն իմ վրաս փորձելու ըլլան, նիղակամարտութեան կրկէսին մէջ քեզի օգնութեան համնելու միտքարութիւնը չի պիտի ունենում:

Այդ կատակը թշուառական կղերն անմիջապէս քու վրադ կ'ուզէր փորձել, սակայն այս անգամուն չի յաջողեցաւ: Տեսնայիր հեղ մը Մարքօյի նամակը կարդալու ատեն արբահօրը դաժան ու տափաքիթ դէմքին այլ եւ այլ դիրք առնելները . . . կարծես թէ չլջկան մը ծծումբի հոսէն գարշածին պէս կը գալարէր, եւ գիտցած մը աւսոր այս պատառը շատ մեծ դժուարութեամբ կրցաւ կուլ աւալ:

— Սակայն կ'ըսէր Լուբօ, այն մարդուն կողմանէ ալ մեծ պարգև ու կարգէ գուրս շնորհք մ'է ինծի եղածը: Մարքօ Վիսթօնթի մը . . .

— Այս Մարքօյի ձեռքը եղած պարգևը մեր փրօջը սիրոյն համար էր, ըսաւ Ամպրօճիօ, Տէլ Պայցօ կոմսին սիրոյն համար, որ մասնաւորապէս Նրանուհ-

ւոյն հետ ելաւ իրեն գնաց այս բանին համար աղաչելու:

— Կոմսին ալ միշտ երախտապարտ ըլլալու պարտաւորութիւն ունիմ, պատասխանեց Լուբօ, սակայն այսու ամենայնիւ ամեն բանէ առաջ պէտք է երթամ Մարքօյի շնորհակալութիւնս մատուցանեմ:

— Մարքօ այս գիշեր Թոսքանայ գնաց, ըսաւ Օշօրինօ:

— Ո՛հ, յիրաւի շատ կը ցաւիմ որ ժամ մ'առաջ չի պիտի կարենամ այն մարդուն քաջայաղթ ձեռքն համբուրելով՝ բոլոր իմ կեանքս իրեն նուիրած ըլլալս իմացնել:

Ամպրօճիօ՝ Լուբօյի այսքան բացարձակ եւ եռանդեամբ առ Մարքօ սնեցած երախտեաց պարտաւորութիւնը խոստովանելուն նայելով, իմացաւ որ տակաւին պատերազմական դեւը իր որդւոյն փորէն դուրս չէ ելած. ուստի սրտակոտոր գլուխն առջին կախելով ինքնիրեն կ'ըսէր. — Քանի որ կախաղանը կարող չէ զինքը այս արհեստէն ետ կեցընել, ես ալ ինչ կ'ընամ ընել:

Երբոր Միլան հասան, երիտասարդ ասպետը դարձաւ Լուբօյի, — պէտք է որ ճիշդ երկու ժամէն ամենէն առաջ զիս կրկէսին մէջ դաս գտնաս, ըսաւ, ու ձեռքով բարեւեց իւր երկու ձամբու ընկերները, որոնք մինչեւ իրենց երկվարաց վիզը խօնարհելով բարեւն առին ու իրարմէ զատուեցան:

Մեր ընթերցողը կրնայ երեւակայել թէ՛ Լուբօի ընտանիքը ինչպիսի ուրախութեամբ ընդունեցան զինքը: Սակայն մենք այնչափ պիտի հասկցնենք, որ Լուբօ տունէն ներս մտած ժամանակը՝ լսեց որ մայ-



րը իր միւս Պէրնարտօ եղբորը հերձուածողաց ճամբուն հետեւելը այս ամեն գէշութեանց գլխաւոր պատճառ սեպելով կը գտնուուէր :

— Լուեցէք, հիմայ այդպիսի խօսակցութեանց ժամանակը չէ, ըսելով, Լուբօ ներս մտաւ, եւ շուտ մը Տէլ Պայցօ կ'ամսին ինչպէս եւ ուր ըլլալը հարցընելով, իմացաւ որ Երանուհին ծանր հիւանդութենէ մը պառկած, եւ Երմէլինտա ալ հիւանդը չհակելու հետ էր : Իսկ կոմսին համար պատասխան տուաւ թէ իր խոսքը փակուած՝ ամենեւին իրեն հետ տեսութիւն ընելու մարդ մը չ'ընդունիր :

— Ուրեմն ես իրեն շնորհակալութիւնս չի պիտի կարենամ մատուցանել, ըսելով բազէակիբին որդին, վաղեց շուտ մը սանդուխէ մը վար. եւ հինգ վեց սրահ պարտելով անցաւ մտաւ իր տիրոջը յարկը : Ամենքն ալ ետեւէն դալով՝ կ'ուղէին այդ ուրախութեան հանդիսին ականատես ըլլալ : Լուբօ կ'ամացուկ մը դարկաւ դուռը. իսկ կոմսը՝ որ արդէն նախ վարք դաւթէն, եւ վերջն ալ սրահներուն մէջ լսած ձայններէն գուշակած էր բանին էութիւնը, — Գացէք, կը կանչէր ներսէն, գացէք, մարդ չեմ ուզեր :

— Կոմս, տէր իմ, ես եմ, քու Լուբօք եմ, հըրաման ըրէ որ դամ ու ձեռքդ համբուրեմ :

— Գնա, գնա, Աստուած հետդ ըլլայ, կը պատասխանէր դարձեալ ներսէն կոմսը :

— Գիտեմ, որ դու ինքն անձամբ գացեր ես իմ կենացս շնորհագիրը Մարքօյէն ընդունելու, հրամայէ, թող որ . . .

— Բայց, Աստուծոյ սիրուն համար, կ'աղաչէր Ամպրօնիօ :

— Բայց, կը կանչէր Մարիանա, որպէս զի կարենանք ոտքերնիդ ինչպիսի շնորհակալ ըլլալ. այս մը խիթարութենէն զմեզ մի գրկէք :

— Բայց, բայց, սկսան կանչել ամենքն ալ միաբերան, կեցցէ Տէլ Պայցօ կոմսը, կեցցէ մեր տէրը : Վերջապէս ասոնց այդչափ սրտանց ու միանգամայն երկար թախանձանքէն ստիպեալ, կոմսը խուցին դուռը կէս մը բանալով՝ զարհուրեալ ու սնախառ դէմքը դուրս հանեց : Նոյն ժամայն մէկը ոտիցը կը խոնարհէր, միւսը ծնկուրներուն պլուռելով շնորհակալ կըլլար. սակայն ինք այս յողթանակին վրայ բաւական խրախանայէն վերջը՝ ձեռքը վեր առնելով—բաւական է, բաւական է, ուրախակից եմ որ գթեզ ողջ առողջ հոս դարձած տեսայ. ասկէ վերջը Աստուած հետդ ըլլայ, սակայն զխոցած ըլլաս որ, մէկ մ'ալ տունս ոտք չը պիտի կօխես, ըսաւ եւ զամենքն ալ ապշած ու կասկածի մէջ ձգելով, դարձեալ փակեց խուցին դուռը ու ներս գնաց :

Լուբօ, կ'ամսին այս պատուիրանացը չը կարենալով իմաստ մը տալ, զնաց իր զէնքերը հազնելու, եւ բարեւելով իւր ծնողքը որոշեալ ժամուն կրկէսը գտնուելու համար ձի հեծնալու կը փութար, երբ յանկարծ իր Լատրէզա քոյրը գաղտնի խուցէ մը դուրս վազելով եւ մատը շրթանցը վրայ դրած ցած ձայնով մը ըսաւ. — Երանուհի տիրուհոյս կողմանէ՛ Օդօրինօյի շատ սիրով բարեւ ըրէ, եւ ըսէ իրեն որ քաշափրա ըլլայ, եւ կը յուսայ թէ հեռուէն ալ զինքը չի մոռնար :

— Հեռուէն ալ, այս ինչ ըսել է, կարծեմ թէ Օդօրինօ հեռու տեղ ձամբողքութեան մը դիտաւորութիւն չունի :



— Այո՛, այնպէս է . սակայն կոմսը անոր ալ հրամայեց այս տունը մէկ մ'ալ ոտք չը դնել .

— Բայց ինչպէս, ինչ պատճառաւ . . .

Այս միջոցիս Լաուրէզա՛ գուրսը ոտքի ձայն մը առնելով, դարձեալ մատը շրթանցը տանելով եւ ոտիցը մատերուն վրայ քայելով վազեց մօտ խուց մը մտաւ եւ եղբայրն ալ ելաւ դնաց իր գործին .



### Գ Լ Ո Ւ Խ Ժ Զ .

Լուբօ, Բօնիթէ Պէպթրիչէ ըստեւած կամուրջը տանող Ալճիզօի դռնէն ելլելով, մտրակեց երկվարը դէպ 'ի Ս. Նիկողայոսի մենաստանը՝ որուն մօտերը նաեւ պատրաստուած էր նիզակամարտութեան կրկէսը .

Չորս կողմէն խուռն բազմութիւնը կը վազէր այն ատենուան հաճելի տեսարանին ներկայ գտնուելու . Մարդկանց, կանանց ու տղայոց խլրտին մ'էր կերթար, որոնք ամենքն ալ իրենց ամենէն նոր եւ դեղեցիկ զգեստները հագած էին .

Բագմութեան մէջը ամեն կարգի ու արհեստի տէր անձինք՝ իրենց հագուստէն կը զանազանուէին ու կը տարբերէին . Աստուգործք՝ դուրնին ճերմակ գըլխարկ եւ երկայն ոտալից դաւաղան մը ունէին ճեռքերնին . զինագործք, որոնք միայն Միլանու մէջ տասը հազարէն աւելի էին, իրենց զէնք շինելու արհեստին համեմատ առանձին գոյներով կաշիէ գոգնոց մը

ունէին . մի եւ նոյն արհեստի գործաւորաց մէջն անգամ աշակերտք իրենց զգեստովը կը զանազանուէին՝ ինչպէս որ վերակեցուններն ալ աշակերտներէն .

Մեծամեծ կանանց ու ասպետաց աստիճանները իրենց մետաքսէ փոքր վերարկուններէն կամ թաւիչէ փոքրիկ վեղարներէն, կամ լայն թեզանաւոր հագուստներէն, կամ երկայն ու մէջքերնէն դօտիով կապուած վերարկուններէն, վզերնին դրած մարգարտէ եւ կամ գոհարէ զարդերնէն, կամ վերջապէս այլ եւ այլ գոյնով փառաւոր Սամուրի, Կզնաքիսի եւ այլ ազնիւ մորթերէ շինուած մուշտակներէն եւ ուրիշ այլ եւ այլ զարդարանքներէն իրարմէ կը զանազանէին . Իսկ հասարակ ժողովուրդը՝ ասոնց եւ ոչ մէկ ըրած ճոխութիւնը եւ զարդարանքը չունենայէն վերջը, բուրդէ, բամպակէ, ոչխարի, դայլի եւ ուրիշ հասարակ անամնոց մորթէ շինուած զգեստներ եւ ամենահասարակ մետաղներէ զարդեր՝ ունէին . Այսչափ իրարու հակառակ էր այն ատենուան մարդկանց ընկերական վիճակը, հիմակուան մեր դարուն կացութեանը հետ բաղդատելով . այն ատեններն ամենքը կը ջանային իրարմէ զանազանուելու, իրենց վիճակին եւ արհեստին համեմատ . իսկ հիմայ ամենքն ալ մի եւ նոյն ջանքով իրարու հասնելու եւ նմանելու ետեւէ են .

Մեր նիզակակիրը վերջապէս հասնելով Ս. Նիկողայոսի եկեղեցւոյն առջին, տեսաւ որ բազմութիւնը գուրսը եկեղեցւոյն պատերէն վար կախուած քանի մը հաստ վահաններու նայելով կ'զմայէր . Ընթերցողը պէտք է գիտնայ որ այն ատեն սովորութիւն էր ներկայացընել ժողովրդեան՝ եկեղեցւոյ եւ կամ մենաստանի մը պատերուն վրայ, բոլոր այն ասպետաց վա-



հանները (իրենց ցեղական նշաններովը), որոնք միայն նիղականարտութեան համար ընտրուած էին : Որպէս զի ամենուն դիւրին եւ յայտնի ըլլայ փորձի օրը ճանշնալ զանոնք, եւ թէ որ անոնց հետ պատերազմելու համար ընտրուած մէկուն դէմ փիկնոջ մը եւ կամ աղջկան մը կողմանէ՝ ներկայ գտնուող դասաւորաց, պատուոյ պահանջման համար գրով յայտարարութիւն մ'ըլլար, այն ատեն եթէ մէջ բերուած փաստերը բաւական զօրաւոր ըլլային, դատաւորք զամբաստանեալը կրկէսէն դուրս կը վաճառէին :

Լուբօ թիչ մը ժամանակ իւր տիրոջն Օդօրինօյի քառանկիւնի կարմիր եւ ձերմակ ու մէջ տեղը իժ մը նկարուած վահանը կախուած տեսնուէն վերջը անցաւ դնաց : Սակայն որչափ առաջ կ'երթար, այնչափ ալ բազմութեան հետ՝ ազմուկը կ'աւելնար :

Հոս՝ մէկը քնար մ'առած զարնելով կ'երգէր, հոն՝ միմոս մը թմբուկի մը ձայնով շուներ ու կապիկներ կը խաղցընէր, թիչ մ'անդին շտապօս ու ստանոն բժիշկ մը՝ տենդի համար մասուճքներ եւ հրաշալի խոտեր կը ծախէր : Ամեն տեղ պղտի տնակներու մէջ շատ մը մարդիկ նարտի եւ նոյն տեսակ խաղերու զբաղած էին : Այս տեսակ խաղերը որչափ ալ տեսչութեան կողմանէ խստիւ արգելուած էին, սակայն ամեն օր յայտնապէս սրիկայից խումը մը խեղճ գեղացիները այս տեսակ խաղերով խաբելէն ետ չէին կենար : Տեղ տեղ պղտի պանդոկներու մէջ կ'ուրու, ոչխարի, երէի միսերէ տեսակ տեսակ համեղ կերակուրներ, ցորենի, հաճարի եւ գարբի հացեր եւ այլ եւ այլ անուշահամ գինիներ կը ծախուէին :

Կրկէսին ձախ կողմը մեծ հրապարակի մը մէջ

պատերազմական ձիերու տօնավաճառ մը կար, ուր վաճառարկուաց պոռայով կանչելով երթեւեկելը տեսնելու բան մ'էր : Նոյն հրապարակին քով փոքր տրնակներով զատուած էր նաեւ շուներու եւ բաղէններու տօնավաճառն ալ : Քիչ մը աւելի հեռուն կաթընտու անասնոց ձայներուն հետ, իրենց պարանքներուն արժէքը գովարանող վաճառողաց ձայներն ալ խառնուելով, կարծես թէ Բաբելոնի աշտարակի կործանման տեսարանը կը ներկայանար :

— Լաւ, գեղեցիկ եւ չի կատրող շուներ ունիմ կը կանչէր մէկը : — Անգղիոյ, Ալեմանիաի ու Նորվեկիաի անխոնջ ու անվեհեր շուներ կը ծախեմ կը պոռար միւս մը : — Եկէք, թագաւոր թռչնոց բաղէ մը առէք, որ դայլի, նապաստակի եւ երէի վրայ յարձակելու վարժուած է, կ'աղաղակէր կուղ տօնավաճառին մէկն ալ :

Ձէնքերու տօնավաճառն ալ զիմացը, այսինքնի կրկէսին ձախ կողմը բացուած էր : Հոն, այլ եւ այլ ձեւով ու գոյներով տնակներու եւ վրաններու մէջ զրահ, վահան, սրունքապահ, բազպան, ձեռնոց, երկաթէ սաղաւարտ, նիզակ, թուր եւլն կը ծախէին : Իսկ այս զինավաճառք, իրենց ամենէն լաւ ու թանկագին զէնքերոջնին վերոյիշեալ տնակաց խրաքանչեւերին մէջտեղը ցցի մը վրայ խրտուիլակներու պէս հետեւակ զօրականներ ձեւացուցած էին . քսնի մը տեղ ալ երկու հեծկազօրք իրենց ամենայն զօրքի պարաստութեամբը, նիզակնին իրարու դէմ ցցած կարծես թէ երկու թշնամուց մէկ մէկու դէմ յարձակելն կը ներկայացնէին : Այս տեսակ զինուց կարգէ դուրս եւ ահաւոր ներկայացուցները, մի միայն



նիդակառնարանութեան միջոցները , չորս կողմէն զէնք  
գնելու համար Միլան վազող յաճախորդաց ակոր-  
ժակ բերելու համար տեղի կ'ունենային , ուր արդա-  
րեւ Եւրոպոյոյ ամենէն երեւելի գինուց գործարան-  
ները կային : Իսկ իւրաքանչիւր վրանի կամ ամակի  
մէջ ծախուած ապրանքը շինող վարպետին ու գոր-  
ծարանին անունը՝ դրան ճակատը գրուած էր :

— Զիւրաբօժօ , տեսնանք ինչպէս կերթան գոր-  
ծերը , հարցուց Նուբօ , այս խանութներուն մէկուն  
մէջ երկու արմուկով դրան մօտ ստոլի մը վրայ կըր-  
թընած ուշադրութեամբ անյնողները գիտող կարճա-  
հասակ , պէր եւ կարմիր այտերով մէկու մը :

— Է՛հ , փնռք Աստուծոյ , պատասխանեց մեր  
մարդը . սակայն պէտք է ըսեմ թէ , տեղւոյս եւ հի-  
մակուան գործերուն նայելով , իմ առուստուրս ամե-  
նէն յաջող պէտք էր երթալ :

— Օղորինօի ուղած դրանը դրկեցիր արդեօք :

— Այո , այս առաւօտ ես անձամբ տարի եւ փոր-  
ձեցի , շատ աղէկ վրան յարմարեցաւ : Արնամ ըսել  
թէ այնպիսի ձեռագործ մ'ունենալը մեծ պատիւ կը-  
նէ տիրոջը . չէ՛ թէ իմ ձեռաց աշխատութիւնս ըլլա-  
լուն համար կըսեմ , հապա իբրեւ կատարելութիւն  
արհեստի եւ իբրեւ ճոխութիւն՝ մանաւանդ լանջքե-  
րուն ոսկիէ զարդարանքին նայելով , Յիէր Երմէնու-  
ֆի եւ Էսթօթէ Քաղաթօ վարպետներուն անգամ բեր-  
նին ջուրերը կը վազէ :

Այս միջոցիս շաղանակի դունով մեծ վերարկուի  
մը սլլուած , վեղարը գլուխը եւ վիզն ալ լաթ մը  
կապած ծպտեալ ծեր մը գալով հարցուց ձիւրաբօժօ-  
ին . — վարպէս , առաջին տեսակ պողպատէ հաստա-

տուն երեսանոցով եւ պարանոցով դոց սաղաւարա  
մը ունիս :

— Հասկցայ , սա երեսանոցն օղակաւոր եւ ե-  
տեւէն բացւող սաղաւարաներէն կ'ուզես :

— Այո , խիստ լաւ հասկցար ըսածս :

— Այդ տեսակները հիմայ հաղուազիւտ են , եւ  
իմ քովս չին գանուիր : Հիմակուան սաղաւարաներուն  
գիմակները հաստատուն չեն , եւ գործածող ասպետը  
ըստ հաճոյից կրնայ դէմքը ծածկել կամ բանալ . ե-  
թէ անոնցմէ կուզես , խիստ աղէկներէն ունիմ . նա-  
յէ , ըսելով խանութին դէպ 'ի մէջտեղը դացած մի-  
ջոցին , միւսը :

— Չէ , չէ ըսաւ , վարպէս , պարապ տեղը մի  
հոգնիր . ես ճիշտ ըսած տեսակէս կուզեմ . սակայն  
ուրիշ սրտեղ կրնամ գտնել զայն :

— Իմ խանութէս վար չորրորդ կամ հինգերորդ  
խանութը կրնաս հարցնել , կարդալ դիտես :

— Չէ :

— Լաւ , բայց կարծեմ թէ չես սխալիր . Ամգ-  
րօճիօ Քայիմօ վարպետին խանութը՝ որու որ հարցը-  
նես քեզի կը ցուցնեն . ինք միայն այդ տեսակ հու-  
թիւններէն կրնայ ունենալ . իսկ թէ որ անոր քովե  
ալ չը գտնալու ըլլաս , ալ պարտալ տեղը ուրիշի հար-  
ցնելով մի հոգնիր , վասն զի չես կրնար գտնալ :

— Թէ որ գտնալու ըլլամ , ինչ գլխով արդեօք  
կրնամ ծախու առնուլ :

— Անիկ . . . ս . . . ս . . . պատասխանեց ձիւրաբօ-  
ժօյն , ձայնը երկնցնելով եւ ուսերը վեր աննելով .  
անիկայ մասունք մը առնելու կը նմանի , որ առնու-  
ղին ջերմեանդութիւնէն եւ ծախողին խղճմտանքէն  
կախուին ունի :



— Թողութիւն կընես, թերեւս դքեղ ճանձրացուցի, ըսելով մեր ծպտեալ ծերը անցաւ գնաց :

— Ի՞նչ տեսակ սաղաւարտ է ասոր ուղածը, հարցուց Լուբօ խօսքն առաջ տանելով զինավաճառին հետ :

— Տեսակ մը սաղաւարտ է, պատասխանեց միւսը որ հին ատեն անոնք որ նիդակամարտութեան եւ ուրիշ նոյն տեսակ խողերու յաճախելով չէին ուղեր ճանչցուիլ, այս ուղած տեսակէն կը գործածէին. ուրովետեւ ամբողջ մէկ կտորէ ըլլալուն՝ ամենեւին վախ չկայ որ նիդակի հարուած մը երեսանոցը բանալով պատերազմողը ճանչցուի :

— Հասկցայ . . . հիմայ մեր գործը նայինք, ի՞նչ կուղէի ըսել . . . տեղակալը դեռ չեկաւ, այնպէս չի :

— Ո՛չ, սակայն կարծեմ թէ չ՛ուշանար, եւ եկածին պէս խաղն ալ կըսկսի :

— Ի՞նչու այսչափ սպասել կուտան, հարցուց Լուբօ :

— Ձինավաճառը միայն չըթունքը խաճնելով եւ միանգամայն գլուխը շարժելով պատասխան չը տուաւ . սակայն քիչ մը կենալէն վերջը, ցած ձայնով կ'ըսէր . տես անգամ մը ի՞նչ տեսակ կառավարչաց ձեռքն ենք մնացած, թէ որ Մարքօ հոս ըլլար :

— Ա՛հ, իցէ թէ Մարքօն հոս ըլլար, պատասխանեց Լիմոնդացին հառաչելով :

— Բայց ի՞նչու գնաց, կըսէր զինավաճառը, աւելի ցած ձայնով մը . պէտք էր հոս կենալ, հոս, որ ամենքնիս ալ գո՛հ ըլլայինք : Գիտնաս որ արքաճօրմէն սկսեալ մինչեւ ամենէն վար ծառայ մը իրեն սիրուն համար կրակն անգամ կը նետուին :

— Հապա զինուորք, յառաջ կը վարէր Լուբօ, հապա աղնուականք, վերջապէս ամենքն ալ : Սակայն սիվ կրնայ ըսել թէ՛ այսպիսի հարկաւոր միջոցի մը մէջ յանպատրաստից ասկէց զիչեր ատեն մեկնելուն դադարն պատճառ մը չիկայ . ես կարծեմ թէ՛ թուղթը մեր տեսածին պէս բոլորովին ճերմակ չը պիտի ըլլայ :

Հոս երկուքին ալ խօսակցութիւնը ընդմիջեցաւ, նոյն ծպտեալ ծերունուն՝ ձեռքը սաղաւարտով մը դարձեալ մէկ մը վրայ հասնելով :

— Բարի ծերուկ, եկու տեսնեմ, կանչեց զինավաճառը, գտմբ :

— Այո՛, պատասխանեց միւսը, ձեռքի բռնած սաղաւարտը զննելու համար անոր տալով . ճիշտ ինձի ցցուցած խանութէդ առի :

Ձինավաճառը բանալով սաղաւարտը՝ եւ մէջն ու գուրքը լաւ մը զննելէն վերջը, ըսաւ :

— Այս Անգղիոյ գործարաններէն է . ի՞նչ վճարել տուաւ քեզի Քայիմօն ասոր համար :

— Գուշակէ՛ տեսնեմ, ի՞նչ կրնար ուղել :

— Ութը արծաթ ֆիօրին :

— Աւելի :

— Ամբողջ ոսկի մը :

— Աւելի :

— Գո՛ւ ըսէ՛ ուրեմն, ես անկէ աւելի արժէք մը ունենալը չեմ տեսներ :

— Երկու ոսկի ֆիօրին վճարեցի :

— Երկու ոսկի :

— Այո՛, իւրաքանչիւրը երեսուն սօլովնօց՝ երկու ոսկի ֆիօրին :

— Աւաղանկ, կ'ուղէր գոչել զինավաճառը, սա-



կայն նոյն ժամայն լեզուն խածաւ , եւ սաղաւարար ծպտեալ ծերունւոյն տալով , կ'արծեմ թէ ըսաւ , այս տեսակ հին երկաթի կտորներուն այգչափ ստակ տուողը , պէտք է իր Ֆիօրիններուն չափը չը գիտնայ :

— Այս որո՞ւ համար է , հարցուց Լուբօ ծերունւին առանց ակնածութեան . սակայն անիկայ փոխանակ պատասխանելու ցուցամատը շրթանցը դնելով առջի ելած ճամբէն ելաւ զնաց :

Մեր երկու բարեկամները դանի ամբոխին մէջ ալ չի տեսնալու չափ ետեւէն նայելէն վերջը , զինալուծառը դարձաւ եւ Լուբօյն ըսաւ :

— Ես կ'ըսեմ թէ այդ սաղաւարար վաղուան տեղի ունենալու նիղակամարտութեան մէջ առանց ճանչցուելու ներկայացողի մը պիտի ծառայէ :

— Թէ որ ինձի անմիջապէս սպասող մը չ'ըլար , վրայ բերաւ Լուբօ , մեծաւ հետաքրքրութեամբ սա ծերուկին ետեւէն կ'երթայի տեսնալու թէ ո՞ր պիտի մտնայ անպիտանը :

Այս միջոցիս , չեմ գիտեր ինչ տեսակ թուր մը գնելու համար յաճախորդ մը դալով , զինալուծառը խանութին ներքին դուռը բացաւ , որով մեր Լիմանդային ալ ձգեց դուրս ելաւ :

Լուբօ բաւական ժամանակ ամբոխին մէջ ժուռ դալէ ետքը , վերջապէս հասաւ ձիւնթացի պատնէչին դռներէն մէկուն առջին : 'Յէպ 'ի քաղաքը նայող կողմը թատրոնի ձեւով երեք չորս յարկ տախտակէ մանր խուցեր , եւ յարմար ինկած տեղերն ալ աշտարակներ շինած էին . իսկ անկէ անդին մինչիւ ներքին անտառներուն յատակը՝ պարզ պատնէչափակ ձգած էր :

Լուբօ ներս մտնելով , տեսաւ որ այդ խուցերը

ծաղիանց պտակներով , դրօշակներով , փառաւոր կապերաններով , արծաթ ու ոսկի թելերով , մասնաձ մետաքսէ լաթերով եւ այլ եւ այլ անուշագոյն բարակ շալերով դարդարուած էին : Տեսաւ ասպետները , ազնուազարմ ախկնայք եւ աղջկունքն ընդ առաջ նըստած , եւ անոնց ետեւը զինակիրք եւ ծառայք ոտքի վրայ կեցեր էին : Միջին յարկին ճակատը ասկաւին պարսպ կեցած էր . ոսկեղօծ սիւներով եւ ձերմակ ու թանկագին մետաքսէ կերպասներով ծածկած կամարածեւ սարկինայ մը , մասնաւորապէս տեղակաւին եւ իր պալատականացը համար , եւ Վիքթօրիստրուն ու կայսերական զինուոց նշանակն ալ անմիջապէս անոր վրայ բարձրէն կը փայլէր՝ ձեւացընելով արծաթէ ձիւններու մէջ ահաւոր վիշապ մը :

Ասոնց զիմացը մնացած լայն ու ընդարձակ դաշափն մէջ տեղը , բաւական բարձր սիւնի մը վրայ կեցուցած կէս մէջքէն զրահաւոր մարդ մը , ձախ բազուկը վահան մը եւ աջ ձեռքն ալ հաստ ու հաստատուն նիզակ մը բռնած : Եւ ով որ երկվարին եւ իր քաջութեանը վատահմայով ճարպիկութիւնը փորձելու համար այդ շինծու խրտուիլակին կամ թշնամոյն զէմ յարձակէր , եւ այս խողին համար մասնաւորապէս կառավարութեան կողմանէ ընտրուելով հոն ներկայ դանուող դատաւորաց որոշած երկու տեղէն , այսինքն խրտուիլակին լանջքէն կամ գլխէն հարուածներ տալով , որոշեալ ժամանակի մը մէջ , աւելի նիզակ խորտակէր , անիկայ միայն յաղթանակող կը սեպուէր : Եւ մասնաւորապէս այս (գուրնթանայ) ըսուած լաղին մէջ մրցողներուն նիզակաց երկայնութիւնը , ծանրութիւնը եւ հասաստութիւնը հաւասարապէս մի



եւ նոյնը ըլլալու պայմանաւ յիշեալ դատաւորաց կողմանէ կը գննուէին :

Բայց զուարճալի բան կ'ըլլար , երբոր դատաւորաց ընտրութեամբը մրցողներէն մէկը սխալմամբ խրտուելակին լանջքէն ու զլիւնն զատ ուրիշ տեղ հարուած մը տար , վասն զի նոյնժամայն այն շինծու խըրտուելակը դառնալով ձեռքի նիզակաւը կ'սկսէր ահաւոր հարուածներ տեղալ օգուռն մէջ :

Այս տեսակ ուրիշ խաղ մ'ալ պատնէշին միւս ծայրը պատրասուած էր , զոր պէտք է մեր ընթերցողաց մանրամասնաբար նկարագրել :

Հաստ եւ միջնասակ մարդու մը բարձրութեամբ ծառի մը կոճղ ցըցած՝ եւ այս կոճղին դադաթը առանցքի մը վրայ խաչաձեւ եւ երկու ծայրերն ալ մէյմէկ ոչխարի գլխով հաստ ու երկաթէ գերան մը կանգնած էր , եւ պղտի հարուած մը բաւական էր այդ գերանը քսան անգամ ինքնիր վրայ դարձնելու : Աստի մարդ մը իւր երիվարին բոլոր ընթացքովը դալով , ձեռքի նիզակաւը նոյն երկաթին մէկ գլխուն պէտք էր դարնել : Սակայն այս խաղին վարպետութիւնը միայն այդ երկաթին դարնելուն վրայ չէր , ըստ որուն նիզակին հարուածն իջածին պէս , երկաթին միւս ծայրն իր բոլոր ուժովը խաղցողին հասնելով՝ զանիկայ դետիրը չի ձգած , երիվարը սլաքի պէս քշելով անցնելու էր : Այս (թօռնէօ) ըսուած խաղը՝ վտանգներու առիթ ըլլալուն համար , որչափ ալ կրկին եւ կրկին եպիսկոպոսաց , պապերու եւ մասնաւոր ժողովներու կողմանէ արգիլուած էր , այսուամենայնիւ այդ ժողովները , պապերը եւ եպիսկոպոսները փուճ տեղը կը հողնէին ու կը քարոզէին :

Լուբօ , վերջապէս Օղորինոյի ներկայանալով , ձիւաքօօլօ ղինավաճառին բերած նոր դրանք մանրամասնաբար ղննելէն վերջը՝ տիրոջը հագցուց . նոյնպէս ալ անոր ուրիշ ամենայն պիտոյքը հոգալով , քաջ երկվարն ալ պատրաստելէն վերջը , դնաց պատնէշին մէկ ծայրը մասնաւորապէս ղինակրաց համար դրուած վըրանի մը առջեւ կեցաւ եւ քիչ մը առաջ նկարագրուած (գուլնիթանայի) խրտուելակին դէմ յարձակողաց նաշելով կը զուարճանար :

Մէկ մ'ալ տեսաւ որ գլխէն մինչեւ ոտքերը , աջ կողմը կարմիր եւ ձախ կողմն ալ դեղին գոյնով ըզգեստ մը հագած , եւ գլուխը դրած գլխարկն ալ մանրը արծաթէ բոժոժներով զարդարած մարդ մը ցատքելով ցատկարելով վարէն դէպ 'ի վեր կուգար :

— Բարեւ , Թրէմաքօլոս , մեր բարով , ըսաւ մեր Լուբօն այս եկող ծիրանի գօտուոյն : Թերեւս ընթերցողը Թրէմաքօլոս անունէն կրնայ յիշել Լուբօյի եւ Ռամէնկոյի մենամարտութեան դաւազաններն օրհնող միմուր :

— Օ՛ , Լուբօ դձեւ ես , պատասխանեց խեղկատակը , շատ ուրախ եմ քեզի պատահելուս . ես ալ ղինակրաց վրանը վնտուելու ետեւէ էի , որպէս զի մէկը դիւս ղինելով՝ ձիւ մ'ալ տայ ինձի : Վասն զի ես ալ այս անգամ գուլնիթանայի պիտի ելլամ :

— Գուլնիթանան ո՛ր , դու ո՛ր : Գնա բանդ . այդ խաղին ելլալը՝ երգած ողբերուդ չը նմանիր . կը տեսնաս անոր ձեռքին ահաւոր գաւաղանը , գիտցիր որ քեզմէ շատ աւելի խելացիները անկէ ձե՛ծ կերեր են :

— Դու հիմայ բանին այդչափ խորը մի՛ վնտուեր : Առնօլոս Վիթալէն սիրահարական նուագի ժը մէջ զիս



գերազանցելուն համար բարկացայ, եւ զինքը գուին-  
թանայի հրաւիրեցի :

— Բայց դու չես գիտեր թէ Առնօլտօ Վիթայէն  
քաջ զինակիր եւ նիզակամարտութեանց մէջ միշտ  
ծափահարուած անձ մ'է :

— Բայց դու ալ գիտես թէ մեր կռիւր ի՞նչ պայ-  
մանաւ պիտի ըլլայ : Ինք հարուածով մը ձեռքի նի-  
զակը խորտակելով պիտի անցնի ու յաղթանակէ . իսկ  
ես՝ թէ որ նիզակիս հարուածը տալուս պէս խրտուի-  
լակէն ծեծ չի կերած ազատելու ըլլամ, այն ատեն  
յաղթած պիտի ըլլամ :

— Ըսել է որ այս պայմանաւ, քաջութիւննիդ  
հաւասար չեն բաժանած :

— Հաւասար բաժանում, կեցիր նայինք . իրա-  
քիչ մը խենդ եմ՝ սակայն կապուելու չափ չեմ :

— Չես ամհնար :

— Ինչէն ամհնամ . առանց աշխատութեան երի-  
վար մը ընծայ առնելէն ամհնարմ է :

— Դու ի՞նչ խոստացիր ես տեսնեմ՝ անոր տա-  
լու, թէ որ յաղթուելու ըլլաս :

— Քու տիրոջդ Պէլլանօյի մէջ ինծի ընծայած ոս-  
կի շղթային մէկ կտորը :

— Մեղք շղթային եւ ախտն այդ ուսերուդ որ  
հիմայ խայտառակարար ծեծ պիտի ուտեն : Բայց դար-  
ձեալ դու գիտես, ի՞նչպէս կուզես այնպէս ըրէ :

— Ուրեմն ձի մը, եւ այդ ուզած դրահս, ինծի  
պիտի կարենան ժամուան մը համար շնորհել :

— Միայն արչաւի մը համար կարելի է :

— Ծնտ աղէկ :

— Եկու ուրեմն ներս, զքեզ ամենայն կերպով

պատրաստեմ ըսելով, Լուբօ, Թրէմաքօլտօյի՝ երկա-  
թէ թեթեւ լանջապանակ մը յարմարացուց եւ բուն  
խակ իւր երիվարին հեծցնելով՝ ձեռքն նիզակ մը տու-  
աւ ըսելով, ասիկայ փորձի համար է, քեզ տեսնեմ  
ոտքերդ հոս խոթէ, նայէ որ ծունկերդ սեղմես եւ  
լաւ խոնարհիս խրտուիլակին առջին, առանց գետինը  
զլորելու անոր ձեռքի անաւոր նիզակի հարուածէն .  
հն, այսպէս, աւելի չիտակ կեցիր . . . նիզակդ ամուր  
բռնէ եւ բազուկներդ ալ աւելի բաց, նայէ որ ա-  
ղէկ նշան առնես հարուած տալու միջոցդ եւ ինքը-  
զինքդ ալ քու պահապան սուրբիդ յանձնես :

— Դու հոգ մի՛ ընեք, ինծի ձգէ պատասխանե-  
լով, Թրէմաքօլտօն ձիուն վրայ՝ վրանէն դուրս ելաւ :

— Կեցիր, մտրակներդ դնեմ, կը կանչէր ետե-  
ւէն Լուբօ :

— Պէտքը չէ, պատասխանեց միմոսն ու առաջ  
անցաւ գնաց : Մարդ մը փող զարնելով, պատնէշա-  
փակ ասպարէզին բոլորը կը պտըտէր, եւ Առնալտօ  
Վիթայէի ու Թրէմաքօլտօյի մէջ ծագած կռուին պատ-  
ճառն ու ի՞նչ պայմաններով գուինթանայի ելլալին  
ամենուն կը ծանուցանէր : Արդէն ամենքը Թրէմա-  
քօլտօյի ի՞նչ խենդ ըլլալը քաջ գիտէին . սակայն հե-  
տաքրքրութեամբ կըսպասէին անոր քանի մը նոր մի-  
մոսական խելագարութիւններն ալ՝ տեսնալու :

Երբոր երկու հակառակորդները՝ դատաւորաց դի-  
մացը ներկայացան, արջու մորթ հագուած երկու ձի-  
աղարման սպասաւորներ, որոնք նոյն պաղանին ձայն  
ու շարժումները խիստ լաւ կը ձեւացնէին՝ զատնք դի-  
մաւորեցին, երկուքին ալ ձեռքը մէյ մէկ նիզակ տա-  
լու համար :



Սակայն այն միջոցին՝ որ Թրէմաքօլտօ իրեն արբուած նիզակն առնելու համար ձեռքը կ'երկնցնէր, հեծած երիվարն ականջներն ընդ առաջ տանելով որնգոռնքները բացաւ ու կատաղի աչքերով մը արջու մորթը հոտոտածին պէս՝ խրտելով ետ ետ դնաց ու երկու ոտիցը վրայ կանգուն կեցաւ։ Քիչ մնաց որ վրայի խեղճ հեծեալը դետինը պիտի դորէր։ Թրէմաքօլտօ ինքզինքը վտանգի մէջ տեսնելով, ծունկերը սեղմեց եւ կապկի պէս երիվարին վրայ կծկելով ձիուն բաշերուն պլլուեցաւ։ Բազդէն էր որ նախ ոտքերը մտրակ չիկար, եւ ապա շուտ մը Լուբօ վրայ համեկով երիվարը անուամբը կոչեց ու փայփայելով ոչխարի պէս հանդարտեցուց։

Այս պատահարէն հանդիսականաց խնդալու ձայները դադրածին պէս, մասնաւոր պաշտօնեաց մը կանչեց. նախ եւ առաջ Անուօլտօ Ալիթալէն պիտի մրցի։

Ուստի բանաստեղծը փառաւորապէս ղինեալ եւ արծաթէ մտրակներն ալ ոտքը՝ իւր քաջ երիվարը յառաջ մղելով, խրտուխակ Սարակինոսին վրայ յարձակեցաւ եւ նիզակաւ ճիշդ անոր վահանին մէջտեղն այնպիսի ուժով հարուած մ'իջեցուց, որ նիզակն օդուն մէջ խորտակելէն զատ, Սարակինոսն անգամ տեղէն սարսեցաւ։ Բանաստեղծին նոյն օրուան մէջ երկրորդ անգամ խորտակած նիզակն էր։ Սակայն այս անգամուան տուած հարուածը՝ դատաւորք քան զամենը վերադասեցին. վասն զի նիզակը խրտուխակին վահանին ճիշդ մէջտեղի քամին էր զարկած։

Պաշտօնեայն կանչեց, — հարուածը ճիշտ քամին վրան է. որուն հանդիսականք առ հասարակ ծախահարեցին։

Քիչ մը անցնելէն վերջը՝ ամբօին սկսաւ կանչել. — կարգը Թրէմաքօլտօինն է, թո՛ղ ան ալ յարձակի տեսնանք։

— Հոս եմ, մի վախնաք չեմ փախչիր, կը պատասխանէր միմոսը։

— Շուտ ըրէ, նիզակդ տեղը դիր, բաւ Լուբօ որ տակաւին քովը կեցած՝ գրեթէ նորածին աղեկի մը կնքահայրութիւն ընելու պէս, շուտ ըրէ, դարձնուր երիվարդ եւ թո՛ղ որ ճամբայ առնէ կըսէր։ Սակայն մեր ծաղրածուն՝ որ երիվարին բոլոր ուժովն ու փորն ալ մինչեւ գետինը ճամբայ տալով ինքզինքը վըտանգի մէջ գնել չուզելով, խորհեցաւ վարպետութեամբ մը այս ձեռնարկութեան մէջէն ելլալ։ Ուստի փոխանակ ձեռքի նիզակը երիվարին վրայ սովորական տեղը հաստատելով ճամբայ ելլալու, նիզակն անութը զարկաւ, ու ինչպէն մարելու ձեւերով դէպ 'ի Սարակինոսը ճամբայ տուաւ երիվարին։ Նպատակին հասնելու տաքը կանգուն մնացած՝ հեռուէն նիզակը ձեռքն առնելն ու Սարակինոսին թեւին զարնելը մէկ եղաւ։ Որչափ ալ տուած հարուածն ըստ կանոնի չէր, սակայն դարձեալ մեքենան շարժեցաւ ու ինքնիր վրայ դառնալով՝ սկսաւ կատաղաբար ձեռքի գաւազանը շարժել օդուն մէջ. այնպէս որ ամենքն ալ մեր միմոսը գետինը փռուած տեսնալու կըսպասէին։ Սակայն նա հարուածը տալուն պէս՝ նիզակը ձեռքէն նետելով եւ կրցածին չափ կծկելով երիվարին վիզը պլլուած ըլլալուն պատճառաւ, Սարակինոսին գաւազանը հագլու թէ անոր գլխուն կրցեր էր հասնիլ, սրով միայն իրեն բոժոժաւոր գլխարկին զարնելով՝ զայն բաւական հեռու դետինը ձգեց, եւ



բոլոր ազնուականն ու ռամիկ հանդիսականք դարձեալ սկսան խնդալու ձայներով ծափահարել :

Սարակինոսէն ուտելու ծեծէն՝ ազատելուն վրայ ապահովցած , Թրէմաքօլտօ կամաց կամաց կծիկը քակելով գլուխն սկսաւ վեր առնել , եւ բոլորովին կանգնելով՝ երբոր տեսաւ թէ Սարակինոսը հանգարտեր ու դարձեալ առաջուան պէս իւր ահարկու գաւազանը օդոյն մէջ բարձրացուցած կեցեր է . դարձնելով երկվարը՝ եկաւ ու ճիշտ անոր դիմացը կեցած սկսաւ աչքերը բանալով՝ բերանը ծումրկելով ու լեզուն ալ դուրս հանելով միմոսարար խրտուելակին ըսել . — տեսմիր հիմայ , սեւ շուն , կուզէիր այդ գաւազանաւդ իմ հասակս չափել , սակայն գիտնաս որ Թրէմաքօլտօն ջուր կանգունիդ համեմատ քեզի կտաւ չի տար :

— Թրէմաքօլտօ , ըսաւ գուլիթանայի գատաւորաց մէկը . ըստ ձեր պայմանագրութեան՝ դու կորսնցուցիր այս խաղին մէջ :

— Ի՞նչպէս կորսնցուցի , քանի որ գաւազանը ինծի չի դպաւ :

— Քու կորսնցուցած ըլլալուդ վկայ , ահաւասիկ գլխարկդ գետինը դեռ կեցեր է , կը կրկնէ դատաւորը :

— Գլխարկս ինծի հետ ինչ կապակցութիւնն ունի . թէ որ գլխարկս միմոս մը ըլլալով ուղենար երեք չորս անգամ օդուն մէջ դառնալ , ես ինչ յանցանք կ'ունենայի :

Գատաւորը կ'ուզէր առաջ տանիլ . սակայն շուտ մը Առնօլտօ Վիթալէն վրայ հասաւ եւ երկուքին մէջ տեղը կենալով՝ ըսաւ դատաւորին . — Թրէմաքօլտօն իրաւունք ունի . մեր պայմանը իր անձին վրայ էր

եւ ոչ թէ գլխարկին : Վերջը դառնալով միմոսին . — քեզի պահէ այդ երկվարը՝ դր իրաւամբ վաստկեցար այս խաղին մէջ :

Բոլոր հանդիսականք հաւնելով բանաստեղծին այս քաջ ու միանգամայն վեհանձն գործին , մեծամեծ գովաբանութեամբ գուլիթանայի առաջին աստիճանի մրցանակին արժանի դատեցին զինքը , այսինքն փառաւոր արծաթազօծ թուրի մը :

Այս միջոցիս կայսերական տեղակալը , Ացցօնէն իւր հօրեղբորորդւոցը ձիովանի Վիւքօնթիի եւ Լուքինօի եւ շատ մը շքեղ պալատականաց , պարոնաց , ասպետաց ու ազնուական աղջկանց հետ միատեղ գալով՝ իրեն համար մասնաւորապէս պատրաստուած տեղը նստեր էր :

Ժողովուրդն Ացցօնէին երեսը տեսածին պէս՝ սկըսաւ ուրախութեամբ ամեն կողմէն . — կեցցէ Ացցօնէ , կեցցէ մեր տեղակալը , կեցցէ Միլանու տէրը կանչել : Սակայն այս տաք գլուխ կողմնակցաց ձայները շուտ մը մարելով , բազմութեան խառն ի խուռն աղմրկաց մէջէն «կեցցէ Մարքօ» կանչելու ձայները ուրոշ լսուեցան : Այնպէս որ Լուքինօ լաւ մը հեռուէն չորս բոլորը դիտելէն վերջը հօրեղբորորդւոյն ականջին դառնալով ըսաւ .

— Աղէկ եղաւ որ ժամանակին գալով , մեր ներկայութեամբը ժողովրդեան կարծիքը կրցանք իմանալ : Կայսերական տեղակալը վերէն ի վար արծաթէ կոճակներով կոճկած , ծաղկեայ երկայն ու հարուստ զգեստ մը հագած էր : Երեք մատ լայնքով սպիտակ աքիսի երկղ մը ձակատը կը սքատէր , եւ անոր տակէն



չէւ զգեստին ծայրը ձգած սեւ ու վրան աստղազարդ շարէ քօղ մը կը կրէր : Յիրաւի կայսերապայել ու շքեղ զգեստ մ'էր , որ տեղակալին ալ չնորհալի դէմքը եւս առաւել կը դեղեցկացնէր :

Ածցօնէն որչափ ալ բնութեամբ մարդասէր էր , սակայն այս միջոցիս եւս առաւել ամենուն հետ յարգանք , սիրով եւ քաղցրութեամբ կը վարուէր՝ ժողովուրդն իրեն չշահելու մտքով , վասն զի զինքը չի սիրեխին լաւ գիտէր : Անոր համար ալ նստած տեղէն , իրեն մօտ եղող պարոնաց եւ ասպետաց բարեւները կէս մէջքէն խոնարհելով կ'ընդունէր . նոյնպէս ալ ո՛ր եւ է անձ՝ մինչեւ յեախն դործաւոր կամ աղայ մը , որ իրեն հեռուէն պղտի յարգանաց նշան մը ցուցնէր , նոյնժամայն ձեռքով եւ դլխով բարեւ տալէն ետ չէր կենար : Շնորհք մը՝ որ թէպէտ մեծամեծաց քով ստակ մը չ'ընէր , սակայն պղտիկներուն քով մեծ արժողութիւն եւ գին կրնայ ունենալ :

Մինչդեռ Առնայալօ Ա. ի թախէ իւր մէջքի թուրը հանած Գուրնթանայի դատաւորին ընծայելով՝ նոյն խաղին մէջ իրեն վաստրկած արծաթազօծ թուրն ալ անոր տեղը մէջքը կը կախէր , Ածցօնէ՛ իւր ոսկեզօծ ակնոթին ետեւը ոտքի վրայ սպասող ասպետի մը դառնալով , ըսաւ . — Ինձի նայէ՛ , գնահ վար եւ Գուրնթանայի խաղին մէջ առաջին մրցանակն առնող բանաստեղծն ճո ու վեր բեր :

Երբոր երիտասարդը՝ տեղակալին այս հրամանը կատարելու կ'երթար , Ածցօնէ իւր եղբորորդւոցը դառնալով , կ'ըսէր . — Մինչեւ որ վարն ամբոխը հանգարանելով տեղաւորուի եւ (թօռնէօ) խաղին ներկայացողները պատրաստուին , սա բանաստեղծին բան

մը երգել տանք : Լուքինօս որչափ ալ չի պատասխանելով ականջ չի կախեց անոր զրուցածին , սակայն անոր եղբայրը ձիովանին , որ եպիսկոպոսական եւ գարտինալական աստիճան ունենալովն անգամ , այս տեսակ բաներու շատ հող տանելով կը զուարճանար , կարծեմ ըսաւ , ասկէ քանի մը տարի առաջ Քօլօղա քաղաքը ոսկի մանիշակի մրցանակն առնող Առնայալօս պիտի ըլլայ այս մարդը :

— ձիւտ այն բանաստեղծն 'է , պատասխանեց Ածցօնէ :

Եւ այս ըսելով , սկսաւ տեղակալը անոր հանձարը զրուատել , թէ Առնայալօի երգերը Նոպլիոյ բոլոր իշխանազանց եւ մեծամեծաց միշտ հաճելի եղած են , թէ ինքն ալ անոր երգերէն մէկ քանին սակալին ամբողջ միտքը պահած է : Եւ որովհետեւ Լուքինօ այս տեսակ բաներով ժամանակ անցընէին ու զուարճանալն բրտութիւն եւ անքաղաքավարութիւն կը համարէր , սկսաւ բանաստեղծից եւ միմոսաց վրայ գովաբանութիւններ ընել , ըսելով թէ՛ մեծամեծաց պատիւն ու հաւիտաւը կ'աւելցընէ այս տեսակ մարդկանց հետ բարեկամութիւն ընելը , թէ ասոնց միշտ առատաձեռն գտնուելը՝ ժողովրդեան հաճելի եղած է , եւ թէ Մարքօի այդչափ ամենուն սիրելի ըլլալն ալ՝ այս տեսակ երգարանից պատիւ տալով առատաձեռն ըլլալուն պատճառան էր : Աերջպէս այնչափ երկնցուց , որ գովաբանութիւնը շատաբանութեան փոխուեցաւ :

Ընդհանրապէս մեր պատմութեան տեղի ունեցած տարիներուն մէջ բոլոր Եւրոպա այս տեսակ բանաստեղծներով , վիպասաններով ու միմոսներով լեցուած էր , որոնք բնականապէս պարասպորդ



մարդիկ ըլլալով, վզերնէն քնար մը կախած, քաղքէ քաղք կերթային մեծամեծաց պալատներուն, բերդերուն եւ առանձին հանդիսաւոր խնջոցից մէջ, առատ վարձատրութեամբ վրայասանութիւններ դուտաղեր երգելու :

Այն ատեններն ալ քաղքէ քաղք եւ գեղէ գեղ կանոնաւոր յարաբերութեամբ լուր առնելն զժուար ըլլալուն, ասոնք թէ ընդհանուր քաղաքական եւ թէ մասնաւոր լուրերն ամեն տեղ կը ցրուէին եւ ըստ վարձատրութեան իւրաքանչիւրին, մէկին յաղթանակը երգելով մինչեւ երկկնք կը բարձրացնէին, միւսին ալ մասնաւոր բարձր պատմելով տիղմի մէջ կը թաղէին : Անարդ ու անպատիւ գործիք պատուոյ եւ միանգամայն անպատուութեան . որոնք նաեւ շատ անգամ անօթի մնալով, քծնող շանց պէս մէկէն կտոր մը հաց կ'ուտէին՝ մէկ ուրիշէն ալ կիցահար կը հալածուէին :

Սակայն այս խաբերայից խուճիւրն մէջ քանի մը պատուաւոր անձինք եւ քանի մ'ալ բանաստեղծներ կը գտնուէին . որոնց մէկն ալ բնականապէս Առնալուտո Վիթալէն էր :

Ասիկայ Ածցօնէի հրամանին հնազանդելով շուտ մը զէնքերէն մերկացաւ եւ բանաստեղծի զգեստով տեղակալին օթեակը մտաւ : Վայելուչ թաւիչ բաճկոն մը կռնակը, ձերմակ եւ երկնադոյն բամպակէ հիւսուած գուլպաները ոտքը, կարմիր եւ քառանկիւն գլխարկին վրայ երկու ծոպաւոր ու ձերմակ փետուրներ՝ մինչեւ ձախ կողմի այտը կը ծածկէին . երկայն թուխ եւ չազանակագոյն մաղերով, գրեթէ երեսուն տարեկան եւ քաղցրաբարոյ երիտասարդ մ'էր :

Տեղակալին օթեակը դանուողները, շուտ մը բա-

նաստեղծին բողբոջ շարուեցան . իսկ մօտն եղող օթեակներէն ամենքն ալ ուշադրութեամբ սկսան ներս նայլ : Ուստի Անուրտօ, շուրջը դանուող յարգոյ հանդիսականքն աղէկ մը աչքէ անցնելէն վերջը, Ածցօնէն քաղաքավարութեամբ երգելու նիւթ մը խընդրեց :

Հայրս շատ տարիներ՝ Գաղղիոյ մէջ անցնելուն համար, ըսաւ տեղակալը, լսած եմ իրմէ ֆուքէթօ անուն թափառականի մը վէպքերը, որուն հայրը թէպէտ դարբին մ'է եղեր, բայց ինքը Նարպօնայի կոմս է անուանուեր եւ վերջն ալ Սպանիա վանքի մը մէջ եղբայրութեան աստիճանն առնելով մտեր է : Դուք անչուշտ անոր մանրամասն դէպքերը դիտցած պիտի ըլլաք, վասն զի կարծեմ թէ այն կողմերը բաւական ժամանակ պտըտած էք : Ուստի արդեօք կը բարեհաճիք անոր պատմութիւնը ոտանաւորի վրայ մեզի երգել :

— Ձեզի պէս փառաւոր տեղակալի մը հրամանը կատարելը, ինձի մեծ պատիւ եւ առաջին պարտք կը համարիմ, պատասխանեց Առնալուտօ : Եւ քանի որ ամենքը լուռ եւ ուշադիր կ'սպասէին բանաստեղծին երգաբանութեան սկսելուն, Առնալուտօ ձեռքի քնարը վրէն կախեց եւ թիւերը լարելով սկսաւ քաղցրանուազ եւ ազդու եղանակաւ մը երգել :

Վարդի նման դեղադիտակ  
Որ բողբոջի Մայիս ամսուն,  
Դոլոզացի Ռայիմոնդին՝  
Ֆուքէգոյ ձոտոն է ձեռնասուն .



Քաջաբազուկ՝ յանդուգն՝ արի,  
ձարտար է նա ՚ի քնարի:

Թէ հանդիսից մէջ տեսնես զայն  
Աշտանակեալ ՚ի սէգ նըժոյգ  
Փայլակնացայտ մինչ արշաւէ,  
Նիզակին վրայ յեցեալ զբազուկ,  
Ս. Գէորգն ինքն է կը կարծես  
Որ ջախջախէ զվիշապն վէս:

Բայց թէ լըսես զգայլայլիկ  
Մեղրածորան իր նուագաց,  
Մինչդեռ ուսին վրայ կ'իջնար  
Դեղձանիկ փունջը իրեն հերաց,  
Սիրտ ՚ի զմայլանս յափշտակեալ  
Հրեշտակ կ'ըսես յերկնից իջեալ:

Արիագոյն ասպետք մրցմամբ  
Ձինքն յարքունին կը հրաւիրեն,  
Կոյս մը չիկաց որ զինք տեսնէ  
Ու չի հառաչէ սրտին խորէն:  
Հաւատարիմ ճոռան այն սակայն  
Տէրն ու զտիկին սիրէ միայն:

Սալամանքայ մէկ պարոնին  
Դատրիկն է Նէտտա՝ նազելի,  
Սեւ են յօնքերն ու սեւ հոպուպը  
Այան ըսպիտակ է փրղոսկրի:  
Դոլողայի մէջ չըկայ կոյս  
Քան զայն չընաղ քան զայն գոռու:

Չը խոնարհիր աղջիկն այն խրոխտ  
Սիրահարեալ հէգ պատանւոյն:  
«Ըսպասաւոր դեռ կը հոտի»,  
Կ'ըսէ, հրպարան այն կին սիրուն.  
«Ո՛չ, պարոնի մ'աղջիկն երբէք  
Չնուաստանար մինչեւ յայն հէգ»:

Գիշերն ՚ի բուն իր փանդոսմբ  
Լայ եւ հեծէ խեղճ պատանին,  
Իր նուագաց 'ւ իր ողբերուն  
Նիւթն է միակ այդ անգութ կինն:  
Ի զուր դիմէ նա յասպարէս  
Խորտակելով նետս եւ աշտէս:

Ն.ս կը հիւժի ծաղկի նման  
Որ խոնարհի կաթէ ՚ի վայր  
Այտերն ելակ են որ ծնագին  
Եւ երեսաց դոյն դալկահար:  
Կը չիջանի կամաց կամաց  
Բոցն եռանդուն կապոյտ աչաց:

Մերձ էր ՚ի մահ, երբ իր տիրոջ  
Հասաւ իրեն ձեռն օդնութեան.  
Մէջքը կապեց սուր ասպետի  
Եւ կոմս կարգեց զինք Նարպոնեան:  
Եւ մէկ օրուան մէջ իր սիրւոյն  
Յանձնեց զայն սէգ կինն սիրուն:



### Գ Լ ՈՒ Խ Ժ Ժ Է

Անկարելի է լեզուով բացատրել այս երգաբանութեան իւրաքանչիւրին մտայն մէջ ըրած տպաւորութիւնը : Տեղակայն ելաւ իւր աթոռէն , եւ բանաստեղծին ճակատը համբուրելով՝ շատ մը գովեստներ տալէն վերջը , գիտեմ ըսաւ , որ միայն քու մարգավարութիւնդ իմ խօսքս ոտքի տակ չ'առաւ , անոր համար կ'ուզեմ որ հանդերձ շնորհակալութեամբ , ինձօք առանց արժանաւոր պարգեւ մը ընդունելու՝ իմ հողերէս դուրս չ'ելլաս : Ուստի կը յուսամ թէ սիրով կ'ընդունինս , իբրեւ յիշատակ սիրոյ՝ նժոյգ մը եւ երիվարիկ մը : Վերջը դառնալով իւր զինակիրներէն մէկուն , եւ ընծայած պարգեւացը շուտ պատրաստուելուն հրամանը տալէն վերջը , գաղտնի պատուիրեց որ հարուստ զգեստ մը եւ բաւական ալ ստակ տըրուի բանաստեղծին :

Քարտինայն իւր ցուցամատեն ոսկի եւ գոհարազարդ մատանին հանելով՝ ինքն անձամբ Վիթալէի մասը դրաւ : Լուքինօն ալ պզտիկ չ'իջնալու համար , գեղեցիկ ոսկեզօծ դաշոյն մը ընծայեց , եւ Տետեւաբար նոյն օթեկին մէջ գտնուող ասպետք եւ ասպետուհիք , տիկնայք եւ աղջկունք առանձին մէյ մէկ բան ընծայեցին :

Հիմայ անշուշտ զարմանալի պիտի երևնան մեր ընթերցողին , Վիթալէի ընդունած մեծամեծ եւ հարուստ պարգեւները , մանաւանդ այնպիսի երգա-

բանութեան մը համար , որ թերեւս իրեն աչքին հասարակ տաղաչափութիւն մը կրնայ երեւիլ : Սակայն մենք կրնանք ըսել թէ՛ ուրիշ բան է պաղ արեամբ ձեռքը գիրքով խուցի մը մէջ առանձնացած , տող առ տող եւ բառ առ բառ աչացն առջեւ ուրիշ բան չունենալով՝ բայց եթէ ճերմակ թուղթի մը վրայ սեւ գրերու գծագրութիւնը , եւ տաղաչափութեան մ'իւմաստը քաղելը . ուրիշ բան է նաեւ բանաստեղծական արիւնով դրդեալ , շատ մը ազնուական ասպետաց եւ աղջկանց ակուսիքի մը մէջ՝ քաջ ու գեղեցիկ երիտասարդի մը քնարին ձայնին յարմար ու ներդաշնակ երգաբանութիւն մը զրուցելը :

Բանաստեղծը դուրս ելածին պէս , Ածցօնէ շուտ մը օթեակէն դուրս նայելով , ( Թօսնէօ ) խաղին սկսելուն հրամանը տուաւ :

Արկէսին դռները գոցուելով՝ ժողովրդեան երթեւեկութիւնը կտրած էր . ուստի ձիու վրայ մասնաւոր պաշտօնեայ մը պատնէչին չարս անկիւնը դատ դատ պտըտելով՝ սկսաւ այսպէս բարձրաձայն կանչել .

— «Ունկնդիր եղիք , ունկնդիր եղիք , ունկնդիր եղիք . Հուովմայեցուց Լուգովիկոս թաղաւորին յարգոյսպատիւ Ածցօնէ տեղակալին հրամանացը :

«Ո՛վ որ այս խաղին տեւելու միջոցը՝ պատնէչէն ներս մտնալ համարձակի եւ պատերազմողաց մէկուն անձամբ կամ խօսքով եւ կամ ձեռնացի նշանով մը , յաղթելուն եւ կամ յաղթուելուն ձեռնտուութիւն ընէ , այնպիսին թէ ասպետ ըլլայ եւ թէ զինակիր , երիվարը զէնքերովը միատեղ պիտի կորսնցնէ , եթէ արհեստաւոր մ'է՛ ականջը , եթէ ծառայ մ'է՛ ձեռքը , եւ եթէ անպիտան աւազակ մը՝ գլուխը » :



Պաշտօնէին ձայնը կարածին պէս, երկայն մե-  
տաքսէ զգեստներով վեց հոգի իբրեւ թօռնէօ խաղին  
դատաւոր, տեղակալին օթեկին մօտ խցիկ մը մտնա-  
լով նստան, եւ նոյն խուցին առջեւն ալ ոսկեթել ու  
քառանկիւնի դրօշակ մը բերին տնկեցին:

Այնչափ խուռն բազմութեան մէջ, ամենապղ-  
տիկ ձայն մ'ալ չի լսուելով ամեն մարդ բերդերուն,  
օթեակներուն եւ տանց երդերու վրայ ելած կ'սպա-  
սէր: Իսկ ամբողին մնացած մասը՝ պատնէշին բոլոր-  
տիքը խռնած էր, եւ ամենուն աչքը կրկէսին վարի  
ծայրը դանուռը չորս հատ մեծ եւ փառաւոր վրան-  
ներուն վրայ յառած էր, որոնց երկուքը ճերմակ եւ  
երկուքն ալ կարմիր գունով էին:

Փողը հնչելուն պէս, երկու ճերմակ վրաններէն  
տասն երկու ասպետ ելան, ճերմակ վերարկուներ  
կռնակնին եւ ճերմակ ու երկայն փետուրներ սաղա-  
ւարտներնուն ճակատը, եւ կանաչ գոյնով զգեստա-  
ւորուած նոյնչափ ալ զինակիր անոնց ետեւէն կ'ու-  
ղային: Իսկ դիմացի երկու կարմիր վրաններէն ալ  
տասներկու ասպետ ելան, որոնց վերարկուներն ու  
ճակատներնուն փետուները կարմիր էին, եւ իրենց  
թիւին չափ ալ զինակիրք ունէին, գեղին գոյնով  
զգեստներ հագած էին:

Ճերմակներուն գունդին գլուխը՝ Օգօրինօն էր .  
իսկ կարմիրներունը՝ Սաքրամօրօ անուամբ Միլանցի  
քաջ երիտասարդ մը: Երկու լէզէմները՝ որք իրա-  
րու դէմ յարձակելով պիտի պատերազմէին, ծանր  
քայլերով սկսան իրարու դէմ յառաջ դալ. եւ երբ որ  
հասան տեղակալին օթեակին դիմացը, ասպետներն՝  
ամենքը միատեղ մէկ կարգի վրայ եկան եւ նիզակ-

ներնին դէպ 'ի գետին ծռելով, բարեւեցին զինքը:

Ասպետաց ամենուն երիվարն ալ ամենաճորս հա-  
րըտութեամբ զարդարուած ըլլալէն զատ, ճակատ-  
ներնուն մէջտեղն երկաթէ կոտոշ մը եւ կուրծքեր-  
նէն վար քանի մը կարգ մանր բոժոժներ ունէին: Իւ-  
րաքանչիւր ասպետ՝ իւր վահանին վրայ քանի մը գոյ-  
նով այլ եւ այլ ձևեր դժագրած էր, որոնք իրենց ըն-  
տանեաց նախկին նշաններն էին. որպէս զի պատե-  
րազմին մէջ կարենան ըստ այնմ իրարմէ զանազանիլ:  
Ասկէ զատ նաեւ իւրաքանչիւր ասպետ, իր ուզած  
գոյնովը, մէկ կողմէն վար երկայն շար մը ձգած էր,  
եւ ո՛վ որ այս շարը «Նուէր սիրուհույ» ըսուած ձե-  
ւովը, այսինքն շարին մէկ ծայրը մէջքը եւ միւսն ալ  
դրօշակի պէս հովին տուած ըլլար, ըստ ասպետա-  
կան օրինաց, սիրուհի ունենալուն նշանակ էր: Որով  
եւ ասպետք այս շարին գաղափարն աչաց առջեւ ու-  
նենալով, պէտք էին պատերազմի եւ կրամ ո՛ր եւ է դոր-  
ծի մը ձեռնարկութենէն առաջ, յիշել իրենց սիրած  
աղջիկն, ու սիրտ առնելով նոյն ձեռնարկութեան մէ-  
ջէն բարեյաջող եւ քաջայաղթ ելլալու ջանք ընել:

Կրնանք ըսել որ ասպետք առ հասարակ մէյմէկ  
ոիրահարութեան օրինակներ էին, եւ որ սիրահարած  
չըլլար՝ պէտք էր սիրահարութիւն կեղծել: Չ'ամս դի-  
անկարելի էր որ ամեն ասպետ միշտ եւ շարունակ սի-  
րահարած մետր, եւս առաւել անկարելի՛ որ ամեն  
ասպետ այ իւր սիրուհին բոլորովին իրեն համափա-  
կարենալ զանայ: Ասկայն ինչպէս որ նոյն ատենները  
ասպետի մը սիրահարեալ չըլլալը մեծ կոպտութիւն,  
մանաւանդ թէ՛ կրնամ ըսել անկրօնութիւն կը հա-  
մարուէր, նոյնպէս ալ սիրահարեալ չեղողն 'ի հարկէ



սիրահարածի պէս պէտք էր վարուել, Իրեն մէջքը շար պատելու սիրուհի չունեցող ասպետ մը, ինք անձամբ շարը մէջքը կը պատէր, որպէս զի հետաքրքրաց աչքը կարենայ խաբել :

Ասպետաց մէջ այս սիրահարութեան խելագարութիւնը, մանաւանդ թէ ակտն ու կատաղութիւնը՝ այն աստիճանի հասած էր, որ գրեթէ ամեն տեղ կը լսուէր տխմարի մը՝ երիվարովը միատեղ, երկաթապատ ու զրահակուռ, գեղէ գեղ եւ քաղքէ քաղաք երթալով՝ իրեն պատահող այն ամեն ասպետները, սր միայն իր սիրուհոյն ամենէն գեղեցիկ եւ առաքինի ըլլալը չէին ուզեր խոստովանիլ, մենամարտութեան հրաւիրելը : Եւ այս կերպով, իրեն պէս շատ անմիտներ ձիւն վար ձգելով կըսպաններ, մինչեւ որ անոնցմէ մէկն ալ թուրի եւ կամ նիզակի մը անաւոր հարուածովը զինքը գետինը գլորելով անդիի աշխարհքը դրկէր :

Սակայն մենք մեր նպատակէն չը շեղելով, դառնանք մեր պատմութիւնը շարունակելու : Երկու լէգէտոնները մէկ կարգի վրայ գալով տեղակալը բարեւելէն վերջը, մէկ մէկէ բաժնուեցան, եւ գունդին մէկն աջ, եւ միւսն ալ ձախ կողմը՝ դէպ 'ի կրկէսին երկու հակառակ ծայրերը հեռացան : Վերջը կէս ճամբան երկու գունդերը դարձեալ իրարու դէմ ճակատ առ ճակատ եկան եւ զիրար բարեւելով անցան Քաջ երիվարները կատաղաբար կը շնչէին եւ կարծես թէ իրենք ալ կուտելու անհամբեր՝ սանձերնուն արծակմանը կ'սպասէին :

Ասպետները՝ սաղաւարտներնուն զիմակը բացած եւ նիզակինն ալ վեր առած՝ զոյգ զոյգ իրարու մօտ

եւ ետեւէ ետեւ իրենց գնդապետին կը հետեւէին : Սաղաւարտները, զրահները, ոսկեզօծ եւ արծաթազօծ զէնքերը, կէս օրուան արեգական պայծառ ճառագայթներէն կը ցոլային . եւ երկու գունդերուն յառաջացած միջոցը՝ երիվարաց զարդարուն հագուստները, ասպետաց գլխուն ճերմակ ու կարմիր փետուրներն ու դրօշակները՝ օդուն մէջ կը ծածանէին :

Մեր Լուբօին բարեկամ զինավաճառն ալ տեղակալին դալը տեսածին պէս, խանութը իր գործաւորներէն մէկուն ձգելով՝ վաղըր եկեր էր կրկէսին ձախ կողմի երկու ճերմակ վրաններուն քովը, ուր իր կինն ալ արդէն իրեն կըսպասէր :

Հոն նաեւ զինավաճառին գործաւորներէն վեց հողի՝ իրեն համար արդէն չափաւոր տեղ մը պահած ըլլալուն համար, անոր փետրաւոր գլխարկը հեռուէն տեսածնուն պէս, շուտ մը տեղ բացին եւ մինչեւ կրկէսին պատնէշը առաջ անցընելով, զինավաճառն իր կնոջը քով տեղաւորեցին :

Նոյն միջոցին Օդօրինօ առոնց առջեւէն անցնելով, զինավաճառը իւր գործաւորացը, — նայէ ըսու մէկուն՝ Օդօրինօն ցուցնելով, միթէ ասոր զրահները ձեռնոցի պէս իրեն ամենայարմար չէն եկած : Սակայն դեռ գործաւորը չը պատասխանած, անդիէն զինավաճառին կինը խօսքը կտրեց եւ ամուսնոյն թեւէն բռնելով, — ձիաքօմօլօ, հարցուց, սա առաջին կարգին մէջի երրորդ ասպետը, որ մէկ աչքը կապած ըլլալովն անգամ, քնչպէս կրցեր է արդեօք համարձակիլ, այսպիսի զինամարտութեան մը մտնելու :

— Անոր աչքերը քեզմէ եւ ինձմէ լաւ կը տեսնան պատասխանեց զինավաճառը . . . ես զայն կը ճանչ-



նամ, անոր Պրօնցիս Բայիմօ կ'ըսեն, եւ այն կապած աչքին պատմութիւնը . . . կեցիր քեզի համառօտիւ մը պատմեմ: Այս Բայիմօն ժամանակաւ կին մը կը սիրէր, սակայն կինը զինքն ամենեւին չը սիրելուն համար, Բայիմօ շատ անգամ քաղցրութեամբ սէրն անոր յայտնելէն ետեւ, կինը օր մը իրեն ոչինչ մարդ մը ըլլալը երեսը տալով, ալ իրեն պէս յիմարի մը տանը մէջ պէտք չունենալը պարզապէս կը յայտնէ ու կը վռնօտէ զինքը: Խեղճին ճարը հատած՝ օր մը կը բոր նոյն կինը իր պարտէզին մէջ կը պտըտէր, Բայիմօ յանկարծ անոր առջեւ ծունկի վրայ գալով, կնոջ մէկ ձեռքը կը բռնէ, եւ նոյն ձեռքով իր աչքին մէկը դոցել տալով, կ'երգնու եւ կ'առաջադրէ չի տեսնուի իրեն հետ եւ չի բանալ այն աչքը, մինչեւ որ երեք ասպետ երկվարէն վար չի գլորէ:

— Օհ, թնչ կանոնաւոր եւ խելացի երգում, հառաչեց զինավաճառին կինը. սակայն կը տեսնեմ որ այդ երգումը տակաւին կը պահէ:

— Ի հարկէ թէ կը պահէ, եւ այս առաջադրութենէն ի վեր Բայիմօ ինքզինքը մարդու մը կարգ անցած կարծելով, ասդիս անգին մեծ գործերու ձեռնարկել ուղեւուն պատճառաւ շատ անգամներ ձիէն վար գլորած է: Որով անգամ մը ուսը, անգամ մը սրունքը եւ անգամ մ'ալ մէջքին ոսկրը կտորելով սուս բերած են զինքը: Սակայն անկէ մինչեւ հիմայ երեք ու կէս տարուան մէջ՝ հազիւ կարենալով ինք ալ երկու ասպետ ձիէն վար գլորել, այս անգամ ալ եկեր է որ՝ եթէ յոջողի հոս ալ ասպետ մը գլորելու ձիէն վար, անմիջապէս կապած աչքը բանալով՝ այն սիրած կնոջը աչօք բօցօք պիտի ներկայանայ:

Այս միջոցիս մեր խօսակցողաց առջեւէն կարմիրներուն դունդը կ'անցնէր: Ատոնց կ'առաջնորդէր Սաքրամօրօ, քաջ երիտասարդ մը, սաղաւարտին մէջէն կ'երեւնար արեգակէն այրած եւ կատաղի աչքերով դէմք մը, եւ ձախ երեսին վրայ, չրթունքներէն մինչեւ կրակը, լայն թուրի հարուածի մը սպիռունք: Կուրծքը եւ ուսերը լայն, տեսքով անարկու, սեւ երկվարի մը վրայ հեծած՝ կը տեսնուէր թէ խիստ շատ վտանգաւոր՝ ձեռնարկութեանց մէջ գանուած մարդ մ'էր:

— Նայէ, նայէ, ըսելով զինավաճառը կը ցունէր իւր կնոջը. ասիկայ Ալէմանեայի, Գաղղիայի, Պաղեստինեւ պատերազմողաց առաջին քաջերէն մէկնէ:

— Ինձի ձերմակներուն զօրապետը աւելի հաճելի կերեւայ, պատասխանեց կինը, ան ալ ասկէ վար չը մնալու չափ թէ քաջ եւ թէ աւելի քրիստոնէի մը կերպարանք ունի:

— Ան ալ շատ բարի երիտասարդ մ'է, պատասխանեց ամուսինը, կը ճանչնամ, իմ խանութէս առուտուր կրնէ. սակայն կարծեմ թէ այս Սաքրամօրօն կրծելը՝ իրեն ակռաներուն քիչ մը կարծր պիտի գայ:

— Ինչո՞ւ համար, սիսաւ դարձեալ հարցնել կ'ունը, եւ ցուցնելով ձերմակներուն դունդը, որ չըջաննին լմնցնելով ճիշտ վրաններնուն առջին հասած կարգաւ կեցեր էին. այդ երկուքին վաճանները միօրինակ եւ առանց մամուտոր նշանի պարզ գոյնով են:

— Անիկայ կը նշանակէ թէ այդ երկուքը տակաւին նոր ասպետներ են, եւ մինչեւ որ ասպետ ընտրուած օրերնէն տարի մը չ'անցնի եւ քաջութեան



գործ մը չը կարենան ցուցնել, իրենց վահաններն այդ վիճակէն չը փոխուելով՝ մի եւ նոյն՝ գոյնով կը մնան : Սակայն լուռ կեցիր, կարծեմ թէ հիմայ պիտի սկսի :

Եւ յիշաւի փողը հնչելուն պէս, ճակատ առ ճակատ կրկէսին երկու ծայրը շարուած ասպետները . ամենքը միատեղ սաղաւարտներնուն դիմակը վարաւին . փողին երկրորդ անգամ հնչելուն, նիզակներնին տեղերնին դրին . եւ երրորդ անգամուն՝ գունդին մէկը «Ս. Ամբոստիոս եւ Օդօրինօ», եւ միւսն ալ «Ս. Գէորգ եւ Սաքրամօրօ» միաբերան կանչելով՝ երկվարները մտրակեցին . եւ բոլոր ուժովն իրարու դէմ յարձակեցան :

Երկու գունդերուն կէս ճամբան մէկմէկու պատահելով իրարու տուած անխնայ հարուածներուն ձայնը, հագիւ թէ սաստիկ մրկի մը որոտալուն կրնար բաղդատուիլ : Վահաններ եւ նիզակներ խորտակեցան, ասպետք ձիերնէն վար գլորեցան . երկվարք անտէր մնալով՝ սանձերնին վզերնուն վրայ սկսան արձակ համարձակ դաշտին մէջ գլորար կիցահարելով հալածել : Խնդութեան, երկիւղի, հրամայելու եւ զիրար խրախուսելու ձայներ, խառնակութիւն, շշուէն շողալակ եւ խիտ ու թանձր փոշի մը՝ որ մինչեւ երկինք բարձրանալով ամեն առարկայ աչքէ կը ծածկէր՝ ամենքն իրար խառնուեցան :

Ասպետներն, այս առաջին յարձակմանէն վերջը, նիզակնին նետելով, (Մարրա) ըսուած անաւոր թուրերնին ձեռք առին : Ատնք՝ հաստատուն, երկայն, ծանր, եւ վերջապէս այնպիսի թուրեր էին, որ եթէ մէկն՝ այն յաղթանդամ ասպետաց ձեռքէն՝ գլխուն հարուած մ'ուտելու ըլլար, նոյնժամայն սաղաւարար

գլխոյր միատեղ յերկուս ճեղքուիլը բան մը չէր :

Կրկէսին մասնաւոր պաշտօնեաները ամեն բան կարգի դնելով, կը կանչէին . — Ասպետք, ասպետք, յիչեցէք ձեր նախնիքը եւ ձեր արիւնը, եւ կարգերնէդ դուրս մի ելլաք :

Պատերազմը ժամի մը չափ անորոշ բաղդով տուեց, սակայն վերջապէս ճերմակներուն նուաճիլը յայտնուեցաւ : Զորս հողի ճերմակներէն շարաշար վիրաւորուելով, վրանները տարուեցան, մնացածներն ալ կարմիրներէն հալածուելով սկսան ասդիս անդին փախչիլ : Այնպէս որ տեղակալը տեսնալով որ պատերազմը եթէ դեռ երկնայ, թէ՛ վտանգաւոր եւ թէ՛ արիւնահեղ պիտի ըլլայ, եւ մինչդեռ մարտին դադրելուն հրաման տալու վրայ էր, յանկարծ Օդօրինօ յիչելով զճրանուհին եւ Լուբօի հետ իրեն զրկած քանի մը խօսքերը, ամօթէն վերջին աստիճան զայրանալով, ձեռքի վահանը գլխէն վեր դէպ 'ի կռնակը նետեց, եւ յուսահատաբար իր անաւոր թուրը երկու ձեռքով բռնած՝ մտրակեց երկվարը եւ բոլոր ուժովը յարձակեցաւ կարմիրներուն դնդապետին վրայ, կանչելով . — Զուռչացիր, Սաքրամօրօ :

Յարձակողը որչափ ալ նոյնժամայն վահանաւը գլուխը ծածկելով՝ ձեռքի թուրը դէպ Օդօրինօի կուրծքը մղեց, սակայն նա՝ թշնամուոյն գլխուն տալու հարուածն 'ի դերեւ երթալիքը հասկընալով, թուրը օդին մէջ խաղցընելէն յետոյ՝ վահանին տակէն անոր ձախ կղակին այսպիսի ուժով հարուած մ'իջեցուց, որ գրեթէ չնչասպառ՝ մէկէն միւս կողմը երկվարէն վար գլորեց . ուստի զանի ալ առին կարմիրներուն վրանը տարին :



Այն ատեն Օղորինօ շունչ առած , սկսաւ կանչել . — Ս. Ամբրոսիոս , Ս. Ամբրոսիոս : Այս ձայնը յուսահատեալներուն սիրտ տարով , յաղթողները սկսան ետ քաշուիլ եւ փախչիլ . մեր երիտասարդը առիւծի պէս մռնչելով զարմանալի քաջութեամբ ահաւոր հարուածներ կը տեղար կարմիրներուն վրայ . նոյնպէս ալ իր ընկերները իրենց վերջին ճիգը թափելով , կը հետեւէին Օղորինօյի :

Վայրկեանի մը մէջ՝ բաղդը հակառակ կողմը դառնալով , կարմիրներէն երկու հոգի ալ ինկան : Իսկ մնացածները գնդապետ շունենալով , թշնամիներէն հալածուած յուսահատաբար չորս կողմը փախչելու տեղ կը փնտռէին : Այս տեսածին պէս , տեղեկալը ձեռքովը նշան տուաւ , փողը հնչեց եւ կռիւը դադրեցաւ :

Ժողովուրդը մէկ կազմանէ տակաւին կը գոչէր , կը ծափահարէր , թաշկինակ ու գլխարկ կը շարժէր օդուն մէջ . իսկ միւս կողմանէ ալ եօթը պաշտօնեայ վաղելով , կարմիրներուն գունդին ասպետներէն մէկը , նիզակաց կառորներով կը ծեծէին կրկեսէն գուրս վանտելու համար , վասն զի նա՝ փողը հնչածին պէս պատեաղմելէն չէր դադրած :

Ասպետներէն ոտքի վրայ կանգնելու կարող եղողները , ամենքն ալ դատաւորաց խուցին առջեւը ներկայացան : Եւ առանձինն յականէ կանչուելով , ըստ արդար վկայութեան (թօռնէօի) պաշածոնէից եւ զօրականաց , ամենքնուն ալ ըստ կանոնի պատերազմող , քաջ եւ օրինաւոր ասպետներ ըլլալին հաստատուեցաւ : Յետոյ վրաններուն մէջ դանուող եօթը վիրաւոր եւ երեք մեռեալ ասպետաց անուններն

ալ յիշուելով , անոնք ալ նոյնպէս օրինաւոր եւ քաջ ասպետաց կարգն արձանագրուեցան :

Սակայն այս վիրաւորելոց մէջ՝ ամենէն խեղճը մեր միահեայ Պրօնցին Քայիմօ դիւցազն էր : Առիկայ առաջին յարձակման մէջ , իւր ընդդիմամարտները աւելի աղէկ տեսնելու համար՝ սաղաւարտին դիմակը քիչ մը բաց ձգած էր . եկու տես որ՝ սատանան բան չունի , ասպետաց մէկուն նիզակին ծայրն ասոր դիմակին պատահելով՝ չի կապած աչքը վիրաւորեց : Ուստի , զիչեր բարի , մեր դիւցազնը խաւարի մէջ մնալով երկվարէն կիցայ , եւ զինքն ալ կառնեն վրանը կը տանին : Սակայն զարմանալին ան էր որ հոն դարձեալ կապած աչքը չուղելով քակել գործը դատաւորաց իմաց տրուեցաւ . անոնք ալ երկար քննութենէ վերջը՝ չի կարենալով այս դժուարակնճիուն խնդրոյն մէջէն ելլալ , քաղքին ընդհանուր ժողովոյն դիմեցին . ան ալ յետ երկար հարցուփորձի եւ վէճերու , վճռեց որ Քայիմօ ալ երդումէն ազատ ըլլալով կրնայ այդ կապած աչքը բանալ : Մեր երկչոտ սիրահարը , վերջապէս հանեց աչքին վրայի կապը եւ տարիէ վերջը նորէն աշխարհք գալով արեգական լոյսը կրցաւ միւս անգամ վայելել : Բայց այդ մնացած մէկ աչքովն ալ իր երդումը պահելու մտքով , Քայիմօ դարձեալ երրորդ յաղթանակին կ'սպասէր , սիրած կնոջը արժանապէս ներկայանալու կարող ըլլալու համար :

Աստուծոյ հրամանաւ քիչ ժամանակէն այն փափագին ալ հասաւ . այսինքն երեք ասպետաց յաղթելով ձիէն վար գլորեց : Ի՛նչ անպատու մութխութիւն . . . սակայն կրնամ գուշակուիլ արդեօք այն անողորմ կնոջ՝ Քայիմօին ինչ պատասխանելը . — Որով-



հետեւ խոստումը երկու ողջ աչքով ինձի ներկայա-  
նալ էր, եւ հիւսայ մէկը կորսնցուցեր եւ, դնա՛ ու-  
րեմն այսուհետեւ եւ մէկ մ'ալ ինձի մ'երեւնար ը-  
սեկով խեղճը ճամբեր է :

Սակայն կարծեմ թէ մեր պատմութենէն հեռա-  
ցանք : Գառնանք ուրեմն նորէն կրկէսը : Յաղթանա-  
կը ճերմակներուն գունդին կողմն ըլլալը վաւերացաւ  
ոչ միայն դատարաններուն, այլ եւ ամեն հոն գտնը-  
ւող դորսվարներուն, ասպետներուն եւ ասպետու-  
հներուն քուէներովը, եւ Օգօրիսոյի ամենէն քաջ  
գանուէրը հաստատուելով, իբրեւ առաջին մրցանակ  
ճերմակ երիվար մը ամենայն զարդարանքովը եւ ար-  
ծաթէ սաղաւարտով վաճան մը անոր ընծայելով, վեր-  
ջացաւ նոյն օրուան փառաւոր հանդէան ալ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը .

Լիճնդալուց փաստաբանը Լօրէնցօ կարպանեա-  
թէ, նոյն զիշերը Թօռնէօի մանրամասն լուրերը Տէլ  
Պալցօ կոմսին պալատը տարաւ : Երանուհի՛ որ առ-  
ջի զիշերուան կրած ահուղողէն հիւանդացած կը հե-  
ծէր, Օգօրիսոյի համար համար հազար ու մէկ վտան-  
գաւոր կասկածներու դացած ըլլալով, ամենայն ու-  
շազրութեամբ ականջ կը դնէր փաստաբանին զրու-  
ցածներուն . եւ ինչպէս անուշահոտ վարդը, որ զի-  
շերուան օղուն տաք ու թանձր գոլորշիներէն ծան-  
րանալով թոռոմելէն ետեւ, արշալոյսին քաղցր ու

զովարար ցողէն սթափելով գլուխը վեր կաննէ, նոյն-  
պէս ալ Երանուհի կարծեւ թէ սակաւ առ սակաւ  
նոր կեանք մը կստանար : Մանաւանդ երբոր լսեց թէ  
երիտասարդը, իւր յաղթանակէն վերջը՝ մէջքը կա-  
պած երկնադոյն շարք մեծաւ յարգանքով համարեր  
է, իբրեւ թէ նոյն շարն իր մէջքը պատող սիրուհ-  
ւոյն անմոռանալի յիշատակին զօրութեամբն այն փառ-  
քին հասած ըլլար . Երանուհւոյն սիրան արեկոծելով  
աչքերն լեցուեցան, որով եւ ստիպուեցաւ ժամանակ  
մը գտնուած տեղէն դուրս ելլալ : Ակրջը դարձեալ  
նոյն սրանը դառնալով, այն զիշերը դրեթէ հազար  
անգամէն աւելի իւր սիրելւոյն անունը ամենուն բեր-  
նէն լսեց, եւ ամեն անգամուն ալ ինքնիրեն կըսէր .  
— այդ անուան տէրն իմն է . ու սխործելի հայտնու-  
թիւն մը սիրտը կը գրաւէր :

Երանուհի երբեմն կը մտածէր թէ ինչպիսի դժ-  
ուարին վիճակի մը մէջ կը գտնուի . կը մտածէր՝ մէկ  
մ'ալ իւր սիրելին չի տեսնալու համար հօրը առած  
սպառնալից վճռոյն վրայ, եւ միտքը Մարքօյի կը տա-  
նէր : Սակայն այս աչաց ատջիւր ներկայացող նկար-  
ներուն բոլորն ալ արեւակաւն տաքութենէն հալտաց  
մէջ հալող ձեանց պէս կը հալէին, կ'սպառէին եւ  
կ'անհետանային, քանի որ կը յիշէր իր սրբին մէջ ծա-  
գած նոր ուրախութիւնը թէ՛ Օգօրիսօ յաղթանակեր է :

Արդարեւ Երանուհի երջանիկ էր, իր սէրն այն-  
պիսի փառաց արժանի եզող անձի մը տուած ըլլա-  
լուն . որով եւ սիրան ալ մեծամեծ յոյսերու նուիրե-  
լով, սպալան բոլոր իրեն կը խնայար եւ իր երազած  
խորհուրդներն ալ կը թաղուէր իր մասցը մէջ հեշտալի  
ցնորքներ կը կաղմէին :



Նոյն դիշերը կոմսին պալատն եկող ասպետը եւ ասպետուհիք, իրենց կրկնապատիկ դարմանքը կը յայտնէին թէ՛ ինչո՞ւ կոմսը թօռնէօին ներկայ չէր զըտնուած եւ պատճառը կը հարցընէին : Քիչ մը վերջն ալ խօսակցութիւնը խաղին մէջ պատահած մասնաւոր դէպքերուն վրայ գալով, Քայմօի աչքին պատմութիւնն ալ մէջ բերուեցաւ : Բայց որչափ ալ ուրիշ անդամներ Տէլ Պալցօ կոմսը միշտ առաջինը կ'ըլլար իւր հիւրերը մեծարելով անոնցմէ շատ աւելի ճոռոմարանելու եւ ուրախանալու մասին, այսու ամենայնիւ նոյն օրերն ընդհակառակն ախուր վիճակ մ'ունէր : Կարծես թէ արեգակն ու լուսինը իրար զարնուելով աշխարհք միայն իր գլխուն կործանած էր : Մարքօյի դէմքն աչքին առջեւէն չէր երթար եւ անոր վերջի խօսքերն ալ տակաւին ականջը կը հնչէին :

Իսկ Օդօրինօյի ըրած յաղթանակին լուրերը, ամենեւին աղջկանը սրտին մէջ ըրած ազդեցութիւնը չի կրցան ընել :

Սակայն՝ կամաց կամաց խելքը գլուխը գտլով, իր բարեկամներէն ծեր Պարոն մը զինքն առանձին խոց մը տարաւ, եւ նոյն օրը կայսերական տեղակալին թօռնէօ խաղին ժամանակը քանի մ'անդամ զինքը հարցընէին իրեն իմացուց :

Տեսած ունիք, ընթերցողք, վատոյժ եւ երկչոտ զրաստ մը, գլուխն ու ականջները կախած, որ սիրով զարնելովը կամ զրդելովը տեղէն շարժելիք չունի, մինչեւ որ օտար մէկը երկու կից տալուն պէս, կարծես թէ անասունը կ'զգաստանայ ու շուտ մը չորս ոտիցը վրայ կը կանգնի, որով կը հասկըցուի թէ կիցերն անոր ամենէն զգացուն կողմը հանդիպեր են :

անա նոյնպէս ալ մեր կոմսը՝ տեղակալին անունը լըսածին պէս,

— Իրաւ կ'ըսես թէ զիս վնասուեց, կը հարցընէր կասկածոտ կերպով մը :

— Այո, զքեզ վնասուեց :

— Եւ ինչո՞ւ . . . ինչ բանի համար . . .

— Հարցուց թէ՛ ինչո՞ւ թօռնէօի հանդիսին չէիր գտնուեր :

— Արեմն պէտք է որ վաղն անպատճառ (ճիստարա) խաղին ներկայ գտնուիմ : Ճիստարային օրը վաղը չէ :

— Այո, թօռնէօի երկրորդ օրը ճիստարայի հանդէսը պիտի կատարուի, եւ աղէկ կըլլայ որ դուն ալ հոն գտնուիս : Արպէս զի չի կարծուի թէ . . . վասն զի . . . կը հասկնամ . . . զքեզ որ Մարքօյի այնչափ բարեկամ գիտեն, այս կերպով ծանր վարմունքէդ կըրնայ կարծուիլ . . . ինչ գիտնամ, թէ տեղակալին հետ բարեկամութիւն չունիս :

— Ի՞նչպէս, ի՞նչպէս :

— Չարմանալի բան, ամենքը դիտեն թէ Մարքօյի եւ անոր եղբորորդւայն եւ տեղակալին մէջ հակիրութիւն մը ծագած է :

— Ես այնպիսի հակահրութիւն կամ համակրութիւն մը չեմ գիտեր . ես ամենուն հետ բարեկամ եմ եւ ամենուն հետ ալ խաղաղութեամբ կուղեմ վարուիլ :

— Ես ալ ճիշտ անոր համար կուղէի ըսել՝ որ վաղն անպատճառ հոն գտնուիք, որովհետեւ վաղուան հանդէսի ալ ՚ի պատիւ Աճոսնէի է . . . եւ թէ որ դարձեալ միտքն իյնալով զքեզ հարցնէ ու չը գտնայ :



— Ո՛հ , պիտի դամ , այո՛ր անպատճառ պիտի դամ :  
 Եւ տււած խօսքին վրայ կենալով , երկրորդ օ-  
 րը բռաւօրոտն կանուխ՝ տակաւին կրկէսն անդամ  
 չի պատրաստուած եւ հանդիսին համար ընտրուած առ-  
 պետներն ալ տակաւին չեկած , Տէլ Պալցօ կոմսն իւր  
 աղջկանը եւ շատ մը ուրիշ աղնուուհեաց եւ ծառա-  
 վից հետ՝ ճիշտ տեղակալին օթեկին քովի խցիկը մըտ-  
 նալով տեղաւորուեցաւ :

Երբոր տեղակալն իր երկու եղբօրորդւոցը հետ  
 եկան եւ իրենց աթոռները բազմելով՝ սկսան չորս  
 բոլորն եղող օթեկաց մէջի մեծամեծներուն եւ աղ-  
 նուականներուն բարեւանքը սիրով ընդունիլ , կոմսն  
 ալ ամենուն հետ միպտեղ ոտքի վրայ կեցած գլուխը  
 բանալով , ծռելով ծռմրկելով կուզէր տեղակալը բա-  
 րեւել . սակայն եւ ոչ մէկը աչքը անոր վրան դար-  
 ձընել չուզեց : Երբոր ամենքը տեղերնին նստան , մեր  
 կոմսը՝ կերպով մը իր ներկաց դասուին ամենուն ի-  
 մացնելու մտքով , դարձեալ դիտարկը կը բանար , աչ-  
 քերը չորս բոլորը կը պտրտցնէր , կամաւ բարձրաձայն  
 կը խօսէր , սակայն դարձեալ զինքն իբրեւ թէ վարը  
 կրկէսին մէջ հաչող շանց կարգը սեպելով , եւ ոչ  
 մէկն իրեն ականջ կախեց եւ կամ մասնաւոր տեսու-  
 թիւն մ'ըրաւ իրեն հետ . որուն վերջապէս կոմսը  
 խիստ նեղանալով բարկութիւնը բորբօքեցաւ :

Ճիօսարան սկսաւ . . . դուրսէն շատ ասպեաներ՝  
 խաղին ներկայացան եւ բուն խաղին համար ընտրե-  
 ուած ասպեաններուն , մասնաւոր տեղերէ կախուած  
 վահաններուն դաշելով՝ զիրենք վրաններէն դուրս  
 խաղի հրաւիրեցին : Շատ կերպերով իրարու դէմ յար-  
 ձակեցան ու արշաւեցին , սակայն մասնաւոր նշանա-

կելու դէպք մը չը պատահեցաւ : Որը նիղակը պարա-  
 պի դարկաւ , որը աջ կամ ձախ կողմը , որն ալ կրու-  
 նակին վրայ ծռելով աղատեցան : Աւերջապէս ընդ ա-  
 մենը միայն երկու նիզակ կրցան խորտակել :

Միայն Օդօրինոյի վահանին դաշող չեղաւ . վա-  
 սըն զի անոր առջի օրուան ըրած յաղթանակին վրայ՝  
 մէկը չէր կրնար համարձակիլ իրեն հետ մարտնչելու :

Խաղին սկսելը՝ երկու ժամէն աւելի եղած էր .  
 սակայն հանդէսն այնքան պաղ կերպով առաջ կեր-  
 թար , որ արդէն ներկայ գտնուողները սկսեց էին  
 տրանջալ ու մրմալ . եւ ասպետաց դէմ անասնոց  
 պէս կանչել թէ , զիրենք գո՛հ ընելու համար չեն ու-  
 ղեր դո՛սէ վայրկեան մը անձեռնին վտանգի մէջ դնե-  
 լով խաղին դանդաղ ու ցուրտ վիճակին ետանդ մը  
 տալ : Ընդհանրապէս ժողովուրդն այսպէս է . որքան  
 ալ հլու եւ խաղաղ ըլլայ , երբոր իր հանգստութիւ-  
 նը վայրկեան մը պարսպ տեղ աւրելով զուարճութե-  
 նէն ետ մնայ , անմիջապէս սլխարն արջ կը դառնայ :

Ուստի այդ կատաղի արջը հանդարտեցնելու հա-  
 մար , շուտ մը մասնաւոր պաշտօնեաներ ելլալով ,  
 սկսան կանչել թէ՛ ճիօսարան վերջացնելով Պիկօրատօ  
 խաղը պիտի սկսի : (Պիկօրատօ ըսուած խաղն էր բուն  
 փաչտաչէն բերդի մը վրայ յարձակելը) . նոյն ժամա-  
 նակին ընտրեալ զուարճութեանց մէկն էր այս : Սա-  
 կայն ճիօստբային դադրելուն հրամանը տրուելուն  
 մօտ , յանկարծ կրկէսին վարի ծայրի ամատառին մէջէն  
 փողի մը ձայնը լսուեցաւ : Հանդիսակիցք ծափահա-  
 րելով ուղեցին որ այս նոր ասպետին ալ ներկայանա-  
 լուն սպասուի , եւ քիչ մը ատեն լուռթիւրը պատե-  
 լէն վերջը , աղնիւ պողպատէ գէնքերով զինուած ,



երեսը գոց , առանց մասնաւոր ասպետական նշանի եւ ոչ իսկ վահանին վրայ յատուկ գոյն մը ունենալու , եւ բողբոջին սեւ երկվարի մը վրայ հեծած մէկը՝ կրկէսէն ներս մտաւ :

Այս նոր ակոյցեանը , բողբոջին անծանօթ մտալու համար , իւր զէնքերուն գոյնովը պարզ վահան մը քովէն կախած էր . իսկ իր ետեւէն եկող զինակրին ձեռքը՝ ՚ի նշան մեծ սգոյ , սեւ քօղով ծածկած մեծ վահան մ'ալ կար : Այս վերջինը ձգելով իւր տէրը կրկէսին վարի կողմի անտառին ծայրը , ինք դիմաց անցաւ , որպէս զի այն ծածկած վահանը դատաւորաց ներկայացնէ :

Դատաւորք՝ որչափ ալ երդում ըրած էին անծանօթ պատերազմիլ ուզողի մը ո՞վ ըլլալը չի յայտնելու , սակայն պարտաւորեալ էին ըստ օրինի՝ զըննել անոր զէնքերն ու քննել միանգամայն թէ բուն խաղին համար ընտրեալ ասպետաց պատիւն ու աստիճանը ունի՝ եւ թէ կարօղ է անոնց հետ մարտընչելու :

Այս միջոցիս ընդհանուր բազմութեան մէջ հետաքրքիր ու անհամբեր ուրախութիւն մը ծագած էր՝ երկայն բարակ շշուռներով :

Երբոր զինակիրը դատաւորաց վրանը մտաւ , շշուռնը խորին լուսութեան փոխուելով՝ ամենքն ալ ուշադրութեամբ վրանը դիտելով կըսպասէին :

Քիչ մը վերջը դատաւորք՝ այն սեւ քօղով ծածկած մեծ վահանը ձեռքերնին բռնած դուրս ելլելով , ձողի վրայ կախեցին , եւ այն ձողը գետինը ցցելով՝ առջեւը խոնարհելէն վերջը , հրաման տուին պաշտօնէի մը որ նոյն ժամայն գոչեց :

— Ազատ է , եւ ասպարէզն ասպետինն է :

Այն ատեն անծանօթը՝ ծանր քայլերով կրկէսին մէջէն անցաւ դնաց մինչեւ ընտրեալ ասպետաց վրանը . եւ կենալով Օդօրինօյի վրանին առջին , փոխանակ ըստ օրինի նիզակին ծայրոջն անոր վահանին դըպչելով ՚ի մարտ հրաւիրելու , կախուած տեղէն վահանն տուաւ ու գետինը զարկաւ , եւ վերջն ալ ՚ի նշան յետին աստիճանի թշնամութեան եւ արիւնտեղ պատերազմի , նոյն վահանը գետնէն վերցնելով դարձեալ զլիխվայր նոյն տեղը կախեց :

Ասոր վրայ , բազմութեան մէջ այլ եւ այլ կասկածներ ծագելով նորէն շշուռ մ'է սկսաւ . վասն զի ժողովուրդը քաջ գիտեր անծանօթին այս կերպ վարմանը ինչ նշանակելը : Որը կ'ուզէր անծանօթին ո՞վ ըլլալը եւ այս յետին աստիճանի թշնամանացը պատճառն իմանալ : Ծերերը կ'ըսէին թէ պէտք չէ որ տեղակալը այս տեսակ պատերազմի հրաւէրք մ'օրինաւոր սեպելով ընդունի . չատերն ալ կը վախնային Օդօրինօյի համար : Ոմանք՝ անտարբեր , նոր յաղթանակի մը տեսարանին կ'սպասէին ոմանք Օդօրինօյի փառացը նախանձորդ , սրտերնէն ուրախանալով կը յուսային թէ՛ գուցէ այդ ներկայ փոսնոցն անոր ծածկեալ հպարտութիւնը խոնարհեցնէ : Իսկ ռամիկ ժողովուրդը ոտքի վրայ սպասելէն ձանձրացած , նոր հանդէսի մը տեսարանին անհամբերութեամբ կ'սպասէր :

Այս միջոցիս արդեօք Երանուհի ինչ կ'ընէր եւ ինչ կ'զգար սրտին մէջ : Ճիտարարի խաղին սկսելէն մինչեւ այն ատեն , դուրսէն եկող իւրաքանչիւր ասպետին , կախուած վահաններէն մէկուն զարնելու մի-



լոցը՝ իր սիրելւոյն համար կը դողար . . . երբեմն կ'ուզէր եւ երբեմն ալ կը վախնար որ չըլլայ թէ Օդօրինօյի վահանին ալ զարնուի : Սակայն վերջը կամաց կամաց այնչափ ներկայացողներէն ալ անվտանգ ազատիլը անսնալով սկսաւ արտէն փափաքիլ որ իւր սիրելւոյն ալ քաջապէս մարտնչելը գոնէ մէջը աչքովը տեսնայ . մանաւանդ քահի որ բոլոր մեծամեծաց , ասպետաց եւ ասպետահեաց բերնէն Օդօրինօյի յաղթանակը կը լսէր , իւր այս փափաղը կ'աւելունար : Սակայն երբոր անտառին մէջէն փողին հնչելը լսեց , երբոր տեսաւ այն անձանօթ ասպետը , յանկարծ տխուր նախադուշակութենէ մը յաղթուած՝ ըսկըսաւ բոլոր մարմնովը դողողալ , եւ կարծես թէ սրտին մէջ գաղտնի ձայն մ'իրեն կ'ըսէր . վայ սիրելւոյդ բախտին : Եւ մինչդեռ այն ահաւոր ասպետը ձիօսարայի խաղին համար ընտրեալ ասպետաց վրասնը մօտենայու գիտմամբ կրկէսին մէջէն կ'անցնէր , Երանուհի գիշերացին խաւարին մէջ խարխափող տղու մ'իր ստուերէն վախնալուն պէս , ահիւ մեծաւ անձանօթին նայելով , կարծես թէ անոր իւրաքանչիւր ատած քայլը՝ իւր կենաց մէկ մասը կ'սպառէր : Եւ վերջապէս երբոր անձանօթի վրանին գիտացը հասաւ , Երանուհոյն գրեթէ շունչը բռնուած էր . . . իսկ սիրելոյն վահանին գետին դլորելուն ձայնը՝ կարծես թէ սրտին մէջ արծաղանք տալով , ժամանակ մը աղջկանն աչաց լոյսը խաւարեցաւ . . . :

Հայրը , նշմարելով Երանուհոյն ինչ անտանելի վիճակի մէջ գտնուիլը , թեւէն բռնելով կ'ուզէր դուրս հանել : Սակայն աղջկան նոյն տեղէն հեռանալով՝ այնպէս պիտի մտնողու չափ հրաւերի մը հետեւանաց լուրն

ուրիշէն սպասեն իրեն մահուրնէ ալ դառն դալով , ուղեց որ հոն անձամբ ներկայ գանուի եւ աչքովը տեսնէ եղկութեանց վերջը , ուստի հօրը չի հնայանաղելով տեղէն չ'ելաւ :

— Ձեւ գիտեր թէ մզ է հրաւիրուողը , կը հարցընէր անոր կոմսը՝ խղճուկ ձայնով մը :

— Գիտեմ , Օդօրինօն է , պատասխանեց Երանուհի հաստատապէս :

— Բայց զէնքերը . . . կը շարունակէր հայրը թոթովելով , բայց այդ հրաւիրելու կերպը . . . :

— Ձէնքերը լաւ սրուած են , կը պատասխանէր Երանուհի պաղ արեամբ մը եւ գրեթէ յուսանատամ , աճեն բան տեսայ , հրաւերքն ալ անխնայ է . սակայն ինչ որ կ'ուզէ ըլլայ՝ ես տեղէս չի պիտի շարժիմ :

Այս միջոցիս Օդօրինօ գլխէն մինչդեռ ոտքը երկսթապատ զինուած վրանէն դուրս ելաւ , եւ բոլոր կրած զէնքերուն ծանրութեամբը հանդերձ Լուրօյի պատրաստ բռնած պատերազմական երկխարին թամբին մէկ ոտքը դնելն ու ամենայն թեթեւութեամբ երկխարին վրայ հեծնալը մէկ եղաւ :

Գատաւորք կաղնիէ հաստատուն կոթերով երկու նիզակ ընտրեցին , եւ ամենայն ուշադրութեամբ անոնց երկայնութիւնը , ծայրերուն սրութիւնը , ծանրութիւնը , փայտին եւ պողպատին տեսակը քննելէն վերջը , մէկը հրաւիրողին եւ մյուսն ալ պատերազմի հրաւիրուողին տալով՝ նշան տուին երկուքին ալ կրկէսին չըջանն ընելու :

Ուստի երկու ախոյանները զինակիրնին ալ ետեւնէն , սկսան միատեղ օթեակներուն եւ պատնէշին մօտէն ամբողջ կրկէսին չըջանն ընելու : Անձանօթը միշտ



զէնքերուն մէջ փակուած , անհող կերպով մ'իր երկվարը կը սանձէր , որն որ ամբողջին ծափահարելէն խրտելով՝ կը տրոփէր եւ փռնչելով քթէն բերնէն փրփուր կը ժայթքէր :

Լուբո՛ որ քանի մը քայլ անմիջապէս ասոնց ետեւէն կ'երթար , հիանալով անծանօթին ուսերուն կարգէ դուրս լայնութեանը , բոլոր անդամոցն յարմարութեանը , եւ վեհանձն կերպով մը երկվարին վըրայ շիտակ կենալուն , եւ հետեւաբար իր տիրոջը վիճակին վրայ խորհելով , սրտին մէջ գաղտնի երկիւղ մը զգաց : Մանաւանդ երբոր տեսաւ անոր գլխուն ասղաւարտին միակտուր եւ կզակին տակէն ալ քամով մը հաստատուած ըլլալը , ճանչցաւ անմիջապէս թէ առջի աւուր զէնքերու տօնավաճառէն ծրպտեալ ծերուկին ձիաքօմօյի հարցընելով ուրիշ կրպակէ մը ծախու առած սաղաւարտն էր այն :

Իսկ Օշօրինօ , սաղաւարտին երասանոցը բաց եւ սեւ մազերուն ալ քանի մը թելերը երիտասարդական պարզ ճակտին վրայ հովերուն խաղալիք ըրած , իր շաղանակագոյն՝ աշխոյժ եւ մինչեւ անգամ իր տիրոջը մտքէն անցած հրամաններուն հնազանդ երկվարը խաղցնելով , այդ վեհանձն անծանօթին քովէն կերթար :

Երբ որ երկուքն ալ Տէլ Պալցօ կոմսին օթեկին առջեւը հասան , Օշօրինօ ամենայն քաղաքավարութեամբ հայրն ու աղջիկը միատեղ բարեւեց . սակայն կոմսը կէս մը չը տեսնալ ձեւացնելով հաղիւ թէ ասպետին բարեւն առաւ : Իսկ Երանուհի միայն ծածուկ ու երկչոտ նայուածքով մը կրցաւ պատասխանել Օշօրինօյի ըրած մարդավարութեանը : Որովհետեւ նոյն

միջոցին աղջիկը , գրեթէ դերբնական զօրութենէ մը դիւթուածի պէս , անկարելի եղած էր իրեն վայրկեան մը աչքերը անծանօթ ասպետին վրայէն դարձնել : Եւ անոր նիղակին երկայն , սուր ու փայլիլուն ծայրին ցրտութիւնն արդէն իր սրտին մէջ մղուածի պէս զգալով , այնպէս կը նայէր անոր ետեւէն՝ որ կարծես թէ աչքով անգամ անհետացնել կ'ուզէր այդ ահաւոր մարդը :

Իսկ պատերազմի հրաւիրող ասպետը՝ որ մինչեւ հիմայ տեղ մը չէր նայած , ան ալ նոյնպէս Տէլ Պալցօ կոմսին օթեկին դիմացէն կէս մը խոնարհելով անցաւ :

Երբոր երկու մրցողները կրկէսին ամբողջ շրջանը կատարեցին , ասպարէզն իրենց ձգուեցաւ եւ պաշտօնատէրք իւրաքանչիւրը՝ կրկէսին կեդրոնէն հաւասար հեռաւորութեամբ ճակատ առ ճակատ կեցուցին . այնպէս որ արեգական ճառագայթները երկուքին ալ երեսը հաւասարապէս զարնելով՝ անկէ ծագելիք վնասը կամ յաջողութիւնն երկուքին համար ալ միեւնոյն եւ հաւասար էր :

Օթեակներուն մէջէն , դուրսէն , կրկէսին շրջապատէն , յետկուսէն , ստողներու եւ կատքերու վրայէն , բաւական հեռաւորութեամբ անտառին մօտ ծառերէն եւ աշտարակաց վրայէն , վերջապէս չորս կողմը գտնուող քանի մը տուներու տանեացը վրայէն խուռն բազմութիւն հանդիսականաց՝ լուռ ու մունջ մենամարտութեան ակնկալու կ'սպասէին : Ամենուն սիրտն անհամբերութեան , նախանձի , քաջարտութեան եւ երկիւղի մէջ կը ծփար , եւ յարձակման փողն ալ արդէն հնչելու մօտ էր , թէ որ այս միջոցիս Ած-



ցօնէի տատանեալ կառաւարութիւնը ասին ու վրայ ընելու չափ ոոր դէպք մը պատահած չ'ըլար :

Լուբօ՝ որ Օդօրինօյի ետեւը կեցած էր , տեղակալին ձեռքին մէկ զիպուածական շարժմանը՝ յարձակման փողը հնչեցնելու հրամանին նշանը կարծելով , կրկէսին մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը յստակ կերպով լսուելու չափ բարձր ձայնով մը կանչեց . — կեցցէ Մարքօ Վիւքօնթի : Այս բացազանչութիւնը , սովորած էր ընել Լուբօ միշտ իր տիրոջը պատերազմի սկսելէն առաջ : Օդօրինօ ալ այս ձայնն առածին պէս՝ երկաթապատ բազուկը վեր առնելով կրկնեց . — կեցցէ Մարքօ Վիւքօնթի : Սակայն ոչ ինք եւ ոչ ալ իրեն թշնամին տեղերնէն չի շարժեցան , որովհետեւ դեռ փողը չէր հնչած : Իսկ ամբօխը որ գաղտնապէս միշտ Մարքօյի կողմնակից էր , այս ձայնը տեղակալին գէմ դաւաճանութեան մը նշան համարելով , վայրկեանի մը մէջ ամեն կողմէն հաղարաւոր ձայներ զիբար կանչելով , ժողովուրդը սկսաւ ասդիս անդին ժողովներ կազմել , եւ ոմանք ալ դէնքի ձեռք զայնելով դրօշակի մը տեսնուելուն կրսպատէին՝ որպէս զի անոր տակը ժողուին եւ իրենց զլուխ մը գտնալով , մաքերնէն անցածը ժամ մը առաջ 'ի գործ դնեն :

Այնպէս որ թէ այս միջոցիս Մարքօ անձամբ ժողովրդեան ներկայանալու ըլլար , տեղակալին բանը բռնած էր :

Ածցօնէի քովը գտնուող քանի մը զինուորները տեսնալով վտանդին մեծութիւնը եւ անկէ առաջ դալիք ձախողակի հետեւութիւնը , շուտ մ'իրեն օթկին զիմացը շարուեցան , որով տեղակալն ու իր երկու եղբորդիքը Լուբինօ եւ ձիօվանի հաղիւ կըր-

ցան ժողովրդեան աչքին առջեւէն շուտ մը խոյս տալ : Խառնիճաղանձին ամենէն տաքցած ու կատաղի միջոցին մեր անձանօթ ասպետն , որ ցայժմ ամենեւին տեղէն չէր շարժած , ձեռքը վեր առաւ սաղաւարտին գիմակը բանալու համար . իրբեւ թէ մոռցած ըլլար զիմակին քամով մը հաստատուած ըլլալը : Սակայն այս շարժման ակամայ ըլլալն ալ յայտնի եղաւ , վասն զի շուտ մը ձեռքը վար առնելով , դարձեալ առջի ձեւին մէջ անշարժ կեցաւ , զիտելով զիմակին տակէն ժողովրդեան այդ ասկին ու վրայ վիճակը :

Այս միջոցիս գորականք , պաշտօնատեսարք , իբար անցած չորս կողմը վազելով կը կանչէին եւ ձեռքերով կը հակցընէին որ ամենքն ալ հանդարտին եւ դարձեալ իրենց տեղերնին նստելու դառնան :

Եւ յիրաւի , կամաց կամաց սկսաւ մերթիւր մեղմիլ , ցրուել եւ բոլորովին դադրել : Այն կատաղի երիտասարդները՝ որոնց ստակաւին արիւնը բազուկներնուն մէջ կ'եռար , ինչպէս նաեւ ամբօխին մէջ կենարով ոտքի տակ երթալ չուզող երկչոտները եւ այն երկու մտքի ծառայող հետաքրքիրները , որոնք նաեւ ամենէն շատերն էին , ամենն ալ դարձեալ իրենց տեղերնին դարձան , ոմանք վախնալով , ոմանք ինդալով , ոմանք ալ հարցընելով թէ ինչ էր անցածը :

Խաղաղութիւնը եւ լուսթիւնը տիրելով , փողը հնչեց , մեր երկու մրցողները վահաննին կտրճերնուն բռնած եւ աչքերնին պաշտպանելու չափ ալ գլուխնին առջեւնին հակած , իրարու գէմ յարձակեցան :

Սակայն անձանօթ ասպետը զիմացինին իրմէն քիչ մ'առաջ ելլալուն բարկանալով , ուզեց վարպե-



տութեամբ եւ յաջող յաղթանակ մ'ընել : Ուստի փոխանակ իր երիվարն ալ մտրակելով ամբողջ ընթացք մը տալու , միջակ ընթացք մը տուաւ , եւ երբոր դիմացինը նիզակն արձակելու չափ իրեն մօտեցաւ , այն ատեն ձեռքի վահանը դէպ 'ի ձախ կողմը ծռած բաղուկն սուաջ մղեց , այնպէս որ Օդօրինոյի նիզակը փայլուն սաղաւարտին վրայէն սահեցաւ եւ հարուածըն 'ի դերեւ ելլելով՝ միայն քիչ մը ձախ կողմն կրցաւ դպչիլ : Իսկ անծանօթը այս միջոցիս իր նիզակը Օդօրինոյի նոյն աւուր մէջքը պատած երկնագոյն շարին մղելով՝ վերէն 'ի վայր մինչեւ սրունքը պատուեց , եւ երիվարուն տուաջ անցած միջոցին ալ ամբողջ շարն ուսն յափշտակեց ու գնաց :

Հանդիսականք այսպիսի ճիշտ եւ վարպետ կերպով սրուած հարուածի մը չի կարենալով ուրիշ մեկնութիւն մը տալ , երկուքին ալ նիզակաց հարուածը ոչինչ եւ արժէք մը չունենալը վաւերացուցին : Սակայն մեր երկու մարտնչողները իրարմէ բաժնուելով , անմիջապէս իրենց առջի ելած տեղերնին դարձան , եւ անկէ երկրորդ անգամ ամենայն ուժով յարձակեցան իրարու դէմ :

Այս անգամուն , անծանօթ ասպետն ալ իր քաջ երիվարին բոլոր ընթացքովը կը յառաջէր , եւ երկու սրունքներովն այնպէս սղմած էր անասնոյն կողերը , որ խեղճ կենդանին չունչ առնելու համար ռնդունքներն ու բերանը բաց կ'արչաւէր : Այսպիսի սոսկալի ուժով վերջապէս կրկէսին մէջտեղն իրարու պատահելով , Օդօրինոյի նիզակը իր թշնամուն փահանին վրայ խորտակեցաւ : Անծանօթը այս հարուածէն ամենեւին երիվարին վրայէն չի շարժելով , ձեռքի նիզակն ան-

միջապէս երիտասարդին դէպ 'ի երեսանոցը մղելն տրանսիկայ երիվարին վրայէն բաւական հետու գեական դուրեկն մէկ ըրաւ :

Օդօրինոյի հաւատարիմ նժոյզը՝ չուս մը կանգ առաւ եւ գլուխն ետին դարձնելով կրսպատէր որ իւր տէրը դատնայ վրան հեծնալու : Սակայն 'ի զուր , վասըն զի իւր տէրը բազուկները տարածած եւ կոնակին վրայ՝ գրեթէ անշունչ գետինը պառկած էր :

Լուսօ չուս մը ձիէն վար ցատկեց , եւ դողալով բացաւ տիրոջը սաղաւարտին դիմակն ու տեսաւ որ քթէն , բերնէն ու ականջներէն արիւն կուգար : Եւստ մը ուրիշ երկու զօրական ալ վազելով՝ վիրաւորելոյն սաղաւարտը գլխէն հանեցին եւ զանի բազուկներնուն վրայ առած մինչեւ վրանը տարին :

Քիչ մը անցնելէն վերջը , պաշտօնատէր մը վրանէն ելլալով կանչեց : — Ողջ է : Իսկ յաղթանակողը , որ մինչեւ այն ատեն երեսը գոց , միայն վիրաւորելոյն արիւնքաներկ վրանը տանելնին դիտելու զբաղած էր , ողջ ըլլալուն ձայնն առածին պէս 'ի նշան ուրախութեան , ձիուն երկու թաւրին վրայ կանգնած՝ ձեռքը երկինք վերցուց , եւ ապա ձեռքի նիզակը դեպիսին նետելով՝ մտրակեց երիվարը եւ անցնելով կրկէսին մէջէն՝ դարձեալ եկած ճամբէն անտառին մէջ մտաւ եւ աներեւոյթ եղաւ : Անծանօթէն նիզակակիրն ալ ցցած ձողին վրայէն սեւ քօղով ծածկած մեծ վահանը առնելով , տիրոջը ետեւէն անտառին մէջ մտաւ ու գնաց :





### Գ Լ Ո Ւ Խ Ժ Թ .

Մեր պատմութեան թելը կտրելէն 'ի վեր , գրեթէ ամբար մը չափ անցնելով , հարկը կը պահանջէ որ հիմայ երթանք մինչեւ Լուքքա քաղաքը , որուն Մարքօ Վիաքօնթի հետեւեալ կերպով տիրապետած էր :

Կայտեր գործերը՝ խիստ ձախորդ երթալով , եւ միանգամայն հակապապին զխաւորութիւններն ալ չի յաջողած ըլլալուն , կայտը մնաս բարոյն ըսելէն առաջ , արդէն իւր 'ի գործ գրած չատ մը նշանաւոր արարուածոցը վրայ՝ աւելի գեղեցիկ մ'ալ աւելցնել օւզելով , սկսած էր կանխիկ ստակով իրեն հպատակ քաղաքներն ու երկիրները վաճառել , որոնցմէ նաեւ մէկն ալ Լուքքա քաղաքն էր :

Սակայն , Լուքքացւոց խիստ ծանր գալով անհաւատարիմ կայտեր մը ձեռքէն օչխարաց պէս ծախուիլը , անոր երթալէն անմիջապէս վերջը՝ միջոց դառնելով Մարքօյի գիմնցին . որն որ քիչ մը առաջ Աէրուլիօ հասնելով , ապտտամբ Ալէմանեացիքն իր կողմը որսացած ըլլալուն , կարող էր ուզածին պէս իւր կամքն առաջ տանիլ : Ուստի Մարքօ Վիաքօնթի վեց հարիւր Ալեմանեացի զօրքով իջաւ , եւ Լուքքացւոց օգնականութեամբը՝ կրցաւ անոնց քաղաքը կայտեր ձեռքէն ծախու առնող Քասթրաքանի անուն անձը՝ դուրս վանտել . եւ անոր տեղն ընտրուիլ , տէր եւ իշխան այնպիսի անուանի ու հոյակապ քաղքի մը :

Մարքօյի այս յեղակարծ տիրապետութեան վե-

ցերորդ օրն էր , եւ տակաւին չէր գաղթած իր մեծամեծ գործքերէն :

Մարդ կը խրկէր գեղերը , բերդերը եւ հեռաւոր երկիրները . որպէս զի կամովին իրեն հնազանդողաց ստորագրութիւններն առնեն , եւ ընդհակառակն դէպ կեցողներուն ալ՝ զեղիրն ու արտերն այրեն ու աւերեն : Այնպէս որ Ֆացիօ կոմսին հետ միացած , արդէն Լուքքայի սահմանէն դուրս երկիրներ ալ կոխելով , Թարլաթինօ տի Բիէթթօ Մալա իշխանին կայտեր ձեռքէն ծախու առած Բիդա քաղաքն անդամ Լուքքայի պէս յափշտակելու փորձ փորձեց :

Անցերորդ օրուն անաւօտուն , սկսէր էր Մարքօ Թոսքանայի եւ Ռոմանիայի իշխանաց եւ մեծամեծաց կողմանէ շնորհաւորութեան եկող սուրճանդակներուն ընդունելութիւնն ընել . եւ իր կողմանէ ալ փոխադարձ եւ առանձին առանձին սուրճանդակներ դրկել նոյն իշխանաց՝ որոնք հեռուէն զանազան զրացմամբ նախանձու , երկիւղի եւ յուսոյ , կը նստէին այնպիսի իշխանի մը վրայ՝ որուն սրտին գազու նիբը դժուարին էր իմանալ , Իսկ օրուան մնացած մասն ալ անձամբ իրեն շնորհաւորութեան եկողներուն նուիրած էր : Այսու ամենայնիւ կը հնչէին տակաւին Մարքօյի ականջացը՝ Լուքքայի փոզոցները թնկալնող այն անտոմանապի աւուր ձայները , յորում Վիաքօնթի ձիու վրայ հեծած եւ իւր ետեւէն ալ իշխաններ , պարոններ եւ մեծամեծներ կերթային տիրապետաց նոր քաղքին Ս . Մարթինօ եկեղեցւոյն տօնախմբութեանը :

Ճամանակէ մը ետքը , Մարքօ հրաման սուաւ իր նոր տէրութեանը խորհրդականացն ու ազնուա-



կանայր որ երթան, եւ ինքը մինակ կ'երթեւեկէ՞մ երեսփոխանաց փառաւոր պալատին մեծամեծ սրահներէն մէկուն մէջ, կենալով երբեմն հրապարակը նայող պատուհանի մ'առջեւ, ուսկից կը տեսնուէր նա եւ քանի մը բերդերու եւ բուրդերու կանթեղազարդ լոյսերը: Իսկ վարը հրապարակին մէջ, մեծ ջանի մը կարովիք եւ անհաստատ լոյսին շուրջը, խուռն բազմութիւն մ'իբրեց նոր տիրոջը գովաբանական երգեր կ'երգէր, հեռուն բլուրներուն վրայ կարգաւ ջահեր եւ հրախաղական այլ եւ այլ դոյներով լոյսեր կ'արծակուէին, եւ վերջապէս ամեն տեղ այլ եւ այլ մարդիկ զանգակաանց վրայ ելած ՚ի նշան մեծ ուրախութեան, զանգակները մուրճերով ներգաշնակ եւ զանակաւ մը կը հնչեցընէին, գիշերուան խորին լռութեանը մէջ: Ասոնք շքեղ ու զգալի տեսարան մը կը ձեւացընէին Մարքոյի մտայը:

Մարքո բաւական ժամանակ, ճիշտ նոր փեսի մը հարսանիաց առաջին գիշերը իւր հարսին գեղեցկութեանը վրայ դժայլելուն պէս, անշարժ կեցած այդ տեսարանին նայելէն վերջը, պատուհանէն ներս դալու միջոցին՝ աչքին պատահեցաւ խուցին մէջ վառարանին վրայ պատէն կախուած Քասթրուչիօի նկարը: ասոր երեւոյթը նոյն ժամայն Մարքոյի զգացած զմայլումն ու ուրախութիւնը խանդարելով, մօտեցաւ ավոռի մը եւ աչքերը դեռ քանի մը ամիս առաջ մեռած բարեկամին պատկերէն չը գտնելով նստաւ, ինքնիբրեւ ըսելով. — Երբ որ ողջ առողջ եւ բոլոր իւր փառքովը Հոովմայ կայսեր մէկ աչքն էր. երբոր ամբողջ կուէլֆեան քաղաքներն ու միանգամայն Իօպէրթօ թաղաւորն ու պապը, կը դողային

ասոր անունը լսած ժամանակսին, երբոր ես այլ այնպիսի անուանի անձի մը սերտ բարեկամն ըլլալուս վրայ ուրախացած՝ եւ անոր օգնականութեամբն այլ Միլանու իշխանութիւնը ձեռք բերել երազած ժամանակս, թէ որ մէկը գար իրեն ըսեր. «Քասթրուչիօ, գիտնաս որ քանի մը ամիսէն ամեն բան քեզի համար պիտի լիննայ, եւ դու հողին տակը պիտի պառկիս»:

Ի՞նչ զարմանալի եւ միանգամայն ցաւալի մարդարէութիւն . . . : Երիտասարդ, անվեհեր, եւ իր հօր իշխանութեանը ամենէն ծաղկած միջոցին մէջ . . . սակայն մարդուս կեանքը այնպէս վաղանցիկ եւ անհաստատ է . . . եւ ինք այլ գիտէր իրեն մահկանացու ըլլալը: Բայց թէ որ այդ մոգը համարձակէր նա եւ ըսերու. «Կը տեսնանս այդ քովը կեցած մարդը, այդ մարդը զոր դու կը ջանաս բարձրացընել՝ մեծցընել երկրիս վրայ, այդ Մարքօն՝ որ քեզի օգնեց բուլով իր կարողութեամբը, որպէս զի զքեզ մինչեւ այդ գտնուած բարձրաստիճան վիճակիդ հասցընէ, որ զքեզ կը պատուէ եւ եղբօր պէս կը սիրէ, կը տեսնանս այդ մարդը, գիացիր ուրեմն թէ՛ անիկայ քիչ ժամանակէն քու նստած գահիդ պիտի իշխէ, թէ քու տունդ անոր տունը պիտի ըլլայ, թէ քու խեղճ կինդ իր որբերուն հետ երկրէ երկիր փախչելով իրենց տպաստանարան պիտի փնտռեն եւ չի պիտի գտնան. վերջապէս այդ մարդը՝ անոնց իրաւունքը պիտի յափըշտակէ» : Ո՛հ, արգեօք ի՞նչ պիտի զգար իր սրտին մէջ . . . իսկ ես, արգեօք ի՞նչ պիտի կարենայի զրուցել . . . : Ուրեմն լաւ խորհրդածէ ապագային վրայ, քանի որ աչացող առջեւն է մարդուս յեղձե-



դուկ բաղդին վիճակը . . . Այսպիսի անուանի եւ հոյակապ քաղաք մը ; առանց մեծ զոհողութեան մը ինքնիրեն ձեռքդ անցնի , մինչդեռ դու անշնայի տաբիններէ 'ի վեր կ'աշխատիս տէր ըլլալու ուրիշ անյակասի քաղքի մը՝ որ հրաբուխէ հոսած լաւայի պէս անջուէդ խոյս կուտայ : Միթէ դու ալ այս ճամբով այն յամառեալ խելացնորաց կարգը շնս դասեր ինքզինքդ , որ բնութեան օրինաց դէմ կ'աշխատին Ալքիմիայով հարստութիւն գիղելու :

Մարքօ , երկրորդ անգամ մ'ալ նոյն սլաստեհանին առջեւը եկաւ , եւ լաւ մը հրատարակը եւ աչքն առածին չափ չորս բոլորը գիտելէն վերջը , կանչեց — Բնչ գեղեցիկ քաղաք է եղեր Լուքքա . . . Բայց քիչ մը ետքը հառաչելով կրկնեց . — դարձեալ Միլանու չը նմանիր : Եշխել երկրի մը՝ ուր ժամանակաւ հպատակ էիր , հրամայել հոն՝ ուր քեզի կը հրամայէին , մեծ ըլլալ այնպիսի բարեկամաց մէջ՝ որոնց նախանձելի է քու մեծութիւնդ եւ զանոնք քեզի կողմնակից ընել . . . եւ . . . այն հրամայել նաեւ թշնամեաց , եւ տեսնալով խնդալ անոնց անկար բարկութեանը եւ հպատակութեանը վրայ , այս է կեանքը . — յիշաւի հոս բարեբեր այգիներով պատած զուարթ բլուրներ , հոս նաեւ հոչակուոր ասպետներ , գեղեցիկ աղջկունք , հարստութիւն եւ մարգավարութիւն պակաս չեն . . . օսկայն ասոնք ամենքն ալ Մարքօյի օրաին զգացմանը չեն համապատասխաներ :

Քանի որ ինք՝ իր մտայը մէջ այսպիսի խորհուրդներ որոճալով կը կենար , վարէն ժողովուրդը նոյն կեցած պատուհանին առջին ժողուելով սկսեր էր պուռալ . — « կեցցէ Մարքօ , կեցցէ Մարքօ » . այս աղա-

ղակէն իւր մտածութեանց թելը կտորելով՝ որչափ ալ Մարքօ զուխն ու երկու ձեռքերը շարժելով՝ շնորհակալ կ'ըլլար ամբոխին , սակայն վերջապէս համբերութիւնը հասնելով , կեցած տեղէն ներս եկաւ եւ մօտ խուց մը մտաւ արանջալով . — Ամիսներ , կ'ըսէր ինքնիրեն , կը վախճք արդեօք թէ ձեզի տէր մը պակաս . . . կեցցէ Մարքօ , Բնչ կը յուսաք արդեօք այդ Մարքօն . ո՞վ է նա , եւ զիտէք արդեօք թէ կարող է եւ կամ թէ կ'ուզէ նա ձեր բաղձանքը կապարել . Բնչ հրճուանք , Բնչպիսի պարահանդէս . . . կարծեմ թէ երբ Ալթօբաշիօ Լուքքայի վրայ յաղթանակ տարաւ , այս ուրախութեան եւ ոչ մէկ քառորդը ցուցուցին :

Այս միջոցիս ծառայ մը խուցին դուրը դարձելով ներս մտաւ , եւ իրմէն հրաման անելէն վերջը մեծաւ յարգանք խոնարհելով մօտեցաւ եւ նամակաց տրձակ մը Մարքօյի տալով ըզաւ . — Լոմպարտիոյ հեռագիրներն են . Բէլէկրուա անուամբ թղթաբերը՝ ձեզի անձանօթ չըլլալով՝ վարը կարմիր սրահը կեցած ձեր հրամանին կ'սպասէ . — Թող սպասէ , պապատանեց Մարքօ , գլխովը հրամայելով ծառային որ դուրս ելլայ , եւ միանդամայն կանթեղի մը մօտեցնալով սկսաւ մի առ մի առաւ նամակներուն հասցեները կարդալով գիւնցը գրասեղանի մը վրայ նետել , ճանչնալով իւրաքանչիւրին զիրը : Վերջապէս նամակ մը պատասեցաւ , որուն հասցէն տեսածին պէս՝ մեծաւ զարմոցմամբ շուտ մը գրասեղանին վրայ դրուած արծաթէ զանգակը զարկաւ , եւ զարձեալ իրեն ներկայացող նոյն ծառային հարցուց . — Այս անուն նամակները բերողը մէկ սուրհանդակ մը չէ : —



Վասան բայ 'ի մէկ հասէն' որուն թղթաբերը ձգելով շարունակեց իր ճամբան դէպ 'ի Հոսով' :

— Դաս լաւ , ըսաւ Մարքօ , եւ ճառան գուրս ելաւ :

Այն ատեն Մարքօ , ձեռքը մնացած վերջի նամակն ալ գրասեղանին վրայ նետելով՝ դառն ժպետով մը ինքնիրեն ըսաւ : — Մեծագործ եղբորդի , ասիկայ քեզի պատիւ չը բերէր : Եւ նամակներուն մէջէն զատ գրած նամակն առնելով բացաւ ու սկսաւ կարդալ : Մարքօյի Միլանէն բայժնուած օրէն 'ի վեր պատահած ամեն նշանաւոր դէպքերը՝ այս նամակին մէջ մասնաւորապէս Մարքօյի գրուած էին . ամեն շարաթ սուրհանդակ մը ճամբայ կելար առանձին նամակներով Մարքօյի տրուելու համար , եւ անկէ ալ մասնաւոր նշանադիրներով շարագրուած թուղթեր իրեն բերելու համար :

Երբոր կայսեր դէպ 'ի Լոմպարտիա արշաւելու լուրը սարածուեցաւ , Լօարիզիօ սկսեր էր զՄարքօ խրատել որ բարեհաճի իր Ձերուլիօյի ապստամբ Ալմանեացի զօրքերովը կայսեր ետեւէն հասնիլ , զամի որ ինք ալ մէկ կողմանէ կարող էր Միլանցիները ոտք հանել եւ անոնց գլուխ եղած՝ զիւրութեամբ զկայսրը գլխաւորել : Կիտնալով արդէն թէ Միլանցիք ամբողջին չէին ուզէր թողուլ , որ այնպիսի նենգաւոր կայսեր մը անօթի եւ աւազակ զօրքերը գալով՝ Միլանը ոտնակոխեն : Սակայն այս բանս առ այժմ Մարքօյի համար անհնար էր , որովհետեւ Ձերուլիօյի ապրատամբ զօրքերը տակաւին իրենց բաւական գոհացուցիչ վիճակ մը չէին անցուցած , որպէս զի Մարքօ կարենար զանոնք բուն իսկ իրենց տիրօջը դէմ պատե-

րադմելու տանիլ : Միւս կողմանէ ալ դեռ Մարքօ այնպիսի բարեյաջողութեամբ Լուքքայի տէր ըլլալուն քաղցրահամ պտուղը քաղելու ժամանակ չէր ունեցած , որուն նաեւ մեծ աշխատութիւն պէտք էր : Այսինքն թէ՛ պէտք ունէր շատ մը ստակ գանձելու , որպէս զի անոր մեծ մատովը նախ եւ առջ ինքզինքն աւելի սիրցընէ , ու եւս քան զեւ իրեն հնազանդեցընելու համար , պէտք եղածէն աւելի կշտացընէ իւր ձեռքին տակը գտնուած ապստամբաց գունդը :

Սակայն , ինչպէս շատ անգամ կը պատահի աշխարհիս մեծամեծ յեղափոխութեանց մէջ , որ համափա մարդիկ անգամ իրարու հետ հակամտին , նոյնպէս ալ այժմ Միլանցուոց Մարքօյի վրայ ունեցած այն առջի ետանդուն սէրը մարած էր : Որովհետեւ այլ չէր տեսնուեր Միլանու մէջ անոր շտայլարար ստակ մըսխելը , ալ չէր տեսնուեր խումբ մը ձիաւոր ասպետաց , կոմսերու , զօրակմանաց եւ շքեղ պալատականաց մեծ փառքով Միլանու մէջ Մարքօյի հետ պարտելը : Ոչ եւս կը լսուէր անոր խնջոյից ձայները եւ ոչ ալ անոր հաճելի , հանճարեղ եւ խմաստալից ու յանպատրաստից զրոյցները :

Լոմպարտիոյ մեծամեծներն անգամ , որոնք գաղտնի իրեն կողմնակից էին , յուսահատած էին տեսնալով գործոց այսչափ երկարին՝ առանց բարի հետեւանք մը ունենալու : Իսկ շատերն ալ բաւական ատենէ 'ի վեր , սկսեր էին դժգոհիլ եւ տրտնջալ , Մարքօյի բանի մը անվայել թշնամանացը դէմ , զորս այն ցնորեալ սիրահարութեանը օրէն 'ի վեր սկսած էր ամենայն զիւրութեամբ 'ի գործ դնել :

Հիմայ կը մնար իրեն զօրաւոր նեցուկ մը . այ-



սինքն իր պատճառաւ Յովհաննէս պապին կողմանէ յուզարկուած կղերաց իւռօրը : Սակայն անոնք ալ , երբոր տեսան թէ Չէրուլիօյի բարեկամը տեղէն շարժելու միտք չունի , եւ թէ միւս կողմանէ Պաւարօն կը յառաջանայ դէպ 'ի Լօմպարտիա , նախ եկեղեցւոյ իրաւունքը բոլորովին չը կորսնցնելու եւ ապա ամենքը միատեղ Ածցօնէի ձեռքը չյինալու համար , հարկադրեցան նոր կողմնակցութեան մ'ալ իրենք ձեռք դարնել :

Սակայն յայտ մարտն եթէ կղերին մութ էր ապագան , Ածցօնէի ալ վիճակը՝ ոչինչ նուազ փոքանգաւոր կ'երեւար : Արովհետեւ ինք լսած էր թէ կայսրը մեծաւ բարկութեամբ կը յառաջանայ Լոմպարտիոյ վրայ , անկարգ ու աւերիչ զօրաց գունդերով : Եւ այս մեծ բարկութեան ալ առաջին զոհն ինքն ըլլալը քաջ դիտէր . վասն զի տակաւին տէրութեան սուրբերը , մեծաւ մտաւմբ չէր վճարած , եւ միւս կողմանէ ալ կայսրը՝ Չէրուլիօյի զօրաց իրենց բուն գրօշակներնուն տակ չը դառնային մակարերած էր որ Ածցօնէ՝ Մարքօյի հետ միացած է : Ուստի՝ կը դողար Միլանու նոր իշխանը , կը դողային նաեւ իրեն եղբօրորդիքը , Լուքսինօ եւ ձիօվաննի , յիշելով այն դարհուրելի , ագահ ու անհաւատարիմ մարդուն անջնջելի դէպքերը : Մանաւանդ երբոր կը յիշէին Իտալիոյ բոլոր աւատականաց ըրած մատնութիւնը , որոնք քանի քանի ամիսներ Մօնցաի բանտերուն մէջ տառապանօք փակեալ կեցան . չէին կրնար ամենեւին մտքերնին կերպով մը համոզել եւ ուզել՝ որ երկրորդ անգամ մ'ալ այնպիսի մարդու մը իշխանութեանը ներքեւ գտնուին :

Այսպիսի փոստաւոր եւ մեծամեծ չարեաց փոքրու-

գոյնն ընարել կը պահանջէր հարկը : Ուստի Ածցօնէ կղերին դիմելով , անոր քանի մը պայմաններն ընդունելուն պէս , առժամայն գործոց եղանակը փոխուեցաւ . եւ Միլանու նոր իշխանը՝ որ գրեթէ միոյնացն կորստեանը փութացող թշնամեացմէ պարփակեալ է , զանոնք բոլորն ալ իրեն բարեկամ դաւաւ : Վերջապէս Ածցօնէ Եկեղեցւոյ հետ հաշտուելով , այն ամենքը՝ որ այլ եւ այլ կողմեր երկար ատենէ 'ի վեր իրեն դէմ ակուանին կը սրէին , սցծմ ամենքն ալ իր իշխանութեանը տակ պատրաստուած էին զինքը պաշտպանելու :

Ասոնք՝ որչափ ալ 'ի վազուց Մարքօյի ծանօթ էին . բայց այժմ Լօմպարդիօյի առանձին նամակաւը կիմանար թէ քաղաքացիք ինչպիսի արագութեամբ ու կատաղութեամբ Միլանը զօրացնելու ետեւ էին : Ածցօնէ կը գրէր թէ՝ ինչպէս Մօնցա , Լօաի եւ ուրիշ շատ մը քաղաքներէն եւ անուանի բերդերէն հաստատուն խոստումն առած էր , մինչեւ անգամ հիմնայատակ ըլլալ՝ քան թէ դռները թշնամոյն բանալ : Կը քաջալերէր զՄարքօ որ միշտ իրեն հետ բարեկամ մնայ , որպէս զի իրենց մէջ եղած դադանիքն երեւան չելլայ , խոստովանելով միանգամայն որ իրեն կղերին հետ ըրած հաշտութիւնը առ երեսս եւ ժամանակաւոր էր , եւ ոչ 'ի սրտէ :

Մարքօ նամակն աւարտելով , ցամամբ գրատեղանին վրայ նետեց ըսելով . — Այսու ամենայնիւ կեղծաւորութիւն ու երկդիմութիւն պակաս չին իրենց գրութեանցը մէջ . ինչպիսի դժուարին առաջարկութիւններ են ասոր ըրածները . . . . Ո՛հ , սրգարեւ կս այսչափ ցած վիճակի մը ենթակաց ըլլա-



լու համար չէի ծնած . . . : Սակայն եւ այնպէս . . .  
 եւ սկսած խօսքին իմաստը դեռ չ'արտաբերած , եր-  
 կընցաւ եւ Ածցօնէի նամակն առնելով բացաւ : —  
 Տեղակալ եղբորորդին ալ՝ երկայն բարակ կը գրէր նո-  
 րանոր պատահարաց վրայով . կ'իմացընէր Մարքոյի ,  
 թէ ինչ կերպով հարկադրած էր Պավարօի դէմ թըշ-  
 նամանալու . կ'աղաչէր որ Չէրուլիօյի ապստամբ Ալ-  
 մանեացիքը ո եւ է կերպով դբաղեցընէ , որպէս զի  
 չըլլայ որ իր թշնամոյն կողմն անցնին ու զօրացընեն  
 զինքը . վերջապէս քանի մը տեղեկութիւններ կ'ու-  
 զէր Մարքօյէն՝ Միւսը զօրացընելու կերպին վրայ :  
 Մտացած նամակներն ալ ընդհանրապէս գրեթէ  
 նոյնպիսի նիւթերու վրայ չարագրուած էին , այ-  
 սինքն Ածցօնէի հետ միանալովին , միմիայն պարա-  
 գայից պահանջմանէն ստաջ եկած ըլլալը պատճառ  
 բերելով , սովորականէն գուրտ ցուրտ դարձուածքնե-  
 րով Մարքօյի միշտ բարեկամ կալ եւ մնալու խոս-  
 տումներ կը պարունակէին : Մարքօ կը խնդար իր բա-  
 րեկամոյն այսպիսի տարբեր ոճերով գրուածքներնուն  
 ներքեւ՝ նենդութիւնին ծածկել ուղեղնուն վրայ :  
 Վասն զի ինք բաւական փորձառու էր մարդկանց  
 վարմունքէն՝ իրենց սովորական բնաւորութիւնը դու-  
 շակելու մասին : Որով ինքնիրեն կ'ըսէր . — Ատնք  
 զիս այժմ առաջուան համարմամբ որչափ ալ չեն ու-  
 ղեր տեսնալ , սակայն երբոր զիս Նուքքայի տէր եւ  
 իշխան պիտի ճանչնան եւ Նուպարաիոյ գործերն ալ  
 վերջ մ'ունենան , այն ատեն դարձեալ 'ի վաղուց իմ  
 վրաս ունեցած համարումնին ստանալով՝ ամենուն  
 ալ սիրելի պիտի ըլլամ :

Յետոյ կանչել տուաւ Բէլէկրուան . ասիկայ դա-

լէն 'ի վեր չը կարենալով խելահասել իր տիրոջն այն-  
 պիսի անուանի քաղքի մը իշխելուն հնարքին վրայ՝  
 ապշած կը մտածէր : Ուստի սրահէն ներս մտածին  
 պէս՝ որչափ ալ ուզեց մեռաւ յարդանօք իւր սրտին  
 ուրախութիւնը յայտնել , տիրոջն այնպիսի փառքի մը  
 համեմունն վրայ , սակայն Մարքօ անոր խօսքը կըտ-  
 րելով սկսաւ հարցնել . — դու զՆօարիզիօ տեսնոր ,  
 ճամբայ ելլալէդ առաջ :

— Այո , մանաւանդ թէ ձեզի բերած նամակնե-  
 րուս ծրարն ինք տուաւ ինձի :

— Ածցօնէի վարմունքը տեղակալին հետ ինչպէս է :  
 — Բոլորովին տեղակալին համամիտ . եւ անկէ  
 նաեւ կրնաք իմանալ թէ , Արքեթթօ կամուրջը՝ որ  
 ըստ ընդհանուր կարծեաց քաղքին ամենէն զգուշաւի  
 կէտն է , անոր յանձնուած է զօրացնելու համար :

— Ուրեմն Միւսընցոց կայսեր դէմ դնելու առա-  
 ջագրութիւնը հաստատուն է :

— Ի՞նչ ըսել է , հաստատունէն ալ աւելի :

— Զէնքի կողմանէ ինչպէս են :

— Բոլոր զինավաճառաց խանութները բաց , գի-  
 չկը ցորեկ վարպետները նեա եւ նիզակ շինելու զբա-  
 դած են : Լսեցի նաեւ թէ տասն եւ վեց մեծ բարան ,  
 ութը հատ թնդանօթ , եւ չ'գիտեմ քանի հատ փայտա-  
 կերտ աշտարակներ , քիչ ժամանակուան մէջ պիտի  
 լիննան : Իսկ պատնէշները զօրացնելով ինք հատ ա-  
 հաւոր փայտաշէն աշտարակներ շինելու վրայ են ,  
 քաղքին իւրաքանչիւր դուռն ալ իր գրօշակն որոշած  
 է . այնպէս որ Մայր եկեղեցւոյն մեծ դանդակը զար-  
 կածին պէս , այն ամենքը որ զէնք բռնելու կարող  
 են , իրենց թաղը պիտի վազեն , եւ մէկ ժամուան մէջ



քառասուն հազար պատերազմող պատերուն վրայ պատրաստ պիտի դառնին :

Այս պատմութիւնը Մարքոյի սիրտն ուրախացընելով, կարծես թէ աչքերէն սկսաւ կայծ ցատկել եւ երեսն ալ խնդալ : Վասն զի Մարքո քաջ գիտէր թէ քաղաքացւոց այդպէս մէկ սիրտ մէկ հոգի ըլլալովն ու մի եւ նոյն զգացմամբ իւր արիւնն ու իրաւունքը պաշտպանելու համար ըրած միութիւնը անյաղթելի պիտի ըլլային : Արովհետեւ այսպիսի կատարեալ միութեան մը կողմը, արդէն յաղթանակը շահած ըսել էր : Եւ ասոր համար նաեւ Մարքոյի սիրտը մեծ ուրախութեան մէջ էր . որովհետեւ իրեն սիրելի եւ տըզայութեանը խանձարուր եղած սննդիս հոյակապ եւ Միլանի պէս քաղքի մը փառքն ու պատիւը, դարուց 'ի դարս պիտի յիշուէր :

— Աւշ գիր, ըսաւ Մարքո իր բերդապահին, որչափ ալ իրեն դրեցի, սակայն չը մոռնաս Լօտրիզիօի ըսելու, որ Բօրթա Թիչինէպէի մարտկոցները ուշագրութեամբ զօրացնէ, ուր որ Թէչինէլլօի մօտ ջաղացքներ կան, որպէս զի նախ քաղքին հացը չը պակսի : Թող շուրերուն ճամբան գոցելով այնպէս դարձնէ անոնց ընթացքը՝ որ Սան Եուս Թօրճիօ ըսուած կամուրջին վրայէն անցնին : Իսկ դու, լաւ նայէ իմ Բօղաթէի բերդս ու պէտք եղած պատրաստութենէն ետ մի կենար, որպէս զի Պաւարօյի յարձակմանը դէմ դնելու կարող ըլլաս :

— Արեմն կը պատասխանէր Բէլէկրուս երկրայելով մը . կուղես քայտրձակապէս քաղաքացւոց կողմը բռնել . . . Լօտրիզիօ ինձի հրամայած էր որ ձեզի ըսեմ թէ . . .

— Լօտրիզիօի խրատներուն ամենեւին պէտք չունիմ, եւ ոչ ալ քեզմէ խորհուրդի կրտսասեմ, ըսաւ Մարքո խստիւ մը, կը հրամայեմ՝ որ լուր տաս իմ Մարթէղանայի եւ Քասթէլ Սէբրիօի երկիրներուս, որպէս զի պէտք եղածէն աւելի Բօղաթէի բերդս մարդ եւ պաշար խրկեն : Բէլլովիչինօն թող զօրաց հրամայէ, դու ալ դարմանապետութեան պաշտօնը վարէ : Սակայն երկուքնիդ ալ այժմէն լաւ գիտցէք, փայ ձեզի, թէ որ միջեւ տասը հոգի ոտքի վրայ պատերազմելու կարող ըլլալու չափ մարդ մնալով, լսեմ թէ Պաւարօյի զօրքերէն մէկը իմ բերդիս դաւիթը ոտք կոխեր է :

Բերդապահը շուտ մը պատասխանեց որ իր հրամաններուն ամենքն ալ ձէջիւ պահելու պատրաստ է : Այն ատեն Մարքո Բէլէկրուայի երթալու պատուէրը տուաւ . սակայն բերդապահը տակաւին սրահին սեմին չի հասած, զզջալով վերստին կանչեց զինքն ըսելով .

— Իսկ Օդօրինօյէն ի՞նչ լուր ունիս տեսնեմ .  
— Վերջին անգամ ձիօստարայի խաղին մէջ ձեզմէ ընդունած հարուածին վրայ, մինչեւ հիմայ անհետեւին Միլանու մէջ չի տեսնուեցաւ . սակայն քաջ գիտեմ եւ հաւատարիմ տեղէ՝ թէ նա՛ ինքզինքը իր Քասթէլլէթօյի ամրոցը փոխադրել տալով, հոն քսան օրուան չափ պառկած տաժանեցաւ : Հիմայ ալ ձայն մը ելաւ թէ Պաւարայի կողմն անցած է :

— Սուտ է, ըսաւ Մարքո հաստատապէս :  
— Այսու ամենայնիւ, պատասխանեց Բէլէկրուս խոնարհութեամբ մը, շատերը կան կայսեր կողմն անցնող . զորօրինակ՝ ձաքօպինօ Լօտրիսինօն, Ուպէրթօ Պրէկօնտիօն եւ Մարինօ Պէսքարէն եւլն :



— Աւղածէդ աւելի կրնաս անուշներ շարել , սակայն Օդօրինոյի անուշը այնպիսեաց կարգը չեմ ընդունիր . սակայն մեծ զրպարտութիւն մ'է Օդօրինոյի անձին վրայ :

Բերդապահը՝ չը համարձակելով աւելի բառ մ'ալ արտասերերև , լուռ կեցաւ : Իսկ Մարքօ քանի մը վայրկեանէն վերջը աւելի հանդարտ կերպով մը սկսաւ հարցնել .

— Իսկ Տէլ Պայցօ կոմսը մինչեւ հիմայ Միլան է :

— Այո՛ դեռ Միլան է . բայց թէ որ իրեն մնար, Պաւարօյին մօտենալու ձայնն առած վայրկեանէն կողէր Լիմոնդա քաչուիլ : Սակայն հրաման մը ելաւ որ մեծամեծաց եւ ոչ մէկը պիտի կարենայ Միլանէն դուրս ելլալ , պատճառ բերելով թէ ասոնց քաղաքէն հեռանալը՝ ժողովրդեան վհատելու առիթ մը կրնայ ըլլալ :

— Աւրեմն , կ'ըսէր դարձեալ Մարքօ , ըսել որ Օդօրինօն մէկ մ'ալ կոմսին տունը չը կրցաւ մտնել :

— Կրնաք վստահ ըլլալ , որ ձիօստրայի նիզակամարային հանդիսաւոր օրէն վերջը՝ կոմսին տունը ոտք կոխած չէ . եւ ձեզի ալ բացարձակ կրնամ ըսել թէ ձեր ինծի մասնաւորապէս տուած հրամանացն օրէն 'ի վեր' յաջողեցայ վարպետութեամբ մը կոմսին զինակիրներէն մէկն որսալ . թէպէտեւ այս բանս ինծի շատի նստաւ , սակայն հոգ չէ . հիմայ աղէկ բարեկամացած եմ հետը , այնպէս որ կոմսին տանը մէջնոր բան մը պատահածին պէս՝ ժամէ վերջը սուրհանդակը քովս է :

Մարքօյի չի պատասխանելովը՝ մեր նենդաւորը դարձեալ յառաջ վարեց իւր խօսքը . — Իսկ թէ որ

կուղէք բոլորովին ձեր սիրտը հանդարտեցնել . . . կամ թէ վրէժխնդրութիւննիդ առնել . . . ըսաւ , այդ դօրքը ինծի կրնաք յանձնել . . . : Լատրիզիոն այն փրճապէս ինծի պատուիրած էր ձեզի զրուցելու թէ . . . ձեր Օդօրինոյի բարկանալը զինքը կասկածի մէջ կը ձգէ . . . թէ՛ վերջապէս այդ երիտասարդը . . . շատ բան գիտէ . . . շատ ալ վտանգաւոր է . . . եւ թէ՛ վերջապէս պէտք է անոր բերանը խիլել :

Վիսքօնթէն շուտ մ'այս թուաւոր խօսքերուն իմաստն ուր երթալն զուշակելով , ինդաց՝ ու զրուցէ Լատրիզիօի որ , ըսաւ , թող աներկբայ եւ հանդարտ քննանայ այդ ցնորքներովը , որովհետեւ ես քան զինքը խիստ լաւ կը ճանչնամ զՕդօրինօն , եւ երաշխաւոր կեցած եմ անոր հաւատարմութեանը ամեն խաւոր կեցած եմ անոր կաւտարմութեանը ամեն ժամանակ : Օդօրինօ կրնայ զիս ասել , կրնայ իմ արժամանակ : Օդօրինօ կրնայ զիս մատնել . . . ամեւեանս ծարաւիլ . . . սակայն զիս մատնել . . . ամենեւին : Եւ թէ որ . . . — Ես աս ըսել չէի ուղեր . . . նեւ ինքն ինքնիրեն նենդաւորը . . . թէ որ . . . ինծի կ'ըսէր ինքնիրեն նենդաւորը . . . թէ որ . . . ինծի մնայ . անոր մէկ մազին անդամ դպչելը չեմ ընդունիր :

— Այո , լաւ զգուշացիր այդ բանէն , պատասխանեց Մարքօ , եւ ժամանակ մը մասնաւոր հրաման մը տալու խորհրդածութեանց մէջ վարանելու պէս մտածելէն վերջը , հետեւեալ հարցմամբ խօսքս առաջ վարեց .

— Ի՞նչ ըսին Միլանու մէջ Օդօրինօն ձիէն վար թաւալող անձանօթ ասպետին վրայով :

— Շատ բաներ ըսուեցան . որը կարծեց թէ Բուքսօնէի որդին էր , որը՝ թէ Բուքսօնէի թագաւորին ասպետներէն մէկն էր : Սակայն վերաւորեալ երիտա-



սարդը, քիչ մ' ինքզինքը գտածին պէս՝ իր շուրջը գտնուող բարեկամացը խտախ պնդեց թէ՛ բոլոր Ետալիոյ մէջ ձեզմէ ուրիշ անձ մ' այնպիսի հարուած մը չէր կրնար տալ :

—Արդեօք մէկ տեղը խանդարեցան, եւ սպիւներուն բոլորն ալ անցան, կը հարցընէր անհամբերութեամբ Մարքօ .

—Եւ ոչ հեաք մը մնաց դէմքին վրայ . առաջուան պէս կայտառ եւ գեղեցիկ է, այնպէս որ կոմսին աղջիկը բան մը կորուսած չի սեպուիր :

—Անկէ քնչ լուր կայ, վրայ բերաւ Մարքօ :

—Ո՞ւսկէ :

—Երանուէ . . . անոր համար որ կ'ըսէիր, կոմսին աղջկան համար :

—Կոմսին աղջիկը, ձիօստրայի հանդէսէն վերջը, չորս հինգ օր՝ աւելի միւս աշխարհի մօտ քան թէ մեր աշխարհքին մէջ, վերջին օծումներ առնելով պատկեցաւ . սակայն վերջը սկսաւ կամայ կամայ ինքզինքը դարձեալ գտնալ : Իսկ այս տողջութեանը հաստատութեան միջոցը, հօրն ու մօրը քնչպիսի սերով վրան գողալին եւ աղջկանն ալ, ըստ սովորականին, ծնողացը ցուցուցած կանացի խանդաղատանքը երկար բան է ձեզի նկարագրել . բայց հիմայ առաջուան պէս քաջատղջ է :

Վխաբօնթէ տեսնալով իւր ծառային այպանիչ դարձուածքներով խօսիլն այնպիսի անձի մը վրայ, զոր ինք մտքէն անցուցած միջոցն անգամ վրան սարսուռ կուգար, ալ չի կրցաւ ինքզինքը բռնել, եւ ձայնը բարձրացնելով սկսաւ կանչել . — Դա մտածէ թէ՛ որով վրայ, եւ որով զիմաց կը խօսիս . սու-

ներես թշուառական, լեզուդ քեզի քաչէ, ապա թէ ոչ խաչը վկայ, հիմայ քեզի այնպիսի հարուած մը կ'իջնամ, որ մինչեւ կենացդ վերջի շունչը՝ անոր անմոռանալի հեաքը վրայ կը կրես, ըսեն ու ձեռքովն անոր դուրս ելլալ հրամայելը մէկ եղաւ :

Բէլէկրուա ծեծ կերած ու վռնտուած շան մը պէս տիրոջմէն թողութիւն խնդրելու եղանակաւ Քրթին տակէն քանի մը խօսքեր մրմուալով դուրս ելաւ : Եւ սպասելով որ Մարքօ զինքը վերստին կանչէ ու ճամբայ ելլալուն հրաման տայ, սկսաւ տիրոջը ցամանը վրայ խորին մտածմունքներ ընել :

Որովհետեւ Բէլէկրուա, շատերուն պէս կարծած էր թէ՛ Մարքօյի բռնած ճամբէն ուրիշ նպատակ մը չէր կրնար ունենալ, բայց եթէ Բուքօնէի աղջկան Օդօրինօի համար տուած խոստումներն առաջ տանել՝ եւ ասոր համար ալ զերխոստարդն անմիջապէս նրաբանուհիէն հեռու բռնել : Եւ այս բանիս վրայով՝ երբոր Մարքօ իրեն առաջին անգամ պատուիրեց թէ աչքը Օդօրինօյի վրայէն պակաս չընէ, որպէս զի չԵլլայ որ մէկ մ'ալ Տէլ Պայցօ կոմսին տունը ոտք կոխէ, Բէլէկրուա ամենեւին ուրիշ կանկածի մը չերթալով՝ բնականապէս դժուարին էր անոր իմանալ թէ՛ իր ըրած խօսքերը տիրոջը սրտին մէջ քնչ աղեցուցութիւն կրնային ընել : Սակայն Մարքօյի այս յեղակարծ բարկութիւնը, առժամայն փայլակի պէս բերդապահին միտքը լուսաւորեց, եւ իմացաւ թէ՛ ասոր մէջ գաղտնիք մը կայ : Հետեւաբար սկսաւ մտածել թէ՛ կարելի է իւր տէրը նրանուհոյն հետ սիրահարած ըլլայ, եւ միտքը՝ բոլոր անցած գացած դէպքերուն տանելով՝ այս բանին հաւանականութեանը համոզուեցաւ :



Մարքո մինակ մնալով, անցաւ գրասեղանին առջին եւ հինգ վեց հատ նամակ գրելով՝ կանչեց նորէն իր բերդապահը, եւ անոր քանի մը մամուսոր պատուէրներ տալէն վերջը, թուղթերը ձեռքը յանձնեց ու քանի մը խօսք ալ իր Բօզաթէ բերդին լաւ պատրաստութեանը վրայ ընկէն վերջը, ըսաւ — իսկ Օղորինօյի գալով, զիտցած ըլլայ որ մէկ մ'ալ Միլան ոտք չի պիտի կոխէ . եւ եթէ Միլան գալու ալ ըլլայ, Տէլ Պալցօ կոմսը զինքն ամենեւին չի պիտի կարենայ ընդունիլ իր տունը . եւ դու ալ մինչեւ հիմայ ըրածիդ պէս աչքդ վրայէն չի պիտի պակսեցնես, եւ եթէ նոր բան մ'ալ պատահելու ըլլայ, շուտ մը ինձի յիմացնես :

— Պատրաստ եմ ձեր հրամանները ճշդիւ կատարելու, պատասխանեց Բէլէկրուա : Բայց թէ որ իմանալու ըլլամ թէ . . . վասն զի՝ լսածիս համեմատ արդէն աղջիկը մանչուն խօսուած է . . . եթէ կըսեմ, առանց կոմսին հաւանութեանը . . . դադանի հարսանիք մը . . . տեղի ունենայ . . .

— Պէտք է անմիջապէս արդելու, ըսաւ Մարքո :

— Բայց թէ որ անկարելի ըլլայ, որովհետեւ . . .

— Որ եւ է կերպով, կրկնեց Մարքօ, պէտք է արդելու, եւ ըստ պարապայից ինձի իմաց տալ, եւ այս ըսելով ճամբեց զինքը :

Բէլէկրուա դուրս ելաւ . սակայն խուճապաւ երթալու միջոցը՝ մանրաքննին նայուածք մը ընկելով ավրոջն երեսը, այնպիսի այլալուծութիւն մը տեսաւ անոր դէմքին վրայ, որ թէպէտ եւ կը ջանար նա յայտնի չընել սակայն եւս արտակ իր սրտին խռովութիւնը կը յայտնէր :

— Հասկցայ, հիմայ խելքս տուն եկաւ, ըսաւ այն ժամանակ մտքին մէջէն նենգաւորը : Յետոյ վարը գաւթին իջնալով, հեծաւ իր ձիուն վրայ, եւ խաբազանը հնչեցնելով պալատէն դուրս ելաւ, ու դէպ ՚ի Նոմպարաիա ճամբայ ինկաւ :

Բէլէկրուա մինակ, գիշերուան մթութեանը մէջ երիվարը քշելով ինքնիրեն կըսէր :

— Ո՛հ, անտարակոյտ եմ եւ աչացս վրայ կերպնում, թէ հիմայ կծիկին ծայրը գտայ . հիմայ հասկըցայ թէ . . . բոլորովին ինքնիրմէ դուրս եւ յիմարածի պէս՝ Բօզաթէ գալով զիս գտնելուն իմաստն ինչ է եղեր . նաեւ Թոսքանա երթալուն վրայ ալ մէկ մը ուղեին ու մէկ մ'ալ ճամբէն ետ դառնալը . . . իրաւ է թէ որչափ ալ բնութեանը մէջ քիչ մը խելացնորութիւն կայ, սակայն այս չափազանց էր . . . Ուրեմն խղճամ հիմայ ես ասոր վրայ . . . բայց ինչու : Մարքօ դեռ երէկ մօրը գրկէն զատուած մանուկ մը չէ . . . իսկ միւսը, գոնէ իշխանուհի մը ըլլար եւ կամ թապաւորի մը աղջիկ, ինչ եւ իցէ . . . երթալ սիրաւ հարկը այնպիսի աղջկան մը . . . այսու ամենայնիւ չեմ ուզեր ըսել թէ աղջկան երեսն ետին դարձած է . . . այո, գեղեցիկ է, սակայն անկէ գեղեցիկացնը կըրնայ ըլլալ . . . Ո՛հ, ինդարս կուգայ քանի որ սա մեծ մարդուն անունը կը յիշեմ . . . Մարքօ Վիսքօնթի . . . ասոր նմանը չկայ, եւ կարծես թէ ուրիշ խմորէ մը շինուած է . . . բայց այսպէս կոյր զկուրացն իմալ ու մինչեւ անդամ աղայակոն խաղալեաց խելք ընծայել . . . սակայն իմ բաղդս հիմայ պիտի փայլի, հիմայ ձեռքս անցած թեւն ու դածիս պէս պիտի խաղցնեմ . խելքճ Ռեծամեծներ, չէք դիտեր թէ որչափ պզտիկ էք :



Այս միջոցիս երկվարին ընթացքի ծանրացած ըլլալուն, մեր ճանապարհորդը սանձը ժողվեց ու նորէն մտրակելով սկսաւ դարձեալ իր առջի խորհրդոցը մէջ խորասուզիլ :

«Սակայն ինչպէս յիմար չի կոչեմ այդ մարդը . . . մինչդեռ մէկ կողմանէ ինծի խսախւ կը պատուիրէ Օգօրինօյի մաղին չի դպչիլ, միւս կողմանէ ալ անոնց հարսնիքը ո եւ է կերպով արգիւել կը հրամայէ . . . կեցցես, հրամանդ գլխուս վրայ . ըսել է որ երբ երկու սիրահարք իրենց մեծերնուն հաճութեամբը ձեռք ձեռքի տալով պսակի կենան, պէտք է որ ես մէջերնին մտնալով ըսեմ. — Բարեկամք, հեռացէք մէկը մէկէ, վասն զի իմ տէրս չուզէր ձեր միանալը . . . Ո՛հ, ինչպիսի հակասական բան . սակայն Լօտրիդիօյի խորհուրդները բոլորովին 'ասոնց հակառակն են, եւ որչոյս պիտի խնդայ թէ որ իրեն պատմելու ըլլամ այս արկածք : Սակայն վերջը գլխի ցաւեր չունենալու համար, լաւագոյն է Լօտրիդիօյի բան մը չըսելը» :

Մինչդեռ Բօզաթէի բերդապահը տիրոջը վրայ այսպիսի խորհրդածութիւններ ընելով ճամբան կը շարունակէր, Վարքօ պառկած՝ սակայն քունը չի տանելով երեւակայութեամբ կ'երպղէր իւր ծառային դէպ 'ի Միլան երկվարը մղելը : Եւ ինքզինքն ալ արդէն Միլանու տեղակալին պալատին մէջ կարծելով, մըտքին մէջէն քաղաքին պաշարմանը վրայ տեղակալին ու եղբարցը հետ կը խորհրդակցէր . երբեմն ղանտք թողլով կ'երթար փողոցներուն եւ հրապարակաց մէջ կը վազէր եւ երբեմն ալ տեսնալու կ'երթար քաղքին նորաչէն տեղերը, մեքենաներն ու գէնքերը, եւ իւր

ձայնովն ու օրինակաւ կը քաջալերէր քաղաքացիները, որպէս զի անվնաս ու անվեհեր պաշտպանեն իրենց յանձնուած տեղերը : Բայց այս տեղերուն, առարկայից ու անձանց երեւակայեալ պատկերներուն ներքեւը, կար պատկեր մ'ալ որ հաստատուն, անխախտ եւ կարծես թէ յամառած, աչքին առջեւէն չի պակսելով՝ հետզհետէ սրտին մէջ նորանոր զգացմանց առիթ կ'ըլար :

Ք Լ Ո Ւ Խ Ի .

Վարքօ Վիսքօնթի ժամերով այսպիսի ծանր մըտատանջութենէ մը վերջը, հողմած՝ շուարած եւ կարդէ դուրս թմբութենէ մ'ընկճուած, անհանգիստ քուն մը կը քնանար : Այս միջոցիս պալատին վարի դռները պահող զօրքերէն, Վարքօյի պառկած խուցը հանող մեծ սրահին դռներն ալ պահելու համար վեր դրկուող երկու Գերմանացի եւ մէկ մ'ալ Նուար վեր դրկուող երկու Գերմանացի եւ մէկ մ'ալ Նուարացի զօրականաց մէջ հետեւեալ կերպով պատահած խօսակցութիւնը, որչափ ալ ընթերցողաց արժանի դատեցինք կարճաճօտիւ նկարագրել, սակայն հարկ կ'ըլլայ նախ եւ առաջ անոնց ներկայ վիճակը մէջ բերել եւ ապա սկսիլ : Ուստի պէտք է գիտնան մեր ընթերցողք թէ՛ այս Գերմանացւոց մէկը Վարքօյի հետ Չերուխօյէն եկողներէն էր, միւսն ալ Քասթրուչիօյի մեծամեծ պատերազմացը մէջ փորձուած քա-



ջերէն մէկը : Ասիկայ նստած կը քնանար՝ ըստ այն գարունն հին սովորութեանը , երկու պատուհաններու մէջտեղը դեանէն կանգունի չափ բարձր ու քարաշէն նստարանի մը վրայ : Չնոքի վահանը պատուհանին մէջ դրած եւ երկու սրունքներովն ալ վերի ծայրը պատին կրթնցուցած նիղակին վարի ծայրը գրկած էր , եւ թէ որ այս քունին մէջ խորդալու ձայն չի հանէր , ճիշդ երևելի պատկերահանաց՝ Քրիստոսի յարութեան պատկերներուն մէջ Պիղատոսին զօրացը սուրբ գերեզմանին բոլորն էլալ եւ այլ ձեւերով նկարած զօրքերէն մէկուն կրնայինք նմանընել զինքը :

Ասոր քաղաքակիցն , ընդհակառակն , քիչ մը հեռուն Մարքոյի պառկած խուցին դրանը մօտ խըրտուիլակի պէս կը կենար . իսկ Նտալացին՝ շարունակ մեծ քայլերով վեր վար ժուռ կուգար , եւ երբեմն երբեմն պատուհանի մը առջեւ կենալով՝ Լուքքայի մարտիոցները կը գիտէր : Վերջապէս իրեն պէս արթուն կեցող եւ տիրոջը պառկած խուցը պահող զինուորակիցին եւ միանգամայն մեր քնացողին մէջտեղը կեցաւ , եւ խորացողը ցուցնելով ըսաւ :

— Ինծի նայէ , Գերմանացի , տես ինչպէս կը խորգայ քու քաղաքակիցդ , այս առաւօտ դայլի պէս կը դիշատէր , հիմայ ալ խօզի պէս կը քնանայ : Անպիսանը նայէ , աակաւին առաւօտուընէ մինչեւ իրիկուն խմած ոգելից ըմպելիաց գարշելի հոտը ուղուներէն դուրս տալով , բոլոր սրահը կ'աղանդէ : Խորգած թշուառական , խորգած , Աստուած վկայ թէ որ եւ ըլլայի , հիմայ այս արջին անպիտի յարստեանական քունն մը կուտայի ննջել , որ կը տեսնար :

— Ես ալ Գերմանացի եմ , պատասխանեց միւսը , եւ միանգամայն ես ալ անոր գեղէն եմ . բայց սովոր իրեն պէս անչափ տարիներ Քասթրուչիոյի հրամանին տակ պատերազմներու մէջ ծերանայ , պէտք է անոր այնչափ պակտութեանը աչք գոցէ . իմացարձացիօ , եւ թէ որ զիս ալ ընկերակից անուանելով խօսիս՝ գէշ չես ընէր :

— Շատ աղէկ ուրեմն ընկերակիցդ իմ , ի՞նչ կ'ըսես , սա Քամբօմաճիօրէի արշաւանքն օրինակն էր , եւ թէ այս բանիս Մարքոյի ալ հրաման տալն աղէկ եղաւ թէ չէ :

Նտալացիին այս հարցմունքը դեռ բերանն էր , չեմ գիտեր ի՞նչ պղտի շարժմունքէ մը՝ քնացողին գլխուն վերեւ պատուհանին մէջ դրուած վահանը վար խնայով՝ զլորեցաւ , եւ խորացողին ոտքերուն զարնելով արթնցուց զինքը : Մեր գիտովն աչքերը կէս բաց , կէս գոց եւ լաւ չ'զգաստացած , իր ընկերներուն բերնէն Մարքոյի անունը լսելուն պէս , խղդուկ ու բիրտ ձայնով մը հարցուց :

— Ի՞նչ է Մարքոյի վրայ խօսածնիդ :

— Կ'ըսէ թէ , պատասխանեց Պացիօ , Քամբօմաճիօրէի արշաւանքը աւաղակութիւն մ'էր , եւ թէ պէտք էր որ Մարքօ՝ ձեղի երթալու հրամանը տալէն առաջ , զձեզ մի առ մի խղդէր . . . :

— Մեզի երթալու հրաման տայ , վրայ բերաւ Գերմանացին . խնդալս կուգայ սա մեր երթալու հրամանին վրայ : Այդ բանը ուղղապէս իրմէ չը կրնար կախուսն ունենալ , խեղդ դուրսդ ժողէ : այդ քու ըսածդ ճիշտ անծուխ կրակով քաղաք մը այրել ու շերտ կը նմանի :



— Հնա, հնա, հնա, հնա, ի՛նչ հպարտութիւն, պատախանայն իտալացին . թէ որ չը գիտցող մը ըլլայ, կը կարծէ թէ դու ես զօրավարը, եւ Վլխքօնթին ալ անապայ զինուոր մը :

— Ո՞վ կը համարձակի Մարքօն անսպայ անուանել, պոռաց միւսը . անիկայ զօրավար մ'է, որուն նմանը քիչ կայ, եւ հիմայ որ Քասթրուչիօն ալ մեռաւ, իտալիոյ անալին զօրավարը կրնամ կուչել զինքը : Սակայն ասիկայ ամենեւին մեր երթալու հրահանարն հետ կատակցութիւն մը չի կրնար ունենալ :

— Այո՛, շատ լաւ ալ կրնայ ունենալ . ըսաւ միւս Գերմանացին . որովհետեւ զօրավար մը նախ եւ անաջ իր զօրացը ամենայն կերպով հրամայելու իրաւունքն ունի, եւ թէ որ խումբի մը ո եւ ինչ պակասութիւնը տեսնէ, անմիջապէս վերստին կարգադրութիւնը հրամանը կուսայ :

— Ես քեզի բացարձակն ըսեմ, կրկնեց անալին . մէր կարգադրութիւնը այսչափ կրնայ ըլլալ, եւ մեզի ալ ուզողը օրէնսդիր չի կրնար ըլլալ : Մինչեւ որ ամբողջ ամսակամներուս հետ շեռներէն վար հոս իջնելուս համար ալ մեզի խոտտացուած ստակները չառնենք, մենք ենք զօրավարը . եւ Մարքօյի ալ Լուքքայի տէր սեպուրիլ, միայն մեր գլխաւորն ըլլալուն համար է :

— Աւրեմն, թէ որ Մարքօյի ձեր գլխաւորն ըլլալն ընդունիք, ըսաւ միւս Գերմանացին, ըսել է որ անոր ձեր վրայ ամենայն կերպով ունեցած իշխանութիւնն ալ ընդունելի է :

— Ի՛նչ նիւթական մարդ ես, կը գոչէր միւսը, Մարքօ թէ մեր գլխաւորն է եւ թէ միանգամայն մեր

գլխաւորը չէ : Զանիկայ մենք ընտրեցինք՝ ժողով բրդեան աչքին աղէկ երեւնալուն համար, իման զի թէ որ զօրաց խումբ մը անանց գլխաւորի եւ անանց փոզերու հնչման հնազանդելու, քաղաք մը մտնալը տեսնուի, անմիջապէս «խումբ անազակաց» անուամբ կը մկրտուի : Բայց թէ որ այդ անազակներն իրենց անջեւէն վիրը սակի շղթայով մէկը, եւ աջ կողմերնին զրօշակն ու ձախ կողմերնին ալ թմբուկներ եւ փոզեր ունենան, այն ատեն զինուորի անունը ընդունելով, մեծ պատիւ ու յարգանք կստանան աշխարհքիս մէջ :

— Սակայն ի՛նչ շահ կրնայ ունենալ Մարքօ, ձեզի հետ այս ճամբան բռնելով, հարցուց Խալապին :

— Ինչ շահ մի, վրայ բերաւ Գերմանացին զարմացմամբ մը . այն շահը՝ որուն համար բոլոր մարդիկ մէկգլմէկ կը կործանեն : Այսինքն այն դեղին մետաղի կտորները ստանալու շահը, որոնք ճերմակը սեւ օւսելը ձերմակ կը ցուցնեն, որոնք պատան երկրաստասարդ օւ երկտասարդը պատաւ կրնեն, եւ . . .

— Իտալացին խօսքը կարելով, կաղաչեմ ըսաւ, ալ բաւական է . Մարքօ Վլխքօնթի՛ ստակի համար տեղէն շարժի, այնպիսի վեհանձն օւ ստասաններն մարդ մը . . .

— Լաւ կըսես, իրաւ է թէ այնպիսի վեհանձն մարդիկ ստակը տիղմի մէջ կը նետեն, կըսէր ընկերը, սակայն ես այս անտակներուն շատերը՝ վերջապէս բերդերու մէջ ծառայելին տեսեր եմ : Այսու ամենայնիւ Մարքօյին ալ վերջը նոյնպէս պիտի ըլլայ ըսել չեմ ուզեր : Եւ որովհետեւ այս բնութեան տէրն եղողները միշտ վեհանձն օւ ստասաններն մնալ կու-



դեն, հետեւաբար ամենէն ալ աւելի ստակի կարօտութիւն կունենան :

Այս խօսքին վրայ՝ Նաղարացոյն բարկութիւնը աւելի շարժեցաւ . սակայն ապօրինաւոր գործ մ'ընել չուզելով, ինքզինքը բռնեց . ուստի սրահին մէջ քանի մը քայլ վեր վար երթալ ու դալէն վերջը, հետեւեալ կերպով խօսքը դարձեալ շարունակեց :

— Կը տեսնամ թէ՛ միայն դու շատ դիտես, եւ միանգամայն ալ խիստ մեծ մեծ կը ջարդես :

— Ինծի նայէ՛, կըսէր Գերմանացին, ըստ իմ կարծեացս, մարդուս քսակին դպչելէն աւելի մեծ սրտիցաւ չի կրնար ըլլալ . այսու ամենայնիւ, որչափ ալ ինծի պատահած բան չէ՛ սակայն խիստ դիւրութեամբ եւ շուտ մը կրնամ ճանչնալ այն տեսակ անմիաները՝ որոնք կը մեռնին կնկան մը համար : Եթէ տեսնայիր Փարքօյի Զէրուլիօ եղած ժամանակը, երբ որ դրադելու գործ մը չունենար՝ այնպիսի սրտնեղութեամբ մը կուղէր ժամանակն անցընել, որ ամենէն արմարն ալ անմիջապէս կրնար հակնալ, թէ իւր սիրելին տունը մոռցեր է : Թէ որ ձի հեծնալու ըլլար, շու մը կամ դէպ 'ի Բօնիթէ Բէթրի եւ կամ Սան Փարչէլլօ կ'երթար : եւ տխուր դէմքով մը ժամերով կը նայէր Լոմպարաիոյ կողմը : Իսկ դիչերները, միշտ առանձին վայրագաւիթներու մէջ կը քայլէր եւ կամ միջեւ առաւօտ լուսնի հետ սիրահարութիւն կընէր : Երեւարեւակայէ՛, զօրապետի մը ժամերով լուսնի նային ու հետը խօսակցիլը, կամ յիմար է կըսես եւ կամ սիրահար, եւ վերջապէս այս ալ պէտք է ըսել որ . . .

Սակայն ո՞ գիտէ թէ՛ տակաւին որչափ պիտի երկարէր խօսակցութիւնը, թէ՛ որ Նաղարացոյն բարկու-

թիւնը չափազանցելով՝ չը կտրեր անոր գրոյցն ու դէպ 'ի սանդուխին գլուխը վազելով չը կանչէր . — դուրսը՝ ղէնքերու շառահիւն մը կայ, կարծեմ թէ մեր Վիրլլպանքան է . այս գիշեր ան ալ յետին աստիճանի գինով էր : Այս լսելուն պէս, Լուքքայի պարսպապահ Գերմանացին, դարձաւ իր առջի տեղը պահելու, իսկ միւսն ալ ուրիշ գլուխ ցաւցնելու մէկը չը գտնալով, նստած տեղը դարձեալ սկսաւ քնանալ :

Մենք հիմայ անոնց բարի գիշեր կը մաղթենք, ու կը դառնանք Միլան . տեսնալու թէ՛ հոն տեղի դրօձերն ինչ եղանակի մէջ են :

Բոոր Վիսքօնթիի ուղղապէս հպատակ եւ իշխանութեանը կամ պաշտպանութեանը ներքեւ եղող երկիրները, իրենց մէջ գտնուող բնակչաց կարողութեանը համեմատ պարտաւորեալ էին իոխ տալ՝ ըստակ, վաճառք, գործիք, անասուն եւ պատերազմի զինուոր : Սակայն այս պահանջմունքները՝ շատ տեղ օրինաւորապէս չէին կատարուէր . որովհետեւ երբեմն պղտի երկիրներու մէջ գտնուող պարոնաց կամ կոմսերու յօժարամտութեանը համեմատ, տասանորդ, տուրք եւ կամ ո եւ է պաշար եւ այլն ժողովոյններուն դէմ՝ բերդերնուն անհաստատ կամուրջները վեր առնելով, մինչեւ անգամ երկար ժամերով կը պատերազմէին զիրենք վոնտելու համար : Ածցօնէ՛, իր իշխանութեանը առջի տարիները որչափ ալ արիւն քրտինք մտնալով ամենայն ջանք ըրած էր ստոկ ժողովելու, որպէս զի գոնէ կայսերական տուրքէն մնացած պարտքը կարենայ վճարել, սակայն 'ի դուր, Բայց եկեղեցւոյ հետ հաշտուելէն վերջը՝ կարծածէն աւելի դրամի սէր եղաւ :



Արտվճեաեւ պապին կողմանէ խրկուող քահանայք, մայրաքաղաքին իշխանութեանը ներքեւ եղող քաղաքներն ու բերդերը երթալով, լիակատար ներողութիւն կը քարոզէին այն ամենուն, որոնք անձամբ եւ կամ ստացուածքով, նշովեալ Պաւարոյի քաղաքը պաշտպանելու օգնութեան կ'երթային: Ասով քիչ ժամանակուան մէջ Միլանը լեցուեցաւ պաշարով, զէնքով, ստակով եւ մարդով:

Ինչպէս որ մեր ընթերցողը գիտէ, Լիմոնդան սուրբ Ամբրոսիոսի հակապապ արքածօրն իշխանութեան տակն էր: Ասիկայ տեսնալով որ կայսեր իշխանութեան դէմ տեղի ունեցած ընդհանուր պատրաստութեան ընդդիմանալու համար նաեւ բոլոր մենաստանին հպատակ երկիրներն ալ միատեղ առնելով դարձեալ իր ոյժը չի պիտի բաւէ յաղթութիւն մը ընկու: Աւստի կայսեր բերնէն հետեւեալ սոսկալի հրովարտակը զրկեց Լիմոնդա: «Թէ ոչ ոք, օ եւ է կերպով չըլլայ ձեռնտու, բուն իր տիրոջը եւ Քրիստի Քահանայապետաց Նիկողայոսի հինգերորդի դէմ ապրստամբող Ածցօնէին, որ է աղբււր եւ առաջնորդ հերձուածողութեան, հերետիկոսութեան, մարդասպանութեան, կախարգութեան եւ ամենայն մոլորութեանց»:

Լիմոնդացիք որչափ ալ առաջին անգամ այս հրամանէն ասրատիեցան, սակայն երբոր լսեցին թէ այդ յարգելի արքահայրը փոխուեր է, եւ թէ անոր տեգն եկողն ալ նոյն ազգեցութիւնը չունի, իրենք ալ ընդհանուրին հետեւելու հարկադրեցան: Արտվճեաեւ այդ խեղճերուն քիչ միտիթարութիւն չէր սեպուեր աղատիլ այնպիսի հզօր թշնամուց մը ճիրանսե-

րէն, որ երբեմն երբեմն զիրենք չարաչար կը հալածէր, ինչպէս որ բաւական առաջ պատմեցինք եօթանասուն աւազակաց՝ քան թէ զօրաց, Լիմոնդայի մէջ ըրած սոսկալի ջարդերնին: Աւստի Պապին կողմանէ ժողովուրդը Պաւարոյի դէմ գրգռելու համար զըրկուող քահանայք Լիմոնդա հասնելուն պէս, ամենայն յարգանօք եւ մեծաւ ուրախութեամբ ընդունուեցան:

Բոլոր գեղացիք՝ այր եւ կին, անժամայն չալկելով իրենց բոլով կարասիքը, կ'ուղէին դէպ ՚ի Միլան ճամբայ ելլալ: Սակայն խիստ երկար աշխատանօք ասոնց շտապն ու կարգէ գուրս անձնուիրութիւննին շափաւորելէն վերջը, հազիւ կրցան միայն պատերազմելու կարող եղողներուն պէտք ունենալին անոնց հասկցընել:

Աւստի սոսկ զէնք բռնելու կարող ըլլողներն ընտրուեցան, եւ ասոնց ալ զլուխ եւ ճամբու առաջնորդ մեր վաղեմի բարեկամ ժողովրդապետն ընտրուեցաւ: Այս ընտրուողներուն մէջ նաւաւարն ալ կար, Միքելէի պառաւ Մարթա կինը, հասարակաց օգտին համար իր մինակ մնալն փոյթ չընելէն զատ՝ նա մանաւանդ, որպէս զի իր ամուսինն ալ իւր ընկերներուն բոլորով ին բեռ չըլլաց ըսելով, ամբողջ իւր աղքատիկ ստացուածքն անդամ տալու չի զլացաւ: Սակայն բարի ժողովրդապետը զարմանալով եւ խղճալով միանգամայն Մարթային խեղճ վիճակին վրայ, զինքն այս մեծ զոհողութենէն ետ կեցընելէն վերջը, դեռ ուրիշ շատերուն կամացն ու միանգամայն ընդհանուր կանոնի դէմ ըլլալն իմացընելով, խրատեց զինքը՝ որ իւր ամուսնոյն հետը դայ:



Այսու ամենայնիւ այս կարգէ դուրս դէպքը , մէկու մ'ալ ապօրինաւոր չերեւցաւ , որովհետեւ բո- լոր գեղը զիտէր այդ խեղճ պառաւին ցաւած սիրտ մ'ունենալը :

Ուստի Լիմոնդացւոց փոքրիկ գունդը դէպ 'ի Միլան ճամբայ ելաւ , իրենց կարողութեանը համե- մատ տեսակ տեսակ պաշարներով , եւ ճամբուն վը- րայ իրենց պէս ուրիշ գեղերէ ալ ճամբայ ելլողնե- րուն պատահելով , տեսան որ անոնք ալ իրենց պէս , ըստ իւրաքանչիւրին կարողութեանը՝ մէյմէկ տեսակ պաշար կը տանէին հասարակաց օգտին ծառայեցընե- լու համար :

Միլան հասնելով , բոլոր ժողովուրդը զբազանաց մէջ գտան . . . մէկը փոս բանալու , միւսը պատ հիւ- սելու , ոմանք մեքենաներ շինելու ետեւէ էին : Բո- լոր փողոցներուն մէջ մըջիւնի պէս գործաւորներ կը բանէին , եւ ասոնց մէջ զինուորականաց ու քահա- նայից շարունակ անց ու դարձն ալ պակաս չէր :

Հրապարակներու մէջ առժամանակեայ զինագոր- ծաց դարբնոցներ զեռեղուած՝ գործաւորները մէկմէ- կու խրախոյս տալով կը բանէին . մէկը փուք կը շար- ժէր , միւսն ալ արեան պէս կարմրեցած երկաթն ազցանով բռնած՝ սալին վրայ ծեծելէն վերջը , շա- րայմամբ ջուրը կը մղէր : Մուրճերու , խարտոցնե- րու ձայնին եւ գործաւորաց ու ամբոխին երգերուն՝ կը խառնուէր նաեւ թմբուկներու , եւ փողերու եր- կայն բարակ հնչումները . իսկ բոլոր քաղքին եկե- ղեցեաց զանգակներուն ձայնը՝ զիշեր ցորեկ ամենե- լին չէր դադրէր :

Լիմոնդացւոց գունդը Միլան հասնելուն պէս ,

սուրբ Ամբրոսիոսի մենաստանին ղէնքերը , այսինքն ճերմակ կտաւի վրայ արագիլ մը կտուցովն եպլեակո- պոսական դաւաղան մը բռնած եւ ոտքերուն տակն ալ Միթր մը գծագրուած դրօշակը՝ բացած էր : Ժո- ժովրդապեան իւր այլ եւ այլ կերպով զգեստաւորեալ գունդին առջեւէն , եւ Լիմոնդացիք ալ զոյգ զոյգ ա- նոր ետեւէն կերթային : Իսկ ասոնց զգեստներն ընդ- հանրապէս արջի եւ կամ սլխարի մորթէ կարած կարճ վարախներ , կարճ ու մէջքերնին սեղմած բուրդէ բաճ- կաններ ու դրուխնին ալ բուրդէ դլխարկներ էին : Իսկ ղէնքերնին , մէյ մէկ վահան ուսերնէն վար կախուած մէջքերնին խոշոր սուր մը , ձեռքերնին ալ ոմանք նեւ ոմանք նիզակ եւ ոմանք ալ կայիներն ունէին :

Քաղաքացիք հետզհետէ բոլոր այս նոր եկողնե- րը , մեծաւ յարգանք եւ ամենայն սիրով կ'ընդունէ- ին : Լիմոնդացիք իրենց դրօշակէն ճանչցուելով , շուտ մը Տէլ Պալցօ կոմսին պալատն առաջնորդուելու որո- շումն ըրին :

Տէլ Պալցօ կոմսին տունը՝ Բօնիթէ Պէաթրիչէի մօ- տերը գանուելով , նոյն տեղը պաշտպանելու համար որոշուած գունդերուն ալ՝ անոր պալատին մէջ պա- տրապարուելնին յարմար գասուած էր :

Լիմոնդացիք պալատին առաջին վայրագաւթը եւ բոլոր շուրջն եղող կամարներուն տակը ղէնքերով պաշարներով եւ ամեն կարգէ մարդերով լեցուած գտան : Ուստի իրենք ալ զեանայարկին վրայ մեծակ սրած մը գանալով , հաղլւ թէ քանի մը անկարգ կեր- պով գրուած ստղներուն վրայ նստած՝ ղէնքերնին մէջտեղը հաստատուն ու կլոր աթոռի մը բոլորը զե- տեղելով , քիչ մը հոգնութիւն առնելու վրայ էին ,



մէկ մ'ալ ծառայ մը ներս մտնելով ժողովրդապետն ուզեց :

Բարի ծերունին , մեծաւ յարգանօք կոմսին ներկայանալէն վերջը , անոր խնդրանայք համեմատ , իր հետք բերած բազմութիւնը՝ մի առ մի անուանելով , անոր յիշողութեանը ներկայացուց :

— Քանի որ իմ շօր բաղդս՝ այսպիսի ծուղակի մը մէջ ձգեց զիս , կըռէր կոմսը , ինծի մեծ մխիթարանք է գոնէ քանի մը ինծի ծանօթ անձանց մէջ գըտնուելիս , որոնք թերեւս վառագի մը մէջ սրտանց կարեւան զիս պաշտպանել : Որովհետեւ վարը գասուող միւս սրկիայները , Ատուած չընէ . . . իսկ երբոր կը մտածեմ թէ Պաւարոն յաղթանակելով , դայ տեսնայ այս խուռն ամբոխին իմ տանս մէջ ժողովուրը , ինչ պիտի ըսէ . . . անշուշտ ես իմ յօժար կամօքս զասոնք հոս բերած պիտի սեպուիմ . . . մտածէ մէկ մը . . . երեւակայէ մէկ մը . . . : Ա՜հ , երանի թէ կարենայինք դառնալ ու տեսնալ վերստին մեր լեռներն ու բլուրները . . . եւ այս ըսելով մեծ հառաչանք մ'ըրաւ :

Ժողովրդապետը՝ առանց դէմ դրուցելու , կուզէր զինքը համազել եւ իրեն սիրտ տալ , ըսելով թէ այսպիսի մեծ պատրաստութեան մը դէմ կայսեր յաղթանակէն անկարելի բան էր : Սակայն այս խօսքերն , աւելի կոմսին բարկութիւնը շարժելով . — դու ինչ բանէ լուր ունիս , կըռեր բարի ծերունւոյն , դու բան մ'ալ չես գիտեր . . . բաւական է . . . հիմայ քրոյ դրուցելիքս սա է որ , նախ Արմենդացոց պատուիրես , որպէս զի՝ ս եւ է պարագայի մէջ մինակ չըթողուն . որովհետեւ ես ալ Արմենդացի կը սեպուիմ . . . : Երկրորդ , թէ հոս տանս մէջ ամենուս հետ բարեկա-

մարար եւ սիրով վարուին , վասն զի ամեն տեսակ մարդ պակաս չէ . . . մանաւանդ պէտք է իմացնեմ ձեզի թէ Ա. Արքայի տի մենաստանին ուրիշ զօրքերէն զաս՝ պիտի տեսնէք նաեւ վարը այն մեր գեղը կրակի տուող եօթնասուուն աւազակներէն ոմանք ալ . չեմ ուզէր ամենեւին որ անոնց եւ մերիններուն մէջ խռովութիւն ծագի . . . : Թէ որ Աուբոն հոս ըլլար , անիկայ միայն անոնց լեզուէն ու բնաւորութենէն բաւկը հասկնար . սակայն պէչն ան է որ՝ չեմ գիտեր հիմայ անոր ալ ո՞ր դոմուրը :

— Աուբոն , ըսաւ միւսը , հիմայ հոս պալատէն ներս մտնալնս առաջ պղտի հրապարակի մը մէջ տեսանք որ քանի մը գեղացիներ զէնքի կը վարժեցնէր . մանաւանդ թէ պա՛ մ'ալ դանոնք ձգելով մեր ետեւէն մինչեւ վարը պալատին դուռն եկաւ , սակայն ներս չի մտաւ , որովհետեւ ձեզմէ արդիւեալ է եղեր :

— Այո՛ , իրաւ է , պատասխանեց կոմսը , այլայլելով մը , ժամանակաւ դէպք մը պատահեցաւ . . . սակայն հիմայ . . . եթէ ինք բարեհաճեր է հոս գալ ձեզի ըսած նպատակիս ծառայելու համար . . . ամենայն սիրով իրեն հրաման կուտայի դարձեալ տանս մէջ մտնալու :

— Թէ որ այնպէս է , վրայ բերաւ ժողովրդապետը , շուտ մը կրնանք մարդ խրկել զինքը բնորոշու համար . կարծեմ թէ այն ըսած հրապարակիս ալ կողմը մեծկակ նոր եւ կարմրագոյն պատերով եկեղեցւոյ մ'առջեւ կրնան դոնալ զինքը :

— Թերեւս սուրբ Մարկոսի եկեղեցին ըլլայ այդ ձեր զուեցածը , ըսաւ կոմսը , հիմայ ես գտնալ կուտամ զինքը :



Ուստի կոմսը մարդ խրկեց, և քիչ մը վերջը  
 Լուբոն երեւցաւ, ուրախանալով իր տիրոջը հետ հաշ-  
 տուելուն և Խնքղինքն իր ծնողացը, բարեկամոցն  
 ու զեղացեոցը մէջ գտնալուն վրայ: Եւ երբոր իրմէ  
 պահանջածին իմացաւ, — ամեն բան, պատասխա-  
 նեց Լուբո, մեր զեղացիներէն կախում ունի, բա-  
 ւական է որ մերիններն ուղենան անոնցմէ կրած այն-  
 չափ չարիքներնին մոռնալով հաշտուիլ. իսկ զինուոր-  
 ները ինծի ձգեցէք: Մի կարծէք թէ զինուորք ռի  
 կը պահեն, և Բնչ իրաւամբ պիտի ռխակալին:

Այս միջոցիս քահանան վարի սրահն ելաւ, իր  
 բարեպաշտ ժողովողեան սրտին մէջ հաշտութեան սեր-  
 մը ցանկու գիտմամբ: Շատ չանցաւ, Լուբոն ալ Վին-  
 չիկուէրայի ձեռքէն բռնած ժողովրդապետին ետե-  
 ւէն նոյն սրահը մտան, անոնց ետեւէն ալ այն ամեն-  
 քը՝ որ կրցեր էին վախչիլ Լիմոնդայի արշաւանքէն:

Ձինուորները նախ և առաջ սղաղակեցին. — կեց-  
 ցէ Միլան, կեցցեն և Լիմոնդացիք: Իսկ զեղացիք,  
 կէս մը քահանային խրատներէն սրտերնին կակուղցած  
 կէս մ'ալ ժամանակաւ իրենց գէմ թշնամացած՝ սա-  
 կայն հիմայ բարեկամաբար իրենց ոտքն եկած զին-  
 ուորներուն հաշտութեան բարեմաղթութիւննին տես-  
 նալով, կարգէ դուրս զգացմունքէ մը յարիշտակուած՝  
 ամենքն ալ ոտք ելան և զինուորները զիմաւորեցին:  
 Ուստի հալածողք և հալածեալք զիրար գրկելով, ի-  
 րարմէ փոփոխակի կրած չարիքներն և ամենայն ռխա-  
 կալութիւն յաւիտեան մոռնալու դաշինք զրին:

Մինակ մեր նաւապարը տեղէն չէր ելած, և ևեր-  
 կու ձեռքերը կուրծքին վրայ ծալլած, այդ խառնի-  
 ճաղանձին մէջ խեթիւ կը նայէր խոփոռաղէմ զին-  
 ուորի մը երեսը:

Վինչիկուէրրան ճանչնալով և յիշելով միանգա-  
 մայն Պէլլապուօնօն դարանը ձգող զեղացին ինքն ըլ-  
 լալը, բարեկամաբար անոր քովը մօտեցաւ և ուսին  
 զարնելով:

— Օէ բարեկամ, դո՛ւ ալ հոս ես:

Միքէլէ, առանց տեղէն շարժելու և պատաս-  
 խանելու, գամիտի մը գայլին նայելուն պէս, իւր  
 սուր աչքերն անոր երեսը դարձուց:

— Ո՛վ խարդախ, ըստ դարձեալ զինուորը կէս  
 ժպիտով մը կը յիշես, Պէլլապուօնօնի նուակին մէջ  
 դրած ոսկի ֆիօրինները, որոնցմէ վերջը մեզի ալ մաս  
 մը պիտի ելլար: Դու ամենեւին չէիր մտածեր թէ մէկ  
 մ'ալ իրարու կրնայինք պատահիլ. լեւներն անշարժ  
 կը կենան, սակայն մարդիկ կարող են զիրար գտնար  
 չիմայ քեզ տեսնեմ ուրեմն:

— Ահա, ես ալ հոս պատրաստ եմ, պատասխա-  
 նեց Միքէլէ՛, ոտքի ելլալով, պատրաստ եմ քեզի և  
 բոլոր քուկիներուդ գէմ գնելու:

— Օ՛, օ, կանչեց զինուորը ինդալով, տեսէք  
 սա խեղդեալներ որ կուղէ պալէնա կէտը կլլել: Թո-  
 դունք հիմայ այս խօսքերը, եղածն եղած է, հոս ե-  
 կու, քեզի հետ կուղեմ գինի մը խմել:

— Ինծի նայեցէք, հոս հիմայ ամենքնիս ալ բա-  
 րեկամ ենք, վրայ բերաւ Լուբո, մոռնանք անցեա-  
 լը, և դու ալ հաշտուէ տեսներք սա բարի ընկեր-  
 ներնուս հետ:

— Մոռցմը, մեր բարի առաջնորդին քիչ մը ա-  
 ռաջ տուած խրատները, կը փոխար յստատեալ նա-  
 Վապարին ակամջէն վար՝ իւր պտտաւ կինը, այս է ու-  
 րիչներուն տուած բարի օրինակը, դու որ ամենէն



ձերը պիտի ըլլան : Միքէլէ ուրի ելաւ , եւ ակամայ հնազանդեցաւ հասարակաց կամայրը : վերջը դարձեալ գնաց առջի տեղը նստելու :

— Ի՞նչ նշոված գեղացի մ'է , կըսէր Ալինչիկուէրրա Լուբոյին , քիչ մը անկէ հեռանալով ուրիչ սրահ մը մտած ժամանակնին . հիմայ ճիշդ ամենայարմար կէտը չէր , սա անպիտանն արժանի գեղը մատակարարել . թէ որ դու հոս չը գտնուէիր՝ փայ էր անոր գլխուն :

Լուբո կարճատօսիւ պատմեց անոր նաւավարին ալեկոծութեան մը մէջ իր մէկ հատիկ որդին կորսընցընելէն 'ի վեր սրաին ցաւէն շուարած ըլլալը : 'նոյն միջոցին ժողովրդագետն ալ Միքէլէի մօտենալով , կը պատմէր Ալինչիկուէրրային ըրած մեծամեծ բարիքը՝ որ Քիարավալէ Լուբոյի մահն անոր ձեռքն ըլլալով փրկեր էր զինքը : Երկու կողմէն առնուած փոփոխակի լուրերը , մեր երկու սրտմտելոյ բնականուպէս բարի սրտերն կակղացուցին . որոնք կէս ժամէն վերջը՝ սրահին մէջտեղն իրարու պատահելով , առանց բառ մը արտաբերելու , մէկմէկ գրկեցին եւ 'ի միմիջարութիւն ամենեցուն , բաւական ժամանակ նոյն դիրքի մէջ կեցան :

Տէլ Պայցօ կոմսը Լիմոնդայէն , քանի մը տակառ ձերմակ եւ անուշահամ գինի մ'էր բերել տուած . ուստի ամենքն ալ նոյն գինիէն գաւաթնին լեցուցին . եւ իւրաքանչիւրին բարեկենդանութեանը խմեցին , եւ կնքեցին այս նոր հաշտութեան գաշնադրութիւնը :

### Գ Լ Ո Ւ Խ Ի Ա :

Կոմսը , Լիմոնդայի ժողովրդագետին մտնաւոր խուց մը տալով , հրաւիրեց նաեւ զինքը ամեն օր իր սեղանը գալու : Կանչեց նոյնպէս նաւավարին ալ ընտանիքը , եւ մեր Մարթան իւր պալատին մէջ Ամբրոսիօ գտնուած թաղը խրկեց . որուն պաշտօնը պիտի ըլլար մատակարարել պալատին մէջ այս տարօրինակ դէպքին պատճառաւ գտնուող բազմութեան ամենայն պիտոյը , այսինքն՝ անկողիննին շտկել , ձերմակեղէննին լուալ եւ կերակուրնին եփել եւ այլն :

Ենզճ Մարթան , որչափ ալ ամենայն սիրով այս աշխատութեանց յանձնառու ըլլալով՝ իր կարողութեանը համեմատ կ'աշխատէր , սակայն միշտ աչքին առջեւը կուգային իր լիճներն ու բլուրները : Ամենեւին չէր մոռնար լճին ընդարձակ ու հայիտիայ մակերեւութին տեսքը . աչացն առջեւը կ'ուգային իր խրճիթն քովէն անցնող արծաթափայլ առուակին՝ կանաչներուն մէջէն կարկաչելով սահիլը : Ամեն առաւօտ արթննալուն պէս ինքզինքն իր հիւղին մէջ կարծելով կ'երեւակայէր այն մուխէն սեւցած պատերը , մէջտեղի հաստատուն սեղանը , գետինը ձգած քանի մը նաւակի թիւրը , տախտակէ այթոռներն ու վերջապէս այն անկողինը . . . եւ ամենայն սիրելի ու միանդամայն ցաւալի յիշատակութեանց մէջէն՝ քան դամեար սիրելի եւ քան դամենն աղէտալի յիշատակ մը կը ծագէր Մարթայի մտաց մէջ : Ա՛հ , արդարեւ խիստ



դառն ու յիրաւի անբացատրելի վէրք մ'էր մօր մը սրտին . . . :

Սակայն այս ցաւոց եւ կսկծին սաստկութիւնը՝ խեղճ Վարժայի սրտին մէջ, առջի օրերուն պէս չէր մնացած . ժամանակն ու խոնարհաբար ինքզինքը Աստուծոյ յանձնելը, կարծես թէ առած վէրքին վրայ բալասան ցանած էին : Խեղճին մեծ միտիթարութիւն մ'ալ այսպիսի դժուարին ժամանակուան մէջ Միքէլէի քովը գտնուելն էր, որուն կարող էր ամենայն պիտոյքը հողայ, ինչպէս նաեւ բոլոր ուրիշ գեղակցացը : Կը գոհանար յԱստուծոյ, որ զինքը տակաւին կարողացուցած էր գոնէ մասամբ ծառայութիւն մ'ընելու : Իւր սողայութեանը խանձարուր եղած քաղքին եւ միանգամայն ձեռնտու ըլլալու հաւատոյ պաշտպանութեան : Այս ամեն խորհրդածութիւնները կերպով մը Վարժային ցաւած սիրտը կը կակղեցնէին, եւ իր ամենօրեայ աշխատութենէն եւ չը կենալով կըրնամ ըսել թէ նոյն իսկ այն հոգնելուն մէջ անգամ իրեն միտիթարութիւն մը կը գտնար :

Կաղօթէր առ Աստուած, եւ իր աղօթքն աւելի քաղցր ու սիրալիք էր : Կ'արաստուէր, սակայն իր արտասուքն առաջուան պէս դառն չէր . եւ քանի որ արցունքները ոլոռն ոլոռն աչքերէն վար յորդառան կիջնային, կարծես թէ խեղճին սրտին վրայէն բևռ մը վերանալով կը սփոխէր եւ նոր զօրութիւն մը կը ասանար :

Մեր բարեխորա պառաւը քիչ ժամանակուան մէջ բաղէակրին ընտանեացը հետ բարեկամացաւ . այնպէս որ Վարխանան, Ամպրօծիօն, Լուբօն ու Լուսորէզան անոր վրայ սէր կապելով՝ իրենց ընտանեացմէ մէկուն պէս կը վարուէին հետը :

Մինակ Պէնարտօյի հետ ամենեւին չը կրցաւ բարեկամանալ . որովհետեւ այն անպիտանը Պաւարօյի եւ հակապապի կողմնակցութենէն եւ չը կենալով, սուռնէն դուրս չէր համարձակէր ելլելու . վախնալով որ չըլլայ թէ իր անսովոր վարդապետութեանը վտարէն՝ գլխուն բան մը բերեն : Այսու ամենայնիւ, տանը մէջն ալ մէկը մէկալը արհամարհելէն եւ իր շատախօսութեամբը բարկացնելէն ուրիշ բան մ'ալ չէր ընէր :

Այս միջոցիս Պաւարօյի բանակին քաղքին մօտենալուն լուրն առնուեցաւ : Որչափ ալ բուն կայսեր զօրքերն երեք չորս հազար հեծեալներէ եւ խիստ շատ հեակակներէ բաղկացեալ էր, սակայն ասոնցմէ դաս Քանէ Տէլլա Սկալան՝ կայսեր օգնութեան իրկած էր չորս հարիւր կրթեալ զօրք . նոյնպէս ալ Լոմպարտօյ այլ եւ այլ քաղաքներէն եւ շատ մ'ալ Միլանու հզօր իշխաններէն՝ դրօշակներն փոխելով, կայսեր օգնութեան կը վազէին իրենց հպատակ գտնուող գեղացիներովը : Ատով Պաւարօյի ոյժը մեծ էր, եւ Միլանու վրայ ընելու յարձակմանը պատրաստութիւնն սոսկալի :

Բէլէկրուային ալ Լուքքայէն դառնալով Միլան հասնելը ճիշդ նոյն օրուան պատահեցաւ . ուստի նախ եւ առաջ Լօթրիդիօյի հետ զաղտնապէս տեսնուելով, վաղեղ Բօղաթէի բերդին պաշարը հողալու : Քիչ մը վերջը ուրիշ սուրհանդակ մ'ալ հասաւ, եւ տեղակալին բերած մասնաւոր նամակներէն՝ Վարքօյի Լուքքա քաղքին տիրապետիւն լուրը շուտով ամէն տեղ տարածուեցաւ : Բոլոր Միլանցիք այս բանիս վրայ անպատմելի ուրախութիւն զգալով, հաստատեցին թէ



այս կարգէ դուրս դէպքը Թուքանայի հուէլֆիանց հետ՝ երկար ատենէ ՚ի վեր մեքենայուած դաւաճանութիւն մ'եղած պիտի ըլլայ, որպէս զի երկու կողմէն կայսրը պաշարին: Այս մտածութիւնը շատ օղնեց Միլանցւոց հաւատարմութիւնը եւս առաւել հաստատելու եւ քաջութեան հոգին արծարծելու սրտերնուն մէջ:

Օր մը, երկու օր անցան, վերջապէս երրորդ օրը լուր առին թէ Պաւարօն Մօնցա քաղքին դիմացը հասեր ու բանակը հոն կազմեր է, եւ թէ Մօնցայի դռները անոր առջեւը փակուեր են: Ուստի այս լուրին վրայ Միլանցիք եւս առաւել զգաստանալով սկսան գիշեր ցորեկ ամրոցները խտտել պահելու, տեղ տեղ ծպտեալ ոստիկաններ հանելու, ամենայն ջանքով սկսուած մեքենաները աւարտելու, սպասելով թշնամոյն մօտալուտ յարձակմանը:

Եւ անա մայիսի քսան եւ մէկին հեռուէն սկսան տեսնուիլ կայսերական զրօշակները. տեսնուեցան վերջապէս բազմութիւն մ'անհամար մարդկանց եւ երկվարաց, դրաստուց ու կառաց:

Միլան քաղքին շրջապատը, արդէն մէկ ու կէս դար առաջ Ֆէտէրիքօ Պարպարոսայի Իտալիոյ վրայ արշաւանաց ժամանակէն բացուած լայն փոս մը կար, եւ տեղ տեղ ալ հոյակապ կամարներով զարդարուած շրջադայութեան համար կամուրջներ ձգուած էին: Այս կամուրջներուն ներսի կողմերը մեծամեծ կամարակապ դռներով բռնած եւ այս դրանց երկու կողմերն ալ բարձր ու ամուր բերդեր շինուած էին:

Ուստի կայսրը բանակին մէկ ծայրը ասանցմէ Արքէթթօ ըսուած կամուրջին դիմացը դնելով առաջ

անցաւ եւ մինչեւ սուրբ Ամբրոսիօսի փոքր դուռը բռնեց, իսկ ինք՝ ետ քաշուելով իր պալատականացը հետ, անմիջապէս իւր բանակին ետեւն ու քաղքին ցամկտպատէն դուրս՝ սուրբ Յարութեան մենաստանը մտաւ: Պաշարեալ Միլանցիք, կը տեսնային գիշերները կայսեր բնակած մենաստանին մէջ անհամար ճրագներուն փայլիլը, կը լսէին անոր շտապար մխած դրամներովը, պալատականացը հետ ըրած զեղխութեան ձայները, եւ կը մտածէին հեռուէն այսինքն մենաստանին ամենէն մօտ գանուող բերդին վրայէն, քարածիզ մեքենայով քարկտել զկայսրը եւ ան ը խնջոյքն աւերել:

Այս պաշարման մէջ, կայսեր ամենէն մեծ ջանքն էր, ըստ կարելոյն ոյժը աւելի դէպ ՚ի Բօրթա Թիջինէզէի վրայ թափել, յուսալով որ թէ հոն շինուած ջաղացքները ձեռք անցընէ, անմիջապէս քաղքին հացը կտրելով պիտի կարենայ Միլանու բնակիչները սովմամա ընելով անձնատուր ըլլալու ստիպել: Սակայն այն կողմն ալ Մարքօյի մասնաւոր հրամանաւն ու ազդարարութեամբը, ամենէն աւելի ամրապատած ըլլալուն, կայսեր բոլոր յոյքը ՚ի դերու կլաւ, եւ քանի մը անգամ պատահած կռիւներուն մէջն ալ միշտ մերթնները յաղթող գտնուեցան: Պաշարումը՝ սովսէ մ'աւելի քշեց. այս միջոցին քանի մը մասնաւոր դօրավարաց կողմանէ Լուբօյի խնաց սրուեցաւ թէ քաղքին ամենակարեւոր պաշարները պակսելով հարկը պիտի պահանջէ Բօրթա Թիջինէզէի կամուրջը նոյն գիշերը վար իջեցնել: Լուբօ անմիջապէս յանձնառու եղաւ՝ պաշարները ներս առնելու համար իրեն պահպանութեանը յանձնուած դռները բանալ, այն պայ-



մանաւ որ՝ որոշուած նշանները անսխալ տրուին : Ուրովհետեւ Ս. Ամբրոսիոսի մենաստանին զօրքերը Բօրթա Թիջինէզէի գիւղը խրկուած էին , ուր որ աւելի զէնքի վարժ մարդկանց կարեւորութիւնը անհնուած էր , եւ Լուբօն ալ Լիմոնդացոց զօրագլուխ կարգած էին :

Նոյն գիշերը , մինչդեռ մեր գեղացիները պահած բերդերնուն դեմնայարկին վրայ տարածուած կը քընանային , Լուբօ մինակ վարն աշաարակին ծայրը պըզտի դռնակին քովը կեցած կըսպասէր : Բաւական ժամանակէն ետքը , տեսաւ վերջապէս Ս. Անտրոսի մենաստանին զանդակատան վրայ ճրագի մը լոյսը . ուրոշուած նշանն այն ըլլալով Լուբօ շուտ մը պատասխանեց պլպլացող կանթեղի մը լոյսը մարելով : Աւերջը սնկէ վար երկրորդ յարկն իջաւ , ուր իւր հայրը Ամպրօճիօ , Միքէլէ նաւալարը եւ ուրիշ չորս ալ Լիմոնդացիք կը քնանային . ամենուն ալ ձայն տալով կանչեց , — ելէք , ժամանակն եկաւ : Շուտ մը մեր քնացողները կելլան , կը վազեն բերդին պատերուն նետ արձակելու , ծակերը ականջ կը դնեն . սակայն անոնց ականջացը ամենայն շշուճ անշուքի է , միայն վարը բերդին դռները պահող երկու հոգւոյ ոտից ձայները կը լսուէին : Սնկէ քիչ մը վերջը հետուէն կառքի մը շառաչման ձայնը սկսաւ յառաջ դալ :

— Ի՞նչ կ'ըսէք , ըսաւ Լուբօ , կարծեմ թէ կառք մ'է առաջ եկողը :

— Անտարակոյս թէ կառք մ'է , պատասխանեց Ամպրօճիօ :

— Անմիտ տխմարներ , ըսաւ Լուբօ , հիմայ պէտք էր կառքով գալ եւ այսչափ աղմուկ հանել , միթէ

միթէ անհնար էր բերածնին ուսերնին բառնալ կամ գոնէ ջորիներմե բեռցընելը :

Գեշերը խիտ մութ ըլլալուն , քսան քայլէն անդին մարդու մը աչքը կարող չէր բան մը տեսնալ : Շատ չանցաւ , փոսէն եզերքը մէկը գալով մասնաւոր եղանակաւ մ'երեք անգամ ձեռքերն իրարու զարկաւ ըսելով , — Սուրբ Ամբրոսիոս :

— Յրո՞ւ համար , հարցուց Լուբօ :

— Լուբինոյի եւ քաղքին համար , կրկնեց առաջինը :

— Միանալու նշանն այս է , ըսաւ դաշն ձայնիւ մը բազէակիրին որդին , եւ ձայնն աւելի բարձրացընելով , — Ի՞նչ մեծ յանդգնութիւն է այսպիսի ժամանակ կառքով գալը , չի մտածեցիք թէ Գերմանացի պահանջորդներէն կրնայիք բռնուիլ :

— Կոմսին ախոռին համար խնայ է , պատասխանեց վերստին միւսը վարէն :

Այն ատեն Լուբօ հրաման տալով իրեններուն , փոսին վրայէն վեր առնուած կամուրջը վար ձգուեցաւ , եւ խոտով լեցուն մեծ կառքի մը լծուած չորս հատ Գերմանիոյ ձիեր վրայէն անցնելով առաջ եկան մինչև առջի գոցուած վերնադրան առջին : Լիմոնդացոց զօրագլխին երկրորդ հրամանաւ վերնագուռն ալ մեծաւ աղմկաւ ու շառաչմամբ վեր առնուելով , կառավարը , ձիերը քսնի մը քայլ եւս առաջ քշելէն վերջը , ոչինչ պատճառաւ մը կեցուց ու վար իջաւ :

— Առանջ , գոչեց Լուբօ . սակայն միւսը փոխանակ անոր հնազանդելու՝ սուլածին պէս , Ս. Մարկոսի եկեղեցւոյն ետեւը պահուելաւ զօրաց խուր մը երեւան ելլալով , սկսան գէպ 'ի նոյն ձայնը վազել :



— Գարձուցէք երկաթէ վանդակները , դարձուցէք վանդակները , կանչեց Լուբօ : Նոյն ժամայն հակաքարչերը վեր առնուելով վերնադուռը վար իջաւ . սակայն դուռը ճիշտ տակը մնացած խոտի կառքին վրայ եղնալով , օդին մէջ բացը կեցաւ : — Կամուրջը վեր առէք կը պոռար յուսանատ Լուբօն : Սակայն անօ կարելի էր կամուրջն ալ վեր առնել . որովհետեւ արդէն զօրքերը հասած ու դուրսէն հաստ չուաններով կապած էին :

— Գաւաճանութիւն . . . մասնութիւն . . . Անպրօծիօ , Միքէլէ , Լիմոնդայիք . . . դաւաճանութիւն , Բերդին պանապանը փող մը հնչեցուց . առ ժամայն բերդին չորս կողմը յորուած զօրքերը օդնութեան վազեցին : Միւս կողմէն ալ շուտ մը բաղէակիրը , նաւալարը եւ ուրիշ չորս հինգ հողի , կառքի երկու կողմը շարուած՝ սկսան անխնայ հարուածներով ներս մտնալու համարձակող քանի մը հետեւակ զօրաց անցքն արդիւլել :

Այս միջոցիս , Լուբօ ալ կառքին լծուած ձիերուն վրայ ցատկելով , սկսաւ նիզակի մը կոթովը հարուածներ տեղալ , ու նիզակին ծայրովն ալ վիրաւորել , կատղեցնել եւ խոժոռ ձայն մը հանելով ձիերը խրաեցնել : Այնպէս որ խեղճ կենդանիները առջևի ոտքերնին բացած ու փորերնին մինչեւ գետին զըսկցընելու չափ արեան փրփուրներու մէջ կառքն առաջ տանելու վերջին ջանքերնին կը թափէին , սակայն 'ի դուր : Որովհետեւ վերնադրան ահաւոր ու մոտեցանայն ծանր երկաթները , խոտերուն մէջ մղուած ըլլալով , անկարելի էր կառքը տեղէն շարժել : Թէպէտեւ քանի մը անգամ Լուբօ ձայն տուաւ իրեննե-

րուն , որպէս զի գոնէ ժամանակ մը վանդակները փակեն , մինչեւ որ կառքն ազատելով վերնադուռը վար իջնայ . սակայն այն խառնակութեան , աղմուկին ու խառնիճաղանճին մէջ՝ չի լսուեցաւ իր ձայնը : Այս միջոցիս Գերմանացուց հեծելազօրն ալ մեծաւ տրոփմամբ առաջ կուգար . կամուրջը կը ճունչար այն կատաղիներուն սոսկալի երիվարաց ոտիցը տակ , եւ արդէն ասոնցմէ քանի մը հատին ալ՝ ներսը մուտք կամարակապին ներքեւը հասած՝ իրարու անխնայ եւ կոյր զկուրայն առւած հարուածներնուն եւ պոռալներնուն ձայներէն զատ բան չէր լսուէր : Այս աղմուկն ու արիւնահեղ կռիւն աւելի պիտի երկարէր , թէ որ Լուբօ անգամ մ'ալ ձիերը խրտեցնելով կառքն առաջ անցնելու չըլլար . որով եւ վերնադուռն ալ վար իջնալով , տակը գտնուող հետեւակ Գերմանացի զօրքի մը գլխուն վրայ ինկաւ :

Նոյն ժամայն քանի մը ջահ այս աղետալի ու միանգամայն ահաւոր տեսարանը լուսաւորեցին : Վեց Գերմանացի հեծելազօրք շարաչար վիրաւորեալ գետինը պտտկած էին : Իսկ դուրսը կամուրջին կամարին տակը՝ արիւնահեղ պատերազմ մը սկսաւ , մերկներէն դուրսը մնացողներուն եւ միւս Գերմանացի զօրաց մէջ , որոնք լծակներով կուղէին վերնադուռը վեր առնել : Այս կռուին մէջ միշտ մերկները շահաւոր էին , վասն զի անոնք՝ որչափ ալ դուրսի վանդակին բացուածքներէն նիզակներով ներսլինները վիրաւորելով դուռը վեր առնելու կը ջանային , սակայն վանդակին առջին ցցուած հաստ եւ ծայրերը սուր երկաթներն միշտ արդեւք կըլլային անոնց թէ հեծելոցն , եւ թէ հետեւակ զօրացը ուղածներնուն չափ գէպ յառաջ մօտենալու :



Այս միջոցին Լուսո տեսնալով որ սուրբ Մարկոսի ճամբուն վրայէն դարձեալ ուրիշ թշնամեաց խումբ մ'ալ կուգայ, կռիւր վերստին արձարեալու, հրամայեց իրեններուն շուտ մ'աշտարակին ծայրն ելլալ ու բազխտարն արձակել: Քիչ մը վերջը սկսաւ Գերմանացոց վրայ երկնքէն քար եւ աշտարակին պատերուն ծակերէն անձրեւի պէս նետ տեղալ, այնպէս որ թշնամիք վերջապէս ստիպուեցան ձգել ու փախչիլ:

Իսկ գուրար բնականապէս ալ ուրիշ արդեւք եղող մը չի մնալով, կամուրջը վեր առին, եւ ամեն բան խաղաղելով վերնադուռն ալ լաւ մը գոցելու ժամանակնին, դրան տակը մնացած փռուոր Աւնկարիայի երիվար մը գտան, որ իր տիրոջը հետ միատեղ վրաւորեալ մնացեր էր: Երիվարը որուն ողնահարին վրայ էր ինկած այն ահաւոր բեռը, ետեւի երկու ոտքերը ջախջախեր էր, իսկ գնուորը մէկ ոտքէն բռնուած էր եւ երկուքն ալ կը ջանային այն աղետալի վիճակէն ազատելու: Խեղճ անասունը, ետեւի կողմէն գեանի հաւասար ճշմուած, ականջները դէպ յառաջ ցրցած ու բաշերը տնկուած, կատաղի եւ կարծես թէ դուրս ցատկելու ժառ կրակի նման աչքերով, ոնդունքները բացած՝ երբեմն երբեմն վեր կ'առնէր գլուխն ու երկու առջեւի թաթերովը գետնը փորելով կ'ուղէր չորս ոտքի վրայ գալ:

Իսկ վրայի հեծեալը որուն ոտքը ձրուս տակը մնալով կտորած էր, անասնոյն ամեն անգամ ելլալու համար 'ի զուր քրած շարժումքէն ցաւերը նորոգուելով, կը գալարէր, կը կծկէր, եւ երբեմն մէկ ծունկի վրայ գալով եւ ձեռքերն ալ իրարու բերած՝ իր

լեզուովը կ'աղաչէր, որ Աստուծոյ սիրուն համար իրեն օգնեն: Երբեմն ալ թուրը գեանէն առնելով օդուն մէջ կատաղաբար կը շարժէր, իբր թէ իր ողորմելի եւ յուսահատ վիճակին մէջն անգամ՝ չէր ուզեր առանց ինքզինքը պաշտպանելու մտնիլ:

Մեր գեղացիները, ջահերուն լոյսովը տեսնելով այս ծուղակն ինկած մարդակերպ գայլին ողորմելի վիճակը գթացին, եւ զգուշաբար ազատելով տուն տարին զինքը ու յանձնեցին Մարթայի ինամակալութեանը: Վասն զի Լիմոնդայի մէջ Մարթա մեծ համբաւ առած էր՝ կտորած կամ տեղէն ելած ոսկրները շտկելով բուժելուն համար: Խեղճ կինը իւր բարեւորութեամբը թշնամեոյն բարեւը ընկէն ետ չը կենալով, առ ժամայն սկսաւ մեծ ջանքով ամենայն խրնամբ տանիլ անոր տաժանեալ վիճակին:

Նոյն գիշերը, գրեթէ Գերմանացոց այս պարագն ելած դաւաճանութենէն անմիջապէս վերջը, Բէլէկրուա՝ սեւ վերարկուով մը պլլուած եւ գլուխն ու աչքերը ծածկած, ու տակէն ալ ամբողջ զրահապատ, մտաւ Լօարիլիօ Վիսքոնթիի պալատէն ներս: Եւ առաջին գաւթթը պանդ քանի մը զօրաց ծանօթ ըլլալով՝ ազատաբար անցաւ եւ մտաւ սրահի մը մէջ ուր պալատին տէրը, անհամբերութեամբ իրեն կըսպասէր:

— Այս ատեն մինակ եկմը, ըսաւ Լօարիլիօ, տեսներք ինչպէս գնաց մեր գործը:

— Աստանան նախ զիս առնէ եւ ապա սատկի՞ն այն անիծեալ գեղացիները, պատասխանեց Բէլէկրուա, կոնակի վերարկուն նետելով:

— Ի՞նչ, չի յաջողեցմը արդեօք...



— Բոլորովին մեր յուսացածին հակառակն եղաւ :

— Ա՛հ , մասնիչ սրիկայ , կանչեց ասպետը ձեռքը ձակտին զարնելով . չեմ գիտեր որ զօրութիւնն է զիս բռնողը , որ չեմ կարող այժմէն զքեզ իմ ձեռօքս սատկեցնել :

— Մտիկ ըրէ , կըսէր Բէլէկրուա , առանց ամենեւին այլայլելու անոր բարկութենէն , իմ կողմանէս պակասութիւն մը չեղաւ . այս ձախորդութեան զըլխաւոր ու միմիայն առիթն ու պատճառը , Օտօրինօի զինակիրը՝ Լուբօն է . որ ինձի կտոքին ձիերն արծակելու ժամանակ չը թողլով , հողիւ թէ կարող եղայ միջոց մը գտնալ ու ձեռքէն ազատելով զայ ձեզի գործին հեղութիւնը ճշդիւ պատմելու :

— Արդեօք մէկը կրցած զքեզ ճանչնալ :

— Ամենեւին . որովհետեւ նախ վերարկուով մինչեւ աչքերս ծածկած էի , երկրորդ՝ որ խաւարին մէջ մէկըմէկ անդամ չէինք կարող տեսնալ :

— Իսկ Գերմանացիք :

— Գերմանացիք ալ ետ դառնալով՝ վախշելու հարկադրուեցան :

— Զարմանալի բան , այսպիսի յեղակարծ պարագայի մը համար ժողուած կոշտ ու տխմար դեղացիներէն վախնալ ու ետ դառնալու ստիպուիլ . . . հիանալի բան :

Հոս Բօզաթէի բերդապահը , կէտ առ կէտ գործին ինչպէս կատարուիլը Լօտրիդիօյի պատմեց :

Մնչպէս թռչնորս մը՝ որ լարած ծուղակէն տորդիկներուն փախչիլը տեսնելով կը բարկանայ , նոյնպէս ալ ասպետը զայրանալով , — թշուառական , կը պոռար , սրիկաներ . սակայն դարձեալ անմիտը ես

զանուեցայ , ես՝ որ քեզի պէս վատի մը վատանաւելով ճամբայ ելայ : Կորիք ուրեմն այսուհետեւ , եւ գիտցիր թէ՛ դու քու ձեռօքը յառդդ օտքի տակ առիր : Թէ որ ես Միլանու տէր ըլլայի՝ անտարակոյս դու ալ Մարթօյի բերդապահը մնալով չի պիտի մեռնէիր :

— Յայտ մասին , ըսել է որ եթէ ես այս ձեռնարկութեանս մէջ մեռնէի , դարձեալ իբրեւ Մարթօի բերդապահ մեռած պիտի ըլլայի , պատասխանեց անտարբեր կերպով մը մեր նենգաւօրը , ինչ օգուտ կըրնար ըլլալ ինձի . սակայն արդէն ես քաջ գիտէի թէ ով որ չի կրծէր՝ լաւ չի յաղենար , եւ այս պատճառաւ ես ալ նախ եւ առաջ ինքզինքս վատնողի մէջ դնելէն ետ չը կեցայ , եւ երկրորդ՝ ինչպէս որ ըսի , իմ կողմանէս ամենեւին պակասութիւն մը չեղաւ :

Իսկ Լօտրիդիօ , դարձեալ ձեռքը ձակտին զարնելով կը կրկնէր . — տակն ու վրայ ընել իմ խորհուրդներս , ու կորսնցնել այսպիսի գեղեցիկ առիթ մը :

— Լաւագոյնն ալ ան եղաւ , յառաջ կը վաբէր Բէլէկրուա , որ ամենեւին մէկը չի կասկածիր մեր վերայ . վամս զի գործադրութիւնն այնպիսի վարպետութեամբ ու այնպիսի ծածուկ ճամբաներով եղած է որ . . . բաւական է : Ոչ թէ իմ ձեռօքս եղած բան մը ըլլալուն համար , սակայն սաստմային անգամ մտքէն չանցնիր իմ լարած մեքենաներս , եւ վերջապէս բոլոր վտանգը ես իմ վրաս էի առեր , իսկ դու . . .

— Լա՛հ , ողորմելի , կանչեց Լօտրիդիօ կարելով անոր խօսքը . տեսնե՛ք թէ այս բանիս վերջն ինչպէս պիտի լմննայ . Կորիք աչացս առջեւէն , եւ անմիջապէս վաղը դիչեր պիտի ճառքայ ելլաս քու Բօզա-



թէի բերդդ դառնալու : Ի՞նչ անիծեալ վայրկեան է եղեր դքեդ անկէ հանելով քօփս առնելս : Այսու ամենայնիւ վերջին անգամ մ'ալ չորս կողմը լրտեսելով իմացիր տեսնենք՝ թէ այս գիշերուան պատահածին վրայ հասարակութիւնը ի՞նչ կը մտածէ . եւ վաղը երթալէդ առաջ ինձի պիտի իմացնես :

Առ այժմ քեզի ուրիշ բան չի մնար ընել , բայց եթէ լաւ դժուշանալ մեր մէջն անցած խորհրդակցութեան վրայ ուրիշ բան մը արտաբերելէ :

— Այս բանին վրայ ալ , պատասխանեց Քէլէկըրուա , կրնաք խիստ հանգիստ ու ապահով քնանալ . իբրեւ թէ ոչ ես դքեդ՝ եւ ոչ ալ դուք՝ զիս տեսած ու ճանչցած ըլլայիք :

Բօզաթէի բերդապահը դուրս ելլալով , Լոտրիզիօ սկսաւ այս իրեն յուսացածին բողբոլմին հակառակը լմնցած գործին վրայ մտածել : Ինք՝ Մարքօյի Չէրուլիօ երթալէն առաջ Բօզաթէի մէջ տեսնուէր եւ բարեկամացած էր Քէլէկըրուայի հետ . եւ ինչպէս որ առակ մ'է թէ «ճանճը մեղրալաճառը կը ճանչնայ» , ասոնց ալ արիւնը զիրար քաշելով , քիչ ժամանակէն առանց մէկմէկու պատուոյն կեղտ մը քսելու , մէկ սիրտ մէկ հոգի ըլլալով , ուխտեր էին յետին կարողութեամբ Մարքօյի մեքենայած դադանեացը ո եւ է միջոցաւ ձեռնտու ըլլալ . սակայն երբոր Բօզաթէի բերդապահը Թուքանայէն դառնալով Մարքօյի Լէքքօ քաղքին տիրապետելուն լուրը բերաւ , մեր նենգաւորաց փորը սատանայ մանալով՝ ուխտերին մոռցան : Ուստի իրենք իրենց խորհրդակցելով հաստատեցին թէ՛ Մարքօ իր նոր տէրութեանը մեծամեծ գործոցն զբազած ըլլալով , ալ չի պիտի ուղէ հոս տե-

ղի գործոց ձեռք երկնցընել . ուստի յարմար միջոցի մը սպասելով համամիտք իրերաց սկսան իրենք իրենց նպատակին հասնելուն ճարը տեսնել : Եւ ահա յարմար միջոցն ալ չուշացաւ գալու . որովհետեւ Պաւարօ , յուսահատելով իր զէնքովը Միլանու տէր ըլլալէն , փորձեց զանի մատնութեամբ ձեռք ձգել : Ուստի այս բանին համար քանի մը մեծամեծ զօրավարաց բարձր աստիճաններ ու առատ ստակ խոտաւնելէն վերջը , արդէն ալ լաւ ճանչնալով Լօտրիզիօյի ինչպիսի ապականեալ սիրտ մ'ունենալն ու փառասիրութեան հոգին , գրեթէ բոլոր յոյսն անոր վրայ դրնելով , խոտացոժ էր անմիջապէս զինքը Միլանու տէր ընել , եթէ կարենայ ո եւ է միջոցաւ քաղաքն իրեն յանձնել : Եղեռնագործը կամ լաւ եւս սատանան , կայսեր բերնէն այս մեծ պատառը յափշտակածին պէս , կը գտնայ իր Քէլէկըրուա սաղսղէլը , եւ դործը կը հաղորդէ անոր . ան ալ նոյնժամայն Բօզաթէի բերդը ձգելով , կ'ելլայ եւ քիչ մ'առաջ վերը պատմուած եւ 'ի դերեւ ելած խորամանկութիւնները կը դարանէ Միլանը մատնելու յուսով :

Հիմայ Լօտրիզիօ այսքան երկար աշխատութեամբ ու մեծամեծ յոյսերով աւազի վրայ հիմնած փառաւոր չէնքին՝ կործանած աւերակացը վրայ ցաւօք սըրտի կ'ողբար եւ կը մտածէր :

Այս ձախող դէպքէն վերջը , ալ Պաւարօյի ուրիշ յոյս մը չէր մնացեր՝ որ իր կամքը կարենայ առաջ տանիլ : Արդէն ալ իր Գերմանացի զօրքերն վհատած ու շփոթած էին մերիններուն յաճախ յարձակմունքներէն :

Իսկ Իտալացի զօրքերը անթոշակ , գրեթէ մերկ



ու չորս կողմէն մատնութեանց ենթակայ՝ բանակը կը փախչէին . որով յայտնի կը տեսնուէր կայսեր քէչ ատենէն պաշարումը վերջնելով՝ իր տեղը դառնալու հարկադրուած ըլլալը : Վասն զի Ածցօնէէն ալ օգնութիւն մը յուսալը կասկածաւոր ըլլալուն, կայսրը չէր գիտէր ի՞նչ ընելը, որ կողմ դառնալը եւ այսպիսի նաւաբեկութեան մը մէջ՝ իր փրկութեանը համար որ տախտակին ապաստանիր :

Երբոր Բէլէկրուա՝ Մարքոյի Լուքքա քաղաքին իշխած ըլլալուն լուրը բերաւ, չի մտոյաւ նաեւ Լօտրիզիօյի պատմելու՝ անոր Տէլ Պայցօ կոմսին Երանուհի աղջկանը սիրահարած ըլլալուն պարմանալի լուրն ալ : Լօտրիզիօ որչափ ալ հասկըցաւ թէ՛ Վիսքօմիթիին այս սիրահարութիւնը Միլանու գործոց մէջ ձեռք ունենալուն առաջին նշանն է, սակայն կայսեր մեծամեծ խոստմունքներէն կուրցած՝ ժամանակ չունեցաւ ուղիղ դատմամբ ճամբայ ելլալու : Իսկ հիմայ որ փառասիրին մօտը եղած ամենայն խորհուրդներն ու յոյսերը պարան ելան, սկսան կամայ կամաց դարձեալ առջի հեռաւոր՝ սակայն աւելի հաստատուն ու հաւանական յոյսերը սրտին մէջ վերստին սնանիլ, միայլ ու արծարծիլ :



### Գ Լ Ո Ւ Խ Ի Բ

Երկրորդ գիշերը Բէլէկրուա Լօտրիզիօյի հետ տեսնուելով, համոզեց զինքը թէ քանի մը տեղերէ առած լուրերուն նայելով, կրնայ ապահով ըլլալ որ հասարակութիւնն ամենեւին ոչ իրենց վրայ, եւ ոչ ալ կայսեր հետ ունեցած իրենց գաղտնի խորհրդակցութեանցը մասին կասկած մը ունեցած չ'է, եւ վերջապէս իմացուց թէ կայսրը վրանները քակելով, դէպ ՚ի Գերմանիա ճամբայ ելլալու պատրաստութեան ետեւէ է : Ասով մեր նենդաւորին սիրտը հանդարեցաւ, եւ այս մասնաւոր ու միանգամայն անցեալ դործին ձախողակի դէպքերն ալ կերպով մը մտացը մէմէն անհետանալով եւ իր ընկերոջը հետն ալ վերստին բարեկամանալով՝ սկսաւ Երանուհւոյն ու Օդօրիւնօյի վրայօք հարցմունքներ ընել :

— Անհաւատալի բան, պատասխանեց, տօգո՛հ կերպով մը Բօշաթէի բերդապահը, քիչ մ'առաջ կոմսին զինակիրը դտայ, որուն հետ ինչպիսի բարեկամ ըլլալս լաւ գիտէք, եւ իմացայ թէ տանը մէջ մեծամեծ պատրաստութիւններ կան եղեր :

- Ի՞նչ բանի պատրաստութիւն :
- Պատրաստութիւն հարանեաց :
- Ըսել է որ կոմսն ալ այս բանիս հաւանութիւն տալով, Մարքօյէն ունեցած մեծամեծ վախերն անգամ մոռցած պիտի ըլլայ :
- Թէ որ իրեն մնայ, անկարելի է ոչ հաւանու...



թիւն տալ եւ ոչ ալ Մարքոյն ունեցած վախը մոռնալ . սակայն ինչ ընէ խեղճը՝ երբոր բուն իսկ իր խմորին մէջ կովութիւն կայ : Աղջիկը իր սիրահարէն չանցնիր , մայրն ալ յայտնապէս աղջկանն իրաւունքը պաշտպանելու վրայ է , ուստի զարմանալու բան չէ որ . . . :

— Հոս պէտք է արթուն կենալ , պատասխանեց Լօարիզիօ , եւ այս խնամութեան ետ ձգուելուն համար պէտք եղած ամենայն հնարք ձեռք առնել : Վասն զի երբոր իմանայ Մարքօ թէ ալ անկարելի է զաղջիկն իրեն սեփականել , լաւ գիտեմ թէ՛ պիտի կատարել եւ կարգէ դուրս ու մտքերնէս չանցած գործ մը պիտի ընէ :

— Հաւատա , կը կրկնէր Բօզաթէի բերդապահը , թէ աղջիկը քու կարծածէդ աւելի Մարքոյի սիրտը զբաւած է , որով մեծ հաւականութիւն կայ կատարելուն , եւս առաւել երբոր իմանայ թէ ուրիշի ձեռքն անցած է աղջիկը : Սակայն իմ մտածածս ուրիշ բան է . քաջ գիտեմ թէ անոր բարկութեան առաջին կայծակները իմ գլուխս պիտի տեղան , ասոնց հարմիրքը չարգիլելուս համար . . . : Բայց հիմայ ուրիշ զժուարութիւն մ'ալ կայ . կը լսեմ թէ երկու սիրահարեալները սակէ պիտի փախչին եւ ո՛ր գիտէ մը կողմ . . . եւ ես կրնամ ըսել թէ միայն ասոնց աներեւութանալովը՝ կրնան բարձր մեր խորհուրդները խառնակիլ :

— Ամենեւին պէտք չէ վհատիլ քանի որ գեղը կ'երեւայ , այլ պարտաւորեալ ենք քայլերնիս բանալ որ ժամ մ'առաջ հոն հասնինք , ըսաւ Լօարիզիօ , պէտք է այս խնամութեան արգիլուելուն համար ամենայն ճիգն թափուել սկսիլ :

— Ես արդէն ամենայն օիրով եւ յամենայնի պատրաստ եմ , կրկնեց միւսը , որովհետեւ Մարքօն ալ զիս Լուքքայէն դէպ 'ի հոս ճամբելու ժամանակը ինծի խտալու այս պատուէրն ըրաւ . սակայն Օղորինօյի անձին ամենեւին դպչիլ . . . :

— Բանը թող անոր մնայ . մէկ մը ճամբայ ելլանք՝ տեսնենք թէ գործն ինչ դոյն կ'առնէ . միայն թէ դուն երբէք իմ խօսքէս դուրս չի պիտի ելլաս :

— Ես պատրաստ եմ հնազանդելու . սակայն . . . թէ որ . . . :

— Քեղի պարզապէս կ'ըսեմ , պէտք է այդ կարծիքներդ թողուս . որովհետեւ ով որ կ'ուզէ իմ շաւղացս հետեւիլ , պարտաւոր է աներկիւղ ըլլալ իրեն պատահելիք դէպքերէն :

— Ե՛հ , մի կարծեր թէ կ'ուզեմ ես քաշուիլ , առաջին անգամ կասկած մը կրնամ ունենալ , սակայն երբոր բանը իրին գործադրութեանը գայ , այն ատեն իմ գործունէութիւնս կրնայ ամենուն յայտնի ըլլալ : Քիչ ատեն է որ զիս ճանչցաք , եւ մինչեւ հիմայ չի կրցայ . . . բաւական է . . . կը յուսամ թէ այս անգամուս լաւ տեսայ :

— Այո՛ , քու գործունէութեանդ փորձը՝ արդէն այս վերջի անգամուս լաւ տեսայ :

— Սակայն , վրայ բերաւ Բէլէկրուս , ես ինչ յանցանք ունիմ , քանի որ սատանան իր կոտորներովը զիս արգիլեց :

Այս երկու նենգաւորաց խօսակցութիւնը՝ հոս վերջացնելով , հիմայ ժամանակն եկաւ դառնալու մեր երկու կանանց քովը . այսինքն Երմէլինտայի եւ Նրանուհոյն , զորս բաւական ատեն է մոռցեր էինք :



Մարքոյի՝ վերջին անգամ Տէլ Պալլո կոմսին արուած խնջոյքէն՝ ի վեր, ուսկից Երանուհի, Լուբոյի կենաց շնորհագրովը դարձեր էր . աղջկան մայրը խնացեր էր Վիսքօնթիլի՝ զԵրանուհին հաստատապէս սիրած ըլլալը : Սակայն քաջ դիտեր թէ իւր աղջիկն ալ այն աստիճան անսանձ սիրով մը Օդօրինոյի կապուած էր որ, եթէ Մարքօ (որն որ անյուսալի բան էր) զԵրանուհին իբրեւ ամուսին անդամ առնել ուզած ըլլար, Երմէլինտա՝ չէր կարծեր թէ իր աղջիկն անոր հետ գո՛հ վրճակ մը կարենար ունենալ : Ուստի զաղջիկը, ո՛ր է անակնկալ վտանգէ՛ աղատելու զիտմամբ, ուզեց ժամ մը առաջ երիտասարդ ասպետին հետ խօսուած հարսանիքը լնցնել : Այս կերպով մէկ կողմանէ, Մարքոյի ամենայն յոյսը պարապի ելլալով՝ սըրտին կրակը կը մարեր, միւս կողմանէ ալ՝ վերջապէս աղջիկը ամուսնոյ մը պաշտպանութեանը ներքեւ զըտնուած կըլլար :

Այս խորհրդածութեան վրայ, Երմէլինտա՝ Մարքոյի Թոսքանա երթալն ալ լածին պէս, սկսաւ կոմսն ստիպել՝ որ բուն իր հաւանութեամբը խօսուած խնամութեանը ժամ առաջ վերջ մը տալու ջանքն ընէ : Տեսնալու բան էր Երմէլինտայի այս կերպով ստիպողական առաջարկութեանը դէմ, կոմսին բարկանալն ու պոռալ կանչելը . չը յիշելով ամենեւին՝ թէ առաջին վայրկեանէն ինք եղած էր աղջկանը՝ երիտասարդ ասպետին սէր կապելուն պատճառը, մինչդեռ խեղճ Երմէլինտան, կուղեր զԵրանուհին անկէ հեռացնել : Այսու ամենայնիւ օր անցնելով, քիչ մը Երմէլինտաի շարունակ զինքը նեղելէն, քիչ մ'ալ Երանուհոյն թնչպիսի դժուարին վրճակի մը մէջ գտնուելուն վրայ

համոզուելէն ստիպեալ, եւ միւս կողմանէ ալ ժամանակին անցնելովը՝ Մարքոյէն առաջին անգամ զգացած երկիւղը ընականապէս սակաւ առ սակաւ սըրտին մէջէն վարատելով, եւ ամենէն աւելի համոզուած ըլլալով թէ, Մարքօ առ այժմ իրմէ հեռու եւ հազար ու մէկ մեծամեծ դործոց զբաղած գտնուելուն համար՝ դժուարին էր անոր Լուքքայի պէս հռչակաւոր քաղթի մը տէր ըլլալուն հանդերձ, հոս տեղի դործոց ալ ձեռք էրկնցնելը : Ուստի այս իրեն ուղիղ երեւցած դատմանցը վրայ, սկսաւ կամաց կամաց թուլնալ, եւ մինչև անգամ, հրաման տուաւ Օդօրինոյի իր սուռը երթեւեկելու (որն որ առաջուց խափու արգիլած էր) . սակայն միշտ ծածուկ ու մուխ ատեն, որպէս զի թշնամիք տանալով՝ չըլլայ թէ երթան օր մը այս երթեւեկութիւնները Մարքոյի ականջը դնեն :

Իսկ Օդօրինոյի դալով, Երանուհոյն պատճառաւը կրած ամենայն վիշտերն ու տատապանքները՝ կարծես թէ հեւ առաւել իրեն սիրոյն կապանքները հաստատել էին : Այնպէս որ, եթէ առաջ սիրելւոյն սլառ կերը՝ իր երեւակայութեան խորերուն մէջ ընկզմած էր . հիմայ պայծառ ատողն մը պէս միշտ աչքին առջևը փայլուն կը կենար : Վերջին անգամ Մարքոյի ձեռքէն խմած գտնն բաժակին վրայ, Օդօրինօ ուխտած էր ամենայն կերպով իր հին տիրօջմէն կախում չունենալ :

Որովհետև մինչև այն ատեն՝ գրեթէ իր կեանքը, ամեն վայրկեան, Մարքոյի համար վտանգի մէջ դրած ըլլալուն համար, անկէ կ'ըստպատէր նաև իրեն ապաղայ փառքն ու պատիւը : Ուստի, արձամարձելով հիմայ այն անձերն ու տեղերը՝ որ իր տղայու-



թեանը ժամանակի ուրախութիւնները կը յիշեցնէին , եւ միանգամայն ապագայէն ալ բոլորովին յոյսը կըտրելով , ուրիշ բան չէր մնացած անոր սրտին մէջ՝ բայց եթէ Երանուհին՝ ու միայն զանի իրեն սեփականելու փափաքը : Սակայն միտքն ալ դրած էր որ , այս փափաքին հասածին պէս , Երանուհոյն հետ միատեղ իր ծնած երկիրը ձգելով՝ երթայ Ասիա խաչակրաց զընդին խառնուի , որն որ այն ժամանակները իրենց հայրենի երկրէն ո եւ իցէ բարիք չ'սպասող ասպետաց սովորութիւն մը եղած էր :

Սակայն աղջկան ծնողքը ինչպէս պիտի հաւանէին զԵրանուհին Օղորինոյի տալէն վերջը , թողուլ որ երկուքը միայնակ այնպիսի երկար ու դժուարին ճամբորդութեան մը ձեռնարկելով , բոլորովին օտար երկրի մը եւ ապագայի խաւարին մէջ իրենց բաղդը բնաբռնելու երթան : Այսու ամենայնիւ պէտք էր դարձեալ յերկոցունց շարեաց փոքրագոյնն ընտրել : Աերջպէս Երանուհոյն ծնողաց՝ Մարքոյէն ունեցած սարսափը ամենայն դժուարութեանց յաղթեց եւ Նրոնէլինասա՝ թէպէտ ակամայ , յանձն առաւ այս մեծագոյն սրտացաւն ալ կրելու . որպէս զի նախ՝ իր աղջկիկը Մարքոյի խելագարեալ սիրոյն զո՞ ընելէն ազատելով ապահով վիճակի մը մէջ դնէ , եւ երկրորդը՝ Օղորինոյի ալ կեանքը վտանգէ զերծ ընէ : որովհետեւ նա՝ Մարքոյի իրեն դէմ ունեցած ատելութեանը բուն պատճառը օր մը իմանալուն պէս , բնականաբար նախանձու բոցով վառեալ , այնպիսի հզօր ու միանգամայն անաւոր թշնամույ մը դէմ մաքառիլ ուզելով ինքզինքը վտանգի մէջ կրնար ձգել :

Իսկ կոմսը՝ շատոնց յանձնառու եղած էր այս-

պիսի ցաւալի զոհողութեան մը , միայն թէ կարող ըլլար ինքզինքը պէտք եղած ժամանակն արդարացնելու Այսինքն՝ պէտք եղած ատենը կարենար աներկիւղ պատասխանել Մարքոյի , թէ ինք իր տուած խօսքէն ամենեւին ետ չէր կեցած , եւ հաւատացնէր զինքը թէ Օղորինօ ծածկապէս գողնալով զԵրանուհին , երկուքը միատեղ փախած էին :

Ահաւասիկ կոմսն ու կոմսուհին իրենց խորհրդոցը՝ այս կերպով վերջ մը տալով , հաստատ որոշում մը տալու պատրաստուած ժամանակնին էր , որ Լօտրիգիօի եւ Բէլէկրուայի մէջ քիչ մը վերջը նկարագրուած խօսակցութիւննին տեղի ունեցաւ :

Ուտտի , հարսանեաց հանդէսը՝ կայսեր Միլանու պաշարումը վերցնելէն ու ամեն բան խաղաղելէն անմիջապէս վերջը կատարուին որոշուեցաւ , միայն սա պայմանաւ որ՝ եթէ հարսանիքը դադանի կատարուելու ըլլայ , հարսն ու փեսան շուտ մը Թիչինօի մօտ Օղորինոյի Բասթէլլէթօ բնուած բերդը քաշուին : Եւ հոն քանի մը օր ալ Երուսաղէմ երթալու համար պատրաստութիւն տեսնալէն վերջը , Լուբօյի եւ Լաուրէզայի հետ միատեղ ճամբայ ելին :

Իսկ Երանուհի , միշտ վեհանձն ու քաջակրօս , ամենեւին չէր վհատեր այնպիսի երկար ու դժուարին ճանապարհորդութեան մէջ՝ գրեթէ աչացը ներկայ ու միանգամայն զլխուն պատահելիք վտանգներէն : Աստըն զի ամենայն տառապանք եւ ո եւ է անձկութիւն իրեն քաղցր էին , քանի որ իւր սիրելոյն հետ միատեղ պլախ կրեր զանոնք : Բայց երբ կը մտածէր թէ իր սիրելի ծնողացմէն պիտի բաժնուի , մասնաւոր այն ամենաքաղցր ու նազելի մօրմէն . . . երբոր կը



խորհէր թէ անհատնում քաղաքներ անցնելով պիտի հեռանայ ծնողքէն, եւ գրեթէ մէկ մ'ալ զանոնք չը տեսնելու պայմանաւ . . . միայն այս անժխտելի ճըշմարտութիւնը Երանուհւոյն ազնիւ ու փափուկ սիրտը կը ճմլէր: Եւ այս մտատանջ խորհրդոցը մէջ՝ աչացն անջեւը կուգային իւր տղայութեանը հասակէն մինչեւ հիմայ՝ մօրը իրեն համար ըրածն ու կրածները: Արջիչէր երբեմն՝ հօրը խորհուրդներուն հետեւելով, իւր տղայական ցնորքներովն՝ այն գորովագութ մայրը բարկացնելները . կը յիշէր եւ խայթիւ խղճի մտաց, Լիմոնդա եղած ժամանակնին Օգօրինօյի նորածին սիրովը յափշտակուած: Իւր սիրալիր մօրը դէմ ըրած ամբարտաւան ընդդիմութիւնները:

Վերջապէս Երանուհի ընկճեալ՝ այսպիսի յիշատակաց զգուանքէն, կիյնար մօրը գիրկն ու արտասուելից աչօք կաղաչէր՝ որ ներէ իրեն:

Սակայն այսչափ ահու գոողի եւ աննկարագրելի սրտի հալոււմով ու միամեղամայն մեծաւ անձկանօք սպասուած վայրկեանը՝ երթալով կը մօտենար: Պաււարօն՝ պաշարման յաջող վերջ մը ունենալէն յուսահատելով, եւ Ածցօնէի հետ քանի մը դաշնագրութիւն ստորագրելէն վերջը վերցոց բանակը: Վտանգի ժամանակ քաղաքը պաշտպանելու համար հեռաւոր երկիրներէ եւ բերդերէ եկող խումբերը սկսան կամաց կամաց Միլանէն ելլալ: Լիմոնդացիք ալ այն գիշերային խաւարին մէջ Գերմանացոց կատաղութեանը միայն չորս հողի զոհելով եւ ըրած յաղթանակներնուն վրայ ուրախանալով եւ խրոխտալով կը պատրաստուէին իրենց լիոնները դառնալու:

Իսկ Ս. Ամբրոսիոսի մենաստանին զօրքերը, տե-

ղադահին մամուսը հրամանաւը Միլան մնալուն պատճառաւ, եկան մեր գեղացոց երթաք բարեաւ մը ըսելու: Լուրօ՝ Վինչիլիուէրան հարցոց, եւ իմացաւ որ Գերմանացոց դէմ տրուած յարձակման մը մէջ քաջութեամբ մեռեր է:

Այն առաւօտը, յորում մեր բարի լեռնակեացները ճամբայ ելլալու վրայ էին, իրենց ձերուհի առաջնորդը մասնաւորապէս կանչուելով, Օգօրինօյի եւ Երանուհւոյն հարսանիքն օրհնելու հրախրուեցաւ: Որչափ ալ Ածցօնէն եկեղեցոյ հետ բոլորովին հաշտուած կը սեպուէր, սակայն տակաւին Միլանու շուրջն եղած երկիրները նոզվբի տակ կը համարուէին. անոր համար պատկուողներուն աստիճանին համեմատ պէտք եղած հարսանեաց տօնախմբութիւնը չը կատարելովն անգամ, քահանան կրնար պատկան խորհուրդը կատարել:

Մարթա, խեղճ նաւաբեկելոյն մայրը, նոյն առաւօտն իր զգեստները լաթի մը մէջ թեւին տակն ստած, եկաւ կոմսին ընտանեացն իրեն եղած մասնաւոր հիւրնկալութեանը համար շնորհակալ ըլլալու:

Երմէլինտա ստիպեց զինքը որ Միքելէի հետ իր քովը մնան, սակայն մեր գեղացի պառաւիկը՝ մէկ կողմ տանելով իր ձերուկը, սկսաւ յետագայ յառաջարանն ընել:

— Ինձի նայէ՛ Միքելէ, դեռ Աստուծոյ մեղի պարգեւած քիչ մը ժամանակուան կեանքերնուս մէջ, զմեզ կարող է հողալ ինչպէս որ միշտ գմեղ հողացած է: Երբոր մեր խեղճ Արիկօցցօն, Աստուած ուղորմի հողւոյն, դեռ գիրկս կաթ կ'ուէր, կը յիշես արդեօք թէ ինչպէս գործերնիս ձախորդ գնաց, հի-



մակուանէն գրեթէ տասնապատիկ աւելի, սակայն Նախախնամութիւնը զմեզ մոռցան, միթէ ուրիշի կարօտացանք: Փնօք բարերարին, աչքս կը տեսնայ, մատերս կը բռնեն, կը մանեմ ու կը մանեմ, գիշեր ցորեկ կը մանեմ եւ շփուցէս կ'ապրինք կ'երթայ:

Մենք նիւթական մարդիկներ ենք, չքաւորութեան վարժած. սակայն տիրապետի մ'ալ հոգերուն ու բարկութեանը չենք կրնար համբերել: Ոտքերնուս տակը կարծրացած ու կաշի կապած է, անդադար ժայռերու եւ սարերու վրայ մերկ պտըտելէն. սակայն անոնց ոտքի ամանները մեր ոտքերը կը ցաւընեն...

Վերջապէս, ինչպէս կը տեսնամ, եթէ կոմսը միշտ հոս կենալու ըլլայ, դու ալ պիտի զիջանիս անոնց հետ մարդուս շունչը կըտրող այս բարձր պատերուն մէջ մնացած կեանքդ անցնելու. ըստ իս, եթէ զիս թագուհի անգամ ընելու ըլլան, վայրկեան մը չեմ կենար: Ա՛հ, մեր են մեր լեռները, այն լայն ու արձակ լիճք՝ որ մարդուս սիրտը կը բանայ, մեր են այն ձիթենուոյ ու շագանակի ծառերը, այն դեղեցիկ երկինքը, այն անուն հորիզոնը: Իսկ հոս, ընդհակառակն, պէտք է ուշադրութեամբ զլուխդ վեր առնես արեղական լոյսը տեսնելու համար. հաւատան որ ես այսչափ ժամանակ հոս կենալէս 'ի վեր' տակաւին չեմ կրցած հասկնալ թէ ուստի կելլէ եւ մեր կը մանէ այդ մեր աշխարհը լուսաւորող թագաւորը:

Հապա մեր խեղճ եկեղեցին, որուն վրայէն պապին նղովքը վերնալով, լսեցի թէ դարձեալ պիտի բացուի եղեր... եւ դարձեալ պիտի հնչեն մեր աւանջը՝ առաւօտ եւ իրիկուն: Աստուծոյ տունը հրա-

ւե արտասուալից ու երկնագոյն աչքերը անոր երեսը յառելով սկսաւ հառաչանօք ըսել.

— Վաղը՝ երբոր հեռուէն նշմարէք մեր Լիմոն-դայի բերդին աշտարակները, ողջունեցէ՛ք զանոնք ինձի համար: Քանի քանի անգամներ՝ անոնց դադաթն ելլալով, արեգական մարը մտնալէն վերջը, նստած նայած եմ վարը լճին վրայ, եւ տիեզերաց մթութեանը մէջ նշմարած եմ երկնից աստեղազարդ կամարէն լճին վրայ գլորող լոյսերուն վազելը. դեռ կը հնչեն ականջիս՝ ձկնորսին քաղցր ու ներդաշնակ երգերը: Ա՛լ չի պիտի լսեմ այսուհետեւ այն սիրելի բոյնիմ մէջ անցուցած տխուր օրերուս քաղցր երգը՝ որ միայն կրնար մխիթարել իմ սիրտս: Չի պիտի լսեմ այսուհետեւ լճին եղեղքն՝ աւազին վրայ մարող ալեաց կարկաջը. չի պիտի լսեմ արշաղոյսին ու վերջալոյսին քաղցր ու կենսատու հողմոց սօսափունները եւ ոչ ալ յանկարծահաս մրրիկներուն որոտումը: Ո՛հ, ողջոյն տուէ՛ք ինձի համար, մեր արեգական, մեր լեռներուն ու մեր կապուտակ երկնից կամարին:

Եւ երբոր եկեղեցւոյ դրամն առջեւը ամենքնիդ միատեղ ծնրագիր՝ Աստուածածնայ աղօթքի կենաք երեկոյեան ժամուն, ամենքնիդ ալ յիշեցէ՛ք զիս ձեր մաքուր մաղթանքներուն մէջ, որ քանի քանի անգամներ ես ալ ձեր հետը ծնրագիր բարձրացուցած եմ իմ ձայնս առ Աստուած, եւ քանի անգամներ պզտի տկարութեամբ մը հօրս բերդին մէջ բանտարկուած ժամանակս, ականջ գնելով լսած եմ ձեր աղօթից միմունքները, մերթ մեղմ եւ մերթ բարձր ձայներով. դարձեալ կ'ըսեմ ձեզի, յիշեցէ՛ք զիս... Կարճ են այսուհետեւ իմ օրերս այս պանդուխտ աշխարհիս



զիս կը խրախուսես ինքզինքս Աստուծոյ յանձնելու եւ ամեն բան Աստուծոյ նուիրելու : Երբոր լալու ըսկըսիմ, երեսս ՚ի վեր կը պուռաս, եւ վերջն ալ շէկերպ կերպ խօսքերով զիս կը մխիթարես : — Այս բարոյական երկարաբանութիւնները հոս վերջացան, որպէս զի իրենք ալ միւս գեղացւոց հետ երթալու պատրաստուին :

Ուստի, ինչպէս որ ըսինք, խեղճ պառաւը իրեն քանի մը կտոր զգեստները լաթի մը մէջ փաթեթած եւ թեւէն տակն առած, գնաց կոմսին ընտանեացը վերջին հրաժեշտի ողջոյնը սալու : Թոնարհելով նախ յարգանօք տան տիրոջն առջին, Մարթա Էրմէլինտայի ձեռքը համբուրեց, որն որ մեծ շնորհակալութիւն յայտնեց անոր, այնպիսի նեղութեան ժամանակ ամենայն զոհողութիւն յանձն առնելով ո եւ է աշխատանքէ ետ չի կենալուն համար : Անոր այս աշխատանաց վտխարէն՝ արդէն Էրմէլինտա Մարթայի տանն ամենայն պիտոյքը հողալու համար, գաղտնաբար բաւական սասակ տուած էր առաջնորդին :

Վերջապէս Մարթա, Երանուհւոյն քովը մօտենալով, ուղեց անոր ալ ձեռքը համբուրել . սակայն Երանուհի կամաց մը ձեռքը ետ քաշեց ու անոր ուսին վրայ դնելով ըսաւ, — Երթանս բարեաւ, բարեսիրտ Մարթա, զիս մի մոռնար, որ պղտիկ եղած ժամանակս շատ անդամ գիրկդ առած ու պտըտցուցած ես, եւ միշտ ինձի համար Աստուծոյ աղօթելն ալ քեզի պարտք համարէ, երթանս բարեաւ : Այս ըսելով, ետին դարձաւ եւ մինչդեռ Մարթան երթալու կը պատրաստուէր, աղջիկը սրտին յուզմունքը չի կարենալով զսպել, նոյն ժամայն պատուին քովը վերադարձաւ

ալ ես՝ դքեղ մէջերնիս առնելով նստած, եւ մէկ ձեռքդ ալ իմ ձեռացս մէջ գդուելով անցուցած ժամերնիս . . . : Այն վայրկեանէն ծագած էր սրտիս մէջ դքեղ օր մը ինձի սեփականելու փափաքը : Անկէ մինչեւ ցայժմ որչափ ընդդիմութիւններ, քանի քանի անգամ նորանոր սրտի ցաւեր ու արդեւքներ . . . :

Սակայն այսուհետեւ ակ իմս ես, ակ իմս ես յաւիտեան : Ո՛հ, ինչպիսի անպատմելի քաղցրութիւն ունի անկեղծ սիրոյ խոստովանութիւնը : Քեզմէ ուրիշ թանկագին բան մը չունենալով աշխարհքիս մէջ, պիտի տեսնաս թէ ինչպէս եւ որքան յօժար կամօք պիտի զոհեմ այս կեանքս քեզի՝ որ այսպիսի տարօրինակ վեհանձնութեամբ տարժանելի ճակատագրիս բաժանորդ ըլլալու համարձակեցար :

Ասոնք, եւ ասոնց նման իրանդակաթ սիրոյ խոսքերով ճամբան կը շարունակէր ասպետը : Իսկ Երանուհի՛ քաշած այնչափ սրտակոտոր անձկութիւններէն հողնած ու լքած, միայն իր սիրալիր աչքերն Օղորինօյի երեսը յառած էր եւ առանց կարենալու բան մ'արտաբերել, անոր խօսքերուն իմաստը քաղելու կը ջանար գրեթէ երազող մարդու մը պէս :

Քիչ մ'առաջ երթալով հասան մինչեւ Կալլարաթէ, եւ հոն քանի մը ժամ հանդատանալու համար՝ իջան ձիերէն ու մտան պանդոկ մը : Շատ չանցաւ ասոնց ետեւէն սուրհանդակ մը հասնելով, ներս մտաւ եւ Օղորինօյի նամակ մը բերաւ : Երիտասարդը նոյն ժամայն նամակը բանալով՝ մեծաւ զարմացմամբ Մարթօյի ստորագրութիւնը տեսաւ . . . : Նամակին իմաստն էր թէ՛ Մարթօ իրեն քանի մը մասնաւոր գործոցը վրայ բարկանալով Լուքքայէն էլեր ու դադտնի ճամ-



մէջ, եւ երբոր իմ դժբաղդ կենացս վերջանալուն լուրը հասնի ձեր ախանջը, դո՛նէ արտասուեաց կաթիլ մը իջուցե՛ք ձեր աչքերէն՝ ՚ի յիշատակ խեղճ Երանուհոյն, որ ձեր մէջը ծնած ու մեծցած, կը յուսար վերջապէս ալէկոծ կենաց մ'աշխատանօքը հոգնած գլուխը՝ իւր ծնողացն ու բարեկամաց արտասուօքն ուսողուած սիրելի հողին վրայ հանդէպընել :

Կունսն ու Երմէլինտան ապշած, եւ կարծես թէ իրենց աղջկանը բերնովը խօսող այն գերբնական հողին գլխինք կապածի պէս կայնած՝ անոր երեսը կը նայէին, սուսնց համարձակելու ընդմիջել անոր խօսքերը : Քայց երբոր իր վերջին խօսքերովը, գրեթէ մարգարէական հողով յայտնեց Երանուհի իւր աղետալի վախճանին մերձակայութիւնը, ալ չի կարենալով սանձել իրենց ծնողական սրտին ցաւը, երկուքը միատեղ սկսան արտասուել :

Նաւապարին կինը, որուն ուղղուած էին Երանուհոյն այս անմոռանալի դրոյցները, լսելով իրեն դեղին քաղցր յիշատակացն այնպիսի սիրոյ եռանդեամբ գոլաբանութիւնը, սիրան ելաւ եւ հեկեկելով ու մեծաւ դժուարութեամբ հաղիւ կըցաւ աղջկան ձեռքը բռնելով շրթանցը սամիլ :

Այս ողբերգական դիրքին մէջ բուական ատեն կեցան. միայն Երանուհի չէր արտասուեր : Յետին աստիճանի սիրոյ զգացմունքը արգիլած էր անոր բընութեամբ հոսելու արտասուեաց կաթիլները : Սակայն վերջապէս զինքն այնչափ երկար ժամանակ բռնող մտաց յափշտակութիւնը դադրելով, սխմեց իր ձեռքը բռնող պառաւն ձեռքն աւ կրկնեց վերջի անգամ մ'ալ. — Երթաւ բարեաւ, զիս Աստուծոյ յանձնելու

ւիրող զանգակաց քաղցր ձայները . . . միթէ քանի տեղ չես դներ գանուիլ այնպիսի մարդկանց մէջ՝ որոնք ամենքն ալ քեզի պէս կը խօսին, եւ ոչ թէ հաստեղի մարդկանց պէս՝ որոնց պապաջուսմն չը հասկնալովնիս մեր վրայ կը խնդան ու կը ծաղրեն զմեզ, իբր թէ միայն իրենք ըլլային շիտակ խօսող :

Հոս մեր պառաւը քիչ մը շունչ առնելէն վերջը, դարձեալ հարաշելով խօսքը շարունակեց. — Խեղճ մարդ, գլխեմ, եւ քաջ գլխեմ այն սուրբ տեղերէն հեռանալ ուղեւոր գաւաճաւոր. սակայն կը հաւատանս թէ յայտմ մասին իմ գաղափարս բոլորովին քուկիսիդ հակառակն է : Քանի որ սակաւին այդ դժբաղդութիւնը մեղի չէր պատահած, քանի որ այն մեր խեղճը, . . . քայց թողունք հիմայ, եւ չ'սկսին դարձեալ հոսել մեր արտասուքը. կամք տեսուն՝ օրհնեալ եղիցի . . . ըսել կուզէի թէ . . . կը յուսանս արդեօք թէ այն տեղերէն հեռու կենալով, սրտէդ ալ պիտի կարենաս հեռացնել անոր անմոռանալի յիշատակը, ան, ոչ երբէք, . . . Արեմն Միքելէ, դառնանք ՚ի միասին մեր տեղը, դարձեալ մտածենք եւ աղօթենք անոր համար, երբեմն երթանք անոր գերեզմանին վրայի խաչին դիմացը եւ անոր բարեշնորհ վարքը մաքրենիս բերելով, միթիթարենք սրտերնիս, եւ այսուհետեւ Աստուծոյ մեղի պարգեւած օրերուն մէջ՝ ջանանք մեր մեղաց քաւութեանն աշխատիլ : Եւ երբոր Տէրը զմեզ ալ կանչելու ըլլայ՝ դո՛նէ անոր քովը թաղուելու միթիթարութիւնը կարենանք ունենալ :

Երբ այս խօսքերը վերջացան, Միքելէ աչքերը սրբելով, — Երանուհի ունիս, Մարթա, իրաւունք ունիս, ըսաւ. յիրաւի դու բարի կին մի ես, միշտ



գրել կամ պատմել Երմէշինտայի եւ Երանուհւոյն նոյն օրն ու գիշերը մինչեւ առաւօտ քաղցր սիրոյ համարյր- ներով իրարու փոխադարձաբար ըրած մխիթարական գրոյցները . . . ո՞վ կարող է պատմել աղջկան ու մօրը իրարու ցաւօք սրտի տուած չի կատարուելիք խոս- տումններնուն սիրալիր փափկութիւնը : Վերջապէս ո՞ կարող է գրի առնել կոմսին ու կոմսուհւոյն յետին աս- տիճանի տխրալից ու գորովալից սիրոյ նշաններով , զԵրանուհին թէ իւր ամուսնոյն եւ թէ միանգամայն անոնց հետը Երուսաղէմ իրթալու պատրաստուող Լու- բօյի ու Լաուրէշդայի խնամոցը յանձնելուն խանդա- ղակաթ գրոյցները :

Վերջապէս հասաւ այն սահմանեալ օրն ու ժա- մբ , եւ յետ կրկին ու կրկին արտասուտխաւն սիրոյ համարոյրներու , Երանուհի՛ անայլակալի զիմօք մը ա- ղաւտեցաւ մօրը գրկէն , եւ ձգելով զանի արտասուաց ու հեկեկանաց մէջ , սանդուխներէն վար իջաւ , ու աճապարելով վաղեց վարի գաւիթը . ուր իրեն հա- մար պատրաստուած նժոյզին վրայ ցաակելով ճամբայ ելաւ : Օդօրինօ , Լուբօ , Լաուրէշդա եւ կոմսին եր- կու զինակիրները , որոնք մինչեւ Քասթէլէթօ հար- սին ու փեւսին պիտի առաջնորդէին , հեծան ամենքն ալ միատեղ իրենց երիվարներուն վրայ եւ Երանուհ- ւոյն ետեւէն ճամբայ ելան :

Մեր նոր ճանապարհորդները՝ ժամանակ մը լուս , Ալսթօ Քալէնթէի ճամբան շարունակելէն վերջը , Օ- դօրինօ մէկ ձեռքը Երանուհւոյն հեծած հլու նժոյզին վիղը զրաւ ու միանգամայն ճամբան շարունակելով կ'ըսէր . — կը յիշես սիրելիդ իմ , այն Մօրքաթէի ժայ- սերուն վրայ մէկ կողմանէ հայրդ . ու միւս կողմանէ

րումայեց , եւ արդէն ալ բաւական ժամանակ կարճն- ցուցի զքեզ վերերը վնարուելով :

— Բայց ինչպէս կրցար գլխանալ թէ՛ ես հոս եմ , հարցուց Օդօրինօ :

— Տէլ Պալցօ կոմսին բազէակիրներուն մէկէն ի- մացայ ձեր այս կողմը ճամբայ ելլալը , եւ ետեւէնդ գալով հաղիւ հիմայ կրցայ զքեզ դանալ :

— Իսկ նստեալը քեզի առողը ո՞վ էր :

— Երէկ իրիկուն Սեբրիօյի բերդապահը առաւ ինձի այդ նամակը , Հոն մեծ պարոն մը գալով՝ շուտ մ'այլ եւ այլ կողմեր հինգ վեց սուրճանդակ հանեցին :

— Դու ալ կը ճանչնաս այդ պարոնը :

— Ձեմ ճանչնար , որովհետեւ ես զեռ նոր եկած եմ այս կողմերը . սակայն ըրած պատիւներնուն նաշ յելով՝ պէտք է որ մեծ մարդ մ'ըլլայ : Բարձրահա- սակ քառասունի մօտ , փառաւոր տեսքով եւ այս ու այս ինչ գծադրութեամբ մարդ մ'է ըսելով , կէտ առ կէտ ճիշդ Մարքօյի կերպարանքը նկարագրեց :

Օդօրինօ մտածելով թէ ու ե է պատճառաւ ու- շանալը անխոհեմութիւն եւ յիմարութիւն պիտի ըլ- լայ այսքան կարեւոր պարագայի մը մէջ , միւքը զը- րաւ շուտ մը Սեբրիօ երթալ ու անկէ դառնալով շու- րունակիլ իւր ամուսնոյն հետ ընելու ճամբորդութիւնը :

Սեբրիօ ըսուած բերդը , Ուլլարաթայէն կէս ժա- մբ մը չափ հեռաւորութիւն ունենալով , Օդօրինօ իրեն ուղարկուած սուրճանդակին պատուիրեց որ իրեն ըս- պասէ , եւ ինքն ալ ուրախ զուարթ ներս մտաւ Ե- րանուհւոյն իմացընելու իրեն բերուած նամակին ի- մասոր :

— Մարքօն է , հարցուց Երանուհին այլայլած



բաներէ գալով՝ հիմայ Բողաթէի բերդին մէջ իրեն կ'սպասէր :

Օդօրինօ , նամակը կարդալուն պէս խռովեցաւ . այսպիսի նոր ու յանկարծահաս դէպք մը իր ամեն ապագայ ու մտայածին յոյսերուն թելը կտրելով , զինքը բոլորովին անոնց հակառակ գրութեան մը հետեւելու կըստիպէր : Որովհետեւ որչափ ալ միտքը դրած էր խառնոց երկիրներէն հեռանալ , այսու ամենայնիւ իր սրտին մէկ անկիւնը տակաւին կը պըրպըրար յուսոյ կանթեղ մը . այսինքն ո եւ է միջոցաւ օր մը իր հին տիրոջը հետ հաշտուիլ : Եւ հաստատապէս համոզուած ըլլալով թէ՛ Մարքօյի իրեն դէժ ունեցած ատելութիւնը , միմիայն Բուսքօնէին աղջիկը չառնելուն համար էր , եւ այս ալ իրեն աչքին խիստ պզտիկ բան մը երեւնալով , կը հետեւեցնէր թէ իւր տիրոջը բարկութիւնը , ուրիշ բանէ ծագած չէր՝ բայց եթէ քանի մը չար նախանձոտաց թունաւոր խօսքերուն հաւատք ընծայելէն , որով կը յուսար նաեւ թէ օր մը ճշմարտութիւնը յայտնուելով , դարձեալ կրնայ Մարքօյի սիրտը շահիլ :

Ուստի հիմայ ալ տեսնալով այնպիսի հպարտ , խստաբարոյ եւ մեծ մարդու մ'իւր ուղք դառն ու կերպով մ'իրեն հաշտութեան ձեռք երկնցընելը , Օդօրինօ դարձաւ թուղթը բերող սուրհանդակին ու պատասխանեց :

— Առ այժմ պէտք է որ մինչեւ Քաթթէլէթօ երթամ , ըսէ ուրեմն զքեզ խրկողին՝ որ արեղակը մարը չի մտած ես ամուլջապէս Սէբրիօ կը հասնի :

— Պէտք է որ հիմայ դաս , պատասխանեց միւսը , օրովհետեւ բերդապաճը խնձի խստիւ այսպէս հը-

մի մտնար : Եւ մինչդեռ Մարթա սենեկէն դուրս կ'ելլար , Երանուհի վազեց իր օտրը գիրկը եւ զլուին անոր կուրծքին դրած սկսաւ առատապէս արցունք թափել :

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

Լիմոնդացւոց ճամբայ ելլալուն համար հնչած փողին ձայնը լսուածին պէս , Երանուհի նոյնժամայն աչքին արցունքը սրբեց եւ ինքզինքը խաղաղացընելով՝ գնաց փողոցը նայող պատուհանի մ'առջեւ կեցաւ . հայրն ու մայրն ալ անոր հետեւը կենալով երեքը միատեղ իրենց գեղացւոցը դուրս ելլալուն տեսարանին կ'սպասէին :

Վերջապէս տեսնուեցաւ առջեւէն Լիմոնդացւոց արագիլաղարդ գրօշակը , եւ անոր ետեւէն իրենց ծերունի առաջնորդն՝ ու ետեւէն ալ իրեն ժողովուրդը որոնք զոյգ զոյգ դռնէն դուրս ելլալով Ալճիզօի ճամբան բռնեցին : Ամենէն ետեւի զոյգը՝ նաւալաբն ու իր կինն էր : Մարթա , անդամ մ'ալ իւր տէրանոցը վերջի բարեւը տալու համար գլուխը վեր առաւ , եւ Երանուհւոյն հանդիսաւ ու զուարթերես վիճակի մը մէջ պատուհանէն իրենց նոյնը տեսնալով , ապշած մնաց :

Մեր նոր հարսին ու փեսայն ալ դէպ 'ի Քաթթէլէօ ճամբայ ելլալին , ճիշդ նոյն օրուան երկրորդ առաւօտուն համար որոշուած էր : Ո՞վ կարող է նկարա-



կերպով մը , Մարքոն է դարձեալ դքեղ կանչողը : Ո՛հ , Օդօրինօ , Աստուծոյ սիրուն համար՝ չըլլայ որ երթաս այդ մարդուն քով , փախչի՛նք , փախչի՛նք այն մարդէն , տար դիս մինչեւ Քասթէլլէթօ :

— Բայց Մարքօն քու առաջուան գիտցած մարդդ չէ , տես թէ ի՛նչպէս ինքզինքն ամբաստանելով , կ'ուզէ ինծի հասուցած չարեացն առջեւն առնել :

— Ո՛հ , չէ , չէ , չըլլայ որ խարուխ ու երթաս . դարձեալ կը կրկնեմ , փախչի՛նք այն մարդէն , փախչի՛նք քանի որ ժամանակ ունինք :

— Մտիկ ըրէ սիրելիս , ըսաւ Օդօրինօ , Երանուհւոյն մէկ ձեռքն իր ձեռացը մէջ առնելով , քու այս երկիւղդ ու Մարքօյի դէմ ունեցած հակակրօնութիւնդ կարգէ դուրս բան մ'է : Միթէ քու եւ քու ճորդ աղաչանացն անսայով , Լուբօյի կենաց շնորհագիրը տուողը Մարքօն չէր :

Երանուհի , Օդօրինօյի բերնէն անմիջապէս այն սոսկալի գիշերուան յիշատակութիւնը լսելուն պէս , կարծես թէ սիրաբ փեր վաղեց , եւ մէկ ձեռքն ա՛մուսնոյն ուսին դնելով ըսաւ .

— Ա՛հ , Օդօրինօ , դու տակաւին ամեն բան չես գիտեր :

— Ի՞նչպէս , կը կրկնէր միւսը դարմացմամբ մը , դձև սլ արդեօք իմացեր ես . . . Ես կարծէի թէ . . . այն , յիբաւի ճիօսթրա խաղին մէջ զիս երկվարէս վար գլորող անձանօթ ասպետը Մարքօն էր : Սակայն գիտես թէ իմ ցայժմ ողջ մնալս ալ դարձեալ իրեն մէկ պարզեւն է : Գիտես վերջապէս թէ փոխանակ սրածայր նիզակի , ծայրը փշրած նիզակաւ մ'էր սնոր ինծի տուած հարուածը :

Երանուհի՛ թէպէտեւ իր առաջին յուզմանը մէջ բերնէն փախուցած քանի մը խօսքերովը , Մարքօյի առ ինքն ունեցած սիրոյն դադանիքը յայտնելու վրայ էր , սակայն տեսնալով որ Օդօրինօ իւր խօսքերուն բոլորովին ուրիշ իմաստ եւ մեկնութիւն մը տուաւ , սկսաւ կամաց կամաց ինքզինքը դսնալ եւ միանգամայն յիշել իւր մօրը պատուէրը , թէ այս դադանիքը Օդօրինօյի ամենեւին չի յայտնէ , որպէս զի չըլլայ թէ նա՛ այնպիսի ահաւոր մարդու մը հետ թշնամանայ : Աւստի խաղաղ կերպով մը գլուխը ծռելով լսեց :

Այն ատեն Օդօրինօ սկսաւ տաքութեամբ խօսիլ Մարքօյի վեհանձնութեանը եւ սուստամեծնութեանը վրայ , յայտնելով իրեն , սնոր վրայ ունեցած յետին աստիճանի վստահութիւնը եւ հետն ալ հաշտուելով ուղղակի Մարքօյի գիրկը դիմելու համար՝ ունեցած փափաքը : Եւ իրարու մէջ շատ մը երկար խօսակցութենէ փերջը , կէս մը համոզուելով ու կէս մ'ալ հնազանդելով , Երանուհի յանձնառու եղաւ Օդօրինօի անգամ մը Սէբրիօ երթալ՝ ու դառնալուն :

— Շուտ պիտի դառնաս , այնպէս չէ , կը հարցընէր Երանուհի ասպետին :

— Շատ շատ՝ երկու ժամէն անյատաղ կը դառնամ , սրատասխանեց Օդօրինօ , իմ այս անգամ Սէբրիօ երթալս , ուրիշ բան մը չէ , բայց եթէ առաջին նշան մը Մարքօյի հետ հաշտուելուս , Իսկ դու առ այժմ Լաուրէդայի , Լուբօյի եւ ճորդ երկու զինակրացը հետ հոս հանդարտ ինծի սպասէ :

— Իսկ դու ասոնցմէ մէկը միատեղ առնել չես ուզեր :

— Արդէն ըսինք թէ ասկից մինչեւ Սէբրիօ կ'ես



ժամուան ճամբայ կայ ու չիկայ . միայն նամակը բերող սուրհանդակին ինծի հետ ընկերանայլը բաւակաւնէն ալ աւելի է : Այս ըսելով զՆրանուհին բազկացը մէջ առաւ եւ իրարու փոփոխակի համբոյրներ տալերնէն յետոյ ճամբայ ելաւ :

Պայմանեալ երկու ժամուան վրայ , ժամ մ'ալ անցաւ ու Օգորինոյն չերեցաւ :

Ասպետին դառնալու ճամբուն վրայ՝ ո եւ է առաքելայի մը շարժիլը , կարծես թէ Երանուհւոյն աչացն Օգորինոյի սաղաւարտին վրայի ճերմակ փետուրներուն պէս կերեւնար . պզտի ձայն մը՝ անոր ձիուն ոտից ձայնը կը կարծէր : Կը ճեմէր իր աղախնոյն հետ կեցած խուցին զէպ 'ի երկանքն ու լայնքը , կը կանչէր երբեմն Լուբոն՝ որպէս զի անկէ տեղեկութիւն մը առնէ Օգորինոյի վրայով : Երբեմն ալ պատուհանին առջեւն երթալով դուրս կը նայէր եւ կամ անկուն մը քաշուած՝ աթոռի մը վրայ սրտաքեկ կսպասէր : Սակայն այս յուզման եւ սիրտհամոտման հետ ժամերը կանցնէին , եւ ահա ճիշդ հինգ ժամ էր եղած ու տակաւին Օգորինո երեւան չ'էր ելած :

— Մտիկ ըրէք , ըսաւ վերջապէս Լաուրէզայի եղբայրը Երանուհւոյն ներկայանալով . եթէ հրաման կուտայք , ես երթամ անդամ մը մինչեւ Մէքրիոյի բերդը եւ կամ ձեր հօրը զինակրաց մէկը խրկեցէք , տեղեկութիւն մը առնելու համար :

— Քու երթալդ լաւագոյն է , պատասխանեց Երանուհի , եւ այնպիսի ճամբայ մը բռնէ , որ ստիպուի անմիջապէս հոս դառնալու . եւ որովհետեւ մինչեւ որ դուն հոն երթաս՝ ընտանապէս իրիկուն պիտի ըլլայ . ուստի դու ալ սպասելով անոր հետք գար-

ծիր : Կը տեսնաս իմ ատանեալ վիճակս , պատմէ ուրեմն Օգորինոյի . . . : Սակայն չէ , թող ինծի համար չը վշտանայ . . . : յայտնի է թէ հարկադրուած պիտի ըլլայ այսչափ ուշանալու , միայն ըսէ իրեն թէ քեզի հետ անպատճառ հոս դառնայ : Լուբո դուրս ելաւ . Երանուհի ալ ետեւէն մինչեւ դուռը գալով . — չի մոռնաս կը կրկնէր , ու չըլլայ որ առանց Օգորինոյի մինակ ետ դառնաս :

Շատ չանցաւ մութն ալ կոխեց , բաւական երկար ժամանակ մ'ալ սպասելէն վերջը , յանկարծ շատ մ'երկվարաց ոտից ձայները միատեղ լսուեցան : Նրանուհի շուտ մը դէպ 'ի պատահանը վազեց պտուղով թէ՛ հոս եկէք , հոս եկէք , եւ սրտին ուրախութենէն հազիւ թէ շունչը կրնար առնել : Ուստի , խուսմը մը ձիաւորներ պանդոկն իջան ու հետեւաբար սանդուխներէն վեր ելլալու ուղի ձայներն սկսան լսուիլ : — Օգորինո , դո՛ւ ես հարցընելով , Երանուհին եկողները դիմաւորելու համար դէպ 'ի դուռը սկսաւ վազել : Սակայն փոխանակ Օգորինոյի՝ կանթեղի մը լոյսով տեսաւ որ իր հօրը զինակիրներէն մէկը , քիչ մ'առաջ նամակը բերող եւ ետքն ալ Օգորինոյի հետք գացող սուրհանդակին ձեռքէն բռնած , ներս մտաւ : Յուրահանդակը երկայն բարակ խոնարհ յարդանայ ձեւեր ընեկէն վերջը , ըսաւ Երանուհւոյն թէ՛ ինք հիմայ Սկրբիոյէն կը դառնար՝ հոն ողջ առողջ ձգելով իր ամուսինը , եւ թէ՛ Օգորինո որչափ ալ կը յուսար ժամ մը առաջ գործը լնցընել ու այնպէս անձամբ դառնալ , սակայն տեսնելով որ երկրորդ օրուան առաւօտուրնէն առաջ անկէ դառնալու հնարը չի կար , զինքը խրկեր էր ուրիշ վեց հոգւով՝ որպէս զի զՆրանուհին



իւր ազախնոյն եւ երկու զինակրաց հետը միատեղ հիմայ մինչեւ Քասթէլլէթօ տանի :

— Իսկ Լուբօն ո՛ր է , հարցուց Երանուհի :

— Լուբօն հոն հասնելէն ՚ի վեր քովէն չի հեռացուց , որովհետեւ այս գիշեր գործի մը համար կ'ուզէր մասնաւորապէս զինքը տեղ մը խրկել :

— Բայց ի՞նչպէս կրնայ ըլլալ . . . :

— Ուստի ձեր ամուսինը զիս զրկեց՝ ըսելու թէ ամենեւին չի տխրիք , որովհետեւ անմիջապէս վաղն առաւօտ կանուխ եւ անպատճառ զինքը Քասթէլլէթօ հասած պիտի գտնաք Լուբօյի հետ :

— Հիմայ , եթէ կը բարեհաճիք , ըսաւ կոմսին զինակիրը , պատրաստել տամ երիվարները :

Երանուհի հրաման աւելով , քիչ ատենուան մէջ ամեն բան պատրաստուեցաւ ու ճամբայ ելան : Օդօրինօյին ամուսինը եւ Լաուրէզա՝ երկու փառաւոր նժոյգներու վրայ հեծած , քիչ մ'առաջ Երանուհւոյն հետ խօսակցող զինակիրին ու սուրճանդակին մէջտեղէն կ'երթային , իսկ մնացած խումբը քանի մը քայլ հեռու ետեւէն կուգար :

Օդն անձրեւելու մօտ ու մութ գիշեր մ'էր , եւ ճամբուն վրայ ալ մէկը չէր տեսնուէր : Ուստի քաղքէն բաւական հեռանալէն վերջը , Երանուհի յանկարծ ետեւէն եկող հեծելոց մէջ՝ այլանդակ ձայներով աղմուկ մը եւ գէնքերու շառայիւն մը լսելով , քովէն եկող հօրը զինակիրին ըսաւ , որ ետ դառնայ ու կտիւր զազրեցընէ :

Սակայն մեր զինակիրը , — աւազակաց յարձակմունք մ'է , պատասխանելով իր երիվարին զէպ յառաջ ընթացք տուաւ եւ Երանուհւոյն նժոյգին ալ

սանձէն բռնած միատեղ առաջ կը քշէր : Այս միջոցիս ազախնոյն հետը եկողն ալ՝ նոյնպէս անոր նժոյգին սանձն առած բոլոր ընթացքով յառաջ կ'երթային :

— Բայց ինձի նայէ՛ , կ'ըսէր Երանուհի , տես Ռիչիարտինօյին ձայնն է . վազէ՛ , վազէ՛ , օգնութեան հասիր : (Տէլ Պալցօ կոմսին իր հետը դրած ու Սերրիօյէն զօրաց հետը եկող զինակիրին անունը Ռիչիարտինօ էր) :

— Բան մը չէ , կ'ըսէր միւսը , անոնք եօթը քաջ ու լաւ զինեալ զինուորներ են , ուսկից՝ վախ պիտի ունենան : Եւ այս ըսելով՝ դարձեալ երիվարը անընդհատ յառաջ կը վարէր , իբր թէ զԵրանուհին այն խառնիճադանձէն փախցընելով՝ ապահով տեղ մը հանելու նպատակն ունեցած ըլլար : Միանգամայն Երանուհւոյն ալ կ'ըսէր թէ՛ ինք մասնաւորապէս իւր առանձին խնամոցը յանձնուած ըլլալով , վնայ էր իր կենացը՝ թէ որ վտանգ մը պատահելու ըլլար . . . :

Քիչ մը վերջը ամեն բան խաղաղելով մերիններն ալ իրենց ընթացքն աւելի խաղաղացոյցին : Երանուհի այս միջոցիս ուղեւորով ամեն բան իրօք իմանալ , կ'ուզէր որ քովէն եկող զինակիրը երթայ ետեւէն Ռիչիարտինօն կանչէ , որն որ ժամանակ մը դանդաղելէն վերջը հնազանդելու ձեւով ետ դարցուց երիվարը :

Սակայն շուտ մը ձին վազցընելով կտ դարձաւ , եւ զարհուրած ու օտրասպիած կերպով ըսաւ թէ՛ իրենց հետեւող զօրքերը ցրուած են եւ թէ՛ աւազակներն ալ իրենց հետեւէն հասնելու մօտ են :

Այս ըսելով դարձուց շուտ մը երիվարաց սանձերը մացառուտ , ժայռոտ ու անել անտառ մը տանող անծանօթ ճամբու մը բերանը :



Նոյն գիշերը՝ շարունակ ասդիս ու անդին, ան-  
ծանօթ ճամբաներու, հովտերու եւ մացառներու մէջ  
անդադար թափառելով անդուցին: Մեր երկու կա-  
նայքն, իրենց հոգնութիւնը մոռցած՝ այս շարունակ  
երթալնուն ու տակաւին իրենց տեղը չի հասնելնուն  
վրայ կը զայրանային: Սակայն, իրենց երկու առաջ-  
նորդները միաբերան՝ ամենայն յարգանօք եւ քաղա-  
քավարութեամբ թողութիւն կը խնդրէին՝ այնպիսի  
աարօրինակ շիթութեամբ մը ճամբան կործնցնելուն  
համար, ու միանգամայն կապահովցնէին զիրենք թէ  
քիչ ատենէն Քասթէլլէթօ պիտի հասնին:

Ա՛հ, եթէ գիտնային խեղճերն ռէր առաջնորդը-  
ուելնին եւ որո՞նց ձեռքն ինկած ըլլալնին. քանզի,  
փոխանակ Քասթէլլէթօ երթալու, Մարքօ Վիսթօն-  
թիին Բողաթէ բերդը կերթային. այն գիշատիչ Բէ-  
լէկրուայի ճիրաններուն ներքեւը իյնալու: Երանուհ-  
ւոյն քովէն դնացող կոմսին ղինակիր ըսածնիս՝ մարդ  
չէր, եթէ ոչ Բէլէկրուայէն որոացուած մասնիչին մէ-  
կը. իսկ սուրհանդակն ու միւս վեց ղինեաներն ալ  
Լօտրիդիօյի շուներէն էին: Առջի օրուան եւ նոյն գի-  
շերուան բոլոր պատահածները, այս երկու նենդա-  
ւորաց մեքենայած դաւերն էին գերանուհին՝ Օդօրի-  
նօյէն զատելու համար: Ասոնց նպատակն էր՝ Մար-  
քօյի հաճոյիցը համեմատ զերանուհին իրենց ձեռացը  
տակն ունենալ՝ եւ առանց զինքը վախցնելու եւ մի-  
անգամայն ուրիշի իշխանութեանը ներքեւն ըլլալուն  
կասկածանաց տեղի տալու, կամաց կամաց պատրաստել  
զինեղծը՝ իրենց շար նպատակին ծառայեցնելու համար:

Մէկ կողմ թողունք յայտնի թշնամանօք Օդօրի-  
նօյի եւ իր երկու հաւատարմացը վրայ յարձակելու

խորհուրդը, մեր երկու նենգաւորները շատ մը չա-  
րագործութեանց վրայ երկայն բարակ իրարու հետ  
խորհրդակցելէն ետքը, վերջապէս քիչ մը առաջ տե-  
սածնուս համեմատ, հաստատեցին Մարքօյի բերնէն  
կեղծ նամակաւ մը՝ Օդօրինօն Երանուհւոյն քովէն հե-  
ռացնել: Իսկ Լուբօյի գալով, որոշած էին անմիջա-  
պէս նոյն գիշերը տիրոջը կողմանէ գործի մը ղրկուե-  
լու առթիւ կանչելով, զինքն ալ իւր տիրոջն ինկած  
ձուղակը ձգել: Սակայն ինչպէս որ տեսանք, անոնց  
մարդ խրկելէն առաջ՝ Լուբօ ինքնիրեն Քասթէլ Սէբ-  
րիօ դնաց անոնց դարանն իյնալու: Կը մնար կոմսին  
միւս ղինակիրը, որ ամենեւին այս դաւաճանութեան  
մէջ ձեռք մը չ'ունէր. — սակայն առանձին մարդ մը՝  
առանց կասկած մը ունենալու ինչ մեկնութիւն կըր-  
նար արալ առնոց բռնած ճամբուն:

Թէպէտեւ այս որոշումն առաջին անգամ Բէլէ-  
կրուայի խիստ վտանգաւոր երեւցաւ, այսինքն « յա-  
փըշտակել անյալիս՝ աղնուազարմ աղջիկ մը, եւ ի-  
րենց կամացը գերի ընելով՝ բանտարկել բերդի մը  
մէջ» . սակայն Լօտրիդիօ, մասնաւորապէս Օդօրինօյի  
գէմ ունեցած յիսակալութեամբը, ստիպողական կեր-  
պերով համոզեց ղինքը՝ թէ քանի որ գործերն այս  
անյաջող վախճանին հասան, հիմայ 'ի հարկէ իրեն ու-  
րիշ բան չէր մնար՝ բայց եթէ կուրօրէն իւր տիրոջը  
խտախ ու մասնաւորապէս հրամայած գործը կատարել:

Վերջապէս իրենց մէջ հաստատեցին, որ այս աղ-  
ջըկան յափշտակութիւնը՝ ժամանակ մը Մարքօյէն  
գաղտնի պահելով՝ մտիկ ընեն հասարակութեան բե-  
րանը. եւ ետքը կամաց կամաց գործը Մարքօյին յայտ-  
նելով, դուցէ անոր մարած սէրը կարենան բորբոքել:



իսկ միւս կողմէն ալ ու եւ է միջոցաւ՝ Երանուհւոյն սրտէն ամենայն երկիրւղ ու կասկած փարատելով, ա- նոր հանելի ըլլալու ջանքն ընել :

Պ Լ Ո Ւ Խ Ի Գ .

Արշարայր ծագելու մօտ էր, Երանուհի եւ իր ա- ղախիւր հասան Քօզաթէ բերդը, եւ քնականապէս բարդովին այն տեղուանքն իրենց անծանօթ ըլլալով, իբրեւ թէ Քաթիէլլէթէ եկածի պէս ներս մտան : Ըն- դարձակ դաւիթէ մը անցան եւ քանի մը սանդուխ- ներէ վեր ելլալով ու քանի մ'ալ մեծ սրահներէ անց- նելէն ետքը, յուսկ յետոյ հասան փոքրիկ եւ չորս հինգ մեծ խոցերու նայող սրահի մը մէջ, առանց իրենցմէ զատ մէկը տեսնալու : Իսկ զիրենք մինչեւ հոն հանող խորեբայ գինակիրը, իբրեւ թէ բերդա- պահը կանչել ուզելով, որպէս զի մեր նոր հիւրերուն պէտք եղած փնտալը հողայ, թողուց զիրենք ու ան- յայտ եղաւ :

Կանայք մինակ մնալով՝ անցան դէպ 'ի ներքին սենեակները, որոնք չքեղ եւ ամենավայելուչ, եւ դե- ղեցիկ կերպամեղով, թիկնաթուռներով եւ այլ եւ այլ կարասեօք զարդարուած էին : Խնցիկ եւ ապակիէ ա- մաններու մէջ լուացուելու համար լեցուն անուշա- հօտ ջուրեր, զգեստներ, զարդարանքներ եւ վերջա- պէս աղնի ու հարուստ ընտանիքէ մը հարս եկող օ-

րիորդի մը պէտք եղածէն աւելի պածուճանքներով կարգադրուած գտան :

Երանուհի, որ ինքզինքն իր տանը մէջ կը կար- ձէր, երկար ճամբորդութենէն հոգնած, ինկաւ մեծ- կակ ակտախ մը վրայ, մինչդեռ ազախիւր անտղա- րեց անոր կոնակի մուշտակազարդ ու գիշերունս ջօ- ղէն թրջած զգեստն առնելով՝ հոն պատրաստ գրտ- նուած թխաղոյն չուխայէ զգեստ մը հապցնելու . սաքի ամանները քաշելով՝ աւելի մեծկակ ու մետաք- սէ հողաթափներ տտւաւ, հիւսուած մաղերն արձա- կեց, եւ վերջապէս ձեռքը ջուր տալով լուացուելէն ու հանգստանալէն վերջը, սկսան հետեւեալ կերպով իրարու հետ խօսակցիլ :

— Արշարայր կը ծագէ, կ'ըսէր Երանուհի, կար- ձեւ թէ ալ չուշանար դալու :

— Հաւանական է, կը պատասխանէր ազախիւր, սակայն կեցիր տեսնենք, մենք ալ տակաւին հիմաջ հասանք տեղեինիս :

— Ուրեմն դօւ չես հաշուեր մեզի ճամբուն վը- րայ կորսնցքնել տուած արնչափ ժամանակին :

— Իրաւունք ունիք, պէտք է որ ձեր ամուսինն եկածին պէս, այդ անպիտաններուն բոլոր ըրածը պատմէք : Զեպ ո՛ր տանել չի գիտնալին, հասրան կորսնցքնելին, ձեզի հետ չորս ժամէն աւելի խտախ վարուելով՝ զքեզ երկվարի վրայ բռնելին :

— Չորս ժամ, բոնը կ'ուզին թէ չորս ժամ կոր- սնցուցինք ճամբուն վրայ :

— Չորս ժամ ճիշդ . վասն զի իմ եղբորս բաժնին համեմատ, Առլարաթայէն մինչեւ հոս երկու ժամ- ուան մէջ պէտք էինք հասնիլ . մանաւանդ թէ երի-



վարաց տրուած ընթացից համեմատ, երկու ժամէն ալ առաջ պէտք էինք հասնիլ :

— Շատ լաւ, պատասխանեց Երանուհի, այս չորս ժամուան մէջ Օդորինօ արդէն գործը լմնցուցած ըլլալով . . . իսկ Սերբիօյէն հոս, գիտես արդեօք որչափ ժամանակ պէտք է :

— Յիրաւի չեմ գիտեր, եւ դուք ալ արդէն գիտէք թէ այս տեղուանքն ինծի համար բոլորով ինչանձանօթ են :

— Ըսել կ'ուզեմ թէ կարծիքդ յայտնես, ըսաւ Երանուհի ստիպողական կերպով մը . . . կրնամ ըսել թէ ութը մղոն ճամբայ ըլլայ . . . :

— Գու ալ քու կարծիքդ դրուցէ . . . կարծեմ թէ ութը մղոնը քեզի քիչ կ'երեւայ . . . շատ բարի, տաքը մղոն դնենք, դնենք տասն եւ երկու մղոն, ես առ այժմ կ'ուզեմ արձակ հաշիւ մ'ընել, ուստի կարծեմ թէ երկոտասան մղոնը բաւական է . . . :

— Սեպենք թէ անոր մօտ բան մ'ըլլայ :

— Ձիաւորի մը համար այդչափ ճամբան ոչինչ բան մը սեպուելով, մինչեւ հիմայ Օդորինօ հոս հասած պիտի ըլլար : Աստուծոյ սիրուն համար ըլլայ, դու ալ չես յուսար թէ քիչ ատենէն հասնի :

— Հաւանականաբար կրնայ հասնիլ, սակայն եւ այնպէս . . . կրնայ ալ ուշանալ . եւ անոր վրայ ալ ամենեւին պէտք չէ նորանոր կասկածներու երթալ : Որովհետեւ քաջ գիտէք թէ՛ գործի տէր անձինք մեղի պէս բարակը չը կարենալով հաշուել, չեն կրնար որոշել՝ եւ երկու ժամ առաջ կամ երկու ժամ վերջը գործերնին լմնցնելու սահման մը գնել :

— Հիմայ աղէկ դրուցեցիր, այս ըսածդ ես ալ

կ'ընդունիմ . սակայն կը յուսան թէ մէկ կամ երկու ժամ ուշանալուն համար չար ու անտեղի կասկածներու ենթակայ ըլլամ . գիտեմ թէ գործի մէջ ինչ պարագաներ կրնար պատահիլ, եւ ես անկէ ամենեւին վախ չունիմ : Սակայն իրեն այնքան թախանձանօք չուշանալու ստիպելուս նայելով, հիմայ այս վայրկենիս կը յուսամ թէ հասնի . . . լո՛ք տեսնեմ . . . դու ալ ոտքի ձայն մը չես առնիր . կարելի է որ խօսակցութեան զբաղելով՝ երիվարներուն բերդին անհաստատ կամուրջին վրայէն անցնելուն ձայնը չառած ըլլանք :

Այս ըսելով ոտք ելաւ դէպ 'ի պատուհանը վաղելու . սակայն Լաուրէշա նոյն պատուհանին աւելի մօտ գտնուելով, շուտ մը գլուխը դուրս հանեց . եւ տակաւին Երանուհի պատուհանին չի հասած ներս առաւ գլուխն ու ըսաւ :

— Ձէ, չէ, մերիններէն մէկը չէ՛ . կրնաք գուշակել եկողին ո՞վ ըլլալը, Բէլէկրուան է :

— Ո՞վ, սա Լիւննդայի մենաստանին գործակալն է :

— Ճիշդ ինչն է, պատասխանեց աղախինը, եւ Երանուհւոյն խօսքն անուելով .

— Ինչպէս կրնայ ըլլալ որ ասիկայ հոս գտնուի, որովհետեւ մեր գեղէն ելած օրէն 'ի վեր՝ խօսքն անգամ լսած չեմ : Բայց ձեզի շիտակն ըսեմ, գուցէ չար դուշակութիւնն մ'ալ ըրած ըլլամ, այսու ամենայնիւ այս մարդուն գէմքն ինծի ամենեւին ախորժելի չ'ենրեւար :

— Այո՛, այո՛, սոս այժմ թող այդ սողայական ցընորքներդ . ես շատ լաւ գիտեմ եւ վերջն ալ ձեզի կը պատմեմ անոր ինչ կերպով հոս գտնուիլը : Վասն զի Երանուհի կը յիշէր նաւաբեկութեան երկրորդ ա-



ուր Օդօրինոյի հետ Վարէննա դամուած ժամանակը ուր Լիմոնդայի եկեղեցոյն առաջնորդը, (այժմ իրեն ամուսնոյն), այս փախտական գործակալին համար ըրած յանձնարարութիւնը. եւ անկէ անդին իրեն մութ ըլլալով, կը կարծէր թէ անշուշտ այն ատենէն 'ի վեր Օդօրինօ իր բերդին մէջ գործի մը դրած ըլլայ գիշէկրուա :

Այս միջոցիս գուրսի սրահին դուռը զարնուեցաւ : Երանուհի արդէն Լաուրէդայի հրաման ատուած էր, որ եկողին ներս մտնալու հրաման տայ : Ուստի աղախինը ձայն ատուածին պէս, դռները բացուեցան եւ Բէլէկրուա սեւ թաւիչէ գլխարկը ձախ ձեռքն առած՝ յարգանաց ու խոնարհական ձեւեր ընելով սկսաւ առաջ գալ :

Բէլէկրուայի ինչպէս մարդ ըլլալն իմանալ ուզողը, կրնայ երեւակայել գրեթէ յետուն տարուան մօտ, միջակ հասակաւ ու վատոյժ մէկը : Տժգոյն ու կապուտակ այտերուն գոյնը՝ ոչ ամօթով եւ ոչ ալ բարկութեամբ կ'այլայլէին : Եազանաճագոյն ու թուխ յօւքերուն ներքեւը խրած երկու սեւ ու վայլակի նրման աչքերն անդադար չորս կողմը կը պտըտէին, այնպիսի դաժան աչքեր, որոնց մէջ ո եւ է անձ կարող էր յայտնապէս ընթեռնուլ փոխանակ հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ, անգթութիւն, կեղծաւորութիւն ու հպարտութիւն :

Ինչպէս աւագակ մը՝ որ կողպսեղու ատեն միշտ սրտադողի մէջ, կուզէ օտտիկանութեան աչքէն զերծ մնալ, նոյնպէս ալ Բէլէկրուա ներս մտած ժամանակը, այդ սուր աչքերը խոնարհարար գետինը յառած թէ յառաջ կուգար եւ թէ միանդամայն փայլակի պէս

աջ ու ձախ կողմը ակնարկ մը կը նետէր, իրիւ թէ երրորդ օտարի մը տեսութենէն խուսափիլ ուզեմար :

Ուստի այս դիրքին ու կեղծ ու պատիր ձեւերուն մէջ Երանուհոյն մօտենալով, մէկ ծունկը գետինը դրաւ՝ ու գլուխը խոնարհելով. — Բարեհաճեցէք Տիրուհի կըսէր, ընդունիլ նուստ ծառաներնուդ յարգանքը, զոր ձեր ամուսինը Քասթէլէթօի բերդապահ ընարած է :

— Ուրեմն ըսել է որ հոստեղի բոլոր կառավարութիւնը քեզի յանձնած է :

— Այս տիրուհի, եւ ինչպէս ցայժմ բոլորով սրբաբաւ մնչելու անգամ կեանքս զոճելու պայմանաւ հաւատարիմ ծառայութեամբս՝ տիրոջս միշտ սիրելի եղած եմ, յուսամ թէ ձեզի ալ նոյնպէս հնազանդելով ձեր քովս ալ նոյն պատիւը պիտի կարենամ ստանալ :

— Այլիք, ըսաւ Երանուհի :

Բէլէկրուա հնազանդեցաւ. իսկ Երանուհի կը շարունակէր .

— Ըսէ սեանեմ, բերդապահ, արդեօք Օդօրինօ տակաւին շատ պիտի ուշանայ գալու, կամ թէ լսեցիք արդեօք անոր մինչեւ Սէբրիօ դացած ըլլալը :

— Գիտեմ Սէբրիօ հասած ըլլալը. գիտեմ նաեւ թէ դձեղ մինչեւ հոս առաջնորդոյներն ինչ անվայել ճախրանքիւ մէջ գտնուեր են. սակայն ամենեւին հող մի ընէք, Տիրուհի, ինձի ձգեցէք, ես անոնց պէտք եղած պատիժը . . .

— Ահ, չէ, վրայ բերաւ Երանուհի, չեմ ուզեր ամենեւին որ իմ պատճառաւ մէկը հարստանարուի . . . Որովհետեւ անոնք ինչ որ ըրին, բարի նպատակաւ եւ իրենց սիրոյն ու իմ ամուսնոյս հնազանդե-



լու համար ըրին : Եւ եթէ . . . համարձակէին . . . վեր-  
ջապէս չեմ ուղեր որ մէկ մ'ալ այս բանիս վրայ խօսք  
բայցուի . . .

— Ինչպէս , վրայ բերաւ Բէլէկրուա՝ դարմաց-  
մամբ ու նեղսրտութեամբ մը . Ինչ ըսել է , թէ որ  
մէկը յանդգնէր . . . որն որ ինծի անկարելի կերեւայ ,  
ես միայն անոնց աններելի ապշութեամբ մը ճամբան  
կորսնցնելուն վրայ կուզէի խօսիլ . բայց թէ որ , ո-  
ղորմելիին մէկը . . . մի որ կուզէ ըլլայ , վայ անոր . . .

— Ո՛հ , յայդ մասին , գոչեց Լաուրէդա , ես քե-  
զի կը հաւատան որ Տէլ Պայցո կոմսին աղջիկը ամե-  
նեւին այդ տեսակ բաներու վարժած չէ . . . սակայն  
Երանուհի աչք մ'ընելով՝ աղախնոյն խօսքը բերանը  
մնաց :

Կեղծ բերդապահը ահ ու դողի մէջ ձեւացնելով  
ինքզինքը , — Թողութիւն ըրէք , կըսէր Երանուհոյն  
խղզուկ ձայնով մը , տեսնալով անոր բարկութիւնը ,  
թողութիւն ըրէք տիրուհի , միայն այս բերդին պա-  
տիւը պահելու համար է որ . . . վայ է ինձ՝ թէ որ  
ձեր աղնուաղարմ ամուսինը իմանալու ըլլայ . . . վայ  
ամենեցուն , վայ իծի : Շնորհք ըրէք , ինծի իմացնե-  
լու թէ որ աներեսը . . . եւ ապահով եղիք . . .

— Լռէ , չի պատուիրեցի քեզի այս բանիս վը-  
րայ խօսքը չի երկարել , ըսաւ Օդօրինօյի ամուսինը  
վեհանձն ու հաստատ եղանակաւ մը :

Եւ տեսնելով դիմացը կեցող կեղծաւորին իրեւ-  
թէ իր ըսածներուն վրայ զըջացածի պէս՝ շուտ մը  
լուռ եւ խռովեալ կերպերով առջեւը նայելը , խօսե-  
լուն եղանակը փոխեց : Եւ աւելի քաղցր կերպարան-  
քով մը :

— Հիմակուան քեզի ընելու հարցումս այն է թէ ,  
ըսաւ , արդեօք Օդօրինօյի գալը տակաւին կրնայ եր-  
կարիլ :

— Թէ որ գիտնայիք , ըսաւ այն ասեւն Բէլէկ-  
րուա ախտը դէմքով , եթէ կարող ըլլայիք իմանալ  
ձեզի ընելու նախազուշակութիւնս , որ ձեր փափուկ  
սիրտը պիտի ճմլէ եւ որուն համար ես մեծ ցաւ կ'ըզ-  
գամ . . .

— Ի՞նչ է ընելու գուշակութիւնդ , հարցուց շուտ  
մը Երանուհի սրտագողով մը , արդեօք նոր բան մը  
իմացար :

— Ձեր հոս համեւելն քանի մը վայրկեան առաջ  
Սերբիօյէն սուրհանդակ մը հասաւ , պատասխանեց  
թշուառականը , եւ կ'ըսէ թէ այսօր ալ չի պիտի կա-  
րենայ հոս դառնալ :

— Ս, յսծր ալ , բայց Օդօրինօս հոն ի՞նչ գործ կըր-  
նայ ունենալ մինչեւ իրիկուն . . . իսկ այդ սուրհան-  
դակը Սերբիօյէն չեւած արդեօք տեսեր է իմ ամու-  
սինս , խօսեր է իր հետը , եւ ուղղապէս ինծի ըսելու  
համար սուրհանդակին ի՞նչ է պատուիրէր : Եւտ հոս  
խրկէ այդ մարդը՝ որուն հետ ես անձամբ կ'ուզեմ  
խօսիլ , հասկըցար :

— Եթէ կ'ամենաք , անոր տալու պատասխանը  
ես ալ ձեզի կրնամ հարորդել , վասն զի ճշմարիտն ը-  
սելով՝ այդ սուրհանդակը . . . ձեր ներկայութեանը  
հաներ . . . : Սուրհանդակը ճամբայ ելլալէն առաջ իմ  
տիրոջս հետ խօսեր է , ձգեր է զինքը բերդին մէջ՝  
Լաւրօյի եւ ձեր հօրը մէկ զինակրին հետը՝ որ դեռ  
այս գիշեր հոն է հասեր : Երեւն ալ ողջ առողջ են  
եզեր եւ այն գիշերուան պատահած կոխը բան մը չէ



եղեր, եւ տիրոջ սուրհանդակին ըսած վերջին խօսքն ալ այս է եղեր թէ՛ զինքը հոն բռնող քանի մը պիտանի գործերը լմնցնելուն պէս ձեր քովը պիտի վերադառնայ անմիջապէս:

— Սակայն երբ, որ ատենուան համար ըսեր է թէ հոս պիտի դառնայ, դուցէ այս գիշերուան համար ըլլայ, սոյնպէս է:

— Ո՛հ, այո՛, կը յուսամ թէ անտարակոյս այս գիշեր կրնայ հոս դառնալ:

— Ռայց ինք այդ սուրհանդակին հաստատապէս բան մը չէ գրուցած . . . շուտ կանչէ ուրեմն ինծի սա սուրհանդակը . . . գնա՛, գիտցիր որ իմ ծառաներուս մէկ բանը շատ անգամ կրկնելու վարժուած չեմ ես:

Բէլէկրուա գլուխը խոնարհեցոց եւ թողութիւն ինդրելու ձեւով ուսերը վեր առնելով դուրս ելաւ ինդալով ինքնիրեն. — Հի, հի, հի, հի, սա գոռոզիկը նայէ՛, սակայն հանդարտ կեցիր, հիմայ հրամանդ կը կատարուի:

Բերդապահը դուրս ելածին պէս, Երանուհի անհամբերութեամբ սկսաւ մինչեւ իրիկուն հոն անցնելու ժամերը մի առ մի համրել: Իրեն այնպէս կ'երեւար թէ նոյն օրը արեղական լոյսը չի պիտի մարեր, վերջապէս այն ժամերը՝ իրեն յաւիտենականութիւն մը կ'երեւնային: Նման այն ճանապարհորդին, որ շատ մը երկիրներ անցնելէն ետեւ, կը հասնի վերջապէս իր երկար պանդխտութեանը վերջ մը տալու յուսով հեռուէն տեսնուած բարձր գագաթի մը վրայ, եւ անկէ կը տեսնայ թէ տակաւին առջեւը բլուր մ'ալ անցնելու պէտք ունի:

Լատուէդա, տեսնելով իր տիրուհոյն սրտին յուզմունքը, քովը դնաց, դրաւ երկու բազուկները խաչածեւ այն սեղանին վրայ՝ ուր Երանուհի արմուկը հաստատած էր, եւ արտասուալից աչքերը տիրուհոյն երեսը դարձնելով ժամանակ մը լուռ ու յարդանօք կենալէն վերջը, ըսաւ:

— Մտիկ ըրէ՛, տիրուհիս, վերջապէս օրուան մը տեւողութիւնը յաւիտենականութիւն չի համարուիր. այնչափ օրեր անցան, անշուշտ այս օրս ալ կ'անցնի: Այս գիշեր անտարակոյս տէրս կուգայ, եւ պիտի դայ. ահաւասիկ ժամերն անցան եւ գրեթէ իրիկուն է: Գիտեմ թէ այս ուշանալը ձեզի դառն կ'երեւայ, գիտեմ՝ սակայն երբոր պարագաները . . . վերջապէս սիրտդ հանդարտ բռնէ . . . թէ որ ուրիշ բանի մը պէտք ունիս, շուտ մը բերել տամ . . . վառն դի բերդապահը դուրս ելած ժամանակը ինծի մասնաւորապէս ըսաւ թէ՛ այս բերդին մէջ ամենքն ալ պատրաստ են ձեր ո եւ է պիտոյքը հողալու:

Երանուհի, որուն միտքը բոլորովին ուրիշ բանի դրաղած էր, փոխանակ աղախնոյն քարոզութեանը պատասխանելու իբր թէ առաջուց սկսած խօսակցութեան մը թեւը չի կորսնցնելու պէս՝ յանկարծ ինքնիրեն ըսաւ. — Ո՛հ, վերջապէս իրաւ է թէ Լուսին եւ հօրս զինակիներէն մէկն ալ հետն է . . .

Աղախինը տեսնելով տիրուհոյն իր խօսակցութեանցը բոլորովին հակառակ պատասխան տալը, հասկըցաւ՝ եւ անոր գաղափարին հետեւելու համար, շուտ մը վրայ բերաւ. — Իմ ըսածս սլ հիմա ան էր, տարակոյս չի կայ թէ քաջ ընկերաց հետ է՝ եւ առմենելին պէտք չունի՞ք յայտ մասին մտածելու. մի-



այն բաւական է որ քիչ մը համբերութիւն ունենանք, Ծաւալին այն է՝ որ միտքդ դրած էիր հասածիդ պէս զինքը հոս դտնալ եւ կամ քիչ ատենէն անոր ալ եւ տեւէդ հասնիրը կը յուսայիր : Սակայն դարձեալ դու ինծի մտիկ չես ընէր . . . եւ շուտ մը կը բարկանաս : Մենք որ ամենեւին գործ մը չունենալով իրենք կրու պատենք՝ ժամանակը մեղի երկար կերելի : Բայց ով որ գործի մէջ է եւ չի կրնար . . . ինչ եւ իցէ , սիրտդ հանդարտ բռնէ մինչեւ այս գիշեր : Վերջապէս կը յուսամ թէ այս գիշեր կուզան : եւ անտարակոյտ ալ պիտի գան . . . Բայց թէ որ կարգէ դուրս պատահմունք մը , ո՞վ գիտէ . . .

— Է՛հ , շատախօս , բաւական է , ըսաւ Երանուհի . ինծի այս գիշեր ալ չի դար ըսելը բոլորովին զիս յուսակոտոր ընել է :

— Թողութիւն ըրէ . թերեւս չի կրցայ լաւ բացատրել . չէի ուզեր ըսել . . . մանաւանդ թէ , միայն թէ որովհետեւ . . . եթէ զէպք մը պատահելու . . .

— Ո՛չ զէպք եւ ո՛չ ալ ո եւ է պատճառ կրնայ զինքն արդելուլ այս գիշեր հոս դառնալէ . եւ այդ ջու անտեղի խորհուրդներդ՝ ամենեւին մտքէ անցընելու արժանի ցնորքներ չեն : Օգորինսօ , եթէ աշխարհքս ալ կունակն ունենայ՝ այս գիշեր կուզայ եւ պիտի գայ . միայն մէկ մը ինծի երեսնալու եւ վերջը ետ դառնալու համար , եթէ վերջին ստոիճանի ստիպողական ըլլայ ձեռնարկած գործը : Այս չափս բաւական է , տեսնենք հիմայ սա սուրճանդակը . . . զոր բերդապահը կը դժուարի ինծի ներկայացնելու . . . արդէն ասոնց այսչափ ուշանալին ալ ինծի սրտնեղութիւն սկսաւ պատճառել . ինչ կընէ այս բերդապահը այսչափ երկար ժամանակ :

Ինչ կընէ . . . խեղճ Երանուհի , եթէ զիանայիր թէ ինչ կընէ . . . :

Բէլէկրուա , այս միջոցիս իր մէկ հին աշակերտներէն մէկուն դաս կուտայ , որպէս զի Օգորինսօյի կողմանէ սուրճանդակ եկածի պէս՝ Երանուհւոյն ներկայանայ :

Երբոր մեր երկու դահիճները՝ լաւ մը պատրաստեցին իրենց դերասանական մասը , երկուքը միատեղ ներկայացան Երանուհւոյն առջեւ :

Սուրճանդակի դերը կատարելու պատրաստուողը , քանի մը անգամ կախաղանի արժանացած ու փախած հին աւաղակ մ'էր . զոր Բէլէկրուա բերդին մէջ այս տեսակ տարօրինակ գործոց ծառայեցնելու համար կը պահէր : Այս նենդաւորը , ՚ի վաղուց զինուորական արհեստի ծառայած ըլլալուն՝ ճակտէն ու քթին վրայէն մինչեւ ձախ աչքին ծայրը , լայն թուրի հարուածի վէրք մ'ունէր . մօրուսն ու մազերը կարմիր , չափահասակ ստտանի ձագ մըն էր : Ահիւ մեծաւ եւ զողզալով ու գինովի պէս ներս մտաւ ընկերոջը հետ մեր կանանց սենեակը :

Երանուհի զատուք տեսածին պէս , նստած տեղէն վախնալով ոտք ելաւ . սակայն Բէլէկրուա իւր սովորական խոնարհ կեղծաբորութեան ձեւերովը՝ Երանուհւոյն քովը մօտենալով կըսէր ցած ձայնով .

— Արչափ ալ այս վիճակի մէջ կը տեսնաք զինքը , այսու ամենայնիւ աղէկ մարդ է . մեզք որ քիչ մը զինին շատ կը սիրէ , եւ խիստ քիչ անգամ ալ չի խոսած կը դանուի . եւ այս արբեալ վիճակին մէջ ըրնականապէս լեզուն այլայլելով աւելի լատիներէնի կը հակի : Ահաւասիկ միայն այս պատճառաւ էր որ քիչ



մը առաջ դժուարացայ զինքը ձեզի ներկայացնելու . սակայն որպէս զի ձեր հրամանը տեղի ունենայ . . . Ինք արդէն եկած ժամանակը՝ բաւական խնամ էր, հոս ալ վարը եկածէն մինչեւ հիմայ գաւաթի գաւաթի վրայ տնկելով իր սովորական վիճակը դառեր է : Այսու ամենայնիւ եթէ կը բարեհաճիք բան մը հարցնել, թերեւս կարենայ պատասխանել զձեզ դո՛ւ ընկու չափ :

— Հարցուր տեսնե՞ք, ըսաւ Երանուհի, արդեօք հոս ճամբայ ելլալէն առաջ իմ ամուսինս տեսեր է : Բէլէկրուա, մեր կեղծ զինովին մօտեցաւ եւ մէկ ձեռքովն ալ անոր ուսին զարնելով . — Մասթինճ, ինձի նայէ՛ ըսաւ, հոս մեր Տիրուհին կը հարցնէ թէ՛ տեսնար արդեօք այն ասպետը, որուն գործին համար զքեզ Աէրբիօ բերդէն հոս խրկեցին :

— Ասպետը, պատասխանեց անպիտանը, խօսքերը բերնին մէջ շաղուելով . Բնչ ըսել է՝ ասպետը տեսար ըսելը . միթէ այն քեզի պատմած զինիկս չիչն ինք չի տուած ինձի, բայց Բնչ անուշահամ զինի . . . սակայն հոս վարը գտնուածն ալ գէշ չէ, թէպէտեւ քիչ մը կծու, բայց . . .

Բերդապահը դարձեալ անոր խօսքը կտրելով հարցուց . — Բնչ ըսաւ քեզի այն ասպետը՝ զքեզ ճամբայ զնելէն առաջ :

— Ինչ ըսաւ . . . բան մը չըսաւ, քեզի Բնչ պիտի ըսէ : Քեզի ըսաւ որ իր կենացը համար զինին տընկես, եւ ես ալ հրամանը կատարեցի . յիրաւի շատ բարի ասպետ է անիկայ, եւ ուրիշներուն պէս ձեռքն ալ քսակը խոթելու չի վախնար :

— Մասթինճ, ինձի դարձիր, այն ասպետին հետն ուրիշ մարդ ալ կան :

— Քիչ մը առաջ չըսի՞ թէ՞ ես հոն էի :

— Քեզմէ ուրիշ մէկը կան :

— Հասկա, ան ալ հոն էր :

— Ան ո՞վ է :

— Շատ բան, ան ալ հոն էր, ըսինք ես :

— Սակայն ան ըսելով, զո՞վ կը հասկնաս :

— Ան, ան ասպետը, կրողը քեզ տանի, անկէ ուրիշ զո՞վ կը հարցնես, ես ուրիշ բան չեմ գիտեր :

Բէլէկրուա, ուսերը վեր առնելով՝ դարձաւ Երանուհոյն իբրեւ թէ ուզենար ըսել . — կը տեսնա՞ք ինչ խեղճ վիճակի մէջ ըլլալը . զրուցածներէն ալ բան մը չի հասկցուիր :

Սակայն խեղճ Երանուհին, որ կը փափաքէր դոնէ բան մը իմանալ իր ամուսնոյն վրայ, դարձեալ հրամայեց բերդապահին, որ հարցնէ թէ արդեօք Օդօրինօ այս գիշեր դառնալու խօսք մը ըրեր է :

— Մէկ մ'ալ փորձենք, պատասխանեց Բէլէկրուա, եւ ընկերոջը ձեռքէն բռնելով խոթոս ձայնով մը երեսն 'ի վեր պօռաց : Հոս դարձիր, ինչո՞ւ երեսդ չորեքշաբթիի դարձուցեր ես : Եսքը դարձեալ հարցուց . այն ասպետը այս գիշեր հոս դառնալու խօսք մը ըրաւ :

Իսկ միւս խաբեքան, զարմացմամբ ու անպայել ծիծաղով մը կեցած տեղէն քայլ մը վեր ցատկեց, եւ ընկերը ցուցնելով . — հա, հա, հա, արեւը ներս է ծագեր, եւ դու տակաւին կեցեր ես ինձի գիշեր է կ'ըսես : Աերջը երկու քայլ ետ քաշուեցաւ եւ մատովը Բէլէկրուան ցուցնելով ու միանգամայն երկու որունքներուն վրայ տատանելով կերկերածայն աղաղակաւ մը գոչեց . — սա նայէ, տակաւին կէս օր չեղած գի-



չեր է կրտէ, սճ, կորկր, գգուս գլուխ դու, Կընե-  
րեմ քեղի, վասն զի գիտեմ որ գլուխդ կը դառնայ .  
ամօթ . . . այս ինչ ուրախութիւնն է այս ատեն . . . :  
Սակայն ես ալ կուզեմ խմել . բեր սա աղէկ գինիէն  
որ ժամ մը առաջ ծարաւս անցընեմ :

— Լսէ անպիտան, ես քեզի միայն հարցուցի  
թէ՛ ասպեան այս գիշեր հոս գալու խօսք մը ըրմա-  
քեզի :

— Ա՛հ, թէ ասպեալ այս գիշեր հոս պիտի գա՛յ :

— Սակէ ուրիշ բան չէ հարցուցածս :

— Անշուշտ թէ այս գիշեր պիտի գայ, անտա-  
րակոյս պիտի գայ :

Երանուհւոյն սիրտը այս պատասխանին վրայ ու-  
րախութեամբ լցաւ . սակայն խիստ քիչ տեսց այս  
ուրախութիւնը : Վասն զի բերդապահը մեր կեղծ  
գինովին մօտենալով ականջէն վար կանչեց :

— Յայց քիչ մը առաջ վարը չըսիր ինծի թէ վա-  
ղը առաւօտ պիտի գայ :

— Այո՛, ան ալ իրաւ է . ըսի քեզի թէ վաղն  
առաւօտ պիտի գայ :

— Ուրեմն խելքդ գլուխդ ժողվէ, ու ըսածդ  
դիտցիր . վերջապէս ըսէ՛ տեսնենք, անս գիշեր պի-  
տի գայ ասպեալ . կամ թէ՛ փնջն առաւօտ :

— Այս գիշեր եւ վաղն առաւօտ, պատասխանեց  
մեր կեղծ գինովը . եւ վերջն ալ թէ այս գիշեր եւ  
թէ վաղն առաւօտ ըսելով այլանդակ եղանակաւ մը  
անհասկնալի երգ մը է սկսաւ :


Սակայն Բէլեկրուս Վաստիկոսի երեսին ուժգին ազ-  
տակ մը իջնցնելով կանչեց . լուէ, դժխային բերանս  
թեղծ Երանուհին ձանձրանալով այսպիսի խելա-

գար տեսարանի մը ներկայ գտնուելէն, ձեռքով նշան  
ըրաւ բերդապահին որ դուրս ելլին . — հաւատարիմ  
մէկը չուսով դէպ 'ի Սէբրիօ բերդը ճամբայ հանէ ը-  
սաւ, որպէս զի քիչ ատենէն տալու նամակս հոն տա-  
նի ու պատասխանը բերէ : Երեք ժամուան մէջ թէ  
որ գացողը ետ չի դառնայ, գիտցիր որ պատասխա-  
նատուութիւնը ըու վրադ է :

Բերդապահը ամենայն յարգանօք հնազանդելու  
ձեւերով Երանուհւոյն խոնարհելէն վերջը, ըսնեց այն  
աջ կողմէն ձախ կողմը դինիի տակաւի պէս գլորող  
կեղծ գինովին բաղկէն, եւ քաշելով քաշկրտելով  
սկսան երկուքը միատեղ խուցէն դուրս ելլալ, մինչ-  
դեռ մեր կեղծ գինովը կը պտտար :

— Ո՛ւր կը քաշես, զիս մըր կը տանիս . գինով,  
գինով, գինով . . . :

Խուցին դուռը վրաներնէն գոցուեցաւ եւ դուր-  
սի սրահին սանդուխներէն վարի յարկը իջան, տա-  
կաւին մեր կանաչքը վերէն այդ խղղուկ ձայնով գի-  
նով, գինով պոռչալնուն ձայնը կը լսէին :



### Գ Լ Ո Ի Խ Ի Ե

Երանուհւոյն մայրը Երմէլիտա, նոր հարսն ու  
փեսան դէպ 'ի Քասթէլլէթօ ճամբայ դրած ատենը,  
այս խօսքերս ըսած էր իր աղջկանը . — Քու ամուսինդ



կրօն է թէ, ամսոյս վերջէն առաջ՝ չի պիտի կաբենայ  
 դէպ ՚ի Ս. Երկիրը ճամբայ ելլայ . ուրեմն աղջիկս,  
 կը խոստանամ որ այն միջոցին անդամ մ'ալ քու հօրդ  
 հետ Քասթէլլէթօ գամ գրեզ տեսնայու. եւ բարի ճամ-  
 բորդու թեան մաղթանքները՝ եթէ Աստուած ուզէ,  
 հօն կընենք . ուստի Աստուած հետդ ըլլայ :

Բարեսիրտ մայրը, աղջկանը տուած վերոյիշեալ  
 խոստանանք համեմատ, քանի մը օր վերջը՝ կամին ու  
 մինակ երկու ծառայիցը հետ առաւօտուէն հեծան, ու  
 պճապարկելով քիչ աստնէն հասան Քասթէլլէթօ :

Ամպոսճիօ, կամին բաղէակիրը՝ որ այն երկու  
 ծառաներէն մէկն էր, իր Աստուծոյ աղջիկն ու Աւե-  
 բօն գոնէ անդամ մ'ալ համբուրելու յուսով ճամբայ  
 կրած էր :

Մեր ճամբորդներուն փոքրիկ խումբը, Քասթէլ-  
 լէթօյի առջեւ դանուող գեղեցիկ դաշտը գեռ չը հա-  
 սած, բարձրիկէկ բլուրի մը վրայէն տեսան՝ որ առ-  
 կուին բերդը փառաւորացէս զարդարուն կեցած էր  
 Բերդին աշտարակները ու վրայի պատշգամները հա-  
 զարաւոր գոյնգոյն դրօշակներով ծածկուած էին . եւ  
 ամենէն բարձր տեղերէն վար Օգօրինօյի պատուոյ զի-  
 նուց նշանները կախուած, եւ անկէ վար գրեթէ բո-  
 լոր բերդին երեսը զէնքերով, երկնքանդ վահաննե-  
 րով ու պողպատէ փայտէն զրահներով ու ծաղիկնե-  
 րով ծածկուած էր : Սակայն այս պատրաստութիւնը՝  
 բաւական երկարած ըլլալը յայտնի էր . վասն զի դրօ-  
 շակներէն շատը արդէն տեղ տեղ ինկած, ու կախ-  
 ուած ծաղիկանց պատկննն ալ թաւաւած էին :

Տէլ Պալցօ կոմսը բաւական ժաւանակ այս տե-  
 սարանը վայելելէն վերջը, Էրմէլինտայի դաւանալով .

— նայէ ըսաւ, հարսին ու փեսին ընդունելութեանը  
 համար պատրաստուած հանդէսը, տակաւին չեն աւ-  
 բած :

Մեր հեծելոց փոքրիկ դունդը հեռուէն տեսնը-  
 ւածին պէս, շուտ մը Քասթէլլէթօյէ ճերմակ ու երկ-  
 նագոյն հագուստներով եւ ձեռքերին ալ մէյ մէկ կարճ  
 ու արծաթէ դաւաղաններ բռնած ծառայներ՝ անոնց  
 ընդ առաջ վազեցին : Եւ անոնցմէ մէկը նախ բաղէա-  
 կիրը զիմուորելով՝ որ քիչ մ'առջեւէն կ'երթար, հար-  
 ցուց ամենայն քաղաքավարութեամբ թէ Քասթէլլէ-  
 թօ բերդը իրենց ներկայութեամբը պատուել ուզող  
 կոմսն ու կոմսուհին որոնք են :

— Տէլ Պալցօ կոմսն ու կոմսուհին է, պատաս-  
 խանեց բաղէակիրը :

Ծառայն այս պատասխանն առածին պէս, առժա-  
 մայն փող մը հնչեցուց, եւ շուտ մը հարիւրէն աւելի  
 զինեալներ բերդին շարժական կամուրջին երկու կող-  
 մը շարուեցան, եկողներուն պատմու ընելու համար :  
 Քիչ մը վերջը զանգակի մը զարնուիին ալ լսուելով,  
 ներսէն հաղար ու մէկ հանդիսաւորաց ուրախական  
 ձայններ լսուեցան :

Այս միջոցիս մեր Տէլ Պալցօ կոմսն ու կոմսուհին  
 իրենց երկու ծառաներովն այն դինեալներուն մէջէն  
 անցնելով՝ հասան բերդին ներսի դաւիթը : Ներսի  
 տեսարանն ամենեւին հանդիսաւոր տօնավաճառէ մը  
 տարբերութիւն չունէր. Շուտ մը մարտիի երամի պէս՝  
 մարդիկ, կոմսոցք եւ աղջկուէք, իրենց փառաւոր բզ-  
 զեստներովը եւ հրճուանաց ծախահարութիւններով՝  
 իրենց հանդիսին եկող հիւրերը զիմուորեցին : Ասոնց  
 մէջ կային նաեւ շատ մը խելկատակներ, որոնց մէկը



չունենր կը խաղցընէր , միւսը քնարով կ'երդէր , միւս մ'ալ սրինգ եւ շատերն ալ նոյն դարուն այլ եւ այլ նուագարանները կը հնչեցընէին :

Նախ բաղէակիրը շուտ մը ձիէն վար ցատկեց տիրուհւոյն օգնելու համար՝ որ երիվարէն վար իջնէ , սակայն նոյն վայրկեանին տեսնուեցաւ հեռուէն կարմիրներ հագած մեծ փորով գէր մարդ մը , որ ամբողջ բանալով դէպ 'ի իրենց կողմը կը վազէր : Այս մարդը՝ բերդին պահապանն ըլլալով՝ իւր պարտքը կատարելու կը փութար : Ուստի ժամանակին ալ հասնելով՝ նշան ըրաւ բաղէակիրն որ ետ քաշուի , եւ ինք օգնելով Երմէլինտայի , երիվարէն վար առաւ : Սակայն ասնապարելով վազելէն շունչը կտրած ըլլալով , բաւական ժամանակ խօսիլ չի կարենալէն , ձեռքերովն ու բոլոր մարմնովն ըրած յարգանաց խոնարհումներովը , կ'ուզէր իր սրտին ուրախութիւնը յայտնել մեր նորահաս հիւրերուն :

Վերջապէս քիչ մը շունչ առնելէն վերջը , — Բարի եկաւ , ըսաւ մեծ շունչ մ'ալ առնելով , բարի եկաւ բերդիս վեհանձն տիրուհին իւր ծառայիցը մէջ . եւ այս ըսելու ժամանակը՝ քիչ մը գլուխը վեր առնելով , (որովհետեւ 'ի նշան յարգանաց դեռ աչքերը դեմնէն վեր չէր առած) երբոր իրեն հետ խօսող անձին երեսը տեսաւ , մեծաւ զարմացմամբ այլայլելով քանի մը բառ քթին տակէն թոթովելէն վերջը , յըստակ ձայնով մը հարցուց .

— Թերեւս մեր գերդարդոյ տիրուհւոյն մօրը հետ խօսելու պատիւն ունեցայ :

— ձիդ այդպէս է , պատասխանեց Երմէլինտա : Այս լսածին պէս , բերդապահը առժամայն կոմսին ու

կոմսուհւոյն առջին ինկաւ եւ ամբողջ բանալով առաջնորդեց ու տարաւ մինչեւ փառասոր ու շքեղազարդ սրահ մը , ուր մեր հիւրերուն ծառայութեանը բաւականէն աւելի աղախնայք ու ծառայք պատրաստ կ'սպասէին :

Եւ մինչդեռ Երմէլինտա նստած տեղը դինքը բարեւելու եկող տիկնայքն՝ իւր սովորական քաղցր վարմունքովն ու քաղաքավարութեամբը , միշտ սիրոյ նըշաններով ընդունելու վրայ էր , Տէլ Պայցօ կոմսը՝ ձեռքերն ետին դրած դուրսը ուրիշ սրահի մը մէջ տեղ կենալով , պատէն վար կախուած քանի մը իւղանդկար պատկերները կը դիտէր :

— Այս Յիքօյին պատկերը չէ , հարցուց կոմսը բերդապահին , որ քովէն չէր զատուեր :

— Այո՛ , իմ տիրոջս հօրը Յիքօ Վիլքօնթիին նըկարն է , պատասխանեց բերդապահը խորին յարգանք մը :

— Իսկ այս , կը հարցընէր դարձեալ կոմսը քիչ մ'առաջ երթալով , Մաֆֆէօն չէ :

Սակայն այս միջոցին ծառայ մը բերդապահին զգեստէն քաշելով , կոմսուհին քեզ կ'ուզէ , ըսաւ :

— Այո՛ , տիրոջս հօրեղբայրը Մաֆֆէօն , պատասխանեց բերդապահը , եւ ապա եթէ կը ներէք , ձեր սղնուաղարմ կոմսուհին զիս է կանչեր , ըսաւ , ու վազեց Երմէլինտայի քովն , որն որ հանդարա եղանակաւ մը հարցուց :

— Ո՞ր են տեսնենք հարմն ու փեսան , տակաւին իմաց չի կրցար տալ անոնց թէ՛ Տէլ Պայցօ կոմսն եկեր է :

— Հարմն ու փեսան , ըսաւ բերդապահը , չի





գիտնալով ինչ պատասխանելը , որովհետեւ կը կարծէր խեղճը թէ կոմսուհւոյն ըրած հարցումը իրմէ տեղեկութիւն մ'առնելու համար էր :

— Այո՛ , մեր են մեր հարմն ու փեսան , կրկնեց կոմսուհին , բայց այս անգամ այնպիսի եղանակաւ մը , որ կրմէլինտա զանոնք ստուգիւ հոն կարծելուն վերայ ամենեւին երկարացութիւն մը չէր ցուցնէր :

— Միթէ անոնք ձեր հետը ճամբայ չելմն :

— Հասկըցայ , ըսել է որ զմեզ դիմաւորողներն անոնք էին , կ'ըսէր կրմէլինտա քթին տակէն խնդալով մը , նայէ սա եղած բանը , որ մէկզմէկ ալ չի կրցանք ճամբուն վրայ տեսնալ . ըսել է որ բոլորովին մեր եկած ճամբուն հակառակ ճամբայ մը բռնած պիտի ըլլան : Դձուտ , շուտ , մէկը իրկէ ետեւնէն , թերեւս սա մօտերս զիրենք դիմաւորէ :

Այս կէս մը երգիծանիչ եւ կէս մ'ալ ուղիւ սրբալիւ զբոցում խօսքերուն վրայ այլայլելով , — Ի՞նչ ըսել է կ'ըսէր , միթէ յիբաւի անոնք ձեր հետը չէին . . . հոս ամենեւին անոնցմէ մէկը չեկաւ : Թէպէտեւ իմ տէրս ինձի պատուիրած էր պատրաստ ըլլալ զիրենք ընդունելու՝ ճիշտ ասկէ շարաթ մ'առաջ , բայց մինչև հիմայ մէկը չերեցաւ : Եւ ես կը կարծէի թէ տակաւին անոնք Միլան ձեր պալատն են :

— Այս պարզ պատասխանին վրայ , կրմէլինտա ոտք ելաւ եւ առժամայն կոմսին գտնուած սրահը վաղելով սկսաւ գոչել . — Աննա , կ'ան , տես բերդապահը ինչ կ'ըսէ , թէ տակաւին հոս մեզմէ զոս մարդ մ'ալ չէ եկած :

— Ո՞վ չէ եկած . — կրմէլինտա դարձեալ բերդապահը ցուցնելով (որն որ կոմսուհւոյն այլայլու-

թիւնը տեսնալով չէր գիտէր ինչ ըսէ կամ ինչ ընէ) կ'ըսէ թէ մինչև այս օր ոչ զերանուհին եւ ոչ ալ Օդօրինոն տեսած է :

— Ի՞նչ , ինչ , թոթովեց կոմսը , ինչ կ'ըսես բերդապահ , գեռ հոս չի , միթէ տակաւին անոնցմէ մէկը չի տեսնար :

— Անշուշտ թէ չեմ տեսած , ես զիրենք մինչև հիմայ Միլան կը կարծէի :

— Բայց անոնք անցեալ շաբթուան շարաթ օրը Քասթէլլէթօ հասած պիտի ըլլային :

— Վայ ինձ տէր իմ , ոչ շարաթ եւ ոչ ալ ուրիշ օր մը եւ ոչ մէկն երեւան կաւ :

— Քեզի ամենեւին լուր մը , սուրհանդակ մը , եւ կամ . . . :

— Ամենեւին , ամենեւին :

— Անկարելի բան . . . ինչ կզան արդեօք . . . սակայն ինչ որ ալ պատահած ըլլայ , դարձեալ հոս լուր մը կրնային զրկել . . . :

— Անշուշտ գլուխին բան մը պատահած պիտի ըլլայ , հառաչեց կրմէլինտա , անշուշտ թէ աւազակաց ձեռք անցած են :

— Տէր Ատուած , հառաչեց բերդապահը եւ շուտ մը վրայ բերաւ . յայտ մտակն կրնաք հանդիստ ընել ձեր սիրող , թէ քաղաքը ամենապահով է եւ թէ այս տեսակ դժբաղդութիւններ ժամանակ մը պատահած չեն :

— Եւ անկէ վերջն ալ , կ'ըսէր կոմսը , անոնք միտակ ալ չէին , երանուհւոյն քովի ազակներն զատ Օդօրինոյի հետն էին իր գիտակիրն ու երկու ալ ուրիշ գիտուորներ , որ ընդամենը կ'ընեն երկու կին ու



չորս մարդ , եւ այս չորս մարդ ըսածս ալ երկու անդամ իրենց թուոյն չափ մարդկան գէմ դնելու կատող են :

— Ուրեմն մինչեւ հիմայ մեր մնացած կրնան ըլլալ , հարցուց Էրմէլինտա ստիպմամբ եւ անձկանօք :

— Հիմայ , պատասխանեց կոմսը , պէտք չէ որ մարդս այս տեսակ պարագաներու մէջ շուտ մը չարամտի . մնաց որ առ այժմ անոնց ուր ըլլալն Աստուած գիտէ . . . . ասով հանդերձ , անկարելի բան է որ վեց հօգի միատեղ մուտի պէս անհետանան :

— Զի կրնար ըլլալ որ Թիլլինօ գետէն անցած ժամանակնին ամենքը միատեղ ընկղմած ըլլան , կը հարցընէր Էրմէլինտա :

— Անհնար է , վասն զի ներկայ եղանակիս մէջ արդէն շուրերը քաշուած են , եւ թէ այնպիսի բան մ'ալ պատահած ըլլար , անշուշտ մինչեւ հիմայ անոնցմէ մէկուն հետքը կը գտնուէր : Դու թնչ կ'ըսես բերդապահ , այնպէս չէ :

— Բա . . . յց . . . պատասխանեց վերջինը , ուսելը վեր առնելով ու ձայնն ալ երկարելով , որով կ'երևար թէ խեղճին ալ ուրիշ զորուցելու խօսք մը չէր մնացած :

Սակայն աչքերը կոմսուհւոյն դարձնելով , երբոր տեսաւ թէ՛ նա իւր այս տարակուսական կերպէն այլայլեցաւ , իրեն սիրա տալու համար շուտ մը վրայ բերաւ . — Ո՛հ , անտարակոյս թէ կը խօսուէր ու կ'իմացուէր մինչեւ հիմայ եթէ այնպիսի թշուառութիւն մը պատահած ըլլար :

Այս միջոցիս բազմութիւնը դուրսի կամարակապին տակը ժողուած էր , մէկը զմիւսը կը հրէր , ուրիշ

մը դուրիշը կը կիցահարէր , որպէս զի յառաջ անցնելով՝ մեր հարսն ու փեսան ընտրող կոմսին ու կոմսուհւոյն կեցած սրահին պատուհաններուն առջին հասնի :

Ոմանք կ'ըսէին թէ , եկողները հարսն ու փեսան են , ոմանք ալ կը պնդէին թէ՛ հարսն ու փեսան դեռ ճամբայ ելած չեն : Այսպէսով ամենքն ալ միանգամայն կ'ուզէին իրենց աչքովը տեսնել ու տեղեկանալ եկողներուն ո՞վ ըլլալը : Իսկ մեր հետաքրքիրներէն ոմանք՝ բազմութեան մէջէն սրահին պատուհանէն նշմարելով զԷրմէլինտա , կուզէին հաստատել իրենց մէջն՝ անոր հարսին մայրը չըլլալը , այլ բուն իսկ հարսն է կ'ըսէին : Այնպէս որ՝ ասոնց այդին ու ոչին ձայներուն հետ՝ ոմանց ալ կեցցէ Տէլ Պալցօ կոմսն եւ ոմանց ալ կեցցէ Օդօրինօ պոռալու ձայները , ըսկըսան բերդին բոլոր կամարակապները թնդացընել :

Վերջապէս Էրմէլինտա նեղանալով եւ բազմութեան այս անտեղի ուրախութեան ձայներէն սիրտն ելլալով , աղաչեց բերդապահին որ այդ ամբողջ տեղերին խրկէ : Բերդապահը դուրս ելլալով՝ շուտ մը բազմութեան մէկ մասը դռնէն դուրս , ու մէկ մասն ալ բերդին դուրսի գաւթիքը խրկելով խաղաղութիւնը սիրեց . մինակ տասնի չափ խեղկատակներ մնացին նոյն կամարակապին տակ : Ասոնք որչափ ալ իրենց օրական ուտելիքէն դատ խիստ առատապէս վարձատրուած էին , սակայն դարձեալ ըստ սովորութեան , առանց մասնաւոր ընծայի մը՝ ձեռքերին պարապ չէին ուղեր դուրս ելլալ : Ուստի բերդապահին հրամանաւն , ասոնց համար մասնաւորապէս պատրաստուած ընծաներն եկան , եւ իւրաքանչիւրին ար-



հեատին ու վարպետութեանը համեմատ բաժնուելէն վերջը , անոնք ալ ճամբայ դրուեցան : Միայն ասոնցմէ մէկ հատը չէր ուղեր իրեն տրուած ընծան ընդուսնել :

— Ոչ թէ ուրիշ ընկերներէս նուազ վարձատրուելուս եւ կամ ո եւ է ուրիշ պատճառի մը համար , կ'ըսէր ասիկայ , ամենեւին . . . այլ չեմ ուղեր ասկէց բաժնուիլ առանց բերդին տիրոջն երեսը տեսնալու : Եւ այդ ինձի տալու ընծազ ալ անմիջապէս անոր ձեռքէն պիտի ընդունիմ , ուղածս այս է՝ ուրիշ բան չէ :

— Բերդին տէրը հոս չէ , թէ որ կ'ուզես սոսայս ընծազ , կը պատասխանէր բերդապահը բարկութեամբ , ցուցնելով գեղեցիկ մուշտակէ գլխարկ մը , ապա թէ ոչ , դնա՛ բանդ :

— Ինչ ըսիր , Օգորինոն հոս չէ , դարձեալ կը հարցնէր խեղկատակը , առանց միտքը փոխելու , մի էր ուրեմն այն ձիով եկող պարսնը :

— Տէլ Պայցօ կոմսն էր :

— Տէլ Պայցօ կոմսն էր , շատ աղէկ . ես վիճքը կը ճանչնամ եւ ան ալ զիս գիտէ , ուրեմն իմաց տուր որ Թրէմաքօլտօն դուրսն իրեն կ'սպասէ , եւ թէ գաղտնիք մ'ունի իրեն հաղորդելու . . . :

Աւտի մինչդեռ մեր բերդապահը դուրսն այս գործին զբաղած էր , կոմսն ու կոմսուհին ներսը մինակ մնալով , սկսան իրարու հազար ու մէկ տարակուսական հարցումներ ընել , առանց կարենալու բարեգուշակ հետեւանք մը տալ իրենց խոսիկալ մըտացը : Վերջապէս Երմէլինտա Ատուածային ազգմամբ մը , — մի գիտէ , ըսաւ , թերեւս դուրսի բազ-

մութեան մէջէն մէկը կրնայ մեր մտացը յայտ մտաին լոյս մը տալ :

— Լաւ ըսիր , պատասխանեց կոմսը , հիմայ դուրս կելլամ բերդապահին պատուիրելու , որպէս զի ամբոխը չը ցրուած՝ մեր խնդրոյն վրայ հարցաքննութիւն մ'ընէ : Այս ըսելով առ ժամայն վաղեց գէպ 'ի բազմութեան ժողուած կամարակապին տակ բերդապահը վնտուելու , եւ գտաւ զինքը ճիշդ այն միջոցին յորում ստահաւին Թրէմաքօլտօյի հետ սակարկելու վրայ էր : Մեր խեղկատակը՝ Տէլ Պայցօ կոմսը տեսածին պէս , շուտ մը ընդ առաջ վազեց ու գլխարկին բոժոժները շարժելով գլուխը բանալն ու դետնէն կանգունի մը չափ վեր ցատկելը մէկ ըրաւ : Վերջը՝ բերդապահը ցուցունելով . — աղէկ որ եկաք ըսաւ , երկու ժամ է որ այս մարդուն հետ գիս անպիտանի մը պէս դուրս ընել ուղերուն համար , կուտելու վրայ էիք : Բայց ես որ եկած եմ հոս մասնաւորապէս Օգորինօյի . . .

— Ի՞նչպէս , ի՞նչպէս , արդեօք Օգորինօյէն լուր մը ունիս . հոս եկու , հոս , քիչ մը ներս երթանք ըսելով , կոմսը Թրէմաքօլտօյի ձեռքէն բռնեց եւ՝ աճապարանօք տարաւ զինքը մինչեւ ներսի սրահը : Հոն՝ Երմէլինտայի դառնալով , ահաւասիկ այս մարդը կրնայ ըսաւ , մերիններուն վրայով մեզի տեղեկութիւն մը տալ :

Այս լսուուն պէս , կոմսին ամուսինը շուտ մը գէպ 'ի մեր խեղկատակին քովը վաղեց , եւ ստիպողական կերպով մը , — Զրուցէ՛ , զրուցէ՛ կըսէր , տեսնեմ ի՞նչ գիտես , տեսնար արդեօք զիրենք եւ կամ ասոնց վրայով ի՞նչ լսած ունիս :

Թրէմաքօլտօն՝ վայրկենի մը մէջ իր բոլորտիքը



ժողոված հետաքրքրաց բաղմութեանը վրայ զարմանալով, կը պատասխանէր — Զո՞վ կը տեսնեմ, որո՞ւ վրայ է ուղած տեղեկութիւնդ :

— Տեսա՞ր արդեօք Օդօրինօն եւ Երանուհին, կըրկնեց Երմէլինտա անհամբերութեամբ մը :

— Զիրենք տեսած չունիմ :

— Արդեօք այս օրերս՝ անոնց վրայով բան մը լսեցիր :

— Այո՛, լսեցի թէ երկուքն ալ՝ մինչեւ հիմայ Քասթէլլէթօ չեն հասած, եւ անոր համար ելայ եկայ յուսալով թէ այս պատճառաւ հանդէսը կրնայ երկարիլ . սակայն ես ալ խարուեցայ ուրիշներուն հետ :

— Իսկ Սեսթօն տեսնե՞ք ի՞նչ լուր ունիս :

— Խաղաղութիւն, ի՞նչ լուր պիտի ըլլայ . . . եւ ինչպէս որ ըսի, հոս գալու ժամանակս ալ ճամբուն վրայ մասնաւորապէս այս հարսանեաց համար երգ մը շարագրեցի :

— Հիմայ իմ հարցուցածս այդ չէ, արդեօք Սեսթօյի մէջ մերկնները տեսնող, կամ անոնց վրայ լուր մը ունեցող եւ կամ խօսող մը կայ :

— Սեսթօյի մէջ զանոնք ոչ տեսնող կայ, եւ ոչ ալ անոնց վրայով լուր մ'ունեցող, պատասխանեց խեղկատակը, եւ դարձեալ իր վերի խօսակցութիւնը շարունակել ուղելով, իրաւ զրուցելու համար, կ'ըսէր, ես այս հարսանեաց տեղի ունենալիքն արդէն Պելլանօյի մէջ գուշակած ըլլալովս, հիմայ դուք ալ ինծի կարծեմ իրաւունք պիտի տաք նոյն հարսանեաց վերաբերեալ երգ մը շինած ըլլալուս : Եւ անաւասիկ ըսելով, վրայէն հագած կարծ վերարկուն վար ձգեց, եւ մէկ ձեռքը ծոցը խոթեց ու թուղթ մը հա-

նելով ամենայն քաղաքավարութեամբ Երմէլինտայի ձեռքը տուաւ : Բայց այս շարժումնքն ընելու ժամանակը, ներսէն հագած բաճկոնը ձախ կողմէն վեր ելաւ . այնպէս որ կոմսը քովէն խիստ լաւ կրցաւ տեսնալ ու ճանչնալ Քրէմաքօլտօյի գօտուոյն մէջի գաշոյնը, զոր ինքն անձամբ սոււած էր, զՕդօրինօն եւ զԵրանուհին մինչեւ Քասթէլլէթօ առաջնորդելու համար հետեւին զացող երկու նիղակակիրներէն մէկուն :

— Ո՛ւստի դտար այդ գաշոյնը, հարցուց կոմսը սարսափով մը :

— Ո՞ր գաշոյնը :

— Այն՝ որ մէջքդ խոթուած է . . .

Խեղկատակը հանեց շուտ մը նոյն գաշոյնը, եւ կոմսին ձեռքը տալով պատասխանեց :

— Ես այս գաշոյնը՝ երէկ Կալարաթէ զինավաճառէ մը գնեցի :

— Ի՞նչ, ի՞նչ, այդ ի՞նչ է, հարցուց Երմէլինտա :

— Բիշխարտինօյի գաշոյնն է, հառաչեց կոմսը :

Այս լսելուն պէս, Երմէլինտայի գոյնը նետեց ու սկսաւ դողալ :

— Կեցիր տեսնանք . խորհեցաւ մեր խեղկատակն իր մտքէն : Կարծեմ թէ առանց բանէ մը լուր ունենալու, մտքէս անգամ չանցած ոճիրի մը ձեռնառու եղած պիտի ըլլանք . եւ այս ըսելով կամաց կամաց մինչեւ սրահին դուռը հասաւ, եւ տեսաւ որ իր երիվարը հոն պատրաստ եւ դիմացը սիւնի մը կապած կը կենար . բերդին դռները բաց, եւ կամուրջն ալ վար առնուած էր : Մտքէն անցաւ որ փախչի . բայց վերջը, չէ՛ ըսաւ ինքնիրէն, Քրէմաքօլտօն ուր որ երթայ՝ կրնայ ձակատը բաց պտորալի . ուստի չեմ ուզել



որ մէկը ու եւ է եղեռնագործութեան մը ձեռնտու գտնուելու համար՝ վրաս կատկած մը ուեհնայ : Ես ասկէ չը պիտի գատուիմ , մինչեւ որ ջուրը յտակ չի տեսնամ :

Ուստի մեր կոմսին ու կոմսուհւոյն կողմանէ իրեն ուղղուած հազար ու մէկ հարցմունքներուն մէջ գրեթէ խելքը կորուսած ու չփոթած՝ Թրէմաքօլտօ վերի տուած պատասխանէն զատ աւելի բառ մ'ալ չէր կրնար արտաբերել :

Սակայն կամաց կամաց իր մտացը մէջ շաղուելով ու խմորելով այս անհամար հարցմունքները , այն չփոթութեան մէջէն կրցաւ իմաստ մը հանել : Հասկըցաւ վերջապէս թէ ասոնց չորս ժամէ 'ի վեր ըրած բոլոր հարցաքննութիւննին ուրիշ բանի համար չէ եղեր , բայց եթէ Օգօրինօյի ու Երանուհւոյն՝ եւ զասոնք մինչեւ Քասթէլլէթօ տանելու համար Լուբօյի եւ ուրիշ քանի մը առաջնորդողաց աներեւութանալնուն պատճառն իմանալու համար : Թրէմաքօլտօյի պիտը խիստ ցաւելով կոմսին ու Երմէլինտայի խեղճ վիճակին վրայ , եւ միանգամայն աչքին ստջեւ բերելով Օգօրինօյի ու Լուբօյի վեհանձն քաջութիւններն ու առատաձեռն պարգեւները , միտքը դրաւ որ իր ձեռքը գտնուած նուաղ լոյսին շաւղացը հետեւելով՝ այս գաղտնեաց տեղեակ ըլլայ , որով եւ կորուսեալները գտնայ : Ուստի այս մեծանձն ու ազնիւ խորհուրդը՝ կոմսին ու Երմէլինտայի այնպիսի սրտաշարժ կերպով մը յայտնեց , որ երկուքն ալ իրենց աչաց արցունքը չը կրցան բռնել :

Կոմսն , ամենայն երախտադիտութեամբ ընդունելով Թրէմաքօլտօյի ըրած առաջարկութիւնը ըսաւ ,

— Կաւ չէր ըլլար արդեօք , որ այս գործին ձեռնարկութեանը մէջ՝ իմ մարդերէս մէկն ալ հետդ առնէիր , եթէ կ'ուզես Ամպրօճիօն հետդ առ , որն որ Լուբօյին ու աղջկանս աղախնոյն հայրն է , հաստաբազուկ եւ քաջ մարդ մը ըլլալուն վրայ ալ կրնաս ապահով ըլլալ :

— Զէ , չէ , պատասխանեց խեղկատակը . այս կըրուր քանի մը մարդով ըլլալու կուհներէն չէ . մանաւանդ քու մարդերէդ մէկուն հետ այսպիսի կռուի մը հանդիսանալ՝ Աստուած չընէ . . . Մինակ ես , ես մինակ բաւական եմ : Իսկ թէ որ ձեզի իմացնելու բան մը ունենամ , դձեզ մէր պիտի գտնամ :

— Այսպէս ըրէ , պատասխանեց Երմէլինտա , մենք այս օրը չի համրելով , դեռ երեք օր ալ Քասթէլլէթօ պիտի կենանք . թէ որ այս միջոցիս Նախախնամութիւնը քու ձեռնարկութիւնդ յաջողելով կարենաս լաւ տեղեկութիւն մը ստանալ , հոս մեզի շուտ մը իմաց կուտաս : Իսկ թէ որ ընդհակառակն , մեր համբերութիւնը փորձելու համար Աստուած այս երեք աւուր միջոցը երկարել օւղէ , այն ատեն զմեզ անպատճառ Միլան դառցած պիտի գտնաս : Ինծի նայէ , կը շարունակէր դարձեալ Երմէլինտա , գիտեմ նաեւ որ մեզի այսպիսի վեհանձն բարերարութիւն մ'ընելով , անշուտ գոհացուցիչ փոխարէնի մը կ'սպասես . . . որուն համար այս վայրկեանէս իմ խօսքիս վրայ կրնաս ապահով ըլլալ , թէ ասկէ վերջը արհեստդ պիտի ձգել ասով քեզի՝ հացդ այդ քնարէն չի պիտի ուտես :

— Ենորհակալ եմ , պատասխանեց Թրէմաքօլտօ , բայց . . . բայց գիտցած ըլլաք որ 'ի սրտէ խօսելով , ոչ միայն կուզէի ամենայն հաճութեամբ այս գործի-



քէս հանած հացս՝ այլ նաեւ այս գործիքս անգամ կոր-  
պնցնել, եւ կամ ձեզի համար զո՞նել այն մատուցներն՝  
որոնցմով այս քնարը կը զարնեմ, միայն թէ զձեզ գո՞հ  
ու մխիթարեալ տեսնեմ:

— Աստուած փոխարինէ՛ այդ քու բարի զգաց-  
մունքներդ . . .

— Այսու ամենայնիւ, կը տեսնաք թէ որչափ  
բաղդաւոր կը գտնուիմ, որ այս իմ քնարս սաղմոսա-  
րանի չը փոխուած պիտի կարենայ տակաւին այսպիսի  
բարեգործութեան մը գործի ըլլալ: Եւ մ գիտէ՛ թէ  
այս ձեզի պատահած անակնկալ դէպքը՝ թերեւս պատ-  
ճառ մը ըլլայ իմ ապագայ փոփոխութեանս:

Կոմսը՝ խեղկատակին այս խօսքերուն իմաստն իւր  
ամուսնոյն պարզելու համար, — Թրէմաքօլտօն՝ քա-  
հանայ էր ըսաւ, եւ հիմայ որ արգելքը վերջացաւ,  
կ'ուզէ այս արհեստը ձգել ու կորուսած իրաւանցը տէր  
ըլլալ: Եւ կը յուսայ թէ կարտինալ հօրեղբորդ կը ներ-  
կայացնես զինքը:

— ձիչքը մարդարէացար, ըսաւ Թրէմաքօլտօ,  
իրբեւ թէ իմ սրտիս մէջն ըլլայիր: Սակայն ձգենք  
հիմայ այս երկարաբանութիւնները. ես քանի որ այս  
արհեստին մէջն եմ, կ'ուզեմ զանիկայ ամենայն յատ-  
կութիւններովն ՚ի գործ գնել, ծն ուրեմն զուարթ  
ըլլանք. ուր տեսնուէր է որ խեղկատակ մ'այչափ խո-  
նարհի ու ճգնաւորի մը պէս հողեւոր խրատներու ըզ-  
բազի: Այս ինծի մեծ ամօթ է եւ իմ խեղկատակի  
պատւոյս կը դպչի ըսելով, յարգանօք մը խոնարհե-  
ցաւ ու քթին տակէն երգելով ուրախութեամբ զուրս  
ելաւ:

Կոմսն ալ անոր ետեւէն մինչեւ կամարակապին

տակն ետեւէն հասաւ, եւ ձեռքն անոր ուսին վրայ  
դնելով ըսաւ. — Ինծի նայէ, Թրէմաքօլտօ, անշուշտ  
բոլոր այս մեղի համար անցնելու օրերդ ստակի պէտք  
պիտի ունենաս . . . յայտնի է թէ . . . դու հարուստ  
մարդ մը չես. եւ այսպէս ըսելով, կ'ուզէր անոր ծո-  
ցը զլորել քսակ մը ստակ. սակայն միւսը երկու քայլ  
ետ քաշուելով ու ձեռքերն ալ ետեւը դնելով, — չէ,  
կ'ըսէր, այսօր բան մը չեմ առնուր, կամ թէ լաւ  
եւս՝ ոչ թէ միայն այս օրուան համար, այլ այս գոր-  
ծին համար պարգեւ մ'ալ չեմ ուզեր ընդունիլ:

— Գուցէ ստակի տեղ՝ ուրիշ բան մը կրնայ ա-  
ւելի . . . :

— Ոչ ստակ եւ ոչ այլ ինչ. ես որչափ ալ աղ-  
քատ եմ, տակաւին Ծղօրինօյի ընծայած ոսկի շղթա-  
յին մէկ կտորը վրաս պահած եմ. եւ շղթան հանե-  
լով կոմսին ցուցնելէն վերջը, թէ որ ուրիշ ստակ  
մ'ալ քովս չի մնալու ըլլայ, կ'ըսէր, ամեն օր ասոր  
մէկ օղակը բաւական է իմ ապրուստիս: Ուստի կը  
տեսնաք թէ դեռ շատ մը ժամանակուան համար պա-  
շար ունիմ: Այս ըսելով ցատկեց երկվարին վրայ,  
եւ դարձեալ քթին տակէն երգելով՝ դէպ ՚ի բերդին  
կամուրջը ճամբայ ելաւ:

Սահմանեալ երեք օրերն անցան, եւ դեռ մեր  
վշտացելոց այս բանիս վրայով լոյս մը չի հասնելով,  
հարկադրեցան Միլան դառնալու: Իսկ այս միջոցիս  
Թրէմաքօլտօ չէր քնանար: Իր առաջին գործն եղաւ  
երթալ շիտակ այդ դաշոյնն իրեն վաճառող զինավա-  
ճառին կրպակը, եւ ուրիշ իրեն բարեկամ ասպետի  
մը համար լանջապանակ մը ծախու առնել կեղծելով՝  
բաւական ժամանակ խօսակցութիւնը երկարելէն վեր-



ջը, երան միատեղ գինետուն մը գացին, Հոն գա-  
 ւաթ գաւաթի վրայ անկելով՝ մեր խեղկատակը երբ  
 որ տեսաւ զինսովաճառին շաղակրատելու սկսիլը, ին-  
 քըն ալ անզգալի կերպով մը սկսաւ ասդիէն անդիէն  
 հարց ու փորձեր ընել. այնպէս որ՝ պղտոր ջուրը ծը-  
 ծոն թուղթէ անցնելու նման, կամաց կամաց կա-  
 թիլ կաթիլ սկսաւ անոր բերնէն առնել ինչ որ սըր-  
 տին մէջ ծածուկ էր պահած, եւ ուրիշ գաղտնեացն  
 ալ ամենայն դիւրութեամբ կրցաւ տեղեակ ըլլալ:

Մեր զինսովաճառն յսպանեց որ այս դաշոյնը ու-  
 բիշ քանի մը կտոր զէնքերու հետ միատեղ դնած էր,  
 իր մէկ ազգականէն, որն որ Բէշայինտա անուն գե-  
 ղը գանուող մենաստանի մը միանձանց գործակալն  
 ու զինուորն ըլլալուն համար, վերոյիջեալ զէնքերն ու  
 դաշոյնը, գիշեր մը չի գիտեմ որ ասպետաց վրայ ք-  
 րած յարձակման աւարէն՝ իրեն ինկած մասն է եղեր:

Իսկ թէ բռնուած ու բանտարկուած ասպետաց  
 որոնք ըլլալը չէր կրնար գրուցել զինսովաճառը, վա-  
 սըն զի ստուգիւ ալ չէր գիտեր ի՞նչ եւ ո՞ւր ըլլաինն:  
 Թրէմաքօսո՞ որչափ ալ այս առած նուազ լոյսին  
 ետեւէն երթալով՝ կ'սուզէր ժամ մ'առաջ գաղտնեաց  
 տեղեակ ըլլալ, սակայն ի՞նչպէս առանց կասկած տա-  
 լու պէտք էր այդ գործակալին ներկայանալ, եւ ա-  
 նոր հետ այս բանիս վրայ խօսք բանալ . . . :

Այս պատճառաւ մտածեց որ դեռ քանի մ'օր  
 ալ զինսովաճառին հետն ունեցած սակարկութիւնն  
 երկարէ, եւ այսօր՝ վաղը՝ ըսելով, կիրակին վրայ  
 հասաւ: Նոյն կիրակի օրն ալ այդ գեղին տօնավա-  
 ճառն ըլլալով, բնականապէս զանազան խաղեր ու  
 հանգէսներ կ'ըլլային, նաեւ բոլոր գեղին չորս կող-

մէն ալ շատ մ'ամբօխ հոն կը խոնուէր ըստ վաղեմի  
 սովորութեան: Այնպիսի տեղ մը, ուր խառնիճա-  
 դանձն անպակաս էր՝ հոն խեղկատակի մը տունը կըր-  
 նար սեպուիլ. ուստի մեր Թրէմաքօսոն ալ շաբաթ  
 իրիկուընէ քնարը վիզը կախած եկաւ զինսովաճառը  
 գտաւ եւ երկուքն ալ միատեղ ճամբայ ինկան: Ճամ-  
 բուն վրայ Թրէմաքօսոն իւր ընկերին սիրտը շահե-  
 լով, այնպիսի կերպեր ու սատանութիւններ բանե-  
 ցուց, որ վերջապէս զինսովաճառին բերնէն կրցաւ  
 առնել անոր ազգականին տանն ուր ըլլալը:

Երկրորդ օրը կանուխ առաւօտուն բարեբաղդա-  
 բար նախ եւ առաջ յիշեալ ազգականին պատահելով,  
 մեր զինսովաճառը՝ անոր ներկայացուց զԹրէմաքօ-  
 սոն, իբրեւ իրեն առաջին յաճախորդն ու բարեկա-  
 մը, որն որ առժամայն ամենայն սիրով խեղկատակն  
 իր տունը հրաւիրեց: Նոյն գիշերը Թրէմաքօսոն շատ  
 երգեր երգեց, քնար զարկաւ, եւ այնպիսի զարմա-  
 նալի խաղեր ու խեղկատակութիւններ ըրաւ, որ ներ-  
 կայ դանսուող հանդիսականք հիացան, եւ գիշերն ալ  
 հոն քնացաւ:

Երկրորդ առաւօտը, քնարն առնելով դարձեալ  
 իջաւ տօնավաճառը, եւ կէս օրուան ճաշին ատենը  
 նորէն նոյն տունը դառնալով, հոն գտաւ նաեւ ու-  
 բիշ եօթը զինեալ անձինք՝ որ սեղանի հրաւիրեալ  
 էին: Մեր խեղկատակին սիրտը նետելով՝ շուտ մը մը-  
 տածեց թէ ասոնք իրեն բնորոշած գաղտնեաց գոր-  
 ծակիցները կրնան ըլլալ. ուստի գարձեալ իրեն զը-  
 ւարթ ու անտարբեր եղանակը չարելով, սկսաւ ու-  
 շագրութիւնը կրկնապատկել:

Արեակուրի ժամանակը հասնելով, ամենքը միա-



տեղ սեղանի իջան, կերան, խմեցին, երգեցին, պո-  
ռացին ու կանչեցին: Իսկ Թրէմաքօլոս միշտ ուշա-  
գիր՝ ականջ կ'ուտար անոնց իւրաքանչիւր խօսքին,  
կը դիտէր անոնց ամեն մէկ շարժումնքն ու կերպե-  
րը: Սակայն բան մը չի կրցաւ իմանալ, օգուտ մ'ալ  
չի կրցաւ քաղել:

Սեղանին վրայ վերջին գաւաթը չի պարպած,  
ափսէի մը մէջ խորոված փառաւոր սիրամարդի ձագ  
մը բերին: Այս կերակուրը որչափ ալ միայն ասպե-  
տական խնջոյից սեփական էր, սակայն մեր գործա-  
կալն իր հաւատարիմ բարեկամներէն անկակած ըլ-  
լալով՝ այսպիսի օրինազանցութենէ մը չէր վախնար:

— Միայն ինձի կիցնայ, ըսաւ Թրէմաքօլոս, այս  
սիրամարդին ձագը գիշատեիլը, վասն զի մենք խեղ-  
կատակքս, ասպետ չըլլալովնիս անգամ անոնց իրա-  
ւունքները կրնանք ունենալ: Եւ այս ըսելով իր նոր  
գնած դաշոյնը մէջքէն քաշեց ու սեղանին մէջտեղի  
խորոված սիրամարդին կուրծքը ձեղքեց: Շուտ մը ըս-  
լոր սեղանակցաց աչքերը նոյն զէնքին վրայ դարձան,  
որուն սիրամարդին կուրծքէն վեր մնացած ոսկեգօծ  
երախակալը տակաւին կը փայլէր: Զինուորներն իրա-  
րու երես նայելէն վերջը, մէկն ալ մէջերնէն յատակ  
ձայնով մը, — ճիշդ այն դաշոյնն է ըսաւ:

Այն ատեն տանուտէրը, աչք ընելով իր զիմացը  
բազմող հրաւիրելոց մէկուն:

— Աղէկ միտքս եկաւ, ըսաւ, արդեօք ի՞նչ ե-  
ղան այն երկու սարեակները:

— Լեռնականը, պատասխանեց միւսը, հոռ ամ-  
բողին մէջ փետրափոխութեան մօտ է, իսկ միւսը՝ վան-  
դակը փոխեց, սակայն կարծեմ թէ՛ անոր երգելն ալ  
երկար չի պիտի տեւէ:

— Հասկցայ, ըսաւ Թրէմաքօլոս ինքնիրեն, ա-  
նանց այլայլելու:

Կերակուրը լմնալով՝ սեղանը վերցուէլէն վերջը  
զինուորները հրաւիրեցին մեր նոր հիւրը, նաեւ հոն  
ներկայ գանուոյ ուրիշ հանդիսակիցներն ալ որ գա-  
ւաթ մ'ալ գինի՝ իրենց բերդին մէջ խմելու բարեհա-  
ճին, որն որ խիստ մօտ էր այժմեան գտնուած տանը:

Ուստի ալ միատեղ ելան բերդը գնացին: հոն  
մեր խեղկատակը խիստ շատ երգերով, քնարահա-  
րութեամբ եւ այլ եւ այլ խաղերով եւ վերջապէս այն  
կովբուուն ճաշակին յարմար այնպիսի դուարձալի կա-  
տակներ ըրաւ, որ ամենուն ալ համակրութիւնը դը-  
րաւեց: Ուստի, երբոր երեկոյն կուգէր երթալ, ա-  
մենքը միատեղ վրան թափելով՝ խօսք առին իրմէ յա-  
ռաջիկայ կիւրակէ աւուր համար բերդին մէջ ըլլալիք  
քուրնթանայի հանդիսին անպատճառ ներկայ գանուե-  
լու:

Որչափ ալ Թրէմաքօլոս՝ այս հրաւէրը ամենայն  
հաճութեամբ ընդունեց, սակայն բերդէն գուրս չե-  
լած, կուղէր գոնէ գործ մը լմնցնել: Ուստի հոռո-  
տելով, պատահած խորշերը լաւ մը գիտելով, մէկէն  
ու մէկալէն խօսք մը առնելով, վերջապէս կրցաւ  
ապահով ըլլալ թէ Լուբօն հոն ներսը հիւսիւսային  
կողմը խուցի մը մէջ բանտարկուած է:

Ուստի նոյն գիշերը, մեր վարպետորդի խեղկա-  
տակը սեւ ու մեծ վերարկուի մը պլլուած, բերդին  
չուրջը սխաւ չափելով գիտել, զինն ու քննել: Վեր-  
ջապէս Լուբօյի կեցած բանալին զիմացը բարձր տեղ  
մը ելլալով, հասկցուց Լուբօյի թէ զինքը փրկելու  
համար եկած է: Սակայն նոյն կողմը նայող պատու-



հանը խիստ հաստատուն երկաթէ վանդակով փակուած ու պատն ալ նոյնպէս խիստ հաստ ու ամուր ըլլալուն համար՝ զայն կոտորելու կամ ծակելու փորձ մը ընելն անգամ անխելքութիւն էր :

— Բերդին մէջը բացուող դուռն ինծի այնչափ ամուր չերեւար, ըսաւ Լուբօ, զիւրին է ներսէն դուռը կոտորելը եւ կամ կերպով մը կղպանքը բանալով գորսս ելլալը :

Սակայն անկէ անդին, դարձեալ բերդին մէջն եմ, դարձեալ հաղար ու մէկ դռներով ու պահապաններով արգելուած եմ, եւ գլխաւորապէս բերդին մեծ դուռն ալ փակուած ու կամուրջն ալ վեր առնուած է :

— Ուրեմն ես այս բաներուն վրայ քիչ մը պէտք է խորհրդածեմ, ըսաւ Թրէմաքօյտօ եւ հասկըցող Նուբօյի թէ յառաջիկայ կիրակի օրն ինք բերդը գալու հրաւիրեալ է ու պիտի գայ : Սակայն նոյն օրէն առաջ ալ զինքը մասնաւորապէս տեսնալու խօսք տալով մեկնեցաւ դնաց : Թրէմաքօյտօն շատ մը մըտածելէ, որոճալէ, չափելէ ու չափչփելէ վերջը երկու հատ իրարմէ անտարբեր խեղկատակի զդեստներ շինել տուաւ . նոյնպէս ալ երկու հատ սլանդակ գլխարկներ՝ որոնց երկուքն ալ իրեւ երեսի պահանակ մէյմէկ մետաքսէ բարակ ու խիտ հիւսքով լայնկեկ ուռկաններ ունէին : Այնպէս որ այս զդեստը խեղկատակի արհեստն ունեցող մը հագնելուն պէս՝ ո եւ էջտեղ ներկայանալու ըլլար, ամենեւին եւ ոչ մէկը կրնար կասկած մ'ունենալ անոր վրայ : Ուստի չաբաթ գիշեր, Թրէմաքօյտօ այս զդեստերէն մէկը թեւին տակն առնելով կ'երթայ Լուբօյի բանտին գիմանցը եւ բերդին բոլորը պատող խրամին բերանը գա-

լով՝ երկայն սիւնի մը ծայրը կը կախէ նոյն զդեստները եւ հետզհետէ մի առ մի բանտին պատուհանէն ներս Լուբօյի կուտայ, իմացնելով եւ մաս առ մաս հասկընելով բանտարկելոյն ինչ եւ ինչպէս ընելիքը : Ժամանակն ալ կ'որոշեն, տեղերը կը չափեն, ու տալու նշաննին ալ իրարու հաղորդելէն վերջը, Թրէմաքօյտօն գիշեր բարին կը կոխէ ու կը բաժնուին :

Վերջապէս այն օրհնեալ կիրակի օրուան արշալոյսը կ'սկսի ծագիլ : Մեր խեղկատակը տուած խօսքին համեմատ՝ իր նոր զգեստները հագուած կ'երթայ հրաւիրուած բերդը : Ամենքն ալ ուրախութեամբ ու խնդութեամբ անոր չորս կողմը կը ժողուին : Թրէմաքօյտօ դարձեալ կ'սկսի երգել, քնարը հնչեցընել, պարել ու երբեմն ալ գլխարկին վրայի մետաքսէ ուռկանը իրրու սաղաւարտի դիմակ՝ վար առնել ու երեսը բանալով մեծ ծիծաղ մը կը բրցընէր :

Քիչ մը վերջը Գուինթանայի ժամանակը դալով, նայն բերդին զօրականքը՝ ուրիշ մօտակայ բերդի մը զօրաց հետ սկսան խաղի ելլել : Կրարու հետ քանի մը խաղով փորձուելէն վերջը, յանկարծ Թրէմաքօյտօ ամենէն քաջ զօրականի մը դիմացն անցնելով՝ կ'առաջարկէ անոր հետ խաղի ելլել յետագայ պայմանաւ . այսինքն՝ ո՞վ որ նոյն խաղին մէջ յաղթող դառուի, իրաւունք ունենայ միւսին երկվորը վասարելու :

— Օէ, բարեկամ, կ'ըսէ առաջարկուողը՝ խոժոռ ձայնով մը . այս մարդը արեգակէն այրած, մազոտ ու իրտուխակի նման տղեղ երիտասարդ մ'էր : Կընդունիմ, սակայն չը կարծես Միլան ըրածիդ պէս՝ քու



վարպետորդի կատակներովը ձեռքէս կարենաս ազատիլ . ահա քեզի առաջուց կը գրուցենմ :

— Ես ալ կարծեցի թէ բան մը պիտի ըսես , պատասխանեց խեղկատակը . անշուշտ ըսածիդ պէս պիտի ըլլայ : Ո՞վ կրցեր է գլխիով լեցուն տակառէ մը ջուր հանել , կամ շողզամէն տրիւն . եւ կամ աղնը-ուաղարմ ասպետի մը քաղաքավարեալ կերպերը կոշտ ու անպիտան անձի մը վրայ գտնել :

Այս կատակխօսութեան վրայ՝ խաղի առաջարկուող բիրտէն դատ , որն որ արեգական մէջը կեցած կատուի պէս աչքերը խիլելով բարկութեամբ խեղկատակին վրայ կը նայէր , ամենքն ալ սկսան բարձրաձայն խնդալ : Սակայն Թրէմաքօլտօ անոր բարկանալը չը տեսնել կեղծելով դարձեալ իր ծաղրաշարժ կերպերովն ու եղանակաւն անոր քոյն երթալով :

— Ինձի նայէ , իմ սիրելի գոնարիկս կրսէր , կարծեմ թէ երկուքներնուս մէջ հաւասարակշռութիւն չիկայ . դու խոշոր եւ ուժեղ երիվար մը Թուրքիս , իսկ իմն նիւար ու պզտիկ է :

— Իրաւունք ունի , իրաւունք ունի , պատասխանեց խաղին գատաւորներէն մէկը , թո՛ղ ուրիշ երիվար մը բերեն Թրէմաքօլտօյի համար ու իրենն ալ իբրեւ գրաւ ախոռը քաշուի : Ուստի շուտ մը Օգորինօյի փառաւոր ու կարմրադոյն երիվարը գուրս հանցոյն : — Հն , հիմայ աղեկ է , ալ ասոր ըսելիք մը չունիմ , ըսելով , մեր խեղկատակը սկսաւ Քուրիթանա խաղին ելլալու պատրաստուող ասպետի մը ձեւերն ընելով՝ գլխարկին ձակատը կեցած մտաքսէ ուռկանը վար ստաւ ու այնպէս երեսը ծածկած ասդին անդին ցատկելէն վերջը , կանչեց որ խաղի ելլալու նշանը տրուի :

Կալարափող մը բոլոր բերդին մէջ հնչեց , եւ նոյն ձայնը գնաց նաեւ ներսը այնպիսի մէկու մը ականջը՝ որ նոյն միջոցին բայց ՚ի մեր խեղկատակէն , մէկու մը մտքէն չէր անցներ :

Ուստի խաղի առաջարկուողը՝ երիվարին սանձերը ժողուելով մտրակեց ու բոլոր ուժով ճամբայ տալով , նիղակաւը մէջտեղի խրտուիլակին ճիշտ մէջքին դարկաւ : Եւ մինչդեռ բոլոր հանդիսակիցք « կեցցէ » կանչելով կը ծափահարէին , ինք առջի ելած տեղը վերադառնալով , վերստին նոյն ուժով նիղակը խրտուիլակին դիմակին նշած առած երիվարը քնց ու ճիշդ այն տեղը հարուած մը տուաւ եւ անցաւ : Նոր ծափահարութիւններ ու նոր կեցցէներ կրկնուեցան :

— Հիմայ կարգը Թրէմաքօլտօյինն է , բայց ուր է նա , ուր է Թրէմաքօլտօն : — Մէջտեղը չկայ : — Տղայ մը անոր երիվարը պատրաստ բռնած կը կենար , սակայն ինք հոն չէր : — Թրէմաքօլտօ , Թրէմաքօլտօ : — Ո՞ր ծակը մտաւ թշուառակմը , անշուշտ խեղկատակական նոր բան մ'ալ հիմայ պիտի հնարէ : — Ես արդէն ըսի թէ այսպէս պիտի ընէ , սակայն հոգ չէ , իրեն երիվարը ներսը ախոռը գրաւն է :

— Թրէմաքօլտօ , Թրէմաքօլտօ :

Այս միջոցին մէկ մ'ալ սանդուխէ մը վար՝ ցատկելով ցատկրտելով Թրէմաքօլտօյի վաղելը տեսնուեցաւ , եւ ակնթարթի մէջ իրեն համար պատրաստ կեցած երիվարին վրայ նեծնալով նիղակը ձեռքն առնելն ու խաղին նպատակին վրայ յարձակելով զարնելն ու խրտուիլակը վրան հաստատուած հասար ցցին հետ միատեղ գետին գլորելը մէկ ըրաւ :

Սեղկատակը , (որ մեր ընթերցողաց հետաքրքրու-



Թիւնը յադեցնելու համար կրօնքնք) Լուբօն էր՝ այս փառաւոր հարուածը առաջը : որն որ ճիշդ խեղկատակին զգեստները հագած ու երեսն ալ գլխարկին մետաքօէ ուռկանովը լաւ մը ծածկած էր :

Ուստի քանի որ կիցցէներուն ու ծափահարութեանց ձայներն երկինք կը բարձրանային , մեր ծպտեալ խեղկատակը փայլակի պէս երիվարը ետ դարձուց եւ շիտակ բերդին ներսի գաւիթն անցաւ . անկէ կամարակապին տակէն սահելով դռնէն դուրս , անկէ ալ վար ձգուած կամուրջին վրայէն անցաւ , եւ անկէ ալ անդին տեսար նէ դախր :

Խաղին ներկայ գտնուող բազմութիւնը , դուրս վաղելով տեսան որ յաղթանակողը հովի պէս շիտակ յառաջ կերթար :

— Թրէմաքօլտօ , Թրէմաքօլտօ , յաղթութիւնը քուկդ է :

Իսկ տակաւին Թրէմաքօլտօ կարծուած հեծեալը ետեւն անգամ չը նայելով ջուրի պէս կը վաղէր ու յառաջ կ'երթար :

Ամենքն ալ սկսան մէյմէկ կերպով ասոր փախչելուն վրայ մեկնութիւններ տալ : — Ար կարծէ թէ ինքն է խաղը կորսնցնողը եւ անոր համար կը փախչի որպէս զի երիվարը ձեռքէն չառնուն :

— Ո՛հ , հիմայ լաւ գտար . այն խեղկատակը չի պիտի գիտնայ թէ , խաղի մը մէջ նպատակը նիզակի մը հարուածով գետին զլորելը՝ ամենէն մեծ յաղթանակն է :

— Ուրեմն այս Բնչ կը նշանակէ :

— Ընչ պիտի նշանակէ . կը նշանակէ թէ իր խեղկատակի վիճակին մէջ կ'ուզէ ցուցնել այն կոշտ ար-

ջին՝ թէ այնպիսի տղեղ դէմքէ մը չի վախնար , եւ թէ միանգամայն բոլոր հանդիսակիցքն ալ իր ետեւէն խնդալ կուտայ :

— Ուստի ըսել կուզես թէ , առիկայ դարձեալ հոս պիտի գառնայ :

— Անշուշտ թէ պիտի գառնայ , կարծես որ իր երիվարը հոս մեղի պիտի ձգէ :

Ուստի քանի որ մեր կեղծ Թրէմաքօլտօն այսպէս իր ձամբան շարունակելով առաջ կ'երթար , բուն Թրէմաքօլտօն տակաւին բերդին մէջ պահուըտած էր : Հիմայ տեսնանք թէ մեր բուն խեղկատակն ալ Բնչպէս ամենուն աչքին առջեւէն պիտի կարենայ փախչելով աղատիլ : Ասկայն մենք՝ աւելի լաւ կ'ըլլայ որ այս դժուարագոյն մասին վրայ մտածելը՝ Թրէմաքօլտօյի ձգենք : Ասան զի ինք արդէն ամեն բան մտածած ու ամեն բանի պիտոյքն ալ հողացած էր : Բերդին մեծ դրան ձախ կողմը ուրիշ օժանդակ դուռ մ'ալ կար , որ մեծկակ հրապարակի մը մէջ կը բացուէր , որուն զիմացն էր նաեւ բերդին ախոռը : Թրէմաքօլտօն ճիշտ այս դրան վրայ էր դրած իր բոլոր յոյսը :

Ուստի քանի որ խաղը դեռ լիննալու վրայ էր , Թրէմաքօլտօն դնաց նոյն դրան պահապանը գտնալու , ու զանի մէկ կողմն առնելով համոզեց թէ՝ սոյն խաղին մէջ դրած զրուը բոլորովին կատակ էր , եւ թէ հիմայ նոր խաղ մ'ընելու եւ բոլոր հանդիսակիցքը խնդալէն մարեցնելու համար , պէտք էր անպատճառ նոյն օժանդակ դուռը բաց՝ եւ իր երիվարն ալ գրանք առջեւ պատրաստ կեցնէ , որպէս զի նոյն դռնէն ելլելով բերդին մեծ դռնէն ներս մանէ , եւ ընելու խաղն ընէ : Մեր բարեմիտ դռնապանն ալ համոզուե-



լով, նախ կ'օգնէ թրէմաքօյտօյի, որ զիւրաւ ձիուն վրայ հեծնայ. վերջն ալ խնդարով դուռը կը բանայ ու դանի ճամբայ դնելով կամայ մը դուռը կը փակէ, ու կը վազէ բերդին մեծ դաւիթը զինքը զիմաւորելու համար: Սակայն հոն մտրդ չը գտնարով դարմացմամբ կը տեսնայ որ ամենքն ալ մեծ դռնէն դուրս ելած՝ Լուբօյի ետեւէն կը նայէին, որն որ ձիւտ թրէմաքօյտօյէն տարբերութիւն չունենալով՝ հովի պէս առաջ կերթար: — Ի՞նչպէս կրնայ ըլլալ, կ'ըսէր ինքնիրեն մեր բարի դոնապանը. դեռ հիմայ դռնէն դուրս հանեցի, եւ անաւասիկ ժամուան մը ճամբայ առեր է. այս ի՞նչ հրանալի դէպք է:

Այսպէսով՝ Լուբօ չիտակ ճամբէն, եւ թրէմաքօյտօ անտառներէ, մայրառներէ ու գաղանի պոսոյտներէ անցնելով Միլան հասան, ու մտան Տէլ Պայցօ կոմսին պալատը. մեծ տարակուսանաց մէջ ձգելով բերդին զինուորներն ու պահապանները:

Գ Լ Ո Ւ Թ Ի Զ.

Մինչև հիմա Լուբօյի վրայով պատմածներնէս յայտնի կը տեսնուի թէ այս երիտասարդը դեռ ուրիշ գոժարարոյն ու ցաւալի դէպքերէ փախած եւ կամ վրկուած ըլլալուն, իւր ծնողքը շատ անգամ խիստ մեծ սրտիցաւոյ մէջ ձգած ու նոյնչափ անդամ ալ գրեթէ մահուան ճիրաններէ ազատելով՝ դրկախառն

համարելու ամբողջ ընտանիքը միտթարած էր: Ասով մեր ընթերցողը կրնայ հետեւընդի թէ, Լուբօյի ծընողքն 'ի վաղուց այսպիսի պատահարներու սովորած ըլլալով՝ յայտմ մասին պէտք էին բոլորովին անհոյժ ըլլալ:

Սակայն այնպէս չէ, այլ ընդհակառակն այս անգամ Լուբօյի ծնողաց սրտացաւն ամեն անգամէն տւելի մանաւանդ թէ կրկնապատիկ էր, որովհետեւ բոլորովին իրենց խելքէն ու մտքէն չանցած կերպով կորսնցուցած էին՝ թէ՛ զԼուբօն եւ թէ՛ իրենց ազնիւ ու սիրելի Լատրէդան, որուն վրայ տախտակն ոչ Լուբօ կրնար իւր ծնողացը տեղեկութիւն մը տալ, եւ ոչ ալ ծնողքն՝ իրեն:

Երմէլինտա եւ Տէլ Պայցօ կոմսը սրչափ ալ մեր բազէակրին որդւոյն կրկին եւ կրկին այս կարգէ գուրս, դէպքին մանրամասն եղելութիւնները պատմել տուին. սակայն Լուբօ մատամբ միայն ներկայ կարենալով դանուիլ, Երանուհոյն ծնողքն ապահով ցընելու կամ թէ գոհ ընելու չափ լուր մը կարող չէր տալու: Ռորովհետեւ Օդօրինօն գտնալու համար, զԵրանուհին կալարաթէ ձգած վայրկենէն 'ի վեր, բանէ մը տեղեկութիւն չունէր, եւ ճամբուն վրայ դաւաճանութեամբ զինքն ալ բռներ, ու աչքերը կապելով քիչ մը ժամանակ տանելէն ետեւ, վերջապէս թրէմաքօյտօյին ձեռքով ազատած բանտը նետնր էին խնդը: Ռեսափ ամեն բան խորհրդաւոր կերպով այս մթնութեան մէջ ծածկուած էր: Միայն քիչ մը լոյս առնելու կէտը՝ Մարքօյի ոտորոտրութեամբ Սերբիօ խորհուած նամակն էր, զոր առածին պէս՝ Օդօրինօ ճամբայ ելլալով դէպ 'ի Քասթէլ Սերբիօ գտցած էր: Լու-



քօ կը հաստատէր թէ այս դաւը դարանողը՝ այդ նա-  
մակը Մարքոյի անուամբը գրած ու ստորագրած էր :  
Կոման ալ միւս կողմանէ , միայն Մարքոյի անունը լը-  
սելով տակն ու վրայ եզրած եւ մեծ սրտադողի մէջ էր ,  
կ'ուղէր ո եւ է միջոցաւ այս բանիս վրայ ինքզինքն  
ապահովցընել :

Իսկ Էրմէլինտա քաջ գիտելով Մարքոյի ինչ աչ-  
քով Երանուհոյն վրայ նայելը , ինքնիրեն խորհրդա-  
ծելով հաստատեց թէ ուղղակի Մարքոյի ձեռքով իր  
աղջիկը յաիշտակուած է : Այսու ամենայնիւ՝ այս իր  
մտաց համոզումն ալ ամենեւին կոմսին չէր ուզեր  
յայտնել , անոր կարգէ դուրս ու խելագար ցնորքնե-  
րէն աղատ մնալու համար :

Ուստի ամենազաղտնի կերպով մ'երկրորդ օրը  
կանչել տուաւ զԼուբօն իր սենեակներէն մէկը եւ —  
ինծի նայէ , ըսաւ , ես մէկ ծանր ու դժուարին գործ  
մ'ունիմ քեզի առաջարկելու . քու նախկին տէրան-  
ցըդ սիրուն համար ըլլայ , արդեօք յանձն կ'առնուս :  
Գիտցած ըլլաս որ քեզմէ ալ ուրիշ մէկու մ'այս գազա-  
նիքս չի պիտի կարենամ յայտնել :

Լուբօ , խանդաղատեալ ու միանգամայն իւր տի-  
րուհոյն այնպիսի երկկայութեամբ մ'իրեն աղաչելու  
կերպով խօսիլը տեսնալով , — Ո՛հ , ի՛նչ կ'ըսէք , տի-  
րուհիդ իմ , կը պատասխանէր , միթէ ես միշտ ձեր  
նոյն Լուբօ ծառանիդ չեմ . միթէ իբրեւ իմ աշխա-  
տանացս պտուղը , առաջին պատառ հացը՝ ձեր սե-  
ղանէն չեմ կերած . վերջապէս միթէ հայրս , մայրս  
ու խեղճ քոյրս իմ խելահասելէս շատ առաջ ձեր պա-  
լատին մէջ ամենայն կերպով խնամուած ու միշտ ձեռ-  
մէ պաշտպանուած չեմ :

— Հիմայ այդ բաները յիշել՝ պէտք . . . .

— Անշուշտ թէ պէտք է յիշեմ , եւ դիմնաք որ  
այս իմ բիրտ ու անկիրթ վիճակիս մէջ՝ վայրկեան մը  
ձեզմէ երախտապարտ ըլլալէն չեմ դադրած : Խմ միթէ  
այս կեանքս ալ ձեր վեհանձն ամուսնոյն , եւ մաս-  
նաւորապէս ձեր՝ ու այն հրեշտակին . . . այն ձեր . . .  
պաղատանօքը Մարքոյէն վերստին ինծի չնորհուած  
չէ . . . . Սակայն հոս խօսքը կարելով լռեց , տեսնա-  
լով խեղճ Էրմէլինտայի սրտին ալէկոծիլը , որն որ աչ-  
քերը չորցընելով կը պատասխանէր :

— Գիտեմ թէ դու բարի ծառայ մի ես , գիտեմ :

— Ձեր զիս բարի ծառայ անուանելն ինծի նոր  
կեանք մ'ալ պարգեւելէ աւելի է , հիմայ տեսնեք ,  
տիրուհիդ իմ , թէ ի՛նչ է ինծի յանձնելու ծառայու-  
թիւնսիդ :

— Կուզեմ զքեզ մինչեւ Լուբքա խրկել , իմ կող-  
մանէս Մարքոյի նամակ մը տանելու , ըսաւ Էրմէ-  
լինտա :

— Այսչնփի է միայն , պատասխանեց Լուբօ , Մար-  
քոյի ներկայանալ . . . ինծի ասկէ մեծ պարգեւ մը չէ-  
լք կրնար չնորհել :

— Ձիս մտիկ ըրէ , Լուբօ , ես ալ կը հաստատեմ  
որ՝ եթէ Մարքօ ՚ի վաղուց անտի ճանչցած մարդս է՝  
ու բնութեամբը չէ փոխուած , ապահով եղիր թէ  
քեզի վտանգ մը չի հասցնէր :

— Թողութիւն ըրէք , տիրուհիդ իմ , Թողութիւն  
ըրէք , վասն զի Մարքոյի վրայ այսպիսի կասկած մը  
անդամ ունենալն ինծի անտեղի կերեւայ . ուր մնաց  
որ ես յայսմ մասին Մարքոյէն վախ ունենամ , անկէ՝  
որ աշխարհքիս ամենէն աղնուակսն անձը սեպուած



է : Այսու ամենայնիւ գիտցած ըլլաք որ եթէ ես Մարքոյի բացարձակ թշնամի պարոն , կամ կոնս եւ կամ թաղաւոր մը ըլլայի , դարձեալ իբրեւ ամենափախուկ բարձի վրայ դրածի պէս , գլուխս անոր ծնգացը մէջ՝ հանգիստ ու անգահով կրնայի քնանալ : Վերջապէս , որչափ ալ այս զրուցածս ձեզի այլանդակ պիտի երեւայ , սակայն եւ այնպէս եթէ Մարքո զիս սպաննելու ալ ըլլայ , ինծի քաղցր է այնպիսի մարդու մը ձեռքով կեանքս վերջացնել :

— Ուրեմն պիտի երթնաս :

— Եւ ի՞նչպիսի յօժարութեամբ :

— Միայն իմ վախս այն է , կ'ըսէր Էրմէյլնտաս , որ այս ուղեգնացութիւնդ իմանալով , չըլլայ սր դարձեալ քո ճամբադ կարեն ու քեզի մնաս մը հասցընեն :

— Ուրեմն ըստ կարելոյն պէտք է անապարել , պատասխանեց Լուբո , որպէս զի անոնց ժամանակ չի տանք այնպիսի դաւ մ'ալ դարանելու : Եւ թէ որ . . . սակայն կարծեմ թէ ինծի պէս՝ անգամ մը պոչէն բռնուած աղուէս մը՝ դժուարին է երկրորդ անգամ նոյն ձուղակին մէջը ձգելը :

— Ա՛՛՛՛ ուրեմն , աճաւասիկ նամակը հաս է , ըսաւ , կոնսուէին , ես ալ հասկցայ , թէ այսպիսի պարագայի մէջ միշտ անապարելը լաւագոյն է :

— Շնորհակալ եմ , պատասխանեց Լուբո , հիմայ շուտ մը վար կիջնամ երկու պատաս հաց ուտելու , եւ հայրս ու մայրս բարեւելով ճամբայ կելլամ :

— Երթաս բարեւաւ , իմ բարի Լուբոս , ըսաւ կոնսուէին , Աստուած հետք ըլլայ : Սակայն շուտ մը վերջապիս ետ կանչելով , գիտնաս թէ Թրէմաքոյտոն խոստացած է այս միջոցիս ասդիս անդին հաստեւելով մե-

րիններուն վրայ դոհացուցիչ լուրեր բերելու . ուստի եթէ այսպիսի բան մը տեղի ունենայ , գիտնաս որ անմիջապէս ետեւէդ թղթաքեր մը կը հասցնեմ :

Լուբո , գիտեմ եւ շնորհակալ եմ պատասխանելով , անապարանօք խուցէն դուրս ելաւ :

Պալատին դռնէն դուրս ելած ժամանակը , Լուբոյի դիմ ձիւն վրայ՝ նոյնպէս ալ երկու զինակիր ետեւէն , Լուբոյի գիմայնս ելան : Մեր ճանապարհորդը , որչափ ալ Օդօրիսոյին ու Լուարիզիոյ մէջ 'ի վաղուց թշնամութիւն մը ծագած ըլլալը քաջ գիտէր , սակայն միշտ երկու կողմէն ալ փոխադարձաբար իրարու տեսած : Ուստի Լուբո , նոյն ժամայն գլխարկը վար տանելով մեծաւ յարգանօք իւր տիրոջն ազգակեանք բարեւեց ու անցաւ իր ճամբան շարունակելու գիտմամբ , բայց առանց տեսնալու բարեւած ասպետին ձիուն վրայէն ետին դառնալով , ապշած ու զարմացմամբ մը իրեն նայելը :

Մենք ձգե՛նք հիմայ Լուբոն իր ճամբան , ու երթանք քիչ մ'ալ Լուարիզիոյ ետեւէն : որն որ անմիջապէս առջի օրը Բէլէկրուայէն նամակ մը առած ըլլալով , մեծաւ շտապաւ Բոդաթէ բերդը կը վազէր , ներկայ գործոց վրայ խօսակցելու համար :

Լուարիզիո՞ ժամանակ մը ինքնիրեն խորհելէն ու բողորովին իրեն կարծածին հակառակ՝ Լուբոյի Միլասնու մէջ գտնուելուն վրայ դարմանալէն վերջը , դարձաւ իր երկու զինակիրաց մէկուն , եւ անոր ակնջէն վար բան մը ըսաւ . «՛՛ն ալ գլխովն այդ պատասխանելով հոն ետ մնաց , մինչդեռ Լուարիզիո ղէպ յառաջ ճամբան կը շարունակէր՝



յաւ — Ո՞ր մտքը, որ ճիւղազը եւ կամ որ սատանան կրցաւ այս անպիտանն ազատելով հոս նետել, կը ըսէր ինքնիրեն մեր արտաբեկ ասպետը, միշտ մտրակելով երիվայն ու ածապարելով ժամ մ'առաջ Բողաթէ հասնելու համար :

Բորը ձեռնարկած գործերէս՝ գոնէ մէկը շիտակ ու յաջող երթար . . . միշտ դժբաղդ, միշտ գէշէն գէշը : Անիծած ըլլայ այն աստղը՝ որուն տակն ծնաւ զիս ժայրս . . . : Եւ ուր կրնայ երթալ այդ անպիտանը, թերեւս իր լեռները կը գառնայ : Այն Լիմոնգացիք ալ շատոնցմէ 'ի վեր ինծի վճարելիք ունին ու չեն ուզեր վճարել . սակայն հոգ չէ, անշուշտ օր մը պիտի գայ՝ որ ամենքը միատեղ պարտքերնին պիտի վճարեն :

Իսկ Լօտրիզիօյի հետ եկող զինակիրը, տեսնալով իր տիրոջը բարկացայտ ու թունաւոր դէմքը, կը վախնար բերանն անգամ բանալու, եւ տիրոջմէն գանահարուած, քիթը գետինը ու պոչն ալ երկու ետեւի սրունքներուն մէջէն փարը կպցընելով գացող շան մը պէս, հեռուէն Լօտրիզիօյի կը հետեւէր :

Ասպետը՝ իր մտացը մէջ մինչեւ հիմայ գլխէն անցած ձախողակի գէպքերը որոճալով, երիվարը կը մտրակէր, աչաց առջեւը բերելով զՄարքօ, զըրանուհին եւ զՕդօրինօն : Այնպէս որ՝ առանց բառ մը արտաբերելու եւ ճամբուն երկարին իմանալու, խիստ քիչ տոնետուն մէջ Բողաթէ բերդը հասաւ :

Ուստի Բէլէկրուայի հետ իրեն համար պահուած խուցը մանալէն վերջը, հարցուց . — Ուրեմն՝ ըսել է որ Լուքքայէն վերջի թղթաբերը հասաւ :

— Այո, հասաւ, եւ անաւասիկ Մարքօյի նա-

մակներն, ըսելով, բերդապահը թղթոց ծրար մը տըւաւ անոր ձեռքը : Լօտրիզիօ ծրարը բանալով՝ բաւական երկար ժամանակ մի առ մի նամակներն աչքէ անցընելէն վերջը, մինչդէռ Բէլէկրուա զլխարկը ձեռքը դիմացը ոտքի վրայ կը կենար, գլուխը շարժելով եւ ուսերը վեր առնելով, սկսաւ ըսել :

— Միշտ նոյնն է . Գերմանացւոց հետ գէշ, իսկ Լուքքայոցոց հետ գէշին գէշը : Առաջինները կը նմանին ծակ սափորի մը, որ Բօ գետն անգամ մէջը վազելու ըլլայ՝ կարող չէ գայն լեցընելու : Իսկ երկրորդներուն գալով, ինդճ եւ այնչափ ագահ են որ հողինն սատանային ձեռքէն փրկելու համար՝ ստակ մը անգամ չեն բաշխեր : Առաջինը կ'ոռնայ ու կ'ուզէ, իսկ երկրորդը՝ կը պոռչտայ ու կը գանգատի : Մարքօն ալ ասոնց մէջտեղը կեցած, կից մը տակառին կը դարնէ ու կից մ'ալ շրջանակացը : Այսօր զինուոր մը կը կիցահարէ, վաղը զուրիշ մը կ'ախել կ'ուտայ . ճիշդ աղայոց յակուրջի խաղին նման : Այնպէս որ, վերջապէս Մարքօ ինքզինքը երկու կողմին ալ ատելի ընելով, յետին աստիճանի ձանձրացած՝ եւ այս տաղտկալի վիճակէն ազատելու համար, որոշեր է իր իշխանութիւնը Փլորենտացւոց վաճառելով բալորովին ձեռքը քաշել այս գործէն :

— Եթէ Մարքօ այս միտքը դրածն 'ի գործ դնելու ըլլայ, կարծեմ թէ անմիջապէս հոտտեղի գործերով զբաղելու համար պիտի վերադառնայ :

— Անշուշտ, եւ միւս գործն ալ՝ որ ցայժմ միայն մեզի սեպականելու կը շանայինք, կարծեմ թէ ասկէ վերջը չի պիտի յաջողի :

— Չի պիտի յաջողի, կը կրկնէր բերդապահն ալ,



պղտի մատին ըղունքը կրծելով : Աստուած տայ որ չի յաջողի , վասն զի կը վախեամ թէ , անոր յաջողելուն համար մեր ըրած ջանքը կրնայ զմեզ նորանոր վտանգներու մէջ ձգել :

— Ո՞ւսկից կը գտնես այդ խելագար երկիւղները :

— Անկէ կը գտնեմ որ , ձեր առաջարկութեանը վրայ զինքը կամայ կամաց վարժեցնելու համար անցած օր հեռուէն Մարքոյի վրայ խօսք մը ուղեցի բանալ , դիտէք թէ ինչ . . .

— Ի՞նչ , միթէ չուզեր հաւանիլ :

— Ի՞նչպէս չի պիտի հաւանի , ձգենք հիմայ այն մասը . բայց միւս կողմանէ ալ Մարքօ իմ զրկած թըղթատարս յետին աստիճանի կշտամբեր ու պարսաւեր է , եւ ինձի ալ գրով խափու կը պատուիրէ , թէ ազջրկան եւ թէ Օգոստինոսի մեծ յարգանք մատուցանել : Ես կարծեմ թէ գործոց զբաղմունքները՝ զինքը բուժած պիտի ըլլան սիրահարակամ ախաէն :

— Ա՛լ աւելի օտէկ , թո՛ղ այդ խելագարութիւնը բոլորովին անցնի , որպէս զի կարող ըլլայ աւելի ծանր ու հաստատուն կերպով իր շահաւէտ գործոցը խնամ տանիլ : Աերջապէս դու ալ գիտես , թէ անոր գործերը մերն ալ ըսել է :

— Հասկցայ , հասկցայ , սակայն հիմայ տեսնանք թէ՛ ես այս վատատոնմիկ կնոջ հետ ի՞նչ կերպով պէտք է վարուիմ :

— Ի՞նչ ճամբով որ մեր մէջը սահմանած ենք . այսինքն կամաց կամաց կամ քաղցրութեամբ եւ կամ խափու Մարքոյի հաճոյքը կատարելու հաւանեցնել զինքը : Եւ ի՞նչ կը կարծես , միթէ Մարքօ չի պիտի ուրախանայ՝ երբոր հոս դառնայ ու տեսնայ ամեն բան

կարգի դրուած եւ աղջիկն ալ արգէն կակուղցած : Ես կրեմ թէ իր ամենայն դժգոհութիւնները մոռնալով , քեզմէ մեծապէս չնորհակալ պիտի ըլլայ յայտ մասին :

— Ո՞հ , երանի թէ երկինք յաջողէին այս զրեւուարին ձեռնարկութիւնս : Չես կրնար երեւակայել , թէ ինչ սրտատանջ վիճակի մէջ եմ . մտածէ մէկ մը թէ քսան օրէն ՚ի վեր որ նա հոս վախուած է , հաղիւ կրցայ քիչ մը համողել զինքը եւ հաւտայնել թէ գտնուած բերդը Քասթէլլէթօ է . միայն չի կրցայ համարձակիլ . . .

— Ի՞նչ մեծ յառաջադիմութիւն :

— Հապա ի՞նչ ընելու էի :

— Երբոր կը տեսնուս թէ քաղցրութեան չ'անտար , փոխէ եղանակը . կարծեմ թէ դու ամենեւին կանանց հետ յարաբերութիւն չես ունեցած :

— Ես չեմ գիտեր ի՞նչ կիրպ բանեցնելս , ամենափոքր հակառակութենէ մը տեսնաք թէ ի՞նչպէս կը նուաղի ու կը դալկանայ :

— Թո՛ղ ան ինչ կուզէ ըլլայ , դու քու գիտցածէդ մ'անցնիր :

— Ար տեսնամ թէ դուք շատ զիբութեամբ կը խօսիք . սակայն հոս ըլլալու եւ տեսնելու էիք անոր բերդը գալուն չորրորդ օրը , սաստիկ տենդէ մը ըրունուելով՝ վերջի աստիճանի հիւանդ պառկելիւր : Ամեն մէկ վայրկեան կարծէի թէ մահը պիտի տանէր զինքը . եւ թէ որ իրաւցնէ մոռնէր , տես դու անկէ վերջը զլիտուս եկածը . . . Պէտք էր նաեւ մասնաւորապէս քովինն ալ մտածել :

— Ազախմար կուզես ըսել , շատ հոգ տանելու բան : Ազախմարն ալ ի՞նչ է , կարծեմ թէ միմակ պառ-



կելու չէ վարժած . . . վերջապէս ետքը ինչպէս հիւանդութիւնը աղեկի դարձաւ :

— Իր սիրահարէն նամակ մը բերել տալովս , անմիջապէս բժշկուեցաւ :

— Ի՞նչ , Օդօրինօյէն նամակ մը , հարցուց Լօտրիզիօ բարկութեամբ եւ այլայլելով :

— Օդօրինօյէն , այո՛ . սակայն այնչափ այլայլելով մի բարկանաք , վասն զի հոս Օդօրինօն ես եմ :

— Նամակը դո՛ւ գրեցիր :

— Ես շարագրելով , գիրն ալ նմանցուցի :

— Իսկ մէջը ինչ ըսիր :

— Նախ եւ առաջ ընկանապէս պէտք էր զինքը տեսնելու համար մինչեւ հիմայ դայն երկարելուս վրայ խօսիլ , այնպէս չէ : Ուստի , մենք ալ սկսանք գրել թէ՛ Մարքօ զիս մեծաւ յարգանօք ընդունելով , կուզէ անմիջապէս զիս Թոսքանա ղրկել , եւ այս պատճառաւս ալ չուզէր զիչեր ցորեկ զիս քովէն հեռացնել : Թէ Մարքօ իրեն մասնաւոր գործերուն ձախողութեանը վրայ բարկացած ըլլալուն , մինչեւ հիմայ չեմ համարձակած մեր ամուսնանալուն վրայ իրեն խօսք բանալ . եւ թէ մօտերս՝ ինչպէս որ կը յուսամ , իրեն մեծ ծառայութիւն մ'ընելէս վերջը , անմիջապէս այս կէտս ալ , կերպով մը իրեն պիտի յայտնեմ : Վերջապէս , այս տեսակ սիրահարաց նամակացը մէջ սովորութիւնս եղած նուրբ ու թեթեւ խօսակցութիւնները իրարու ետեւ շարելով , ու միանգամայն իմ միակ յոյսս . . . սիրտս . . . սիրոյս պատկերը , եւ այննորով նամակը համեմելով , հօտչեմ կրխելի :

Լօտրիզիօ բարձրաձայն ձիծաղ մը բրցնելէն վեր-

ջը . — Ուրեմն ըսել է որ , առանց ամենեւին կասկած մը ունենալու , այդ գիրն իրրեւ Օդօրինօյէն եկածի պէս կ'ըլլայ :

— Ասոր վրայ այնչափ սիրտս հանգիստ կրնամ բռնել , որ եթէ նամակն Օդօրինօյի ձեռքն անդամ անցնելու ըլլար , անտարակոյս իրենը պիտի կարծէր :

— Անկէ վերջը :

— Անկէ վերջը , մինչեւ հիմայ , աղջիկը կը պատասխանէ՝ եւ Օդօրինօն կը կրկնէ , աղջիկն երկրորդ անգամ մ'ալ եւ Օդօրինօ նոյնպէս . այսպէսով հետըզհետէ գործն առաջ երթալու վրայ է : Սակայն լսելու արժանի են , ինձի գրած քաղցր ու սիրուն խօսքերը . տեսնելու բան է թէ ինչպիսի ջերմեռանդութեամբ կը բանայ իմ նամակներս ու թղթին վրայ ուրուն ոլուն արտասուք թափելով , ինչպիսի ուշադրութեամբ կը կարգայ ու նամակիս իմաստները մտացը մէջ կը գրաւէ : Վերջն ալ ինչ նորձալի կերպով մը այն ձեան պէս ճերմակ մատիկներովը նամակս կը գոցէ ու համբուրելով զայն ծոցը կը պահէ : Ես այս հանդէսը՝ ամեն օր տախտակորմի մը ծակէն կը տեսնեմ . եւ ձեզի կրնամ երգնուլ թէ այս մեր խաղը պիտի սկսի կամայ կամաց ինձի խիստ զուարճալի ու հաճելի ըլլալ :

— Ա՛հ , չորցած մուսնայ քեզի , փարիսեցի թըշուառական ըսելով՝ Լոտրիզիօ կատակի ձեռով սպտակ մը իջեցուց մեր բերդապահին : Վերջապէս կը տեսնամ որ այսչափ ժամանակուան մէջ , այդ քուտղայական զբաղմունքներովդ փոխանակ առաջ երթալու՝ ետեւ զացեր , ու քսան օր սլ արդէն պատրապի անցուցեր ես :



— Այսու ամենայնիւ , չի կարծուի թէ միշտ իրեն վարդեր նուիրելով մինչեւ հիմայ պատուած ըլլամ զինքը , այլ թէպէտ եւ մեծաւ զգուշութեամբ , սակայն այդ վարդերուն մէջ երբեմն ալ փուշեր խառնած ունիմ : Որովհետեւ նախ իմ վրաս ունեցած համարումը չաւրելու աշխատելէ դատ , պէտք է նաեւ միշտ զինքը յարգել ու քաղաքասիրութիւնն ալ ձեռքէ չի ձգել : Վասն զի պղտի բանէ մը կը նուազի , ոչինչ բանէ մը կը հիւանդանայ :

— Վերջապէս , տեսնենք քա ջու փուշեր ըստ սելովի՞ մինչեւ հիմայ զինքը կշտամբելու կամ վրշտայքնելու չափ ինչ կրցեր եւ դուրցել կամ իրեն գրել :

— Առ այժմ սկսայ ջիչ մը նախանձստութիւն ձեռք առնել , պտտճառ բերելով շարունակ Յարքոյի վրայ խօսակցիլն ու մեծամեծ գովաբանութիւններ ընելը :

— Իսկ աղջիկն ինչ կը պատասխանէ :

— Կը բողբոքէ , կ'երդնու թէ ինք միշտ ու բոլորովին իմն է : Սակայն իմ այս բռնած ճամբաս որչափ ալ ձեզի ոչինչ բան մը կ'երեւայ , բայց եւ այնպէս կ'սմանց սրտին մէջ սերմանուած այս տեսակ հունտ մը , ուշ կամ կանուխ արմատ ձգելով պտուղ կրնայ սալ :

— Ե՛հ , առ այժմ քու բռնած ճամբադ բոլորովին պարսպի չի նետուել . մնաց որ այս կերպով մեր նպատակին համեմուտ համար՝ մինչեւ տարեդուռն կէս ճամբան անգամ առած չի պիտի ըլլանք : Սուրէ ժաժանակնիս , սիրելիք իմ , որովհետեւ ասկէ երկու ա՛մբուէն ետեւ մեծ հաւանականութիւն կայ Յարքոյի

հոս դառնալուն , ո՛ր դիտէ՛ գուցէ անկէ ալ առաջ կըրնայ գալ :

— Հիմայ երկու օրէն անպատճառ ինծի կ'սպասէ : Ի՞նչ ընելս չեմ գիտեր . անցեալ օր ալ մօրը զինքը տեսնալու համար ուշանալուն վրայ զգացած սրտանեղութիւնը փարատելու նպատակաւ , ճարս հատնելով հարկադրեցայ անպատճառ երկու օրէն զինքը անձամբ տեսնալու գալ խոստանալով՝ ջիչ մը զինքը մը խիթարել : Կնչպէս որ նամակս առածին պէս խընդութիւն ու զուարթութիւն ծագեց զէմբին վրայ : Սակայն իրիկուընէ 'ի վեր' չեմ գիտեր ինչ պատճառաւ դարձեալ վերջին աստիճանի արմատ , բերնէն բառ մը չարտաբերէր , արցունքն աչքերէն պակաս չէ եւ կերակուր անգամ ուտել ամենեւին չուզեր . . . բայց հող չէ , բաւական է որ ինք ողջ ըլլայ , դիւրին է այս կամ այն կերպով զինքը միշտ խաբել :

— Գործին զժուարթութիւնը միայն չուտ ու յաջող վերջ մը տալուն վրայ է , ըսաւ Լօսորիզիօ , հիմայ նոր ու մեր ուշադրութիւնը դրաւելու գործն է Լուքոյի բանտէն փախած ըլլալը :

— Փախած , հառաչեց Բէլէկրուա յօնքերը կամարելով ու կեցած տեղն ապշած մնալով :

— Այո՛ փախած է , եւ ես հոս գալու ժամանակս այս աչքերովս ճամբուն վրայ տեսայ զինքը : Սակայն չէ , ես զինքը բարեխիտ հողալարձութեան մը յանձնեցի , եւ արեգակը լնարը չի մտած գուցէ . . . Առ այժմ բաւական է , Լուքա զրկուելու նամակները շարադրելէս վերջը , գործոց աւելի կարճ կերպով մը վերջ տալուն վրայ կը խօսիմք , ըսելով , գործի նքատաւ Լօսորիզիօ : Նամակները գոցելով հասցեները գը-



րելէն ու երկայն բարակ խօսակցելէն վերջը, Ռօզա-  
թէի բերդապահը առջեւէն ու Լօտրիզիօ ալ ետեւէն,  
քանի մը դաղանի խուցերէ, կամարակապներէ ու սը-  
րահներէ անցնելէն վերջը, մտան մութ խուց մը, ու  
բուն մէջի գանուած քանի մը ծակերէն՝ կրնային Ե-  
րանուհւոյն ու իր հաւատարիմ աղայնոյն ըստ սովոր-  
ութեան նստած սրահին մէջ նայիլ :

Այս միջոցիս Օդօբինօյին ամուսինը հասակէն եր-  
կայն ձերմակ զգեստ մը հագած, սրահին մէջտեղը  
փառաւոր թիկնաթոռի մը վրայ կը նստէր ու գլուխն  
ալ ձեան պէս ձերմակ ձեռքին կրթնցուցած կը մտածէր :

Տժգոյն դէմքին ու շրթանցը մարած կարմու-  
թիւնը, ձակաին երկու կողմէն վար դէպ ետին ձրգ-  
ուած երկայն ու խարտեաշ մազերն, կարծես թէ ա-  
նոր երեւին նշանաւոր ու միանգամայն շնորհալի կերպ  
մը սուեր էին :

Սակայն այդ դէմքին վրայ ամենէն աւելի նշա-  
նաւոր բանն Երանուհւոյն աչքերն էին . . . Այն խո-  
շոր ու երկնագոյն աչքերը, հրեշտակային անմեղու-  
թեան ներքեւ, աշխոյժ ու եռանդուն հոգի մը կը  
քարոզէին . . . այն աչքերը, որոնք աշնուութեան հետ  
կուսական պարկեշտ վեհանձնութիւն մը ցուցնելէն  
դատ՝ չեմ գիտեր ինչ քաղցր ու հրապուրիչ ողի մը  
կը ներշնչէին : Վերջապէս այն ժամանակաւ պարզ,  
նուազ, սակայն միանգամայն արթուն աչքերը՝ օյժմ  
մարած ու խորացեալ, երկչոտ ու ցաւալից վրձակէ  
մ'ո՛րբիչ բան չէին ցուցնէր :

Իսկ Լաուրէդա, ժամ մ'առաջ տիրուհւոյն ձը-  
գած կարը լմնցընելու մաքով, քիչ մը հեռուն սե-  
ղանի մ'առջեւ նստած կաշխատէր :

Երանուհի որչափ ալ գլուխը բազկին կրթնցընե-  
լով, ու երեսն ալ աղայնոյն դարձուցած անոր աշ-  
խատանացը հող տանել կը ձեւացընէր, սակայն այն  
միջոցին իրապէս աչքին բան չէր երեւնար, վասն զի  
խեղճին սիրտը գաղտնի սարսափով մը գրաւուած էր :

Վերջապէս Երանուհի ոտքի ելաւ ու ծանր քայ-  
լերով գնաց դէպ 'ի բաց պատուհանի մը առջեւ, եւ  
արմուկն այն պատուհանին երկաթին դնելով՝ բաւա-  
կան ժամանակ լուս կեցած դուրս նայեցաւ : Երեկո-  
եան արեգակը, արդէն իւր երեսը հեռուն ամենա-  
բարձր անտառի մը ետեւը ծածկած էր եւ հաղիւ թէ  
իր տժգոյն, նուազ եւ միանգամայն ասդիս անդին  
ցցուած մանր բլուրներէն բեկբեկեալ ճառագայթնե-  
րովը՝ խոնաւ դաշտը կրնար լուսաւորել :

Ամառուան ծանր ու թանձր օդը, դորտերուն  
երկայն ու ձանձրացուցիչ կարկաչուովը լեցուած էր :  
Գեղին շուրջը գտնուած ճահիճներուն ու մանր առ-  
ուակներուն վրայէն երբեմն երբեմն գորշ գոյնով ամպ  
մը կը բարձրանար, որն նոր կամաց կամաց տարաձ-  
ուելով մերձակայ առարկայից վրայ, ամենուն աչքէն  
կը ծածկէր զանոնք :

Սրեգական լուսոյն քանի մը թելերը՝ որչափ ալ  
այս խիտ ու թանձր գոլորշին նախ եւ առաջ կը պա-  
տառէին, սակայն կամաց կամաց օրհասականի մ'առ-  
չաց պէս նուազելով կը մարէին, մինչեւ որ տուընջ-  
եան լոյսը բոլորովին սպտոեղով՝ ամենէն մօտ առար-  
կաներն անգամ մարդկան տեսութիւնէն զրկեց :


Տարաբաղդ Երանուհին պզտիկուց 'ի վեր իւր  
հայրական ապարանքներէն արեգական ամենաչքեղ ու  
փառաւոր կերպով մարը մտնելը քանի քանի անգամ



տեսնելուն չիշատակը միայքը բերելով, սրձարեկ պատուհանէն ներս քաշուեցաւ ու գնաց հառաչելով նրատաւ սեղանի մ'առջեւ, որուն վրայ Լատրէդա քիչ մ'առաջ նուազ լուսով կանթեղ մը վառած էր :

Ժամանակ մը երկուքն ալ լուռ կենալէն վերջը, բարի աղախինն ելաւ պատուհանին փեղկերը դոցելու : Սակայն հաղիւ թէ նստած տեղէն մինչեւ պատուհանին կէս ճամբան գացած էր, յանկարծ քնարի մը ձայնը հնչեց երկուքին ալ ականջին : Լատրէդայի ձեռքը փեղկին վրայ մնաց, իսկ Երանուհի, նստած տեղը ցուցամասը շրթանցը դրած՝ սկսաւ ականջ տալ : Այս մերամաղձ եղանակն իրեն ծանօթ էր, ուստի ինք ալ վերստին ոտք ելլալով, կամաց կամաց գնաց դէպ 'ի նոյն պատուհանը, եւ աւելի լաւ ըսելու համար՝ դուխն ալ դուրս հանելէն վերջը՝ ցած ձայնով ըսաւ Լատրէդայի . — Միծառնին նախերգն է, բայց կեցիր ահաւասիկ երգը կ'սկսի : Եւ յիրաւի հետուէն քնարի ներդաշնակութեանը յարմարցնելով նուազ ձայն մը սկսաւ յետագայ ողբը երգել :

Ո՛վ իմ պանդուխտ ծիծառնիկ,  
Որ վանդակիս վրայ նստած  
Ամեն աւտու կը նուագես  
Ձայդ քո նուազ տխրազգած :  
  
Եւ այլն . . . . .



### Գ ԼՅՈՒՅԻ ԻԷ

Երգը լմնալուն պէս՝ Երանուհի դուարթ դիմօք, — Թրէմաքօլտօն է, ըսաւ, ես ձայնէն ճանչցայ : Ո՛հ, ո՛ գիտէ, թերեւս եկած է ինծի ուրիշ մէկ . . . երանի՛ թէ կարենայի մէկ մը զինքը տեսնալ . . . իցէ թէ հաւատարիմ մէկու մը դէմքը տեսնալով, կարենայի սա տարակոյտս փարատել :

— Բայց ի՞նչ կասկած է ունեցածդ, Աստուծոյ սիրուն համար ըլլայ, ինչո՞ւ համար դարձեալ փոճ տեղը ինքզինքդ կը խռովես . ահաւասիկ Օդօրնօ խոստացած է երկու օրէն հոս դառնալ, ուրեմն . . .

— Լո՛Ք, ըսաւ Երանուհի, աղախնոյն խօսքը կըտրելով, ու մատը դարձեալ շրթանցը տանելով՝ ուշադրութեամբ կ'սպասէր, յուսալով թէ երգը նորէն ըսկրտի : Սակայն փոխանակ այն քաղցր ու ներդաշնակ ողբերգութեան, ուրիշ բան չէր լսուեր՝ բայց եթէ այն ընդարձակ դաշտին վրայ մէկմէկէ բաւական հեռաւորութեամբ շինուած հիւղերէն շուներուն ոտնալով՝ իրարու պատասխանելուն ձայնը :

Վերջապէս Երանուհոյն ամենայն յոյսը պարապի ելլալով, մինչդեռ աղախինը փեղկերը կը դոցէր, վերադարձաւ մէջտեղի սեղանին քովը, շարունակելով քիչ մ'առաջ իրենց միջհատեալ խօսակցութիւնը :

— Ինծի կը հարցընես թէ՛ ի՞նչ կասկած կրնամ ունենալ, եւ թէ ինչո՞ւ տխուր եմ : Երանուհի այս հարցումն այնպիսի եղանակաւ մ'ըբաւ, որ կարծես



թէ լեզուին տակը մեծ գաղանիք մ'ունէր դուրս հանելու : Սակայն վերջը՝ իւր գեթաղդութեանցն ընկեր Լաուրէզայի աչացը մէջ նայելով, որ նոյն միջոցին քովը գալով նստելու վրայ էր, 'ի խորոց սրտէ հառաչանք մ'արձակելով՝ լռեց :

— Ի՞նչ կայ, ըսաւ Լաուրէզա այլայլելով մը, թերեւս նոր բան մ'իմացած ես, դու անպատճառ դաղանիք մ'ունիս . ըսէ՛, ըսէ՛ տեսնեմ :

— Չէ՛, չէ՛, գնահանդարտէ՛, բան մը չի կայ :

— Ի՞նչպէս հանդարտիմ, ի՞նչպէս կրնամ ես . . . արդէն ես երէկուրնէ 'ի վեր քու սրտիդ վրայի նոր վերքը նշմարած եմ . այնպիսի սպի մը՝ դոր ինծմէ ծածկելու կը ջանաս : Սակայն պէտք է որ ինծի ըսես, ըսէ՛ տեսնեմ :

— Ձիս մի՛ նեղեր, կը պատասխանէր դարձեալ Երանուհին :

Սակայն աղախինը, տիրուհոյն մէկ ձեռքը խանդաղաասանօք իւր ձեռացը մէջ առնելով, սկսաւ ազօջել, արտասուել . — Սիրելիդ իմ Երանուհի, քաղցրիկդ իմ տիրուհի, միթէ՛ դու չըսիր ինծի որ բոլոր կենացդ մէջ պատահած ամենայն բարեաց ու թշուառութեանցդ մասնակից պիտի ըլլամ :

— Ո՛վ իմ բարի Լաուրէզաս, կանչեց Երանուհի, մեծաւ դժուարութեամբ աչքին արցունքները բռնելով. իմ թշուառութեանցս վրայ ամենածանր բեռ մը եղողը՝ միսիայն դու ես . որ իմ ու նախկին տէրանցդ սիրուն զոհուած եւ հոս ինծի հետ ծնողաց քաղցր մխիթարութենէն զուրկ՝ ո գիտէ ի՞նչ վերջ . . . սակայն Աստուծոյ ողորմութիւնը անբաւ է, Աստուած դբեղ կը փրկէ . . . հաւատաւ ինծի եւ գիացիր՝ որ բո-

լոր դիս պատող՝ տառապանացս մէջ դբեղ աղօթքէս չեմ մոռցած :

— Վայ ինձ, գոչեց աղախինը եւս առաւել սարսափած, քու այդ խօսքերէդ անմիջապէս կը հետեւի թէ՛ մեր գլխուն նոր թշուառութիւն մ'ալ եկած պիտի ըլլայ . Աստուծոյ սիրուն համար ըլլայ, զրուցէ՛ սա գաղանիքդ եւ ազատէ՛ զիս այս անտանելի տանջանքէս :

Այս խօսքին վրայ՝ Երանուհի ուրի վրայ ելլալով, առջեւի սեղանին վրայ կեցած մեծկակ տուփը բացաւ, ու մէջի թղթերը ցուցնելով՝ նայէ ըսաւ, այս թղթերը կը ճանչնաս :

— Այո՛, ամեն օր ձեր ամուսնէն եկած նամակները չե՛ն :

— Ես ալ մինչեւ հիմայ այնպէս կը կարծէի, սակայն դիտնաս որ այս նամակները Օգոստինոյէն չեն եկած :

— Աստուծոյ ողորմութիւնը հասնի մեր վրայ, գոչեց Լաուրէզա, եւ մեռելի պէս երեսին գոյնը ձերմըկացաւ . . . սակայն ըստ կարեւրոյն ինքզինքը ժողովելով ըսաւ, մեակից կըցար իմանալ :

— Այս կուրծքս խոթած ձերմակ վարդը՝ երէկ դու չի բերիր ինծի :

— Այո՛, մեղի ամեն օր կերակուր բերող պառուը տուաւ :

— Եւ չըսիր թէ բերդապահին կինը խրկեց զայն ինծի :

— Այնպէս է :

— Գիտես թէ ո՞վ է այդ պառուը :

— Գիտեմ, Բելէկրուայի կինն է՝ դոր քու մայրդ



այն այրեկոծեալ օրը բերդին մէջ պահելով, զիրկն ունեցած տղեկին հետ միատեղ փրկեց շարագործաց ձեռքէն :

— Շատ աղէկ . այս կինը յիշելով այդ անմոռանալի բարիքը , եւ ալ սիրտը չի դիմանալով՝ տեսնալու ամեն օր այսպիսի դժոխային մեքենագործութեամբ մը զիս անտանելի կերպով տանջելին , երէկուան ինծի խրկած վարդին տերեւներուն մէջ պզտի նամակով մը ինծի կ'իմացնէ օտարներու ու դաւաճաններու ձեռքն ինկած ըլլալնիս : Կրնաս երեւակայել թէ՛ այս լուրը զիս ինչպիսի խորին անգուռի մէջ ձգած է : Ո՞ դիտէ թէ Օդօրինօն ինչ եղած է , ո՞ գիտէ թէ տակաւին զիջ է . ապա թէ ոչ՝ քաջ գիտեմ որ զիս մինչեւ հիմայ չէր թողուր . . . : Ի՞նչ եղան արդեօք ծնողքս . եւ մենք՝ ո՞վ Աստուած , երկինք միայն գիտեն , ինչպիսի մարդկանց ձեռքն ինկած ըլլալնիս , եւ այս բերդն ալ Օդօրինօյն եւ կամ . . . ըլլալը :

— Ո՛հ , Աստուած իմ , մեղի պէս երկու անմուղաց վրայ՝ միայն քու զթութիւնդ կը հրաւիրեմ , կը հառաչէր Լաուրէզա :

— Հիմայ քեզի ըսեմ , կը շարունակէր Երանուհի , իմ ան ու դողիս ինչ բանի վրայ հիմնած ըլլալը : Դու պէտք է լաւ յիշես իմ հօրս ու հօրաքրօջս հետ Մարքօ Ախաբօնթիին խնջոյքը հրաւիրուելով՝ անոր պալատը կրթալնիս . . . :

Բայց այս պատմութիւնը սկսած վայրկենին , յանկարծ դէպ 'ի սրահը բացուած խուցին դուռը սկսաւ դուրսէն խառնուիլ :

Աղախինը վախնալով՝ թէպէտեւ նստած տեղէն չուտ մը ցատկելով ուզեց դուռը բանալ , սակայն Ե-

րանուհի անոր ձեռքէն բռնած , տեղէդ չի պիտի շարժիս կ'ըսէր . ցած ձայնով ալ , չեմ ուզեր՝ որ այս ատեն մէկու մը դուռ բանաս :

— Լաուրէզա , Լաուրէզա , կը կանչէր դուրսէն Բէլէկրուայի սովորեալ ձայնը . ասպետ մը եկած է եւ Օդօրինօյէն լուրեր ունենալով , կ'ուզէ անձամբ տիրուէնոյդ հետը տեսնուիլ :

— Ապր , թո՛ղ վաղը դայ , հիմայ անկարելի է , սկսաւ կանչել աղախինը ներսէն , տեղէ բռնուածի պէս գողալով :

— Կ'ուզէ հիմայ իրեն հետը խօսիլ , կը շարունակէր դուրսէն Բէլէկրուա , աղէկ լուրեր ունի իրեն հաղորդելու . . . : Բնց ուրեմն , պիտի բանաս , այո՛ ո՛չ . . . ապա թէ ո՛չ , քեզի կը հասկցնեմ յամառիլը : Մինչդեռ այսպէս 'ի դուր եւ բաւական ժամանակ դուռը ձեռքերով եւ ոտքերով դուրսէն կը զարնէին ու կը խառնէին , ներսը մեր բանտարկեալները , երկու երկչոտ ու գողդոջուն աղաւնեաց պէս իրարու պըր լուած՝ պատասխան չէին տար . այսու ամենայնիւ , դուռն ալ չէր բացուէր , վասն զի ներսէն աղէկ կը դպած էին : Երկար ժամերէ վերջը՝ դուրսի ձայները բոլորովին կտրելով , մեր երկու երկչոտները հազիւ թէ սկսեր էին քիչ մը շունչ առնել . մէկ ո՛ւալ յանկարծ նստած տեղերնուն ետեւէն բաւական ուժով քամի մը փչելով՝ քիչ մնաց սեղանին վրայի կանթեղին նուաղ լոյսը պիտի մարէր : Սարսափով մը երկուքն ալ միատեղ կրեմնին ետեւ դարձնելով՝ տեսնաւ որ խուցին պատէն , մինչեւ հիմայ իրենց անձանթ գաղտնի դուռ մը բացուած՝ երկու մարդ ալ դէպ 'ի ներս յառաջ կուգան :



Լաուրէզա՝ երկու ձեռքերովն երեսը ծածկելով, մեծ աղաղակ մը հանելէն վերջը՝ նստած աթոռին վրայ կծկեցաւ մնաց : Սակայն Երանուհի վեհանձնութեամբ մը ոտքի վրայ ելաւ եւ մէկ ձեռքն ալ սեղանին վրայ դնելով՝ դարձաւ Բէլէկրուայի, զոր տեսածին պէս ճանչցաւ, ինչպէս որ ճանչցեր էր Լօտրիզիօն ալ : Եւ հանդարտ ու խաղաղ կերպով մը ըսկրասաւ առաջինին ըսել :

— Բերդապահ, կը տեսնեմ թէ խուցդ փոխած ես . հոս կը բնակի քու ըստ սովորութեան տէրդ անուանած անձիդ ամուսինը :

Այն երկու չարապործներուն այսպիսի կոշտ կերպով ներս մտնելէն՝ զգացած յանկարծահաս սրտմտութիւնը, կարծես թէ Երանուհւոյն երկիւղը խափանած էր : Կարծես թէ այս յեղակարծ դէպքը՝ անոր բոլոր մարմնոյն տկարութիւնները գորացնելով, զինքը քաջառողջ վիճակի մը փոխած էր : Այսերը՝ այն 'ի վաղուց կորուսած կարմրութիւնը վերստին ստացած էին, աչքերն ալ հրաբորբոք կը ցոլային : Աերջապէս բոլոր դէմքը խաղաղ ու պատկառելի համարձակութեան մը հետ՝ կուսական քաջութիւն մը զգեցած էր :

Մեր երկու դահլճները զարմանքէ յափշտակուած՝ թէեւ վայրկենական, սակայն անդիմադրելի յարգանքի մը փոխեցին իրենց զայրոյթը : Բէլէկրուայի սատանայացեալ աչքերը՝ սկսան վար նայիլ : Լօտրիզիօն ալ առաջին անգամ սկսաւ իր զիտաւորութեանցը վրայ երկրայիլ : Հպարտ ու անգուժ ժպիտ մը արդիւնք անոր արտաբերել իր զօնին դէմ պատրաստած այսպանողական խօսքերը, եւ գլուխն առջեւը կախելով խոնարհ կերպով մը սկսաւ թոթովել :

— Թաղութիւն կ'ընէք տիրուհիդ իմ, չէի կարծեր . . . եւ դրեթէ այսչափով ես դառնալու կը պատրաստուէր, սակայն չուտ մը ինքզինքը ժողվելով ըսաւ : — Կը յուսայի թէ՛ Օղորինօյի վրայ ձեզի տալու լուրեր ունենալովս, աւելի ապահով . . .

Երանուհի, որ իւր ամուսնոյն անողբելի թշնամին տեսածին պէս, սրտին մէջ նորանոր երկիւղալից կասկածներ ծագած էին :

— Ասպէս, պատասխանեց . բայց առանց կարենալու նոյն միջոցին իւր բոլոր անդամոցը մէջ զգացած ցնցումը պարարկելու . ինծի պէս թշուառ ու անմեղ մը մի թշնամանէր : Ես արդէն ձեր իշխանութեանը տակ կը գողամ, ինչպէս որ յայտնի է թէ հիմակուան ձեր յիշած անուան տէրն ալ՝ նոյն վիճակին մէջն է . եւ այս միջոցիս անոր անունը ձեր բերանն առնելը՝ ուրիշ բան չի յայտնէր, բայց եթէ ձեր կողմանէ անոր անձին դէմ 'ի գործ գրուած եղեռնագործութեան մը խոստովանութիւնը, եթէ այս իմ մարգարէութիւնս ճշմարիտ է, ալ ինքզինքս պաշտպանելու ուրիշ զէնք մը չի մնար՝ բայց եթէ արտասուք . . . Ես սպիկար կ'իմ մը, քաջուած այս անձանօթ անկիւնը, հետու զիս պաշտպանողներէն, ինծի դէմ եղած մեծ անիրաւութեան ականատես մը ու գոհացուցիչ վրայ մ'ալ չունենալով, կը տանիմ նաեւ իմ ետեւէս այս խեղճը, (աղախինը ցուցնելով) բայց չեմ զիտեր ուր, թերեւս յանդուհոյ յետին թշուառութեանց : Աերջապէս ինքզինքս ձեր ճիշտներուն տակ ընկճած կը տեսնամ, այնպէս որ եթէ ուղենաք՝ հողմատատան եղեգան մը պէս այժմէն կրնաք ջախջախել զիս : Բայց զիտնաք որ մեզմէ վեր Աստուած մը



կայ, Աստուած մը՝ որուն ամենայայտնի են երկրիս վրայ ամենածածուկ կերպերով գործուած ոճիրները եւ անյաղթելի զօրութիւն մը՝ չի կրնար ըլլալ իրեն համար: Աերջապէս այնպիսի Աստուած մը՝ որ վշտացելոյն արցունքները կը տեսնայ, եւ որ մեծադոյնն է՝ ինք անծամբ դատախազ կը ներկայանայ վշտացողին դէմ:

Այսպէս ինքզինքը աղջիկէ մը խայտառակուած ու պախարակուած տեսնալով, Լօտրիզիօ որչափ ալ կը ցամառ, սակայն Բէլէկրուայի առջեւ պզտիկ ինկած եւ աղջկան մը կշտամբանացը սյուշափ համբերելով յարգանք մատուցանելուն վրայ ինքզինքէն անդամ անչցած, ժողովեց ու ամփոփեց ինքզինքը եւ ընտանեկան մտերմութեամբ մը:

— Մտիկ ըրէ, սերելիս, ըսաւ Երանուհուն, մի կարծեր թէ քեզի պէս աղջկան մը վայելուչ են այդ կերպերը, ամենեւին ոչ: հանդարտէ, հանդարտէ, եւ այսպէս ըսելով դէպ 'ի Երանուհի քանի մը քայլ յառաջ գնաց:

— Հեռացիր, սկսաւ կանչել Երանուհի մեծաւ այլալուծեամբ, եւ այս միջոցիս դարձեալ, հեռացեր, կանչելով՝ վազեց դէպ 'ի մեծ պատահանի մը առջեւ՝ որուն փեղկներն ալ արդէն բաց էին:

— Ինեղեցմար, խողաղէ, զքեզ պիտի ուտի, անաւասիկ կեցած տեղէս չեմ շարժիր, եւ եթէ կ'ուզես՝ դարձեալ առջի տեղս դառնամ... շատ բան էս միմիայն քու բարեալոյ համար կ'ուզեմ խօսիլ...

— Իմ բարեացս համար, պատասխանեց Երանուհի, դնան, ել այս խօսքերէն դուրս, այս է քու բարիքդ եւ ասկէ աւելին չեմ կրնար սպասել ձեզմէ:

— Ըսել է որ՝ ես ձեզի ասկէ ուրիշ բարիք մը կարող չեմ ընելու:

— Ո՛հ, այո, մանաւանդ թէ անկէ մեծ բարիք մ'ալ կարող էք ընելու: Այսինքն՝ դիս այս մահուան տանջանքէս աղատելով՝ իմ ծնողացս դարձնելու ձգել որ սիրելի մօր մը գրկացը մէջ հոգիս աւանդեմ: Ո՛հ, եթէ սրտիդ մէջ գթութիւն կայ, մի՛ զլանար, 'ի սէր Աստուծոյ իմ այս խնդիրքս կատարելու:

Այս միջոցիս Լաուրէդա դողդալով տիրուհուն զգեստէն ուժով բռնած էր, վասն զի կը վախնար թէ յուսահատական վայրկեան մը չտրուէ զինքը պատահանէն վար նետուելու: Իսկ Բէլէկրուա, միւս կողմանէ երկու ձեռքերովն ու գլխովը՝ Երանուհուն հանդարտելու ու խաղաղելու ձեւեր ընելէն չէր գաղտեր:

Երանուհի խօսքը կարածին պէս, Լօտրիզիօ ըսկըսաւ իր անտարբեր կերպերովը շարունակել:

— Գէշ կ'ընես, աղջիկս, շատ գէշ: Ո՛հ, դու իմ վրաս խիստ չափազանց ու անտեղի գաղափարներով միտքդ պզտորած ես, սակայն ընդհակառակն ես կ'ուզեմ... եւ զիտցիր յայտ յանդիման թէ՛ քու անձիդ վրայ ամենեւին գէշութիւն մ'ընելու ոչ խորհուրդն եւ ոչ ալ զիտաւորութիւնն ունեցիր եմ մինչեւ հիմայ: Ուստի մի՛ վախնար թէ զքեզ կարող եմ կռելու: Քիչ մը շեռակ կեցիր, ու գլուխդ ալ վեր առնելով մէկ մը երեսս նայէ, կարծեմ թէ հրէշ մը չեմ, եւ մտիկ ըրէ՛ քեզի ըսելիքս...: Սրդէն կը տեսնամ թէ իմ կարծածէս աւելի տեղեկութիւններ ունիս: Աւելի աղէկ, այսպէսով աւելի դիւրին կ'ըլլայ մեր դործն առաջ տանել: Գիտցիր ուրեմն թէ



Օղորինօն , որ քու ամուսինդ պիտի ըլլար . . . . .

— Արդեօք տակաւին ո՞ղջ է , հառաչեց Երանուհի :

— Կեցիր որ խօսքս ընցընեմ , ողջ կամ մեռեալ՝ այդ քու գիտնալու բանդ չէ :

Երանուհի այս պատասխանին վրայ յանկարծ ամբողջ մարմնովը ցնցուեցաւ , զոր տեսնելով ասպետը շուտ մը վրայ բերաւ :

— Այո՞ ողջ է , մի՞ դողար , Օղորինօն ողջ է :

— Ես ալ կրնամ զբեզ ապահովցընել թէ Օղորինօն ողջ ու հանդիսա է , բսկելով , Բէլէկրուսն ալ խօսքի խառնուեցաւ , ողջ է եւ մօտերս ալ Երուսաղէմ կրթալու համար ձաւթայ պիտի ելլայ :

— Ինչպէ՞ս , առանց ինձի . . . : հարցուց Երանուհի . ո՞չ , սուտ է անգութներ , ինչո՞ւ զիս այսպիսի նորահնար թոյներով չարաչար կը տանջէք : ես ձեզի ինչ եմ ըրած , ես ձեզի ինչ չարիք եմ հասուցեր :

Եւ սրտին անձկութենէն յողթուած՝ Երանուհի գլուխը ձեռնով սկսաւ յորդառատ արցունքներ թափել . սակայն արտասուելը շուտ մը կտրեց , եւ քանի որ արտասուաց կաթիլները տակաւին երկու այտերէն վար սահելով կուրծքը կ'ոռագէին , ինք՝ գլուխը վեր առաւ , վախնալով որ չըլլայ թէ նոյն միջոցին մէկը քովը մօտենայ :

Նոյն միջոցին՝ Բէլէկրուսն ընկերոջը աչք կ'ընէր , չըթուցները կը խածնէր , ուսերը վեր վեր առնելով կուղէր ըսել թէ . — տեսնո՞ր հիմայ , քու ուղածիդ պէս խստութեամբ վարուիլը , ահաւասիկ քաղած պըտուղդ : Սակայն այն անպիտանը գլուխն այսպիսի չարժելով մը անոր պատասխանեց , որ կ'ուղէր ըսել

թէ , թշուառական , դու մի խառնուիր , ինձի ձգէ : Աւերջը դարձեալ խօսքն Երանուհոյն ուղղելով կը շարունակէր :

— Գու հիմայ կուլածս , եւ մէկ կողմանէ ալ կը գթամ քու վրադ . . . այնչափ ատեն միայն անոր բարեացը համար աշխատեցար , եւ այժմ ստիպուած կը տեսնաս ինքզինքդ զանի սրտէդ հանելու : Սակայն ինչ կուգայ ձեռքէդ , պէտք է երբեմն ձգել որ ջուրը իր ուղած տեղը վաղէ . . . սէրը կ'անցնի , կը տեսնաս թէ քիչ ատենէն . . . հաւատո՞ս ինձի , պիտի անցնի . . . եւ վերջը քեզի հետ աւելի համարձակ պիտի կարենամ խօսիլ : Թէ որ դու ճշմարտապէս անոր բարիքը կուղես , պէտք է որ նախ պինքը աղատես . այնպէս չէ , ուրեմն գիտցիր որ անոր կեանքն ու մահը քու ձեռքդ է :

— Ո՛հ , ինչ կ'ըսես կանչեց Երանուհի , նոր սարսափ մ'ալ աւելցընելով ունեցածներուն վրայ , արդեօք կրնամ այդ խօսքերուդ հաւատ ընծայել . չըլլայ որ անոնց ներքեւը նոր դաւ մ'ալ լարուած ըլլայ : Գթացէ՛ք իմ վրաս , գթացէ՛ք ալ այս տանջանքէս լքեալ անձիս վրայ : Ըսէ՛ք ինձի ճշմարիտը . եւ այսպէս ըսելով (երկու ձեռքերը կուրծքը կը գնէր) : մեծաւ անձկութեամբ կ'աղաչեմ ձեզի , ինչպէս որ դուք ալ պիտի պաղատիք այն գերագոյն դատաւորին՝ ձեր կենաց վերջին շունչն աւարտելու միջոց . որպէս զի ձեր յանցանացը թողութիւն չորհէ : Լսեն այս աղաչանքս ձեր ականջները , ինչպէս որ կ'ուղէ՛ք թէ ձեր ձայնն ալ լսելի ըլլայ այն ահաւոր վայրկենին . զրուցեցէ՛ք , այն ձեր պաշտած Աստուծոյ սիրուն համար ըլլայ , թէ արդեօք ճշմարիտ է Օղորի-



նոյի մահուան վտանգի մէջ ըլլալը, եւ թէ ես կարող եմ իրեն օգնելու :

Մեր անդգամը, որ դոնէ կը հաւատար թէ Աստուած մը եւ թէ յաւիտենական կեանք մը կայ, չի կրցաւ իւր բոլոր շար զիտաւորութեամբը հանդերձ, Երանուհւոյն աղաչանալը անտարրեր կենալ : Ուստի կերպը փոխելով եւ մեծաւ կանկածանօք,

— Ատանդը ստոյգ է . . . այո՛, յայտ մասին կըրնամ զբեղ ապահովցնել հողուոյս վրայ երդունալով, եւ ճշմարիտ է թէ դուք միայն կրնաք զինքը փրկել :

— Քայց ինք ձեր է, իրեն հասնելու վտանգն ինչ է, եւ ես ինչ կերպով կրնամ զինքը փրկել :

— Ո՛հ, մէկ վայրկեանի մէջ՝ ամեն բանի կուզէք տեղեակ ըլլալ : աղջիկս, անյայտի բաներ կան՝ որ չեն կրնար ըսուիլ եւ զանոնք պրպտելն ալ անտեղի է : Սակայն հիմայ սա չափ կրնամ ըսել թէ որ խելացի կերպով վարուիք, Օդօրինոյի կեանքը կ'ապահովցունէք . զայս կը խոստանամ ձեզի իբրեւ բարի քրիստոնեայ, եւ եթէ այս խօսքիս մէջ զձեզ խաբելու դիտաւորութիւն մը ունիմ, թող անմիջապէս այս կուրծքիս վրայ զրամ ձեռքս բորոտի : Օդօրինօն չի պիտի մեռնի, եւ հոս մեր բանտապահին ըսածին պէս՝ կրնայ քիչ առեմէն ալ Պաղեստին երթալ . մանաւանդ թէ դուք ինքնին պէտք է որ զինքը ստիպէք այս ճամբորդութիւնն ընելու, վասն զի ինծի ալ ասպահովագոյնը կերեւայ :

— Ըսէք ինծի ուրեմն, ինչ կ'ուզէք ինծմէ, ըսէք տեսնեմ ինչպէս կրնամ փրկել զինքը, թէ որ իմ արիւնս, կամ թէ իմ կեանքս . . .

— Ամենեւին, ամենեւին . . . դարձեալ մի սկը-

սիք այլայլելու : Իմ երեսս ալ այնպէս սարսափած աչքերով մի նայիք, առաջ եկէք, նստեցէք ու ձեր հանդատութեանը նայեցէք : Իմ եւ կամ ուրիշի մը վըրայ մի կասկածիք, վասն զի ամենքն ալ պատրաստ են ձեզի թագունելոյ պէս յարգանք մատուցանելու, եւ հոս ձեր տունն է եւ հետեւաբայ այս տանը փրուէին ալ դուք էք :

— Իրան կ'ըսէք, ուրեմն, հիմայ իմ զանուած բերդս Քասթէլլէթօ է, եւ թէ ճշմարտապէս իմ ամուսնոյս տանը մէջն եմ :

— Դարձեալ այս ամուսինը բերնէն չի թողուր . Օդօրինօն ձեր ամուսինը չէ :

Երանուհի ձեռքերը երկինք վերցուց, եւ առանց բառ մը արտաբերելու՝ աչքերն ալ իր բունաւորին երեսը յառած ապշած մնաց, քանի որ միւսը դարձեալ կը շարունակէր :

— Ձեր այն Միլանու մէջ՝ իբրեւ պսակ կոտորած արարողութիւնն անվաւեր է . դուք սակաւին աղջիկ ըլլալով, կարող էք ըստ ձեր հաճոյից ո եւ է ուրիշ անձ մը ընտրել իբրեւ ձեզի ամուսին : Եւ եթէ կուզէք այս բերդին որուն ըլլալը գիտնալ, կրեսմ ձեզի թէ այնպիսի հզօր, անուանի ու ահարկու իշխանի մ'է, որուն առջին բոլոր իշխանազունք կը խոնարհին, եւ ինք ուրիշ մէկու մը չի խոնարհիր, բայց միայն ձեր զիմաց գեղեցկութեանն առջեւ :

Լաւարէզա զողողալով՝ կրտոր տեսաւ թէ իր փրուէին ալ չի խօսիր, ինք զժգոհ եւ խղզուկ ձայնով մը հարցուց . — Ո՛հ, Աստուած իմ, ուրեմն մեր զըտնուած բերդն է . . .

— Բոզաթէ, վրայ բերաւ միւսը, Մարքօ Վիսքօնիին բերդը :



Լօտրիդիօ՝ այս վերջին բառերը արտաբերած ժամանակը, Երանուհի արդէն մեռածի պէս աղախնոյն գիրովը ինկած էր . որն որ արտասուածից աչօք իւր ախրուհին մինչեւ խուցին անկիւնը պատրաստ անկողնին քովը տանելէն վերջը, ամբողջ մարմնովը դեռնալէն վեր առաւ եւ զինքը անկողնին վրայ տարածեց :

Մինչդեռ մէկ կողմէն Բօզաթէ բերդին մէջ այս գաղտնի արկածները կը պատահէին, միւս կողմէն Լուբօ, բարձր օրը ձիու վրայ ճամբայ կարելէն հոգնած, կիջնար պանդոկ մը . եւ ձին ախոռը քաշելով՝ իրեն ուղածին պէս անասնոյն ուտելիք տալէն վերջը՝ կերկըննար դէպ ՚ի խոհանոցը, որպէս զի իրեն համար ալ քիչ մը կերակուր պատրաստել տայ : Շուտ մը ուղածը եփուելով սեղանի նստաւ ու լաւ մը կշտանալէն վերջը, դառնալով վերստին պանդոկապետին քով, նոյն դիշերն հոն անցընելու համար պառկելու խուց մը օւղեց :

— Հոս, իմ խուցիս մօտ սենեակ մը տամ քեզի՝ որ հանգիստ ըլլաս, ըսելով պանդոկապետը կանթեղն առած Լուբօյի առջեւն ինկաւ : Սակայն, հաղիւ թէ երկուքն ալ խոհանոցէն դուրս ելլալու վրայ էին, յանկարծ օւրիշ երկու զինեալ անձինք ալ ներս մտան, ու նախ եւ առաջ Լուբօյի վրայ լաւ մը նայելէն ու զննելէն վերջը, ասոնցմէ մէկը պանդոկապետին ուտին զարնելով, «Վերեւայ թէ ասոնք իրարու հետ ՚ի վաղուց բարեկամ եղած պիտի ըլլան» ըսաւ :

— ձօքօքօթթօ, մենք երկու երիվարով երկու հոգի ենք ու վաղը արեգակը ծագելէն վերջը պանդոկէն դուրս պիտի ելլանք :

Այս լսածին պէս մեր պանդոկապետը՝ նոյստա-

մայն ձեռքի կանթեղը վար դրաւ եւ Լուբօյի դառնալով, — Ես հիմայ կուգամը կոխեց . վերջը՝ այն նոր եկողին թեւը մանալով մտերմաբար դէպ ՚ի ծխնեղուղը տարաւ, ու սանի մը մէջ եփած ոչխարի սղոր մը մը ցուցընելով՝ — նայէ մէկ մը կ'ըտէր, սա քու բերնիդ պատշած թագաւորական կերակուրը : Անոր որ այս համեղ կերակրոյ գովաբանութիւնն ուղղուած էր, նոյստամայն ծռեցաւ՝ իբրեւ լաւ մը կերակուրը զննելու ձեւով, ու պանդոկապետին մօտենալով ակտնուջէն վար բան մը գրուցեց : Անկէ վերջը պանդոկապետը յստակ ձայնով մ'ըսաւ . — Հիմայ կը մնայ երթալ ախոռը տեսնալու : Արդէն ներսը տեսած օտարականիդ երիվարն ալ հոն կապուած է . շիտակն ըսելով՝ երեքներնուդ ալ երիվարը մի եւ նոյն ախոռին մէջ դտնուիլն շատ անտեղի եւ դժուարին է, սակայն ըստ կարելոյն պէտք է յարմարցընել :

Այս ըսելով երկուքն ալ միատեղ դուրս ելան, քիչ մը վերջը միւս զինեալ մարդն ալ՝ որ մինչեւ ցածմ բերանն անդամ բացած չէր, անոնց ետեւէն դուրս ելաւ : Լուբօ՝ այս միջոցին ասոնց բռնած կերպերէն նենդաւորութիւն մը կասկածելով, կամաց կամաց ինք ալ մինչեւ խոհանոցին դուռը եկաւ, ու տեսաւ որ՝ դուրսը պզտի դաւթի մ'անկիւնը, ուսկից ախոռը կիջնուէր, մեր պանդոկապետն ու միւս երկու զինուորները կեցած՝ մեծ խորհուրդի մը վրայ էին : Լուբօն տեսածնուն պէս շուտ մը մէկն ասկէ միւսն անկէ մէյմէկ ծակ մտան, որպէս զի դուրս փողոցը ելլալով, իրենց խորհուրդը շարունակեն :

— Վ՛նչ կը նշանակէ այս երկու զինուորաց այսպիսի պանդոկ մ'իջնալը, ըսաւ ինքնիրեն Լիմոնդա-



ցին, կառնածելով մը, չըլլայ որ ասոնք ինծի նոր ծուղակ մ'ալ լարելու միտք ունենան: ուրիշն քնանալէն լաւագոյն է արթուն կենալը: Ուստի քովէն կախած թուրն ու դաշոյնը լաւ մի դնելէն վերջը, այն կ'ըսէր, դարձեալ լաւագոյն է արթուն կենալը:

Յիշ մը վերջը՝ պանդոկապետը Նուբոյին քովը դարձաւ, եւ անոր հանգստութեանը հոգ տանել կեդծելով՝ առջի ցուցքած խուցէն դէպ 'ի ներս ուրիշ խուց մը տարաւ: եւ հազար ու մէկ պատճառներ մէջ բերելէն վերջը, կ'ըսէր թէ այս խուցին անկողինը լաւագոյն՝ եւ թէ աղմուկէ ալ հեռու ըլլալով գիշերը խիստ հանգիստ կրնար անցնել: Նուբո, երբոր ասոր աճապարելը տեսաւ, եւս առաւել իր կառնածանայը մէջ հաստատուելով, նոյն ժամայն գուշակեց ասոնց իրեն դէմ նոր դաւ մ'ալ պատրաստելու միտք ունենալին: Ուստի խորհուրդ խորհրդի վրայ, վերջապէս Նուբո պատասխանեց պանդոկապետին թէ՛ երկու ուրիշ երկվար ալ նոյն նեղ ախոռը կապել հարկ ըլլալուն, ինք՝ ո եւ է պատճառաւ չէր կրնար իր աշխոյժ ու կատաղի երկվարը միւսներուն քով վտանգի մէջ դնելով մինակ ձգել: եւ թէ այս պատճառաւ պէտք էր նաեւ՝ որ ինքն ալ նոյն գիշերը փոխանակ խուցի մը մէջ պառկելու, իր երկվարին գտնուած ախոռը պառկի:

Ուստի մեր Նիմոնդային անմիջապէս ախոռ կ'երթայ եւ ձեռքը իր սիրելի երկվարին դաւակը գնելով՝ կարճ վրնջմամբ մ'անոր բարեւը կ'առնու, եւ ինքնիրէն խորհելով կ'ըսէ. — լաւագոյնը ճամբան շարունակեն է: Սակայն վերջը կը մտածէ թէ՛ անասունը հոգնած է եւ իրաւունք ալ ունի խեղճը հոգ-

նութիւն առնելու, վասն զի մէկ շունչով յետուս մըդոն ճամբայ ըրած էր եւ միւս օրն ալ նոյնչափ ճամբայ պէտք էր կտրել: Այս խորհրդածութիւնն ըրած ժամանակը, շարունակ կը փայփայէր իր քաջալանջ երկվարը՝ որն որ մեծ ախորժակով ուտելու զրաղած էր: — Թոնեմութիւն ալ չէ գիշերանց եւ այսպիսի ժամանակ դէշ ճամբաներու մէջ իյնալը: ուստի սպասեց որ արշալոյսը ծագի: Այսու ամենայնիւ ես արթուն պիտի կենամ, արդէն գիշերներն ալ երկայն չեն: այս գիշերուան չորս հինգ ժամուան ծախած քունս՝ վազը երկվարիս վրայ կ'առնում: Այս պայմանով եւ չի քնանալու մտքով երկնցաւ ախոռին մէջ յարգի մը դէզլին վրայ:

Հոն սկսաւ մտածել ու խորհրդածել, աչքին առջեւ բերելով պանդոկապետին յանկարծակի փոփոխութիւնը, եւ աւելի հանգիստ ըլլալու համար իրեն ուրիշ սենեակ ցուցնելը, թէպէս եւ ինք պանդոկապետին ոչ ծանօթն էր եւ ոչ ալ կոմսի մը կերտարանքն ունէր: Այլ մտածէր նաեւ կրակէ վախնալ կեղծելով՝ պանդոկապետին գիշերը վառելու համար իրեն կանթեղ մը չի տալը: վերջապէս պանդոկէն ներս մտած վայրկեանէն մինչեւ այն կէտը պատահած բոլոր դէպքերն միտք մի յիշելով, ամենախին կերպով մը չէր կրնար ինքզինքը համոզել, թէ ասոնց խղճմանաճը մտքուր ըլլայ:

Ստով հանդերձ Նուբո, կեղբոնացնելով իր բոլոր ուշադրութիւնն՝ այս երեք անպիտաններուն վրայ, սկսաւ 'ի սկզբանէ մինչեւ վերջը՝ իրենց բոլոր շարժմունքներն ու խօսակցութիւնները կարգաւ քաղուածք բնել, եւ վերջապէս երկու զինուորաց մէկուն պան-



դոկէն ներս մտած ժամանակն՝ ըրած ժպտը իրեն բուրրովին անձանօթ չերեւցաւ :

Ուստի, երեւակայութեամբ եւ դառնալով, իր բանտէն փախած օրէն մինչեւ հիմայ տեսած բոլոր անձանց կերպարանքները, սկսաւ աչացն առջեւը բերել : Սկսաւ վերստին յիշողութեանը ներկայացնել Ռիզքալտինայէն մինչեւ Միլան ձիով ըրած ճամբորդութիւնը, նոյնպէս ալ բոլոր ճամբուն վրայ իրեն պատահած անձինքը՝ սակայն եւ ոչ մէկուն ժմիրոն՝ այդ անպիտանին կեղծաւոր ժմտին չը կրցաւ նմանցնել . . վերջը . . . կ'ուզար իր ընտանիքը, Տէլ Պալցօ կոմսն ու կոմսուհին . . . ուրիշ քանի մը ընտանիքներ, սակայն ՚ի դուր . . . : Անկէ վերջը . . . երիվար հեծնալով դռնէն դուրս ելլալը : — Ո՛հ, ահաւասիկ, հառաչեց ինքնիրեն, հիմայ գտայ . . . եւ յիրաւի ալ դատած էր այդ նեղաւոր ժմիրոն ունեցող անձին ո՞վ ըլլալը : Լօսարիվոյի ղինակրաց մէկն էր նա, որոնց անմիջապէս ճամբայ ելած առաւօաբ, Տէլ Պալցօ կոմսին դրան առջեւը պատահած էր : Աւաղակ, կրտէր մտքէն, դուրողրովին հագուստդ փոխեր ես, սակայն դարձեալ ես գքեղ կը ճանչնամ : Ո՛հ, ան է, ան է, եւ ուրիշ մը չի կրնար ըլլալ :

Այն ատեն Լուբօյի սիրտը՝ վախ մը մտաւ, որ չըլլայ թէ այս ուռկանին թելերը աւելի առաջ երթալով, դարձեալ հասնին ու կապկպուին իւր սիրտը հետ միատեղ զինքն ալ բւտող թելերուն հետ . . . : Ուստի երեւակայութիւն երեւակայութեան վրայ, մեր Լիոնեղացին հագար ու մէկ խորհրդածութեանց մէջ ընկղմած էր, լայց կարծես թէ գաղտնի ձայն մը իրեն միշտ կ'ըսէր . — զգուշացիր քու անձէդ :

Լուբօ՝ որչափ մինչեւ ցայն վայր իր արթուն կեանալու առաջադրութիւնը կրցաւ պահել, սակայն այնչափ օր ձիու վրայ հոգնած, եւ ինչպէս որ մեր ընթերցողը գիտէ), անկէ առաջ ալ երկայն օրեր ու գիշերներ անտանելի եւ սրտատանջ վիճակի մէջ քրնհատ անցուցած ըլլալուն համար, վերջապէս առաջադրութիւնը բնութեանէն յալթուելով՝ ճոն պառկած յարդի կոյտին վրայ քուեր տարաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

Երազին մէջ կը տեսնար թէ՛ ինք արդէն Լուբօք հասած՝ փառաւոր սրահի մը մէջ Մարքօ Վիտթօթիին դիմացը կեցած էր, սակայն Մարքօյի աչքերը շարունակ կէտի մը վրայ յառած ու ապշած կը մնային : Լուբօ կը խօսէր՝ սակայն Մարքօ չէր պատասխանէր . Էրմէլինայի տուած նամակն անոր կը ներկայացնէր, սակայն Մարքօ ձեռք չէր երկնցընէր դանի առնելու : Մեր երազողը կ'ուզէր անոր ձեռքը բռնել ու համբուրել, եւ թէպէտ կը տեսնէր որ Մարքօ իր ձեռքերը ծնկին վրայ դրած կը կենար, սակայն ո եւ է կերպով ոչ կրնար անոր ձեռքը տեսած տեղը գտնալ, եւ ալ զայն բռնելով համբուրել : Ի՞նչ դարմանալի բան . . . Լուբօ սրահին մէջ չորս դէն կը նայէր, որպէս զի մէկը գանալով այս գաղտնեաց բանակն ուր ըլլալը հարցընէ : Սակայն մէկը չի գտնալէն :



դատ՝ կը տեսնար որ կամաց կամաց կեցած սրահին ոսկեզօծ դարդերը կ'աներեւութանային . յանկարծ պատերուն վրայ սեւ քող մ'իջնալով , ամեն բան աչքէ կը ծածկէր . գետինն ալ իւր մաքուր ու փայլուն տեսքն ու վիճակը կորսնցընելով՝ ախրմով շաղախած էր , եւ հետուն անկիւն մը յարդի կոյտի մը վրայ պտու կած էր Մարքօ Վիսքօնթի . . . արդեօք Մարքօն է , Մարքօն չէ , Մարքօն չի կրնար ըլլալ . . . ըսելով այս տարակուսական վիճակին մէջ կեցած ժամանակը , յանկարծ Մարքօյի դէմքը Օդօրինօյի փոխուելով՝ կը հարցընէ իրեն , Լուբօ , դ՞ու ես :

— Այո՛ , ես եմ .

— Սակայն դու Լուբօքա երթալու չէիր :

— Այո՛ :

— Ուրեմն ինչո՞ւ համար ճամբադ չի շարունակելով հոս եկեր փակուեր ես . ո՞ն , փախիր , փախիր , մէղք է քեզի , վայ է քեզի :

Հոս երազողին ականջին շատ մ'այլանդակ ազմուկներ սկսան հնչել . եւ որչափ ալ իր աչքերը դոց էին՝ այսու ամենայնիւ կարծես թէ յանկարծական նուազ լոյս մ'աչքերը լուսաւորեց : Եւ ինչպէս որ խիտ շատ անդամ երազներու մէջ կը պատահի , առաջուց մտացը մէջ տպաւորած ո եւ է բան մը , երեւակայութեան տաքցած ժամանակը , աչացն առջեւը կը ներկայանայ ու մեծաւ մասամբ ալ կը յարմարի . երազողին ալ այնպէս երեւաց որ՝ Օդօրինօ այս խառն ազմուկներէն ու յանկարծական սենտուած լոյսէն վախցած , դարձեալ կը շարունակէր . — Ահա , հոս կը փաղեն գքեզ սպաննելու , փախիր , զդուչացիր : Այն ատեն Լուբօ կ'ուզէր վազել , պոռալ , քովի դաշոյնը քա-

չել , սակայն անկարելի էր իրեն մէկ ոտքը միւսէն զատելը : Կարծես թէ ձայնը խղղուած ու բազուկն ալ բռնուած էր :

Այս սրտատանջ վիճակին մէջ մեր Ալմոնդացին տապալելու ատենը յանկարծ կ'իմանայ որ մէկը կատաղաբար կոկորդը կը սխմէ եւ միւսն մ'ալ բոյոթ մարմնոյն ծանրութեամբը իրեն վրայ կը նստի : Ունալով մը կ'արթննայ , աչքերը կը բանայ . սակայն ասիկայ երեւակայութիւն չէր : Առջի իրիկուրնէ պանդոկը եկող երկու անպիտան զինուորները , ծուռկերովին Լուբօյի կուրծքը կոխեր էին , ասոնց մէկն աւնոր շնչափողը կը սխմէր , միւսն ալ ձեռքը դաշոյն մ'առած Լուբօյի սրտին կատաղի հարուածներ կ'իջեցընէր , մինչդեռ պանդոկապետը՝ ասոնց ետեւէ անցած ձեռքն ալ կանթեղ մը , ցած ձայնով կ'ըսէր . — Աղէկ բռնէ , նայէ որ չելլայ . դու ալ թատերիսօ , ուժով ու շիտակ սրտին դճրկ :

— Զդեստին տակէն դրան հագած է , անոր համար դաշոյնին ծայրը չի բանիր , կը պատասխանէր շարը :

— Հիմայ , հիմայ , ըսաւ պանդոկապետը , դուք լաւ բռնեցէք , երկու քնիդ ալ լաւ բռնեցէք . եւ կանթեղը դետինը գնելով , վաղեց դրան ետին կեցած հաստ ձոզն առնելու :

Խեղճ Լուբօն , որ այս երկու զինուորաց հզօր ու ջղոտ բաղկաց ներքեւը կը տապալէր , վերջին ճիգ մը թափելով , կրցաւ իրեն հետ երկու զինուորներն ալ միատեղ տակն ու վրայ , մօտակայ ձիւղունս ոտիցը տակ դրորի : Անասունը լսած աղմուկէն ու եւս առաւել իր ոտքերուն տակն ապոնց իրարու վրայ թա-



ւալելով մէկ մէկու տուած անողորմ հարուածներէն խրտելով, աչքերն ու ռնգերը բաց կատաղաբար հասած տեղը կից կ'արձակէր . եւ երբեմն ալ երկու ետեւի ոտիցը վրայ կանգնելով վար ինկած ժամանակը տակը դանուողներուն անմիջապէս մէյմէկ անդամը կը ջախջախէր : Բարեբաղդաբար այս վտանգէն ազատելու համար, մերինները զիրար ձգելով փախանս Լիմոնդացին ոտքի վրայ ելլողներուն առաջինը եղաւ . փայլակի պէս քովէն թուրը քաշեց եւ պանդոկապետը զիմացը տեսնելով, որն որ ինքզինքը ձիուն տուած հարուածներէն պաշտպանելու համար քիչ մը հեռուն փախած էր, այնպիսի կատաղութեամբ վրան յարձակեցաւ, որ մինչեւ թուրին դաստապանը անոր փորը խոթեց :

— Գու գնա մէկ մը դժոխք, ըսաւ Լուբօ, տեսնալով անոր գետինն ինկած եւ աղիքներն ալ դուրս թափած արեան մէջ լողալը : Վերջը՝ նոյն կատաղութեամբ դառնալով երկու աւարառուաց մէկուն, որն օր հազիւ թէ ձիուն կիցերուն տակէն թողտած՝ մեծաւ բարկութեամբ իր վրայ կ'ուղար . ա՛հ, դժու ես, կանչեց Լիմոնդացին, այս կերպով կ'ուպաննեն քրիստոնեայները . եւ այս ըսելով, այնպիսի վարպետութեամբ մը խաղցուց ձեռքի թուրը, որ նախ եւ առջ անոր դաշոյն բռնած աջ բազուկը ուսէն վար ձգեց, վերջն ալ այտին մէկը կտրեց հանեց : Մեր արիւնշառղոտի գազանը՝ ժամանակ մը ոտքի վրայ երկու կտրեց ձերմակ ակոսները կրճտելով կենսալէն վերջը՝ դանդաղելով դէպ ՚ի պատը կանակին վրայ գետինն ինկաւ :

Հիմայ կը մնար երրորդը . սակայն ասիկայ իր

անձին վտանգը տեսնալով, ճարպիկաբար ձիերուն տակիցը տակէն սողալով մինչեւ միւս կողմը ելած՝ հազիւ թէ վերջի ձիուն ետեւէն կը դառնար, որպէս զի դռնէն դուրս փախի . անասունը խրտելով կատաղի կից մը արձակեց, ուսկից բարեբաղդաբար ազատեցաւ : Սակայն թնչ պիտի բէ մեր ընթերցողը, երբ որ լսէ թէ երկվորին այս վարմունքը թշուառականին կեանքն աղատեց . . .

Այո, որովհետեւ ձին կից արձակելու ժամանակն ուժ աւնելու համար դուրսը վեր առածին պէս, կապուած երասանը բրցընելով ցատկեց ակոսէն դուրս, ճիշդ այն միջոցին՝ յորում մեր երկրորդ զինեալն ու Լուբօյի թշնամին ալ՝ դրան առջեւը կը գտնուէր : Ուստի, առջեւէն անցած ժամանակը՝ շուտ մը անոր բաշին պլլուելով վրան ցատկեց, եւ նոյն դիրքին մէջ սկսաւ ձիուն վրայ անտառներ, ձորեր, դաշտեր ու մացառներ անցնել ու գնալ : Լուբօ բաւական ճամբայ անոր ետեւէն վագելէն վերջը, տեսնելով որ ՚ի դուր կը հողնի, նորէն պանդոկը դարձաւ, վախնալով որ չըլլայ թէ նորանոր չարագործներ վրայ հասնելով՝ իր անձին վերստին վտանգ մը հասցնելու ջանան :

Մտաւ ուրեմն նախ պանդոկին դուրսի դաւիթը եւ անկէ ալ ակոսէն ներս, եւ ուրիշ մարդ չի գտաւ ըսոյց եթէ երկու պատժուած անօրէնները : Լօտրիզիօյի զինակիրը մտած էր, սակայն պանդոկապետը ձեռքին մէկը աղիքներուն վրայէն արիւնլուտայ վեր առաւ եւ իրեն երկնցներով կ'ըսէր .

— Ինձի բարիք մ'ըրէ . . . ճարաւի եմ . . . հոն դուրսը անկիւն մը լեցուն ջուրով տակառ մը կայ,



անկէ ինծի դոնէ ունայ մը ջուր բեր, վասն զի կը պատկանի :

Լուբօ չուտ մը դուրս ելաւ, ու ջուրը ձեռքը ներս մտաւ : վիրաւորեալը մեծաւ փախադանօք խըմեց Լուբօյի բերած ջուրը, եւ վերջը դառնալով ըսաւ :

— Ո՞վ ինծի կրնար մարդարէանալ այս ջուրն աղբիւրէն բերած ժամանակս թէ՛ փոխանակ զքեզ սպաննելէն վերջը արիւնոտած տեղերը մաքրելու : Գի՛տ վերջի շունչս աւարտելէն առաջ պատկանումս յագեցընելու պիտի ծառայէր . . . :

Մեր Լիմոնդացիին շուտ մ'իւր երիվարը պատրաստեց ու վրան հեծաւ . այն ատեն պանդոխապետը տեսնալով որ ալ կ'երթայ, վերջին ճիգ մ'ալ ըրաւ յետագայ խօսքերն անոր ըսելու համար :

— Գոնէ վերջին բարիք մ'ալ . . . եթէ քրիստոնեայ ես . . . զիս մի ձգեր որ մահացու մեղաց մէջ մեռնիս . . . հոս ճամբուն ծայրը . . . զանգակատուն մը կայ . . . անկէ քահանան ինծի խրկէ :

Լուբօ խօսք տուաւ ուզածը կատարելու, եւ յիշաւ ալ դեղին կանոնիկոսին տանն առջեւէն անցած ժամանակը, դուռը զարկաւ, եւ սլառուհանէն նայողին պոռայ : — Պանդոխապետը զքեզ կ'ուզէ . . . շուտ ըրէ, վերջին օժման իւզն ալ հետդ առ, ու հասիր :

— Ի՞նչ կայ, ի՞նչ եզու, հիւանդացան, բարեկամ, բարեկամ, կը կանչէր ետեւէն կանոնիկոսը . ոտկայն մեր երիտասարդը առանց պատասխան տալու ճամբայ տուաւ երիվարին ու անցաւ :

Լուբօ ճամբուն վրայ մինակ առաջ գացած ժա-

մանակը, երբեմն երբեմն ցաւած ու ընկճած անդամները կը շօշափէր, եւ մարմնոյն վրայ առդիս անդին դաշոյնին բարակ ծայրոյն ընդունած հարուածոց ըսպիներուն վրայ նայելով, — Ի՞նչ բարդ, կ'ըսէր ինքնիրեն, որ զգեստիս տակէն իմ օղակաւոր զրահն հագած կը դանուխիմ : Քիչ մ'առաջ երթալէն վերջը սկըսաւ ուսին մէկը սաստիկ ցաւիլ . սա ալ անշուշտ երկու աւագակաց հետ գիրկ գրկի՛ երիվարաց ոտքերուն տակ կուռելու ժամանակը կից մը կերած ըլլալէն պիտի ըլլար : Վերջապէս մեր վերոյիշեալ աւարտուեաց մէջէն՝ աջ այտին վրայ դաշոյնի հարուած մը առած ըլլալուն համար, ձեռքն այտին բռնած, կ'ըսէր . — Տես սա անպիտան Լօտրիդիօյին բռնած ճամբան . ետեւէս մարդ խրկել՝ ոչխարի պէս զիս սպաննելու համար, մանաւանդ ինծի պէս մէկը՝ որ ամենեւին իրեն չարիք մ'ալ չեմ հասուցած : սակայն ես քաջ գիտեմ գործին էութիւնը . . . տակաւին տիրոջս գէմ ունեցած բարկութիւնն ու նախանձը չի կարենալով յագեցընել . . . :

Իսկ Երանուհւոյն յափշտակուելուն զալով, ես անտարակոյս կրնամ հաստատել թէ՛ ան ալ Լօտրիդիօյին ձեռօքն եղած է . . . Երէկ առաւօտ իրեն պատահած ժամանակս վրիէս մինչև ոտիցս ծայրը լաւ մը դիտելէն վերջը . . . զինակրին աչք ըրաւ . . . եւ ան խրտուելալն ալ, տիրոջը հնազանդելով՝ որսի ետեւէ վազող շան պէս ետեւէս հասաւ . . . : Սակայն հոգ չէ, կարծեմ թէ մեր այս խաղն ալ գէշ չի վերջացաւ, թող դայ հիմայ Լօտրիդիօ ու զրկած շան սատակը պանդոկին ակոսին մէջ սեխի պէս գետնից զլորած տեսնայ :



Այս միջոցիս արշալոյսն սկսաւ ծագիլ , ճամբուն վրայ անցնող դարձողներն սկսան տեսնուիլ : Գեղացիք իրենց գործիններովն աշխատելու կը վաղէին , դաշտերն ու ձորերը՝ կամաց կամաց արեղական ճառագայթներէն տաքնալով , լեռներէն վեր խիստ գուրշի մը կը բարձրանար . թաշուհներուն ճուղիկը , ասդին անդին դաշտերուն մէջ ու ձառերուն տակ ոչխարներուն ու կաթնատու կովերուն ծանր քայլերով արածիլը . վերջապէս նորածին բնութիւնը Լուբոյի մտոցընել տալով բոլոր քաչաճն ու կրած թշուառութիւնները , միտքը բոլորովին Մարքոյի՝ եւ զանի գլուհալու համար տակաւին ընելու ճամբուն վրայ կեդրոնացուց : Մէկ մ'ալ յանկարծ իր ձախ կողմը այգիի մը մէջէն սկսաւ հազար ու մէկ այլանդակ ձայներ լսել . ոսանք , — զարկէք , զարկէք , մէկ մասն ալ , կեցէք , կեցէք , կը պօռային : Վերջը տեսաւ որ գեղացուց խուռն բազմութիւն մը կատաղաբար անասանձ հեծեալի մը ետեւէն կը վաղէին : Գիտէք թէ ո՞վ էր այս ողորմելին . ասիկայ պանդոկին մէջ զԼուբօ սպաննել ու դողներէն մէկն էր , որ մեծաւ հրաշիւք Լիմանդացուց ձեռքէն կրցած էր ազատիլ : Հեծածը մատակախաղ , ստուերախիլառ ու անասանձ երկվար մ'ըլլալով կատաղաբար ձորերէ ու մացառներէ ցատկելով կ'անցնէր : Մտուերն ու որթեր՝ ոտքերուն տակ կը կոտորէին , իսկ գեղացուց չորս կողմէն բրցուցած աղաղակն ալ եւս առաւել կը խրտեցընէին զանասունը : Փոշխապատ ու փրփրած , երկու լայն կողերն ու կուրծքն ալ արիւնաշաղախ , չնչաստղառ վրնջելով , աւանջները կախած , վիզն երկնցուցած ու պրչն ալ վեր առած , վայրի գաղանի մը պէս՝ անցած ճամբուն

վրայ գետնին հողին հետ կարկուտի պէս քարի կըտորներ կը տեղար չորս կողմը : Իսկ վրայի հեծեալը՝ միշտ երկվարին բաշը բռնելով վրան կիճած կեցած էր , երբեմն երբեմն ալ — օգնութիւն , կը կանչէր :

Լուբօ տեսածին պէս ճանչցաւ զինքը , ու շուտ մը կեցաւ տեսնալու՝ թէ ինչ վերջ պիտի ունենայ այդ խեղճին վիճակը : Նրիվարը դեռ բաւական ժամանակ ասդին անդին բազմութեան առջեւէն վաղվըզելէն ետքը , զախէն եւ հողնելէն աչքերը մի՞ննալով՝ դնաց բոլոր ուժովը մեծ ծառի մը կոճղին դարնուեցաւ . այնպէս որ նոյն ժամայն իրեն հետ միատեղ վրայի հեծեալն ալ գետինը զլորեցան :

Նրիվարին վիշը խորտակեցաւ , իսկ վրայինը նոյն միջոցին կատուի պէս ճարպիկութեամբ վար ցատկելով , մէկ տեղը չի ցաւած ոտքի վրայ կեցաւ . եւ մինչդեռ զգեստին վրայէն փոշին մաքրելու դբաղած էր , յանկարծ նոյն գիշերը երկու հարուածով իր երկու ընկերները միւս աշխարհքը խրկող սատանան ետեւը սնկուած տեսաւ , այսինքն Լուբօն . որն որ իր երկվարը դաշտին մէջ ձգելով ինքն ալ եկած խառնուած էր այն խառնիճաղանձին մէջ : Տէր Աստուած , ըսաւ զինուորն ու երեսին գոյնը նետեց , ու զարմանալով մը առջեւը ծուրը դրաւ , ու սկսաւ աղաչել Լուբօյի՝ որ իրեն կեանքը չնորհէ :

— Գու ո՞վ ես , հարցուց Լուբօ :

— Պարոն , կը պատասխանէր անյարմար ժամանակ բռնուողը . ես թշուառ մէկն եմ , այդ իմ ըրածս ամենեւեւ իմ կամօքս ու թշնամութեան համար չէր . այլ միմիայն հինգ հատ դաւակացս քիչ մը հաց մատակարարելու համար , Բասերիտօյի հետ այսպիսի եւ



դեռնադործութեան մը ձեռնառու ըլլալու յանձնառու եղած էի :

— Սակայն անիկայ ինչ պատճառաւ ինձի հետ թշնամացիր էր :

— Չեմ գիտեր :

— Ի՞նչպէս չես գիտեր :

— Յիրաւի չեմ գիտեր . եւ կրնաս հիմայ զիս հոս մեռցնել՝ դարձեալ բանէ մ'ալ անտեղեակ եմ : Բասերինս այս գիշեր իմ առնես եկաւ ու ըսաւ , եկնու իմ հետ քեզի ոսկի Ֆիօրին մը կայ , ասկէ ուրիշ բան չեմ գիտեր . այնչափ որ տակաւին ձեր սոլ ըլլաին ալ չեմ գիտեր :

— Կեցցես ուրեմն , որ առանց իմ սոլ ըլլալս անգամ գիտնալու , ամենայն յօժարութեամբ զիս սպաննելու համար ճամբայ եղած էիր :

— Գթնա՛ , տէր իմ , իրաւունք ունիս , հիմայ զիս ինչ որ ուզես կրնաս ընել . սակայն իմ զաւակներս քեզի կը յանձնեմ . . . Հաւատո՛ւ ինձի , որ զանոնք սովամահ կորսուելէ աղատելու համար այս շարագործութեան ձեռք դարկի . այսպիսի դէշ ատեն մը տեսնալ աչացդ առջին քու զաւակացդ սովատանջ . . . :

Լուբօ , ոսկի Ֆիօրին մը դրպանէն հանեց ու դետինը նետելով ըսաւ . — Ասիկայ քեզի համար չէ , այլ միայն քու որդւոցդ համար , եւ զիտցած ըլլաս՝ որ կէս ժամ առաջ այս փաստերդ ստակ մ'ալ չարժեկով դու ալ միւս երկուքին քոնջ ինկած էիր . զնա ուրեմն եւ ազօթք ըրէ՛ քու պահապան հրեշտակիդ : Այս ըսելով , Լուբօ դարձաւ իր ճամբան շարունակելու :

Վերջապէս , Լուբօ քաղաքը հասնելով , Լուբօ շուք խոռոն բազմութեան մը պոռալ կանչելը . եւ

չուտ մը դուշակեց թէ՛ ժողովուրդը ապստամբելով ոտք ելած է : Որչափ առաջ կերթար՝ այնչափ բազմութիւնը եւ ազմուկը կ'աւելնար . ամենուն ձեռքը դէնքեր ու սանդուխներ օդուն մէջ շարժելով կ'երթային : Այն ամբոխին , կատաղի ծովու պիւսպ պէս մինչև յերկինս բարձրացուցած ձայներուն մէջէն՝ երբեմն երբեմն կը լսուէր նաեւ զանգակի մը փխուր եղանակաւ զարնուիլը :

— Ի՞նչ կայ դարձեալ , հարցուց Լուբօ ձեռքը մեծ շամբուր մը առած տանը դռնէն դուրս գէպ՝ ի բազմութիւնը վազող երիտասարդի մը :

— Ձեռ գիտեր , պատասխանեց երիտասարդը . Տէրութեան պալատը կործանելու կ'երթանք , պէտք է այն ուրացողները լուրտովին ջնջել : Եւ այսպէս ըսելով առջևէն անցաւ եղաւ :

— Տէրութեան պալատը կործանելու , ըսաւ Լուբօ ինքնիրեն . եթէ չեմ սխալիր , Տէրութեան պալատ ըսածը ձիշա Մարքոյի բնակած տունը պիտի ըլլայ : Եւ այս լուրին վրայ սիրան ալեկոծած՝ քիչ մ'ալ առաջ գնաց , աւելի ստոյգ տեղեկութիւն մը ստանալու մտքով , սակայն չուտ մը խորհելով թէ՛ ժողովրդեան մը բարկութեան նիւթ եղած անձի մը վրա վերդեան մը բարկութեան նիւթ եղած անձի մը վրա յօժարակապէս բազմութեան մէջ տեղեկութիւն յով՝ բացարձակապէս բազմութեան մէջ տեղեկութիւն եւ վստաւոր բան մը կրնայ հարցնելը , անտեղի եւ անտեղեկ եւ քիչ մը առաջ վերը տեսած պանդոկի մը առջին երթալով ներս մտաւ :

Պանդոկապետն ու սրբին՝ դուրս ելած ըլլալուն համար , Լուբօ բարեկամաբար պանդոկապետին կնոջ հետը խօսակցութեան նստաւ , եւ վարպետութեամբ առդիէն անդիէն հարցումներ ընելով , կնոջ բերնէն ,



իրեն պէտք եղածէն աւելի ուղած նիւթին վրայ տեղեկութիւն առաւ :

Ահաւասիկ ժողովրդեան ոտք ելլալուն պատճառը : Մարքօ , բաւական ժամանակէ 'ի վեր' քաղքին կառավարութիւնը իր տեղապահին յանձնելով , Ֆիօրէնցա զգացած է եղեր . տեղապահն ալ շատոնց 'ի վեր իրենց կրքերը յաղեցնել ուղող անուգամ զօրաց սանձերը՝ վիզերնին է ձգեր , անոնք ալ սիսեր են աներկիւղ՝ ամենայն եղեռնագործութեան ձեռք զարնել : Եւս քաղաքացիք , մէկ կողմանէ տեղապահին ներքին կառավարութեանէն ճնշուած , միւս կողմանէ ալ կասկածելով թէ Մարքօ իրենց քաղաքը Ֆիօրէնցայի Հասարակապետութեան ծախելու համար օտարկութեան վրայ է , ամենքը միատեղ ոտք են հեր :

Մեր Լիւմնդային , որն որ առջի բերան զՄարքօ փոռնդի մէջ կը կարծէր , միտքը դրաւ կամ զինքն ազատել եւ կամ իրեն համար մեռնիլ . սակայն երբոր քաջ տեղեկացաւ թէ նա կրակէն հեռու է , սիրտը հանգստացաւ : Եւ իրեն ալ Լուքքայի մէջ ուրիշ գործ մը չի մնալուն , միտքը դրաւ որ ճամբան դէպ 'ի Ֆիօրէնցա ուղղէ : Այսին զի շատ աղէկ դիտեր թէ Էրմէլինտայի տուած նամակին վարկեան մը առաջ Մարքօյի ձեռքն հասցընելով՝ դուրս երեք հոգւոյ կենացը փրկուելուն պատճառ կրնայ ըլլալ . ուստի վերստին հեծնալով ճամբայ ելաւ : Լուքքայէն Ֆիօրէնցա գնալու ճամբան բաւական երկայն ըլլալով , մեր ընթերցողները չի ձանձրացնելու համար , ձգենք ճանապարհորդնիս մինակ իր ճամբան շարունակելու , եւ մենք ալ տեսարանը փոխելով՝ դառնանք քիչ մը Մարքօյի քով :

### Գ Լ Ո Ւ Խ Ի Թ .

Մարքօյի՝ առ Լօարիզիօ գրած վերջին նամակէն ետքը , ինչպէս որ ընթերցողը քաջ կը յիշէ՝ թէ Բէլէկրուայի ձեռքէն ընդունած էր դայն (Րօզաթէ բերդին մէջ) , Լուքքայի մէջ գործերն օր աւուր դէշնալու վրայ էին : Անչաղ , թափառական , անողորմ եւ ու է է հրահանգէ դուրկ Ալամանեայի խումբերը՝ այնչափի հասեր էին , որ բացարձակապէս Ախքօնթիի հպատակութեանէն սպստամբած՝ քաղքին մէջ ամեն տեսակ եղեռնագործութիւններ կընէին :

Մարքօ՝ ամեն օր այս անսանձ սրիկայից հոգ կը տանէր . երբեմն իր անուամբը մարդ խրկելով եւ երբեմն ալ իր ներկայութեամբն ու խօսքերով , կը զբսպէր զանոնք :

Քանի քանի անգամներ քաղաքացիները կոտորելու մտքով՝ անոնց հարիւրաւոր խումբերուն քաշած թուրերը , միմիայն իր ներկայութեամբն իրենց պատեանը դարձուցած էր :

Այսու ամենայնիւ , Մարքօ լաւ կը ճանաչէր իր բռնած թելէն կախուած եւ 'ի սկզբանէ անհատատ հիման վրայ կանգնած տէրութեանը ուժը . քաղաքացիք ալ փոխանակ Մարքօյի հետ միմանալով՝ այս անսանձ ստատանները դուրս փռտելու , իրենք իրենց մէջ բաժնուած , մաս մը Մարքօյի վրայ բարի համարում չունէին , մաս մ'ալ իրենց նախկին կառավարութեանը կը փափաքէին , մաս մ'ալ բոլորովին Մար-



քօյի ոխերիմ թշնամի եղած էին : Մէկը՝ անոնիջապէս  
 Լուքքացի իշխանի մը հնազանդութիւն կը պարտէր ,  
 միւս մ'ալ Մարքօյի աւատականաց հետ հաշտութիւն  
 ընելու վրայ կը բարկանար, վերջապէս մէկն՝ այս կու-  
 դէր, մէկն այն կ'ուզէր, եւ բան մ'ալ առաջ չէր եր-  
 թար : Այսպէս Մարքօ , երկու սուրի մէջ մնացած՝  
 երբեմն մեծ չարիք մը խափանելու համար , պղտի ան-  
 կարգութեան մը աչք կը գոցէր . եւ ասով Մարքօ ոչ  
 թէ արդարութենէ կ'ուզէր շեղիլ , այլ ղինուորական  
 դատաստանն իրեն ղէկ առած ըլլալուն՝ այնչափ բա-  
 րակը չէր նայեր : Աերջապէս սա կ'ուզէնք հետեւցը-  
 նել թէ Մարքօ՝ ո եւ է կերպով չէր կրնար յոյս մը  
 ունենալ՝ քաղաքացիքը Ձերուիօյի խումբերուն ղէմ  
 հանելու : Որոնց նաեւ ամենէն աւելի մտածելու բանն  
 էր ղէնք չունենայնին . եւ միւս կողմանէ ալ ժողո-  
 վուրդը այն մեծ պակասութիւնը ունէր , որ իրարու  
 մէջ բաժնուած ըլլալով , պզտիկները մեծելուն ղէմ  
 ու մեծերն ալ ժողովրդեան ղէմ շարունակ գտողա-  
 նայէն չէին դադրեր :

Իսկ այն քիչ մը առաջ պատմուածին սէս , Լուք-  
 քացւոց՝ անբութեան պալատը կործանելու մտքով  
 ոտք ելլալնին , միայն քաղքին մէկ դրան կողմնակե-  
 րուն գործն ըլլալով , մէկալնոնք անոնց օրինակին չէ-  
 ին հետեւած : Այնպէս որ Լուքօ , հազիւ թէ հինգ  
 վեց մըն ճամբայ ըրած էր , անոնք արդէն ոչխարի  
 պէս իրենց տունը քաշուեր էին , բաց 'ի քսանի մը  
 չափ կատաղիներէն՝ որոնք հրապարակներու մէջ չա-  
 րաչար կերպով Գերմանացի ձիաւոր զօրաց նիզակնու-  
 րէն հարածուեցան : Ահաւասիկ այս եղաւ միայն իրենց  
 ապտտամբութեան պտուղը :

Ասկէ կը տեսնուի թէ Մարքօ խիստ դժուարին  
 վիճակի մը մէջ կը գտնուէր , թէ մեծերը եւ թէ ժո-  
 ժողովուրդը կառավարելու համար :

Աերջապէս Մարքօ քաջ գիտելով թէ Լուքքացի  
 կառավարութիւնը այս կերպով շատ չի քչէր՝ ձեռքէն  
 կ'երթայ , Գերմանացւոց մեծերուն հետ զաղանապէս  
 յարմարելով , մտածեց ժամ մ'առաջ Լուքքա քաղա-  
 քը Ֆիօրէնցայի հասարակապետութեան ծախել :

Այնպիսի փառաւոր քաղքի մը համար վճարուե-  
 լու որոշուած գումարէն , մաս մը Գերմանացի զօրաց  
 երկար ատենէ 'ի վեր պարտաւորեալ թոշակը պիտի  
 վճարէր , մասամբ մ'ալ կ'երեւայ թէ դարձեալ նոյն  
 խումբերը դո՛ւ ընելով՝ կ'ուզէր անոնց հետ Լոմպար-  
 տիա մտնալ , 'ի վաղուց Լօարիզիօյի հետ շարուած  
 խմորնին եփելու համար :

Այսու ամենայնիւ չի կարծուի թէ Մարքօ իր այս  
 վիճակին մէջն խաղաղ ու հանդիստ սիրտ մ'ունէր ,  
 մանաւանդ թէ ընդհակառակն եւս սուսուել դառնու-  
 թեամբք , սրանեղութեամբ ու դժկամակութեամբք  
 լեցուած էր , տեսնալով նորանոր գժտութեանց , թըշ-  
 նամանաց ու երկպառակութեանց հետգճեաէ ծագիլը՝  
 Նրբեմն կը բարկանար կողմնակցի մը դանդաղութեա-  
 նը , երբեմն կը վախնար բարեկամի մ'անհուատոր-  
 մութենէն : Նօրանոր փուշեր սկսեր էին ծլիլ Մար-  
 քօյի սրաին մէջ , իմանալով թէ ծախուելու համար  
 առաջարկուած կովը , փոխանակ ձգելու որ հանդըս-  
 տութեամբ կտոշներէն քաշելով ղինքը տանին , ըս-  
 կըներ էր կատգիլ ու կից արձըլիւ : Ասոնց վրայ ա-  
 ւելցուր նաեւ ցաւալից ամօթխածութիւն մը եւ շա-  
 րունակ տառապանք ու անողորմ սիրոյ մը տուչորումը :



Մարքո մինակ խուցի մը մէջ փակուած , Լուք-  
 քայի ծախուելուն վրայ Յիօրէնցայի հասարակապե-  
 տութեան վերատեսչացը հետ վերջին անգամ սակար-  
 կութիւն մ'ալ ընելու համար մտածած ժամանակը ,  
 աղախին մը դռնէն ներս մտնալով իմացուց թէ՛ Լուք-  
 պարտիպէն սուրնանդակ մը Լուքքայէն անցնելով ե-  
 կած է , ու զինքը տեսնալ կ'ուզէ . — չուտով ներս  
 թող գայ , ըսաւ Մարքո , կարծելով թէ ամեն շա-  
 բաթ Լօտրիզիօյի զրկած սուրնանդակներէն մէկն է :

Կանչուողը , այսինքն Լուքո , ներս մտաւ . ապ-  
 շած եւ ուրախութենէն ինքրիմէ գուրս ելած՝ այնպի-  
 սի մարդու մը դիմացը դանուելուն համար , եւ խօսք  
 մ'ալ չի կարենալով արտաբերել՝ հանեց ծոցէն էրմէ-  
 վնասայի նամակն ու Մարքօյի ձեռքը տուաւ : Վխ-  
 քօնթէն առանց վրայի հասցէն կարդալու , դիմացը  
 կեցած սեղանին վրայ դնելով՝ հարցուց :

— Ուրեմն դու Լուքքայէն կ'ուզաս :

— Այո՛ Լուքքայէն , պատասխանեց Լուքօ տը-  
 կար ձայնով մը , եւ յուզեալ սրտիւ . վերջը քիչ մը  
 շունչ առնելով , եւ բոլորովին սաւին ու վրայ ձգելով  
 անցայ ճամբաս շարունակելու , ըսաւ :

— Սակայն այս վայրկեանս ամեն բան խաղաղած  
 է , յուսամ թէ քեզի նախատինք մը չըրին :

— Ո՛հ , ոչ , ամենեւին , պատասխանեց երիտա-  
 սարդը , սիրտ առնելով անոր ընտանեկան կերպով ը-  
 րած հարցումէն : Եւ թէ որ մէկը . . . արդէն 'ի բնէ  
 նախատինք չեմ կրնար կրել . իսկ այս անգամ որ  
 մասնաւորապէս Ձեզի զրկուած էի , կ'ուզէի տեսնալ  
 ձեր անուամբն ինծի ամենափոքր անարգանք մ'ընե-  
 լու համարձակող անձ մը :

Այս գովասանութիւնը լսելուն պէս , Վխքօն-  
 թի աչքերը վեր առաւ ու դիմացինին գլխէն մինչեւ  
 ոտքերը լաւ մը դիտելէն վերջը՝ քաղցր ժմիտով մը ,  
 կը տեսնամ թէ՛ դու սովորականներուն չես նմանիր ,  
 դու զինուոր եղած պիտի ըլլաս :

— Եւ մինչեւ հիմակ ալ զինուոր եմ :

— Տեսնա՛ր թէ ինչպէս լաւ դուշակեցի . արդէն  
 մեր մորթն ունեցողները , իրենց կերպերնէն կը ճանչ-  
 նամ : Եւ քու դէմքդ , կերպարանքդ ու խօսքերդ կը  
 վկայեն թէ՛ դու պատուաւոր երիտասարդ մ'ես : Լուք-  
 քօ այս գովեստը լսելով կարմրեցաւ սրտին յուզմուն-  
 քէն . իսկ միւսն աւելի քովը մօտենալով , — դու մի-  
 անգամայն քաջ երիտասարդի մը կը նմանիս , կը շա-  
 րունակէր Մարքօ , ըսէ տեսնեմ մը պատերազմներու  
 մէջ դանուած ես :

— Առաջին պատերազմը , յորում դանուեցայ՝  
 Պատասայինը եղաւ . որուն մէջ ձեր հրամանաց տակը  
 պատերազմեցայ . երկրորդը . . . :

Սակայն Մարքօ առանց ձգելու որ Լուքօ շարու-  
 նակէ իր խօսակցութիւնը , զինուորական ընտանու-  
 թեամբ մը անոր այտին մէկը բարեկամաբար իր եր-  
 կու մատերուն մէջն առնելով . — Ո՛հ , ըսել է որ դու  
 այն քսանը չորս ընտրեալ քաջերէն ես . եթէ այդ-  
 պէս է , կը հետեւի թէ մենք իրարու հետ հին բա-  
 րեկամ եղած պիտի ըլլանք :

Չեմ կրնար նկարագրել Լիմոնդացւոյն այս խօս-  
 քերը լսելու ժամանակը՝ զգացած ներքին ուրախու-  
 թիւնն ու ինդու մը : Միայն սա չափը կրնամ ըսել  
 թէ՛ Լուքօ նոյն գիրքին մէջ կը կարծէր թէ , կամաց  
 կամաց թեթեւեալով , ոտքերը գետնէն կը կորէր եւ  
 օդին մէջ վեր կը բարձրանար :



Երբոր Մարքո իր ձեռքն անոր այտէն վար առաւ, Լուբո նոյնժամայն յիտին յարդանօք բռնեց զայն ու համբուրեց :

Այս հաւատարիմ սիրոյ ապացոյցը՝ վեհանձն զօրաւարին սիրաբ շարժեց, որն որ վարժած ըլլալով միշտ դաշտի վրայ զօրաց եւ մեծամեծ վտանդներու մէջ ապրելու, ուրիշ բան այնչափ զինքը չէր զուարթացընէր՝ որչափ զօրաց առ ինքն ունեցած սէրը : Իսկ հիմայ Լուբոյին այս անկեղծ վարժուելը, եւս առաւել Մարքոյի սիրաբ ուրախացուցեր էր, վասն զի բաւական երկար ժամանակէ՛ր վեր բարբոսութիւն օտար ժողովրդեան մէջ կ'ապրէր : Աւստի սրտին յուզմունքը չի կարենալով զսպել, կ'ենչեց .

— Կեցցեն իմ քաջ Միխանցիներս :

— Կեցցէ՛ Մարքօ, կեցցէ՛ մեր զօրախորը, պատասխանեց Լուբօ . հւր են, եւ երանի՛ թէ գային դարձեալ այն օրերը՝ յորում ձեր անմահ անունը բերաննիս՝ յաղթանակաց կը վաղէինք :

— Ինձի նայէ՛, ըսաւ Վիսթօնթիւն զած ձայնով մը, կարելի է որ այն օրերը վերադառնան եւ վերադառնալու ալ մօտ են : Երբոր դու Լուսպարսիա դառնաս, ըսէ քու քաջ նիզակակցացդ ականջէն ( թէ Մարքոյի սիրաբ միշտ ձեզի հետ է ու ձեզի հետ պիտի ըլլայ) . . . իսկ քեզի գալով, լաւ մտիկ ըրէ, ո եւ է ժամանակ, ո եւ է տեղ, ո եւ է վիճակի մէջ զբանուելու ըլլամ, առաջին ամբամ զիս տեսնալուդ, ամենայն աղատութեամբ ինձի մօտենալով, յիշեցնուր ինձի հիմակուան քեզի ըսածս, եւ գիտնաս որ պարայ չես ելլար :

Քանի որ Լուբօ իր չնորհակալութիւններն ու

խոստումներն ընելու վրայ էր : Մարքօ ասոր խօսքը կարելով, ըսաւ .

— Կարծեմ թէ դու մինչեւ հիմայ ինքզինքդ ինձի չի ճանչցուցիր, եւ դրասեղանին մօտենալով գրիչը ձեռքն առաւ ու հարցուց :

— Զինուոր, անունդ ինչ է :

— Լիմոնդացի Լուբօ :

— Լուբօ . . . այս անունը ինձի բարբոսութիւն օտար չերեւար :

— Կարելի է, որովհետեւ այն քաջայաղթ ձեռքն ուրիշ անգամ մ'ալ նոյն անունը թուղթի մը վրայ դրելով՝ ինձի նոր կեանք չնորհած է :

Այսչափով Մարքօ անմիջապէս կրցաւ յիշել այն աղետալի ու միանգամայն անմոռանալի գիշերը, յորում Երանուհւոյն աղաչանօքը զբած էր այն նամակը Ս. Ամբրոսիոսի աքբահօրը . եւ հետեւաբար դուշակեց նաեւ թէ ասիկայ Օգօրինոյի զինակիրներէն մէկը պէտք է ըլլայ :

Եւ ուշադրութեամբ դիմացը կեցող երիտասարդին երեսը դարձնելով իր աչքերը, լաւ մը կրցաւ հաստատել թէ ձիօսարայի օրն ալ անմիջապէս Օգօրինոյի զինակրութեան ծառայողն ինքն էր : Այսպիսի մտքէ չանցած պարադայի մը վրայ դարձանալով, — ինչպէս կրնայ ըլլալ կըսէր Մարքօ ինքնիրեն, որ Լօսթրիլիօ իր ոխերիմ թշնամուտն մարդն ինձի իբրեւ սուրհանդակ զրկէ . եւ կուզէր Լուբոյէն ասոր վրայ տեղեկութիւն ստանալ, սակայն վերջը լաւագոյն համարեցաւ այս դաղանեաց տեղեկ ըլլալ իրեն բերած նամակին միջոցաւ, զոր հաստատապէս կը յուսար թէ Լօսթրիլիոյէն եկած ըլլայ :



Ուստի նամակն առաւ ու բացաւ, եւ առաջին զարմանքն այն եղաւ, որ դանիկայ հասարակ դիրեքտով գրուած տեսաւ եւ ոչ նշանադրով: Եւ քիչ մը սկիզբը կարդալէն վերջը՝ շուտ մը դարձուց նամակին ստորագրութիւնը նայելու համար, թէ ուստի կ'ուզայ: Ո՞վ կրնայ բացատրել Մարքոյի ապշած վիճակը, երբոր Էրմէլինսայի անունը տեսաւ նամակին տակը: Ուստի վախնալով որ չըլլայ թէ յանկարծակիս կրբով ուրիշի առջին իր պատուոյն զպշելու բան մ'ընէ, շուտ մը Լուբոյի հրաման տուաւ որ դուրս ելլէ:

Մարքո մինչեւ որ նստած տեղէն ելաւ Լուբոյի ետեւէն դուռը կղպեց ու իր տեղը դարձաւ, հարսը ու մէկ իրարու հակասական խորհուրդներ մտաքը պատեցին: Արդեօք Երանուհի վերջապէս Օտթրինոյէն պաղելով կ'ուզէ . . . : Ո՛հ, սակայն ի՞նչ է իմ երազածս . . . թերեւս ինձի ազաչելու համար է որ այս ինամութեան չի համարձակիմ . . . երանի թէ այդ ամուսնութեան տեղի ունենալուն եւ ամեն բան լըմնալուն աւետիար տար . . . թէպէտ եւ այդ սոսկալի աւետիս մը կը սեպուի ինձի համար, այսու ամենայնիւ կը յուսամ կիրքս սանձել . . . այժմ կիրքս սանձել, եւ այն խեղճերէն ալ պէտք եղած միջոցը գործածելով՝ թողութիւն առնել:

Նստաւ ու նամակը ձեռքն առնելով սկսաւ կարդալ:

«Մարքօ,

«Ցաւալից մայր մ'է որ ձեր սաքն լցնալով՝ ամենադառն արատաւօք կ'ողողէ ձեր հոգը ձեռքը, կ'երզմնեցուցանէ զքեզ յանուն ամենափրկեաց քոյ՝

որք յերկինս եւ որք 'ի վերայ երկրի, որպէս զի իրեն զարձնես իւր մէկ հասիկ աղջիկը, իր ուրախութիւնն ու վերջին մոխթարութիւնը: Քաջ դիտեմ թէ երկրիս վրայ մեծամեծներն իրենց քաղերնին խաւարին մէջ առնելով, կ'ուզեն իրենց ճամբան ծածկել, եւ ուզած անիրաւութիւննին տեղի ունենալէն վերջն ալ, աշխարհի առջեւ անպարսաւ դտնուելու համար, աւանջ անգամ տալ չեն ուղեր նոյն իսկ այն անիրաւութիւնը կրող խեղճին ձայնին. սակայն դու . . . ամենեւին, քու սիրտդ արդէն զթութեան վարժած է, դու ժամանակաւ իմացած ու զգացած ես ցաւին թնչ ըլլալը, որով չի պիտի մերժես ինձի պէս տառապեալի մ'աղաչանքը:

«Մարքօ, իմ աղջիկս յափշտակուած է. քսան օրէ աւելի է որ մէջտեղը չիկայ, ո զիտէ մեր եւ կամ որոն ձեռքն ինկած է: Ես հաստատապէս քեզմէ կուզեմ զինքը. պէտք է որ դու անմիջապէս դտնաս զինքն ու յանձնես իւր խեղճ ծնողացն ու իրեն հետ մասնուած ու կորսուած ամուսնոյն: Աղջկան մայրն է այս բանս քեզմէ պահանջողը, ամենուն կողմանէ եւ յանուն Աստուծոյ:

«Ես աղաչանօք 'ի ձուր իջեալ, գլուխս յերկիր խոնարհեալ, զարհուրած ու ահուգողի մէջ, եւ միայն վստահ ըլլալով որ իմ խօսքերս կը լսուին յերկինս, եւ թէ երկրիս վրայի մեծերն ալ մահուան ենթակայ են, կը ինդրեմ քեզմէ իմ աղջիկս:

«Ս՛հ, ոչ Մարքօ, ոչ, ոչ . . . Թողութիւն տուր ինձի: Ինձի արտասուելէն ուրիշ բան չի մնար, իմ խօսքերս ալ պէտք էին աւելի խոնարհ ըլլալ, սակայն թողութիւն ըրէ զսուոց բնիկն տակն ընկճուած յան-



գուգն մօր մը վիճակին : Ո՛հ , եթէ կարենայի գիտնալ թէ ինչ կերպով վարուելու է՝ քու սիրտդ շարժելու համար : Արդէն քեզի ըսի աղջկանս Օդօրինոյի ամուսինն ըլլալը . այո՛ , հարսնայնասութեան մատանին տալէն վերջը , իրենց անքակտելի կապանքն ալ առաջի Աստուծոյ հաստատուած է : Եւ այս խնամութեան անապարուելուն պատճառն ալ միմիայն ես եղած եմ , դոր . . .

Երնամ անձիս վրայ երդնուլ թէ՛ այս գործին մէջ նաեւ քու բարկքդ ալ մտածած եմ , որովհետեւ միայն այս միջոցաւ զքեզ՝ քու անուանդ պատիւ չի բերող գործէ մը ետ ձգած եղայ . . . ինչո՞ւ , որովհետեւ . . . եթէ վերջապէս կարենայի հաւանել իմ աղջկիս քեզի տալու , Երանուհի քեզի համար չէր , եւ սիրան ալ արդէն ուրիշի տուած էր : Մարքօ , ես ըզքեզ ուրիշ ատեններ լաւ ճանչցած եմ , եւ քաջ դիտեմ թէ դուն ալ չի պիտի ընդունէիր մարմին մը՝ առանց ոգւոյ . եւ թէ չի պիտի կարենայիր դանալ քու սիրոյդ զոհուած կնոջ մը դժբաղդութեանը մէջ՝ քու երջանկութիւնդ . ուստի հիմայ քեզի կը թողում գատել թէ՛ արդեօք չիարուած է Երանուհւոյն մայրը , ժամանակաւ տեսածին վրայ ըրած գատողութեանը մասին :

« Կը յուսամ թէ Էրմէլինտայի խեղճ անունը քու յիշողութեանդ նոր չի պիտի գայ , սակայն դիտնաս որ միայն անունը մնայով հետզհետէ վրայ հասած զրգաղուճիւնները՝ սպառած են անոր սիրտը : Գու չարունակ փառացի վրայ փառք դիզելով , այս օր , հզօր թ՛նամեաց յարգանքն ու երկիւղը եւ վերջապէս բոլոր Լոմպարտիոյ սիրելին ես . . . ոսկայն ես . . . ես միայն

իմ աղջիկս ունիմ , իմ աղեացօ օրրելի ու քաղցր պտուղը . բոլոր իմ մխիթարութիւնս , յոյս ու փառքս՝ միայն անոր վրայ դրած եմ : Ա՛հ , Աստուծոյ սիրուն համար ըլլայ , փրկէ՛ զիս այս մահուան տաղնապէս , դարդուր ինձի իմ աղջիկս ժամ մ'առաջ , քանի որ այս արտասուաց աղբիւրներս բոլորովին չեն գոյուած :

Եթէ կարենայիր գիտնալ իմ անցուցած օրերուս տառապեալ վիճակը , եթէ կարենայիր անցուցած երկար գիշերներուս մէկ ժամը , յաւիտենական ու ահուգողով լեցուն միայն մէկ ժամն ինձի պէս անցնել . . . եթէ գիտնայիր թէ ինչ ըսել է մայր մը . . . : Գու քաջ դիտես թէ իմ կեանքս միշտ փշալից եղած է . աշխարհիս մէջ ամեն բան ստուեր մը՝ երազ մ'է , սակայն այս ներկայ շարժարանքս զիս գերեզման պիտի իջեցնէ : Ո՛հ , ես ամենեւին չէի կարծեր թէ արարած մը այսչափ բան կարենայ քաշել աշխարհիս մէջ . . . սի Աստուած իմ , որորմնձ Աստուած , քու հզօր բազուկը չսփէն աւելի ծանրացուցած ես ինձի պէս խեղճ արարածի մը վրայ , ալ գաղտնեցուր իմ շարժարանքս՝ որոց կարող չեմ տանելու , առ այս հոգիս , սակայն նախ փրկէ իմ աղջիկս . . . վայ է ինձ , արցունքներս աչքերս կը խաւարեն , ձեռքերս կը դողդոջնեն եւ մահուան ցուրտ քրտինքները . . . Մարքօ , երանի՛ թէ քու դիմացը ըլլայի եւ կարենայի ոսքդ ինչալով իմ օրհոսական ձայնովս քու խիղճդ շարժել . գլխս , գլխս ամենադժբաղդ Էրմէլինտայի վիճակին :





Գ Լ ՈՒ Խ Լ

Այս նամակը Մարքոյի սրտին մէջ անշիջանելի կրակ մը բորբոքեց . կուղէր նոյն ժամայն հեծնալ ու Միլան հասնիլ, սակայն անմիջապէս երկրորդ օրուան Լուքքայի գործոց լմննալու վրայ ըլլալը զինքը կը բըռնէր Ռուտի նոյն գիշերը վուշերու վրայ անցուց՝ առանց ամենեւին կարենալու աչքերը գոցել : Տխուր, հազար ու մէկ խորհուրդներով միտքը պաշարուած, եւ զինքը մինչեւ խեղանոր ընկու չափ անհամբեր կատաղութիւն մ'ալ սիրար կը մաշեցնէր : Երբեմն անկողինէն ելլալով պատուհանի մը առջեւ կ'երթար արշալոյսին սպասելու, երկար ժամերով խուցին մէջ վեր վար կը քալէր, դարձեալ անկողնին վրայ կ'իյնար, կը դառնար ու կը գառնար, սակայն ոչ ներքին եւ ոչ ալ արտաքին հանդատութիւն մը կրնար գտնալ :

Վերջապէս առաւօտ եղաւ . ժամադիր ասննն ալ հտտաւ եւ Մարքօ ներկայացաւ Ֆիօրէնցայի Հասարակագնութեան վերատեսչացը : Վիքթօրիին շիտթած դէմք մը ունէր . ժողովին մէջ խիստ քիչ խօսելէն զատ՝ զրուցածներն ալ շատ տեղ խոսնակ ու անիմաստ էին : Ամենախօքը ընդդիմութեան մը կը դայրանար, ամեն շարժման ու խօսքի դէմ կը յամառէր, կարծես թէ բոլոր այն ժողովի անդամներուն հետ հակառակիլ կ'ուզէր : Վերջապէս անչափ կարգէ ու քաղաքավարութենէ դուրս կերպերով վարուեցաւ ժողովքին անդամօրը հետ, որ արդէն այս սա-

կարկուժեան դէմ կեցող քանի մը անձինքը՝ կրցան մնացած մեծամեծներն ալ դիւրութեամբ համոզել, թէ այսպիսի գժտտո, մոլի, հպարտ եւ դրեթէ խելագարեալ մարդու մը հետ այս տեսակ առուտոր մը ընելը, բոլորովին թէ Հասարակապետութեան պատուոյն դէմ, եւ թէ աւագի վրայ հիմն դնել է : Եւ սոցա պէտով որոշուեցաւ որ նախ Լուքքայի ծախու առերուիլը ետ ձղուի եւ վերջն ալ Մարքօյի հետ ո եւ է դաշնադրութեան չի մտցուի :

Երբոր Հասարակապետութեան ժողովին այս վերջին որոշման ձայնը Մարքօյի ականջը հասաւ, սին որ վերատեսչաց իրարու հետ խօսակցելու ժամանակը, դուրս սրահին մէկ ծայրը նստած կը մտածէր՝ առանց բերանը բանալու, իրեն հետ այս գործին համար Ֆիօրէնցա եկող Գերմանացի մեծամեծաց, եւ միանգամայն առանց զարմանալու եւ ոչ ալ բարեկանալու այսպիսի տարօրինակ մերժողութեան մը վրայ, դարձաւ իր պալատը, հեծաւ իր երկվարին վրայ ու իր երկու զննակրացը հետ միասեղ Լուքօն ալ առած՝ գաղտնի կերպով գեպ 'ի Լուպարիա ճամբայ ելաւ :

Մարքօ յաճախ երկվար փոխելով, զիշեր ցորեկ ճամբայ կը կարէր, եւ ճամբուն վրայ ալ շարունակ Լուքօյի պատմել կուտար Երանուհւոյն եւ իր տիրոջը վրայով ունեցած տեղեկութիւնները :

Էրմէլինտա, կարծելով թէ այս դուաճանութեան բուն հիմն ու սլատճառը Մարքօ եղած է, մանրամասն տեղեկութեանց զանցառութիւն ըրած էր իր զրած նամակին մէջ :

Սակայն Մարքօ որ այս բաներէն ամենեւին տեղեկութիւն ու լոյս մը չուէր, հիմայ լսելով Երանուհւ-



ւոյն իր մէկ աղախնոյն հետ անհետանալը , նոյնպէս ալ դասոնք պատմողին իւր տիրոջը հետ միատեղ ինկած ծուղակը , եւ Միլանէն Լուքքա եկած ժամանակը պանդոկին մէջ դիւտուն եկած վտանդը , Մարքո՝ մտօք անցեալին կը վազէր , կը խորհէր Լատրիգիոյ վերջին աստիճան Օդորիոյի գէժ ունեցած ռիակալութիւնը , եւ ժամանակաւ եղածները ներկային հետ բաղդատելով՝ վերջապէս կրցաւ հաստատել թէ այս ամէն եղածները ժամանակէ մը 'ի վեր իրարու հետ խիստ բարեկամաբար տեսնուող երկու խաբեքայից՝ այսինքն Լատրիգիոյի եւ Ռէլէկրուայի գործն եղած պիտի ըլլայ :

Մարգոյի այս ուղիղ գուշակութիւնը , կարծես թէ իր արիւնը երակներուն մէջ տակն ու վրայ ընկելով , աչքերէն կրակ կը ցատկէին : Մարքո իր բարկութեանը մէջ կ'երդնուր այնպիսի սոսկալի չարութեամբ թշուառ մօր մը եւ դժբաղդ աղջկան մը դուռէ մաճը պատճառողներէն մինչեւ ցոճ՝ վրէժ առնուլ : Այսպէս վրէժինդրութեան եւ արեան ծարաւած , Մարքո չարաչար մտրակելով երկվարը , սլաքի պէս ճամբայ կ'անուոր :

Ուստի երկար եւ վտանգալից ճամբորդութենէ մը վերջը Ախաբօնթի Միլան հասնելով , հետն առած երկու զինակիրները երկվարաց հետ միատեղ իր պալատը իրկեց , եւ ինք Լուքքոյի հետ Տէլ Պալցօ կոմսին պալատն երթալու ճամբան ընկեց : Որպէս զի Երմէլինտայի հետ տեսնուելով , նախ անոր աղջկանը կորսուելուն վրայ աւելի մանրամասն տեղեկութիւններ առնէ եւ հետեւաբար իր նոր ձեռնարկելու գործին մէջն ալ կարենայ աւելի զիւրութիւն գտնալ : Նաեւ

իմացընէլ Երմէլինտայի եւ համադըլ զինքը թէ՛ այս եղեանագործութեան մէջ ինքն ամենեւին ձեռք չունի : Որովհետեւ ժամանակաւ իր կեանքէն աւելի սիրած՝ եւ աշխարհիս վրայ ամենայն արարածներէ վեր դասած կնոջ մ'առջեւ , Մարքօ այսպիսի անպատուութեան մը չէր կրնար համբերել :

Սրգէն կէս դիշերն անցած , քաղաքն ալ խորին մթութեան մէջ պատած էր , երբոր Լուքօ Տէլ Պալցօ կոմսին պալատին դուռը զարկաւ : Մարքօ նոյն ժամայն վար առաւ սաղաւարտին երեսպանակը՝ ճառաներէն չի ճանչցուելու համար . դուռը բացուեցաւ ու երկուքը միատեղ ներս մտան , պալատին մէջ լքուութիւնը տիրած էր : Լիմոնդային Մարքոյի առաջնորդելով շատ մը սրահներէ անցնելէն վերջը , պզտի խոռոց մը բացաւ ու վտռած կանթեղով մը զինքը հոն ձգելով՝ ըսաւ թէ ինք կ'երթայ շուտ մը տիրուհւոյն ազախներ արթնցընելու , որպէս զի Երմէլինտայի ձայն տալով իմացընէ թէ՛ Մարքօ եկած է իրեն հետ խօսելու եւ թէ վարը իրեն կ'սպասէ :

Մարքօ դիմէն սաղաւարտն հանեց ու սեղանի մը վրայ դրաւ եւ թիկնաթուի մը վրայ նստելով կ'սպասէր Երմէլինտայի գալուն : Քսանը հինգ տարի կար օր զինքը չէր տեսած . . . Քնչպիսի փոփոխութիւններ առելու ունեցած պիտի ըլլային անկէ մինչեւ հիմայ իրենց տանը մէջ . . . Քնչպէս ձգած էր զինքը եւ ինպէս պիտի գտնար . . . եւ հիմայ Երմէլինտայի անմխիթար վիճակը տեսնալով՝ անոր երեսը ինչ սրտով պիտի նայէր :

Ամենապզտի ձայնէ մը , ամենանուազ հովէ մը՝ Մարքոյի սիրտը թռուկ ելլալով ինքնիրեն կ'ըսէր . — Երմէլինտան է արդեօք , եւ բոլոր անդամոցը մէջ սարսուռ մը կը տեղար :



Սակայն այս սրտատանջ վիճակէն Մարքո շուտով ազատեցաւ . վասն զի շատ չի քչեց՝ տեսաւ որ իր նստած տեղին անմիջապէս դիմացէն կամաց կամաց դուռ մը բացուելով, վերէն 'ի վար ճերմակ ըզդեատներ հագած, ու սեւ մազերն ալ պարկեշտութեամբ մը ետեւը ձգած կին մը ներս մտաւ ու սկըսաւ յառաջ գալ : Առժամանակեայ կարմրութիւն մը՝ կրմէլինտայի դէմքին սովորական դակտիթեանը յաջորդած էր . երկայն գիշերներ քնհատ եւ արտասուելով անցնելէն ուռած՝ ու կարմրած աչքերուն մէջ, կարծես թէ տակաւին նուազ յուսոյ մը ճառագայթը կը պլպլար :

Վիշտք եւ տառապանք ու ժամանակին շարունակ փոփոխութիւններն այնչափ այլայլեր էին կրմէլինտայի դէմքն ու կերպերը, որ Մարքո ամենեւին չը կրցաւ ճանչնալ զինքը : Եւ որչափ ալ այս պարագային մէջ խուցէն ներս մտնող անձկալից կինը, Երանուհայն մօրմէն զատ ուրիշ մէկը չըլլալը յայտնի կերեւար, այսու ամենայնիւ Մարքո տարակուսելով չէր համարձակէր բերանը բանալու : Մինչեւ որ ներս մտնողը՝ որ տակաւին Մարքոյէն երկու քայլ հեռու ոտքի վրայ դիմացը կեցած էր, բազուկները կուրծքէն քակեց ու գետինը նայելով ըսաւ : — Գ՞ն ես :

Այս ձայնը ճիշտ այն քաղցր ու երիտասարդութեանը ժամանակ զինքը դիւթող՝ ներդաշնակ ու երկնային ձայնն էր . Մարքո ցնորած եւ գրեթէ վախնալով՝ ոտքի վրայ ելաւ . ապա՛ծ աչքերն անոր վրայ տանելով կ'ուզէր եւ կը յուսար իր խելացնորութեանը մէջ գտնալ այն նախկին գեղեցկութիւնն ու հրապուրը, որ այնչափ տարիներ իր կատաղի սիրոյն անչէջ

ջանն ըլլալէն վերջը, նոյն մտաց յիշատակութեամբն ալ զերանուհին սիրած էր : Սակայն շուտ մ'ընթացիւնքը ժողովելով՝ աչքերը վար առաւ, եւ տխուր կերպով մը առանց պատասխանելու կեցաւ :

— Գ՞ն ես . . . կը շարունակէր դարձեալ կրմէլինտա ծանր ու քաղցր եղանակաւ մը, որ անձամբ եկեր ես ինձի նոր կեանք մ'ալ պարգեւելու : Այս բարեգործութեանդ փոխարէնը երկինք խափի շնորհէն քեզի : Սակայն միշտ իմ սիրտս կը վկայէր թէ՛ երբոր իմանայ իմ տառապանացս պատճառն ինք ըլլալը, չի պիտի կրնայ համբերել, որովհետեւ բարեսիրտ ու վեհանձն է :

Մարքո այս խօսքերն կրմէլինտայի բերնէն լսելուն պէս, սրտին մէջ այնպիսի ցաւ մը եւ այնպիսի չափէ դուրս խոտովութիւն մը զգաց, որ իմացած նեղութեանն ալ չի կարենալով համբերել, ձեռքօյն արհամարհական ձեւ մ'ըրաւ, ուսկից նսեւ կրմէլինտա վախնալով՝ գրեթէ գետինն իջնալու մօտ տաղնապէցաւ . . . :

— Ե՞ս բարեսիրտ եմ, ես վեհանձն, ըսաւ վերջապէս Մարքո խղղուկ ձայնով մը : Աստուծոյ սիրուն համար ըլլայ, ալ դադրէ զիս այս կերպով այգանելէն : Ես, թշուառ ու խելագար մըն եմ . . . ես ամպարիշտ մըն եմ, սակայն իմ պակասութիւններս խոստովանելով՝ սրտիս մէջ մեծ մխիթարութիւն մը իմանալու զգացմունքն ալ տակաւին չեմ կորուսած, մասնաւոր երբոր մասնաւորապէս քեզի խոստովանելու ըլլամ . . . :

— Չէ՛, չէ՛, այնպէս մի՛ ըսեր . Աստուած քու պակասութեանցդ թողութիւն կը պարգեւէ, եւ ես ալ



արդէն քեզի թողութիւն տուած եմ . հիմայ այս վայր-  
կենիս մէջ ինծի պատճառած ուրախութիւնդ՝ մոռ-  
ցուցած է ինծի անցեալ ցաւերս :

Այժմ , ըսէ տեսնեմ , ո՞ր է իմ աղջիկս եւ երբ  
պիտի կարենամ զինքը տեսնալ :

— Ըսել է որ , մինչեւ հիմայ խեղկատակէն լուր  
մը չի կրցաք առնել , պատասխանեց Մարքո շտապաւ  
մը :

Մարքոյի այս հարցմանը վրայ , շէրմէլինտայի յու-  
սաւից ճակատը կարծես թէ սեւ քօղով մը ծածկուե-  
ցաւ , աչքերը Վիսթրիսի երեսը դարձուց ու դժ-  
ուարելով մը պատասխանեց :

— Խեղկատակն ըսիր . . . ո՞չ , անիկայ մինչեւ հի-  
մայ չերեւաց , եւ այս ըսած ժամանակը սիրտը վախ  
մը ինկաւ . . . բայց դ՞հ . . . ինձմէ՞ տեղեկութիւն կըս-  
պատես , դ՞հ . . . եւ ալ չի կրցաւ խօսքն առաջ տանիլ :

— Ար հասկնամ երմէլինտա քու զրոյցներէդ , կը  
չարունակէր Մարքո , որ դու հաստատապէս հաւա-  
տացեր ես թէ Նրանուհին ես յափշտակել տուած ըլ-  
լամ . սակայն ս՞ուտ է , գիտնաս . . .

— Ո՞վ Աստուած , ի՞նչ կը լսեմ . ուրեմն ո՞ր կըլը-  
նայ ըլլալ իմ աղջիկս . . . Մարքո , ներէ ինծի . . . չի  
կարծես թէ ես քու խօսքերուդ հաւատք չեմ բնծա-  
յեր . սակայն քիչ մ'առաջ դու չէիր ինծի խոստովա-  
նողը . . . եւ արդէն բաւական ժամանակ է , որ ես  
կրցեր եմ իմանալ թէ դու ի՞նչպիսի սէօք կը նայիս  
իմ աղջկանս վրայ :

— Ինծի մտիկ ըրէ , ըստ Մարքո յանդաւորի պէս  
գլուխն առջեւը կախած ու ցածէն սկսած ձայնը կա-  
մայ կամայ բարձրացնելով , ինծի մտիկ ըրէ երմէլինտա :

Այո , ճշմարիտ է , ես քու աղջիկդ սիրեցի , եւ  
անդառնալի սիրով մը սիրեցի զինքը : Անոր դէմքին  
վրայ քու պատկերդ եւ անոր ասննայն վարմանը  
մէջ քու ոգիդ տեսնալու՝ զիս զիւթեցին ու մտացս  
լոյսը խաւարեցուցին : Ո՞հ , եթէ կարենայի անոր ու-  
տիցն առջեւը թաղ մի դնել , եւ զինքն ինծի թա-  
ղուհի եւ ամուսին կարգել : Հասաւ նաեւ այնպիսի  
վայրկեան մը , յորում կարծեցի յուսացածիս երկ-  
նային քաղցրութիւնը ճաշակել , եւ այն վայրկեանը  
զիս կորսնցուց . . . դադարի թոյն մը արեանս , ուղե-  
զիս եւ բոլոր մարմնոյս անդամոյը մէջ տարածուե-  
ցաւ . . . : Եւ երբոր լաւ տեղեկացայ թէ՛ աղջիկս ար-  
դէն ուրիշ մարդու մը տուեր է իր սիրտը . . . սակայն  
չատ ուշ էր , որովհետեւ արդէն իմ վէրքս անդար-  
մանելի եղած էր . . . : Երկայն է նաեւ քեզի պատմե-  
լը՝ թէ ինչ կերպերով եւ ճամբաներով , եւ ցաւօք  
օրաի իմ հաւատարմողոյն ազդականիս մահ դարա-  
նել մտածեցի . . . : Ար դողամ , քանի կը մտածեմ թէ՛  
քիչ մնաց որ այս ձեռքն անոր արեանը պիտի աշ-  
տեղէի , դր քանի՞ քանի անգամներ նա ջերմ որդի-  
ական սիրով սեղմած ու հաճութեամբ էր :

— Օգորինոյի համար կը խօսիս :

— Այո , ձիտարայի օրն Օթօրինոյի հետ թշնա-  
մանօք պատերազմող անձանցիմ սաստեւը , հիմայ զի-  
մացդ կեցող ցնորած Մարքոն է :

Երմէլինտա դարձուց իր դորովադութ աչքերն  
Մարքոյի երեսը , եւ կարծես թէ կ'ուզէր անոր բան  
մ'ըսել . սակայն միւսը միշտ կատաղի բարկութեամբ  
մի շարունակելով , — չէ՛ , կ'ըսէր , մտիկ ըրէ . նախ  
եւ առաջ լաւ գիտես թէ ես նոյն օրերն այս երկիր-



ներէն պիտի հեռանայի . ուստի հոս ամբարիշտ հրաման մը ձգեցի : Այսինքն եղեռնադործի մը պատուիրեցի թէ՛ ո եւ է կերպով Օդօրինոյի եւ քու աղջկանդ մէջ տեղի ունենալու հարսանիքն արգիլել : Ուստի այն սրկիան ալ իմ ոսկիներուս ուժովը՝ կրցեք է վերջապէս քու տանդ ծառայից մէկն որսալ ու ամեն գաղտնիք անմիջապէս անկէ իմանալ : Սակայն դարձեալ կը կրկնեմ ձեզի Երմէլինտա , թէ՛ ես ոչ հրաման եւ ոչ ալ քու աղջկանդ յախշտակութեանը ամենուփոքը հաւանութիւն մը տուած եմ : Այսու ամենայնիւ այն թշուառականը , որուն այդ ամբարշտութեան պատուէքը տուած էի , բացարձակապէս կրնամ ըսել թէ՛ կարող է համարձակիլ չարութեան վերջի ծայրն հասնելու : Ասով հանդերձ , դարձեալ ես անարդ եւ անգութ . . . մարդ մ'եմ . . . :

— Չէ, չէ, Մարքօ , գթմ իմ վրաս եւ դադրեցնուր այս դառն խօսքերդ . ասիկայ այնպիսի նախատինք մ'է՛ որ ոչ քեզի կրնամ յարմարցնել եւ ոչ ալ զքեզ ասով նախատել . ոչ , ամենեւին անգութ չի կրնար սեպուել այն անձը՝ որ իր յանցանացը վրայ ցաւ կ'իմանայ :

Միայն կրկց սաստկութիւնը զքեզ ուղիղ ճամբէն դուրս ելլալու պատճառ եղեր է , սակայն Մարքօյի սիրտը , ես ապահով եմ եւ ժամանակ մ'ալ չեմ կատկածած թէ , ամենեւին ապականած չէ :

— Ա՛՛վ իմ մխիթարութեանս հրեշտակը , հառաչեց Մարքօ խանդաղատանօք . ինձի համար պաշտօնէն քաղցր են քու խօսքերդ . . . : Երմէլինտա , Երմէլինտա . . . լոյս եւ իմաստուն յառաջնորդ իմ ալեկոծեալ ու թշուառացեալ կենացս , եթէ՛ դու միշտ իմ

հետս ըլլայիր , իմ կենացս օրերն աւելի հանդիստ ու անմեղ կերպով պիտի սահէին : Եւ հիմայ որ երկուսսարգութեանս աշխոյժ օրերը կորսնցուցի անցեալը՝ ինձի այսպէս դառն եւ բիւր ցաւալից դէպքերով չի պիտի ներկայանար . . : Սակայն դու զիս չար մարդու մը տեղ դրած չես , այնպէս չէ . ոչ Երմէլինտա , յայտմասին կրկին եւ կրկին շնորհակալ եմ քեզմէ . եւ քանի որ դու ես զիս արգարացնողը , ես ալ անմիջապէս պիտի հաւատամ թէ ամենեւին չարութեան մը համասիրտ կամ ձեռնտու չեմ գտնուած . եւ ինչպէս կրնար ապականիլ սիրտ մը՝ որ անչափ երկար տարիներ այրեցաւ քու հրեշտակային բարուցդ եւ անմասն առաքինութեանցդ համար : Այո՛ Երմէլինտա , կը հաւատամ թէ՛ աւելի դժբաղդ՝ քան թէ՛ յանցաւոր մէկն եմ :

Երմէլինտա , երկու ձեռքերդն երեսը դոցեց եւ սկսաւ լալ :

— Հիմայ պատրաստ եմ ամենայն սիրով քու ծառայութեանդ , կը շարունակէր Մարքօ եւս առաւել խանդաղատեալ , դուցէ իմ արիւնս , զոր պատրաստ եմ մինչեւ վերջին կաթիլն անգամ թափելու , թող իմ կողմանէս քեզի համար տուժուած տուգանք մը սեպուել : Պիտի բնորոտմ զերանուհին , միայն զինքը դո՛ս ընելու համար . Օդօրինօն ալ իմ պարտքս է զբտնայն ու իմ ձեռօքս ներկայացնել զինքը մինչեւ հիւնայն իմ պատճառաւս արգիլուած հարսին : Այո՛ , ինձի կիջնայ այս , եւ ես անձամբ պիտի պատճառեմ իրեն այս ուրախութիւնը , իրեն այնչափ ինձի ցուցցած սիրուն եւ հաւատարմութեանը փոխարէն . որոնց ես բոլորովին ապերախտ գտնուեր եմ : Վերջապէս ,



չի պիտի հանգարաի այս սիրտը , մինչև որ ամենք-  
նիդ ալ դո՞՞ ու միտիթարեալ չի տեսնայ , եւ այս եղեւ-  
նագործութեան գաղանկացը տեղեակ չըլլայ :

Հոս քիչ մը լուս կենալէն վերջը , Մարքո աչ-  
քերն էրմէլինտային երեսը դարձուց , որն որ տակա-  
ւին կ'արուստուէր , յետոյ ձեռքերը սխմելով ու ահա-  
ւոր ձայնով մը դարձեալ :

— Թող դողան այն չարագործները՝ որ այդ ար-  
տասուաց հաշիւը պիտի տան . վնայ է , վնայ է ամե-  
նուն ալ :

Երմէլինտա , եթէ կարենայի զանոնք մի առ մի  
ձեռք անջրնել . . . կ'երդնու՞մ քու անուանոց եւ բոլոր  
դժոխքի հողիներուն վրայ . . .

— Չէ , Մարքո , ընդմիջեց բարեպաշտ կինն , ու  
միանգամայն գլուխը վեր առնելով վշտագնեալ եւ երկ-  
չոտ վեհանձնութեամբ մը , քրիստոնէի մը բերնին վա-  
յել չէ հայհոյանք արտաբերել : Խոչալէս կրնաս յու-  
սալ թէ Աստուած՝ քու ինձի խոտացած ու ձեռնար-  
կելու բարեգործութիւնդ օրհնէ , քանի որ քու սիրտդ  
վրէժխնդրութեամբ դիմած ես . եւ ես ալ սրջալի վըս-  
տահութիւն կրնամ ունենալ այնպիսի մարդու մը գոր-  
ծին վրայ , որ զԱստուած հետք չունի :

— Յիրաւի դու հրեշտակ մ'ես , կանչեց Մարքո ,  
իսկ ես . . . ուրիշ բան չեմ՝ բայց եթէ թշուառ մը :  
Սակայն ձգենք հիմայ մեր խօսակցութիւնը . արչա-  
ւոյր ծագելէն առաջ ես իմ Բողաթէ բերդս հասած  
պիտի ըլլամ . վաղուան արեգակը թերեւս զքեզ գո՞  
պիտի տեսնայ : Մնաս բարեալ :

— Երթաւ բարեալ , պատասխանեց Երմէլինտա ,  
Աստուած միշտ հետք ըլլայ եւ մնդի ամենուս ալ ու-

ղորմի , երթաւ բարեալ : Իսկ ինք՝ մշնչալի երկար ժա-  
մանակ այնպիսի մարդու մը դիմաց քաջած սրտաւու-  
ղէն գրեթէ նուաղեալ՝ ինկաւ ակնոտի մը վրայ : մինչ-  
դեռ Մարքո խուցէն դուրս ելլալով՝ դարձեալ նոյն  
եկած երկայն սրահներէն կ'անցներ իր բերդը երթա-  
լու : Երբոր ամեն բան խաղաղելով՝ Վիսքօնթիին ս-  
տից ձայնն ալ Երմէլինտայի ականջէն կարեցաւ , վըշ-  
տացեալ մայրը՝ ուրք ելաւ ու կամեց կամաց դար-  
ձաւ իր խուցը : Սակայն մտացը սաստիկ խռովութե-  
նէն լքեալ , այս եղածներն իրեն երայի՞ պէս կու-  
գային :

Մարքո Վիսքօնթի դուրսի գաւիթը հասնելով ,  
տեսաւ որ հոն Լուքօն իրեն կրպակաւոր եւ ըսաւ . —  
Դու իմ հետս Բողաթէ պիտի գաս : Լիմանդապին այս  
հրաւերը լսելուն պէս՝ ինչան հնազանդութեան նոյն  
ժամայն գլուխը խոնարհեցնելով , Մարքո առջեւէն ու  
ինքն ալ ետեւէն միատեղ դռնէն դուրս ելան : Գի-  
շերային խաւարին մէջ , բաւական ատեն ածապարա-  
նօք եւ առանց իրարու բազ մը արտաբերելու՝ քաղ-  
քին մէջ քալելէն վերջը , հասան Մարքօյի պալատը ,  
եւ անկէ երկու երկվոր առնելով՝ մտրակեցին դէպ  
'ի Բողաթէի ճամբան :

Սակայն ուրիշ մէկն արդէն ասոնցմէ ստաջ ու  
գաղտնի , նոյն ճամբուն կէսն առած էր : Այսինքն ,  
Լօտրիլիօ իմանալով Մարքօի Միլան հասնիլը , յետին  
աճապարանօք Բէլէկրուայի սուրհանդակ մը կը վաղ-  
ցընէր :

Մեր երկու ձիաւորները , արչալոյրը ծագելուն  
մօտ Բողաթէ բերդին պատերուն առիւր հասան , եւ  
Մարքո իր սովորական նշանը տուածին պէս , բերդին



անհաստատ կամուրջն ի շաւ ու դռներն ալ նոյն ժա-  
մայն բացուելով, Լուբոյի հետ միատեղ՝ առանց իւ-  
րենցմէ զատ ուրիշ արարած մը տեսնալու կամարու-  
կապէն ներս մտան :

Գոնապանը՝ շուտ մը բերդին տէրը ճանչցաւ եւ  
կ'ուզէր մեծ զանգակ մը զարնելով, անոր գալն ամե-  
նուն իմաց տալ . սակայն Մարքօ նշանով մը նոյն դոր-  
ծէն զինքն արգելելով Քէլէկրուային մէր ըլլալը հար-  
ցուց :

— Այս գիշեր դուրս ելաւ, պատասխանեց դրո-  
նապանը, եւ մինչեւ հիմայ չը դարձաւ . վերջը, մա-  
նաւանդ թէ ըսաւ, հիմայ ժամ մը կայ որ Միլանէն  
սուրճանդակ մը եկած է, ու ստիպողական նամակաւ  
մը իրեն կրսպասէ :

— Ո՞ւր է այն սուրճանդակը :

— Հոս ներսը իմ խուցս է եւ անոր ուշանալուն  
համար կը հայհոյէ ու կը հայհոյէ :

— Շուտով զինքը կարմիր սրահը խրկէ : Թէ որ  
այս միջոցիս Քէլէկրուան գալու ըլլայ, ներս առ, սա-  
կայն անկէ վերջը առանց իմ հրամանիս մէկը դռնէն  
դուրս չի պիտի ելլայ :

— Եւ ոչ ալ բերդապանը, թէ որ գալէն վերջը  
դուրս ելլալ ուզէ :

— Մարդ պիտի դուրս չ'ելլայ :

— Աէտ մ'ալ ձեր հրամանէն դուրս չեմ ելլար :  
Մարքօ՝ ընդարձակ գաւիթէ մ'անցնելով մտաւ  
վերոյիշեալ սրահը, եկող սուրճանդակն սպասելու :  
Քիչ ատենէն այդ մարդը երեւնալով՝ Մարքօ ընդ ա-  
ռաջ դնաց եւ անոր թեւէն բռնելով, ըսաւ :

— Տուր տեսնեմ սա բերած նամակդ :

Սուրճանդակը առաջին անգամ տեղոյն բաւա-  
կան մթութենէն չի կարենալով տեսնալ իրեն հետ խօ-  
սողն ու այս կերպով հետը վարուողը, կը ջանար ա-  
նոր ձեռքէն ազատիլ, եւ կը պատասխանէր :

— Հրաման ունիմ զայն բերդապանէն զատ մէ-  
կու մը չի տալու :

Սակայն Վիսքօնթին եւս թաւաւել անոր թեւը  
սխմելով, զինքը քաշեց ու տարաւ պատուհանի մը  
ստջեւ, եւ անարկու ձայնով մը կրկնեց . — Հոս բեր  
սա նամակը :

Ապակինքէն ներս ծագած նուաղ լոյսին շնոր-  
հիւրը, խեղճ մարդը տեսաւ հռչակաւոր զօրավարին  
երեսը, եւ գոյնը նետելով ու դողդալով պատասխա-  
նեց . — Թողութիւն ըրէք, դքեղ չի կրցայ ճանչնալ . . .  
թէ պէտեւ իմ տէրս . . . բայց գուք . . . դո՞ք էք իմ  
տէրս, անն, անն նամակն ըսելով, հանեց ծոցէն ու  
Մարքօյի ձեռքը տուաւ :

Մարքօ հետաքրքրութեամբ բացաւ զայն . նա-  
մակին ներքեւը ստորագրութիւն չի կար, ու հետեւ-  
եալ իմաստը կարդաց :

« Անիծեալ թշուառական .

« Անցեալ օր իրարու հետ տեսնուելնէս մինչեւ  
« հիմայ յուսամ թէ գործին վերջաւորութիւն մը սը-  
« ւած ես : Հոգիդ ստտանան առնէ, թէ որ մինչեւ  
« հիմայ չի կրցար գլուխ հանել . ինչ պիտի ընես հի-  
« ւանայ որ Մարքօ Միլանու մէջ է : Այո, Մարքօ այս  
« գիշեր Միլան հասաւ, եւ կարելի է որ վաղը քու ե-  
« տեւեդ հասնի : Շուտ ըրէ, պատիժ Աստուծոյ, չուտ  
« զըրէ . թնձ այս նամակը նոր կրակով մը քու սիրտդ  
« օրորաքէ . անհետացուր ձեռնարկութեանդ ամենա-



«արգտի հեաքը, ծածկէ դործին ամենափոքր նշանն  
«ալ, շտկէ . . . մտածէ, ո՛վ անպիտան, որ ամենուն  
«առջիւ պատասխանատու պիտի հանդիսանաս : »

Վխարծոնթիւն սարսափեցաւ, բոլոր անդամներուն  
մէջ թուրութիւն մը տիրեց, մաղերը գլխուն վրայ զըց-  
ուեցան, եւ կատաղաբար գէտ 'ի սուրհանդակը եր-  
թալով, երեսն 'ի վեր պռուաց . — Ո՛վ տուաւ քեզի  
այս նամակը :

Մարքո այս հարցումն այնպիսի կերպով ու եղա-  
նակաւ մ'ըրաւ, որ միւսը շունչ առնելու ժամանակ  
չտեննալով, ստեն ակնածութիւն մէկ կողմը դրաւ ու  
սլարդապէս պատասխանեց . — Լօտրիզիօն տուաւ ին-  
ծի այդ նամակը :

— Թէ որ կ'ուզես՝ ասկէ դուրս ողջ ելլալ, կը  
կրկնէր Մարքո, ըսէ տեսնեմ, անիկաց իմ բերդապա-  
հիս հեռ ինչ տեսակ յարաբերութիւն կրնաց ունենալ :

Սակայն միւսը, աստիկ երկուղէն թմրած՝ աչ-  
քերը բանալով ստանց պատասխանելու Մարքոյի ե-  
րեսը կը նայէր ու կը կենար :

— Գիտես, կը շարունակէր Մարքո՝ միշտ ձայնը  
բարձրացնելով, գիտես թէ բերած նամակը ինչ նիւ-  
թի վրայ կը խօսի :

Սուրհանդակը բան մը չի հասկնալով, դարձեալ  
փայտի պէս կը կենար :

— Ինչ լաւ դիտես, աւարառու սրիկայ, կան-  
չեց կոտորաբար Բօզաթէի տէրը, գիտեցիմին մէկ  
ուսին ուժով հարուած մը իջնալով :

— Տէր Աստուած, կանչեց սուրհանդակը քունէ  
արթնցածի պէս զգաստանալով, ես բան մ'ալ չեմ  
գիտեր . միայն իմ փերօջն հրամանը կատարեցի, որ

ինծի ըսաւ, սուր այս նամակը Բէլէկրուայի, եւ ես  
ալ բերի . . . ասկէ ուրիշ, կ'երգնում քրիստոնէ հա-  
ւատքիս վրայ, թէ բան մը չեմ գիտեր : Արնաք նա-  
եւ դիս սպաննել, դարձեալ սերիչ բանէ մ'ալ լուր  
չունիմ :

— Վերջը քեզի հետ աւելի երկար կը տեսուինք,  
ստայտի խուցէն դուրս ելիր :

Այս բնելով վաղեց Մարքո գէտ 'ի բերդապահին  
բնակած կողմը . դուռ մը զարկաւ եւ աղջիկ մը դու-  
ռը բանալով, Մարքո անոր ըսաւ թէ՛ Բէլէկրուայի  
կնոջը հետ կ'ուզէ տեսնուիլ :

Աղջիկն առանց զինքը ճանչնալու, առանձին սըղ-  
տի սրահ մը հրանցուց, ուր քիչ աստիճն ետքը բեր-  
դապահին կիներն ալ գիրիը տղեկով մը ներկայացաւ :

— Ո՛ւր է ամուսինդ, հարցուց Մարքո դանի տե-  
սածին պէս, խղճուկ ձայնով մը :

Իեղծ կիներ, այսպէս յանկարծ իր փերօջն առջև  
գտնուելէն ու եւս առաւել անոր խիստ կերպով մ'ը-  
րած հարցումէն վախնալով, սիսաւ գիրկի տղեկը՝  
կուրծքին վրայ սիմելով ետ ետ քաշուիլ ու միան-  
գամայն թոթովելով պատասխանեց . — Այս գիշեր դուրս  
ելաւ, եւ չեմ գիտեր ո՛ր երթալը :

— Կարգան սա նամակը, ըսաւ Մարքո, անոր  
տալով Լօտրիզիօյի դրած թուղթը, եւ շուտ մեկնէ  
ինծի անոյ մէջ ծածկուած գաղտնեաց խնասար :

Այնը սրտադողով մը աչքերն այն մտառութի նա-  
մակին վրայ տարաւ . վերջը՝ հեկեկելով ու արտասու-  
ուելով Մարքոյի առջև երկու ծունկի վրայ եկաւ ու  
ըսաւ . — Ա՛հ, գիտն իմ թշուառ ամուսնոյս վրայ :

— Մ՛ն, ըսէ տեսնեմ, ինչ կը նշանակին այդ  
խօսքերը, ընդմիջեց Մարքո :



— Այո՛ , պիտի ըսեմ , յայսմ մասին ամեն դիտ-  
ցածս պիտի ըսեմ :

— Ելիր ու ըսէ տեսնեմ :

Թշուառ կինը ոտք ելաւ եւ դողալով ու հեկե-  
կելով սկսաւ . — Ես իրեն խիտ շատ անգամ զրո-  
ցեցի , իրեն աղաչեցի ու պաղտակեցայ , Աստուած վե-  
րէն վկայ է . . . :

— Ես հիմայ կ'ուզեմ գիտնալ թէ Երանուհին ո՞ր  
է , կամ թէ ո՞ղջ է , մենչեց Մարքօ , ընդ միջելով կը-  
նոջ երգումը :

— Ողջ է , եւ ամիսէ մը 'ի վեր ալ հոս է , պա-  
տասխանեց կինը :

— Ո՞ղջ է եւ հոս է , կրկնեց Ախքօնթի շունչ  
առնելով :

— Այո՛ , կը շարունակէր բերդապահին կինը , եւ  
բէկ մուժը տակաւին չի կոխած՝ վերը պատուհանէ մը  
իրեն աղախինը տեսայ , ուսկից սովորաբար իրենց մա-  
նրը մուշը պիտոյքն ինծի կը պատուիրէին , եւ տի-  
րուհւոյն համար ըսաւ թէ հանդիստ է . խեղճը բա-  
ւական ժամանակ է որ հիւանդ է :

— Ե՛սու , զիս իրեն քովը տար , կ'ուզեմ իրեն  
հետ տեսնուիլ : Ե՛սու ըրէ , շո՛ւա շո՛ւա :

Վինը իւր գրկի տղեկն աղջկան մը տալով ըսաւ  
Մարքօյին . — Եկու իմ հետս : Երկայն սանդուխէ մը  
վեր ելլալով ձախ կողմը կամարակապի մը տակէն ըն-  
դարձակ դաւիթ մը ելաւ ու անցաւ . սնկէ երկայն  
ու մուժ ճամբու մը մէջ բուսական ժամանակ շրջա-  
դայելէն ետքը , վերջուպէս ամայի ու պղախ հրապա-  
րակ մը հասաւ : Հոն կինը մատը վեր առնելով պատի  
մը անկիւնը երկու երեք պատուհան ցուցուց ու ը-

սաւ . անաւասիկ հոս ներսը փախուած է՝ իրեն հետը  
բերուած հաւատարիմ աղախնոց մը հետ :

— Երթանք շուտով մը զինքը տեսնալու , ըսաւ  
Մարքօ , եւ արգէն նոյն խուցը հանող սանդուխի  
մը ոտքն ելած էր . սակայն շուտ մը գաղբեցաւ ու  
քիչ մը կենալով մտածելէն վերջը . — չէ , ըսաւ կը-  
նոջը . դու մինակ վեր ելիր , եւ ես քեզի հոս կ'սպա-  
սեմ . վասն զի մարդու մը անսութիւնը . . . իմ ներ-  
կայութիւնս . . . սիրտ տուր իրեն , ըսէ իրեն թէ բա-  
նի մը հոգ չի տանի , վասն զի քիչ ատենէն պիտի  
տեսնայ իր մայրը . . . ու իր տունը պիտի դառնայ :  
Ըսէ իրեն թէ՛ ես . . . չէ՛ , չէ՛ , իմ վրաս խօսք մի  
բանար , իմ անունս ամզամ մի՛ յիշեր . վերջուպէս ինչ  
բան որ կրնայ անոր կասկածը փարատել ու մխիթա-  
րել , խոստացիր իրեն :

— Բայց ուղղակի զինքը փրկելու համար ես ե-  
կեր , հարցուց երկչոտութեամբ մը բերդապահին կի-  
նը , վասն զի իմ սրտէս չի դար որ այնպիսի խեղճ մը  
խաբելու . . . :

— Անհաղորդ մեռնիմ ու մարմինս ալ գերեզման  
չի մանէ , թէ որ ուղիղ սրտով չեն գրուցածներս :

— Աստուած օրհնէ գքեզ , հառաչեց կինը , եր-  
կու ձեռքն իրարու բերելով :

— Մանաւանդ թէ , կը շարունակէր Ախքօնթի  
ժամանակ չի կորսնցնելու համար , քանի որ դու սպգ  
սանդուխէն վեր կ'ելլաս Երանուհւոյն առաջին միտի-  
թարութիւնները տալու համար , ես կերթամ իր ծնու-  
ղացը սուրճանդակ մը խրկելու , որպէս զի անմիջա-  
պէս հոս գալու համար ճամբայ ելլեն : Այս ըսելով  
եւ դարձաւ եւ առջի եկած ճամբաներէն անցաւ ու  
դարձեալ ելաւ մեծ դաւիթը մտաւ :



Հոս Էութօն դանալով , հրամայեց որ շուտով հեծ-  
նայ իր ախոսներուն մէջ գտնուած , ամենէն աւելի  
ճառագայ առնող երկվարի մը վրայ , ու Միլան երթա-  
լով աւետէ Տէլ Պայցօ կոմսին ու կոմսուհոյն՝ թէ  
իրենց աղջիկը գտնուած է , եւ թէ հրաւիրէ զիրենք  
Յօգաթէ գալ ու իրենց աղջիկը տուն տանի :

Մինչդեռ Մարքօ այս գործին զբաղած էր , Ռէ-  
լէկրուայի կինը սանդուխէն վեր ելաւ ու չորս կողմը  
նայելով մօտեցաւ . Երանուհոյն բնակած յարկը հա-  
նող դրան , զարկաւ նոյն դռուն ու միանգամայն սկը-  
տաւ ձայն հանել : Պատասխան չկայ . բանալին ծա-  
կին ակահնջ դրաւ , սակայն ներսը խուցերէն պզտի  
ձայն մ'ալ չի կրցաւ լսել :

Այն ատեն սկսաւ դռնն աւելի ուժով զարնե-  
լով Լատրէդային ու Երանուհոյն անունը տալ : Սա-  
կայն իր ձայնին արձագանքէն օւրիշ ձայն չի կար-  
եկաւ երկրորդ խուցի մը մէջ նայող երկաթէ վան-  
դակապատ պատուհանի մ'առջև , ու անկէ ներս նա-  
յելով սկսաւ մատոյն սպակին ծեծել ու ներս նայիլ ,  
եւ երբեմն աղախնոյն ու երբեմն ալ տիրուհոյն ա-  
նունը կուտար , զարձեալ ձայն չի կայ . վերտօին  
առջի դրան առջևը գալով սկսաւ խառնել , զարնել ու  
կանչել , սակայն 'ի զուր . . . :

Ինչո՞ք կ'ընէ ճակտէն սկսաւ մահուան քրտինք վա-  
զել . ինչ եղան սրդեօք այս բանասրկեալները .  
միտքը եկաւ Լօտրէդայի դրած թուղթն ու սարսա-  
փեցաւ . աչքին առջևը բերաւ զՄարքօ , եւ կ'ու-  
զէր հաղար անգամ նոյն վայրկենին քսան կանգուն  
հողի տակ մտած ծածկուիլ , քան թէ անոր ներկա-  
յանալով այս լուրն իրեն տալ : Ինչ պէտք էր ընել

ուրեմն , պահուրախ . . . վախճիլ . . . բայց ո՞ւր . . .  
բայց ինչպէս : Ար մտածէր նաեւ թէ Ախքօնթէի շու-  
տով չի ներկայանալն ալ կրնար իր վրայ կասկած բե-  
րել . եւ թէ որ այս միջոցն ամուսինն ալ գալու ը-  
լար . . . : Ուստի այսպով դժուարութիւններէ շուրջ  
պատեալ , խեղճ կինը զարձուց աչքերն յերկինս ու  
ըսաւ . — Աստուած իմ , դու գիտես իմ սիրտս . վերջն  
ինքզինքն 'ի կամս Աստուծոյ յանձնելով , սկսաւ Մար-  
քօյին ժամանակաւ նոյն բերդին մէջն եղած ատենը՝  
անոր բնակած յարկը երթալ :

Հաղիւ թէ մեծկակ սրահի մը սեմին ոտք դրած  
էր , մէկ մ'ալ տեսաւ որ Մարքօն՝ դիմացէն խուցէ  
մ'ելլալով յառաջ կուգար : Ան ալ հեռուէն կինը տես-  
նալով անպարեց , եւ երբոր երկուքն ալ առանց պո-  
ռալու իրարու խօսքը հասկընալու չափ մէկմէկու մօ-  
տեցան , — Ուրեմն , հարցուց Մարքօ հետաքրքրա-  
բար , մխիթարեցիր զինքը , ըսիք իրեն թէ՛ քանի մը  
ժամէն մայրը հօս զինքը տեսնալու պիտի գայ . ինք  
ինչպէս է , ինչ կ'ընէ , ինչ կ'ընէ :

Յերդասպանին կինը փոխանակ այս հարցմանց պա-  
տասխան տալու , երկու ձեռքերոյն երեսը ածծկե-  
լով՝ սկսաւ դաճնապէս արցունք թափել :

— Ո՞վ Աստուած , կանչեց Մարքօ նոյնամասին  
կորսնցընելով իր այն գո՞ն ու մխիթարեալ դէմքը , եւ  
երկիւղալից ու տառայեալ մարդու մը կերպարանքն  
առնելով . — Ինչ եղած է Երանուհի . . . ըսէ , շուտ  
ըսէ . . . թէ որ կ'ուզես տակաւին կենացդ տէր ըլ-  
լալ . եւ այս միջոցիս արդէն կ'նոջ մէկ ձեռքը բըռ-  
նած էր իր երկաթէ մատերովը :

— Երանուհին չի կայ , պատասխանեց կինը խղ-  
-



դուկ ճայնով մը , ու ճեկեկելով՝ իր խուցերու մէջ չի կրցայ դանալ զինքը :

— Աստ թշուառականներ , աւաղակ մասնիչներ ամենքնիդ ալ , սկսաւ կանչել Յարքո՝ զիւստարի պէս . սակայն չնորճակալ եմ յԱստուծոյ , որ իմ ձեռացս ու իշխանութեանս ներքեւ կը գտնուիք , զխանաք որ արխուր արեամբ պիտի վճարուի : Եւ այս ըսելով մէկ ձեռքը ճակատին կը զարնէր , միւսովն ալ կը սխմեր կնոջ ձեռքը , որն որ ինքզինքը կենացը վերջին վարկենին հասած կարծելով , այնպիսի զթաշարժ կերպով աչքերն երկինք վերցուց , որ ամենակարծր փրտ մ'ունեցողին անդամ գուժը կը շարժէր :

Վխրծոնթին զղջալով , ձգեց բերդապահին կնոջը ձեռքը . իսկ կինը՝ անոր ուժով սխմելէն դալկացեալ ձեռքը վեր առնելով ու աչքերէն արտասուաց կաթիլներ հոսելով , — Աստուած ինձի վիպ է թէ՛ ես այս ամեն եղածներէն անպարտ եմ , կ'ըսէր :

— Ես ալ կը հաւատամ թէ այնպէս է , ըսաւ Մարքո , բարի կ'ին , ապահով եղիր , եւ մի կասկածիր թէ ինձմէ քեզի չարիք մը կ'ընայ գալ : Սակայն տեսնալով որ դիմացինը արտասուելէն չէր դադրեր , դարձեալ իր առջի խիտ եղանակը բռնելով կանչեց . քեզի կըսեմ , շիտակ կեցիր , շիտակ եւ պատմէ՛ տեսնեմ ըտր դիտցածներդ :

Կինը՝ կէս մը սիրտ առած , կէս մ'ալ վախնալով պատմեց Երանուհւոյն բնակած խուցին դուռը կրկին եւ կրկին զարնելն ու խառնելը , եւ ՚ի դուր գոց դուռնէն ներս պուսին ու կանչելը :

Այս պատմութեան վրայ , կարծես թէ Մարքոյի արտին մէջ պզտի յոյս մը ծագեցաւ . կարելիութիւն

գտնալով թէ՛ դուցէ տակաւին Երանուհի իր խուցերուն մէջն ըլլայ : Սակայն երկիւղէն ոչ դուռը կը բանայ եւ ոչ ալ ներսէն ձայն կը հանէ : Աւստի միտքն ինկաւ նոյն խուցերուն մէջ բացեող դարձնի դուռը . (այն դուռը՝ ուսկից քանի մը օր առաջ Լօտրիդիո եւ Բէլէկրուս ներս մտնալով խեղճ բանտարկելոց այնչափ սարսափ պատճառած էին , ) եւ առաջարկեց բերդապահին կնոջը՝ նոյն գոնէն ներս մտնել : Աւստի , շատ մը ինք անձամբ՝ անոր դարձնի ճամբաներէ առաջնորդելով նոյն դրան առջին տարաւ , ու ըսաւ թէ ինք դուրսը իրեն կ'սպասէ . եւ մասնաւոր դարձնի մեքենայի մը դպածին պէս , նոյն ժամայն դրան երկու փեղկերը միատեղ բացուեցան : Բերդապահին կինը ներս մտնալով դռները վրայ բերաւ , որպէս զի ներսը կարծուած բանտարկեալները չը կարենան Մարքոն տեսնել ու նորանոր կասկածներու երթալ :

Աւստի մտած խուցը ճիշտ Երանուհւոյն սուրբաբար պառկած սենեակն ըլլալով , կինը ամենայն ուշադրութեամբ աչքերը չորս կողմը կը դարձնէր , սակայն արարած մ'ալ չի կարենալով տեսնալ , այնքաւ երկրորդ խուցը , անկէ երրորդն ու չորրորդը , սակայն դարձեալ մարդ չը գտաւ : Թող մէկ մը ընթերցողն աչքին առջեւ բերէ դուրսը Մարքոյի քաշած չարաչար տանջանքը :

Շատ չանցաւ , կինը դարձաւ այն դուռը՝ որուն ետեւը կ'ըսպասէր Մարքո , ու ցած ձայնով մը ըսաւ . — Մարդ է՛կայ :

Այն ատեն՝ Վխրծոնթի առաջ անցաւ , ու ներս մտնալով՝ լուսութեամբ եւ անպատմելի յարգանքը ու պակուցմամբ կը նայէր չորս կողմը : Այն տախտակա-



մածին վրայ կը կոխէր , որուն վրայ Երանուհւոյն ոտքերը դպեր էին , կը շօշախէր այն կարասիքը՝ զորս Երանուհի գործածած էր , վերջապէս կը շնչէր այն օդը՝ զոր Երանուհի շնչած էր : Իւրաքանչիւր ստած քայլին , իրեն այնպէս կ'ուգար թէ՛ փակուած տեղէ մը անոր շնչառութիւնը եւ կամ նուազեալ ձայնին զրթութիւն եւ օգնութիւն կանչելը պիտի լսէր :

Խուցին դրան բացուած կողմը՝ տակտակորմին մէկ անկիւնը փառաւոր եւ ասեղնագործ վարագոյրներով եւ տակաւին ճերմակ ու մաքուր սուանով նոր շտկած ոսկեզօծ պղնձէ անկողին մը դրուած էր , միայն անկողինն մէկ կողմը քիչ մը կոխուած ըլլալով , կ'երեւար թէ մէկը միայն առժամանակեայ կերպով վրան երկնցած ըլլար : Որովհետեւ Երանուհի՝ որչափ ալ իր խուցերուն մէջ փակուած էր , սակայն իր անձին վրայ ապահովութիւնը կորսնցուցած վայրկենէն ՚ի վեր իր վատառողջութեանը պատճառաւ , գիշերները խեղճութեամբ՝ առանց ամենեւին հանուելու , երբեմն աթոռի մը կրթնած եւ երբեմն ալ տկար մարմնը ու ծանրացեալ գլուխը անկողինն դրած կ'անցընէր :

Խուցին մէջտեղը՝ բաւական մեծկակ սեղանի մը վրայ տակաւին վառած կանթեղ մը դրուած էր , որու լուցիկին երկար ժամանակ վառելով՝ մաշած ու մոխիր դարձած , գրեթէ մարելու մօտ կը պլպլար : Վարքօ , աչքերն այն կանթեղին վրայ յառեց , եւ այն կրից վայրկենին մէջ՝ ինքզինքն իր գտնուած դարուն մտպարծ գուշակութեանցը թողլով , միտքն ինկաւ թէ այդ կանթեղին մարելու մօտ լոյսը , պատկեր եւ կամ օրինակ մ'է Երանուհւոյն կենացը . որով եւ աւելոր-

դապաշտ երկիւղածութեամբ մը կամացուկ մը անկէ հեռացուց բերդապահին կինը . որպէս զի օդին շարժմամբը չըլլայ որ կանթեղը մարի :

Նոյն կանթեղին քով Աստուածաշնչին Երեմիայի 35 ԲԲ. գլուխը բացուած դրած էր , որու նաեւ թղթերն ալ արտասուաց նոր կաթիլներով ոռոգուած ըլլալով՝ հետեւեալ խմտար տուող երրորդ , չորրորդ ու հինգերորդ տողերուն տակ մասնաւոր գիծերով նշանակուած էին :

« Զի պիտի կարենաս փախչիլ իմ ձեռքէս , այլ պիտի բռնուիս եւ յանձնուիս անոր ձեռքը . . . այսու ամենայնիւ լռէ՛ Տիրոջը ձայնը . . . Այս բաներս քեզի Տէրն է դրուողը : զու , չի պիտի մտնիս սրով , այլ ՚ի խաղաղութեան . . . եւ քու վրագ սուգ բռնելով , պիտի ըսեն . — վահ՛ Տէր : »

Վարքօ՝ այս սողերը կարդալուն պէս , կարծես թէ սրտին մէջ նոր վատահոլութիւն մը եւ գերբնական ապահովութիւն մը զգաց թէ զԵրանուհին պիտի զրտնայ եւ թէ ողջ պիտի գտնայ : Վարդարէին այն խօսքերէն , որոնցմով կ'երեւար թէ Երանուհի խիստ շատ անգամներ մխիթարուած էր , Վարքօ ալ ապահովութեամբ մը հաստատելով՝ թէ այս սողերուն խմտար ճիշտ Երանուհւոյն կենացը համար կը խօսի , դարձաւ քովի կնոջն ըսու . — ապահով եղիր թէ՛ Երանուհի մեռած չէ :

Բերդապահին կինը , առանց համարձակելու հարցընել թէ ուսկից է այսչափ հաստատութեամբ արտաբերած խօսքերուն ոյժը , մէկ մը դառնալով երեսը նայելէն վերջը , ինքն ալ Վարքօյի ետեւէն մտաւ երկրորդ խուցը , Հոն բռնութեան եւ ընդդիմութեան



յայտնի նշանները տեսան : Փառաւոր սեղան մը գե-  
տինն ինկած , քանի մը թանկագին յախճապակէ ա-  
մաններ գետնի վրայ ջախջախած , պատուած ու տակն  
ու վրայ անկողին մը՝ որուն նաեւ վարնողոյրները զի-  
մացի պատուհանին վարագոյրներովը տակն ու վրայ ,  
բղիկ բղիկ եւ աթոռի մը վրայ ձգած՝ եւ ամբողջ եր-  
կաթէ անկողինն ալ տեղէն բաւական հեռու չեղած  
ըլլալով , կ'երեւար ազախնը խուցէն դուրս հանելու  
համար բռնաբարուած ժամանակը , անկողինն սինեւ-  
րէն մէկուն պլլուած ըլլայ :

Մարքօ, այս առնն բաները առանց բերանը բա-  
նալու տեսնալէն վերջը , մտաւ երբորդ խուցը , եւ  
անկէ ալ չորրորդը ու դնաց մինչեւ դուրսի սրահը  
հանող դրան առջեւ , եւ տեսնալով որ ներսէն կղպած  
է , հասկցաւ որ բանտարկեալները ոչ թէ նոյն դռնէն՝  
այլ իրեն ներս մտած դաղտնի դռնէն դուրս հանուած  
էին : Ուստի հոտ դարձաւ ու միշտ բերդապահէն կնու-  
ջը հետեւելով՝ երկուքը միատեղ տեսած սենեակներ-  
նէն վերագարձան ու եկած տեղերնէն դուրս ելան :  
Միայն թէ կինը երկայն ու մութ ճամբէ մը անցած  
ժամանակը , ոտքին կակուղ բան մը դպչելով առաւ .  
եւ երբոր երկուքն ալ միատեղ լոյսը ելան , տեսան  
որ Երանուհւոյն վրայէն հագած բարակ գդեսան էր :  
Այս գդեստին գտնուելը՝ Մարքօյի համար մեծ լոյս  
մը ըլլալով , հասկցաւ թէ խեղճ Երանուհւոյն անմիջա-  
պէս այն ճամբէն անցուցած պիտի ըլլան : Ուրեմն յա-  
ռանջ :

Նոյն ճամբէն ուրիշ շատ մը երկայն ու ծուռ նոր-  
բաշաւիղներու հանելով , վերջապէս անհամար լարի-  
րիւնթոսական անցուդարձներէ հեքը , կ'ելլար փոք-

րիկ ամայի ու վայրի խոտերով լեցուն հրապարակ մը ,  
ուր իջնալու համար ալ պէտք էր անմիջապէս պտու-  
տակ սանդուխէ մը վար սահել :

Նոյն հրապարակին մէջ երկու մեծ դռներ կա-  
յին . առաջինը դէպ 'ի ներս' հաստը պատով կամա-  
րակապ ճամբու մը մէջ կը բացուէր , որն որ պէտք  
եղած ժամանակն անմիջապէս բերդէն դուրս ելլալու  
ապահով միջոց մը ըլլալով , սոյն ճամբուն միւս ծայրն  
ալ բերդը չըջալատող փոռին վրայ բացուող անհաս-  
տատ կամուրջ մը կար : Նսկ երկրորդ դուռը , աւելի  
ցած ու հաստը երկաթէ փակադակներով զոցուած ,  
եւ գրեթէ դէպ 'ի բերդին մէջ խողովակածեւ երկու  
մեծամեծ ու կապուտակագոյն քարերու մէջ թաղ-  
ուած կ'երեւար :

Այս դուռը՝ առջինին հակառակ , բերդին տակն  
եղած բոլոր ստորերկրեայ անցքերն ու սենեակները  
կը տանէր՝ հազար ու մէկ անհամար ու զիրար դիմա-  
ւորող ճամբաներէ : Վերջապէս ո՞վ որ այս դռնէն վար  
իջնար , կարող էր ամբողջ բերդին յատակը պտտիլ :

Մարքօ , շուտ մը կանչել տալով բերդին ու իր  
իշխանութեանը ներքեւն եղած երկիրներուն դատե-  
րը տեսնող վիճակական դատաւորը , հրամայեց հարց  
ու փորձ մ'ընել վերը՝ նոյն ամայի հրապարակին մօտ  
աշտարակի մը մէջ բնակող ընտանիքէ մը . եւ ասկէ  
իմացաւ որ նոյն դիշերը այդ կողմէն շատ մը ընդ-  
միջեալ ու հեղձեալ ձայներ լսուեր են : Սակայն ա-  
սով ալ չի կրցաւ հասկնալ թէ արդեօք բանտարկեալ-  
ներն առջի դռնէն դուրս հանուած են՝ թէ երկրորդ  
դռնէն ներս բերդին ստորերկրեայ սենեակներուն մէջ  
փակուած են : Ուստի երկրորդ դրան բանալիներուն



գանուիրն ալ անկարելի ըլլալով, Մարքո նախ հրա-  
մայեց որ դռները կոտրեն . եւ ուրիշ քանի մը հող-  
ւոյ պատուիրեց որ երթան դուրսը քաղքին ու մտա-  
կայ զիւղերուն մէջ ասդիս անդին առանց իր անու-  
նը տալու պտըտին, եւ թէ որ Բէէէկրուայի պատա-  
հելու ըլլան, բռնեն գինքն ու բերեն :

Անոնք որ այս ներքին խուզարկութիւնը ընելու  
հրամայուած էին, այս միջոցիս երկաթէ մուրճերով  
ու լծակներով դռները վար առին եւ լախ ու մութ  
ձամբու մը մէջ իջնալով՝ սկսան մէկն ասկէ միւսն  
ալ անկէ այլ եւ այլ տեղեր բաժնուիլ : Սակայն ա-  
մենքն ալ քիչ մ'առաջ չի գացած, նորանոր արդելք-  
ներու կը պատահէին, որովհետեւ իւրաքանչիւր նըր-  
բաշաւղաց բերանը՝ հասար երկաթէ վանդակներ կա-  
յին եւ այն նրբաշաւղաց աջ եւ ահեակը գանուող սն-  
եակներն ալ կը պուռած էին : Մարքո անձամբ հաս հոն  
վազլուտելով կը քաջալերէր այս գործաւորները, ինք  
անձամբ կ'օգնէր դռները բանալու, բեւեռներն ու  
պատերուն մխեալ ճանկերն ու ծխնեաց լամբերը հա-  
նելու . սակայն ամեն աշխատանք 'ի զուր էր : Վասն  
զի հազիւ թէ տակաւին մեծաւ աշխատանօք միայն  
մէկ նրբաշաւղի մը չորս հինգ խուցերը կրցեր էին մըա-  
նել եւ դանոնք ալ պարագ գանել, դեռ անդին սր-  
չափ ընելու պոտոյաներ եւ խորտակելու անձամբ  
գոներ ու երկաթէ վանդակներ ունէին :



### Գ Լ Ո Ւ Խ Լ Ա :

Այս ծանր աշխատութիւնը բաւական երկար տե-  
ւելու վրայ էր, մէկ մ'ալ յանկարծ կարծես թէ գոր-  
ծաւորաց մէկուն ականջին գեանի տակէն նուազ ձայն  
մ'եկաւ : Մարքո նոյնժամայն բոլոր գործաւորները  
զաղբեցնել տալով, ամենքը միատեղ սկսան խորին  
լուսթեան մէջ ականջ տալ . . . : Քանի մը վայրկե-  
նէն երկայն ու սուր եւ լալու եղանակաւ ձայն մը,  
բերդին ամենաբարձր աշտարակին հիման եւ առաջին  
ստորերկրեայ յարկին տակէն վերստին լսուեցաւ : Այս  
նոր յոյսը՝ ամենուն ուժը կրկնապատկելով՝ դարձեալ  
գործի սկսան : Վայրկենի մը մէջ երկաթէ վանդակ-  
ները խորտակուեցան ու սենեկի մ'ալ գոները բաց-  
ուեցան : Նախ եւ առաջ Մարքո ձեռքը ջան մ'ա-  
ռած նոյն խուցէն ներս մտաւ եւ գեանէն դադանի  
դուռ մը վեր առնելով՝ պատուակ սանդուխէ մը մին-  
չեւ աշտարակին հիմն իջաւ : Վերտը թունդ ելած ա-  
ռաջ գնաց ընդարձակ եւ մթին բանտի մը մէջ եւ լու-  
սեց իրմէ գթութիւն խնդրողի մը նուաղեալ ձայնը .  
տեսաւ ճակատը եկող պատին անկիւնը մէկուն ըստ-  
ուերի մը սէս երկու բաղունները գէպ իրեն տարա-  
ծելը՝ վաղեց գէպ 'ի նոյն անկիւնը եւ ձեռքի ջահին  
լոյսն՝ իրեն անձանօթ գէմը մը ներկայացուց . . . .  
Երանուհին չէ . սակայն ձվ է . . . մարդ մ'է . . . Թրե-  
մաքօլոսն էր :

Իեղկատակը շուտ մ'իրենն սլկ ըլլալը եւ թէ Տէլ



Պայցո կոմսին աղջկան հոն փակուած ըլլալն իմանալու համար ինչ ճամբով ներս մտնելն ու բռնուելով այս խաւարարնակ տեղը նետուելը, եւ թէ միանգամայն Երանուհւոյն վրայով լուր մը չուենալն իմացընկելով, նոյնժամայն շղթաներէն ազատեցաւ :

Այս դէպքին վրայ Մարքո եւս տոռաւել վնասած, հրամայեց որ հետազօտութենէ չի դադարին : Քիչ ատենէն ղինակիր մ'երեւնալով՝ Տէլ Պայցո կոմսին ու կոմսուհւոյն Բօզաթէ բերդը դալը՝ եւ անձկանօք ղինքը տեսնալ ուղեմին իմացուց : Այս լուրը կարծես թէ կաթուած մ'իջեցուց Մարքօյի սրտին :

Երեսին գոյնը նետեց, ու քանի մը քայլ առաջ դնաց եւ դռնէն դուրս ելաւ եկող հիւրերը զիմաւորելու մտքով : սակայն շուտ մը ետ կենալով կռնակը սիւնի մը տուաւ, եւ առանց բառ մ'արտաբերելու, բաւական ատեն նոյն դիրքին մէջ կեցաւ :

Մինչեւ որ նոյն միջոցին Մարքօյի կրթընած սեան ղիմացի կողմէն լսուեցաւ քանի մը հօգուոյ միատեղ կանչելն ու աղաղակը . — Հոս է, հոս է : գտնուեցան, գտնուեցան : Այս ձայներուն արձագանքը՝ այն տխուր ու գեանափոր կամարակապներուն տակը հնչելուն պէս, ամենքը միատեղ ձեռքի գործիքները ձրգեցին եւ ուրախութեամբ ու աճապարանօք դէպ'ի նոյն կողմը վազեցին : Այնպէս որ՝ խուռն բազմութեան ձեռքը բռնած ջահերէն շուտ մ'այն խառնուչիթ լարիւրինթոսին մուտ ճամբաներն ու անցքերը լուսաւորուեցան :

— Երանուհին ողջ է, հարցուց Մարքօ նոյն վաղող բազմութեան մէջ ինք ալ առաջ երթալով :

— Մեռած է, պատասխանեց ձայն մը այն կող-

մէն՝ դէպ'ի ուր որ գործաւորաց բազմութիւնը վազելու վրայ էր :

Մէկ մ'ալ այս միջոցիս տեսնուեցաւ Տէլ Պայցօ կոմսին աղջկան երկու քաջ ղինակրաց բաղկացը վրայ դալկացեալ դիմօք, աչքերը գոց ու գլուխն ալ մէկ ուսին վրայ ձգած, ամբոխէ մը շուրջ պատեալ առաջ գալը : Միայն Լաուրէզա, մագերը ձգած ու պատրաստ զգեստներով իր սիրելի տիրուհւոյն քովէն կ'ուզար եւ ձեռքերովն անոր ցուրտ ճակատը կը շոյէր ու համբուրելով արցունքներովը կ'ոռոզէր :

Մարքօ որչափ ալ կը տեսնար այս աղետալի յուզարկաւորութեան ծանր ծանր յառաջ գալը եւ միանգամայն այնչափ քաղմութիւ ջահերուն լուսովը հեռուէն կամաց կամաց կը նշմարէր Երանուհւոյն գեղեցիկ ու դալկացեալ դէմքը, այսու ամենայնիւ իրեն այնպէս կուզար թէ՛ այս տեսարանը աչացը երևոյթ մ'է, կամ թէ ինք քուռի մէջ երազ կը տեսնայ : Ուստի ինքզինքը համոզելու համար, ցնորածի մը պէս երբեմն պատերը կը շօշափէր եւ երբեմն ալ իրմէ առաջ անցնել ուղղութիւնուն ուսերը կամ բազուկները կը սխմէր : Աերջապէս ղիմացէն եկող բազմութեան մէջ մտաւ եւ Երանուհւոյն մօտենալով՝ մէկ ձեռքն անոր ճակտին տարաւ : Նոյն շօշափումէն ըզգացած ցրտութիւնը ղինքը ցնցելով՝ իր թմրութենէն զբաստացաւ : սաստիկ բող մը սկսաւ բուրբ անդամները ճնշել, արիւնը՝ իր սովորական չրջանը փոխելով յանկարծ ուժով մը գլխուն ու ճակտին երակացը մէջ վազեց ու երեսէն վար սկսաւ ոլոռն ոլոռն քրտինք հոսիլ :

Մարքօ այսպիսի փիճակի մը մէջ ծանր քայլերով



Երանուհոյն քովէն կ'երթար : հասաւ վերջապէս այն սանդուխին ոտքը՝ որուն վերի ծայրը կը հանէր վերայիշակլ փոքրիկ ու ամայի հրապարակը : Հոն ելածին պէս, կարծես թէ օդին մաքրութիւնը եւ արեգական տեսքը՝ անոր զգացմունքները նախկին վիճակին մէջ բերելով, յիշեց Երմէլիտայի գալն ու իրեն սպասելը : Եւ հասկցաւ որ եթէ կոմսուհին իր աղջկէն այս վիճակին մէջ տեսնելու ըլլայ, անմիջապէս սրտին կաթուած իջնելով կը մեռնի : Ուստի բոլոր չորս կողմն առնող ամբողջին նշան ըրաւ որ կենան, եւ 'ի դարմանս ամենեցուն հանդարտ ձայնով ու եղանակաւ մը հրամայեց՝ որ ամենքն ալ ջահերը մարելով լռութեամբ ցրուին, առանց ամենեւին ուրիշի մը վարը տեսածին հաղորդելու :

Իսկ ինք՝ լռութեամբ առաջնորդելով Լատրէդայի եւ Ղերանուհին բերող երկու ղինակիցայ, շիտակ մըտաւ բերդապահին կնոջ խուցերէն մէկը :

Երբ ամենայն ուշադրութեամբ ու մեծ հոգ առնելով Ղերանուհին հին անկողնի մը մէջ պառկեցուցին, Մարքօ Լատրէդայի դռնապալով հարցուց իր սիրուհոյն երբ մնած ըլլալը :

— Կէս ժամ առաջ դեռ ողջ էր, պատասխանեց ազախնը ճեկեկելով, միմիայն երբոր այն խաւարային բանտերուն դռներն սկսան խորտակել, վախէն մնաւ, կարծելով թէ գմեղ սպաննելու կուգան :

Այս միջոցին ներս կը մտնէ բերդին սովորական բժիշկը : կը նայի, կը քննէ պառկողին ամեն վիճակն ու չբժանցը վառած մոմաբաւ մը կը մօտեցնէ . . . . լոյսին բոցը կտրծես թէ պառկողին չնշառութենէն կ'սկսի շարժիլ : Այս տեսնալով՝ Լատրէդա եւ բեր-

դապահին կինը ամենայն ջանք կ'ընեն՝ որ պառկողին խեղճ գլուխը բերեն : Կամայ կամայ սրտին զարնելը կ'սկսի, երակներն իրենց առջև վիճակը կ'ստանան եւ կենաց տաքութիւնն ալ սակաւ առ սակաւ բոլոր անդամոցը մէջ կը վերադառնայ . . . : Սակայն ոյժ ըսուած բանն ամենեւին չունենալով, յանկարծ վերըտին տենդ մը կը բռնէ զինքը . . . այն տտեն հաղիւթէ կընայ վաղուան արշալոյսը տեսնալ . . . կ'ըսէ բժիշկը :

Մարքօ, որ այս անյուսալի կերպով Ղերանուհին ողջ գտնալուն վրայ ուրախութենէն ինքիւնէ դուրս ելած էր, հիմակ ալ բժիշկին այս խօսքին վրայ գրեթէ յուսահատութեամբ գլուխն առջին կախելով ինքնիրեն ըսաւ : — Ահա ասիկ լեցուեցան մարգարէին խօսքերը : Աւերջը՝ աշխարհքիս վրայ ալ յուսալու եւ ոչ ալ վախնալու բան մը չունեցող մարդու մը պէս, Բէլէկրուայի կնոջը մօտենալով՝ անկէ Օդօրիւոյի վրայ տեղեկութիւն ուղեց :

Կինը, որ Լօտրիդիօյի ղիմացը ներկայ դանուած ժամանակն անոր զրուցած խօսքերէն կը յուսար թէ Երանուհոյն ամուսինը Պինասքօ բերդին մէջ փակուած ըլլայ, բացէ 'ի բաց հաղորդեց Մարքօյի այս իր ունեցած կատկածը : որուն Ալիքօսթի եւս համոզուելով, 'ոյն ժամայն միտքը դրաւ՝ որ առանց ժամանակ կորսնցնելու ինք անձամբ կորուսեալ երկաւասարդը գտնալու ելլէ :

Ուստի հիւանդին խուցէն դուրս ելլալով՝ հրամայեց որ առ այժմ Լատրէդայէն ուրիշ մէկը չի դրանուի Երանուհոյն խուցին մէջ : որպէս զի երբոր խեղճն ինքզինքը գտնալով աչքերը բանալու ըլլայ,



իրեն միշտ սիրելի ու հաւատարիմ աղախնէն ուրիշ մարդ չի տեսնայ իր քովը :

— Հիմայ դու գնա Երանուհոյն մայրը կանչէ , ըստ վերասին բերդապահին կնոջը դառնալով , ըսէ իրեն որ աղօթէ . . . . աղօթէ նաեւ ինծի համար ալ :

Այս ըսելով՝ ածապարանօք իջաւ բերդին մեծ գաւիթը , ու հոն պէտք եղած քանի մը հրամանները տալէն վերջը , հեծաւ ու շարժական կամուրջէն անցնելով գնաց :

Երանուհոյն հիմակուան պառկած խուցը դէպ արեւելք՝ բերդին առջեւը լոյս ու արձակ մարդապետներ մը վրայ կը նայէր : Արեգակն արդէն բարձրացած ըլլալով՝ պառկած հիւանդին անմիջապէս անկողնին դիմացը պատուհանէ մը ներս իր ճառագայթները երկընցնելով , այնպիսի առատ լոյս մը տիրած էր խուցին մէջ , որ եւս առաւել հիւսնողին օրհասական նիւ հարուստիւնը աչքի դարնել կուտար : Առաջին անգամ ինքզինքը դանալով՝ Երանուհի աչքերը բանալն ու գոցելը մէկ ըրաւ , որովհետեւ անչափ ժամանակ դետնափոր բանտերուն ամենաթանձր մթու թեանը մէջ անցընելէն վերջը , հիմայ մէկէն 'ի մէկ արեգական ճառագայթները խեղճին ակար աչքերը կը ցաւցնէին :

Աղախինը՝ չուս մը պատուհանին փեղկերը վրայ բերելով եկաւ սիրուհոյն քովը նստաւ , եւ արտասուելով կը համբուրէր ու անունը տալով կը կանչէր զինքը : Երանուհի զլալով իր սիրելոյն արտասուածքը տաք կաթիլներուն հոսիլը , անգամ մ'ալ աչքերը բացաւ , եւ ցնորածի պէս անոր երեսն 'ի վեր նայելէն վերջը , հարցուց :

— Լաւորէղան , դ՞ու ես :

— Այո , ես եմ , ամենեւին բանէ մը կուսկած մի տեսնար . ալ հիմայ ազատ ենք , սիրտդ հանդարտ բռնէ :

Սակայն խեղճ հիւանդը , որ տակաւին կարող չէր դիմացիին զրոյցներն ըմբռնելով անկէ խնայտ մը քաղել , միշտ կատկածի մէջ կը հարցնէր :

— Ո՞ւր գացին այն աւաղակները . . . բանտերնուս դռները խորտակեցին , եւ իրենց բերտ ձայներն ականջիս մէջ հնչած ժամանակը , կարծեցի թէ անոնց ցուրտ դաշտներուն հարուածները ցաւած սրտիս խուցը պատուեցին . . . : Ո՞հ , ըսէ ինծի , ուրեմն անոնք զիս չ'սպաննեցին . . . ես կարծեցի թէ մեռած եմ , եւ այնչափ ձեռքերնին ջահաւոր ժարդկանց բաղում թիւնը զիս անմիջապէս թաղելու կը տանին . . . գիշեր էր եւ ինչպէս վայրկեանի մը մէջ առաւօտ եղաւ , եւ մենք հիմայ ո՞ւր ենք :

— Բերդապահին բարեսիրտ կնոջը խուցին մէջն ենք . հիմայ ազատութիւնը մերն է , եւ զիսնաս որ Մարքօ անձամբ եկաւ . . .

Այն ահարկու անուան ձայնը՝ Երանուհոյն սըրտին իւր թէ կրակի մէջ կարմրուցած երկաթի կտոր մը դպցնելու պէս , յանկարծ պառկած տեղէն ցատկելով նստաւ ու սկսաւ կանչել . — Գիտե՞լէնք , փախչէ՞նք . պահէ զիս , փրկէ զիս , Աստուծոյ սիրուն համար ըլլայ , փրկէ զիս :

— Ո՞հ , չէ , տէր Աստուած , հանդարտէ : Մարքօն հոս չէ , եւ ապահով եղիր թէ քու չուղած մարդդ այս խուցին մէջ ոտք չի պիտի կարենայ կոխել . . . դարձեալ կը կրկնեմ , մի վախար , մենք ալ ազատ ենք . եւ զիսնս արդեօք հիմայ քեզի տալու բարի լուրս ո՞րն է : Մայրդ հոս է :



— Իմ մնչրս :

— Այո՛ քու մայրդ , եւ ոտքի վրայ ելլալու չափ ինքզինքդ դտնալուդ պէս , ամենքնիս ալ միտտեղ մօրդ հետ տուն պիտի դառնանք :

— Ո՛հ , ալ բաւական է , մի՛ ուզեր զիս նորէն խափել . մի՛թէ չեմ յիշեր եւ քանի՛ քանի՛ անդամներ ըսած ես թէ պիտի դայ եւ վերջը . . . :

— Սակայն հիմայ ինք հոս է , հաւատան ինծի թէ հոս է , եւ երբ որ ըլլայ պիտի տեսնաս զինքը :

— Չէ , չէ , սիրելիս , այս վերջի խօսքիդ ամենեւին չեմ կրնար հաւատք ընծայել . չէ , ալ ես մայրս չի պիտի տեսնամ : Ես խիստ շատ անդամներ այս շընորճը խնդրեցի Աստուծմէ , հաստատուն յուսով եւ բազում արտասուօք . . . սակայն երկինք չ'անսացին իմ աղաչանացս . . . եւ հիմայ . . . խիստ ուշ կ'ըլլար . . .

— Ա՛հ իմ աղջիկս , կանչեց այս միջոցիս Էրմէլինտա , ցաւակցեալ ու մարած ձայնով մը : Բժիշկը քովի խուցէն արգիլած էր մինչեւ հիմայ խեղճ մօրը որ աղջկանը քովը չ'երթայ , պատճառ բերելով անոր վերջին աստիճանի տկարութիւնը , որպէս զի չըլլայ որ իր յանկարծակիս ներկայութեամբը՝ հիւանդին վճակին վտանգաւոր այլալուծիւն մը բերէ :

Սակայն Էրմէլինտա կեցած խուցէն լսելով Երանուհոյն բոլոր խօսածներն , ու միանգամայն չի կարենալով սանձել մայրական սիրոյն սաստիութիւնը , վազեց աղջկանը գլուխը :

Երանուհին գլուխը մօրը ուսին դրաւ ու զիրար գորովանօք գրկելով , երկար ատեն նոյն դիւբին մէջ լուռ կեցան :

Վերջապէս նախ եւ առաջ Էրմէլինտա՝ ազատեց

ինքզինքն այս քաղցր ու միանգամայն ցաւաղին կապանքէն . եւ ձեռքն աղջկանը գլխուն դնելով . — Այտուհետեւ հանդարտ եղիր , կ'ըսէր , նայէ՛ , ես հոս քու քովդ եմ , մէկ մ'ալ քեզմէ չը բաժնուելու պայմանաւ . միշտ միտտեղ պիտի կենանք , միշտ միշտ Այո՛ սիրելիս , սիրելի եւ ազնիւ Երանուհիս . մի՛ վճառիր , ամենայն երկիւղ վարատած է եւ հիմայ քեզի ուրիշ բան չի մնար՝ բայց եթէ ուրախ ըլլալ . տես որ քու մայրդ՝ քովդ քեզի հետ է , եւ քովէդ ալ յաւիտեան չի պիտի հեռանայ :

Երանուհի հնազանդելով որչափ ալ ժամանակ մը գլուխն երեսի բարձին դնելով հանդարտ կեցաւ , սակայն մօրը դիմադրութեանը հակառակ՝ չի կարենալով զսպել ինքզինքը , յանկարծ գլուխը վեր առնելով դարձեալ երկրորդ անգամ մ'ալ բազուկները մօրը վիզը ձգեց :

— Չէ կ'ըսէր Երանուհի , չէ , թող որ իմ առանց քեզի անցուցած այսքան անձկալից օրերուս ու գիշերներուս կարօտն առնու՛մ . Թող , որ այս խնդիրքս կատարուելով դոնէ միսթարութիւն մը ունենամ . թող որ այս կերպով սրտիս անբուժելի խոցերուն սպեղանի մը դտած սեպուլիմ . թերեւս կենացս մէջ վերջին անգամ զգացած հաճոյքս պիտի ըլլայ :

— Աստուծոյ սիրուն համար՝ հանդարտէ՛ , այսքան այլալուծիւն , այսպիսի տկարութեան վիճակիդ մէջ :

— Ա՛հ , մի՛ վախնար մայր իմ , կը պատասխանէր Երանուհի , հաւատան , թէ ասկէ ինծի շնտա մը չի ծագիր , մանաւանդ թէ կ'զգամ այնպիսի ոյժ մը . . . թող , թող զիս . եւ գրկելով զմայրը , ջերմ արտասուօք երեսները թրջելով կը համբուրէր ու սիրալիւ հեծու-



թեամբ մը չէր դադարեր կրկնելէն . սն , մայր իմ , սն , իմ սիրելի մայրիկս :

Կրմէլինտա՛ վերջապէս յաղթուելով այն դգացու- մէն , որ երկրիս վրայ քան դամնը կը գերազանցէ , ձգեց ինքզինքը աղջկանը բազկացը մէջ . եւ արտասուակց աչօք կը փոխարինէր անոր խրաքանչիւր համբուրելոյն ու գգուանացը : Կարեկցութեան արժանի տեսարան մը բացուած էր այս երկու վշտացելոյ մէջ . սակայն այնպիսի կարեկցութեան մը՝ որ միանգամայն մխիթարէ էր , այնպիսի կարեկցութեան մը՝ որ լի էր ուրախութեամբ :

— Գիտես թէ քու հայրդ ալ հոս է , ըսաւ Կրմէլինտա , քիչ մը խօսակցելու չափ ինքզինքը գտնաւով՝ շունչ առնելէն ետեւ :

— Ի՞նչու ուրեմն ներս չի գար , պատասխանեց աղջիկը , նոր գուարթութիւն մը փայլելով գէմբին վրայ :

Շուտ մը Տէլ Պալցօ կոմսը կանչուեցաւ , որն որ կէս մը խանդաղատեալ ու կէս մ'ալ սարսափած ներս մտաւ : Սակայն երբոր տեսաւ աղջկանն այնչափ փոխուելն ու վատուածալը , երբոր տեսաւ անոր նոյնժամայն մէկ բազուկը մօրը վրէն վեր առնելն ու նազելի սիրով մը իրեն նրկնցնելը , երկչտութիւնը կարեկցութեան տեղի տալով , սիրաք ճողովկան սիրոյն անշիջանելի բոցովն արծարծեցաւ : Ուստի , շուտ մը Երանուհւոյն քովն ու անոր գլուխը գրկելով արտասուակաւ աչօք ըսաւ , — դքեզ գէշ վիճակի մէջ կը տեսնամ աղջիկս :

— Ո՛հ , ամենեւին չէ . հիմայ որ իմ սիրելի ծընողացս հեան եմ , աղէկ եմ , մանաւանդ թէ խիստ աղէկ , բայց Օգորինօն . . .

Կոմսը՝ չրթունքները խածնելով որչափ ալ ուղեց ինքզինքը բռնել , սակայն դարձեալ չը կարենալով համբերել :

— Ո՛հ , Ատուածոյ սիրուն համար ըլլայ , հիմայ հոս անոր անունը տալու ժամանակն է :

— Միթէ ինք իմ ամուսինս չէ , պատասխանեց աղջիկը քայցրութեամբ մը , արդեօք ո՞ղջ է , եւ կըրնամ յուսալ զինքը տեսնալու :

— Այո՛ , անշուշտ բարերարն Ատուած զինքն ալ պահած պիտի ըլլայ , ըսաւ Կրմէլինտա , եւ բերդապահին կնոջ զրուցածին համեմատ , պէտք է որ Օգորինօ Պինասքօյի բերդին մէջ փակուած ըլլայ : Մանաւանդ թէ ժամ մ'առաջ Մարքօ զանի գտնալով հոս մեղի ներկայացնելու պայմանաւ , անձամբ ասկէ ճառքայ ելաւ :

— Մարքօ , կանչեցին հայրն ու աղջիկը միարեւրան , երկուքն ալ զանազան կասկածներու երթալով :

— Այո՛ , մի գարմանաք , Մարքօ Վիսքօնթիին է զինքը բնտուելու գացողը , կրկնեց Կրմէլինտա : Եւ հոս կարգաւ պատմեց առնոց , իրեն առջի գիշեր Մարքօյի հետ ըրած առանձնակի տեսութիւնը . հետեւաբար համոզեց զիրենք թէ գլխունուն պատահած ամենայն չարեաց գործադրութեանը մէջ Մարքօ ամենեւին ձեռնտուութիւն չէր ունեցած : Յայանեց անոնց Մարքօյի 'ի սկզբանէ մասամբ ունեցած յանցանաց վըրայ զգացած սրտին մեծ ցաւը , Հատուածեց անոնց անխախտ առաջագրութիւնը՝ մինչև իր կեանքը դնելու պայմանաւ , դարձանել 'սոյն իսկ 'ի սիրդանէ իրեն ունեցած յանցանաց կամ թոյլտուութեանը հետեւանքը տեսուող չարիքները : Չի մոռցաւ նաեւ անոնց հա-



ղորդելու, Մարքոյի առ Օղորինօ ունեցած բարեյօ-  
ժարութիւնները: Ահրջապէս սփնչափ այս մարդուն  
վրայ գովաբանութիւնը երկարեց, որ կրցաւ կամօն  
ու միանգամայն աղջկանը սրտերնուն երկիւղն ու կաս-  
կածը փարատել:

Երանուհի՛ որ մօրն այս պատմածներուն վշտազ-  
նեալ երկիւղածութեամբ մ'ունկնդիր եղած էր, աչ-  
քերն յերկինս բարձրացնելով հառաչեց. — Աստուած  
անոր թողութիւն չնորհէ: Ահրջը երկրորդ անգամ  
մ'ալ մօրը գառնալով, ինծի չըսիր թէ Մարքօ ան-  
ձամբ Օղորինօն գտնալու գնաց, այնպէս չէ. . . կը  
յուսան թէ իմ ամուսինս կարենայ ժամանակին զիս  
վերջին անգամ մ'ալ տեսնալու հանել:

— Ա՛հ, ինչո՞ւ այսպէս կը խօսիս, սիրելի աղ-  
ջիկս, հառաչեց Երմէլինտա քաղցր՝ սակայն յանդի-  
մանական եղանակաւ մը: Չիս մտիկ ըրէ, սիրելիս,  
մարդուս կեանքն ու մահը բարեացակամ Ամենակալի  
մը ձեռքն է. . . ինք չի պիտի կամենայ. . . մեր վրայ  
գլխալով. . . եւ ալ չի կրցաւ առաջ տանել:

Երանուհի մօրը մէկ ձեռքը բռնելով համբուրեց.  
մայրն ու աղջիկը փոփոխապէս իրենց խոցեալ սրտեր-  
նուն ուրիշ միտիթարութիւն մը գտնալուն յոյսը կօ-  
րուսած էին:

Բոլոր նոյն օրը՝ եւս առաւել աղջկան հիւանդու-  
թիւնը սաստկանալով, ընկճած էր անոր արդէն հիւժ-  
եալ ու տկարացեալ մարմինը:

Երանուհի մասամբ հնազանդելով բժշկին պատ-  
ուէրներուն, եւ մասամբ ալ մօրը թախանձանայն ան-  
սալով, հանդարտ ու լուռ պառկած էր անկողնին մէջ,  
եւ միայն աչքերն անթարթափ յառելով անկողնին ոտ-  
քը նստած սիրելի մօրն երեսը, գո՛հ կ'ըլար:

Նոյն անկողնին ոտքին աակը, Երմէլինտայի հետ  
նստած էր նաեւ Լատրէդան: Երանուհոյն այն հա-  
ւատարիմ աղախինը, որուն նախ մասնաւորապէս  
պառկող հիւանդը եւ ապա բոլոր խոցեցին մէջ եղող-  
ները, որչափ որ զրուցեր ու աղաչեր էին թէ՛ այն-  
չափ երկար օրեր ու գիշերներ ըրած հակողութիւննե-  
րէն տկարացած մարմինը երթայ գոնէ քանի մը ժամ  
քնանալով հանդարտեցնէ, սակայն անիկայ դարձ-  
եալ չի կարենալով նոյն խոցէն բաժնուել, նստած  
տեղը շարունակ ու ցած ձայնով Բօզաթէ բերդը բեր-  
ուած վայրկենէն մինչև այն օրը՝ իր երիտասարդ տի-  
րուհոյն հետ գլխունուն եկածները կը պատմէր:

Այ՛ պատմէր նաեւ այն անգութ ու աճեղի վար-  
մունքները, որոնցմով կ'ուզէին զԵրանուհին վախցը-  
նելով իր ամուսնոյն ընծայած սիրան ու սէրը պաղե-  
ցնել, որպէս զի այն ահաւոր եւ իրենց բոլոր չար-  
եացը պատճառ կարծուած մարդուն դարձնեն: Ահր-  
ջապէս չի մոռցաւ նաեւ ամենայն երախտապարտու-  
թեամբ յիշելու, բերդապահին ամենախիստ վարման-  
ցը հակառակ՝ անոր կնոջն ամեն վայրկեան իրենց ը-  
րած բարի ծառայութիւններն ու ծածկապէս տուած  
միտիթարական խրատները: Երմէլինտա՛ աղախնոյն այս  
պատմածներէն խանդաղատելով, երբեմն երբեմն  
տիրապից աչօք կը նայէր այնչափ չարաչար տառա-  
պանքներէ հիւժեալ աղջկանը վրայ, Երանուհի ալ  
խիստ լու հասկընալով ասոնց ցած ձայնով ըրած զը-  
րուցակցութեանցը նիւթը, ինքն ալ պառկած տեղէն  
միայն քաղցր ժմիտով մը մօրը կը պատասխանէր ու  
կերպով մ'ալ իւր սիրելի աղախնոյն բոլոր պատմած-  
ները՝ նոյն ժմիտովը վաւերացընել կ'ուզէր:



Սակայն այս խաղաղ հանդստութիւնը՝ երբեմն վարը բերդին մէջ սրատահած աղմուկէ մը խանդարելով, Երանուհի նոյն ժամայն ահանջ կ'ուտար ու դառնալով կը հարցնէր մօրը . — հասան արդեօք : Երմէլինաա խուցէն դուրս կ'ելլար եւ քիչ մը վերջը ներս մտնալով կ'իմացնէր թէ դեռ եկող չ'կայ :

Կրկնուան դէմ, հիւանդը ղգալով իր ցաւոյն անգարմանելի վիճակն ու եւս առաւել ծանրանալը, խոստովանահայր մը ուղեց : Բաւական ժամանակ ծեւրունի քահանայի մը հետ առանձին տեսութիւն ընելէն վերջը, վերստին ուղեց որ ծնողքը քովը ժողովին :

— Զիս մտիկ ըրէ աղջիկս, ըսաւ իրեն քահանան, որչափ ալ Օգոստինոս տակաւին չ'երեւաց, սակայն արշալոյսը չի ծագած կը յուսանք որ հոս կարենայ հասնիլ :

Երանուհի այլայլելով մը պատասխանեց . — Օգոստինոն . . . ամուսինս . . . իմ սիրելի ամուսինս . . . ս՛կ երանի թէ Աստուած ինձի այդ մեծ չնորհքն ընէր . . .

Եղէ թէ վերջին շունչս՝ բարերար Աստուծոյ անւանդելէ առաջ, կարենայի մէկ մ'ալ զինքը տեսնար :

— Զինքն ալ յանձնէ այն արդարադատ դատաւորին, ըսաւ բարեգաշտ քահանան, որ զանի քեզ պարզեւած էր . եւ աղաչէ Աստուծոյ, որ իր յաւիտենական ու արդար դատաստանին առջեւ՝ ընդունի այս վերջին եւ ամենամեծ նուէրդ, դորձած յանցանայք քաւութեանը եւ անմահ հոգեոյք փրկութեանը համար :

Թէպէտ եւ ցաւօք օրտի ու դժուարելով, սակայն Երանուհի, ինքզինքն ըստ կարելոյն ամիտիւէն վերջը երկու ձեռքերն իրարու փայ բերաւ, եւ

դեղեցիկ աչքերն ալ յերկինս վերցուց՝ 'ի նշան հաւատութեան, քահանային այդ խիստ ու միանգամայն ծանր առաջարկութեանը :

Սակայն Երմէլինաա, մէկ ձեռքն աղջկանը գրկուն դնելով, — ո՛վ իմ աղջիկս, կը հառաչէր, ո՛վ իմ նազելի աղջիկս, մյսպէս ուրեմն պէտք է եղեր որ զքեզ կորսնցնեմ : Ի՛նչ կը մնայ ինձ այսուհետեւ այս աշխարհքիս մէջ առանց քեզի, դու էիր իմ սփոփանքս, դու իմ միակ մխիթարութիւնս :

Աղջկը գրուկը կախեց ու սկսաւ արտասուել, եւ քիչ մը վերջը հեկեկելով ըսաւ .

— Մխիթարութիւն ըսիր, եւ ի՛նչ մխիթարութիւն ունեցեր ես ցայժմ այս գերեզմանին մօտեցած հիգագեալէս, որ իւր կամակոր յամառութեամբը քու կենացդ ձամբաներուն վրայ փուշեր սփռելէն դատուրիչ բան չէ ըրած . . . : Ա՛՛վ իմ սիրելի մայրս, ես քեզմէ թողութիւն չեմ ինդրեր, որովհետեւ գիտեմ թէ արդէն դու իմ ամեն ըրածներու 'ի բոլոր սրտէ թողութիւն տուած ես : Իսկ դու հայր իմ, դու ալ արդեօք նոյնպէս ինձի թողութիւն տուած ես :

Երմէլինաան ու կոմսը արտասուելով հեղձամրդձուկ եղած, չէին կրնար բառ մ'արտայբերել : Ինչո՞ցին մէջ ամեն գանուողներն ալ ժամանակ մը լուռ կեցան, մինչդեռ աղախինը՝ հիւանդին չեմ գիտեր ի՛նչ անսակ զովացուցիչ դեղ մը խմցնելէն վերջը, եկաւ անկողնոյն քով աթոռի մը կրթընցաւ, եւ սաստիկ հոգնածութենէն ու սրտին ցաւէն յաղթուելով՝ կամաց կամաց գրուխն ալ անկողնին անկեան երկաթնեքէն մէկուն վրայ դրած քունը տարաւ : Երանուհի տեսնալով աղախնոյն այս խեղճ վիճակը, անօր ու-



սին վերայ դրած մէկ ձեռքն անանց իրեն քաշելու , միւս ձեռքովը նշան ըրաւ մէկաշնոնոյ որ լուս կենան ու աղմուկ ընելէ դդուչանան : Եւ ինքն ալ որ երբեմն երբեմն իր բնականապէս նուաղեալ ձայնովը քեշ մը սառաջ խոստովանածօրը հետ կը խօսէր , ձայնը կըսրեց : Եւ մինչդեռ առտուրնէ մինչեւ իրիկուն սրտին նեղութիւնէն անկողնոյն վարագոյրները եւ կամ երեսին բարձը քանի քանի անդամներ շտկել ստալով , երբեմն կ'ուզէր ելլալ քիչ մը անկողնոյն մէջը նստիլ եւ երբեմն ալ երեւակայեալ հանգստութիւն մը գոնալու մտքով՝ կ'ուզէր մէկ կողմէն միւս կողմը դառնալ , սակայն հիմայ ընդհակառակն , ամենայն ջանք կ'ընէր պառկած տեղէն չի շարժելու եւ կարողութիւնը հասածին չափ շունչն անդամ կամաց կ'առնէր , որպէս զի իր սիրելի աղախնոյն քունը չի խանդարէ :

Երբոր Լուսրէդա արթնցաւ , արշալոյսն ալ ծագելու մօտ էր , անկողնին քովը վառած կանթեղին լոյսը սկսաւ սակաւ առ սակաւ արեղական պայծառ լոյսէն յաղթուելով նուաղիլ :

Աղախինը առչած՝ բոլորտիքը կը նայէր եւ մէկէն 'ի մէկ չէր կրնար մըր ըլլալը վանաղանել . միայն այս միջոցիս Երանուհւոյն երեսը նայելով , տեսաւ որ իրեն քաղցր դիմօք կը ժպտի ու — հոս , ինծի հետ ես , կըսէր , քու սիրելի Երանուհւոյդ հետն ես : Աղախինը առջեւը նայելով ամչցաւ ու միանգամայն ցաւեցաւ որ իր անձնական տկարութեանը պատճառաւ՝ սիրուհին նեղուեր է : Սակայն Երանուհի , գուշակելով անոր մտքէն ու սրտէն անցածը , շուտ մը առաջ բերելով անոր իրեն համար ամենայն սիրով քաջած այնքան տառապանքներն ու ըրած ծառայութիւնները՝ մխիթարեց զինքը :

Արեգակը ծագելէն ժամ մը վերջը , Երանուհին՝ անկողնին մէջ նստելէն հոգնած ըլլալով պառկեցաւ , աչքերը գոցեց ու քիչ մը վերջն ալ քունը տարաւ :

Սակայն չատ չանցաւ՝ յանկարծ արթննալով դըլուխը բարձէն վեր առնելն ու նորէն ինքզինքը վար ձգելը մէկ եղաւ , հետեւաբար պաղ քրտինք մը սկսաւ երեսէն վար իջնալ . չնչառութիւնը ծանրացաւ ու չնչերակներն ալ կարանցուցին իրենց սովորական շարժումը : Ամենքն ալ սարսափած՝ կարծեցին որ մեռած է : Բայց անոր սրտին անցադական նեղութիւն մը եկած ըլլալուն համար , քիչ ատենէն դարձեալ ինքզինքը գտաւ եւ իր սիրելիները յուսահատեալ չորս կողմը շարուած տեսնալով ,

— Որո՞ւ համար կ'արտասուէք , հարցուց , ահաւասիկ ես տակաւին ձեր հետն եմ :

Ամենքն ալ շուտ մը քովը ժողուեցան , եւ Երանուհի քիչ մը շունչ առնելէն վերջը , մօրը դառնալով , — այո՞ւ ամենայնիւ , կը շարունակէր վերի ձրգած խօսակցութիւնը , կ'իմանամ որ այս կեանքս ալ ինձմէ փախչելու վրայ է , եւ ժամանակս ալ չկարձէ : Ուրեմն արիացիր մայր իմ , եւ լաւ ուշ դիր իս հետեւեալ խօսքերուս , մանաւանդ թէ այս խոցեալ սրտէս խղած վերջի ուխտագրութեանս :

Այս ըսելով մատէն մատանին հանեց , եւ դայն մօրը տուաւ . — ասիկայ ձեր ներկայութեանը Ողորինօյէն առած էի 'ի նշան անբակտելի կուսանաց սուրբ ամուսնութեան , որն որ , աւանդ , խիստ կարճատեւ պիտի ըլլայ եղեր այս աշխարհքիս մէջ . . . եւ թէ որ զինքը տեսնալու բաղդն ունենալու ըլլաս՝ օր մ'իմնի վերը ցուցնելու պայմանաւ , յանձնէ դայն ի-



րեն . . . Ըսէ իրեն նաև մասնաւորապէս թէ՛ ես հանդիսաւոր ու միանգամայն ահաւոր վայրկեանի մը մէջ եւ Հօր Աստուծոյ դատաստանին ներկայանալու ատենս , իրմէն միայն մէկ բան մը խնդրեցի . . . այսինքն՝ այս ալէկոծ ու տատապանօք լի աշխարհքիս մէջ ինձի ո եւ է կերպով չարիք հասցընողներէն , ամենեւին վրէժխնդրութիւն չի պահանջել :

Քիչ մը հանդատանալէն վերջը , կամաց մը քովը կանչեց զաղախինը , որն որ անկողնոյն ոտքին տակն ապշած կեցեր էր : Եւ երբոր Լատրէզա մօտեցաւ , Երանուհի դարձեալ մօրը դառնալով , — ես աւելորդ կը համարիմ զԼատրէզա քեզի յանձնելը , որովհետեւ քաջ գիտեմ թէ՛ միշտ զինքը սիրած ու խնամած ես . սակայն յետ այնքան չարայար տանջանայն՝ զորս քերոջ պէս ինձի հետ արխաբար եւ չառանց դժգոհութեան կրեց , կ'ուզեմ որ իմ տեղս իբրեւ բուն իսկ աղջկիկ ընդունիս զինքը . . . Լատրէզա աւելի հրնազանդ պիտի ըլլայ քեզի՛ քան զիս զթշուառս , զոր դու 'ի բոլոր սրաէ սիրեցիր . . . Եւ Լատրէզայի դառնալով , կը խոստանանս եւ կ'ընդունիս իմ առաջարկութիւնս . . . :

— Ա՛հ , այո՛ , պատասխանեց աղախինը , չի պիտի թողում զինքը , քանի որ այս շունչս վրաս է , եւ միշտ իր հեաք պիտի կենամ :

Այն ատեն Երանուհւոյն ոյժը կտրելով լուեց եւ բաւական ժամանակ ծանր շնչառութեամբ քնանալէ վերջը , կամաց մը աչքերը բանալով՝ դարձաւ դէպ յայն պատահանը , ուստի արեգակնան ճառագայթնեբը խուցին մէջ մտած էին , եւ չրթանը ծայրովը ինքնիրեն մրմնջեց . — հոյ իմ սիրելի բլուրներս :

Մայրը քովը մօտեցաւ , եւ Երանուհի խզուկ ու միջատեալ ձայնով մը հետեւեալ խօսքերը զրուցեց . — Հո՛ն , Լիմոնգայի Ս . գերեզմանատանը մէջ . . . այն սղոյթի մատրան դաւիթը . . . ուր որ պառկած է իմ սղոյթի եղբայրս . . . ուր որ քանի քանի անդամներ քեզի հետ գացեր աղօթեր ու լացեր ենք . . . այս տառապեալ մարմնս ալ թող անոր քովը հանգչի . . . եւ երբոր միմակ հոն երթալու ըլլան , երկուքներնուս հաւար ալ միատեղ աղօթես . . . Գիտեմ թէ՛ այն բարի զեղացիները մեծ սուգ պիտի ընեն ինձի համար : Բարեւ ըրէ՛ իմ կողմանէս ամենուն ալ . . . չի մոռնաս նաև խեղճ Մարթան ալ , որ նոյն սուրբ հողին տակ ինձի պէս սիրելի որդի մը ունի :

Տառապեալ մայրը հաւանութեան նշաններով եւ արտասուելէն խեղդուած ձայնովը , ապահովուց զինքը թէ բոլոր իր սրտին փափաքը անվրէպ պիտի կատարէ : Այն ատեն քահանան , տեսնելով որ հիւանդն ալ խիտ քիչ ժամանակ ունի այս վշտալիր աշխարհիս օղբ շնչելու , փորուրաբը վիզն անցնելով խաչակընքեց ու սկսաւ մահուան դուռը հասնող հիւանդաց աղօթքը զրուցել : Խուցին մէջ գանուողներուն ամենքն ալ ճերադիր անկողնին շուրջը շարուեցան ու հեկեկելով քահանային զրուցած աղօթիցը մասնակից կ'ըլլային : Իսկ Երանուհի , պառկած տեղէն երբեմն նուաղ ձայնով մը եւ երբեմն ալ գլխովը բարեպաշտական ձեւ մ'ընելով , խոստովանածօրն արասերած սուրբ աղօթից խմատին ուշադիր ըլլալը կը յայտնէր , եւ իր հեզ ու հանդարտ կերպարանքը , բարեխաչտ հոգւոյ մը երջանիկ խաղաղութիւնը յայտնելէն զատ , կ'երեւար թէ մահուան վերջի տաճանելի ցաւոցը մէջն



անդամ, Երանուհի ուրիշ կենաց մը քաղցրութիւնը կ'իմանար :

Սակայն խուցին մէջ պատած այն սրբազան լուծիւնը, յանկարծ դուրսը սանդուխներէն վեր անպարանօք վաղող քանի մը հողոյ ոտից ձայնէն խանգարեցաւ :

Ամենքն ալ միանգամայն կ'սկսին դէպ 'ի դուռը նայիլ . բերդապահին կինը շուտ մը ոտք կ'ըլլալով կը դիմաւորէ խուցէն ներս մտնող երկու անձինքը, եւ ցած ձայնով անոնց քանի մը խօսք զրուցելէն վերջը, այս եկողներէն մէկը դրան սեղիս վրայ կը կենայ, իսկ միւսն անհամբեր խուցէն ներս մտնալով ծնրադիր կը յարձակի դէպ անկողնին ոտքը, ու կ'սկսի դռն արտասուօք թրջել ու համբուրել անոր չորս անկիւնէն կախուած վարադոյրները :

Երմէլինտա, կոմսն ու Լաուրէզա, շուտ մը ծանշցան թէ այն ասպետը Օգօրինօն էր . իսկ միւս ներկայ գտնուող անձինքն ալ հետեւաբար կրցան գուշակել թէ այն երիտասարդը Երանուհւոյն ամուսինն էր :

Օգօրինօ անմիջապէս Պինաքօ բերդին բանտուրէն, այն մարդուն ձեռքն ազատած ու հետը միատեղ եկած էր, որուն նաեւ հրամանաւը բուսական ժամանակէ 'ի վեր հոն բանտարկուած էր :

Հողեվարը, այս յանկարծական ազմուկէն ցընցուելով, բայցաւ նուազեալ աչքերն ու խուցին մէջ քովը դանուող անձանց իր դիմացը կայնելէն ներս մտնողը չի տեսնալով, հարցուց իրենց խոտովութեան պատճառը :

— Փնօք տուր Աստուծոյ, պատասխանեց խոս-

տովանահայրը խանդադատեալ . եւ ինչպէս որ մինչեւ հիմայ ամեն դառնութիւն խաղաղ սրտիւ եւ ամենայն սիրով նախախնամութեան ձեռքէն ընդունեցար, ընդունէ նաեւ այժմ նոյն երախտագիտութեամբ այս քեզի շնորհած վերջին ուրախութիւնն ալ :

— Ի՞նչ . . . Օգօրինօն է . . . ըսաւ օրհասականը յետին անգամ մ'ալ ջանալով նոյն անուշը արտաբերելու :

— Այո՛, քու ամուսինդ է, կրկնեց քահանան ու միանգամայն Օգօրինօյի մօտենալով՝ զինքը գետինը ծնրադիր կեցած տեղէն վերցուց եւ հիւանդին քովը բերաւ :

Երանուհի, մարելու մօտ պլպլացող կանթեղի մը նման, ծանրացեալ աչքերը բանալով իւր ամուսնոյն երեսը նայեցաւ . եւ աջ ձեռքն ալ անկողինէն դուրս հանելով անոր երկնցուց : Օգօրինօ նոյն ժամայն բըռնեց դայն եւ 'ի նշան իր անշիջանելի սիրոյն գորովանօք համբուրեց :

Քիչ մը վերջը՝ հոգեվարը ձեռքն իրեն քաշեց, եւ վերստին զայն Օգօրինօյի երկնցնելով՝ կը ցուցնէր իր մայրը եւ միանգամայն կը ջանար բան մը գրուցելու բայց առանց ամենեւին կարենալու բառերն որոշ հընչել : Քահանան հասկցաւ անոր ի՞նչ հասկցնել ուղեին ու Օգօրինօյի դառնալով, — կ'ուզէ քեզի ըսել թէ՛ ձեր նշանուտքի մատանին իր մօրն է տուած եւ դու դայն անկէ պիտի ետ առնուս : Երանուհի նուազ մը միտով մը պառկած տեղէն զլուխը չարժեց, 'ի նշան հաւանութեան խոտովանածօր բայցատրութեանը :

Այն ատեն Երմէլինտա շուտ մը մատանին մատն հանելով Օգօրինօյի առեւ, զոր նա առածին պէս



համբուրելով ըսաւ, — ասիկայ իմ հետս դերեզմանս պիտի իջնայ :

— Աստուածային եւ երկնային շնորհօք հաստատուեալ են ձեր ամուսնութեան կապանքները, կը շարունակէր դարձեալ բարի քահանան, եւ Օդօրինօի դատնալով, այս քու երանելի կիսիք քեզի կ'ազաջէ՝ որ բոլորովին հեռացնեն քու սրտէդ ամենայն հոգի վերէ ժինդրութեան . որովհետեւ վրէժինդրութիւնը միայն նախախնամութեան արուած է :

Այս միջոցիս Երանուհի, անձկանօք աչքերն ամուսնոյն երեսը յառած էր, մինչդեռ նա գլուխը կախած լուս կը կենար : Սակայն խոստովանահայրը վարանելոյն թեւէն բռնելով, — Ուրեմն, հարցուց հաստատուն ու ծանր եղանակաւ մը, կը խոստանանս ամենեւին վրէժինդրութեան հոգի չը կրել, ինչպէս որ կը պահանջէ քեզմէ այս քու կիսիք՝ որ կենաց ու մահուան, ժամանակին ու յաւիտենականութեան մէջտեղը վերջին քայլ մ'ալ առնելու կը սպտորաստուել : Նա եւ այս բանս քեզի իրբեւ պարտք կ'առաջարկէ յանուն այն Աստուծոյն՝ որուն դիմացը դուցէ վայրկենէ մը պիտի ներկայանայ :

— Այո, կը խոստանամ, պատասխանեց Օդօրինօ, արցունք թափելով : Երանուհի անոր շնորհակալ եղաւ այնպիսի քաղցր ու հրեշտակային նայուածքով մը, որ սպարդապէս կը յայտնէր թէ՛ այս մտտի աշխարհիս մէջ իրեն համար, ալ փափաքելու բան մը չէր մնացած :

Այն ատեն քահանան քոյր ներկայ եղողներուն ձեռքով նշան տալով՝ որ ամենքն ալ վերստին իրենց նրազիր լիճակն առնեն, սկսաւ քիչ մը առաջ ընդ-

միջեալ աղօթքները շարունակելու : Միայն քահանային շունչ առնելու համար, վայրկեան մը աղօթելէ դադրած միջոցին, մօտ խուցէ մը հոգեվարին ականջին հեկեկանօք արտասուելու ձայն մը դալով, նուազեալ աչքերն անգամ մ'ալ բացաւ ու մօրն երեսը նույնցաւ, իրբեւ անոր հարցնելու համար թէ՛ ո՞վ է այն լացողը : Երբեքինստա երեսը ձեռացը մէջ ծածկելով, չէր համարձակէր արտադրել այն արտասուողին անունը . . . սակայն քահանան հոգեվարին քովը մօտենալով ականջէն վար ըսաւ : — Աղօթէ մասնաւորապէս նաեւ անոր համար ալ, արտասուողը Մարքօ Վիսքօնի է :

Բարեպաշտ Երանուհին համեստութեամբ մը գլուխը շարժեց, ուղեւրով հասկցնել թէ՛ արդէն կ'աղօթէ . եւ մէկ մ'ալ անկարելի եղաւ խեղճին գլուխն ինքնիրեն վեր առնելը, օրովհետեւ հոգին աւանդած էր առ Աստուած . . .

Գ Լ Ո Ւ Խ Լ Բ

Մարքօ Վիսքօնի, բերդապահին կնոջը խուցէն անսպարսնօք դուրս վաղեց, Օդօրինօն ալ սրտակուտօր անոր ետեւէն դուրս ելաւ :

Բաջայաղթ զօրավարը, իբր թէ թանձր քօղ մը եւ կամ դիմացը պատող ամպ մը կամ թէ արդեւք մը հեռացնելու կերպով, ձեռքը լայն ճակտին եւ սը-



րատես աչացը վրայ կը պտըտցնէր, եւ միանգամայն արագաքայլ մեծիկակ խուց մը երթալով եւ անկէ ալ սանդուխէ մը վեր ելլելով, հասաւ դրան մը առջին, ուր կենալով սկսաւ մտածել թէ արդեօք անկէ ալ ներս մտնայ թէ չէ: Սակայն յանկարծ վրան նեղուած թիւն մը դալով իմացաւ թէ բայօթեայ տեղ մը դըտնուելու պէտքն ունի: Ուստի նոյն դռնէն ալ ներս մտնալով շարունակեց ուրիշ նեղ սանդուխէ մը վեր ելլելը եւ վերջապէս հասաւ ամենաբարձր աշտարակի մը անցարկ յատակին վրայ: Հոն կեցաւ . . . դարձուց մէկ մ'ալ աչքերը անհասնուած հորիզոնին վրայ, նայեցաւ թուխ ամպերով ծածկեալ արեգական երեսը, վերջապէս աչքերը դեռին յատած եւ ձեռքերն կուրծքին վրայ ծալլելով կռնակը երկաթի մը տուած՝ ժամանակ մը լուռ ու հանդարտ կենալէն վերջը, մըտացը մէջ հազար ու մէկ պլանդակ խորհրդոց իրարու յաջորդած միջոցին՝ անսնալով Օդօրինօն որ իր ետեւէն վեր եկած քիչ մը հեռուն դիմացը ոտքի վրայ լուռ կեցեր է, ըսաւ:

— Ինչո՞ւ մինակ ձգեցիր դերմուռնին . . . :

— Մինակ չէ՛, երանելին իր ծնողացը հետ է, պատասխանեց Օդօրինօ:

— Ճշմարիտ է, կրկնեց Վլաքօնթիւն, մեղի արտասուել չի գար, քանի որ տակաւին մեծամեծ պարտքեր ունինք կատարելու: Գու հիմայ իջիր սա սանդուխէն վար, առաջին սրահին անկիւնը՝ դատաւորին խուցը կայ: Ըսէ իրեն որ Բէլէկրուան հոս խնձի խրկէ: Ես անձամբ զինքը պիտի հարցուիրձեմ, դու ալ անոնց հետ միատեղ հոս դարձիր՝ որովհետեւ ըզքեզ ալ կուղեմ քովս ունենալ:

Օդօրինօ ժամանակ մը այս հրամանը կատարելու վարանելովը, Մարքօ չուտ մը հասկըցաւ անոր մըտքէն անցածը, եւ

— Գնա, ըսաւ, եւ անխոյժ եղիր: դիտեմ թէ այս կենացս վերջին վայրկեանները՝ մեայն յանցանքներս դարմանելու համար շնորհուած են խնձի: Երբ որ արիւնը արեամբ պիտի քաւուի . . . երբ որ . . . սակայն ո՛չ, Մարքօ վատի մը յուսահատեալ մահուամբը չի պիտի մեռնի:

Ասպետը երբոր սկսաւ վար իջնալ, Մարքօ դարձեալ ձեռքերը կուրծքին վրայ ծալլած՝ սկսաւ սպասել Բէլէկրուայի ներկայութեանը:

Բէլէկրուա նոյն վայրկեանին բերդին մէջն էր. սակայն հոս հարկ է կարճ կերպով մը պատմել անոր քնչապէս բերդէն հեռանալն եւ ինչպէս նորէն բերդը դառնալը:

Լօտրիզիօյի ընկերութեամբը՝ վերջի անգամ Երանուհոյն հետ ըրած տեսութենէն ետքը, մեր երկու չարագործները խիստ լաւ հասկընալով որ անկարելի էր այն խեղճէն իրենց անուելի դիմանայը համեմատ օգուտ մը քաղել, եւ տեսնալով միանգամայն որ Երանուհին օր քան զօր ուժէ կնիալով կը նիհարնար, ու պեցին իրենց չարանեղ մեքենայութեանց անօգուտ եւ վտանգաւոր դործէքը բուրդովին անհետացնել: Ուստի այս դիտաւորութեամբ, կ'երևայ թէ Բօղաթէի բերդապահը՝ հիշք Մարքօյի Միլան հասած եւ մասնաւորապէս Երանուհուայի հետ տեսնուած դիշերուան ժամուն, վիակեց Օդօրինօյի ամուսինը իւր աղանդոյն հետ այն դեանախոր եւ անել Վիրապին մէջ: Անկէ վերջն ալ Բօղաթէի մօտ Ծալլավէքիա ըսուած դեղը իր մէկ



բարեկամին տեսութեան զնայով՝ մինչև երկրորդ ա-  
ռաւօսար հոն մնաց :

Վերջապէս բոլորովին հանդիստ եւ անկասկած՝  
բերդը գաւնալուն պէս բռնուեցաւ : Առջի անդամ  
գաւառորին ներկայանալուն , բարձրաձայն եւ խրոխտ  
աարար կը պատասխանէր , սովայն երբոր իմացաւ թէ  
Մարքօ եկած է եւ Երանուէին ալ գանուած , նոյնա-  
մայն ինքզինքը մահապարտ խոտովանեցաւ :

Աւտի երկու պահապան ղինուորաց մէջ , Բէլէկե-  
րուա սանդուխներէն վեր աշտարակին վրայ ելաւ :  
Իւրաքանչիւր սանդուխին ուր զնելուն՝ թախանձա-  
նօք Օդօրինօյի կ'աղաչէր եւ ինքզինքն անոր բարեխօ-  
սութեանը կը յանձնէր . որպէս զի զինքը Մարքօյի  
առաջին ցամառն եւ մահառիթ բարկութեանը ճարակ  
ըլլալէն փրկէ :

Հասնելով վերջապէս Մարքօյի դիմացը , ինկաւ  
խոնարհաբար եւ ճնրագիր դեմնին վրայ եւ գողալով  
ու ակոսաներն ալ իրար զարնելով կը թոթովէր եւ կ'ու-  
ղէր ինքզինքն արդարացնել . — Գլխութիւն , գլխու-  
թիւն . . . որովհետեւ ես կարծեցի թէ . . . եւ գէշ դի-  
տաւորութեան համար չէր . . . միայն ուղեցի . . . սա-  
կայն Լօտրիզօն պատճառ եղաւ . . . Լօտրիզիօն գահա-  
վիժեց զիս . . . թողութիւն ըրէ . . . եւ պատմեմ ձե-  
զի . . . եւ պիտի տեսնաք . . . :

Սակայն Մարքօ փոխանակ անոր անտեղի խօսքե-  
րուն ականջ տալու , բարկութեան եւ յետին ասելու-  
թեան նայուածքով մը Բէլէկրուային երեսը նայելէն  
վերջը , սկսաւ երկու պահապանաց մէկուն ձեռքովը  
գատաւորին կողմանէ իրեն զրկուած նամակներու ծը-  
րար մը բանալով , մի առ մի աչքէ անցնել , նամա-

կաց ընթերցումը լմնցնելէն վերջը , Մարքօ հրամա-  
յեց երկու պահապան զօրաց որ ետ քաշուին եւ ամ-  
բողջ ծրարն ալ Օդօրինօյի յանձնելով , ըսաւ . — Ա-  
ստիք քու ձեռօք Երանուէոյն գրուած եւ հեռեւա-  
բար անոր խուցէն գտնուած նամակներն են : Երիտա-  
սարդն ալ առաւ զայն ու սկսաւ զնորմանալով ընթեռ-  
նուլ :

Այս Միջոցիս Մարքօ երկրորդ անգամ մ'այ աչ-  
քերը բերդապահին վրայ տանելով , որն որ առջեւը  
ճնրագիր լալէն ու պաղատելէն չէր դադրէր , մէկ  
ոտքովն անոր ուսին կից մը տալով , — Ելիք թշուա-  
ռական , կանչեց անարկու ձայնով մը . Անպիտանը հը-  
նաղանդեցաւ . . . : Բօղաթէի տէրը անոր ճակտին վը-  
րայ նշմարելով կեղծաւոր , անադորոյն եւ միանգա-  
մայն արդարացի երկիւղի մը արհամարհանքը , կար-  
ծիս թէ արիւնը երակներուն մէջ ալեկոծեցաւ : Ենք-  
զինքը հանդարտեցնելու համար ապրիս անդին քանի  
մը քայլ երթալ ու դալէն վերջը , Բէլէկրուայի քովը  
կեցաւ ու սկսաւ հարցնել .

— Լօտրիզիօ երբ հոս եկաւ :

Սակայն բերդապահը տակաւին պատասխան տա-  
լու կարող չեղած , Օդօրինօ Մարքօյի մօտեցաւ եւ  
րիչ մ'առաջ իրմէ առած նամակները ցուցնելով ,

— Ասկէ աւելի կեղծ ու պատիր եւ դժնդակ լաւ-  
բէութիւն չի կրնար ըլլալ , ըսաւ զողջալով , այս նա-  
մակներն իմն չեն :

Մարքօ սասկեմին ձեռքէն նոյնմամայն թուղթե-  
րը յափշտակին ու զոնոնք Բէլէկրուայի երեսը դար-  
նելով՝ սաստիկ բարկութեանէն խզուած ձայնով մը  
հարցնելը մէկ եղաւ . — որո՞ւ են ուրեմն այս նամակները



— Ես . . . շխտակն ընելու . . . համար , սկսաւ թոթովել , անոր համար . . . ձեզի հնազանդ դասը-  
ւելու եւ մեծ ծառայութիւն մը ընելու . . .

Այն ատեն Մարքոսին ալ աչքերը խաւարելով ,  
— Ա՛հ , դժոխային դազան դու , որոտաց կատաղա-  
բար , եւ միանգամայն այնպիսի ուժգին կռուի մ'ի-  
շաւ անոր երեսին , որ նախ անոր մէկ ծնօտը ջախ-  
ջախելով՝ որունքները վեր եւ բոլոր մարմնովը զըլ-  
խիվար աշտարակէն դէրեցաւ դնաց . . . զոր երկ-  
րորդ առաւօտը նոյն աշտարակին շուրջը բացուած  
խրամին մէջ շան պէս ստաղած գտան :

Ա. Երջը Մարքօ՝ Օդօրինոն ալ չուղելով քովը ըն-  
դունիլ , քաշուեցաւ իր առանձին խուցերուն մէջ .  
հոն մինչեւ կէս գիշեր փակուելով՝ գորոցները բա-  
ցաւ եւ մի առ մի անոնց մէջի դասուած թղթերը աչ-  
քէ անցընելով պէտք եղածները պահեց , շատերն ալ  
այրեց եւ ոմանց ալ լուսանոցին վրայ բացատրութիւն-  
ներ աւելցուց : Գրեց նաեւ նամակներ , եւ ամենէն  
վերջն ալ իր կաակը , որուն մէջ Բէլէկրուային այրի  
կնոջն առատ թոշակ մը կապելէն վերջը , իւր դիմա-  
կրացը , ծառայիցն ու իր արեղջը ընտանեացն ալ մե-  
ծամեծ պարգեւներ թողով , իրեն յաջորդ եւ ժառանգ  
անուանեց զՕդօրինոն : Աէս գիշերը քիչ մը անցած ,  
Երսնուհոսն քով հսկող քահանան կանչել տալով խոս-  
տովանեցաւ : Ա. Երջը մեծկակ աթոռի մը վրայ երկու ժա-  
մի չափ հանդիստ ջնանալէն վերջը , արթննալով ջուր  
ուզեց եւ երբոր ոսկիէ մեծ գաւաթով ջուրը բերին  
ամբողջ դաւաթը պարպելէն վերջը , տեսնալով որ ս  
անկարելի է վերստին քնանալն ու միանգամայն իրեն  
խիստ անստանելի պիտի դայ՝ այնպէս պարպալ մինչեւ

արշարոյցին սպասելը խուցէն դուրս ելաւ ու սկսաւ  
գիշերային խաւարին ու լուսթեանը մէջ վեր վար սը-  
րահին մէջ պարտիլ , մինչդեռ երբեմն երբեմն խուցէն  
ցած ձայնով աղօթելու ձայներ կը լսուէին :

Իսկ Լօտրիզիօ , որ տակաւին Միլան էր , տես-  
նելով որ իր Բօզաթէ բերդը խրկած սուրհանդակը ետ  
դառնալու կ'ուշանայ , հաղար ու մէկ կասկածներու  
երթալով , անոր ետեւէն անմիջապէս ճամբայ հանեց  
իրեն մէկ քանի հաւատարիմ ծառաները , որոնք հե-  
ռուանց լրտեսելով եկած ու տեղն 'ի տեղը ամեն բան  
իրեն խնայուցած էին . . . :

Այսինքն՝ իր վերջին նամակին Մարքոյի ձեռքն  
կնայլը , Երանուհոսն ստորերկրեայ սենեկաց մէջէն  
ողջ գտնուելով՝ ազա մեռնիլը , Օդօրինոյի աղատին  
ու բերդապահին ալ բուն իսկ Մարքոյի ձեռօք չա-  
րաչար մեռնիլը : Ուստի այս սոսկալի վիճակին մէջ  
դուշակեց որ իր մեքենայած ամենայն չարութիւնները  
յայտնուելով , անկարելի բան էր՝ ո եւ է կերպով այն  
ահաւոր մարդուն զիմայն ինքզինքն արգարացընել :  
Մնչպիսի՞նք՝ արդէն իր երեւակացութեանը կը ներկա-  
յացընէր Մարքոյի իրեն զիմացը դալով՝ անընկեղի  
կատաղութեամբ իրմէ համար պահանջելը : Եւ որչափ  
ալ քաջասիրտ ու մարմնով ալ յաղթանդամ ըլլալով  
նոյն ժամանակուան առաջին աստիտաց կարող սեպ-  
ուած էր , այսու ամենայնիւ գարձեալ չէր կրնար հա-  
մարձակիլ այնպիսի հզօր թշնամոյ մը գէնն ելլել ,  
զոր բոլոր Լոմպարտոյ առաջին դօրապարն ճանչցած  
ու համարած էր :

Այսպէսով մեր եղևնագործը , ամեն կողմանէ  
նեղը մնալով՝ բոլորովին յուսահատեցաւ : Եւ զինքը



հարձող դժբաղդութիւնէն աղասել կարծելով, մտածեց առջի ըրածներէն աւելի վատ եւ աւելի ասելի դաւաճանութիւն մ'ալ ՚ի գործ դնել :

Ուստի ցայտի իր գործած ամենայն անզգամութեանցը վրայ զզջալ կեղծելով, դրեց Ածցօնէի եւ հաստատուն փաստիւք իր ձեռքը դանուած մանաւոր նամակներովն ու գրուածներովը յայտնեց անոր թէ՛ Մարքօ մօտ է նոր դաւաճանութեամբ մը իր իշխանութիւնը ձեռքէն յափշտակելու : Եւ այս գրած նամակը Ածցօնէի զրկելէն վերջը, իր ընտանեացը խտաւ հրամայեց որ եթէ Մարքօ գալով զինքը բնսորակու ըլլայ, ըսեն թէ կարեւոր գործի մը համար տեղակալին հետ տեսնուելու գացած է : Այս ըսելով ցատկեց երիվարի մը վրայ եւ մինչեւ որ Միլանու սահմաններէն դուրս չի հասաւ, վար չիջաւ :

Մարքօ սրտին ցաւէն ու բարկութիւնէն կուրցած, ինքզինքը կորսնցընելով կ'արհամարհէր այն երկիրը՝ որուն վրայ կը քալէր, կ'անդոսնէր ճակատը ծեծող առաւօտեան քաղցր զիւրիւրը, առ ոչինչ կը համարէր իւր ճամբան լուսաւորող արեգական ճառագայթները : Վրէժխնդրութեան բաղձածուփ ցանկութիւնէն սիրտն ուռած եւ աչքին ալ ուրիշ բան չերեւնայով՝ ըայց եթէ արիւն եւ մահ . վերջապէս հասաւ Միլան, եւ Լօթրիդիօյն տունէն առած պատասխանէն խաբուած՝ ճամբան դարձուց գէպ ՚ի տեղակալին պալատը, ուր ինչպիսի պատրաստութեամբ զինքը սպասեցին մեր ընթերցողը կրնայ երեւակայել :

Պայտէն ներս մտնայով, Մարքօ ձգեց իր հետը բերած զինակիրը՝ առաջին սրահներէն մէկուն մէջ, եւ առաջ անցնելով հարցօց զինքը շտապորով ծառայից մէկուն Լօթրիդիօյնն ուր ըլլալը :

— Մտան՝ սա դիմացի խուցն է պատասխանելով ցուցուց դուռ մը, եւ նոյն միջոցին ալ զինքը մեծարել կեղծելով՝ վաղեց նոյն դուռը բացաւ : Մարքօ ամենեւեւ բանէ մը լուր չունենալով, անկասկած նոյն խուցէն ներս եւ անկէ ալ երկաթեղէկ սրահի մը մէջ մտաւ : Հագիւ թէ ոտքը երկրորդ սրահին սեմին կոխած էր, մէկ մ'ալ յանկարծ ներս մտած խուցին դռները վրայէն գոցուելով կողուեցան, եւ անմիջապէս նոյն սրահը հանող զատ զատ վեց դաղանի դրոներէ՝ զրահաւոր եւ սաղաւարաններուն զիմակն ալ դոցած, վեց զինեալ մարդիկ դուրս ելլալով՝ Մարքօյի վրայ յարձակեցան : Նախ եւ առաջ զինքը երկու տեղէ վիրաւորեցին, մէկը վիզէն՝ միւսն ալ աջ կողմէն . վերջը ամենքը միտանող վրան գալով՝ ուզեցին մէկը բաղրակներէն, ոմանք մէջքէն, ոմանք ալ ոտքերէն բռնելով զինքը գետին գլորել : Մարքօ, այս միջոցին ձեռքը ձախ կողմը տարաւ դաշտնը հանելու համար, սակայն ՚ի դուր : Վասն զի առաջին յարձակման ժամանակը, վրան եկողներէն մէկը վարպետութեամբ մը զայն կրցեր էր քողէն առնել : Մարքօ տեսաւ որ, ալ իրեն համար ամեն բան ընցած է, սակայն չուզելով միանգամայն իւր վերջի վայրկեանին ալ առանց նշանաւոր գործի մը մեռնիլ, վերցուց իւր տահաւոր բազուկը, «գոր մէկն ալ կարող չեղաւ բռնելու», եւ այնպիսի սոսկալի ուժով կուռի մը իջաւ նոյն վայրկեանին իւր կուրծքին սլաքի հարուած մը տուողին գլխուն, որ նոյն ժամայն ցուլի մը երկու եղջիւրներուն մէջ տեղը լախալի հարուածով ինչայուն պէս գետինը գլորեցաւ : Սակայն մէկադնոնք՝ եւս առաւել զինքը նեղելով շուրջը բոլորեցան, եւ արեան փրփուրներու մէջ, զինքը քաշելով տարին մինչեւ



դուրս՝ փոզոցը նայող պատուհանի մը առջև : Հոն , ոմանք մէջքէն , ոմանք բազուկներէն եւ ոմանք ալ ոտքերէն բռնելով ամբողջ մարմնով վեր առին ու նոյն պատուհանէն հրելով՝ զինքը գլխովայր գլորեցին . ուր անմիջապէս քանի մը վայրկեանէն մնաւ :

Վերջը Միլանու , Լոմպարտոյ եւ բոլոր Իտալիոյ մէջ հազար ու մէկ կերպով մեր երեւելի զօրավարին մահուանը վրայ մեկնութիւններ արուեցան : Եւ ինչպէս Մարքոյի մահուանը՝ նոյնպէս ալ իւր սիրահարութեանը միջին պատմութիւնը՝ հաւանականաբար իրար խառնուելով , շատերը կարծեցին եւ կամ մեծերը շողորթելու համար շորտիք արդէն ո եւ է կերպով յանձնատու էին իրենց վրայէն նոյն անձին մահուան եղևոնը սրբել՝ ու զեցին հաւատք ընծայելով ըսել , թէ Մարքո նախանձայող բարկութեամբ զերանուէին անձամբ սպաննելէն վերջը , յուսահատաբար նոյն դաշոյնով ինքզինքն ալ վիրաւորելով , իւր պալատին պատուհանէն վար նետուած ըլլայ : Այս եւ ասոր նման շատ մը ձայներ եւ աւանդութիւններ գրի առնուած են , ճշմարտութենէ խիստ հեռու քանի մը պատմաց կողմանէ :

Իսկ Լոմպարտիայէն դուրս , այսինքն այն երկիրներուն մէջ՝ որ Վիսքոնթիներուն իշխանութեանը ներգրեւ չէին գտնուած , շուտ մը անկախած կերպիւ հաստատեցին թէ , Մարքոյի մահը միմիայն իւր եղբորոց հոգին եւ եղբարցը հաւանութեամբն ու ձեռօքն եղած է : Զատնք ալ հաստատուելու համար՝ ձիովանի Վիլլանի , որ Ֆիօրէնցայի մէջ խիստ մտերմաբար Մարքոյի հետ բարեկամացած եւ վերջն ալ անոր Լուքքաի տիրապետելու ժամանակը՝ քանի քանի անգամներ հետք տեսնուելու առիթ ունեցած էր , Մարքոյի համար պարզապէս ու բացարձակապէս կըսէ Վարքոյի այս աղետալ մահը , բոլոր Միլանցիները խիստ խոռովեց , սակայն առ անի՝ եւ ոչ մէկը կրցաւ անոր վրայ խօսիլ : Ծ

Մարքոյի մահուան վրայ՝ Լուքքայի երգարանի մը շարագրած բանաստեղծութեանը մէջ կը տեսնուի թէ , կամ Քոստանայէն առած լուրին բարորակն հաւատք չ'ընծայելով , կամ թէ նոյն լուրը իրեն տաղաչափութեանը անյարմար տեսնելով , ուզեր է ճշմարտութենէ հեռանալով աւելի զարդարուն կերպով գրուցել ու մեզ ալ հաւատացնել թէ՛ Երանուէի եւ Մարքո , Ռօզաթէ բերդին մէջ թաղուած են : Սակայն մենք ձեռքերնիս ունեցած ապացոյցներով կարող ենք հաստատել ու համոզել մեր ընթերցողները , թէ Մարքո՝ վերջի անախճանի պատուաւոր եւ հանդիսաւոր կերպով թաղուեցաւ Միլանու Ս. Աստուածածնայ Մայր եկեղեցւոյն մէջ : Իսկ Օդօրինոյի ամուսինն ալ , լաւազրիւրներէ խնայած ենք՝ թէ իր ուղածին համեմատ Լիոննդա տարուած է :

Եւ այս մեր ըսածին վրայ կը պնդենք , չուզելով ընծայել անանձնաշնորհութիւն մը այնպիսի պատմաց տրանք լսածնին ու տեսածնին իբր վաւերացեալ ճշմարտութիւն , ուզածնուն պէս եւ ժամանակին համեմատ կամ դարձարելով ու գովաբանելով , եւ կամ ուղած անձերնիս պախարակելով գրի կ'առնեն եւ ապագային իբրեւ աւանդութիւն կ'ընծայեն : Զգարոնայք , մենք մեծապէս կը բողոքենք եւ չենք կրնար այս տեսակ պատմաց անանձնաշնորհութեանը հաւատք բնծայել , զոր երբեմն բանաստեղծք ալ 'ի գործ կը դնեն ,



Ուստի այս կերպով ճշմարտութիւնը խոստովանելէն վերջը, կարծենք թէ ալ մեզի ուրիշ բան չի մնար ըսելու. որովհետեւ մեր գիւցադնին մահուանէն վերջը՝ բուն պատմութիւնն ալ լմնցած կը սեպուի: Իսկ մենք, եթէ մեր ընթերցողաց պատշաճ կը թուի, կ'ուզենք քանի մը խօսք ալ մեր պատմութեան տեսարանին հանդիսացող անձանց վրայ գրուցելով լուի: Սակայն դարձեալ կը կրկնենք մեր ընթերցողաց՝ թէ այս գլխիցաւը չատ չի պիտի երկարի:

Տէլ Պալցօ կոմսն ու կոմսուհին՝ Լաուրէզայի հետ միատեղ մեր ապերջանիկ Նրանուհոյն անկենդան մարմինն առնելով, եւ առաւօտուն դէպ 'ի Լիմոնդա ճամբայ ելլելով, իրենցմէ առաջ Միլանէն ելլող ու դէպ 'ի լիճը չուող ուրիշ ընտանեաց հետ միացան:

Միլանէն ելլող այս ճանապարհորդները՝ Վարքօյի դժնդակ մահը տեղի չունեցած ճամբայ ինաչնուն համար, ամենեւին բանէ մը լուր չունէին. մինչեւ որ գիշերն անցընելու համար Սէվէյօ ըստեւ գիւղը ամենքն ալ միատեղ պանդոկ մը իջնալով, Վարքօյի մահուան դոյժն առին: Ամենքն ալ դարմացած ու ո եւ է կերպով չը կարենալով հաւատալ, իրարու կը հարցնէին թէ երբ եւ ուր կամ որմէ ձեռքով Վարքօ սպաննուած էր: Լուբօն եւ Ամպրօծիօն ալ պանդոկապետին եւ քանի մը գեղացեաց հետ այս բանիս վերայ հակաճառելու ժամանակ, թղթաբեր մը դռնէն ներս մտաւ: Ասիկայ Ախքօնթիի մահը լսելուն պէս՝ տիրոջը դրասեղանին վրայ առ Երմէլինտա ուղղուած նամակ մը գտնալով, չուա մը Բօզաթէէն ելած անմիջապէս կոմսին ընտանեացը ետեւէն եկած էր: Թրդթաբերը Վարքօյի հաւատարիմ ծառաներէն մէկն ըլ-

լալով, արտասուալից աչօք իւր տիրոջը դժնդակ մահուան դոյժը տայէն վերջը, բերած նամակն Երմէլինտայի ձեռքը յանձնեց, կրկնելով դարձեալ թէ՛ դայն Վարքօյի դրասեղանին վրայէն գտած էր: Կարծես թէ ինեղճ կնոջ՝ մայրական վիրաւորեալ սրտին ցաւերը վերադառնալով՝ վրան սարսուռ մը եկաւ. աչքերը մթնցան եւ բոլոր մարմնովը դողդղալով առած նամակը ծոցը դնելէն վերջը՝ դրեթէ ինքնիրմէ դուրս ելած ձգեց ինքղինքը մեծկակ աթոռի մը վրայ:

Լուբօ՝ առանց ժամանակ կորսնցնելու, ցաւիկեց իւր քաջ երիվարին վրայ, եւ Օդօրինօն գանեալու համար վերստին շիտակ Միլանու ճամբան բռնեց. ձրդելով դամնքն ալ խորին տիրութեան եւ ապշութեան մէջ, մանաւանդ մեր Տէլ Պալցօ կոմսը:

Իսկ Աժցօնէ, այսպիսի անեղ դաւաճանութեան մը յայտնուելուն երկիւղէն, արթուն կենալը խոհեմութիւն համարեց: Որովհետեւ ոչ թէ Տէլ Պալցօ կոմսէն որ Վարքօյի բարեկամն էր, այլ Ախքօնթիի աւելի հզօր ու կատաղի բարեկամներէն ու կողմնակիցներէն կը վախէր. որմէք կարող էին զինքը յաւիտեան կորսնցնելու չափ մեծամեծ վտանգներու մէջ ձգել:

Այս միջոցիս յառաջանալու վրայ էին նաեւ՝ Ախքօնթիները եկեղեցեոյ հետ հաշտեցնելու համար ուղարկուող քահանաները: Պասլն ալ արդէն Միլանու տեղակալին հետ կողմնակցելով, «վերջի անդամ Պալարօյի դէմ պատերազմելուն պատճառաւ», չը հաւատաց կամ թէ չուզեց ամենեւին հաւատալ Վարքօյի մահուան՝ անոր ձեռօքն 'ի գործ դրուած ըլլալուն: Որով եւ այսչափ երկար տարիներէ 'ի վեր տեւ-



ղակալին եւ բոլոր իւր ընտանեացը , քաղքին ու բովանդակ վիճակին վրայ տիրող եկեղեցւոյ նղովքը քակեց :—Այս կերպով կղերին ինչքերն ալ կողոպտող պարսնայք՝ հարկադրուեցան չորս կողմէն իրենց թաղը դարձող քահանայից՝ ետ դարձնել : Ասոնցմէ էր նաեւ բուն եւ ըստ իրաւանց սուրբ Աբրողիմի մենաստանին Աթօլֆօ անուն Արբան . որնոր վերագառնալով իւր վանքը , (ուսկից այոջաի տարիներէ 'ի վեր գուրս ձգուած էր) , դարձեալ մենաստանին բոլոր իշխանութեանը տէր եղաւ . նոյնպէս ալ Լիմոնդայի , Աթօլֆօ՝ իւր նախկին իշխանութիւնը ձեռք առած վայրկեանէն , նստաւ՝ ու երկայն բարակ մեծապէս շտորհակալութեան նամակ մը գրեց մեր ձերուսնի Լիմոնդայի առաջնորդին : Գովելով իրեն եւ իւր գեղայւոնցը քաջասրտութիւնը , եւ մտիթարելով զիրենք իրմէ վերջը նստող Աբբաճօր ձեռքէն քաշած վշտերնուն համար , եւ կերպով մ'ալ զանոնք մտացընելու պայմանաւ՝ մեծամեծ պարգեւներ ու ազատութիւններ շնորհեց անոնց :

Ուստի տեսնալու բան էր մեր բարի գեղացւոյ ըրած խնդրից հանդէսը . . . նախ եւ առաջ՝ փառօք մեծաւ բացին իրենց սուրբ Պէրնարտոս անուն եկեղեցին եւ երեք օր եւ երեք գիշեր անդադար եկեղեցւոյ զանգակներուն ձայնը չ'կտրելով , այր եւ կին անձանձրոյթ իրարու ձեռքէ կը յախշտակէին զանգակաց չուանները : Իսկ մանր տղայք եւ աղջկունք , եկեղեցւոյ սանիքն ելած՝ քարերով ու մուրճերով զանգակները կը ձեռէին : Մնացած ժողովուրդն ալ միանալով յաղթական կամարներ կը կանգնէին , ու զոները կը շինէին , որոնց տակէն վերջը մեծամեծ ու

եկեղեցական փառաւոր հանդէսներով Աստուծոյ փառաբանութիւններ կարդալով թափօր պաշտոցուցին , եւ ընդհանուր նղովքի ժամանակ ննջեցելոց հողոյն համար եւս հանդիսաւոր պատարագ մը մատուցանելէն վերջը , ամենքն ալ զոյգ զոյգ՝ երկի մարդիկ առջեւէն ու կիներն ալ ետեւէն , դերեզմանատուն մտան . ու հոն ճնրադիր սկսան երեկոյեան աղօթքն ընել : Բարեպաշտ ու վսեմ զղջուս մը , ծանր ու լուռ զուարթութիւն մը նկարագրուած էր այն բարի եւ ալօթասէր ժողովրդեան երեսը , Եւրաքանչիւր ոք իրենց աղակալանացը կամ թէ մասնաւորապէս կորուսած անձանց սուգը մոռնալով , երբեմն երբեմն աչքերը քիչ մը հեռուն քանի մ'օր ստաջ պղտի մատուան մը մէջ դրուած ձերմակ դերեզմանի մը քարին կը դարձնէր , որուն ներքեւը պատկողին անունը՝ ամենուն ալ հաւասարապէս սիրելի էր :

Մարթա , որ ճիշդ իւր Արիկօցցօն ծածկող գերեզմանին վրայ ծուեր դրած էր , աղօթքը լնցնելով ելաւ որ տուն երթայ , սակայն վերոյշեալ բարեկշտատակ գերեզմանին առջեւէն անցնելու ժամանակը , յարգանք եւ սիրով վրան խոնարհելով հարբուրեց զայն : Բազէակրին կինը եւ հետեւաբար բոլոր գիւղին կանաչքն ալ անոր օրինակին հետեւեցան : Սոսկ Էրմէլինտա եւ Լաուրէշա , որոնք նոյնպէս այս ժողովրդեան մէջն էին , չ'կարենալով իրենց սրտին թունոյր բռնել , նոյն գիշերը լերան ամալի ճամբաներէն վար իջնալով՝ սգալից արցունքներով թրջեցին իրենց սիրելոյն գերեզմանը :

Միայն Լուրօ այս խորհրդաւոր արարողութենէն բաժին չ'կրցաւ ունենալ : Որովհետեւ Օդոբինօյի հետ



Նրու սաղէմ դացած էր : Երանուհւոյն մահուանէն վերջը : Մարքօ ալ մեռնելով, երկուսսարդ Ասպետին աչացը մեր երկնից կամարը սկսաւ նեղ երեւնալ : Քանի որ ինքզինքը Լօարիդիօի մօտ կը տեսնար, կարծես թէ արիւնը երակներուն մէջ եռալով կ'ուզէր անոր դիմացն ելլալ ու կռուելով կամ իրեն՝ եւ կամ անոր կենացը վերջ մը տալ : Սակայն միշտ իր յիշողութեանը դարով հոգեվարք Երանուհւոյն ամենեւին իւր թշնամեացը վրէժխնդիր չ'ըլլալու համար տուած խոստումը, հարկադրեցաւ Միլանէն հեռանալ :

Մեր ծանօթներէն մէկն ալ նոյն օրերը Լիմոնոյա եկած էր, այսինքն Թրէմաքօլտօն : Խեղկատակը՝ ամենայն սիրով եւ իրրեւ ազգական մ'ընդունելութիւն դտաւ Երմէլինտայի կողմանէ, իւր նաղելի Երանուհւոյն համար կրած աշխատութեանցը ու նեղութեանցը փոխարէն :

Նկեղեցական հանդէսները լմննալէն վերջը, երբոր Թրէմաքօլտօն ուզեց երթալ, Երմէլինտա իւր խոստումը յիշելով կամեցաւ մեծամեծ պարզեւներով անոր աշխատանքը փոխարինել. սակայն անկարելի ըլլալով անոնց եւ ոչ մէկը ընդունել տալ, Երմէլինտա ստիպուեցաւ Առաքելական Փահօն Արեթրանտօ անուն դեպքանին յանձնարարական թուղթ մը գրել ու Թրէմաքօլտօյի ձեռքը տալ : Նոյն նամակաւ Թրէմաքօլտօ Պօլօնեա անցնելով, հոն երկար առննէ ի վեր եկեղեցւոյ եւ սրբոց հարց մասնաւորապէս արգելած արհեստին հետեւած ըլլալուն վրայ ապաշխարեց : Եւ արհեստին հետ միատեղ խեղկատակի դրեամն ու դլխարկն ալ ձգելով՝ ապաշխարողաց զգեստը հագաւ, եւ ամենուն բարի օրինակ ըլլալով մինչև սեփսուս ասրի ապրելով, հանգեաւ :

Ասիէ երկու տարի վերջն ալ Երմէլինտա վախճանեցաւ. — իր խուցին շատ մը հաղուագիւտ կարասեացը մէջ, պզտի արկղի մը մէջ փակուած դտան Մարքօյի վերջին նամակին հետ ոսկի շղթայ մը : Ոչ մէկը կրցաւ նոյն շղթային հոն գտնուելուն եւ ինչպէս Երմէլինտային ձեռքն անցած ըլլալուն վրայ մեկնութիւն մը տալ. բայց ի բաղէակրին կնոջմէն ու Լաուրէշայէն, որոնք նաեւ ամենուն հետ զարմանալ կեղծեցին :

Մեր Տէլ Պայցօ կոմսն ալ տակաւին շատ տարիներ ապրելով Ածցօնէի մեռնելէն վերջը տեսաւ անոր տեղը Լուքքինօի յաջորդելը. եւ անկէ վերջն ալ դեռ ապրելով, Լուքքինօի մահուանէն ետեւ ճիօզանիին ալ անոր տեղը յաջորդելուն կրցաւ հասնիլ :

Իսկ Լօարիդիօն ինչ եղաւ. — քաջ դիտեմ թէ մեր ընթերցողը կ'ուզէ ժամ մ'առաջ անոր վերջն ալ իմանալ թէ . . . ինչ ըսեմ, վերջապէս այն անպիտանին բարի վերջ մը մաղթելու համար՝ պէտք է բարբրովին մարդկային սիրտը մերկանալ. եւ ես ալ մեր ընթերցողաց հետ կը փութամ վայրկեան մ'առաջ իմ հետաքրքրութիւնս յաղեցնել : Սակայն ստիպեալ ըլլալով պատմութիւնը ըստ կարգի եւ առանց մեր ուզածին պէս ի հաճոյս դրի առնելու, հարկադրեալ եմ յետադոյ կերպով Լօարիդիօյի ինչպիսի վերջ մ'ունենալը ճշտիւ պատմելով, գիրս աւարտելու :

Լօարիդիօ շատ տարիներ Գտալիոյ այլ եւ այլ կողմերը թափառելէն վերջը, 1338ին Աքալիէրօի ձեռքն տալով անոր յաջողեցաւ երեք հազար հինգ հարիւր հեծալորէ դատ. (որ խիստ մեծ բանակն մը թիւ ըսել էր նոյն ատենուան պատերազմաց մէջ) շատ մ'ալ հետեւակ զօրաց աէր ըլլալու :

Սյս զօրաւոր բանակին վրայ աւելցուց նաեւ ճտեբուն վրայ իրեն հետը միացող շատ մ'անգործ սրիկաներ, գողեր եւ աւազակներ՝ որոնց բաւական էր միայն աւարի անոնը ըսելը : — Ուստի անոնցմով եկաւ Մի-



լանու սահմադրութիւններն ու սկսաւ կողոպտել քանդել  
 ու այրել, Բարապիակայ ըսուած գեղը համեւելով ուր  
 Լուքքինսո բոլոր Միլանու եւ իւր դաշնակցացը զօր-  
 քերոյն իրեն կըստասէր, սկսաւ այն հռչակաւոր եւ  
 արհեստեղ պատերազմը, զոր յայժմ նոյն գեղին ան-  
 ուամար կը կոչեն (պատերազմ Բարապիակայի)։ Սոյն  
 պատերազմին մէջ Լատրիզիո բոլորովին յաղթուելով  
 իւր երկու որդւոցը հետ միասեղ ողջ բռնուեցաւ եւ  
 մինչեւ 1348 Սան Քօլօմպինս անուն բերդին մէջ փակ-  
 ուած մնացին։ Անկէ վերջը. — Անցօնէ եւ Լուքքի-  
 նս մտնելով, Յովհաննէս արքեպիսկոպոսին ձեռօքն  
 աղատեցաւ . . . Իսկ անկէ վերջը. — Անկէ վերջն ալ  
 շատ մը փոփոխութիւններէ ետքը իւր մահուամբն զա-  
 նամեալ մտաւ Միլանու մէջ 1364 ՚ի հինգ ապրիլ։

Եւ այս մեր պատմութեանը ժամանակակից եւ  
 մեզի ազդիւր եղող պատմին խօսքին նպելով, մեծ  
 հանգէտով թաղուեցաւ. նա մանաւանդ նոյն ասուն-  
 ուան Միլանու իշխող Պերնապօն, Թօրնէօի հանդէս  
 մը ապ խոտացած ըլլալուն, թէ նոյն խաղին հա-  
 մար ներկայացող ասպետը եւ թէ հանդիսին ականա-  
 տես դատուելու համար եկող մեծամեծք, պարոնայք  
 եւ կոմսը, ՚ի պատիւ եւ ՚ի սուգ հանդուցելոյն՝ բա-  
 շական ժամանակ խաղը ետ ձգեցին մինչեւ որ Լա-  
 տրիզիօ մարմինը գերեզմանին մէջ դրուեցաւ։ Այս  
 տեսակ գործերը առաջին անգամ մտաց առջև գործի  
 մարդուն բարկութիւնը կը շարժեն. սակայն մի որ ու-  
 չի ուշով մտածելու ըլլայ, շուտ մը կը հանդուի թէ  
 նախախնամութիւնը որ եւ է գործի կամ բռնի մը  
 մէջ, եթէ մեր դատմանը հակառակ մատակարարու-  
 թիւն մ'ըրած է, անշուշտ գաղտնապէս իւր իրու-  
 շուէքներն ալ պիտի ունենայ։ Եւ հետեւաբար մենք  
 ալ թէ մեր գաղափարին յարմար կը դատենք որ ամեն  
 բան այս աշխարհիս մէջ փարձատրուի, այս ըսածնիս  
 ուրիշ բան չ'է, բայց եթէ անհամբերութիւն, խելա-  
 գարտեթիւն եւ վերջապէս Աստուածային նախախնա-  
 մութեանն իրայ կասկած ու ատարկչն ունենալ։





Մեղիքի Ո՛հոհիե եղարեթի ճեղիւնի բոհամբըլ  
Բայ օլմննուլ արար . — Էլբոգ Էնդրոսս



